

# **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

2009թ., 2010թ. I կիսամյակ

## **ՀԱՏՈՐ II**

ԵՐԵՎԱՆ  
ԱՄԵՐԻԿՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԸՆԿԵՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ  
CEELI Inc.–Ի ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՎ ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ  
2010

ՀՏԴ- 343(479.25)  
ՊՄԴ- 67.99(2Հ)8+67.99(2Հ)93  
Հ 247



**Մույն տպագրությունը հնարավոր է դարձել իրականացնել  
ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության  
ֆինանսավորմամբ**

Կազմող՝ **Ռուբեն Մելիքյան**

*ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդական,  
իրավագիտության թեկնածու, ԵՊՀ դոցենտ*

Հ 247

**ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների  
ժողովածու. 2009թ., 2010թ. I կիսամյակ./ Կազմ.՝ Ռ. Մելիքյան**  
– Եր. Ամերիկյան իրավաբանների ինկերակցություն CEELI Inc.–ի  
հայաստանյան ներկայացուցչություն, ՀՀ դատական դեպարտամենտ,  
2010, Հ. 2 – 584 էջ:

ՀՏԴ- 343(479.25)  
ՊՄԴ- 67.99(2Հ)8+67.99(2Հ)93

ISBN 978–99941–2–501–2

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան .....	V
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների առարկայական դասակարգում .....	VII
Աղբյուրների ցանկ թիվ 1. ՀՀ Սահմանադրության դրույթներ .....	XIX
Աղբյուրների ցանկ թիվ 2. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ .....	XX
Աղբյուրների ցանկ թիվ 3. ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ .....	XXII
Աղբյուրների ցանկ թիվ 4. ՀՀ վճռաբեկ դատարանի դատական ակտեր .....	XXIII
1. Ա.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ՎԲ–ԵՔԲԴ/0057/01/08 .....	1
2. Գ.Սաղաթյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0029/01/08 .....	9
3. Ռ.Արշալույսյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԴ/0021/01/08 .....	15
4. Ա.Մկրտչյանի վերաբերյալ որոշում, ՎԲ–01/09 .....	23
5. Լ.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0057/12/08 .....	35
6. Ն.Միսակյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ 1/0003/11/08 .....	45
7. Մ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ՀՔԲԴ 2/0028/01/08 .....	58
8. Վ.Մինասյանի վերաբերյալ որոշում, ՀՅՔԲԴ 3/0106/01/08 .....	66
9. «Էկոնոմիկասացիա» ՓԲԸ վերաբերյալ որոշում (թիվ 1), ԵԿԴ/0107/11/08 .....	74
10. Վ.Ալիխանյանի վերաբերյալ որոշում, ՀՅՔԲԴ/0046/01/08 .....	79
11. Ա.Դավթյանի վերաբերյալ որոշում, ԵՔԲԴ/0297/01/08 .....	85
12. Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ՀՅՔԲԴ 3/0109/01/08 .....	91
13. Կ.Հայրապետյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ /0146/01/08 .....	104
14. Տ.Բուդաղյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ/0100/01/08 .....	111
15. Հ.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵՔԲԴ/0571/01/08 .....	119
16. Ռ.Ազատյանի վերաբերյալ որոշում, ՀՅՔԲԴ 1/0074/01/08 .....	125
17. Ա.Պողոսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0009/11/09 .....	132
18. Ռ.Հովակիմյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0117/01/08 .....	139
19. «ԷՄԱԿ–Չորրորդ» ՍՊԸ վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0111/01/08 .....	144
20. Վ.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ՀՅՔԲԴ 2/0086/01/08 .....	150
21. Ա.Կարախանյանի վերաբերյալ որոշում, ԵՔԲԴ/0569/01/08 .....	157
22. Մ.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0019/11/09 .....	165
23. Հ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԴ/0050/01/08 .....	172
24. Գ.Հախնազարյանի վերաբերյալ որոշում, ԵՔԲԴ/0219/01/08 .....	178
25. Լ.Հովհաննիսյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ՀՔԲԴ/0436/01/08 .....	186
26. Ա.Ծատինյանի վերաբերյալ որոշում, ԼԴ 1/0003/11/08 .....	196
27. Լ.Արզումանյանի վերաբերյալ որոշում, ԵԵԴ/0002/15/08 .....	202
28. Վ.Քոսյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0013/11/08 .....	209
29. Վ.Բաբայանի վերաբերյալ որոշում, ԵՔԲԴ/0512/01/08 .....	216
30. Խ.Հեքիմյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0003/15/09 .....	224

31. Գ.Շամշյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0014/01/09.....	232
32. Ռ.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0270/01/08.....	237
33. Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵՔԴԴ/0295/01/08.....	242
34. Ա.Սաղաթեյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0020/11/09.....	253
35. Ա.Մաթևոսյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0013/15/09.....	262
36. Ա.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵՔԴԴ/0033/01/08.....	269
37. «Էկոնոմիկասացիա» ՓԲԸ վերաբերյալ որոշում (թիվ 2), ԵԿԴ/0107/11/08.....	276
38. Է.Ստեփանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0098/01/09.....	283
39. Դ.Գալստյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0008/01/09.....	292
40. Գ.Միքայելյանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0085/06/09.....	299
41. Դ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0078/01/09.....	312
42. Ս.Նալբանդյանի վերաբերյալ որոշում, ՀՅՔԴԴ 2/0144/01/09.....	320
43. Ա.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԵՔԴԴ/0502/01/08.....	332
44. Ա.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԵՔԴԴ/0269/01/08.....	340
45. Մաջիղ Սոլթանիի վերաբերյալ որոշում, ԵՄԴ/0039/01/09.....	347
46. Հ.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0547/06/09.....	353
47. Մ.Հովհաննիսյանի և Ա.Մարտիրոսյանի վերաբերյալ որոշում, ԵՔԴԴ/0632/01/08.....	358
48. Լ.Նավոյանի վերաբերյալ որոշում, ՎԲ-01/10.....	374
49. Ա.Սողոմյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0076/11/09.....	381
50. Գ.Մելքոնյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0100/01/09.....	390
51. Լ.Զարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0081/11/09.....	397
52. Է.Պետրոսյանի և Վ.Էլոյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0031/01/09.....	403
53. Ա.Գոյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0049/01/09.....	410
54. Ս.Թումոյանի վերաբերյալ որոշում, ԼԴ2/0019/01/09.....	425
55. Տ.Քամալյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0097/01/09.....	433
56. Ա.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԿԴ/0004/11/09.....	443
57. Վ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0050/15/08.....	448
58. Ա.Մաթևոսյանի վերաբերյալ որոշում, ՎԲ-04/10.....	454
59. Ա.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0633/06/09.....	466
60. Ա.Անտոնյանի վերաբերյալ որոշում, ՄԴ/0226/01/09.....	474
61. Ֆ.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0058/11/09.....	482
62. Ն.Պողոսյանի վերաբերյալ որոշում, ՀՅՔԴԴ2/0153/01/08.....	496
63. Ա.Միրզոյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0045/01/09.....	508
64. Մ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0102/11/09.....	516
65. Հ.Շուքուրյանի վերաբերյալ որոշում, ԵՔԴԴ/0350/01/08.....	521
66. Մ.Առաքելյանի վերաբերյալ որոշում, ՎԲ-02/10.....	532
67. Ռ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0120/01/09.....	538
68. Հ.Գյուրջյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0004/06/09.....	544
69. Կ.Կիրակոսյանի վերաբերյալ որոշում, ՀՅՔԴԴ2/0149/01/08.....	553

## Նախարան

2005թ. սահմանադրական բարեփոխումներից հետո Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում սկզբնավորվեցին նոր իրողություններ: Դրանց թվում, թերևս, կարևորներից մեկը ՀՀ վճռաբեկ դատարանին վերապահված օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթն է:

ՀՀ Սահմանադրության հիման վրա ընդունված օրենսդրությունը ՀՀ բարձրագույն դատական ատյանին հնարավորություն է տալիս լիարժեքորեն կենսագործել իր սահմանադրական գործառույթը և ձևավորել ընդհանրական նշանակություն ունեցող իրավական դիրքորոշումներ:

Սույն հատորը ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների արդեն երկրորդ ժողովածուն է, որն ընդգրկում է 2009 թվականին և 2010 թվականի առաջին կիսամյակում կայացված ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի բոլոր ըստ էության որոշումները: Այն նշանավորում է ՀՀ վճռաբեկ դատարանի գործունեության առավել ամբողջական համապատասխանեցումը ՀՀ 2005թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում արմատավորված իրավական նոր իրողություններին:

Սույն ժողովածուում ընդգրկված որոշումներն արտահայտում են ՀՀ վճռաբեկ դատարանի որդեգրած դատական քաղաքականության բնութագրական գծերը, որոնք միտված են կենսագործելու իրավունքի զարգացման՝ Վճռաբեկ դատարանի գործառույթը: Մասնավորապես, այդ բնութագրական գծերից են.

– Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ձևավորված իրավական արժեքների և իրավաբանական հայեցակարգերի հետևողական ներպետականացումը,

– ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում ձևավորած իրավական դիրքորոշումների զարգացումը,

– մասնավոր և հանրային շահերի ողջամիտ հավասարակշռության որոնումը և հաստատումը,

– դատական ակտերը շարադրելիս այնպիսի կառուցվածքային լուծումների կիրառումը, որոնք հեշտացնում են վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների վերհանումը, փաստարկումը և կիրառումը:

Այսպես, *Ա.Գոդյանի* վերաբերյալ գործով որոշման մեջ (ժողովածուում ընդգրկված թիվ 53 որոշում) իրականացվել է խոշտանգումների արգելքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների վերլուծություն և կիրառում, Գ.Միքայելյանի վերաբերյալ գործով որոշման մեջ (ժողովածուում ընդգրկված թիվ 40 որոշում) զարգացվել են անձի ազա-

տության և անձեռնմխելիության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Սույն հատորի կիրառական արդյունավետությունը բարձրացնելու նպատակով այն պարունակում է որոշումների առարկայական դասակարգման առավել զարգացած գործիք, որում առանձին ներկայացվում է ոչ միայն տվյալ իրավադրույթին վերաբերող որոշումների շրջանակը, այլև յուրաքանչյուր դեպքում վկայակոչվում են համապատասխան որոշման առարկայական մյուս բնութագրիչները:

Բացի այդ, ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների երկրորդ ժողովածուն ընդգրկում է չորս լրացուցիչ աղբյուրների ցանկեր, որոնք վերաբերում են ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում վկայակոչված և կիրառված ՀՀ Սահմանադրության դրույթներին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներին, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներին:

Ինչպես Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների առաջին ամբողջական ժողովածուն, այնպես էլ սույն հատորը հնարավոր է դարձել հրատարակել Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն, CEELI Inc.-ի հայաստանյան ներկայացուցչության հետ մեր երկարատև ու արդյունավետ գործակցության շնորհիվ:

## **Դ. Չ. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

**ՀՀ վճռաբեկ դատարանի  
քրեական պալատի նախագահ,  
Իրավագիտության թեկնածու,  
ՀՀ վաստակավոր իրավաբան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ  
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԴԱՍՍԿԱՐԳՈՒՄ**

**Նյութական իրավունքի վերաբերյալ որոշումներ**

**Ն.-I. Մեկնաբանվող իրավադրույթ՝ անմեղսունակությունը  
(ՀՀ քրեական օրենսգրքի 25 հոդված)**

Ն.<sup>1</sup>-I.-1. Հ.Շուքրությանի վերաբերյալ որոշում, ԵԲԲԳ/0350/01/08 (65<sup>2</sup>, նույն որոշումը տե՛ս նաև Ն.- IX.-1., Գ<sup>3</sup>.-XLV.-1.) 521

**Ն.-II. Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատժի նպատակները  
(ՀՀ քրեական օրենսգրքի 48 հոդված)**

- Ն.-II.-1. Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ՀՅԲԲԳ 3/0109/01/08 (12, նույն որոշումը տե՛ս նաև Ն.-III.-2., Ն.-V.-1., Ն.-XII.-1., Գ.-XLI.-1.) 91
- Ն.-II.-2. Հ.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԲԲԳ/0571/01/08 (15, նույն որոշումը տե՛ս նաև Ն.-V.-3, Գ.-XXXVI.-2.) 119
- Ն.-II.-3. Հ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԳ/0050/01/08 (23, նույն որոշումը տե՛ս նաև Ն.-V.-5., Գ.-XXXVI.-4.) 172
- Ն.-II.-4. Գ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0078/01/09 (41, նույն որոշումը տե՛ս նաև Ն.-III.-5., Ն.-V.-6.) 312
- Ն.-II.-5. Ս.Թոմոյանի վերաբերյալ որոշում, ԼԳ2/0019/01/09 (54, նույն որոշումը տե՛ս նաև Ն.-V.-7.) 425
- Ն.-II.-6. Ա.Անտոնյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0226/01/09 (60, նույն որոշումը տե՛ս նաև Ն.-V.-8.) 474

**Ն.-III. Մեկնաբանվող իրավադրույթներ՝ պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները (ՀՀ քրեական օրենսգրքի 61-63 հոդվածներ)**

- Ն.-III.-1. Գ.Մադաթյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0029/01/08 (2, նույն որոշումը տե՛ս նաև Ն.-XIX.-1.) 9
- Ն.-III.-2. Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ՀՅԲԲԳ 3/0109/01/08 (12, նույն որոշումը տե՛ս նաև Ն.-II.-1., Ն.-V.-1., Ն.-XII.-1., Գ.-XLI.-1.) 91
- Ն.-III.-3. Կ.Հայրապետյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ /0146/01/08 (13, նույն որոշումը տե՛ս նաև Ն.-XXI.-1.) 104
- Ն.-III.-4. Է.Ստեփանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0098/01/09 (38) 283
- Ն.-III.-5. Գ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0078/01/09 (41, նույն որոշումը տե՛ս նաև Ն.-II.-4, Ն.-V.-6.) 312

<sup>1</sup> Սույն դասակարգման մեջ նյութական իրավունքի վերաբերյալ որոշումները վկայակոչվում են «Ն» տառով:

<sup>2</sup> Սույն ժողովածուում ընդգրկված որոշման հերթական համարը:

<sup>3</sup> Սույն դասակարգման մեջ դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումները վկայակոչվում են «Գ» տառով:

Ն.-III.-6. Է.Պետրոսյանի և Վ.Էլոյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0031/01/09, (52, 403  
նույն որոշումը տե՛ս նաև Ն.-XI.-1.)

**Ն.-IV. Սեկնաբանվող իրավադրույթ՝ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ  
նշանակելը (ՀՀ քրեական օրենսգրքի 64 հոդված)**

Ն.-IV.-1. Ա.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ՎԲ-ԵԶԲԳ/0057/01/08 (1, նույն 1  
որոշումը տե՛ս նաև Գ.-XXV.-1., Գ.-XL.-1.)

**Ն.-V. Սեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժը պայմանականորեն չլիքառելը (ՀՀ քրեական  
օրենսգրքի 70 հոդված)**

Ն.-V.-1. Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ՀՅԶԲԳ 3/0109/01/08 (12, նույն 91  
որոշումը տե՛ս նաև Ն.-II.-1., Ն.-III.-2., Ն.-XII.-1., Գ.-XLI.-1.)

Ն.-V.-2. Տ.Բուդաղյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ/0100/01/08 (14, նույն որոշումը 111  
տե՛ս նաև Ն.-VIII.-1., Գ.-XXXVI.-1.)

Ն.-V.-3. Հ.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԶԲԳ/0571/01/08 (15, նույն որոշումը 119  
տե՛ս նաև Ն.-II.-2., Գ.-XXXVI.-2.)

Ն.-V.-4. Ռ.Հովակիմյանի վերաբերյալ որոշում, ԱՐԳ/0117/01/08 (18, նույն որոշումը 139  
տե՛ս նաև Գ.-XXXVI.-3.)

Ն.-V.-5. Հ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԳ/0050/01/08 (23, նույն որոշումը 172  
տե՛ս նաև Ն.-II.-3., Գ.-XXXVI.-4.)

Ն.-V.-6. Գ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0078/01/09 (41, նույն 312  
որոշումը տե՛ս նաև Ն.-II.-4, Ն.-III.-5.)

Ն.-V.-7. Ս.Թոմոյանի վերաբերյալ որոշում, ԼԳ-2/0019/01/09 (54, նույն որոշումը տե՛ս 425  
նաև Ն.-II.-5.)

Ն.-V.-8. Ա.Անտոնյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0226/01/09 (60, նույն որոշումը տե՛ս 474  
նաև Ն.-II.-6.)

Ն.-V.-9. Ռ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0120/01/09 (67) 538

**Ն.-VI. Սեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական պատասխանատվությունից ազատելը  
վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով (ՀՀ քրեական օրենսգրքի 75 հոդված)**

Ն.-VI.-1. Ա.Գավթյանի վերաբերյալ որոշում, ԵԶԲԳ/0297/01/08 (11, նույն որոշումը 85  
տե՛ս նաև Ն.-XIV.-1., Գ.-VIII.-1.)

**Ն.-VII. Սեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ  
ազատելը (ՀՀ քրեական օրենսգրքի 76 հոդված)**

Ն.-VII.-1. Լ.Լազարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0057/12/08 (5, նույն որոշումը 35  
տե՛ս նաև Ն.- XXII.-1., Գ.-XLIV.-1., Գ.-XLIX.-1.)

**Ն.-VIII. Սեկնաբանվող իրավադրույթ՝ պատժից ազատելն արտակարգ հանգամանքների  
հետևանքով (ՀՀ քրեական օրենսգրքի 80 հոդված)**

Ն.-VIII.-1. Տ.Բուդաղյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ/0100/01/08 (14, նույն որոշումը 111  
տե՛ս նաև Ն.-V.-2., Գ.-XXXVI.-1.)



<b>Ն.–IX. Մեկնաբանվող իրավադրույթ՝ հարկադիր բուժումը հոգեբուժական կազմակերպություններում (ՀՀ քրեական օրենսգրքի 100 հոդված)</b>	
Ն.–IX.-1. Հ.Շուրուբյանի վերաբերյալ որոշում, ԵԶԲԳ-0350/01/08 (65, նույն որոշումը տե՛ս նաև Ն.-I.-1., Գ.–XLV.-1.)	521
<b>Ն.–X. Մեկնաբանվող իրավադրույթ՝ սպանությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդված)</b>	
Ն.–X.-1. Վ.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ՀՅԶԲԳ-2/0086/01/08 (20)	150
Ն.–X.-2. Վ.Բաբայանի վերաբերյալ որոշում, ԵԶԲԳ/0512/01/08 (29)	216
Ն.–X.-3. Ա.Մաթևոսյանի վերաբերյալ որոշում, ՎԲ–04/10 (58)	454
<b>Ն.–XI. Մեկնաբանվող իրավադրույթներ՝ բռնաբարությունը և սեքսուալ բնույթի բռնի գործողությունները (ՀՀ քրեական օրենսգրքի 138 և 139 հոդվածներ)</b>	
Ն.–XI.-1. Է.Պետրոսյանի և Վ.Էլոյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ-0031/01/09, (52, նույն որոշումը տե՛ս նաև Ն.–III.-6.)	403
<b>Ն.–XII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը (ՀՀ քրեական օրենսգրքի 185 հոդված)</b>	
Ն.–XII.-1. Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ՀՅԶԲԳ-3/0109/01/08 (12, նույն որոշումը տե՛ս նաև Ն.–II.-1., Ն.–III.-2., Ն.–V.-1, Գ.–XLI.-1.)	91
<b>Ն.–XIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ առևտրային կաշառքը (ՀՀ քրեական օրենսգրքի 200 հոդված)</b>	
Ն.–XIII.-1. Ռ.Ազատյանի վերաբերյալ որոշում, ՀՅԶԲԳ-1/0074/01/08 (16, նույն որոշումը տե՛ս նաև Ն.–XVIII.-1.)	125
<b>Ն.–XIV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը (ՀՀ քրեական օրենսգրքի 205 հոդված)</b>	
Ն.–XIV.-1. Ա.Գավթյանի վերաբերյալ որոշում, ԵԶԲԳ/0297/01/08 (11, նույն որոշումը տե՛ս նաև Ն.–VI.-1., Գ.–VIII.-1.)	85
Ն.–XIV.-2. Մ.Հովհաննիսյանի և Ա.Մարտիրոսյանի վերաբերյալ որոշում, ԶԲԳ/0632/01/08 (47, նույն որոշումը տե՛ս նաև Գ.–VII.-1.)	358
<b>Ն.–XV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ մաքսանենգությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 215 հոդված)</b>	
Ն.–XV.-1. Արմեն Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԵԶԲԳ/0502/01/08 (43, նույն որոշումը տե՛ս նաև Ն.–XVII.-1., Գ.–IV.-2.)	332
Ն.–XV.-2. Մաջիդ Սուլթանիի վերաբերյալ որոշում, ԵՄԳ/0039/01/09 (45)	347
<b>Ն.–XVI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ խուլիզանությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 258 հոդված)</b>	
Ն.–XVI.-1. Արթուր Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԵԶԲԳ/0269/01/08 (44, նույն որոշումը տե՛ս նաև Գ.–IV.-3.)	340

<b>Ն.-XVII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով կամ դրանց ապօրինի իրացնելը (ՀՀ քրեական օրենսգրքի 266 հոդված)</b>	
Ն.-XVII.-1. Արմեն Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԵԶԲԳ/0502/01/08 (43, նույն որոշումը տե՛ս նաև Ն.-XV.-1., Գ.-IV.-2.)	332
<b>Ն.-XVIII. Մեկնաբանվող իրավադրույթներ՝ հանրային ծառայողի սահմանումը, պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալը (ՀՀ քրեական օրենսգրքի 311.1 հոդված)</b>	
Ն.-XVIII.-1. Ռ.Ազատյանի վերաբերյալ որոշում, ՀՅԶԲԳ 1/0074/01/08 (16, նույն որոշումը տե՛ս նաև Ն.-XIII.-1.)	125
<b>Ն.-XIX. Մեկնաբանվող իրավադրույթ՝ իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը (ՀՀ քրեական օրենսգրքի 316 հոդված)</b>	
Ն.- XIX.-1. Գ.Մաղաթյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0029/01/08 (2, նույն որոշումը տե՛ս նաև Ն.-III.-1.)	9
<b>Ն.-XX. Մեկնաբանվող իրավադրույթ՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր, տրանսպորտային միջոցների պետհամարանիշներ կեղծելը, իրացնելը կամ օգտագործելը (ՀՀ քրեական օրենսգրքի 325 հոդված)</b>	
Ն.- XX.-1. Ֆ.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0058/11/09 (61, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-I.-1., Գ.-XXXV.-1.)	482
<b>Ն.-XXI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ սուտ ցուցմունք կամ կեղծ եզրակացություն տալը կամ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը (ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդված)</b>	
Ն.- XXI.-1. Կ.Հայրապետյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ /0146/01/08 (13, նույն որոշումը տե՛ս նաև Ն.-III.-3.)	104
<b>Ն.-XXII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու պայմանները (ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114 հոդված)</b>	
Ն.- XXII.-1. Լ.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0057/12/08 (5, նույն որոշումը տե՛ս նաև Ն.-VII.-1., Գ.-XLIV.-1., Գ.-XLIX.-1.)	35
<b>Ն.-XXIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ համաներում չկիրառելու հիմքերը («Համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 2009թ. որոշման 8 կետ)</b>	
Ն.- XXIII.-1. Գ.Շամշյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0014/01/09 (31)	232

## **Դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումներ**

<b>Գ.-I. Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական դատավարության օրենսդրության խնդիրները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2 հոդված)</b>	
Գ.-I.-1. Ֆ.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0058/11/09 (61, նույն որոշումը տե՛ս նաև Ն.-XX.-1., Գ.-XXXV.-1.)	482

<b>Գ.-II. Մեկնաբանվող իրավադրույթ՝ անձի անձեռնմխելիությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11 հոդված)</b>	
Գ.-II.-1. Ա.Գոյյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0049/01/09 (53, նույն որոշումը տե՛ս նաև Գ.- IX.-2., Գ.-XXVI.-3., Գ.-XX.-2., Գ.-XXVII.-2.)	410
<b>Գ.-III. Մեկնաբանվող իրավադրույթ՝ գործի արդարացի քննությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17 հոդված)</b>	
Գ.-III.-1. Ն.Մխակյանի վերաբերյալ որոշում, ԱԲԳ 1/0003/11/08 (6, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-XXIX.-1., Գ.-XXXII.-1., Գ.-XXXIV.-1., Գ.-XL.-2.)	45
Գ.-III.-2. Գ.Մելքոնյանի վերաբերյալ որոշում, ՏԳ/0100/01/09 (50, նույն որոշումը տե՛ս նաև Գ.- XX.-1.)	390
<b>Գ.-IV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ անմեղության կանխավարկածը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18 հոդված)</b>	
Գ.-IV.-1. Գ.Գալստյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0008/01/09 (39, նույն որոշումը տե՛ս նաև Գ.- XVIII.-1., Գ.-XXV.-2.)	292
Գ.-IV.-2. Արմեն Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԵԲԲԳ/0502/01/08 (43, նույն որոշումը տե՛ս նաև Ն.-XV.-1., Ն.-XVII.-1.)	332
Գ.-IV.-3. Արթուր Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԵԲԲԳ/0269/01/08 (44, նույն որոշումը տե՛ս նաև Ն.-XVI.-1.)	340
<b>Գ.-V. Մեկնաբանվող իրավադրույթ՝ կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19 հոդված)</b>	
Գ.-V.-1. Ս.Նալբանդյանի վերաբերյալ որոշում, ՀՅԲԲԳ 2/0144/01/09 (42, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-XXX.-1., Գ.-XXXIV.-2.)	320
Գ.-V.-2. Ն.Պողոսյանի վերաբերյալ որոշում, ՀՅԲԲԳ-2/0153/01/08 (62, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-X.-1., Գ.-XI.-2., Գ.-XVI.-4., Գ.-XXI.-2.)	496
<b>Գ.-VI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ մրցակցությունը քրեական դատավարության ընթացքում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23 հոդված)</b>	
Գ.-VI.-1. Լ.Հովհաննիսյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ՀԲԲԳ/0436/01/08 (25, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-XI.-1., Գ.-XL.-6.)	186
<b>Գ.-VII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապացույցների ազատ գնահատումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25 հոդված)</b>	
Գ.-VII.-1. Մ.Հովհաննիսյանի և Ա.Մարտիրոսյանի վերաբերյալ որոշում, ԵԲԲԳ/0632/01/08 (47, նույն որոշումը տե՛ս նաև Ն.-XIV.-2.)	358
<b>Գ.-VIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35 հոդված)</b>	
Գ.-VIII.-1. Ա.Գավթյանի վերաբերյալ որոշում, ԵԲԲԳ/0297/01/08 (11, նույն որոշումը տե՛ս նաև Ն.-VI.-1., Ն.-XIV.-1.)	85
Գ.-VIII.-2. Մ.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0019/11/09 (22, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-XXIX.-2., Գ.-XXXII.-4.)	165

Գ.-VIII.-3. Ա.Սաղաթեյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0020/11/09 (34, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-XXXII.-5.)	253
Գ.-VIII.-4. Ա.Սիրգոյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0045/01/09 (63)	508
<b>Գ.-IX. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատարանի լիազորությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41 հոդված)</b>	
Գ.- IX.-1. Ա.Ծատինյանի վերաբերյալ որոշում, ԼԳ- 1/0003/11/08 (26, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-XXXIX.-5.)	196
Գ.- IX.-2. Ա.Գոյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0049/01/09 (53, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-II.-1., Գ.-XVI.-3., Գ.-XX.-2., Գ.-XXVII.-2.)	410
<b>Գ.-X. Մեկնաբանվող իրավադրույթներ՝ կասկածյալը, նրա իրավունքները և պարտականությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 62 և 63 հոդվածներ)</b>	
Գ.-X.-1. Ն.Պողոսյանի վերաբերյալ որոշում, ՀՅԲԲԳ-2/0153/01/08 (62, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-V.-2., Գ.-XI.-2., Գ.-XVI.-4., Գ.-XXI.-2.)	496
<b>Գ.-XI. Մեկնաբանվող իրավադրույթներ՝ պաշտպանի իրավական վիճակը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 68-71 հոդվածներ)</b>	
Գ.-XI.-1. Լ.Հովհաննիսյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ՀԲԲԳ/0436/01/08 (25, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-VI.-1., Գ.-XL.-6.)	186
Գ.-XI.-2. Ն.Պողոսյանի վերաբերյալ որոշում, ՀՅԲԲԳ-2/0153/01/08 (62, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-V.-2., Գ.-X.-1., Գ.-XVI.-4., Գ.-XXI.-2.)	496
<b>Գ.-XII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ քաղաքացիական պատասխանողը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 74 հոդված)</b>	
Գ.-XII.-1. Ա.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԲԲԳ/0033/01/08 (36, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-XIV.-2.)	269
<b>Գ.-XIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ տուժողի իրավահաջորդը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 80 հոդված)</b>	
Գ.-XIII.-1. Տ.Քամայանի վերաբերյալ որոշում, ԵԾԳ/0097/01/09 (55, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-XXXVIII.-3.)	433
<b>Գ.-XIV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ վկան (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86 հոդված)</b>	
Գ.-XIV.-1. Ա.Սյրտչյանի վերաբերյալ որոշում, ՎԲ–01/09 (4, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-XVI.-1., Գ.-XVII.-1., Գ.- XIX.-1.)	23
Գ.-XIV.-2. Ա.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԲԲԳ/0033/01/08 (36, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-XII.-1.)	269
<b>Գ.-XV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավարական գործողությունների և որոշումների բողոքարկման ազատությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103 հոդված)</b>	
Գ.-XV.-1. Ա.Պողոսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0009/11/09 (17, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-XXXII.-2., Գ.-XXXIX.-3.)	132

<b>Գ.-XVI. Մեկնաբանվող իրավադրույթներ՝ ապացույցների հասկացությունը, որպես ապացույց չբույլատրվող նյութերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104 և 105 հոդվածներ)</b>	
Գ.-XVI.-1. Ա.Սկրտչյանի վերաբերյալ որոշում, ՎԲ–01/09 (4, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-XIV.-1., Գ.-XVII.-1., Գ.- XIX.-1.)	23
Գ.-XVI.-2. Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԶԲԳ/0295/01/08 (33)	242
Գ.-XVI.-3. Ա.Գոլյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0049/01/09 (53, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-II.-1., Գ.- IX.-2., Գ.- XX.-2., Գ.-XXVII.-2.)	410
Գ.-XVI.-4. Ն.Պողոսյանի վերաբերյալ որոշում, ՀՅԲԲԳ-2/0153/01/08 (62, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-V.-2., Գ.-X.-1., Գ.-XI.-2., Գ.-XXI.-2.)	496
Գ.-XVI.-5. Մ.Առաքելյանի վերաբերյալ որոշում, ՎԲ–02/10 (66)	532
<b>Գ.-XVII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապացույցների հասկացությունը, որպես ապացույց չբույլատրվող նյութերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 115 հոդված)</b>	
Գ.-XVII.-1. Ա.Սկրտչյանի վերաբերյալ որոշում, ՎԲ–01/09 (4, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-XIV.-1., Գ.-XVI.-1., Գ.- XIX.-1.)	23
<b>Գ.-XVIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործով վարույթն ավարտելիս իրեղեն ապացույցների մասին ընդունվող որոշումները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 119 հոդված)</b>	
Գ.- XVIII.-1. Գ.Գալստյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0008/01/09 (39, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-IV.-1., Գ.–XXV.-2.)	292
<b>Գ.-XIX. Մեկնաբանվող իրավադրույթներ՝ քննչական և դատական գործողությունների արձանագրությունները, այլ փաստաթղթեր (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածներ)</b>	
Գ.- XIX.-1. Ա.Սկրտչյանի վերաբերյալ որոշում, ՎԲ–01/09 (4, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-XIV.-1., Գ.-XVI.-1., Գ.-XVII.-1.)	23
<b>Գ.-XX. Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապացույցների գնահատումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127 հոդվածներ)</b>	
Գ.- XX.-1. Գ.Մեղունյանի վերաբերյալ որոշում, ՏԳ/0100/01/09 (50, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-III.-2.)	390
Գ.- XX.-2. Ա.Գոլյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0049/01/09 (53, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-II.-1., Գ.- IX.-2., Գ.-XVI.-3., Գ.–XXVII.-2.)	410
<b>Գ.-XXI. Մեկնաբանվող իրավադրույթներ՝ ձերբակալումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ գլխի հոդվածներ)</b>	
Գ.- XXI.-1. Գ.Սիքայելյանի վերաբերյալ որոշում, ԵԱԳԳ/0085/06/09 (40, նույն որոշումը տե՛ս նաև Գ.- XXII.-2., Գ.–XXVII.-1., Գ.–XXXVII.-1., Գ.–XLVIII.-1.)	299
Գ.- XXI.-2. Ն.Պողոսյանի վերաբերյալ որոշում, ՀՅԲԲԳ-2/0153/01/08 (62, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-V.-2., Գ.-X.-1., Գ.-XI.-2., Գ.-XVI.-4.)	496
<b>Գ.-XXII. Մեկնաբանվող իրավադրույթներ՝ խափանման միջոց կիրառելու հիմքերը և կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135 և 136 հոդվածներ)</b>	
Գ.–XXII.-1. Վ.Մինասյանի վերաբերյալ որոշում, ՀՅԲԲԳ- 3/0106/01/08 (8, նույն որոշումը տե՛ս նաև Գ.–XXIII.-1., Գ.–XXXIII.-2.)	66

Գ.- XXII.-2. Գ.Սիբայելյանի վերաբերյալ որոշում, ԵԱԳԳ/0085/06/09 (40, նույն որոշումը տես նաև Գ.-XXI.-1., Գ.-XXVII.-1., Գ.-XXXVII.-1., Գ.-XLVIII.-1.)	299
Գ.- XXII.-3. Հ.Գյուրջյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0004/06/09 (68, նույն որոշումը տես նաև Գ.-XXVII.-3., Գ.-XXXVII.-2., Գ.-XLVIII.-2.)	544

**Գ.-XXIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ կալանքի տակ պահելու ժամկետը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138 հոդված)**

Գ.-XXIII.-1. Վ.Սինասյանի վերաբերյալ որոշում, ՀՅԲԲԳ 3/0106/01/08 (8, նույն որոշումը տես նաև Գ.-XXII.-1., Գ.-XXXIII.-2.)	66
------------------------------------------------------------------------------------------------------------------------	----

**Գ.-XXIV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ գրավը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143 հոդված)**

Գ.-XXIV.-1. Ա.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0633/06/09 (59)	466
------------------------------------------------------------------	-----

**Գ.-XXV. Մեկնաբանվող իրավադրույթներ՝ քաղաքացիական հայցի հարուցումը և լուծումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158 և 163 հոդվածներ)**

Գ.-XXV.-1. Ա.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ՎԲ-ԵԲԲԳ/0057/01/08 (1, նույն որոշումը տես նաև Ն.-IV.-1., Գ.-XL.-1.)	1
Գ.-XXV.-2. Գ.Գալստյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0008/01/09 (39, նույն որոշումը տես նաև Գ.-IV.-1., Գ.- XVIII.-1.)	292

**Գ.-XXVI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ ժամկետը բաց թողնելու հետևանքները և դրա վերականգնման կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174 հոդված)**

Գ.-XXVI.-1. Կ.Կիրակոսյանի վերաբերյալ որոշում, ՀՅԲԲԳ2/0149/01/08 (69, նույն որոշումը տես նաև Գ.-XXXIX.-8.)	553
-----------------------------------------------------------------------------------------------------------	-----

**Գ.-XXVII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործի նյութերով նոր գործի հարուցումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 184 հոդված)**

Գ.-XXVII.-1. Գ.Սիբայելյանի վերաբերյալ որոշում, ԵԱԳԳ/0085/06/09 (40, նույն որոշումը տես նաև Գ.-XXI.-1., Գ.-XXII.-2., Գ.-XXXVII.-1., Գ.-XLVIII.-1.)	299
Գ.-XXVII.-2. Ա.Գոլյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0049/01/09 (53, նույն որոշումը տես նաև Գ.-II.-1., Գ.- IX.-2., Գ.-XVI.-3., Գ.-XX.-2.)	410
Գ.-XXVII.-3. Հ.Գյուրջյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0004/06/09 (68, նույն որոշումը տես նաև Գ.- XXII.-3., Գ.-XXXVII.-2., Գ.-XLVIII.-2.)	544

**Գ.-XXVIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ գույքի վրա կալանք դնելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232 հոդված)**

Գ.-XXVIII.-1. «Էկոնոմիկասագիա» ՓԲԸ վերաբերյալ որոշում (թիվ 2), ԵԿԳ/0107/11/08 (37)	276
------------------------------------------------------------------------------------	-----

**Գ.-XXIX. Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման բողոքարկումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263 հոդված)**

Գ.-XXIX.-1. Ն.Սիսակյանի վերաբերյալ որոշում, ԱԲԳ 1/0003/11/08 (6, նույն որոշումը տես նաև Գ.-III.-1., Գ.-XXXII.-1., Գ.-XXXIV.-1., Գ.-XL.-2.)	45
--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	----

Գ.–XXIX.-2. Մ.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0019/11/09 (22, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-VIII.-2., Գ.–XXXII.-4.)	165
<b>Գ.–XXX. Մեկնաբանվող իրավադրույթ՝ մեղադրական եզրակացությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 270 հոդված)</b>	
Գ.–XXX.-1. Ս.Նալբանդյանի վերաբերյալ որոշում, ՀՅԲԲԳ 2/0144/01/09 (42, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-V.-1., Գ.–XXXIV.-2.)	320
<b>Գ.–XXXI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ կալանքի միջնորդությունների քննումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285 հոդված)</b>	
Գ.–XXXI.-1. Խ.Հեքիմյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0003/15/09 (30)	224
<b>Գ.–XXXII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ հետագա դատական վերահսկողությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդված)</b>	
Գ.–XXXII.-1. Ն.Սիսակյանի վերաբերյալ որոշում, ԱԲԳ 1/0003/11/08 (6, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-III.-1., Գ.–XXIX.-1., Գ.–XXXIV.-1., Գ.–XL.-2.)	45
Գ.–XXXII.-2. Ա.Պողոսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0009/11/09 (17, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-XV.-1., Գ.–XXXIX.-3.)	132
Գ.–XXXII.-3. «ԷՄԱԿ–Չորրորդ» ՍՊԸ վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0111/01/08 (19)	144
Գ.–XXXII.-4. Մ.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0019/11/09 (22, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-VIII.-2., Գ.–XXIX.-2.)	165
Գ.–XXXII.-5. Ա.Սաղաթելյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0020/11/09 (34, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-VIII.-3.)	253
Գ.–XXXII.-6. Ա.Մոլրոկյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0076/11/09 (49)	381
Գ.–XXXII.-7. Լ.Չարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0081/11/09 (57)	397
Գ.–XXXII.-8. Ա.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԿԳ/0004/11/09 (56)	443
Գ.–XXXII.-9. Մ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0102/11/09 (64)	516
<b>Գ.–XXXIII. Մեկնաբանվող իրավադրույթներ՝ գործը դատական քննության նախապատրաստելիս ընդունվող որոշումները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292, 296 և 300 հոդվածներ)</b>	
Գ.–XXXIII.-1. Ռ.Արշալույսյանի վերաբերյալ որոշում, ԱԲԱԳ/0021/01/08 (3, նույն որոշումը տե՛ս նաև Գ.–XXXVIII.-1.)	15
Գ.–XXXIII.-2. Վ.Սինասյանի վերաբերյալ որոշում, ՀՅԲԲԳ 3/0106/01/08 (8, նույն որոշումը տե՛ս նաև Գ.–XXII.-1., Գ.–XXIII.-1.)	66
<b>Գ.–XXXIV. Մեկնաբանվող իրավադրույթներ՝ դատական քննության, ինչպես նաև առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու սահմանները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309 և 309.1 հոդվածներ)</b>	
Գ.–XXXIV.-1. Ն.Սիսակյանի վերաբերյալ որոշում, ԱԲԳ 1/0003/11/08 (6, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-III.-1., Գ.–XXIX.-1., Գ.–XXXII.-1., Գ.–XL.-2.)	45
Գ.–XXXIV.-2. Ս.Նալբանդյանի վերաբերյալ որոշում, ՀՅԲԲԳ 2/0144/01/09 (42, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-V.-1., Գ.–XXX.-1.)	320

<b>Գ.–XXXV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավճռի օրինական, հիմնավորված և պատճառաբանված լինելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358 հոդված)</b>	
Գ.–XXXV.-1. Ֆ.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0058/11/09 (61, նույն որոշումը տե՛ս նաև Ն.-XX.-1., Գ.-I.-1.)	482
<b>Գ.–XXXVI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավճիռ կայացնելիս դատարանի լուծմանը ենթակա հարցերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360 հոդված)</b>	
Գ.–XXXVI.-1. Տ.Բուդաղյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ/0100/01/08 (14, նույն որոշումը տե՛ս նաև Ն.-V.-2., Ն.-VIII.-1.)	111
Գ.–XXXVI.-2. Հ.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԶԲԳ/0571/01/08 (15, նույն որոշումը տե՛ս նաև Ն.-II.-2., Ն.-V.-3)	119
Գ.–XXXVI.-3. Ռ.-Հովակիմյանի վերաբերյալ որոշում, ԱՐԳ/0117/01/08 (18, նույն որոշումը տե՛ս նաև Ն.-V.-4.)	139
Գ.–XXXVI.-4. Հ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԳ/0050/01/08 (23, նույն որոշումը տե՛ս նաև Ն.-II.-3., Ն.-V.-5.)	172
<b>Գ.–XXXVII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատարանի լրացուցիչ որոշումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360.1 հոդված)</b>	
Գ.–XXXVII.-1. Գ.Սիրայեղյանի վերաբերյալ որոշում, ԵԱԳԳ/0085/06/09 (40, նույն որոշումը տե՛ս նաև Գ.- XXI.-1., Գ.- XXII.-2., Գ.–XXXVII.-1., Գ.–XLVIII.-1.)	299
Գ.–XXXVII.-2. Հ.Գյուրջյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0004/06/09 (68, նույն որոշումը տե՛ս նաև Գ.- XXII.-3., Գ.–XXXVII.-3., Գ.–XLVIII.-2.)	544
<b>Գ.–XXXVIII. Մեկնաբանվող իրավադրույթներ՝ դատական քննության արագացված կարգ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-375.3 հոդվածներ)</b>	
Գ.–XXXVIII.-1. Ռ.Արշալույսյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԳ/0021/01/08 (3, նույն որոշումը տե՛ս նաև Գ.–XXXIII.-1.)	15
Գ.–XXXVIII.-2. Վ.Ալիխանյանի վերաբերյալ որոշում, ՀՅԶԲԳ/0046/01/08 (10, նույն որոշումը տե՛ս նաև Գ.–XXXIX.-2., Գ.–XL.-3.)	79
Գ.–XXXVIII.-3. Տ.Քամալյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0097/01/09 (55, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-XIII.-1.)	433
<b>Գ.–XXXIX. Մեկնաբանվող իրավադրույթներ՝ վերաքննիչ բողոքարկումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1, 380-383 հոդվածներ)</b>	
Գ.–XXXIX.-1. «Էկոնոմիկասագիա» ՓԲԸ վերաբերյալ որոշում (թիվ 1), ԵԿԳ/0107/11/08 (9)	74
Գ.–XXXIX.-2. Վ.Ալիխանյանի վերաբերյալ որոշում, ՀՅԶԲԳ/0046/01/08 (10, նույն որոշումը տե՛ս նաև Գ.–XXXVIII.-2., Գ.–XL.-3.)	79
Գ.–XXXIX.-3. Ա.Պողոսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0009/11/09 (17, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-XV.-1., Գ.–XXXII.-2.)	132
Գ.–XXXIX.-4. Գ.Հախնազարյանի վերաբերյալ որոշում, ԵԶԲԳ/0219/01/08 (24, նույն որոշումը տե՛ս նաև Գ.–XL.-5., Գ.–XLII.-1.)	178
Գ.–XXXIX.-5. Ա.Ծատիկյանի վերաբերյալ որոշում, ԼԳ- 1/0003/11/08 (26, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-IX.-1.)	196
Գ.–XXXIX.-6. Ռ.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0270/01/08 (32)	237



Գ.-XXXIX.-7. Հ.Հոսեֆյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0547/06/09 (46, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-XLVII.-1.)	353
Գ.-XXXIX.-8. Կ.Կիրակոսյանի վերաբերյալ որոշում, ՀՅԲԲԳ-2/0149/01/08 (69, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-XXVI.-1.)	553

**Գ.-XL. Մեկնաբանվող իրավադրույթներ՝ գործի քննությունը վերաքննիչ դատարանում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385, 389, 390 և 395 հոդվածներ)**

Գ.-XL.-1. Աշոտ Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ՎԲ-ԵԲԲԳ/0057/01/08 (1, նույն որոշումը տե՛ս նաև Ն.-IV.-1., Գ.-XXV.-1.)	1
Գ.-XL.-2. Ն.Միսակյանի վերաբերյալ որոշում, ԱԲԳ-1/0003/11/08 (6, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-III.-1., Գ.-XXIX.-1., Գ.-XXXII.-1., Գ.-XXXIV.-1.)	45
Գ.-XL.-3. Վ.Ալիխանյանի վերաբերյալ որոշում, ՀՅԲԲԳ/0046/01/08 (10, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-XXXVIII.-2., Գ.-XXXIX.-2.)	79
Գ.-XL.-4. Ա.Կարախանյանի վերաբերյալ որոշում, ԵԲԲԳ/0569/01/08 (27)	157
Գ.-XL.-5. Գ.Հախնազարյանի վերաբերյալ որոշում, ԵԲԲԳ/0219/01/08 (24, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-XXXIX.-4., Գ.-XLII.-1.)	178
Գ.-XL.-6. Լ.Հովհաննիսյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ՀԲԲԳ/0436/01/08 (25, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-VI.-1., Գ.-XI.-1.)	186

**Գ.-XLI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ վճարել քողոքարկման հետևանքները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 413 հոդված)**

Գ.-XLI.-1. Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ՀՅԲԲԳ-3/0109/01/08 (12, նույն որոշումը տե՛ս նաև Ն.-II.-1., Ն.-III.-2., Ն.-V.-1., Ն.-XII.-1.)	91
-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	----

**Գ.-XLII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ վճարել դատարանում գործի քննության կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 413 հոդված)**

Գ.-XLII.-1. Գ.Հախնազարյանի վերաբերյալ որոշում, ԵԲԲԳ/0219/01/08 (24, նույն որոշումը տե՛ս նաև Գ.-XXXIX.-4., Գ.-XL.-5.)	178
----------------------------------------------------------------------------------------------------------------------	-----

**Գ.-XLIII. Մեկնաբանվող իրավադրույթներ՝ դատական ակտերի վերանայումը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.5 և 426.7 հոդվածներ)**

Գ.-XLIII.-1. Վ.Քոսյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԳ/0013/11/08 (28)	209
Գ.-XLIII.-2. Վ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0050/15/08 (57)	448

**Գ.-XLIV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434 հոդված)**

Գ.-XLIV.-1. Լ.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0057/12/08 (5, նույն որոշումը տե՛ս նաև Ն.-VII.-1., Ն.- XXII.-1., Գ.-XLIX.-1.)	35
-------------------------------------------------------------------------------------------------------------------------------	----

**Գ.-XLV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթի քննությունը դատարանում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 471 հոդված)**

Գ.-XLV.-1. Հ.Շուքուրյանի վերաբերյալ որոշում, ԵԲԲԳ/0350/01/08 (65, նույն որոշումը տե՛ս նաև Ն.-I.-1., Ն.- IX.-1.)	521
-----------------------------------------------------------------------------------------------------------------	-----

<b>Գ.–XLVI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանձնման վերաբերյալ որոշում ընդունելու իրավասություն ունեցող մարմինները և այդ որոշման բողոքարկման կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 479 հոդված)</b>	
Գ.–XLVI.-1. Լ.Նավոյանի վերաբերյալ որոշում, ՎԲ–01/10 (48)	374
<b>Գ.–XLVII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավորի ինքնաբացարկը (ՀՀ դատական օրենսգրքի 91 հոդված)</b>	
Գ.–XLVII.-1. Հ.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0547/06/09 (46, նույն որոշումը տե՛ս նաև Գ.–XXXIX.-7.)	353
<b>Գ.–XLVIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատասխանատվությունը հետաքննության, նախաքննության մարմինների, դատախազության և դատարանի ապօրինի գործողություններով պատճառված վնասի համար (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064 հոդված)</b>	
Գ.–XLVIII.-1. Գ.Միքայելյանի վերաբերյալ որոշում, ԵԱԳԳ/0085/06/09 (40, նույն որոշումը տե՛ս նաև Գ.- XXI.-1., Գ.- XXII.-2., Գ.–XXVII.-1., Գ.–XXXVII.-1.)	299
Գ.–XLVIII.-2. Հ.Գյուրջյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0004/06/09 (68, նույն որոշումը տե՛ս նաև Գ.- XXII.-3., Գ.–XXVII.-3., Գ.–XXXVII.-2.)	544
<b>Գ.–XLIX. Մեկնաբանվող իրավադրույթ՝ պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման կարգը (ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115 հոդված)</b>	
Գ.–XLIX.-1. Լ.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0057/12/08 (5, նույն որոշումը տե՛ս նաև Ն.-VII.-1., Ն.- XXII.-1., Գ.–XLIV.-1.)	35

## Աղբյուրների ցանկ թիվ 1

### ՀՀ Սահմանադրության դրույթներ

- |                                  |                                                                                             |
|----------------------------------|---------------------------------------------------------------------------------------------|
| 1. ՀՀ Սահմանադրության 3 հոդված   | 326 (42) <sup>1</sup>                                                                       |
| 2. ՀՀ Սահմանադրության 5 հոդված   | 400 (51)                                                                                    |
| 3. ՀՀ Սահմանադրության 6 հոդված   | 229 (30), 266 (35), 377 (48), 437 (55)                                                      |
| 4. ՀՀ Սահմանադրության 16 հոդված  | 302, 305, 307-308 (40)                                                                      |
| 5. ՀՀ Սահմանադրության 17 հոդված  | 416-417 (53)                                                                                |
| 6. ՀՀ Սահմանադրության 18 հոդված  | 50 (6), 308 (40), 329 (42),<br>387-388 (49), 447 (56)                                       |
| 7. ՀՀ Սահմանադրության 19 հոդված  | 248 (28), 250, 259 (33), 387 (49), 421 (53),<br>438, 441 (55), 447 (56), 453 (57), 490 (61) |
| 8. ՀՀ Սահմանադրության 20 հոդված  | 304 (40), 502 (52)                                                                          |
| 9. ՀՀ Սահմանադրության 21 հոդված  | 296 (39)                                                                                    |
| 10. ՀՀ Սահմանադրության 22 հոդված | 248, 250 (33), 304 (40), 416, 421 (53)                                                      |
| 11. ՀՀ Սահմանադրության 43 հոդված | 417 (53)                                                                                    |

---

<sup>1</sup> Սույն և հաջորդ ցանկերում ժողովածուում ընդգրկված որոշման հերթական համարը:

## Աղբյուրների ցանկ թիվ 2

### Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ

1. *Դեյլուրն ընդդեմ Բելգիայի*, 183-184 (24)  
1970թ. հունվարի 17
2. *Գոլդերն ընդդեմ Միացյալ Թագավորության*, 357 (46)  
1975թ. փետրվարի 21
3. *Դեյլենըն ընդդեմ Բելգիայի*, 304 (40), 501 (62)  
1980թ. փետրվարի 27
4. *Արտիկոն ընդդեմ Իտալիայի*, 326 (42)  
1980թ. մայիսի 13
5. *Էկլեն ընդդեմ Գերմանիայի*, 304 (40), 501 (62)  
1982թ. հուլիսի 15
6. *Մոնելլ և Մորիսն ընդդեմ Միացյալ Թագավորության*, 184 (24)  
1987թ. մարտի 2
7. *Գաստու Դոսյեր ունդ Ֆյորդերտեխնիկ ՄՊԸ-ն ընդդեմ Նիդերլանդների*, 280-281 (37)  
1995թ. փետրվարի 23
8. *Սաբրըր և Ուրիշներ ընդդեմ Թուրքիայի*, 309 (40)  
1997թ. նոյեմբերի 27
9. *Աքվիլինան ընդդեմ Մալթայի*, 550-551 (68)  
1999թ. ապրիլի 29
10. *Ջեսիուսն ընդդեմ Լիտվայի*, 72 (8)  
2000թ. հուլիսի 31
11. *Ռեհրոկն ընդդեմ Սլովենիայի*, 310 (40)  
2000թ. նոյեմբերի 11
12. *Ն.Ս.-ն ընդդեմ Իտալիայի*, 310 (40)  
2002թ. դեկտեմբերի 18
13. *Գ.Կ.-ն ընդդեմ Լեհաստանի*, 304 (40), 501 (62)  
2004թ. հունվարի 20
14. *Ջելիլոֆն ընդդեմ Հունաստանի*, 417 (53)  
2004թ. մայիսի 24
15. *Բաթին և Ուրիշներն ընդդեմ Թուրքիայի*, 419, 421 (53)  
2004թ. հունիսի 3
16. *Մուլաոջան ընդդեմ Էստոնիայի*, 470 (59)  
2005թ. փետրվարի 15

17.	<i>Մալովն ընդդեմ Ուկրաինայի,</i> 2005թ. սեպտեմբերի 6	491 (61)
18.	<i>Քեկոսը և Կուսորպուլուն ընդդեմ Հունաստանի,</i> 2005թ. դեկտեմբերի 13	418 (53)
19.	<i>Միխենևն ընդդեմ Ռուսաստանի,</i> 2006թ. հունվարի 26	419 (53)
20.	<i>Մամեդովան ընդդեմ Ռուսաստանի,</i> 2006թ. հունիսի 1	470 (59)
21.	<i>Մոկուրենկոն և Ստրիգունն ընդդեմ Ուկրաինայի,</i> 2006թ. հուլիսի 20	163 (21), 200-201 (26)
22.	<i>Մքքեյն ընդդեմ Միացյալ Թագավորության,</i> 2006թ. հոկտեմբերի 10	551 (68)
23.	<i>Մամադովն ընդդեմ Ադրբեջանի,</i> 2007թ. հունվարի 11	419 (53)
24.	<i>Շուրինսկին ընդդեմ Մլովենիայի,</i> 2007թ. հունվարի 18	304 (40), 501 (62)
25.	<i>Քոլդեան ընդդեմ Ռումինիայի,</i> 2007թ. փետրվարի 15	491 (61)
26.	<i>Ռամասահայն ընդդեմ Նիդերլանդների,</i> 2007թ. մայիսի 15	421 (53)
27.	<i>Հարությունյանն ընդդեմ Հայաստանի,</i> 2007թ. հունիսի 27	63-64 (7), 460 (58)
28.	<i>Գրադինարն ընդդեմ Մոլդովայի,</i> 2008թ. ապրիլի 8	491 (61)
29.	<i>Լադենտոն ընդդեմ Լեհաստանի,</i> 2008թ. հունիսի 18	551 (68)
30.	<i>Պանովիցն ընդդեմ Կիպրոսի,</i> 2008թ. դեկտեմբերի 11	194 (25)
31.	<i>Շաբելնիկն ընդդեմ Ուկրաինայի,</i> 2009թ. փետրվարի 19	304 (40)
32.	<i>Յանկովիչն ընդդեմ Խորվաթիայի,</i> 2009թ. մարտի 5	439 (55), 513-514 (63)
33.	<i>Ալեքսանդր Մակարովն ընդդեմ Ռուսաստանի,</i> 2009թ. մարտի 12	470 (59)
34.	<i>Մեդվեդևը և Ուրիշներն ընդդեմ Ֆրանսիայի,</i> 2010թ. մարտի 29	551 (68)

### Աղբյուրների ցանկ թիվ 3

#### ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ

1. ՄԳՈ-827, 2009թ. սեպտեմբերի 12 302 (40)
2. ՄԳՈ-844, 2009թ. դեկտեմբերի 7 384-389 (49), 401 (51), 446-447 (56),  
453 (57), 518 (64)
3. ՄԳՈ-833, 2009թ. հոկտեմբերի 13 451 (57)
4. ՄԳՈ-765, 2008թ. հոկտեմբերի 8 452 (57)

## Աղբյուրների ցանկ թիվ 4

### ՀՀ վճռարեկ դատարանի դատական ակտեր

1. *Ա.Խաչատրյանի* վերաբերյալ գործով 2006թ. հոկտեմբերի 24-ի որոշում 344 (44)
2. *«Մատադիսի»* գործով 2006թ. դեկտեմբերի 22-ի որոշում 460 (58)
3. *Ա.Աբրահամյանի* վերաբերյալ գործով 2006թ. դեկտեմբերի 26-ի որոշում 512 (63)
4. *Ա.Մերոբյանի* վերաբերյալ գործով 2007թ. մարտի 30-ի որոշում 326 (42)
5. *Հ.Հարությունյանի* վերաբերյալ գործով 2007թ. մարտի 30-ի որոշում 316 (41), 407(52), 429-430 (54), 478-479 (60), 541 (67)
6. *Պ.Բայրամյանի* վերաբերյալ գործով 2007թ. հունիսի 1-ի որոշում 98 (12), 290 (38), 408 (52), 479 (60),
7. *Ս.Ներսիսյանի* վերաբերյալ գործով 2007թ. հունիսի 12-ի որոշում 122 (15), 141 (18), 541 (67)
8. *Տ.Հակոբյանի* վերաբերյալ գործով 2007թ. հուլիսի 13-ի որոշում 470 (59)
9. *Հ.Հաբեշյանի* վերաբերյալ գործով 2007թ. օգոստոսի 30-ի որոշում 6 (1), 107 (13)
10. *Ա.Ճուղուրյանի* վերաբերյալ գործով 2007թ. օգոստոսի 30-ի որոշում 469 (59)
11. *Ա.Մարգարյանի* վերաբերյալ գործով 2007թ. օգոստոսի 30-ի որոշում 107 (13)
12. *Ա.Մինասյանի* վերաբերյալ գործով 2007թ. հոկտեմբերի 26-ի որոշում 107 (13)
13. *Թ.Տեր-Չրիգորյանի* վերաբերյալ գործով 2007թ. հոկտեմբերի 26-ի որոշում 101 (12), 115-116 (14), 316 (41), 407 (52), 429 -430 (54), 478-479 (60), 541 (67),
14. *Կ.Հարությունյանի* վերաբերյալ գործով 2007թ. նոյեմբերի 30-ի որոշում 316 (41), 407 (52), 429 (54), 478-479 (60), 541 (67)
15. *Գ.Մարտիրոսյանի* վերաբերյալ գործով 2008թ. փետրվարի 1-ի որոշում 430 (54), 122 (15), 141 (18)

16.	<i>Հ. Հովհաննիսյանի</i> վերաբերյալ գործով 2008թ. փետրվարի 29-ի որոշում	6 (1)
17.	<i>Մ. Այվազյանի</i> վերաբերյալ գործով 2008թ. մայիսի 23-ի որոշում	460 (58), 514 (63)
18.	<i>Վ. Գրիգորյանի</i> վերաբերյալ գործով 2008թ. հուլիսի 25-ի որոշում	259 (34)
19.	<i>Ա. Մաթևոսյանի</i> վերաբերյալ գործով 2008թ. հուլիսի 25-ի որոշում	154 (20), 221 (29)
20.	<i>Ա. Ավետիսյանի</i> վերաբերյալ գործով 2008թ. հոկտեմբերի 31-ի որոշում	73 (8), 471 (59)
21.	<i>Հ. Բաղդասարյանի</i> վերաբերյալ գործով 2008թ. նոյեմբերի 28-ի որոշում	116 (14), 316 (41), 407 (52), 429-430 (54), 478-479 (60), 541 (67)
22.	<i>«Նարեկ» ՍՊԸ-ի</i> վերաբերյալ գործով 2008թ. նոյեմբերի 28-ի որոշում	52 (6), 201 (26)
23.	<i>Տ. Վահրադյանի</i> վերաբերյալ գործով 2008թ. դեկտեմբերի 26-ի որոշում	229-230 (30), 548 (68)
24.	<i>Գ. Մադաթյանի</i> վերաբերյալ գործով 2009թ. փետրվարի 17-ի որոշում	108 (13), 289 (38), 408 (52), 429 (54), 478 (60)
25.	<i>«Էկոնոմիկնեսասցիա» ՓԲԸ</i> վերաբերյալ գործով 2009թ. հունիսի 2-ի որոշում	199 (26)
26.	<i>Մ. Ավետիսյանի</i> վերաբերյալ գործով 2009թ. հունիսի 29-ի որոշում	148 (19), 258 (34), 385, 388 (49)
27.	<i>Ա. Մարգարյանի</i> վերաբերյալ գործով 2009թ. սեպտեմբերի 16-ի որոշում	423 (53), 506 (62)
28.	<i>Գ. Հովհաննիսյանի</i> վերաբերյալ գործով 2009թ. դեկտեմբերի 18-ի որոշում	430 (54), 541 (67)
29.	<i>Գ. Միքայելյանի</i> վերաբերյալ գործով 2009թ. դեկտեմբերի 18-ի որոշում	501-502 (62), 549-550 (68)
30.	<i>Մ. Հովհաննիսյանի</i> վերաբերյալ գործով 2010թ. փետրվարի 12-ի որոշում	535 (66)
31.	<i>Ա. Մողրովյանի</i> վերաբերյալ գործով 2010թ. փետրվարի 12-ի որոշում	446-447 (56), 518-519 (64)



1.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի դատավճիռ  
քրեական գործ թիվ ԵԶԲԴ/0057/01/08

ՎԲ– ԵԶԲԴ/0057/01 /08

նախագահող դատավոր՝ Ա. Պողոսյան  
դատավորներ՝ Ա. Հովհաննիսյան,  
Հ. Ասատրյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Ա.ՍԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ՝* Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Ե. ԳԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2009 թվականի փետրվարի 17–ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի և  
տուժողի ներկայացուցչի վճռաբեկ բողոքները Աշոտ Սերգեյի Գ-րիգորյանի վերաբեր-  
յալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. նոյեմբերի 19–ի որոշման դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչա-  
կան վարչության Կենտրոնի քննչական բաժնում 2007թ. ապրիլի 30–ին ՀՀ քրեական  
օրենսգրքի 177–րդ հոդվածի 2–րդ մասի 3–րդ կետով հարուցված թիվ 13110407 քրեա-  
կան գործով նույն օրը ձերբակալվել է Աշոտ Գ-րիգորյանը:

2. Նախաքննության մարմնի 2007թ. մայիսի 3–ի որոշմամբ Աշոտ Գ-րիգորյանը  
ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական  
օրենսգրքի 177–րդ հոդվածի 3–րդ մասի 1–ին կետով: Նույն օրը Երևան քաղաքի  
Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի որոշմամբ  
նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը երկու ամիս  
ժամանակով:

3. 2007թ. օգոստոսի 23-ի որոշմամբ Աշոտ Գրիգորյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով և 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

4. Երևանի քրեական դատարանի 2008թ. օգոստոսի 1-ի դատավճռով Աշոտ Գրիգորյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով, 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ, պատիժները մասնակիորեն գումարելու սկզբունքի կիրառմամբ, դատապարտվել է ազատազրկման 5 /հինգ/ տարի ժամկետով՝ անձնական գույքի 1/2-ի բռնագրավմամբ, սակայն ոչ ավելի 25. 000. 000 ՀՀ դրամից:

Միաժամանակ բավարարվել է նաև Հայ Առաքելական Եկեղեցու Արարատյան Հայրապետական Թեմի քաղաքացիական հայցը և վճռվել է ամբաստանյալ Աշոտ Գրիգորյանից բռնագանձել 25.600.000 ՀՀ դրամ՝ որպես հանցագործության հետևանքով պատճառված գույքային վնասի հատուցում:

5. Երևանի քրեական դատարանի 2008թ. օգոստոսի 01-ի դատավճռի դեմ արարքի որակման և պատիժը մեղմացնելու առումով վերաքննիչ բողոք է բերել ամբաստանյալի պաշտպան Է. Աղաջանյանը:

6. 2008թ. նոյեմբերի 19-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը պաշտպանի վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն և որոշել է՝ Աշոտ Սերգեյի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով, 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևան քաղաքի քրեական դատարանի 2008թ. օգոստոսի 01-ի դատավճիռը պատժի մասով փոխել, նրա նկատմամբ կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը և վերջնական պատիժ նշանակել ազատազրկում 2 /երկու/ տարի 6 /վեց/ ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Նույն որոշմամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը քաղաքացիական հայցի մասով դատավճիռը բեկանել է՝ Հայ Առաքելական Եկեղեցու Արարատյան Հայրապետական Թեմին իրավունք վերապահելով հայց հարուցել քաղաքացիական դատավարության կարգով:

7. 2008թ. դեկտեմբերի 24-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. նոյեմբերի 19- որոշման դեմ պատժի մասով վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

8. 2008թ. դեկտեմբերի 30-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. նոյեմբերի 19 – որոշման դեմ պատժի և քաղաքացիական հայցի մասերով վճռաբեկ բողոք է բերել տուժողի ներկայացուցիչ Յուրիկ Խաչատրյանը:

9. 2009թ. հունվարի 23-ին ՀՀ Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով բողոքներն ընդունել է վարույթ:

Վճռաբեկ բողոքները մերժելու և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատական ակտն ուժի մեջ թողնելու վերաբերյալ պատասխան է ներկայացրել ամբաստանյալ Աշոտ Գրիգորյանի պաշտպան Է.Աղաջանյանը:

**Վճարելի բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.**

10. Աշոտ Գրիգորյանը, լինելով երկկողմանի ծնողագուրկ և վարելով թափառաշրջիկ կյանք, 2004թ. ընդգրկվել է «Թուֆենկյան» հիմնադրամի «Մենք պարտավոր ենք ապրել» ծրագրում, որի շրջանակներում Սուրբ Հովհաննես եկեղեցում զբաղվել է կենցաղային աշխատանքներով:

2004թ. սեպտեմբերից մինչև 2005թ. հոկտեմբերը Երևանի Սուրբ Հովհաննես եկեղեցի, իսկ 2005թ. հոկտեմբերից մինչև 2007թ. ապրիլի 30–ը Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցի ապօրինի մուտք գործելով՝ կատարել է առանձնապես խոշոր չափերի գուժարների գաղտնի հափշտակում, մասնավորապես՝

2004թ. սեպտեմբերից մինչև 2005թ. հոկտեմբեր ամիսները, յուրաքանչյուր ամսվա վերջին կիրակի օրը, գողություն կատարելու միասնական դիտավորությամբ, իր մոտ գտնվող հարմարեցված բանալու գործադրմամբ ապօրինի մուտք է գործել Երևանի Սուրբ Հովհաննես եկեղեցի և գանձանակներից ամեն անգամ հափշտակել 200.000 ՀՀ դրամ՝ ընդհանուր առմամբ հափշտակելով 2.600.000 ՀՀ դրամ:

2005թ. հոկտեմբերից մինչև 2007թ. ապրիլի 30–ը, յուրաքանչյուր ամսվա վերջին կիրակի օրը իր մոտ գտնվող հարմարեցված բանալու գործադրմամբ ապօրինի մուտք է գործել Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցի և գանձանակներից ամեն անգամ հափշտակել 275.000 ՀՀ դրամ՝ ընդհանուր առմամբ հափշտակելով 23.000.000 ՀՀ դրամ:

30.04.2007թ. ապրիլի 30–ի գիշերը ժամը 1.00–ի սահմաններում գողություն կատարելու նպատակով մուտք է գործել Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցի և գանձանակներից գաղտնի հափշտակել 212.000 ՀՀ դրամ և 92.812 ՀՀ դրամին համարժեք 260 ԱՄՆ դոլար, սակայն իր կամքից անկախ պատճառներով հանցանքը ավարտին չի հասցրել, քանի որ տեղում բռնվել է Ոստիկանության աշխատողների կողմից:

11. Սուրբ Հովհաննես և Սուրբ Սարգիս եկեղեցիներից հափշտակված գուժարներով ամբաստանյալ Ա. Գրիգորյանը 2005թ. մայիսի 13–ին 6.300 ԱՄՆ դոլարին համարժեք 2.248.911 ՀՀ դրամով գնել է Երևան քաղաքի Սողոմոն Տարոնցի 1 շենքի 519 բնակարանը, 88.000 ՀՀ դրամով գնել է տարբեր տեսակի էլեկտրատեխնիկա, 289.500 ՀՀ դրամով՝ տարբեր ֆորմատի լազերային սկավառակներ և տեսաժապավեններ, ինչպես նաև թվով 32 քաղաքացիների, 12 կազմակերպությունների՝ այդ թվում թվով 4 եկեղեցիների, 4 գիշերօթիկ դպրոցների, 1 միաբանության, 1 մանկական ճամբարի և 2 բարեգործական հիմնարկների նվիրատվություններ է կատարել 10.852.100 դրամի չափով:

12. Ըստ վերաքննիչ քրեական դատարանի որոշման բացառիկ հանգամանքներ են դիտվել Աշոտ Գրիգորյանի վատառողջ լինելը, այն որ նա տառապում է «Ստորին և վերին վերջույթների լիմֆոստազ» հիվանդությամբ, ինչպես «Օրգանական ծագման թեթև կոգնիտիվ և աֆեկտիվ խանգարումներ» հոգեկան հիվանդությամբ, ինչի հետևանքով դատահոգեբուժական փորձաքննության եզրակացությամբ հանցանքը կատարելիս ճանաչվել է սահմանափակ գործունակ:

**Վճարելի բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից բերված վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

13. Բողոքաբերը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը Ա. Գրիգորյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի չի առել նրա կողմից կատարված հանցանքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը:

Ի հիմնավորումն ասվածի՝ նա նշում է, որ Ա. Գրիգորյանի կողմից վերը նկարագրված պայմաններում ծանր հանցագործություն կատարելու հանգամանքը և այն, որ վերջին տարիներում հանրապետությունում լայն տարածում են ստացել եկեղեցիներից կատարված գողությունները, վկայում են մեղադրյալի արարքի հասարակական բարձր վտանգավորության աստիճանի մասին, և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի մատնանշած՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները /անձը բնութագրող, վերջինիս սահմանափակ մեղսունակ, վատառողջ, չդատապարտված լինելը, քննությանն աջակցելը, պատճառված վնասը հարթելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը, հանցանքը խոստովանելը և կատարածի համար զոջալը/, որոնք ըստ էության հաշվի են առնվել մաս Երևանի քրեական դատարանի կողմից պատիժ նշանակելիս, չեն նվազեցնում նրա կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանը:

14. Բողոքաբերը գտնում է նաև, որ սույն քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության նպատակով դատարանների կողմից հնարավոր դատական սխալներ թույլ չտալու համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերող անձը գտնում է, որ Ա. Գրիգորյանի նկատմամբ նշանակվել է պատիժ, որն անարդարացի է ակնհայտ մեղմ լինելու պատճառով: Նա կարծիք է արտահայտում այն մասին, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառումը ՀՀ քրեական օրենսգրքի այն հոդվածի կամ հոդվածի այն մասի կիրառումն է, որը ենթակա չէր կիրառման, օրենքի սխալ մեկնաբանումը, որ չի համապատասխանում դրա իսկական իմաստին, այսինքն՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը օրենքը ճիշտ չի կիրառել՝ Ա. Գրիգորյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը կիրառվել է առանց բավարար հիմքերի:

15. Բողոք բերող անձի կարծիքով Ա. Գրիգորյանի նկատմամբ նշանակվել է պատիժ ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ և 61-րդ հոդվածների խախտմամբ, ուստի նա պահանջում է Աշոտ Սերգեյի Գրիգորյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով, 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. նոյեմբերի 19-ի դատական ակտը պատժի մասով բեկանել, թողնել ուժի մեջ Ա. Գրիգորյանի վերաբերյալ Երևանի քրեական դատարանի 2008թ. օգոստոսի 1-ի դատավճիռը:

Տուժողի ներկայացուցչի կողմից բերված վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

16. Այս բողոքաբերը մույնպես գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը Ա. Գրիգորյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի չի առել նրա կողմից կատարված հանցանքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը՝ նշելով, որ Ա. Գրիգորյանի կողմից ծանր հանցագործություն կատարելու հանգամանքը վկայում է նրա արարքի հասարակական բարձր վտանգավորության աստիճանի մասին, և ինչպես ընդհանուր իրավասության, այնպես էլ վերաքննիչ դատարանների մատնան-

շած՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները չեն նվազեցնում նրա կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանը:

17. Բողոքաբերը գտնում է նաև, որ վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը, և նույն օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված պատժից ավելի մեղմ պատիժ նշանակելով՝ քան նախատեսված է այդ հոդվածի համապատասխան մասով, թույլ է տվել նյութական իրավունքի խախտում: Գրանով անտեսվել են նաև ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի դրույթները, որով սահմանված են պատժի հասկացությունը և նպատակները:

Բողոքաբերը պնդել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը կիրառելիս նրանում սահմանված իրավադրույթներն անհրաժեշտ է մեկնաբանել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված պատժի նպատակների համատեքստում, համաձայն որի՝ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

18. Բողոքաբերը նշել է նաև, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, քաղաքացիական հայցի մասով բեկանելով Երևանի քրեական դատարանի 2008թ. օգոստոսի 1-ի դատավճիռը, խաթարել է արդարադատության բուն էությունը՝ խախտելով սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Տուժողի ներկայացուցիչը հայտնել է, որ քննչական համապատասխան գործողությունների կատարման արդյունքում պարզվել է Ա. Գրիգորյանի կողմից եկեղեցիներից կատարված գողությանը պատճառված վնասի չափը, ըստ որի էլ վերջինս պատասխանատվության է կանչվել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ 25.600.000 ՀՀ դրամ առանձնապես խոշոր չափերի գողություն կատարելու համար, որպիսի փաստը ընդունելով հանդերձ՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը բեկանել է քաղաքացիական հայցի մասով կայացված դատավճիռը:

19. Բողոք բերող անձը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 60-րդ և 158-րդ հոդվածները և թույլ է տվել դատավարական իրավունքի խախտումներ:

20. Բողոք բերող անձը պահանջում է ամբողջությամբ բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի թիվ ԵԶԲԳ/0057/01/08 քրեական գործով 2008թ. նոյեմբերի 19-ին կայացված որոշումը և օրինական ուժ տալ Ա. Գրիգորյանի վերաբերյալ Երևանի քրեական դատարանի 2008թ. օգոստոսի 1-ի դատավճիռին:

### **Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

*I. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառման իրավաչափությունը*

21. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատժի տեսակը և չափը որոշվում է հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել խիստը նշանակվում է, եթե նվազ խիստ տեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները»:

22. Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ կապված բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, (...) կարող է նշանակվել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ (...)»:

23. Այս հարցի կապակցությամբ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումը հետևյալն է. «(...) բացառիկ հանգամանքները կապված են հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի հետ: Այդպիսիք կարող են լինել նաև այլ հանգամանքներ, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը: Ընդ որում, կարևորը ոչ թե պատիժը մեղմացնող տվյալների քանակն է, այլ այն, թե ինչքանով են դրանք էականորեն ազդել հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանի նվազեցման վրա» (տե՛ս Հ.Հաբեշյանի գործով Վճռաբեկ դատարանի 2007թ. օգոստոսի 30-ի որոշումը):

«Օրենքում օգտագործված «բացառիկ» բառը ենթադրում է, որ տվյալ փաստական հանգամանքը կամ դրանց համակցությունը դուրս են գալիս սովորականի շրջանակներից: Այլ կերպ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառման համար հիմք հանդիսացած մեղմացնող հանգամանքը կամ մեղմացնող հանգամանքների համակցությունը պետք է այն աստիճան առանձնահատուկ լինեն, որ վերածվեն բացառության» (տե՛ս Հ.Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2008թ. փետրվարի 29-ի որոշման 19-րդ կետը):

24. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները պատիժ կիրառելիս ունեն օրենքի շրջանակներում որոշակի հայեցողություն դրսևորելու հնարավորություն:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, Աշոտ Գրիգորյանի նկատմամբ կիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի պահանջները, սույն որոշման թիվ 12-ի կետում նշված հանգամանքների համակցությունը դիտելով որպես բացառիկ, դուրս չի եկել այդ հայեցողության թույլատրելի շրջանակներից, պահպանել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ, 64-րդ հոդվածների պահանջները, ինչպես նաև գոր-

ծել է թիվ 23–րդ կետում նշված Վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին համապատասխան:

25. Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 64–րդ հոդվածի կիրառմամբ նյութական կամ դատավարական իրավունքի որևէ խախտում թույլ չի տվել:

*II. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից քաղաքացիական հայցին անդրադառնալը*

26. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ «Քրեական դատավարությունում քաղաքացիական հայց կարող է հարուցվել յուրաքանչյուր պահի՝ սկսած քրեական գործի հարուցումից մինչև դատավճիռ կայացնելու համար դատարանի հեռանալը խորհրդակցական սենյակ»:

Նույն հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ «Քաղաքացիական հայց հարուցվում է կասկածյալի, մեղադրյալի կամ նրա դեմ, ում վրա կարող է գույքային պատասխանատվություն դրվել մեղադրյալի գործողությունների համար»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ «Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում»:

27. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, քննության առարկա դարձնելով քաղաքացիական հայցը, դուրս է եկել վերաքննիչ դատարանում գործի քննության սահմաններից, քանի որ վերաքննիչ բողոքը չի պարունակել պահանջ՝ քաղաքացիական հայցի մասով Երևանի քրեական դատարանի 2008թ. օգոստոսի 1–ի դատավճիռը բեկանելու կամ փոփոխելու մասին:

28. Վերոնշյալ հանգամանքները Վճռաբեկ դատարանին հիմք են տալիս բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. նոյեմբերի 19–ի որոշումը քաղաքացիական հայցի մասով՝ այդ մասով օրինական ուժի մեջ թողնելով Երևանի քրեական դատարանի 2008թ. օգոստոսի 1–ի դատավճիռը, իսկ պատժի մասով անփոփոխ թողնել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. նոյեմբերի 19–ի որոշումը:

Ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92–րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403–406–րդ, 419–րդ, 422–424–րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Աշոտ Սերգեյի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. նոյեմբերի 19–ի որոշումը պատժի մասով թողնել օրինական ուժի մեջ, իսկ այդ մասով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի և տուժողի ներկայացուցչի վճռաբեկ բողոքները՝ առանց բավարարման:

2. Քաղաքացիական հայցի մասով տուժողի ներկայացուցչի վճռաբեկ բողոքը բավարարել՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. նոյեմբերի 19–ի որոշման՝ քաղաքացիական հայցի մասը բեկանել և այդ մասով օրինական ուժ տալ Երևանի քրեական դատարանի 2008թ. օգոստոսի 1–ի դատավճիռին:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. նոյեմբերի 19–ի որոշման մնացած մասերը թողնել օրինական ուժի մեջ:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝*

*ստորագրություն*

*Դատավորներ՝*

*ստորագրություններ*



2.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵՇԴ/0029/01/08

ԵՇԴ/0029/01/08

նախագահող դատավոր՝ Հ.Ասատրյան  
դատավորներ՝ Ա.Պողոսյան, Ա.Հովհաննիսյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Ե. ԳԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ  
p. Երևանում

2009 թվականի փետրվարի 17-ին

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Գարուշ Նորիկի Մադաթյանի գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հուլիսի 15-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

**Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2008թ. ապրիլի 22-ին Գարուշ Նորիկի Մադաթյանի կողմից իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու փաստի առթիվ ոստիկանության Շենգավիթի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

2008թ. ապրիլի 22-ին Գ.Մադաթյանը ձերբակալվել է: 2008թ. ապրիլի 25-ին Գ.Մադաթյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով: Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. ապրիլի 25-ի որոշմամբ Գ.Մադաթյանի նկատմամբ որպես խա-

փանման միջոց է ընտրվել կալանքը: 2008թ. ապրիլի 28–ին Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ Գ.Մադաթյանի նկատմամբ ընտրված կալանավորումը փոխարինվել է գրավով: Նույն օրը գրավի գումարը մուծվել է, և Գ.Մադաթյանն ազատ է արձակվել: 2008թ. մայիսի 30–ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարան:

2. Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանը, կիրառելով արագացած դատաքննություն, 2008թ. հունիսի 17–ի դատավճռով Գ.Մադաթյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316–րդ հոդվածի 1–ին մասով մեղավոր է ճանաչել և դատապարտել 400.000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ տուգանքի:

3. 2008թ. հունիսի 25–ին Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. հունիսի 17–ի դատավճռի դեմ Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի դատախազության դատախազ Մ.Հակոբյանի կողմից վերաքննիչ բողոք է բերվել:

2008թ. հուլիսի 15–ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը վերաքննիչ բողոքը մերժել է՝ Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հունիսի 17–ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

4. 2008թ. դեկտեմբերի 4–ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. հուլիսի 15–ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

2008թ. դեկտեմբերի 24–ին ՀՀ վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետի հիմքով բողոքն ընդունել է վարույթ:

2009թ. փետրվարի 13–ին վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել ամբաստանյալի պաշտպան Թ.Ալեքսանյանը՝ խնդրելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. հուլիսի 15–ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

### **Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստա-կան հանգամանքները**

5. Գարուշ Մադաթյանը, բնակվելով Երևան քաղաքի Արտաշիսյան փողոցի 50/1 շենքի 6–րդ հարկի 30 բնակարանում, ճանաչել և հարևանական նորմալ հարաբերությունների մեջ է գտնվել նույն շենքի 4–րդ հարկի 18 բնակարանում միայնակ բնակվող Քրիստինե Կարապետյանի հետ:

6. 2008թ. ապրիլի 22–ին ժամը 02.30–ի սահմաններում Գ.Մադաթյանը, միջին աստիճանի ալկոհոլային հարբածության վիճակում տուն վերադառնալիս, շուրջ 40 րոպե թակել է Զ.Կարապետյանի բնակարանի մուտքի դուռը: Վերջինս, դուռը չբացելով, զանգահարել է իր համակուրսեցի, ոստիկանության Կենտրոնի բաժնի տեղամասային տեսուչ, վկա Էդուարդ Տիտիկյանին և տեղեկացրել տեղի ունեցողի մասին:

Է.Տիտիկյանն ահազանգել է ոստիկանության Շենգավիթի բաժնի և խնդրել ոստիկանության աշխատակիցներ ուղարկել հիշյալ հասցեով:

Ոստիկանության բաժնում ստացված ահազանգով դեպքի վայր են մեկնել ոստիկանության Շենգավիթի բաժնի ԲՀԲ–ի օպեր–լիազոր, տուժող Վահան Էվինյանը, տեսուչ Խաչատուր Թորոսյանը և հերթապահ մասի վարորդ–ոստիկան Գ.Լորգ Եզակյանը:

7. Գ.Մադաթյանը, նկատելով ոստիկանության աշխատակիցներին, փորձել է խուսափել նրանց հետ հանդիպելուց և բարձրացել է շենքի 6-րդ հարկ: Չհասցնելով բացել իր բնակարանի մուտքի դուռը՝ նա թաքնվել է հարթակի մութ անկյունում, սակայն ոստիկանության աշխատակիցները նրան գտել են և կատարվածը պարզելու նպատակով հրավիրել են ոստիկանության Շենգավիթի բաժին:

Գ.Մադաթյանը հրաժարվել է ոստիկանության բաժին գնալ և, չենթարկվելով ահազանգով ժամանած և իրենց ծառայողական պարտականությունները կատարող իշխանության ներկայացուցիչների օրինական պահանջներին, 5-րդ հարկի աստիճանահարթակում վեճի է բռնվել ոստիկանության Շենգավիթի բաժնի ՔՀԲ-ի օպերյիստը, տուժող Վ. Էվինյանի հետ, որի ընթացքում վերջինիս կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով՝ գլխով և ոտքերով հարվածներ է հասցրել նրա դեմքին, մեջքին և մարմնի այլ մասերին՝ պատճառելով աջ բազկի շրջանի արնագեղման և կրծքավանդակի շրջանի քերծվածքի ձևով առողջության թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ:

**Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերը գտնում է, որ ընդհանուր իրավասության և վերաքննիչ դատարանները Գ.Մադաթյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի չեն առել նրա կողմից կատարված հանցանքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը:

Ի հիմնավորումն ասվածի՝ նշվում է, որ Գ.Մադաթյանի գործողությունների ազդեցիկությունը, հանցանքը ոգելից խմիչք օգտագործած վիճակում կատարելը վկայում են մեղադրյալի արարքի հասարակական բարձր վտանգավորության մասին, և ընդհանուր իրավասության դատարանի մատնանշած՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները (բնակության վայրում դրական բնութագրվելը, նախկինում դատապարտված չլինելը, հանցանքը խոստովանելը և կատարածի համար զղջալը) չեն նվազեցնում նրա կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանը:

9. Բողոքաբերը գտնում է նաև, որ ստորադաս դատարանները հաշվի չեն առել այն հասարակական հարաբերության սոցիալական նշանակությունը, որի դեմ Գ.Մադաթյանը ոտնձգել է: Ընդգծվում է, որ Գ.Մադաթյանին մեղսագրվող ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասը կոչված է պաշտպանելու պետական կառավարման բնականոն կենսագործունեությանն ուղղված այն հասարակական հարաբերությունները, որոնք ծավալվում են իշխանության մարմինների և քաղաքացիների միջև: Իշխանության ներկայացուցիչների դեմ կատարվող հանցագործությունները ոչ միայն խախտում են կառավարման նորմալ գործընթացը, այլ նաև թույլ չեն տալիս իշխանության ներկայացուցիչներին իրականացնել իրենց իշխանական լիազորությունները՝ հեղինակագրկելով թե՛ իշխանությունը, թե՛ նրա ներկայացուցիչներին:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերող անձը գտնում է, որ Գ.Մադաթյանի նկատմամբ նշանակված պատիժը ակնհայտ մեղմ լինելու պատճառով անարդարացի է: Նա կարծիք է արտահայտում այն մասին, որ Գ.Մադաթյանի նկատմամբ պետք է

նշանակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով սահմանված պատիժներից առավել խիստը՝ ազատազրկումը, քանի որ նշված հանցագործության համար նախատեսված պատիժներից նվազ խիստ տեսակները՝ տուգանքը կամ կալանքը, չեն կարող ապահովել պատժի նպատակների իրականացումը:

Բողոք բերող անձի կարծիքով՝ Գ.Մադաթյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ և 61-րդ հոդվածների խախտմամբ, ուստի նա պահանջում է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. հուլիսի 15-ի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի հետևյալ հարցին.

ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի սանկցիայի շրջանակներում Գ.Մադաթյանի նկատմամբ առավել կամ նվազ խիստ պատժատեսակ և (կամ) պատժաչափ ընտրելիս հաշվի առնվել են արդյոք նրա կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանը, բնույթը և սոցիալական նշանակությունը:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անիրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավոր ազգականի նկատմամբ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը՝ կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով»:

ՀՀ քրեական օրենսգրքի նշված հոդվածի սանկցիան այլընտրանքային է, այն հնարավորություն է տալիս դատարանին, ելնելով կոնկրետ հանցագործության հանրային վտանգավորության բնույթից և աստիճանից, հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակել արդարացի պատիժ՝ ընտրելով հոդվածի սանկցիայով նախատեսված պատժատեսակներից որևէ մեկը՝ տուգանք, կալանք կամ ազատազրկում:

13. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այլընտրանքային սանկցիաների միջև ընտրություն կատարելիս պատժի արդարացիության սկզբունքի ապահովման հիմնական երաշխիքը դատարանների կողմից յուրաքանչյուր գործի քննության ժամանակ այնպիսի հանգամանքների բացահայտումն է, որոնք ազդել են անձի կողմից կատարված արարքի հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի վրա:

14. Արարքի հանրային վտանգավորության բնույթը հանցագործության որակական կողմն է, այն որոշվում է մեղքի ձևի և տեսակի, հանցագործության նպատակի և շարժառիթի, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակության վերաբերյալ փաստական տվյալների ամբողջությամբ:

Արարքի հանրային վտանգավորության աստիճանի որոշման ժամանակ դատարանը պետք է բացահայտի կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը:

15. Արարքի հանրային վտանգավորության բնույթի որոշման հարցում Վճռաբեկ դատարանը կարևորում է խախտված քրեաիրավական նորմով պաշտպանվող հասարակական հարաբերության սոցիալական նշանակությունը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատիժ նշանակելիս դատարանները պարտավոր են հաշվի առնել տվյալ ժամանակահատվածում քրեական օրենսդրությամբ պահպանվող կոնկրետ հասարակական հարաբերության սոցիալական նշանակությունը, այդ ոլորտում պետության քրեական քաղաքականության ուղղվածությունը:

16. Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանի դատավճռում նշվում է, որ Գ.Մադաթյանի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առել նրա կատարած հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք դատարանը դիտել է հանցանքը ալկոհոլային հարբածության վիճակում կատարած լինելը, իսկ որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ՝ բնակության վայրում դրական բնութագրվելը, նախկինում դատապարտված չլինելը, հանցանքը խոստովանելը և կատարածի համար գոջալը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանի դատավճռում Գ.Մադաթյանի արարքի հանրային վտանգավորության աստիճանի մասին նշումն իր արտացոլումը չի գտել դատարանի նշանակած պատժատեսակում և պատժաչափում: Գ.Մադաթյանի նկատմամբ նվազ խիստ պատիժ նշանակելիս ընդհանուր իրավասության դատարանը հաշվի չի առել Գ.Մադաթյանի կողմից հանցանքի կատարման *եղանակը և հանցագործությամբ պատճառված վնասի չափը*, մասնավորապես այն, որ Գ.Մադաթյանը ալկոհոլային հարբածության վիճակում շուրջ 40 րոպե տևողությամբ թակել է միայնակ բնակվող հարևանուհու դուռը, անհանգստացրել նրան, որի պատճառով վերջինս ստիպված է եղել դիմել ոստիկանություն, իսկ ոստիկանների ժամանելուց հետո նա ոչ միայն չի ենթարկվել իր ծառայողական պարտականությունները կատարող իշխանության ներկայացուցիչների օրինական պահանջներին, այլև վեճի է բռնվել ոստիկանության Շենգավիթի բաժնի ՔՀԲ-ի օպեր-լիազոր, տուժող Վ.Էվինյանի հետ, որի ընթացքում գլխով և ոտքերով հարվածներ է հասցրել նրա դեմքին, մեջքին և մարմնի այլ մասերին:

17. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գ.Մադաթյանի նկատմամբ պատիժ նշանակելիս ընդհանուր իրավասության դատարանը պարտավոր էր անդրադառնալ նրա

արարքի սոցիալական հետևանքներին, ինչպես նաև հաշվի առնել հանցագործության անմիջական օբյեկտի դեմ ուղղված ոսնձգության բնույթը:

18. Վճռաբեկ դատարանի կարծիքով, ինչպես ընդհանուր իրավասության, այնպես էլ վերաքննիչ քրեական դատարանները որոշում կայացնելիս ճիշտ չեն գնահատել Գ.Մադաթյանի արարքի հանգամանքները, սխալ են կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 61–րդ հոդվածի 2–րդ մասի դրույթները, ինչն էլ հանգեցրել է նրա նկատմամբ ակնհայտ մեղմ լինելու պատճառով անարդարացի պատժի նշանակման:

Վերոնշյալ հանգամանքները Վճռաբեկ դատարանին հիմք են տալիս բեկանել Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի ակտերը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

19. Օրինական ուժի մեջ մտած դատավճիռը բեկանելը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերաքննիչ դատարանում գործի քննության ընթացքում, թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92–րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403–406–րդ, 419–րդ, 422–424–րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Գարուշ Նորիկի Մադաթյանի վերաբերյալ Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հունիսի 17–ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հուլիսի 15–ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

3.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԱՐԱԴ/0021/01/08

ԱՐԱԴ/0021/01/08

նախագահող դատավոր՝ Ա. Դանիելյան  
դատավորներ՝ Մ. Արղամանյան, Մ. Ռեհանյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝*

Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝*

Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ  
Ե. ԳԱՆԻԵԼՅԱՆԻ

2009 թվականի փետրվարի 17-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. նոյեմբերի 3-ի որոշման դեմ,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2007թ. սեպտեմբերի 15-ին Ռուբիկ Համբարձումի Արշալույսյանի կողմից Տիգրան Տիգրանյանին դիտավորությամբ կրծքավանդակի ձախ կեսի թափանցող վերք պատճառելու փաստի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 54102207 քրեական գործը:

2007թ. սեպտեմբերի 17-ին որոշում է կայացվել Ռ.Արշալույսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

2008թ. ապրիլի 2–ին որոշում է կայացվել մեղադրյալ Ռ. Արշալույսյանին 2007թ. սեպտեմբերի 17–ին առաջադրված մեղադրանքը փոփոխելու, լրացնելու և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 108–րդ հոդվածով մեղադրանք առաջադրելու վերաբերյալ:

2008թ. մայիսի 8–ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարան: Մեղադրական եզրակացության մեջ դատախազն առարկել է դատական քննության արագացված կարգ կիրառելու դեմ:

2. 2008թ. մայիսի 22–ին Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել քրեական գործը վարույթ ընդունելու վերաբերյալ:

2008թ. մայիսի 22–ին տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչը ներկայացրել է գործը մեղադրողին վերադարձնելու վերաբերյալ միջնորդություն՝ պատճառաբանելով, որ Ռուբիկ Համբարձումի Արշալույսյանի արարքի իրավաբանական որակումը չի բխում գործում առկա ապացույցներից:

Արագածոտնի մարզի դատախազը 2008թ. հունիսի 3–ին միջնորդել է թիվ 54102207 քրեական գործը վերադարձնել մեղադրողին՝ քրեական գործով կազմված մեղադրական եզրակացությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 296–րդ հոդվածի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:

Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292–րդ, 293–րդ և 296–րդ հոդվածներով, 2008թ. հունիսի 4–ին որոշում է կայացրել քրեական գործը մեղադրողին վերադարձնելու մասին՝ առկա թերությունները վերացնելու համար սահմանելով 5–օրյա ժամկետ:

3. 2008թ. հունիսի 10–ին քրեական գործն ուղարկվել է Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարան:

Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանը 2008թ. հունիսի 13–ին որոշում է կայացրել 2008թ. հունիսի 26–ին դատական քննություն նշանակելու մասին: Որոշման մեջ նշվել է նաև, որ գործը մեղադրողին վերադարձնելու հիմքեր չկան:

Ռ.Արշալույսյանը Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատական նիստում միջնորդել է արագացված դատական քննության կարգ կիրառելու մասին: Դատական քննության ընթացքում մեղադրողը փոխել է իր դիրքորոշումը և չի առարկել նշված միջնորդության դեմ:

Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. հունիսի 26–ի դատավճռով դատական քննության արագացված կարգի կիրառմամբ Ռ.Արշալույսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 108–րդ հոդվածով և դատապարտվել է ազատազրկման 2 տարի ժամկետով:

4. Տուժողի իրավահաջորդը վերաքննիչ բողոք է բերել Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի նշված դատավճռի դեմ: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. նոյեմբերի 3–ին որոշում է կայացրել Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանը 2008թ. հունիսի 26–ի դատավճիռը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու մասին:

5. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. նոյեմբերի 3–ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:



2009թ. փետրվարի 16-ին տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Հ.Ալումյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները**

6. Ռ.Արշալույսյանի դուստր Մարի Արշալույսյանը ամուսնացած է եղել Թալին քաղաքի բնակիչ Տիգրան Տիգրանյանի հետ: Տ.Տիգրանյանը հաճախակի չարաշահել է ալկոհոլային խմիչքների օգտագործումն ու յուրաքանչյուր նման դեպքից հետո տանը ստեղծել է անախորժ մթնոլորտ, ծեծի է ենթարկել Մ.Արշալույսյանին:

7. 2007թ. սեպտեմբերի 14-ին Տիգրան Տիգրանյանը, հերթական անգամ գտնվելով ալկոհոլ օգտագործած վիճակում, հեռախոսային զրույցի ընթացքում սպառնացել է իր կնոջը, որ տուն գալուն պես նրա հետ հաշվեհարդար կտեսնի: Մ.Արշալույսյանը, վախենալով ծեծից, իր մանկահասակ երեխաների հետ միասին գնացել է հայրական տուն՝ Թալին քաղաքի Խանջյան փողոցի 15 շենքի բնակարան:

8. Տիգրան Տիգրանյանը, տեղեկանալով, որ իր կինն ու երեխաները գտնվում են Ռ.Արշալույսյանի տանը, գնացել է այնտեղ, ոտքով հարվածել, կոտրել է բնակարանի մուտքի դուռը և ներխուժել բնակարան, հարվածել և մի կողմ է շարտել նախ Ռ.Արշալույսյանին, ապա նրա կնոջը՝ Հ.Ազոյանին, փորձել է հարձակվել Մ.Արշալույսյանի վրա: Այդ ժամանակ Ռ.Արշալույսյանը, նախարարաբար սեղանին՝ սկուտեղի վրա դրված ձմերուկ կտրելու խոհանոցային դանակը վերցնելով, հարձակվել է Տ.Տիգրանյանի վրա:

9. Տուժող Տ.Տիգրանյանը եղել է ֆիզիկապես շատ ուժեղ, իսկ մեղադրյալ Ռ.Արշալույսյանը՝ թույլ և տկար (բացակայում է նրա աջ դաստակը): Հ.Ազոյանն ու Մ.Արշալույսյանը փորձել են Ռ.Արշալույսյանին հարվածող Տ.Տիգրանյանին հեռացնել: Քաշքշուկի ընթացքում Ռ.Արշալույսյանը, ճիշտ չընկալելով իրադրությունը, իր և իր ընտանիքի անդամներին Տ.Տիգրանյանի ոտնձգությունից պաշտպանելու նպատակով և հաշվի չառնելով ոտնձգության բնույթն ու վտանգավորության աստիճանը, անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումով, դանակով հարվածել է Տ.Տիգրանյանի կրծքավանդակի առջևի ձախ կեսին և պատճառել ծակած-կտրած թափանցող (սրտի վնասումով) վնասվածք:

10. Վնասվածք ստանալուց հետո Տ.Տիգրանյանը բնակարանից դուրս է եկել ու հեռացել: Ոստիկանության բաժնին հարող փողոցում նրա վիճակը վատթարացել է, և նա իր բջջային հեռախոսով զանգահարել է իր հորեղբոր տղային: Վերջինս նրան տեղափոխել է Թալինի հիվանդանոց, որտեղ վիրահատվելուց հետո Տ.Տիգրանյանը տեղափոխվել է Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն: Այնտեղ, առանց գիտակցության գալու, 2007թ. սեպտեմբերի 29-ին Տ.Տիգրանյանը մահացել է:

11. Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ գործը դատական քննության նշանակելու մասին 2008թ. հունիսի 13-ի որոշման մեջ ընդհանուր իրավասության դատարանը նշել է, որ «(...) Քրեական գործի վարույթը կարճելու, կամ քրեական հետապնդումը դադարեցնելու, կասեցնելու, գործը մեղադրողին վերադարձնելու, ինչպես նաև ինքնաբացարկի հիմքեր չկան (...)» (հատոր 2, գ/թ 324):

12. Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. հունիսի 26-ի դատավճռում առկա է հետևյալ ձևակերպումը. «(...) Մինչ դատաքննությունն

սկսելը ամբաստանյալ Ռուբիկ Համբարձումի Արշալույսյանը միջնորդեց դատական քննությունն անցկացնել արագացված կարգով և հայտարարեց, որ միջնորդությունը ներկայացրել է կամավոր, խորհրդակցել է պաշտպանի հետ, գիտակցում է արագացված կարգով դատաքննություն անցկացնելու հետևանքները, առաջադրված մեղադրանքն իրեն պարզ է, համաձայն է մեղադրանքի հետ և առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր է ճանաչում: Մեղադրողը չառարկեց արագացված դատական քննության կարգ կիրառելու դեմ:

Դատարանը, պարզելով, որ առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ և 375.2-րդ հոդվածներով նախատեսված պայմանները, որոշեց դատական քննությունն անցկացնել արագացված կարգով (...)» (հատոր 2, գ/թ. 372):

13. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. նոյեմբերի 3-ի որոշման մեջ նշվում է՝ «(...) մինչդեռ ընդհանուր իրավասության դատարանի դատական քննություն նշանակելու մասին որոշման շարադրանքից հետևում է, որ դատարանը ծանոթ է եղել գործի նյութերին, սակայն կիրառել է դատական քննության արագացված կարգ, որը տվյալ դեպքում կիրառելի համարվել չէր կարող, և ինչը տվյալ դեպքում հանգեցրել է քրեադատավարական օրենքի էական խախտման, որը կարող է ազդել սույն գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, որպիսի հանգամանքը հիմք է դատական ակտը բեկանելու և նոր դատաքննություն կատարելու համար գործը նույն դատարան ուղարկելու համար» (հատոր 3, գ/թ. 63):

### **Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

14. Բողոքաբերի պնդմամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2008թ. նոյեմբերի 3-ի որոշմամբ Ռ.Արշալույսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 108-րդ հոդվածով Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. հունիսի 26-ի դատավճիռը բեկանելով և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելով թույլ է տվել դատավարական իրավունքի խախտում, որն արտահայտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 375.1-րդ, 395-րդ և 398-րդ հոդվածների սխալ կիրառմամբ և ազդել է գործի ելքի վրա՝ ամբաստանյալին անհիմն զրկելով դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդությամբ հանդես գալու իրավունքից: Ի հիմնավորումն ասվածի՝ բողոքաբերը նշում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, վերլուծության ենթարկելով քրեական գործում առկա ապացույցները, ոչ թե միանշանակ սխալ է համարել ամբաստանյալի արարքի իրավաբանական որակումը, այլ դատաքննությամբ այն հստակեցնելու անհրաժեշտություն տեսնելով՝ քրեադատավարական օրենքի էական խախտում է համարել ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական քննության արագացված կարգի կիրառումը և պարտադիր համարել գործով դատաքննության իրականացումը այն դեպքում, երբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված է, որ դատարանը արագացված կարգ կիրառելու միջնորդությունը մերժում է, եթե պարզում է, որ ամբաստանյալի արարքի իրավաբանական որակումը ճիշտ չէ: Բողոքաբերն ընդգծում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդվածը վերաբերում է ամբաստանյալի

արարքի իրավաբանական միանշանակ սխալ գնահատականին, այլ ոչ թե դատաքննությամբ հետագայում դա պարզելուն:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դիրքորոշումը հանգում է նրան, որ սույն գործով ՀՀ քրեական օրենսգրքի 108-րդ հոդվածով արարքի որակման հարցում հիմնավոր հետևության հանգելու համար անհրաժեշտ է կատարել դատաքննություն, որի արդյունքում միայն հնարավոր կլինի պարզել՝ ամբաստանյալի արարքի իրավաբանական որակումը ճիշտ է, թե ոչ, և ըստ անհրաժեշտության՝ հնարավոր կլինի լուծել գլխավոր դատախազին կամ տեղակալին գործով մեղադրական եզրակացությունը վերահաստատելու առաջարկության հարցը:

Վերոնշյալ դեպքում, բողոքաբերի կարծիքով, ավելորդ են դառնում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դատական քննության արագացված կարգի կիրառման դրույթները:

15. Բողոքաբերը նշում է, որ բովանդակային առումով վերաքննիչ դատարանի դիրքորոշումը հանգում է դատական ակտի բեկանման մեկ այլ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հիմքին՝ քրեական օրենքի սխալ կիրառմանը: Նշված հիմքը, սակայն, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից չէր կարող նշվել, քանի որ վերաքննիչ բողոքը բերվել է քրեադատավարական օրենքի էական խախտման հիմքով, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը դատական ակտի բեկանման հիմք է համարել ընդհանուր իրավասության դատարանի կողմից քրեադատավարական օրենքի էական խախտում թույլ տալը, սակայն չի մատնանշել, թե դատական քննության ընթացքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածով սահմանված քրեադատավարական օրենքի որ սկզբունքները կամ այլ ընդհանուր դրույթներն են խախտվել:

Բողոքի հեղինակը փաստել է նաև, որ սույն քրեական գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դիրքորոշումը չի համապատասխանում ոչ միայն քրեադատավարական օրենքով սահմանված դատական քննության արագացված կարգի կիրառման կոնկրետ դրույթներին, այլ նաև այդ ինստիտուտի բուն էությանն ու նշանակությանը:

16. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. նոյեմբերի 11-ի որոշումը և օրինական ուժ տալ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. հունիսի 26-ի դատավճռին:

### **Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

17. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի հետևյալ հարցին՝ իրավաչափ էր արդյոք ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից քննության առարկա դարձնել Ռ.Արշալույսյանին մեղաագրվող արարքի իրավաբանական որակման ճիշտ լինելը՝ ելնելով արարքի որակման հիմքում դրված ապացույցների գնահա-

տումից, այն դեպքում, երբ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանը արագացված կարգ կիրառելու միջնորդությունը չի մերժել Ռ.Արշալույսյանի արարքի որակումը ճիշտ չլինելու հիմքով:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Եթե մեղադրողը մեղադրական եզրակացությունում չի առարկել արագացված կարգ կիրառելու դեմ, ապա ամբաստանյալը կամ մեղադրյալն իրեն առաջադրված մեղադրանքի հետ համաձայնվելու դեպքում իրավունք ունի միջնորդելու արագացված դատական քննության կարգ կիրառելու մասին այն հանցագործություններով, որոնց համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված պատիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազատազրկումը:

Մինչև դատաքննությունն սկսելը մեղադրողը դատարանի առաջարկությամբ կարող է իր դիրքորոշումը փոխել, թեպետ արագացված կարգ կիրառելու դեմ առարկել է մեղադրական եզրակացությունում»:

Գործի նյութերից (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը) երևում է, որ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանը դատական քննության արագացված կարգ կիրառել է ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով, ամբաստանյալի նկատմամբ արագացված դատական քննություն կիրառելու՝ օրենքով նախատեսված պահանջների առկայության և ամբաստանյալի միջնորդությունը մերժելու պայմանների բացակայության հիման վրա:

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «(...) Դատարանը արագացված կարգ կիրառելու միջնորդությունը մերժում է նաև, եթե պարզում է, որ ամբաստանյալի արարքի իրավաբանական որակումը ճիշտ չէ: Այս դեպքում դատարանն իր նախաձեռնությամբ սույն օրենսգրքի 309.1 հոդվածի հինգերորդ մասով սահմանված կարգով և ժամկետով հետաձգում է դատական նիստը՝ առաջարկելով գլխավոր դատախազին կամ նրա տեղակալին վերահաստատելու մեղադրական եզրակացությունը: Ամբաստանյալի կամ մեղադրյալի անմեղսնակության առնչությամբ հիմնավոր կասկածների առկայության դեպքում դատարանը մերժում է արագացված կարգ կիրառելու միջնորդությունը՝ անցնելով ընդհանուր կարգով գործի քննությանը»:

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորը, (...) հետազոտում է գործի նյութերը և քրեական գործը վարույթ ընդունելու պահից 15 օրվա ընթացքում կայացնում հետևյալ որոշումներից մեկը՝

1) դատական քննություն նշանակելու մասին (...):»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գործը մեղադրողին վերադարձնելու մասին որոշում դատավորը կայացնում է այն դեպքում, երբ մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին, կամ արարքի իրավաբանական որակումը չի համապատասխանում արարքի նկարագրությանը կամ չի բխում գործում առկա ապացույցներից»:

21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 296-րդ և 375.1-րդ հոդվածների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց պահանջները հանգում են հետևյալին.

1) դատական քննություն նշանակելու փուլում գործը մեղադրողին վերադարձնելու մասին որոշումը, ի թիվս այլոց, կայացվում է այն դեպքերում, երբ դատարանն ակնհայտ անհամապատասխանություն է հայտնաբերում ապացույցների և արարքի նկարագրության միջև կամ արարքի նկարագրության և արարքի իրավաբանական որակման միջև:

2) դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդություն հարուցվելու դեպքում դատարանն իրավասու է մերժել միջնորդությունը, ի թիվս այլոց, այն դեպքում, երբ հայտնաբերում է անհամապատասխանություն արարքի նկարագրության և արարքի որակման միջև:

Այսպիսով, դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդությունը քննելիս առաջին ատյանի դատարանը չի կարող անդրադառնալ արարքի նկարագրության և դրա հիմքում դրված ապացույցների համապատասխանության հարցին: Ուստի վերաքննիչ դատարանը ևս իրավասու չէր անդրադառնալու այդ հարցին, քանի որ վերաքննիչ դատարանը, որպես վերանայող ատյան, գործի էության վերաբերյալ չի կարող ավելի լայն լիազորություններ ունենալ, քան առաջին ատյանի դատարանը:

22. Հետևաբար ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իրավասու չէր քննության առարկա դարձնել Ռ.Արշալույսյանին մեղսագրվող արարքի իրավաբանական որակման ճիշտ լինելը:

23. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

24. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից ընդհանուր իրավասության դատարանում գործի քննության արագացված կարգի կիրառումը քրեադատավարական օրենքի էական խախտում դիտելը չի բխում ինչպես գործի նյութերից, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներից: Վճռաբեկ դատարանն անթույլատրելի է համարում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից սույն գործով ընդհանուր կարգով դատաքննության իրականացումը պարտադիր համարելը:

25. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը որոշում կայացնելիս խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ, 395-րդ և 398-րդ հոդվածները, ինչը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. նոյեմբերի 11-ի որոշումը և օրինական ուժ տալ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. հունիսի 26-ի դատավճռին:

Ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Ռուբիկ Համբարձումի Արշալույսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 108-րդ հոդվածով Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. հունիսի 26-ի դատավճիռը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. նոյեմբերի 11-ի որոշումը և օրինական ուժ տալ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. հունիսի 26-ի դատավճռին:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

4.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության

ՎԲ-01/09

վերաքննիչ քրեական դատարանի 15-617/08 որոշում

նախագահող դատավոր՝ Գ.Սելիք-Սարգսյան  
դատավորներ՝ Մ.Պետրոսյան, Մ.Ռեհանյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝*

Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝*

Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ. ԱՄԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*դատախազ*

Գ.ԵՐԵՄՅԱՆ

*պաշտպաններ*

Ռ.ՌՇՏՈՒՆԻ  
Ա.ՉԱԲԱՐՅԱՆ

2009 թվականի փետրվարի 17-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով Ալեքսեյ Սարգսի Սկրտչյանի վերաբերյալ  
ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հուլիսի 21-ի որոշման դեմ ՀՀ  
գլխավոր դատախազի բերած վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2002թ. մարտի 13-ին Երևանի Նորք թաղամասի թիվ 89 տանը բռնկված հրդե-  
հը հանգցնելուց հետո սենյակում հայտնաբերվել է նույն տան բնակիչ Արմինե Ափրո-  
յանի դիակը, որի գլխի հետևի հատվածում հայտնաբերվել է գանգոսկրի կտորվածք:

Այս փաստի առթիվ Երևանի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների դատախազի կողմից 2002թ. մարտի 18–ին հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 100–րդ հոդվածի հատկանիշներով:

2. 2002թ. մարտի 21–ին քննիչ Ա.Հակոբյանը որոշում է կայացրել դիտավորությամբ սպանություն կատարելու կասկածանքով Ալեքսեյ Սկրտչյանին ձերբակալելու մասին:

2002թ. մարտի 23–ին Ա.Սկրտչյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 100–րդ հոդվածով:

Երևանի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2002թ. մարտի 23–ի որոշմամբ բավարարվել է քննիչի միջնորդությունը Ա.Սկրտչյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին:

3. 2002թ. ապրիլի 23–ին որոշում է կայացվել Ա.Սկրտչյանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 100–րդ հոդվածով և 96–րդ հոդվածի 2–րդ մասով մեղադրանք առաջադրելու մասին:

Ա.Սկրտչյանը մեղադրվել է այն բանում, որ 2002թ. մարտի 12–ի լույս 13–ի գիշերը՝ ժամը 00–ի սահմաններում, ոգելից խմիչք օգտագործած վիճակում գնացել է իր հարևանուհի Արմինե Ափրոյանի տուն, որտեղ վիճաբանության մեջ մտնելով նրա հետ՝ օդու շշով մեկ անգամ հարվածել է նրա գլխին: Վերջինս հայիռյել է Ա.Սկրտչյանին և փորձել է ձեռքերով հարվածել նրան: Ա.Սկրտչյանը, Ա.Ափրոյանին սպանելու դիտավորությամբ ձախ ձեռքով բռնելով նրա ուսից, մարմինը թեքել, իջեցրել է իր կողմը ու աջ ձեռքում բռնած շշով ուժգին երկրորդ անգամ հարվածել է նրա գլխի հետևի հատվածին: Ստացած հարվածներից Ա.Ափրոյանը ուշակորույս վայր է ընկել՝ դեմքով դեպի հատակը: Ա.Ափրոյանին սպանելու դիտավորությունը մինչև վերջ հասցնելու նպատակով Ա.Սկրտչյանը երկու անգամ փայտի կտորով հարվածել է գետնին ընկած Ա.Ափրոյանի գլխի նույն հատվածին ու սպանել է նրան: Այնուհետև հանցագործության հետքերը թաքցնելու նպատակով իրենց տնից վերցրած նավթով դիտավորությամբ հրկիզել է տունը և դիակը՝ տան սեփականատեր Ա.Գուրյանին պատճառելով 735.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

4. Երևանի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների դատախազը 2002թ. մայիսի 30–ին հաստատել է քննիչի կողմից կազմված մեղադրական եզրակացությունը, և գործն ուղարկվել է դատարան:

2002թ. մայիսի 31–ին գործը վարույթ է ընդունվել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2004թ. հուլիսի 8–ի դատավճռով Ալեքսեյ Սկրտչյանը մեղավոր է ճանաչվել և դատապարտվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104–րդ հոդվածի 1–ին մասով՝ 10 տարի ժամկետով ազատազրկման, 185–րդ հոդվածի 2–րդ մասի 1–ին կետով՝ 3 տարի ժամկետով ազատազրկման: Վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 10 տարի ժամկետով:

5. Պաշտպան Ռ.Ռշտունու վերաքննիչ բողոքի հիման վրա վերանայելով քրեական գործը՝ վերաքննիչ դատարանը 2005թ. մարտի 18–ի որոշմամբ գործը վերադարձրել է լրացուցիչ նախաքննության:

Վերաքննիչ դատարանը նախաքննության ընթացքում քրեական գործի վարույթ



իրականացնող մարմնի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 194-րդ հոդվածի, 195-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտումը դիտել է որպես քրեադատավարական օրենքի էական խախտում, որը հնարավոր չէ վերացնել վերաքննիչ դատարանի դատաքննության ընթացքում:

6. Վերաքննիչ դատարանի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրող Գ.Պապոյանը:

ՀՀ Վճռաբեկ դատարանը 2005թ. մայիսի 6-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը թողել է առանց բավարարման, իսկ վերաքննիչ դատարանի 2005թ. մարտի 18-ի որոշումը՝ անփոփոխ:

7. Լրացուցիչ նախաքննություն կատարելու համար գործն ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների դատախազին, որը 2005թ. մայիսի 23-ին գործի նախաքննությունը հանձնարարել է քննիչ Ա.Բարսեղյանին:

2005թ. հունիսի 8-ին քրեական գործը վարույթ է ընդունել ՀՀ գլխավոր դատախազին առնթր ՀԿԳ քննիչ Հ. Ղարախանյանը և կատարել նախաքննություն:

2005թ. սեպտեմբերի 26-ին կազմվել է մեղադրական եզրակացություն, որում մասնավորապես նշվել է, որ լրացուցիչ նախաքննությամբ հերքվել են Ա.Սկրտչյանի նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կողմից բռնություն գործադրելու և խոստովանական ցուցմունքներ կորզելու փաստերը:

8. 2005թ. սեպտեմբերի 26-ին գործն ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան: 2005թ. հոկտեմբերի 3-ին գործն ընդունվել է վարույթ:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2007թ. հոկտեմբերի 24-ի դատավճռով Ալեքսեյ Սկրտչյանը մեղավոր է ճանաչվել և դատապարտվել ազատազրկման՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով՝ 8 տարի ժամկետով, 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով՝ 1 տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կարգով վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 8 տարի 7 ամիս ժամկետով:

9. Գ-ատավճռի դեմ բերված վերաքննիչ բողոքով մեղադրողը խնդրել է Ա.Սկրտչյանի նկատմամբ սահմանել ազատազրկման ձևով ավելի խիստ պատիժ, իսկ պաշտպան Ա. Չաքարյանը խնդրել է կայացնել արդարացման դատավճիռ:

Վերաքննիչ դատարանը 2008թ. փետրվարի 1-ին որոշում է կայացրել Ա.Սկրտչյանի խափանման միջոց կալանքը վերացնելու և նրան կալանքից ազատ արձակելու վերաբերյալ՝ նկատի ունենալով, որ նա դատապարտվել է ազատազրկման 8 տարի 7 ամիս ժամկետով, սակայն նախնական կալանքի տակ է գտնվում 5 տարի 10 ամիս 8 օր, իսկ 2003թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի պահանջի համաձայն՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը կալանքի տակ պահելու ժամկետը հաշվակցվում է ազատազրկման ձևով նշանակված պատժին՝ մեկ օրը մեկուկես օրվա դիմաց, որպիսի հաշվակցման արդյունքում Ա.Սկրտչյանը ենթակա է կալանքից ազատ արձակման:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հուլիսի 21-ի որոշմամբ Ալեքսեյ Սկրտչյանի վերաբերյալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 24-ի դատավճռով:

ճիշտ ամբողջությամբ բեկանվել է: Վերաքննիչ դատարանը որոշել է Ալեքսեյ Սկրտչյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի առաջին մասով և 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով քրեական հետապնդումը դադարեցնել, գործի վարույթը կարճել և նրան արդարացնել կատարված հանցագործությանը նրա մասնակցությունն ապացուցված չլինելու պատճառով:

10. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հուլիսի 21-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազը բերել է վճռաբեկ բողոք:

Վճռաբեկ դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի հիման վրա, 2008 թվականի դեկտեմբերի 16-ի որոշմամբ բողոքն ընդունել է վարույթ:

Պաշտպաններ Ռ.Ռ.Նշտունու և Ա.Ջաբարյանի կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոքի պատասխան, որտեղ արտահայտելով իրենց դիրքորոշումը գործով կայացված դատական ակտերի և բերված բողոքի վերաբերյալ՝ խնդրել են ՀՀ գլխավոր դատախազի բերած վճռաբեկ բողոքը մերժել:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.**

11. Քրեական գործ հարուցելու մասին 2002թ. մարտի 18-ի որոշմամբ (տե՛ս վերը՝ կետ 1) նախաքննության կատարումը հանձնարարվել է քննիչ Ա.Հակոբյանին: Դատախազը նույն օրը նաև որոշում է կայացրել նախաքննությունը քննչական խմբի կողմից կատարելու մասին և որոշել է խմբի կազմում ընդգրկել դատախազության քննիչ Ա.Հակոբյանին և դատախազի օգնական Գ.Գ.Լորգյանին: Խմբի ղեկավար է նշանակվել քննիչ Ա.Հակոբյանը, որին հանձնարարվել է գործն ընդունել իր վարույթ: Քննիչ Ա.Հակոբյանի կողմից քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշումը նյութերում չկա:

12. 2002թ. մարտի 21-ին որպես կասկածյալ հարցաքննության ժամանակ Ա.Սկրտչյանը խոստովանական ցուցմունք է տվել այն մասին, որ դեպքի օրը՝ ժամը 11-12-ի կողմը, գնացել է Արմինեի տուն, նրա հետ վիճաբանել է իր տուն մարմնավաճառ աղջիկներ բերելու կապակցությամբ: Արմինեն վրդովվել է, իր հասցեին արել վիրավորական արտահայտություն, վերցրել է օդու դատարկ շիշը և սպառնացել, որ կհարվածի: Ինքը խլել է շիշը և հարվածել Արմինեի գլխին, որից վերջինս ուշագնաց ընկել է գետնին: Տեսնելով, որ նա չի շարժվում, ինքը մեկ անգամ էլ նրա գլխին հարվածել է փայտով: Մտածելով, որ Արմինեն մահացել է, ինքը գնացել է Ավան, զանգել է մորը և կատարվածի մասին պատմել նրան: Հետքերը թաքցնելու նպատակով մոր հետ որոշել են տունը և դիակը այրել: Իրենց տնից վերցրել են նավթ, եկել են Արմինեի տուն, ինքը սպասել է ներքևում, իսկ մայրը բարձրացել է վերև, որոշ ժամանակ անց իջել է, և իրենք գնացել են Ավան-Առինջում գտնվող իրենց տուն:

Այս ցուցմունքը տեսաձայնագրվել է տեսախցիկով:

2002թ. մարտի 22-ին նշված հանգամանքները Ա.Սկրտչյանը պնդել է քննչական փորձարարություն կատարելու ժամանակ:

2002թ. մարտի 23-ին որպես վկա հարցաքննվել է Ա.Սկրտչյանի մայրը՝ Հայկանուշ Դանիելյանը, որն իր ձեռքով գրած ցուցմունքում հայտնել է, որ իրոք, դեպքի օրը՝ ժամը 11:30-ի սահմաններում, իր որդին՝ Ալեքսեյը եկել է իրենց տուն և այլալված

իրեն պատմել, որ վիճել է Արմինեի հետ, շշուկ հարվածել է նրա գլխին, ապա իրենց տնից նավթ է բերել և վառել դիակն ու տունը:

13. Երբ 2002թ. մարտի 23-ին Ա.Սկրտչյանին մեղադրանք է առաջադրվել (տես վերը՝ կետ 2), նա իրեն մեղավոր է ճանաչել և տվել խոստովանական ցուցմունք՝ նշելով, որ դիակի և տան հրկիզումը կատարել է անձամբ:

14. Պաշտպան Ա.Քարամյանը միջնորդություն է ներկայացրել Ա.Սկրտչյանի նկատմամբ դատաբժշկական փորձաքննություն նշանակելու վերաբերյալ՝ պատճառաբանելով, որ վերջինս իրեն հայտնել է ծեծի և բռնության միջոցով խոստովանական ցուցմունքներ կորզելու մասին: Այդ հարցը պարզելու համար քննիչ Ա.Հակոբյանը 2002թ. ապրիլի 19-ին նշանակել է դատաբժշկական փորձաքննություն: Ա.Սկրտչյանի դատաբժշկական փորձաքննության թիվ 364/հ եզրակացությամբ պարզվել է, որ նրա մոտ մարմնական վնասվածքների օբյեկտիվ հատկանիշներ չեն հայտնաբերվել:

15. Լրացուցիչ նախաքննությամբ որպես ապացույց է համարվել Ա.Սկրտչյանի՝ որպես կասկածյալի հարցաքննության և քննչական փորձարարության տեսաձայնագրությունը և տեսաձայնագրային փորձաքննության եզրակացությունը, որով հաստատված է համարվել տեսաձայնագրման իսկությունը: Այդ կապակցությամբ ցուցմունք է վերցվել օպերատոր Էդգար Հարությունյանից: Հարցաքննվել են նաև քննչական փորձարարությանը որպես ընթերակա մասնակցած Աշոտ Շավեշյանը և Սենիկ Փանոսյանը, որոնք նշել են, որ Ալեքսեյ Սկրտչյանը հանցանքը խոստովանել է կամովին, և նրա վրա բռնության հետքեր չեն եղել:

Գրություն է ստացվել ՀՀ ոստիկանության կենտրոնական բաժնի Մարաշի բաժանմունքից այն մասին, որ 2002թ. մարտ ամսին քրեական հետախուզության աշխատակիցների մեջ Արման Հակոբյան, Սաքո, Մուրո անունով անձինք չեն աշխատել: Դա հաստատել է նաև որպես վկա հարցաքննված օպեր լիազոր Մարգիս Հայրապետյանը՝ նշելով նաև, որ ինքը նշված քրեական գործի հետ առնչություն չի ունեցել:

16. Ալեքսեյ Սկրտչյանի վերաբերյալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 24-ի դատավճռով հաստատված է համարվել հետևյալը.

Տուժող Արմինե Ափրոյանը, չունենալով բնակության վայր, իր նախկին հարևանուհի Արմիդա Դուրյանի թույլտվությամբ, առանց վարձավճարի բնակվել է նրա ամուսնու սեփականությունը համարվող՝ Երևան քաղաքի Նորքի թիվ 89 տան երկրորդ հարկում: Արմինե Ափրոյանին հաճախակի այցելել են տարբեր մարդիկ, հիմնականում տղամարդիկ, որը վրդովմունք է առաջացրել հարևանների շրջանում: Այդ կապակցությամբ հարևանները բողոք են ներկայացրել ոստիկանություն, և ոստիկանները Արմինե Ափրոյանին նախազգուշացրել են հարևանների հանգիստը խանգարելու համար:

Արմինե Ափրոյանը հարևաններից առավել մտերիմ է եղել ամբաստանյալ Ալեքսեյ Սկրտչյանի և նրա մոր՝ Հայկանուշ Դանիելյանի հետ: Ինչպես Արմինե Ափրոյանը, այնպես էլ Ալեքսեյ Սկրտչյանը հաճախ են այցելել միմյանց, օգնել իրար տարբեր կենցաղային հարցերում:

2002թ. մարտի 12-ին՝ ժամը 24-ի սահմաններում, Ալեքսեյ Սկրտչյանը ոգելից խմիչք

օգտագործած վիճակում գնացել է Արմինե Ափրոյանի տուն, որտեղ նա մեռակ է եղել: Միասին սուրճ խմելու և գրուցելու ընթացքում նրանց միջև վիճաբանություն է սկսվել: Արմինե Ափրոյանը հայտնի է Ալեքսեյ Սկրտչյանին, իսկ վերջինս շոժ, այնուհետև վառարանի մոտ դրված փայտի կտորով մի քանի անգամ հարվածել է նրա գլխին: Արմինե Ափրոյանը վայր է ընկել և ստացած վնասվածքների հետևանքով տեղում մահացել: Իր կողմից կատարված հանցագործության հետքերը թաքցնելու նպատակով Ալեքսեյ Սկրտչյանը իրենց տնից նավթ է բերել և նավթի միջոցով հրկիզել ինչպես Արմինե Ափրոյանի կացարանը, այնպես էլ դրա հատակին ընկած Արմինե Ափրոյանի դիակը՝ տուժող Ա.Գուրյանին պատճառելով խոշոր չափի՝ 735.000 ՀՀ դրամի վնաս:

17. 2008 թվականի հուլիսի 21–ի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը գտել է, որ «մեղսագրված արարքում Ալեքսեյ Մարգսի Սկրտչյանի մեղավորությունը հաստատված չէ այն ապացուցված չլինելու պատճառով և սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները, հետևաբար դատավճիռը պետք է բեկանել ամբողջությամբ, վարույթը կարճել և նրան արդարացնել մեղսագրված հանցագործությանը նրա մասնակցությունն ապացուցված չլինելու պատճառով»:

### **Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

18. Վճռաբեկ բողոք բերած անձը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հուլիսի 21–ի որոշումն անօրինական է, անհիմն և չպատճառաբանված, կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներով: Վերաքննիչ դատարանն անտեսել է Ալեքսեյ Սկրտչյանի մեղավորությունն ապացուցված լինելու հանգամանքը, անտեսել է լրացուցիչ նախաքննության, առաջին ատյանի դատարանի և վերաքննիչ դատարանի դատաքննությունների շրջանակներում ձեռք բերված ու հետազոտված ապացույցները, միակողմանի մոտեցում դրսևորելով՝ մեղադրանքների հիմքից հանել է թույլատրելի ապացույցներն ու արդարացրել Ալեքսեյ Սկրտչյանին՝ դրանով իսկ թույլ տալով դատական սխալ և հանդես գալով պաշտպանական կողմում: Վերաքննիչ դատարանի որոշման հիմքում դրվել են գործի տվյալներից չբխող և իրականությանը չհամապատասխանող պատճառաբանություններ և հիմնավորումներ, որոնք հակասում են թե օրենքին և թե սույն գործով Վճռաբեկ դատարանի կայացրած 2005թ. մայիսի 6–ի որոշմանը: Այսպես, չնայած վերաքննիչ դատարանում դատաքննության առարկա է հանդիսացել լրացուցիչ նախաքննության ընթացքում ձեռք բերված և 2005թ. սեպտեմբերի 26–ին հաստատված մեղադրական եզրակացությամբ ու 2007թ. հոկտեմբերի 24–ի դատավճռով մեղադրանքի հիմքում դրված ու հետազոտված ապացույցները, սակայն դրանց փոխարեն արդարացման դատական ակտի հիմքում դրվել և վերլուծվել են սկզբնական նախաքննության արդյունքներով կազմված և 2002թ. մայիսի 30–ին հաստատված մեղադրական եզրակացությամբ մեղադրանքի հիմքում դրված ապացույցները: Այն դեպքում, երբ դրանք արդեն իսկ Վճռաբեկ դատարանի 2005թ. մայիսի 6–ի որոշմամբ ճանաչված են եղել անթույլատրելի:

Հենվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7–րդ և 105–րդ հոդվածների վրա՝ Վերաքննիչ դատարանն անհիմն հետևություն է արել այն մասին, թե ընթերականեր Ա.Շավեշյանի, Ս.Փանոսյանի և հետաքննության մարմնի աշխատակիցներ Ա.Գրիգորյանի, Ա.Կարապետյանի, Ա.Պողոսյանի և մյուսների ցուցմունքները չեն

կարող դրվել մեղադրանքի հիմքում: Մինչդեռ այդ ցուցմունքները թույլատրելի են և պետք է դրվեն մեղադրանքի հիմքում: Վճռաբեկ դատարանի 2005թ. մայիսի 6-ի որոշմամբ ուղղակի հանձնարարություն է տրվել հարցաքննելու ոստիկանության աշխատակիցներին: Այդ որոշման պահանջները կատարելով՝ նախաքննության մարմինը և դատարանը պարտավոր էին հարցաքննել նրանց, քանի որ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 4-րդ մասը թույլ է տալիս նշված անձանց հարցաքննել որպես վկա և ցուցմունքները դնել մեղադրանքի հիմքում: Ինչ վերաբերում է ընթերակաների և այլ անձանց հարցաքննությանը, ապա դա նույնպես բխում է ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 4-րդ մասի, այնպես էլ Վճռաբեկ դատարանի հիշյալ որոշման պահանջներից, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջների կատարման անհրաժեշտությունից: Չեն խախտվել նաև քրեական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի պահանջները, քանի որ ոստիկանության աշխատակիցները, ընթերակաները և այլ անձինք հարցաքննվել են նշված անհրաժեշտությունից ու պահանջներից ելնելով:

19. Նախաքննության մարմինը և առաջին ատյանի դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ կատարելով Վճռաբեկ դատարանի որոշման պահանջները, ստուգման ենթարկելու և օգտագործելու եղանակով ձեռք են բերել հանցագործությունը Ալեքսեյ Մկրտչյանի կողմից կատարված լինելու փաստը հաստատող, ինչպես նաև բռնությամբ նրանից ցուցմունքներ կորզելու պնդումները հերքող նոր, բավարար ապացույցներ, որոնք և դրվել են ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով մեղադրանքների ու դատավճռի հիմքում: Սկզբնական նախաքննության որևէ ապացույց մեղադրանքի հիմքում չի դրվել:

20. Նկատի ունենալով, որ քրեական գործ հարուցելուց մինչև դրա դատաքննությունը կազմված փաստաթղթերը, այդ թվում հարցաքննությունների, քննչական փորձարարության, զննման և այլ արձանագրությունները, փորձագետների եզրակացությունները, ինչպես նաև տեսագրություններն իրենց մեջ պարունակում են ապացուցողական նշանակության փաստական տվյալներ, որոնցով հաստատվում են քրեական գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներ, ուստի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 106-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի պահանջների պահպանմամբ դրանք ճանաչվել են ապացույց հանդիսացող այլ փաստաթղթեր, իրենց և ապացույցներ և կցվել քրեական գործին:

21. Վերաքննիչ դատարանը ոչնչով չի մնալովրված և միակողմանի հետևություններ է արել, թե հանցագործության կատարմանը Ա.Մկրտչյանի մասնակցությունը չի հաստատվել, և սպառվել են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները:

22. Բողոքի հեղինակը գտնում է, որ վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 6-րդ, 7-րդ, 11-րդ, 48-րդ, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ, 7-րդ, 8-րդ, 17-րդ, 25-րդ, 127-րդ, 106-րդ հոդվածներով սահմանված դրույթներն ու սկզբունքները: Նշված խախտումների արդյունքում անհիմն, չպատճառաբանված և ապօրինի որոշման կայացմամբ ոտնահարվել են տուժող, հանգուցյալ Արմինե Ափրոյանի, նրա հարազատների, ինչպես նաև արդարադատությ-

յան և մարդու իրավունքների պաշտպանության շահերը, առանձնապես ծանր հանցագործություն կատարած անձը խուսափել է քրեական պատասխանատվությունից: Գատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը: Այսինքն առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված պայմանները:

Նշված խախտումներով արդարացման որոշում կայացնելով՝ վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, այսինքն՝ նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

23. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրում է ամբողջությամբ բեկանել և փոփոխել ՀՀ վերքաննիչ քրեական դատարանի 2008 թվականի հուլիսի 21-ի դատական ակտը և օրինական ուժ տալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 24-ի դատական ակտին:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

24. Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

*1. Առաջին ատյանի դատարանի կողմից որպես ապացույց չթույլատրվող նյութերն օգտագործելու հարցը*

25. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են քրեական օրենքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Նույն հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ քրեական դատավարությունում որպես ապացույցներ թույլատրվում են նաև այլ փաստաթղթեր:

Այլ փաստաթղթերին վերաբերող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ փաստաթուղթ է թղթային, մագնիսական, էլեկտրոնային կամ այլ կրիչի վրա բառային, թվային, գծագրական կամ այլ նշանային ձևով արված ցանկացած գրառում, որով կարող են հաստատվել քրեական գործի համար նշանակություն ունեցող տվյալները:

Փաստորեն ապացույցի այս տեսակն իր մեջ ներառում է տեղեկության (ինֆորմացիայի) նյութական կրողների բոլոր տեսակները, եթե այն նշանակություն ունի ապացուցման ենթակա հանգամանքները պարզելու համար:

26. Իրեղեն ապացույցների հասկացությունն ամրագրած ՀՀ քրեական դատա-

վարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրեղեն ապացույցներ են այն առարկաները, որոնք հանցագործության գործիք են ծառայել կամ իրենց վրա հանցագործության հետքեր են պահպանել, կամ հանցավոր գործողությունների օբյեկտներ են եղել, ինչպես նաև հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամը, այլ արժեքները և մյուս բոլոր առարկաները, որոնք կարող են հանցագործությունը հայտնաբերելու, գործի փաստական հանգամանքները պարզելու, մեղավորներին ի հայտ բերելու, մեղադրանքը հերքելու կամ պատասխանատվությունը մեղմացնելու միջոցներ ծառայել: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ առարկան իրեղեն ապացույց է ճանաչվում քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ: Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի 115-րդ հոդվածի առաջին մասում նշված հատկանիշներ պարունակող փաստաթղթերը կարող են ծառայել նաև որպես իրեղեն ապացույցներ: Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ այլ փաստաթղթերն ապացույց են ճանաչվում վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ:

27. Այլ փաստաթղթերի՝ ապացույցի կարգավիճակ ձեռք բերելու համար որևէ քննչական գործողության կատարում չի պահանջվում. անհրաժեշտ է կոնկրետ փաստաթուղթն ապացույց ճանաչելու և գործի նյութերին կցելու մասին որոշման ընդունում: Նախաքննության ընթացքում մեղադրող կողմի հավաքած փաստաթղթերը կցվում են գործին և դառնում ապացույց քննիչի (հետաքննության մարմնի) որոշմամբ:

28. Ինչպես երևում է գործի նյութերից՝ Վճռաբեկ դատարանը, 2005թ. մայիսի 6-ի որոշմամբ անփոփոխ թողնելով Ալեքսեյ Սկրտչյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005թ. մարտի 18-ի որոշումը, նշել է, որ քննչական խմբի ղեկավարի կողմից առանց քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու գործով քննչական գործողություններ կատարելը քրեադատավարական օրենքի էական խախտում է, և քննիչի կողմից թույլ տրված օրինակաչության սկզբունքի խախտմամբ ստացված ապացույցներն անթույլատրելի են:

29. Ելնելով այն բանից, որ առաջին նախաքննության ընթացքում ապացույցները ձեռք են բերվել քննչական և դատավարական գործողություններ կատարելու իրավունք չունեցող անձանց կողմից և չեն կարող օգտագործվել որպես ապացույցներ, գործը վարույթ ընդունած քննիչը նոր նախաքննությամբ դրանք մեղադրանքի հիմքում չի դրել:

Լրացուցիչ նախաքննությամբ, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 115-րդ և 122-րդ հոդվածների հիման վրա՝ քննիչի որոշումներով այլ փաստաթղթեր և իրեղեն ապացույցներ են ճանաչվել քրեական գործի փաստական հանգամանքները պարզելու համար նշանակություն ունեցող տվյալները հաստատող օբյեկտիվ տեղեկություններ պարունակող փորձաքննությունների եզրակացությունները, այդ թվում՝ տեսաձայնագրային փորձաքննության եզրակացությունը, տեսաերիզների զննման արձանագրությունը, քննչական փորձարարության փաստերի տեսագրությունները պարունակող տեսաձայներիզները, որոնք նոր նախաքննությամբ հարցաքննված վկաների ցուցմունքներ

րի հետ միասին դրվել են մեղադրանքի հիմքում:

30. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով մեղադրանքի հիմքում դրված ապացույցները թույլատրելի են, քանի որ որպես ապացույց օգտագործված նյութերը ձեռք են բերվել՝ ա/ սույն գործով տվյալ դատավարական գործողությունը կատարելու համար լիազորված սուբյեկտի կողմից. բ/ միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասում նշված աղբյուրներից. գ/ քննչական և դատավարական գործողությունների կատարման կարգի պահպանմամբ. դ/ քննչական և դատավարական գործողությունների ընթացքի և արդյունքների ամրագրումը կարգավորող օրենքի բոլոր պահանջներին համապատասխան:

31. Անհիմն է վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, թե Ալեքսեյ Սկրտչյանին ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով մեղադրանք առաջադրելու և դատավճիռ կայացնելու հիմք է հանդիսացել 2002թ. մարտի 21-ին՝ որպես կասկածյալի տված նրա խոստովանական ցուցմունքը, 2002թ. մարտի 22-ին կազմված քննչական փորձարարության արձանագրությունը, 2002թ. մարտի 23-ի՝ որպես մեղադրյալի խոստովանական ցուցմունքը, ինչպես նաև նրա մոր՝ Հայկանուշ Դանիելյանի 2002թ. մարտի 23-ի և վկա Ռոբերտ Վլասյանի 2002թ. մարտի 21-ի ցուցմունքներն այն մասին, որ Ալեքսեյն իրենց հայտնել է, որ Արմինեի սպանությունը և տան հրկիզումն ինքն է կատարել: Ինչպես երևում է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2007թ. հոկտեմբերի 24-ի դատավճռից՝ առաջին նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցները, այդ թվում՝ վերևում թվարկվածները, Ալեքսեյ Սկրտչյանի մեղադրանքի հիմքում չեն դրվել:

32. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված փաստարկների առկայության պայմաններում անհիմն են վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, թե առաջին ատյանի դատարանը մեղադրական դատավճռի հիմքում դրել է որպես ապացույց չթույլատրվող նյութեր:

*II. Հետաքննության մարմնի աշխատակցի և ընթերակալի՝ որպես վկա հարցաքննելու իրավաչափությունը.*

33. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ որպես վկա չեն կարող կանչվել և հարցաքննվել դատավորը, այդ թվում նաև՝ լիազորությունները դադարեցված, դատախազը, քննիչը, հետաքննության մարմնի աշխատակիցը և դատական նիստի քարտուղարը՝ կապված այն քրեական գործի հետ, որում նրանք իրականացրել են իրենց դատավարական լիազորությունները, բացառությամբ տվյալ գործի վարույթի ընթացքում թույլ տրված սխալների և չարաշահումների քննության, նոր ի հայտ եկած հանգամանքներով տվյալ գործի նորոգման կամ կորցրած վարույթի վերականգնման դեպքերի:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ քննչական գործողության արձանագրության ոչ լրիվությունը չի կարող մեղադրանքի նպատակներով լրացվել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, ինչպես նաև ընթերակալի և այլ անձանց ցուցմունքներով:

34. Ինչպես երևում է Վճռաբեկ դատարանի 2005թ. մայիս 6-ի որոշումից, նա-



խաբանության մարմնին հանձնարարվել է նոր նախաքննությամբ ստուգել բռնության գործադրմամբ ցուցմունքներ կորզելու վերաբերյալ Ա.Սկրտչյանի բերած փաստաթղթերը, հարցաքննել նրա մատնանշած ոստիկանության աշխատակիցներին, կատարել առերեսումներ և հանգել համապատասխան հետևության:

35. Կատարելով որոշման պահանջները և ղեկավարվելով գործի արդարացի քննության սկզբունքով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդված)՝ բռնության գործադրմամբ ցուցմունքներ կորզելու հետ կապված նախաքննության մարմինը գործի վարույթի ընթացքում թույլ տրված սխալների և չարաշահումների կապակցությամբ որպես վկաներ հարցաքննել է Ա.Սկրտչյանի մատնանշած ոստիկանության աշխատակիցներին, ինչպես նաև քննչական գործողություններին մասնակցած ընթերականերին և այլ անձանց: Այսինքն՝ սույն գործով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի պահանջները չեն խախտվել: Չեն խախտվել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, քանի որ ոստիկանության աշխատակիցները, ընթերակաները և այլ անձինք չեն հարցաքննվել քննչական գործողության արձանագրության ոչ լրիվությունը մեղադրանքի նպատակներով լրացնելու համար:

36. Նոր նախաքննությամբ հերքվել է Ալեքսեյ Սկրտչյանի նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կողմից բռնություն գործադրելու և այլ եղանակով խոստովանական ցուցմունքներ կորզելու փաստը:

37. Ինչ վերաբերում է վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, թե սպանության դեպքը 2002թ. մարտի 13-ի գիշերը՝ ժամը 00-ի սահմաններում, կատարված լինելու փաստը չի համընկնում տուժողի դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացությամբ վերջինիս մահվան վրա հասնելու տվյալներին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջին ատյանի դատարանը փորձագետի եզրակացությունը գնահատել է՝ հաշվի առնելով գործի բոլոր հանգամանքներն իրենց համակցության մեջ:

38. Նույնը վերաբերում է նաև Երևանի Նորքի թիվ 89 տանը տեղի ունեցած հրդեհի կապակցությամբ նախապատրաստված նյութերով կազմված հրդեհի մասին ակտին:

39. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջին ատյանի դատարանը հաշվի է առել վերը նշված փաստական տվյալները և գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում հանգել է ճիշտ հետևության:

40. Սինչդեռ վերաքննիչ դատարանը, խախտելով գործի արդարացի քննության սկզբունքն ամրագրած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի և ապացույցների գնահատմանը վերաբերող 127-րդ հոդվածի պահանջները, թույլ է տվել քրեադատական օրենքի էական խախտում, որն ազդել է գործի ելքի վրա, հանգեցրել գործով ոչ ճիշտ որոշում կայացնելուն և դա այն դեպքում, երբ արդարացվածի մեղավորությունը կատարված հանցագործության մեջ կասկած չի հարուցում, ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 420-րդ հոդվածի հիման վրա վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա է բեկանման:

41. Քանի որ գործի նյութերով հերքվում են վերաքննիչ դատարանի որոշման մեջ նշված՝ կատարված հանցագործությանն Ալեքսեյ Սկրտչյանի մասնակցությունն ապացուցված չլինելու մասին բոլոր փաստարկները և հաստատվում Երևանի Կենտ-

րոն և Նորք-Մարաշ համայնաքնների առաջին ատյանի դատարանի դատավճռի օրինական, հիմնավորված ու պատճառաբանված լինելը, անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա բեկանել Ալեքսեյ Սկրտչյանի վերաբերյալ վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական ուժ տալ առաջին ատյանի դատարանի դատավճռին:

42. Սույն գործով թույլ տրված դատավարական իրավունքի խախտումները հանգեցրել են դատական սխալի, որի արդյունքում կայացված որոշումը չի համապատասխանում արդարության պահանջներին:

Նշված դատական սխալը, որն ազդել է գործի արդյունքի վրա, խաթարում է արդարադատության բուն էությունը, դատարանի որոշման՝ որպես արդարադատության ակտի իմաստը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

43. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ, 403-406-րդ, 419-420-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ալեքսեյ Սարգսի Սկրտչյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հուլիսի 21-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 24-ի դատավճռին:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

5.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության

ԵԿԳ/0057/12/08

վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵԿԳ/0057/12/08

նախագահող դատավոր՝ Ա.Գանիելյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԳԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈԳՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*դատախազ՝* Զ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

30 մարտի 2009 թվական

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով դատապարտյալ Լևոն Միհրանի Գազարյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը մերժելու վերաբերյալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հունվարի 14-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի փետրվարի 18-ի որոշման դեմ դատապարտյալի բերած վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. Լևոն Միհրանի Ղազարյանը Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2007 թվականի օգոստոսի 16-ի դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով, 112-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ 3 /երեք/ տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով՝ 3 /երեք/ տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով՝ 1 /մեկ/ տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կարգով նշանակված պատիժները մասնակիորեն զումարելու միջոցով Լ.Ղազարյանի նկատմամբ վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում՝ 4 /չորս/ տարի ժամկետով: Պատժի սկիզբը հաշվվել է 2006 թվականի հուլիսի 17-ից:

2. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի 2008 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ հավանություն է տրվել դատապարտյալ Լևոն Միհրանի Ղազարյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշմանը:

3. «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմը 2008 թվականի դեկտեմբերի 24-ին միջնորդագիր է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ դատապարտյալ Լ.Ղազարյանին պատիժը կրելուց պայմանական ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ:

4. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հունվարի 14-ի որոշմամբ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդագիրը՝ Լ.Ղազարյանին պատիժը կրելուց պայմանական ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ, մերժվել է:

5. Դատապարտյալ Լ.Ղազարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009 թվականի փետրվարի 18-ին որոշում է կայացրել դատապարտյալի վերաքննիչ բողոքը մերժելու և Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հունվարի 14-ի որոշումն օրինական ուժի մեջ բողոքելու մասին:

6. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի փետրվարի 18-ի որոշման դեմ դատապարտյալ Լ.Ղազարյանը վճռաբեկ բողոք է բերել:

2009 թվականի մարտի 17-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը բողոքն ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ

հողվածի 1–ին մասի 1–ին կետի հիմքով («Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.**

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

7. Գատապարտյալ Լևոն Ղազարյանը «Գատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում պատիժը կրում է 2007 թվականի հուլիսի 30–ից:

8. 2008 թվականի հուլիսի 30–ի թիվ 491 արձանագրության համաձայն՝ դատապարտյալ Լ.Ղազարյանին նշանակվել է բաց տիպի ուղղիչ հիմնարկ:

9. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի 2008 թվականի օգոստոսի 12–ի որոշմամբ հավանություն չի տրվել դատապարտյալ Լևոն Միհրանի Ղազարյանին պատիժը կրելուց պայմանական ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշմանը:

10. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի 2008 թվականի դեկտեմբերի 23–ի որոշմամբ հավանություն է տրվել դատապարտյալ Լևոն Միհրանի Ղազարյանին պատիժը կրելուց պայմանական ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշմանը:

11. 2009 թվականի հունվարի 14–ի դրությամբ դատապարտյալ Լևոն Ղազարյանը նշանակված պատժից կրել է 2 /երկու/ տարի 5 /հինգ/ ամիս 27 /քսանյոթ/ օր, մնացել է կրելու 1 /մեկ/ տարի 6 /վեց/ ամիս 3 /երեք/ օր:

12. Ըստ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից տրված բնութագրի՝ ընթացիկ գնահատման արդյունքները լավ են, ռիսկայնության աստիճանը՝ ցածր, դատապարտյալի ուղղման վերաբերյալ եզրակացությունը՝ պատժի կրման ընթացքում դրսևորել է օրինապահ վարքագիծ, պահպանել է համակեցության կանոնները:

13. Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը դատապարտյալի ուղղված չլինելու և նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք ունենալու վերաբերյալ հետևության է հանգել՝ պատճառաբանելով, որ 2005 թվականի նոյեմբերի 15–ին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելուց շուրջ 8 ամիս անց Լ.Ղազարյանը կատարել է երկու ծանր և մեկ միջին ծանրության հանցագործություններ և դատապարտվել: Բացի այդ, պատիժը կրելու ընթացքում դատապարտյալը ենթարկվել է կարգապահական տույժի, իսկ խրախուսման քի չի արժանացել: Նշանակված տույժը մարվել է, սակայն նրա վարքը գնահատելիս կատարած իրավախախտումը ենթակա է ուսումնասիրության և գնահատման:

14. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, ստուգելով ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հունվարի 14-ի որոշման օրինակա-նությունը և հիմնավորվածությունը, գտել է, որ դատարանի որոշումը վերացնելու հիմ-քեր չկան, քանի որ դատապարտյալի արդեն իսկ կրած պատիժը բավարար չէ նրա ուղղվելու և վերադաստիարակվելու համար, և նա դեռևս կարիք ունի պատժի մնացած մասը կրելու:

**Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

15. Ըստ բողոք բերած անձի՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի փետրվարի 18-ի որոշումը կայացվել է նյութական և դատավարական իրավունքի խախտմամբ: Դատարանը խախտել է գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման պարտականությունը, սխալ է մեկնաբանել օրենքի պահանջը, ինչը հանգեցրել է դա-տավարական իրավունքի և արդարացի քննության սկզբունքի խախտման, այն է՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի հունվարի 14-ի որոշման օրինակաճանությունը և հիմնավոր-վածության ստուգման արդյունքում դատարանը հանգել է դատապարտյալի արդեն իսկ կրած պատժի բավարար չլինելու և վերադաստիարակման համար պատժի մնա-ցած մասը կրելու կարիք ունենալու վերաբերյալ ոչ ճիշտ հետևության:

16. Մինչդեռ դատապարտյալի ուղղումը մարդու, հասարակության, համակեցուք-յան կանոնների և ավանդույթների նկատմամբ դատապարտյալի հարգալից վերա-բերմունքի ձևավորումն է, ինչպես նաև օրինապահ վարքագծի խթանումը՝ դատա-պարտյալի մոտ առողջ կենսակերպի ամրապնդման և զարգացման նպատակով: Դա-տապարտյալ Լ.Ղազարյանն իր նկատմամբ նշանակված չորս տարի ժամկետով ա-զատազրկման պատժի կեսից ավելին կրել է, տարված ուղղման միջոցների շնորհիվ վերջինս կատարել է համապատասխան հետևություններ, որն արձանագրվել է «Դա-տապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից: Հետևաբար դատարանի որոշումը չի բխում ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի և 76-հոդվածի 1-ին մասի պահանջներից:

17. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի փետրվարի 18-ի որոշումը և փոփոխել: Բե-կանված մասով կայացնել գործն ըստ էության լուծող դատական ակտ կամ գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմաններով նոր քննության ծավալը:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

18. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի այն հարցին, թե դատապարտյալ Լ.Ղազարյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամ-կետ ազատելու վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի միջնորդագիրը մեր-ժելու մասին ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի և վե-րաքննիչ քրեական դատարանի որոշումները կայացվել են արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-րդ և 115-րդ հոդված-

ների, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434–րդ հոդվածի պահանջների պահպանմամբ:

19. ՀՀ քրեական օրենսգրքի 76–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ «Ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ կրող անձը կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը գտնի, որ նա ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի: Ընդ որում, անձը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել լրացուցիչ պատժից: Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելիս դատարանը հաշվի է առնում նաև դատապարտվածի կողմից տուժողին պատճառված վնասը հարթելու հանգամանքը»:

ՀՀ քրեական օրենսգրքի 76–րդ հոդվածի 3–րդ մասի համաձայն՝

«Պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել միայն, եթե դատապարտյալը փաստացի կրել է՝

1) ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ երրորդը.

2) ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան կեսը (...):»:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝

«Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով կարող է փոխարինվել, եթե դատապարտյալը փաստացի կրել է պատժի՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով դրա համար սահմանված նվազագույն ժամկետը:

Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատում կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինում չի կիրառվում, երբ հանցագործության կատարմամբ մարդու առողջությանը պատճառվել է վնաս կամ առաջացրել է մարդու մահ, և դատապարտյալը ամբողջությամբ չի հարթել տուժողին պատճառված վնասը»:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114–րդ հոդվածի 3–րդ մասի համաձայն՝ միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու միջնորդագիր ներկայացնելու վերաբերյալ պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի որոշմանը հավանություն է տալիս պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովը, որի կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է Հանրապետության Նախագահի հրամանագրով:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝

«Պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը մեկամսյա ժամկետում պարտադիր լսում է կարգապահական տույժ չունեցող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցը:

Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ միջնորդագիր ներկայացնելու մասին որոշում կայացնելու դեպքում որոշումը ներկայացնում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի հավանությանը:

Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը միջնորդագիր է ներկայացնում դատարան միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ միայն պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի հավանությունն ստանալու դեպքում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պատժից պայմանական վաղաժամկետ ազատում և պատժի չկրած մասը ավելի մեղմ պատժով փոխարինում դատարանը կիրառում է պատժի կատարումն իրականացնող մարմնի միջնորդագրով (...)»:

20. Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դատապարտյալ Լ.Ղազարյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու միջնորդագիր ներկայացնելու օրը նա կրել էր նշանակված պատժի օրենքով սահմանված մասը՝ կեսից ավելին:

Հանցագործությամբ պատճառված վնասը հարթելու հարց տուժողի կողմից չի բարձրացվել, և դատապարտյալի վրա դատավճռով նման պարտականություն չի դրվել:

Միևնույն ժամանակ պահպանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ և ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-րդ և 115-րդ հոդվածներով սահմանված՝ դատապարտյալին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու միջնորդագիր ներկայացնելու դատավարական կարգը, որի համաձայն՝ քրեակատարողական հիմնարկի վարչակազմը միջնորդագիրն իրավասու դատարան է ներկայացրել միայն համապատասխան անկախ հանձնաժողովի հավանությունը ստանալուց հետո:

2009 թվականի հունվարի 14-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, դատական նիստում՝ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդագրի հիման վրա քննարկելով դատապարտյալ Լ.Ղազարյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը, հանգել է հետևության, որ դատապարտյալը չի ուղղվել և կարիք ունի իր նկատմամբ նշանակված պատժի մնացած մասը կրելու: Այդ հետևությունը դատարանը հիմնավորել է այն հանգամանքով, որ 2005 թվականի նոյեմբերի 15-ին պատժի կրումից պայմանական



վաղաժամկետ ազատվելուց շուրջ 8 ամիս անց Լ.Ղազարյանը կատարել է երկու ծանր և մեկ միջին ծանրության հանցագործություններ և դատապարտվել: Բացի այդ, դատապարտյալը պատիժը կրելու ընթացքում չի խրախուսվել, ենթարկվել է կարգապահական տույժի, որը, չնայած մարվել է, սակայն նրա վարքը գնահատելիս ենթակա է ուսումնասիրության և գնահատման:

2009 թվականի փետրվարի 18-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, դատական նիստում քննության առնելով Լ.Ղազարյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ միջնորդագիրը մերժելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի հունվարի 14-ի որոշման դեմ դատապարտյալի բերած վերաքննիչ բողոքը, գտել է, որ դատարանի որոշումը վերացնելու հիմքեր չկան, քանի որ դատապարտյալի արդեն իսկ կրած պատիժը բավարար չէ նրա ուղղվելու և վերադաստիարակվելու համար և նա դեռևս կարիք ունի պատժի մնացած մասը կրելու:

21. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես ընդհանուր իրավասության առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ քրեական դատարանի պատճառաբանությունները չէին կարող հիմք հանդիսանալ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդագիրը մերժելու համար, քանի որ դատարանները միջնորդագիրը մերժելու հիմքում դրել են բացառապես դատապարտյալի կողմից նախկինում դատապարտված լինելու և պայմանական վաղաժամկետ ազատվելուց հետո ծանր և միջին ծանրության հանցանքներ կատարելու հանգամանքները: Նշված հանգամանքերը, սակայն, պայմանական վաղաժամկետ ազատելու գործընթացը կանոնակարգող որևէ իրավադրույթով նախատեսված չեն՝ որպես դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատումը չկիրառելու հիմք: Այսինքն՝ դատարանները Լ.Ղազարյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու մասին միջնորդագիրը մերժել են օրենքով չնախատեսված հիմքերով՝ դրանով իսկ թույլ տալով անձի նյութական և դատավարական իրավունքի խախտում:

22. ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատապարտյալի ուղղման հիմնական միջոցներն են պատիժները կատարելու և կրելու սահմանված կարգն ու պայմանները, դատապարտյալի հետ տարվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները, դատապարտյալի աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական և նման այլ զբաղվածությունը, ինչպես նաև հասարակական ներգործությունը (...)»:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Սոցիալական, հոգեբանական, իրավական և դատախարակչական աշխատանքներին դատապարտյալի մասնակցությունը հաշվի է առնվում նրա ուղղման աստիճանը որոշելիս (...)»:

ՀՀ արդարադատության նախարարի 2008 թվականի մայիսի 30-ի հրամանով հաստատված՝ «Կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառույցվածքային ստորաբաժանումների գործունեության» կարգի՝ «Դատապարտյալների ախտորոշումը, գնահատումը և բնութագրումը սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներն իրականացնելիս» 7-րդ գլխում գետեղված 45-49-րդ կետերի համաձայն՝

պատժի կրման ընթացքում պարբերաբար կատարվում է դատապարտյալի գնահատում: Գնահատումները ներառում են տեղեկություններ դատապարտյալի հետ կատարված աշխատանքների ընթացքի, դատապարտյալի վարքի փոփոխության մասին: Մասնավորապես, գնահատվում են`

- 1) դատապարտյալի կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ,
- 2) դատապարտյալի ռիսկայնության աստիճանը,
- 3) ուղղման գործընթացի ծրագրի կատարման արդյունքները,
- 4) դատապարտյալի կարգապահությունը,
- 5) դատապարտյալի մասնակցությունը կրթական, մշակութային և այլ ծրագրերին և ներգրավվածությունը աշխատանքին:

Թվարկված յուրաքանչյուր կետի վերաբերյալ, կապված պատիժը կրելու ընթացքում դատապարտյալի դրսևորած վարքագծի, այդ ընթացքում նրա հետ իրականացված աշխատանքների և արդյունքների հետ, տրվում է բարձր, միջին կամ ցածր գնահատական:

Դատապարտյալի գնահատման արդյունքների հիման վրա որոշվում է ուղղման աստիճանը.

ա. դրական, երբ պատժի կրման ընթացքում դատապարտյալի կարգապահությունը և ուղղման գործընթացի ծրագրի կատարման արդյունքները գնահատվել են բարձր կամ միջին, իսկ ռիսկայնության աստիճանը` ցածր,

բ. բացասական, երբ դատապարտյալի կարգապահության կամ ուղղման գործընթացի ծրագրի կատարման արդյունքները գնահատվել են ցածր, իսկ ռիսկայնության աստիճանը` բարձր կամ միջին:

Դատապարտյալի պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու համար միջնորդություն ներկայացնելու դեպքում քրեակատարողական հիմնարկում քննարկվում են պատժի կրման ընթացքում դատապարտյալի վարքագիծը, նրա հետ իրականացված աշխատանքների արդյունքները: Քննարկման արդյունքների հիման վրա` հաշվի առնելով համապատասխան որակավորում ունեցող մասնագետների կարծիքները և դատապարտյալի գնահատման արդյունքները, կազմվում է բնութագիր:

Դատապարտյալը բնութագրվում է դրական, երբ ընթացիկ գնահատումների արդյունքները բարձր են, ռիսկայնությունը` ցածր կամ միջին, բացասական` երբ ընթացիկ գնահատումների արդյունքները ցածր են կամ միջին, ռիսկայնությունը` բարձր:

Իսկ նյութերում առկա քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից տրված բնութագրից երևում է, որ դատապարտյալ Լ.Դևաբայանի ընթացիկ գնահատման արդյունքները սահմանվել են լավ, ռիսկայնության աստիճանը` ցածր: Դատապարտյալի ուղղման վերաբերյալ տրվել է եզրակացություն, համաձայն որի` պատժի կրման ընթացքում վերջինս դրսևորել է օրինապահ վարքագիծ, պահպանել է համակեցության կանոնները:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 93–րդ և 101–րդ հոդվածների համաձայն` դատապարտյալը, որպես խրախուսանքի միջոց, պատժի կրումը շարունակելու նպատակով կարող է ներկայացվել տեղափոխման մեկուսացվածության առավել ցածր աստիճան ունեցող հիմնարկ, և համապատասխան հանձնաժողովն ուղղիչ հիմնարկի

տեսակը փոխում է՝ ի թիվս այլ հանգամանքների հաշվի առնելով նաև դատապարտված անձի դրսևորած վարքագիծը:

Գործի նյութերից երևում է, որ 2008 թվականի հուլիսի 30-ի թիվ 491 արձանագրության համաձայն՝ դատապարտյալ Լ.Ղազարյանին նշանակվել է բաց տիպի ուղիչ հիմնարկ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ հանգամանքը վկայում է դատապարտյալի դրական վարքագծի մասին և նույնպես պետք է գնահատման ենթարկվեր:

23. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննարկելիս ունեն օրենքի շրջանակներում որոշակի հայեցողություն դրսևորելու հնարավորություն: Մակայն որոշումը կհամարվի այդ հայեցողության թույլատրելի շրջանակներում կայացված, եթե հիմնված լինի սույն որոշման 22-րդ կետում շարադրված չափանիշների հետազոտման, վերլուծության և գնահատման վրա:

24. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն օրինական և հիմնավորված չի համարում վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ դատապարտյալի կրած պատիժը բավարար չէ նրա ուղղվելու համար, և նա դեռևս կարիք ունի պատժի մնացած մասը կրելու: Ինչպես ընդհանուր իրավասության առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ քրեական դատարանները որոշում կայացնելիս ճիշտ չեն գնահատել Լ.Ղազարյանի ուղղման գործընթացին վերաբերող և գործում առկա փաստական տվյալները, ինչի արդյունքում թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածների պահանջների խախտումներ:

Հետևաբար դատապարտյալ Լ.Ղազարյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդագիրը մերժելու վերաբերյալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հունվարի 14-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի փետրվարի 18-ի որոշումն օրինական և հիմնավորված չէ և կայացվել է նյութական և դատավարական իրավունքի խախտմամբ:

Վերոնշյալ հանգամանքները Վճռաբեկ դատարանին հիմք են տալիս բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատական ակտը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

25. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դատապարտյալ Լևոն Միրանի Ղազարյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը մերժելու վերաբերյալ

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հունվարի 14–ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի փետրվարի 18–ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

6.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության

ԱՐԴ 1/0003/11/08

վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԱՐԴ 1/0003/11/08

նախագահող դատավոր՝ Հ. Տեր-Աղամյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝*

Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝*

Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*տուժողի իրավահաջորդ  
տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ*

Ն. ՄԻՍԱԿՅԱՆ  
Ս. ՍԱՖԱՐՅԱՆ

*դատախազներ*

Ն. ՀԱԿՈԲՅԱՆ  
Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

10 ապրիլի 2009 թվական

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 25-ի որոշման դեմ տուժողի իրավահաջորդ Ներսես Միսակյանի և տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Սեդա Սաֆարյանի բերած վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

1. Մանուկ Ներսեսի Միսակյանի սպանության փաստի առթիվ 2008 թվականի հուլիսի 19-ին ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 57108808 քրեական գործը:

Նշված սպանությունը կատարելու կասկածանքով նույն օրը ձերբակալվել է Սևակ Մանվելի Թովմասյանը:

2008 թվականի հուլիսի 22-ին Սևակ Թովմասյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ «նա 2008 թվականի հուլիսի 19-ին՝ ժամը 19.30-ի սահմաններում, գտնվելով թեթև աստիճանի ալկոհոլային հարբածության վիճակում, իր՝ Էջմիածին քաղաքի Կարճիկյան փողոցի 2-րդ փակուղու 1-ին տան դիմաց վիճաբանության մեջ է մտել իր փեսա Մանուկ Ներսեսի Միսակյանի հետ, նախկինում իր ընտանիքի անդամների հասցեին արված հայիոյանքի դիմաց պարզաբանում ստանալու կապակցությամբ, որի ընթացքում Մ.Միսակյանին ապօրինաբար կյանքից զրկելու, սպանելու ուղղակի դիտավորությամբ իր մոտ եղած դանակով բազմաթիվ հարվածներ է հասցրել նրա կենսականորեն կարևոր օրգանների շրջանին՝ կրծքավանդակին և որովայնին, ու դիտավորությամբ սպանել նրան»:

2. 2008 թվականի սեպտեմբերի 1-ին Ներսես Միսակյանը ճանաչվել է տուժողի իրավահաջորդ:

Քրեական գործի նախաքննության ընթացքում տուժողի իրավահաջորդ Ն.Միսակյանը բազմաթիվ դիմում-բողոքներում կասկածի տակ է դրել իր որդու սպանությունը միայն Սևակ Թովմասյանի կողմից կատարված լինելու հանգամանքը՝ նշելով, որ իր որդու սպանությանը մասնակից է նաև մեղադրյալի հայրը՝ Մանվել Թովմասյանը, իսկ նրա մայրը՝ Ալինա Պետրոսյանը, քույրը՝ Լիլիթ Միսակյանը, և եղբայրը՝ Սևան Թովմասյանը, հանդես են եկել որպես սպանության կազմակերպիչ և դրդիչներ: Բացի այդ, տուժող կողմը պնդել է, որ Ս.Թովմասյանի արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետին, քանի որ սպանությունը կատարվել է խուլիգանական դրդումներով:

2008 թվականի հոկտեմբերի 30-ին Վաղարշապատի քննչական բաժանմունքի ավագ քննիչ Պ.Բոյաջյանը կայացրել է հետևյալ որոշումը.

«1. Սևակ Թովմասյանի կողմից Կարեն Մանուկյանին մրմուռ և ֆիզիկական ցավ պատճառելու փաստով քրեական գործի մասը կարճել՝ տուժողի բողոքի բացակայության պատճառով:

2. Օրինական հիմքով գազային ատրճանակ կրելու փաստով Սևակ Թովմասյանի նկատմամբ քրեական գործի մասը կարճել՝ հանցակազմի բացակայության պատճառով:

3. Մանվել Գարսևանի Թովմասյանի, Սևան Մանվելի Թովմասյանի, Լիլիթ Մանվելի Թովմասյանի և Ալինա Վլադիկի Պետրոսյանի նկատմամբ քրեական գործի մասը կարճել՝ հանցադեպի բացակայության պատճառով»:

Փաստորեն, հաշվի առնելով տուժողի իրավահաջորդի բողոքները՝ սպանությանը Ս.Թովմասյանի ազգականների մասնակից լինելու վերաբերյալ, քննիչը նշված որոշման առանձին կետով վերջինների՝ Մանվել Թովմասյանի, Սևան Թովմասյանի, Լիլիթ Թովմասյանի և Ալինա Պետրոսյանի նկատմամբ քրեական գործի մասը կարճել է՝ հանցադեպի բացակայության պատճառով, այն հիմնավորմամբ, որ քրեական գործի քննությանը և ձեռնարկված միջոցառումներով նրանց առնչությունը կատարված սպանությանը չի հիմնավորվել:

3. Տուժողի իրավահաջորդ Ն.Միսակյանի և նրա ներկայացուցիչ Ս.Սաֆարյանի կողմից քննիչի հիշյալ որոշումը բողոքարկվել է Արմավիրի մարզի դատախազին:

Արմավիրի մարզի դատախազության դատախազ Ա.Գաբրիելյանի 2008 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ տուժողի իրավահաջորդի և նրա ներկայացուցչի բողոքը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ քննիչի որոշումն օրինական է և հիմնավորված, այն վերացնելու հիմքեր չկան:

2008 թվականի նոյեմբերի 14-ին քրեական գործն ըստ մեղադրանքի Սևակ Մանվելի Թովմասյանի ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով ուղարկվել է ՀՀ հարավային քրեական դատարան:

4. Տուժողի իրավահաջորդ Ն.Միսակյանը և նրա ներկայացուցիչ Ս.Սաֆարյանը քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի մասը կարճելու մասին քննիչի 2008 թվականի հոկտեմբերի 30-ի և դատախազի 2008 թվականի նոյեմբերի 11-ի որոշումների դեմ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կարգով բողոք են ներկայացրել Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, փաստարկելով, որ նախաքննությունը կատարվել է թերի, թույլ են տրվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ, որոնք խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, որոնց արդյունքում խախտվել են տուժողի իրավահաջորդի իրավունքներն ու ազատությունները՝ սպանության կազմակերպման և կատարման համար չեն մեղադրվել սպանությանը մասնակցած նրա ընտանիքի անդամները, բացի այդ, Սևակ Թովմասյանի արարքին տրվել է սխալ քրեաիրավական գնահատական:

Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2008 թվականի դեկտեմբերի 1-ի որոշմամբ տուժողի իրավահաջորդի և նրա ներկայացուցչի բողոքը մերժել է հետևյալ պատճառաբանությամբ.

«Դատաքննության ընթացքում պարզվել է, որ թիվ 57108808 քրեական գործն ըստ մեղադրանքի Սևակ Մանվելի Թովմասյանի ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով ըստ էության քննության առնելու համար մեղադրական եզրակացության հետ միասին 14.11.2008թ. ուղարկվել է ՀՀ հարավային քրեական դատարան, ինչի մասին տեղյակ է պահվել տուժողի իրավահաջորդին:

Ներկայացված բողոքն ըստ էության վերաբերում է նշված քրեական գործին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրեական գործը գտնվում է ՀՀ հարավային քրեական դատարանում, ուստի դատարանը գտնում է, որ բողոք բերողն իր միջնորդությունները պետք է ներկայացնի ՀՀ հարավային քրեական դատարան, որն էլ իրավասու է գնահատական տալու Ն.Միսակյանի և նրա ներկայացուցչի ներկայացրած միջնորդություններին»:

5. Տուժողի իրավահաջորդ Ն.Միսակյանի և նրա ներկայացուցիչ Ս.Սաֆարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2008 թվականի դեկտեմբերի 25-ին որոշում է կայացրել վերաքննիչ բողոքը մերժելու և Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 1-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

Իր որոշման հիմքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը դրել է հետևյալ փաստարկները.

«Ինչ վերաբերում է մեղադրյալ Ս.Թովմասյանի մորը՝ Ալինա Պետրոսյանին, և բողոք՝ Լիլիթ Միսակյանին, ապա քրեական գործի քննությամբ և ձեռնարկված միջոցառումներով պարզվել է, որ նրանք նույնպես որևէ առնչություն չունեն կատարված սպանության հետ:

Քրեական գործով հիմնավորվել է, որ դանակահարության պահին Մանվել Թովմասյանը գտնվել է տանը, նա սպանություն չի կատարել և խոչընդոտ չի հանդիսացել տուժող Մ.Միսակյանին հիվանդանոց տեղափոխելու ժամանակ:

Տուժողի իրավահաջորդի փաստարկները, որ իր որդի Մանուկ Միսակյանն անբողջ տան դարպասից ներս է մտել, որտեղ նրան սկզբում դանակահարել է Մանվել Թովմասյանը, ապա Սևակ Թովմասյանը, որ որդու սպանությանը որպես կազմակերպիչներ ու դրդիչներ են մեղադրյալի մայրն ու քույրը, որ Մանվել Թովմասյանը գազանաբար հարձակվել է Մ.Միսակյանի վրա և խոչընդոտել է հիվանդանոց տեղափոխելուն, իրենց հիմնավորումը ներկայացված նյութերում չեն գտել»:

Անդրադառնալով տուժողի և նրա ներկայացուցչի այն պնդումներին, որ նախաքննական մարմինը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջների խախտում, չի բացահայտել կատարված սպանության ամբողջական նկարագիրը, շարժառիթը, սպանությանն առնչվող անձանց, բացի այդ, հաշվի չի առել այն, որ Ս.Թովմասյանը սպանությունը կատարել է խուլիգանական դրդումներով, որ հանցագործության կատարման ընթացքում դրսևորել է դաժան վարքագիծ, վերաքննիչ քրեական դատարանը գտել է, որ բողոքում նշված այդ փաստերը վերաբերում են Ս.Թովմասյանին մեղսագրված արարքի որակմանը, հետևաբար հիմնավորված և պատճառաբանված են ընդհանուր իրավասության դատարանի հետևություններն այն մասին, որ ՀՀ հարավային քրեական դատարանն է իրավասու քննել հիշյալ փաստարկները և դրանց տալ պատշաճ քրեաիրավական գնահատական:

6. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 25-ի որոշման դեմ տուժողի իրավահաջորդ Ն.Միսակյանը և նրա ներկայացուցիչ Ս.Սաֆարյանը վճռաբեկ բողոք են բերել:

2009 թվականի փետրվարի 11-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը բողոքն ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:



**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

7. Բողոք բերած անձինք փաստարկել են, որ Վճռաբեկ դատարանի կողմից սույն գործով դատական ակտի կայացումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290–րդ հոդվածի կարգով բողոքները պատշաճ իրավական ընթացակարգում քննության առնելն ուղղակիորեն առնչվում է քրեական դատավարության խնդիրների, օրինականության և արդարացի քննության սկզբունքների ապահովման, անձի սահմանադրորեն և միջազգային նորմերով երաշխավորված իրավունքների հետ:

8. Ըստ բողոք բերած անձանց՝ տուժողի իրավահաջորդի պնդումը՝ կատարված սպանության ամբողջական նկարագիրը, շարժառիթը, սպանությանն առնչվող անձանց շրջանակը պարզելու, ինչպես նաև Սևակ Թովմասյանի արարքը խուլիգանական դրդումներով որակելու առումով վերագրվել է դատարան ուղարկված գործին:

Դատարանը բողոք բերած անձանց խորհուրդ է տվել իրենց փաստարկներն ու պահանջը ներկայացնել Հարավային քրեական դատարան, որն էլ իրավասու է քննարկել դրանք և տալ պատշաճ քրեաիրավական գնահատական:

9. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշումը գտել է օրինական և հիմնավորված՝ նշելով, որ բողոք բերած անձանց փաստարկները սպանությանն այլ անձանց հանցակցելու վերաբերյալ նյութերում հիմնավորում չեն գտել: Մինչդեռ, ինչպես ընդհանուր իրավասության դատարանը, այնպես էլ վերաքննիչ դատարանը չեն ունեցել քրեական գործի նյութերը, որպեսզի ստուգեն նախաքննական մարմնի կողմից կայացված երկու որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը, հետևաբար դատարանի եզրահանգումներն այդ կապակցությամբ կրել են ենթադրական բնույթ, որի համատեքստում խախտվել է Մարդու իրավունքների Եվրոպական կոնվեցիայի 6–րդ հոդվածի 1–ին կետի դրույթը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից թույլ են տրվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ, քանի որ խախտվել են քրեական դատավարության սկզբունքները: Արդյունքում քրեական գործն ըստ էության քննող դատարանը զրկված է լինելու նախաքննությամբ և բողոքարկվող դատական ակտով թույլ տրված խախտումները վերացնելու և տուժողի սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունն ապահովելու հնարավորությունից:

10. Բողոքի հեղինակները նշել են նաև, որ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 267–րդ հոդվածի 3–րդ մասի այն պահանջը, որ մինչև բողոքի լուծումը գործը չի ուղարկվում դատարան: Մասնավորապես, տուժողի իրավահաջորդը 2008 թվականի նոյեմբերի 6–ից 19–ը, օգտվելով իր իրավունքից, բողոքարկել է քննիչի որոշումները, սակայն նախաքննական մարմնի կողմից դրանց պատասխանելու փոխարեն գործը նոյեմբերի 14–ին ուղարկվել է Հարավային քրեական դատարան: Արդյունքում ընդհանուր իրավասության և վերաքննիչ դատարանները բողոքը մերժելու պատճառաբանությունների հիմքում դրել են գործը Հարավային քրեական դատարան ուղարկված լինելու փաստը:

11. Վերագրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակները խնդրել են բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 26-ի որոշումը, կայացնել նոր դատական ակտ՝ բավարարելով տուժողի իրավահաջորդի բողոքը:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

*1. Քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը (այդ թվում՝ մասով) կարճելու մասին քննիչի որոշման բողոքարկումը գործով մինչդատական վարույթն ավարտված լինելու պարագայում.*

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանն ըստ էության պետք է պատասխանի այն հարցին, թե մինչդատական վարույթն ավարտված լինելու դեպքում քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական գործով վարույթը (այդ թվում՝ մասով) կարճելու մասին քննիչի և դրա դեմ բերված բողոքը մերժելու վերաբերյալ դատախազի որոշումները ենթակա են բողոքարկման և քննության մինչդատական վարույթի նկատմամբ վերահսկողություն իրականացնող, թե՞ քրեական գործն ըստ էության քննող դատարանում:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների աջակցությամբ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «2. Դատարանի լիազորություններն են, մասնավորապես՝

1) (...) օրենքով նախատեսված դեպքերում քննել և լուծել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքները:

(...) :»

Այսպիսով, Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության արդյունավետ միջոցների շարքում առաջնային տեղ է գրավում դատական պաշտպանության իրավունքը, իսկ քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքներից է դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներն են՝

- դատավարության մասնակիցների և այլ անձանց իրավունքների և ազատությունների, օրինական շահերի պահպանության ապահովումը,
- դատավարության մասնակիցների և այլ անձանց խախտված իրավունքների և ազատությունների վերականգնումը մինչդատական վարույթում:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը դատավարական օրենքով նախատեսված միջոցների համակարգ է, որն ուղղված է դատական իշխանության սահմանադրական գործառնությունների իրականացմանը գործի մինչդատական վարույթում՝ նպատակ ունենալով թույլ չտալ անձի իրավունքների և ազա-

տությունների անօրեն և չհիմնավորված սահմանափակումներ, ինչպես նաև վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները:

Քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների բողոքարկման դեպքերն ու դրանց դատավարական ընթացակարգը սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263–րդ և 290–րդ հոդվածներով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263–րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի, նրանց պաշտպանների, տուժողի, նրա ներկայացուցչի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի կամ նրանց ներկայացուցիչների, ինչպես նաև այն ֆիզիկական անձի կամ իրավաբանական անձի ներկայացուցչի կողմից, որոնց հայտարարության հիման վրա հարուցվել է քրեական գործը, կարող է բողոքարկվել վերադաս դատախազին:

2. (...) Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը մերժելու մասին դատախազի որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290–րդ հոդվածի համաձայն՝

«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի օպերատիվ–հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

(...)

4. (...) Վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է դատարան ներկայացնել բողոքի վերաբերյալ նյութեր: Վարույթն իրականացնող մարմինը և դիմողը բացատրություններ տալու իրավունք ունեն:

5. Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գ-տնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ պարտականությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին (...):»

Վերոնշյալ իրավադրույթների իմաստով՝ մինչդատական վարույթի ընթացքում քրեադատավարական օրենսգրքով նախատեսված որոշումները և գործողությունները, որոնք կարող են խախտել դատավարության մասնակիցների իրավունքներն ու ազատությունները կամ խոչընդոտել արդարադատության մատչելիությանը, կարող են բողոքարկվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան:

Այսպիսով, նախաքննության մարմնի՝ քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական գործի վարույթը (վարույթի մասը) կարճելու վերաբերյալ որոշումները

մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության օբյեկտ են, այդ որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ դատական վերահսկողության առարկա:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը նշված որոշումների դատական կարգով բողոքարկման որևէ սահմանափակում չի նախատեսում՝ կապված գործի քննության դատավարական փուլի հետ: Այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով նախաքննության ավարտված լինելն ինքնին չի կարող խոչընդոտ հանդիսանալ այդ որոշումների դատական բողոքարկման համար: Նման իրավական դիրքորոշում ՀՀ վճռաբեկ դատարանը հայտնել է նաև «Նարեկ» ՍՊԸ-ի վերաբերյալ գործով կայացված որոշմամբ /տե՛ս Վճռաբեկ դատարանի 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԵԿԳ-0050/11/08 որոշումը, կետ 22/:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի իմաստով դատարանը պարտավոր է բողոքի քննության արդյունքներով կայացնել կամ ներկայացված բողոքը մերժելու որոշում, եթե գտնի, որ անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, կամ կայացնի որոշում՝ անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին, եթե հիմնավորված կհամարի, որ տեղի է ունեցել անձի իրավունքների կամ ազատությունների խախտում:

13. Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ տուժողի իրավահաջորդը և նրա ներկայացուցիչը քրեադատավարական օրենքով սահմանված կարգով և ժամկետներում բողոքարկել են քննիչի՝ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի մասը կարճելու մասին որոշումը նախ վերադաս դատախազին, ապա, ստանալով բողոքը մերժելու վերաբերյալ դատախազի որոշումը՝ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան: Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, հիմք ընդունելով քրեական գործն ըստ մեղադրանքի Սևակ Մանվելի Թովմասյանի ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով ըստ էության քննության առնելու համար մեղադրական եզրակացությամբ ՀՀ հարավային քրեական դատարան ուղարկված լինելու հանգամանքը, գտել է, որ տուժողի իրավահաջորդն իր միջնորդությունները պետք է ներկայացնի ՀՀ հարավային քրեական դատարան, որն էլ իրավասու է գնահատական տալու դրանց՝ պատճառաբանելով, որ ներկայացված բողոքն ըստ էության վերաբերում է նշված քրեական գործին (տե՛ս սույն որոշման 4-րդ կետը):

Փաստորեն ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն ըստ էության մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն չի իրականացրել:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը ընդհանուր իրավասության դատարանի վերոգրյալ պատճառաբանությունը գտել է հիմնավոր (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

14. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ընդհանուր իրավասության դատարանի և վերաքննիչ դատարանի մասն դիրքորոշումը չի բխում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներից հետևյալ նկատառումներով.

ՀՀ հարավային քրեական դատարան է ուղարկվել քրեական գործն ըստ մեղադրանքի Սևակ Մանվելի Թովմասյանի ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով:

Մինչդեռ 2008 թվականի հոկտեմբերի 30-ի որոշմամբ Վաղարշապատի քննչական բաժանմունքի ավագ քննիչը որոշում է կայացրել քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի մասը կարճելու մասին ինչպես Սևակ Թովմասյանի, այնպես էլ Մանվել Թովմասյանի, Սևան Թովմասյանի, Լիլիթ Թովմասյանի և Ալինա Պետրոսյանի նկատմամբ, որոնք որպես մեղադրյալ ներգրավված չեն եղել, և որոնց վերաբերյալ քրեական գործ դատարան չի ուղարկվել:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջադրվել»:

Հետևաբար, վերոնշյալ պայմաններում ՀՀ հարավային քրեական դատարանը, Սևակ Թովմասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքի սահմաններում քննելով գործը, առկա մեղադրանքին քրեաիրավական գնահատական տալուց բացի, իրավագոր չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կարգով իրականացնել վերահսկողություն մինչդատական վարույթի նկատմամբ, այն է՝ ստուգել այլ անձանց՝ Մ.Թովմասյանի, Ս.Թովմասյանի, Լ.Թովմասյանի և Ա.Պետրոսյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի մասը կարճելու մասին քննիչի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը չի կարող համաձայնվել ընդհանուր իրավասության առաջին ատյանի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումների մեջ առկա այն մտտեցմանը, որի համաձայն՝ տուժողի իրավահաջորդն « (...) իր միջնորդությունները պետք է ներկայացնի ՀՀ հարավային քրեական դատարան, որն էլ իրավասու է գնահատական տալու Ն.Սիսակյանի և նրա ներկայացուցչի ներկայացրած միջնորդություններին»:

15. Գործի արդարացի քննության սկզբունքն ամբազորող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ « (...) քրեական դատավարության ընթացքում օրինականության խախտումների վերաբերյալ բողոքները պետք է մանրակրկիտ ստուգի քրեական վարույթն իրականացնող մարմինը»:

Նշված դրույթը դատարանին պարտավորեցնում է հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ յուրաքանչյուր բողոք ենթարկել մանրակրկիտ ստուգման, իսկ որպեսզի դատարանն իրականացնի իր լիազորությունը՝ օրենսդիրը սահմանել է վարույթն իրականացնող մարմնի պարտավորությունը՝ դատարան ներկայացնել բողոքի վերաբերյալ նյութեր (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մաս):

Ներկայացված նյութերի հիման վրա դատարանը պետք է ստուգի բողոքարկված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավորված լինելը՝ կապված դա-

տավարության մասնակիցների իրավունքների և ազատությունների հնարավոր խախտումների հետ, որի արդյունքում, հիմնվելով հետազոտված նյութերի վրա, բողոք բերած անձանց փաստարկների մանրակրկիտ ստուգմամբ պետք է կայացնի հիմնավորված և պատճառաբանված որոշում՝ խախտումների առկայության կամ բացակայության մասին, առանց կանխորոշելու այնպիսի հարցեր, որոնք պետք է քննարկման առարկա դառնան քրեական գործի ըստ էության քննության ժամանակ (մեղադրանքի հիմքում դրված ապացույցների գնահատում, արարքի քրեաիրավական որակման ճշտություն և այլն):

16. Սույն գործով բողոք բերած անձի իրավունքների և ազատությունների խախտման առկայության կամ բացակայության մասին հետևության հանգելու համար դատարանը պետք է հետազոտեր բողոքին վերաբերող նյութերը, մինչդեռ, ինչպես երևում է նյութերի ուսումնասիրությունից, դատարանը քրեական վարույթն իրականացնող մարմնից անհրաժեշտ նյութեր չի պահանջել, քրեական վարույթն իրականացնող մարմինն այդ նյութերը չի ներկայացրել: Արդյունքում Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը, տուժողի իրավահաջորդի փաստարկների շուրջ անհիմն կերպով քննություն չի կատարել, համապատասխան նյութեր չի հետազոտել և բողոքարկված որոշմամբ տուժողի իրավահաջորդի իրավունքների և ազատությունների խախտված լինելու կամ չլինելու վերաբերյալ որևէ եզրահանգում չի կատարել, ինչը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ հանգեցրել է գործի արդարացի քննության սկզբունքի խախտմանը:

17. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բարձրացված հարցի վերաբերյալ ստորադաս դատարանների դիրքորոշումը ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ չնախատեսված սահմանափակման է ենթարկել քրեական հետապնդման մարմնի որոշումների դատական բողոքարկման իրավունքը՝ դրանով իսկ հակասելով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներին և նպատակին: Արդյունքում տուժողի իրավահաջորդը զրկվել է ՀՀ Սահմանադրությամբ և քրեական դատավարության օրենսգրքով երաշխավորված՝ իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի իրացման հնարավորությունից:

18. Այսպիսով Վճռաբեկ դատարանն այն իրավական դիրքորոշումն է հայտնում, որ մինչդատական վարույթն ավարտված լինելու դեպքում քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական գործով վարույթը (այդ թվում՝ մասով) կարճելու մասին քննիչի և դրա դեմ բերված բողոքը մերժելու վերաբերյալ դատախազի որոշումները ենթակա են բողոքարկման և քննության մինչդատական վարույթի նկատմամբ վերահսկողություն իրականացնող, այլ ոչ թե քրեական գործն ըստ էության քննող դատարանում:

*II. Վերաքննության սահմաններն այն դեպքում, երբ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը դատական ակտում եզրակացության չի հանգել որևէ փաստական տվյալի վերաբերյալ:*

19. Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի այն հարցին, թե սույն գործով դատական ստուգման ենթարկելով մինչդատական վարույթի նկատմամբ վերահսկո-

դուրյան շրջանակներում ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի ակտը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իրավասու էր արդյո՞ք հաստատված համարել որևէ հանգամանք, որի վերաբերյալ առաջին ատյանի դատարանը եզրակացության չի հանգել:

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385–րդ հոդվածի համաձայն՝

«1. Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

2. Բացառությամբ սույն օրենսգրքի 45<sup>1</sup> գլխի կանոններով քննված գործերի, վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է գործում եղած, իսկ սույն օրենսգրքի 382 հոդվածի երրորդ մասով նախատեսված բացառիկ դեպքերում՝ նաև լրացուցիչ ներկայացվող ապացույցներով:

3. Վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստական հանգամանքները ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքի, երբ բողոքում վիճարկվում է որևէ փաստական հանգամանք, և վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստական հանգամանքի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել: Նման դեպքերում վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստական հանգամանք կամ հաստատված չհամարելու ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքը, եթե առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված ապացույցների հիման վրա կամ սույն օրենսգրքի 382–րդ հոդվածի երրորդ մասին համապատասխան լրացուցիչ ներկայացված ապացույցներով հնարավոր է հանգել նման եզրակացության:

4. Եթե առաջին ատյանի դատարանը հետազոտված ապացույցների հիման վրա դատական ակտում եզրակացության չի հանգել որևէ փաստական հանգամանքի վերաբերյալ, ինչը պարտավոր էր անել, ապա վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստական հանգամանք, եթե առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված ապացույցների հիման վրա կամ սույն օրենսգրքի 382 հոդվածի երրորդ մասին համապատասխան լրացուցիչ ներկայացված ապացույցներով հնարավոր է հանգել նման եզրակացության:»

Այսինքն՝ օրենսդիրը վերաքննիչ դատարանին իրավունք է վերապահել հաստատված համարելու նոր փաստական հանգամանք երկու դեպքում՝

1. երբ դա հնարավոր է առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված ապացույցների հիման վրա,

2. երբ հետազոտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 382–րդ հոդվածի 3–րդ մասի պահանջների պահպանմամբ վերաքննիչ դատարան ներկայացված լրացուցիչ ապացույցներ:

21. Տվյալ դեպքում Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը համապատասխան նյութեր չի հետազոտել և Մանվել Թովմասյանի, Լիլիթ Թովմասյանի ու Ալինա Պետրոսյանի նկատմամբ քրեական գործի մասը կարճելու մասին քննիչի որոշման օրինականության ու հիմնավորվածության վերաբերյալ որևէ հետևության չի հանգել, սակայն պարտավոր էր դա անել:

Գործի նյութերից երևում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատական քննության ընթացքում դատավարության մասնակիցները լրացուցիչ նյութեր չեն ներկայացրել, և վերաքննիչ դատարանը դատական ակտը կայացրել է հիմնվելով ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանից ստացված նյութերի վրա:

Այդ պայմաններում հիմնավոր համարելով ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի այն պատճառաբանությունը, որ տուժողի իրավահաջորդն իր միջնորդությունները պետք է ներկայացնի Հարավային քրեական դատարան, որն էլ իրավասու է գնահատական տալու դրանց, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, այդուհանդերձ, իրավական գնահատականի է արժանացրել Մանվել Թովմասյանի, Լիլիթ Թովմասյանի և Ալինա Պետրոսյանի գործողությունները՝ նշելով, որ քրեական գործի քննությամբ և ձեռնարկված միջոցառումներով պարզվել է, որ նրանք առնչություն չունեն կատարված սպանությանը, և տուժողի իրավահաջորդի փաստարկներն իրենց հիմնավորումը ներկայացված նյութերում չեն գտնում:

Փաստորեն, սույն գործով վերաքննիչ քրեական դատարանը հաստատված է համարել նոր փաստական հանգամանք՝ չունենալով համապատասխան նյութեր, քննարկել և գործի փաստական հանգամանքների վերաբերյալ եզրահանգումներ է արել այն պարագայում, երբ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն այդ հանգամանքների վերաբերյալ նույնպես ապացույց չի հետազոտել և որևէ եզրահանգման չի եկել:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելիս ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը դուրս է եկել վերաքննիչ դատարանում գործի քննության սահմաններից՝ թույլ տալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի պահանջների խախտում:

22. Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքում նշված այն պնդմանը, որ քրեական վարույթն իրականացնող մարմինը, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 267-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը՝ առանց պատասխանելու տուժողի իրավահաջորդի ներկայացրած բողոքին, գործն ուղարկել է դատարան, ապա այն իր հիմնավորումը ներկայացված նյութերում չի գտնում, քանի որ տուժողի իրավահաջորդի և նրա ներկայացուցչի բողոքի կապակցությամբ դատախազ Ա.Գաբրիելյանը 2008 թվականի նոյեմբերի 11-ին կայացրել է համապատասխան որոշում, որից հետո նոր գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

23. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես ընդհանուր իրավասության առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ դատարանները սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ են տվել քրեադատավարական օրենքի խախտումներ: Այդ խախտումներն իրենց բնույթով էական են, քանի որ արդյունքում սահմանափակվել է տուժողի իրավահաջորդի դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, խախտվել են գործի արդարացի քննության և արդարադատության մատչելիության իրավունքները, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ դրանք հիմք են կայացված դատական ակտերն ամբողջությամբ բեկանելու և գործը քննած ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար:



24. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի մասը կարճելու վերաբերյալ քննիչի 2008 թվականի հոկտեմբերի 30-ի որոշման դեմ տուժողի իրավահաջորդ Ներսես Միսակյանի և նրա ներկայացուցիչ Սեդա Սաֆարյանի բողոքը մերժելու մասին Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 1-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումն ամբողջությամբ բեկանել և գործն ուղարկել Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

7.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՔԲԴ 2/0028/01/08

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

մախազահությամբ՝ Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

մասնակցությամբ դատավորներ՝ Հ. ԱՄԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

10 ապրիլի 2009 թվական

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության ամենելով ՀՀ վճռաբեկ դատարանի 2003թ. մայիսի 8-ի որոշման դեմ Միշա Էդիկի Հարությունյանի և նրա պաշտպանի բողոքների հիման վրա՝ նոր հանգամանքների հիմքով հարուցված վարույթով գործը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**Գործի դատավարական մախապատմությունը**

1. 1998թ. դեկտեմբերի 4-ին Սերգո Վլադիկի Հարությունյանի մահվան փաստի առթիվ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 100-րդ հոդվածով հարուցվել է քրեական գործ:

1999թ. ապրիլի 17-ին Միշա Էդիկի Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 265-րդ հոդվածի «գ» կետով:

1999թ. հունիսի 19-ին որոշում է կայացվել Մ. Հարությունյանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու և նրան ԼՂՀ քրեական օրենսգրքի 100-րդ հոդվածով մեղադրանք առաջադրելու վերաբերյալ:

1999թ. օգոստոսի 11-ին որոշում է կայացվել Մ. Հարությունյանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու և նրան ԼՂՀ քրեական օրենսգրքի 99-րդ հոդվածի 2-րդ կետով մեղադրանք առաջադրելու վերաբերյալ:

1999թ. օգոստոսի 31-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարան:

2. Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 1999թ. դեկտեմբերի 6-ի դատավճռով Միշա Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 99-րդ հոդվածի 2-րդ կետով և դատապարտվել է ազատազրկման 13 տարի ժամկետով:

3. Միշա Հարությունյանի պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննելով գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2000թ. հունիսի 15-ի որոշմամբ Միշա Հարությունյանի մասով բեկանել է Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 1999թ. դեկտեմբերի 6-ի դատավճիռը և գործն ուղարկել ՀՀ զինվորական դատախազություն՝ լրացուցիչ նախաքննության:

Լրացուցիչ նախաքննությունից հետո՝ 2000թ. սեպտեմբերի 12-ին, քրեական գործը կրկին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարան:

Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2001թ. հունիսի 13-ի որոշմամբ քրեական գործն ըստ մեղադրանքի Միշա Էդիկի Հարությունյանի ՀՀ քրեական օրենսգրքի 99-րդ հոդվածի 2-րդ կետով ուղարկվել է լրացուցիչ նախաքննության:

4. Մեղադրողի վերաքննիչ բողոքի հիման վրա քննելով գործը՝ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 2001թ. օգոստոսի 3-ի որոշմամբ բեկանել է Միշա Հարությունյանի վերաբերյալ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2001թ. հունիսի 13-ի որոշումը և քրեական գործն ուղարկել է Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարան՝ այլ կազմով նոր քննության:

5. Մ.Հարությունյանի պաշտպանի վճռաբեկ բողոքի հիման վրա քննելով գործը՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատը 2001թ. սեպտեմբերի 7-ի որոշմամբ վերաքննիչ դատարանի 2001թ. օգոստոսի 3-ի որոշումը թողել է անփոփոխ, իսկ վճռաբեկ բողոքը՝ առանց բավարարման:

6. Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2002թ. հունիսի 19-ի դատավճռով Միշա Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 99-րդ հոդվածի 2-րդ կետով և դատապարտվել ազատազրկման 10 տարի ժամկետով:

7. ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 2003թ. ապրիլի 1-ի դատավճռով առաջին ատյանի դատարանի վերը նշված դատավճիռը թողել է անփոփոխ, իսկ պաշտպանի և մեղադրողի վերաքննիչ բողոքները՝ առանց բավարարման:

8. ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատը 2003թ. մայիսի 8-ի որոշմամբ վերաքննիչ դատարանի դատավճիռը թողել է անփոփոխ, իսկ պաշտպանի և մեղադրողի վճռաբեկ բողոքները՝ առանց բավարարման:

9. Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանը դատավճիռը վերանայելու մասին 2003թ. օգոստոսի 5-ի որոշմամբ Միշա Հարությունյանի՝ 1961թ. մարտի 7-ի ՀՀ

քրեական օրենսգրքի 99-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված արարքը համապատասխանեցրել է 2003թ. ապրիլի 18-ի ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետին:

10. Մ.Հարությունյանի գանգատի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Հարությունյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2007թ. հունիսի 7-ին կայացրել է վճիռ, որով արձանագրել է, որ Մ.Հարությունյանի նկատմամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

11. Ելնելով վերոգրյալից՝ Մ.Հարությունյանը 2007թ. դեկտեմբերի 25-ին ՀՀ վճռաբեկ դատարան դիմում է ներկայացրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 410<sup>1</sup>-րդ հոդվածի հիման վրա նոր հանգամանքի՝ Եվրոպական դատարանի վճռի հիմքով ՀՀ վճռաբեկ դատարանի 2003թ. մայիսի 8-ի որոշման վերանայման վարույթ հարուցելու մասին:

12. «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2007թ. նոյեմբերի 28-ի ՀՀ օրենքով ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 410<sup>1</sup>-րդ հոդվածը, որը ՀՀ վճռաբեկ դատարանին՝ որպես տվյալ քրեական գործով վերջնական դատական որոշում կայացրած դատարանի, իրավունք էր վերապահել նոր հանգամանքի հետևանքով վարույթ հարուցել: Նշված օրենքի 426<sup>1</sup>-րդ հոդվածի համաձայն՝ դատական ակտը նոր հանգամանքներով վերանայում է դատական ակտ կայացրած այն առաջին ատյանի դատարանը, որը քննել է համապատասխան գործը կամ նյութը:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանի 2008թ. հունվարի 21-ի որոշմամբ Միշա Հարությունյանի դիմումը փոխանցվել է Հարավային քրեական դատարան:

13. Վիճարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>1</sup>-րդ հոդվածի սահմանադրականությունը՝ Մ.Հարությունյանը դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան:

14. ՀՀ Սահմանադրական դատարանը 2008թ. հոկտեմբերի 21-ի որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>1</sup>-րդ հոդվածը և 426<sup>8</sup>-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր այնքանով, որքանով դրանք վերաբերում են նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման իրավասությանը միայն առաջին ատյանի դատարաններին վերապահելուն և առնչվում են միայն վերջիններիս կողմից կայացրած դատական ակտերին:

15. ՀՀ հարավային քրեական դատարանը 2008թ. նոյեմբերի 18-ի որոշմամբ նոր հանգամանքներով հարուցված դատական ակտի վերանայման վարույթը կարճել է:

16. «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2008թ. դեկտեմբերի 26-ի ՀՀ օրենքով սահմանվել է, որ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը՝ բողոքի հիման վրա (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 426<sup>1</sup>):

17. Ելնելով այն բանից, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>4</sup>-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ Սահմանադրական դատարանի

2008թ. հոկտեմբերի 21–ի որոշումը հիմք է ՀՀ վճռաբեկ դատարանի 2008թ. հունվարի 21–ի որոշումը նոր հանգամանքներով վերանայելու համար, Միշա Հարությունյանի պաշտպանը 2009թ. հունվարի 21–ին բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան:

18. ՀՀ վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ բողոք բերող անձը նոր հանգամանքը հաստատող նյութեր դիմումին չի կցել, պատշաճորեն դատավարության մասնակիցներին չի ուղարկել նոր հանգամանքը հաստատող Եվրոպական դատարանի վճռի հայերեն պատճենները և նոր հանգամանքը հաստատող նյութերի պատճենները, 2009թ. փետրվարի 25–ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձրել է՝ թերությունները վերացնելու և բողոքը կրկին ներկայացնելու համար սահմանելով 15–օրյա ժամկետ:

2009թ. մարտի 30–ին Միշա Հարությունյանի պաշտպանը վճռաբեկ բողոքի թերությունները վերացնելուց հետո կրկին բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան:

19. ՀՀ վճռաբեկ դատարանը 2009թ. ապրիլի 3–ին որոշում է կայացրել նոր հանգամանքով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու մասին:

Դատավարության մասնակիցների կողմից բողոքի պատասխան չի ուղարկվել:

### **Գործի փաստական հանգամանքները**

20. Միշա Հարությունյանը դատապարտվել է հետևյալ արարքի համար.

Գտնվելով ԼՂՀ ՊԲ թիվ 33651 զորամասի 24 մարտական դիրքում հերթափոխության մեջ՝ Մ.Հարությունյանը 1998թ. դեկտեմբերի 4–ին անհիմն վիճաբանության մեջ է մտել նույն դիրքի շարքային զինծառայող Սերգեյ Հարությունյանի հետ, որի ընթացքում նրանք հայիոյել են միմյանց:

Նույն օրը՝ ժամը 17–ի սահմաններում, Սերգեյ Հարությունյանի կողմից հերթափոխությունը ժամապահի համար չնախատեսված տեղում կատարելու պատրվակով Մ.Հարությունյանը կրկին վեճի է բռնվել նրա հետ և հայիոյել նրան: Մ.Հարությունյանը նրան պատասխանել է հայիոյանքներով: Մ.Հարությունյանը, բլինդաժից վերցնելով իրեն ամրակցված «ԱԿ–74» մակնիշի թիվ 916236 ինքնաձիգը, մոտեցել է Մ.Հարությունյանին և առաջարկել գնալ առաջին գծի խրամատ՝ հարաբերությունները պարզելու: Առաջացած վեճի ընթացքում Միշա Հարությունյանը խուլիգանական դրդումներով Սերգեյ Հարությունյանին սպանելու դիտավորությամբ մոտ երկու մետր տարածությունից ինքնաձիգի փողոն ուղղել է Սերգո Հարությունյանի վրա և մեկ անգամ կրակ արձակել, որի հետևանքով Մ.Հարությունյանը պարանոցի շրջանում ստանալով կյանքի համար անհամատեղելի միջանցիկ գնդակային հրազենային վնասվածք՝ տեղում մահացել է:

### **Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող հանգամանքները**

21. Հարությունյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 36549/03) գործով դիմումատուն, վկայակոչելով Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 1–ին մասը, պնդել է, որ խոշտանգումների միջոցով իր կողմից տրված խոստովանական ցուցմունքները և վկաներ Գ.Տավարաժյանից ու Կ.Անտոնյանից ձեռք բերված ցուցմունքները դատաքննության ընթացքում օգտագործելը խախտել է արդար դատաքննության իրավունքը և ինքն իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը:

22. Կառավարությունն իր հերթին պնդել է, որ Կոնվենցիայի 6–րդ հոդվածի խախտում առկա չէ նույնիսկ այն դեպքում, եթե ընդունենք, որ ներպետական դատարաններն իրենց դատավճիռների հիմքում օգտագործել են խոշտանգումների միջոցով ձեռք բերված ցուցմունքները, քանի որ դիմումատուի մեղքն ապացուցված է եղել գործով ձեռք բերված այլ ապացույցներով:

23. Եվրոպական դատարանն արձանագրել է, որ առաջին ատյանի դատարանը գնահատական տալիս հիմք է ընդունել նաև դիմումատուի մեղքը հաստատող այլ ապացույցներ, ինչպիսիք են՝

ա) դատահյուսվածքաբանական փորձաքննության և դատաբժշկական փորձաքննության արդյունքները, համաձայն որոնց՝ զոհը սպանվել է մոտ տարածությունից արձակված հրազենային կրակոցից,

բ) դատաձգաբանական փորձաքննության արդյունքները, համաձայն որոնց՝ դեպքի վայրից հայտնաբերված պարկուճը կրակվել է ԱԿ–74 տեսակի թիվ 916236 համարի ինքնաձիգից, որն ամրակցված է եղել դիմումատուին,

գ) 1999թ. ապրիլի 17–ին կազմված դեպքի վայրի զննության արձանագրությունով և մի շարք այլ նյութերով (վճռի 28–րդ կետ):

24. Եվրոպական դատարանը գտել է, որ քրեական դատավարության ժամանակ որպես ապացույց օգտագործվել են խոշտանգումների ազդեցության տակ տված ցուցմունքներ, և եզրահանգել է, որ անկախ նրանից, թե ինչ ազդեցություն են ունեցել խոշտանգումների միջոցով ձեռք բերված ցուցմունքները դիմումատուի քրեական վարույթի արդյունքի վրա, նման ապացույցի օգտագործումը ամբողջ դատավարությունը դարձնում է անարդար:

### **Բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

25. Բողոք բերած Մ.Հարությունյանը նշել է, որ Եվրոպական դատարանը 2007թ. հունիսի 28–ի վճռով ճանաչել է, որ նշված գործի քննության ընթացքում Հայաստանի Հանրապետությունը Միշա Հարությունյանի նկատմամբ խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6–րդ հոդվածի 1–ին կետը, որի արդյունքում ամբողջ դատավարությունը դարձել է անարդար:

Բողոքում նշվում է, որ թե՛ առաջին ատյանի, թե՛ վերաքննիչ և թե՛ վճռաբեկ դատարաններն իր նկատմամբ կայացված դատական ակտերում հիմնվել են խոշտանգումների կիրառման արդյունքում ձեռք բերված ապացույցների վրա:

26. Գատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 19–րդ հոդվածը, հետևաբար ՀՀ Սահմանադրության 42–րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105–րդ հոդվածի համաձայն՝ դրանք չեն կարող օգտագործվել որպես ապացույց և դրվել մեղադրանքի հիմքում: Որպես ապացույց օգտագործվել են նաև բռնությունների, սպառնալիքների և խոշտանգումների կիրառման արդյունքում Գուրգեն Տավարածյանից, Կարեն Անտոնյանից ձեռք բերված ցուցմունքները: Բացի այդ, դեպքի պարագաների և հանգամանքների վերականգնում կատարելու մասին արձանագրությունը և տեսաժապավենը որպես ապացույց օգտագործելը հանգեցրել է ՀՀ Սահմանադրության 42–րդ հոդվածի խախտման:

27. Ելնելով վերոգրյալից՝ Մ.Հարությունյանը խնդրել է նոր հանգամանքի՝ Եվրոպական դատարանի վճռի հիման վրա հարուցել վերանայման վարույթ, վերանայել ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2003թ. մայիսի 8-ի որոշումը, վերացնել այն, նորոգել քրեական գործը, հաստատել Միշա Հարությունյանի 1999թ. ապրիլի 16-ի, 1999թ. ապրիլի 17-ի, Գուրգեն Տավարաձյանի 1999թ. մարտի 5-ի, 1999թ. հուլիսի 30-ի, Կարեն Անտոնյանի 1999թ. մարտի 5-ի, 1999թ. օգոստոսի 3-ի ցուցմունքների, Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանում Գ.Տավարաձյանի և Կ.Անտոնյանի կողմից տրված ցուցմունքների, Մ.Հարությունյանի և Կարեն Անտոնյանի ու Գուրգեն Տավարաձյանի միջև առերես հարցաքննությունների, Միշա Հարությունյանի մասնակցությամբ կատարված դեպքի հանգամանքների և պարագաների վերականգնման մասին արձանագրության և տեսաձայնագրման երիզի, Գուրգեն Տավարաձյանի և Կարեն Անտոնյանի մասնակցությամբ կատարված դեպքի վայրի լրացուցիչ զննության մասին արձանագրության, Գուրգեն Տավարաձյանի և Կարեն Անտոնյանի մասնակցությամբ կատարված դեպքի վայրի լրացուցիչ զննության ընթացքում ձեռք բերված նյութի՝ 2, 5սմ երկարությամբ ճմմ տրամաչափով մետաղե բեկորի և այլ բազմաթիվ նյութերի՝ որպես ապացույց օգտագործման անբույլատրելիությունը, բեկանել Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2002թ. հունիսի 19-ի, ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2003թ. ապրիլի 1-ի դատավճիռները, կարճել Մ.Հարությունյանի նկատմամբ քրեական գործով վարույթը և դադարեցնել քրեական հետապնդումը:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

28. Ինչպես երևում է *Հարությունյանն ընդդեմ Հայաստանի* վճռից, դիմումատուն՝ Միշա Էդիկի Հարությունյանը, պնդել է, որ նա Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա վիճարկում է իրենից, ինչպես նաև վկաներ Գ.Տավարաձյանից և Կ.Անտոնյանից խոշտանգումների միջոցով ձեռք բերված ցուցմունքները որպես ապացույց օգտագործելու հանգամանքը: Եվրոպական դատարանի վճռի 50-րդ կետի բովանդակությունից հետևում է, որ դիմումատուի գանգատները վերաբերել են քրեական գործի վարույթում վատ վերաբերմունքի ցուցաբերման հետևանքով ձեռք բերված ապացույցներն իր դեմ օգտագործելուն: Ըստ դիմումատու Մ.Հարությունյանի՝ գործի հանգամանքներին չի համապատասխանում Կառավարության այն պնդումը, թե խոշտանգումների միջոցով ձեռք բերված ցուցմունքներն իրեն դատապարտելու հիմք չեն հանդիսացել: Նա նշել է, որ որպես ապացույց դատարանը հղում է կատարել իր 1999թ. ապրիլի 16-ին և 17-ին տրված խոստովանական ցուցմունքներին և վկաներ Գ.Տավարաձյանի ու Կ.Անտոնյանի տված ցուցմունքներին, որոնք ձեռք էին բերվել խոշտանգումների միջոցով: Անտեսելով պաշտպանության կողմի ներկայացրած մի քանի միջնորդությունները՝ դատական երեք ատյաններից և ոչ մեկը որոշում չէր կայացրել խոշտանգումների միջոցով ձեռք բերված ցուցմունքների օգտագործումն անբույլատրելի ճանաչելու մասին, թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 106-րդ հոդվածի համաձայն՝ նրանք օժտված էին նման իրավունքով:

29. Անդրադառնալով այն հարցին, թե արդյոք դիմումատուի դեմ հարուցված քրեական գործի դատաքննության ընթացքում ներպետական դատարանները որպես ապացույց օգտագործել են դիմումատուի կողմից 1999թ. ապրիլի 16-ին և 17-ին տված ցուցմունքները, ինչպես նաև վկաներ Գ.Տավարաձյանի և Կ.Անտոնյանի 1999թ. մարտի 5-ին տված ցուցմունքները, Եվրոպական դատարանը նշել է, որ չնայած պաշտպանության կողմի ներկայացրած մի քանի միջնորդությունների, եռաստիճան դատական համակարգից և ոչ մի ատյանում քննարկվող ցուցմունքների օգտագործումը որպես ապացույց հստակորեն անթույլատրելի չի համարվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Եվրոպական դատարանը հանգել է հետևության, որ ներպետական դատարանները դիմումատուին մեղավոր ճանաչելու ապացույցների շարքում որպես ապացույց օգտագործել են նաև դիմումատուի խոստովանական ցուցմունքը և վկաներ Գ.Տավարաձյանի ու Կ.Անտոնյանի՝ բռնության ազդեցության տակ տված ցուցմունքները (վճռի 59-րդ կետ):

30. Եվրոպական դատարանը նշել է, որ դիմումատուն հարկադրված է եղել խոստովանական ցուցմունքներ տալ, իսկ վկաներ Գ.Տավարաձյանն ու Կ.Անտոնյանը հարկադրված են եղել տալ ցուցմունքներ, որոնք ապացուցում են դիմումատուի մեղքը: Դիմումատուի և նշված վկաների նկատմամբ վատ վերաբերմունքի հետևանքով ձեռք բերված ցուցմունքները փաստորեն օգտագործվել էին ներպետական ատյաններում որպես ապացույց՝ դիմումատուի դեմ քրեական դատավարությունում: Ավելին, դա կատարվել է անտեսելով այն հանգամանքը, որ վատ վերաբերմունքի ցուցաբերման փաստն արդեն հաստատված էր զուգահեռ ընթացող վարույթում, որը հարուցվել էր ոստիկանության քննարկվող աշխատակիցների նկատմամբ:

Նշված վերլուծությունների հիման վրա Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ անկախ նրանից, թե ինչ ազդեցություն են ունեցել խոշտանգումների միջոցով ձեռք բերված ցուցմունքները դիմումատուի քրեական վարույթի արդյունքի վրա, մնան ապացույցի օգտագործումն ամբողջ դատավարությունը դարձնում է անարդար: Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

31. Այսպիսով՝ Եվրոպական դատարանը որոշում կայացնելով, որ խոշտանգումների միջոցով ձեռք բերված դիմումատուի և վկաներ Գ.Տավարաձյանի ու Կ.Անտոնյանի ցուցմունքները որպես ապացույց օգտագործելն ամբողջ դատավարությունը դարձրել է անարդար, հիմնավորել է, որ տվյալ քրեական գործի քննության ժամանակ Հայաստանի Հանրապետության դատարանը թույլ է տվել Եվրոպական կոնվենցիայով սահմանված՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտում (Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մաս), որը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>4</sup>-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ որպես նոր հանգամանք դատական ակտը վերանայելու հիմք է:

32. Միաժամանակ գործի նյութերից և Եվրոպական դատարանի վճռից երևում է, որ գործի նյութերում առկա են դիմումատուի մեղքը հաստատող այլ ապացույցներ, որոնց Եվրոպական դատարանն անդրադաձել է իր որոշման 28-րդ կետում (սույն որոշման 23-րդ կետ): Մինչդեռ Վճռաբեկ դատարանում, ի տարբերություն առաջին ատյանի դատարանի, չի իրականացվում ապացույցների անմիջական հետազոտություն, և Վճռաբեկ դատարանի տրամադրության տակ գտնվող դատավարական հնա-



րավորությունները բավարար չեն սույն գործով դատապարտված Մ.Հարությունյանի անմեղության կամ մեղավորության հարցը թույլատրելի ապացույցների հիման վրա լուծելու համար: Ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի հիման վրա պետք է բեկանել Միշա Հարությունյանի վերաբերյալ դատական ակտերը և գործն ուղարկել Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

33. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ, 418-419-րդ, 422-424-րդ, 426<sup>1</sup>-րդ, 426<sup>2</sup>-րդ, 426<sup>4</sup>-րդ 426<sup>7</sup>-րդ, 426<sup>8</sup>-րդ և 426<sup>9</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Միշա Էդիկի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2002թ. հունիսի 19-ի, ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2003թ. ապրիլի 1-ի, ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2003թ. մայիսի 8-ի դատական ակտերը բեկանել և գործն ուղարկել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

8.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության

ՀՅԶՐԴ 3/0106/01/08

վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ՀՅԶՐԴ-3/0106/01/08

նախագահող դատավոր՝ Հ.Ասատրյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝*

Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝*

Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ

Ա. ՊՈԳՈՍՅԱՆԻ

Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

2009 թվականի ապրիլի 10-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով մեղադրյալ Վարդան Մեսրոպի Մինասյանի պաշտպաններ Ռ.Սահակյանի, Լ.Սահակյանի և Ե.Վարոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. դեկտեմբերի 23-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

**Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2007թ. դեկտեմբերի 18-ին՝ ժամը 18-ի սահմաններում, անհայտ անձի կողմից, ապօրինաբար պահվող հրազենով, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, դիտավորությամբ Ռոբերտ Մայիսի Վարդապետյանի, Վահագն Ռազմիկի Հովհաննիսյանի և Գևորգ Լևիկի Ստեփանյանի վրա կրակոցներ արձակելու, դրա հետևանքով Գ.Ստեփանյանին կյանքից զրկելու, իսկ Ռ.Վարդապետյանի և Վ.Հովհաննիսյանի առողջությանը ծանր վնաս պատճառելու փաստի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետերով և 235-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 20114307 քրեական գործը:

2. 2007թ. դեկտեմբերի 22-ին Վ.Սիմասյանը ձերբակալվել է:

3. 2007թ. դեկտեմբերի 25-ին Վ.Սիմասյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետերով և 235-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ նա 2007թ. դեկտեմբերի 18-ին՝ ժամը 16-ի սահմաններում, Արմավիրի մարզի Բարեկամության փողոցում երթևեկության ընթացքում ձայնային ազդանշաններ տալու պատճառով բազմաթիվ անձանց ներկայությամբ վիճաբանել է Ռ.Վարդապետյանի հետ, որի ընթացքում նրանք մոտ 10 բուպե շարունակ, միմյանց նկատմամբ բռնություն գործադրելով, քաշքշել են իրար և տվել փոխադարձ հայհոյանքներ՝ այդ կերպ դիտավորությամբ, կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը և արտահայտելով բացահայտ անհարգալից վերաբերմունք հասարակության նկատմամբ: Այնուհետև, շարունակելով խուլիգանական գործողությունները, մի կողմից Վ. Սիմասյանը, նրա ընկեր Հ. Թանդարյանը, Ս.Արդուխանյանը և ինքնությունները չպարզված անձինք, իսկ մյուս կողմից Ռ.Վարդապետյանը, նրա ընկեր Գ.Ստեփանյանը, Վ.Հովհաննիսյանը և ինքնությունները չպարզված անձինք վիճաբանության հանգամանքները պարզաբանելու նպատակով հավաքվել են Արմավիր-Ջրաբեր ավտոճանապարհի 4-րդ կմ հատվածի հարևանությամբ գտնվող «Կանալ» կոչվող տարածքում և վիճաբանել միմյանց հետ:

Խուլիգանության ընթացքում «Կանալ» կոչվող տարածքում Վ. Սիմասյանը, գործադրելով իր մոտ պահվող «Բայկալ-442» մոդելի «XPM 7568» համարի հրագնե հանդիսացող ատրճանակն ու «Սայգա-12C» մոդելի «H04431605» համարի որսորդական, ողորկավող ինքնալիցք կարաբինը, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով կրակոցներ է արձակել Ռ. Վարդապետյանի և Վ. Հովհաննիսյանի վրա նրանց սպանելու դիտավորությամբ, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով չի կարողացել հանցագործությունն ավարտին հասցնել: Վ.Սիմասյանի արձակած կրակոցներից Վ. Հովհաննիսյանի և Ռ.Վարդապետյանի առողջությանը պատճառվել է ծանր վնաս:

4. 2007թ. դեկտեմբերի 25-ին Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի որոշմամբ Վ.Սիմասյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը:

5. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. փետրվարի 18-ի, 2008թ. ապրիլի 18-ի, 2008թ. մայիսի 16-ի, 2008թ. հուլիսի 17-ի և 2008թ. սեպտեմբերի 17-ի որոշումներով մեղադրյալ Վ.Սիմասյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման ժամկետը երկարացվել է:

6. 2008թ. հուլիսի 4-ին որոշում է կայացվել Վ.Սիմասյանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 6-րդ կետերով որպես մեղադրյալ ներգրավելու մասին: 2008թ. օգոստոսի 13-ին Վ.Սիմասյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 6-րդ կետերով:

7. 2008թ. հոկտեմբերի 1-ին Վ.Սիմասյանի և մյուսների վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ հյուսիսային քրեական դատարան:

8. 2008թ. հոկտեմբերի 15-ին ՀՀ հյուսիսային քրեական դատարանը որոշում է կայացրել քրեական գործն ըստ մեղադրանքի Վարդան Սինասյանի ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 6-րդ կետերով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով ընդունել վարույթ: Նշված որոշմամբ Վ.Սինասյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

9. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. դեկտեմբերի 23-ի որոշմամբ ՀՀ հյուսիսային քրեական դատարանի 2008թ. հոկտեմբերի 15-ի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ, իսկ պաշտպանների վերաքննիչ բողոքը՝ առանց բավարարման:

10. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. դեկտեմբերի 23-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք են բերել Վ.Սինասյանը և նրա պաշտպաններ Ռ.Սահակյանը, Լ.Սահակյանը և Ե.Վարոսյանը: Բողոքը Վճռաբեկ դատարանի 2008 թվականի մարտի 9-ի որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով ընդունվել է վարույթ: Ներկայացված վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.**

11. ՀՀ հյուսիսային քրեական դատարանի՝ քրեական գործը վարույթ ընդունելու վերաբերյալ 2008թ. հոկտեմբերի 15-ի որոշմամբ Վ.Սինասյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը հետևյալ պատճառաբանությամբ. «(...) նկատի ունենալով, որ դեռևս 07.10.2008թ.-ին լրացել է Վարդան Մեսրոպի Սինասյանին կալանավորման տակ պահելու ժամկետը, ուստի գործը վարույթ ընդունելու հետ միաժամանակ պետք է լուծել նաև նրա նկատմամբ խափանման միջոցի հարցը»:

12. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. դեկտեմբերի 23-ի որոշմամբ ՀՀ հյուսիսային քրեական դատարանի 2008թ. հոկտեմբերի 15-ի որոշումն անփոփոխ է թողնվել այն պատճառաբանությամբ, որ «Եվրոպական դատարանի այս (Ձեռնիուն ընդդեմ Լիտվայի գործով որոշման մեջ արտահայտված) իրավական դիրքորոշման լույսի ներքո գնահատելով Հյուսիսային քրեական դատարանի 15.10.2008թ. որոշման՝ մեղադրյալ Վարդան Սինասյանին կալանքի տակ պահելու կարգադրությունը, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դրա «անօրինական» լինելու մասին պաշտպանների փաստարկները հիմնավորված չեն, քանի որ Վ.Սինասյանի՝ Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի խախտում կարող էր տեղի ունենալ հակառակ պարագայում, եթե դատարանը նման կարգադրություն չաներ, և մեղադրյալը շարունակաբար գտնվեր կալանքի տակ՝ դատաքննության ընթացքում»:

13. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. դեկտեմբերի 23-ի որոշման մեջ նշվում է նաև, որ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 40-րդ գլխի դրույթները, որոնք կարգավորում են ստացված քրեական գործը դատական քննության նախապատրաստելու ընթացքում իրականացվող դատավարական գործողությունները, սահմանում է, որ այդ փուլում բոլոր հարցերը քննարկվում են և դրանց վերաբերյալ որոշումները կայացվում են դատավորի կողմից՝ առանց դատավարության մասնակիցների ներկայության և առանց դատական նիստ հրավիրելու: Նշված գլխում սահ-

մանված չէ որևէ ընթացակարգ, որը դատարանին հնարավորություն կտար մեղադրյալին մասնակից դարձնելու որոշման կայացմանը:

Իսկ նյութերից երևում է, որ դատարանը կայացված որոշումը տրամադրել է պաշտպանական կողմին, որոնք օգտվել են այն բողոքարկելու, դրա դեմ իրենց փաստարկներն ու հիմնավորումները ներկայացնելու հնարավորությունից: Այսինքն, պաշտպանական կողմը գրկված չի եղել Վարդան Սինասյանի կալանավորման օրինականությունը արդյունավետ կերպով վիճարկելու իրավունքից»:

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

14. Բողոք բերած անձը, վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Ջեսիուս ընդդեմ Լիտվայի* (JÉČIUS v. LITHUANIA, 2000թ., գանգատ N 34578/97) գործով որոշումը, նշում է, որ 2008թ. հոկտեմբերի 7-ից սկսած՝ Վ.Սինասյանը ապօրինաբար գտնվել է անազատության մեջ:

Վ.Սինասյանին կալանքի տակ պահելու ժամկետը լրացել է 2008թ. հոկտեմբերի 7-ին, և այդ օրը նա պետք է ազատ արձակվեր, սակայն նա մինչև 2008թ. հոկտեմբերի 15-ը գտնվել է անազատության մեջ՝ առանց օրենքով սահմանված կարգով դատարանի կողմից կայացված որոշման: Վ.Սինասյանի նկատմամբ խափանման միջոցի ընտրության հարցը լուծվել է ՀՀ հյուսիսային քրեական դատարանի 2008թ. հոկտեմբերի 15-ի՝ քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշմամբ, ինչն ըստ բողոքաբերի հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 5-րդ և ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածների, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ, 11-րդ հոդվածի 5-րդ և 142-րդ հոդվածի 4-րդ մասերի խախտում:

15. Բողոքաբերը նշում է, որ ՀՀ հյուսիսային քրեական դատարանը քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելիս չէր կարող Վ.Սինասյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրել: Քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնելիս ՀՀ հյուսիսային քրեական դատարանը չէր կարող ծանոթ լինել քրեական գործի նյութերին և դրանց ծանոթանալու հնարավորություն կատանար միայն քրեական գործը վարույթ ընդունելուց հետո: Բողոքաբերը նշում է նաև, որ ՀՀ հյուսիսային քրեական դատարանը Վ.Սինասյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց է ընտրել այն պայմաններում, երբ ծանոթ չի եղել վերջինիս կողմից կատարված դեպքին առնչություն ունենալու հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության մասին վկայող որևէ փաստաթղթի:

16. Վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք նախադեպային որոշումներ՝ բողոքաբերը նշում է, որ ազգային դատական մարմինները պարտավոր են հաշվի առնել բոլոր հանգամանքները, որոնք անհրաժեշտ են պարզելու համար, թե կա արդյոք հասարակական շահ, համապատասխան և բավարար պատճառ, որը, հաշվի առնելով անմեղության կանխավարկածը, արդարացնում է նահանջը անձի ազատության իրավունքի հարգանքից: Անձին ազատությունից գրկելու համար անհրաժեշտ հիմքերը պետք է հիմնավորված լինեն կոնկրետ փաստացի նյու-

թերով, տվյալներով, մինչդեռ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ առաջին ատյանի դատարանը ընդհանրապես չի նշել կալանքը որպես խափանման միջոց ընտրելու որևէ հիմք:

17. Բողոքաբերը նշում է, որ Վ.Սիմասյանի նկատմամբ խափանման միջոց ընտրելու հարցը լուծելիս ՀՀ հյուսիսային քրեական դատարանը պարտավոր էր ապահովել պաշտպանական կողմի հնարավորությունը արդյունավետ կերպով վիճարկելու Վ.Սիմասյանի կալանավորման օրինականությունը, ինչը չի կատարել:

18. ՀՀ հյուսիսային քրեական դատարանը հաշվի չի առել, իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը կալանավորումը վերացնելու բավարար հիմք չի համարել այն հանգամանքները, որ Վ.Սիմասյանը դատավաճառություն չունի, արատավորված չի եղել, ունի բարձրագույն իրավաբանական կրթություն, ամուսնացած է, խնամքին ունի երեք անչափահաս երեխա, կին և տարեց մայր, ունի մշտական բնակության վայր, աշխատանք:

19. Վկայակոչելով Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ /2006/13 հանձնարարականի 21–րդ կանոնը, որի համաձայն՝ անձին կալանավորելու մասին դատական իշխանության ցանկացած որոշում պետք է լինի պատճառաբանված, բողոքաբերը նշում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը չի անդրադարձել այն հանգամանքին, որ ՀՀ հյուսիսային քրեական դատարանն իր որոշման պատճառաբանական մասում օրենքով սահմանված կարգով չի քննարկել խափանման միջոցի հիմնավոր կամ անհիմն լինելը, չի պատճառաբանել իր որոշումը: Արդյունքում դատարանն ուշադրություն չի դարձրել այն հանգամանքի վրա, որ չկա հիմնավոր կասկած, որ Վ.Սիմասյանն առնչություն չունի իրեն մեղսագրվող արարքի հետ, հաշվի չի առնվել, որ բացակայում են նրան կալանավորելու հիմքերը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալ փաստարկները՝ բողոքաբերը խնդրել է Վ.Սիմասյանի կալանավորումը որպես խափանման միջոց վերացնել և նրան կալանքից ազատ արձակել:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

20. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի այն հարցին, թե ՀՀ հյուսիսային քրեական դատարանն իրավասու<sup>o</sup> էր արդյոք Վ.Սիմասյանի նկատմամբ խափանման միջոցի ընտրության հարցը լուծել քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:

*1. Դատական քննության նախապատրաստության փուլում անձի կալանավորման հարցը:*

21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138–րդ հոդվածի 3–րդ մասի համաձայն՝ «(...) Քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետի ընթացքը կասեցվում է այն օրը, երբ դատախազը քրեական գործն ուղարկում է դատարան, կամ կալանավորումը՝ որպես խափանման միջոց վերացվում է»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 291–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ «Դատարան մուտք եղած քրեական գործը դատավորները սահմանված կարգով իրենց վարույթ են ընդունում, որի մասին կայացվում է որոշում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորը հետագոտում է գործի նյութերը և քրեական գործը վարույթ ընդունելու պահից 15 օրվա ընթացքում կայացնում հետևյալ որոշումներից մեկը՝

- 1) դատական քննություն նշանակելու մասին.
- 2) քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին.
- 3) քրեական գործի վարույթը կասեցնելու մասին.
- 4) գործը մեղադրողին վերադարձնելու մասին.
- (...)
- 6) գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին.
- 7) ինքնաբացարկի մասին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածի համաձայն՝ «Որոշումներ կայացնելու հետ միաժամանակ, բացի գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին որոշումից, դատարանը պարտավոր է քննել մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցներ ընտրելու կամ չընտրելու և դրա տեսակի հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը՝ խափանման միջոցն ընտրված լինելու դեպքում»:

22. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերոնշյալ հոդվածների վերլուծությունից երևում է, որ անձի վերաբերյալ քրեական գործը դատարան ուղարկվելու դեպքում, եթե մինչդատական վարույթում անձի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքը չի վերացվում, ապա դրա ժամկետի ընթացքը կասեցվում է, և անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ընտրված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու մասին դատարանի որոշման բացակայության պայմաններում անձը շարունակում է գտնվել անազատության մեջ մինչև քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորը 15-օրյա ժամկետում կայացնի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը և վերջիններիս կայացման հետ մեկտեղ լուծի խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, իսկ խափանման միջոցն ընտրված լինելու դեպքում՝ դրա տեսակի հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը: Այլ կերպ՝ ՀՀ քրեադատավարական օրենսդրության նշված կարգավորումից բխում է, որ գործը դատական քննության նախապատրաստելու փուլում կարող է առաջանալ այնպիսի իրավիճակ, երբ անձի ազատության իրավունքը կարող է սահմանափակվել և անձը շարունակաբար կարող է գտնվել կալանքի տակ՝ առանց դատավարական հիմքի, այն է՝ խափանման միջոց ընտրելու մասին դատարանի որոշման:

*II. Քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշմամբ անձի կալանքի հարցի լուծումը.*

23. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կալանավորումը, գրավը կիրառվում են միայն դատարանի որոշմամբ՝ քննիչի

կամ դատախազի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ՝ դատարանում քրեական գործը քննելիս (...)»:

24. Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի համաձայն՝ «Յուրաքանչյուր որ ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով. (...) գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար, (...):

25. *Ձեփուսն ընդդեմ Լիտվայի* գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշման համաձայն՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետից բխում է, որ անձի կալանքի հիմնավորումը սուկ այն փաստով, որ գործը փոխանցվել է դատարան, չի կարող հանդիսանալ «օրինական» հիմք անձի կալանքը շարունակելու համար (JÉČIUS v. LITHUANIA, 2000թ., գանգատ N34578/97, կետ 63):

Նշված վճռի 68-րդ կետում Եվրոպական դատարանն այն մոտեցումն է արտահայտել, որ Լիտվայի նախկին քրեական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի 6-րդ կետը (որի բովանդակությունն ամբողջովին համապատասխանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 3-րդ մասի բովանդակությանը), չի կարող օրինական հիմք լինել կալանքի կիրառման համար: Կալանքի ժամկետը սկզբունքորեն «օրինական է», եթե այն հիմնված է դատարանի որոշման վրա (JÉČIUS v. LITHUANIA, կետ 68):

26. Հաշվի առնելով *Ձեփուսն ընդդեմ Լիտվայի* գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ներկայացրած հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրողի կողմից գործը դատարան ուղարկված լինելու հիմքով անձին կալանքի տակ պահելու ժամկետի կասեցումն անձի ազատության իրավունքի անօրինական սահմանափակում է: Ուստի ՀՀ քրեադատավարական օրենքի 138-րդ հոդվածի 3-րդ մասում առկա կարգավորումը հակասում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ և 136-րդ հոդվածի 2-րդ մասերին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքերում, երբ կալանքի երկամսյա ժամկետի ավարտին մնացել է 15 օրից քիչ ժամանակ, այսինքն՝ քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկի կայացման ժամկետից պակաս ժամանակ, նախաքննական մարմինը գործը դատարան ուղարկելու հետ միաժամանակ պետք է լուծի նաև անձի կալանքի հարցը, այն է՝ պետք է անձին ազատ արձակի, եթե վերացել են նրան կալանքի տակ պահելու հիմքերը, կամ դատարանին միջնորդություն ներկայացնի կալանավորման ժամկետը երկարացնելու վերաբերյալ, եթե առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի հիմքերը:



27. Հետևաբար՝ ՀՀ հյուսիսային քրեական դատարանն իրավասու էր քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշման կայացման հետ մեկտեղ լուծել Վ. Մինասյանի կալանքի հարցը, քանի որ դա բխում է Կոնվենցիայով նախատեսված ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի ապահովման անհրաժեշտությունից:

*III. Բողոքաբերի մյուս փաստարկները.*

28. Վճռաբեկ դատարանը հիմնավորված չի համարում բողոքաբերի պնդումն այն մասին, որ Վ.Մինասյանի նկատմամբ խափանման միջոցի հարցը լուծելիս ՀՀ հյուսիսային քրեական դատարանը չի ապահովել պաշտպանական կողմի հնարավորությունը արդյունավետ կերպով վիճարկելու Վ.Մինասյանի կալանավորման օրինականությունը, և իր համաձայնությունն է արտահայտում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. դեկտեմբերի 23–ի որոշման մեջ արտահայտված դիրքորոշման հետ (տե՛ս սույն որոշման 13–րդ կետը):

29. Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկին, որ ՀՀ հյուսիսային քրեական դատարանը հաշվի չի առել, իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը կալանավորումը վերացնելու բավարար հիմք չի համարել Վ.Մինասյանի ինքնությունը բնութագրող հանգամանքները, ապա գործի նյութերից երևում է, որ վերաքննիչ դատարանն անդրադարձել է այդ հարցին և արդյունքներով հանգել է ճիշտ հետևության (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135–րդ հոդվածի մեկնաբանության վերաբերյալ իր դիրքորոշումը Վճռաբեկ դատարանն արտահայտել է *Ասլան Ավետիսյանի* գործով 2008թ. հոկտեմբերի 31–ին կայացված ԱՎԴ/0022/06/08 որոշման մեջ):

30. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական քննության նախապատրաստության փուլում անձի կալանավորման հարցի կապակցությամբ սույն գործով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92–րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403–406–րդ, 419–րդ, 422–424–րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Վարդան Մեսրոպի Մինասյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին ՀՀ հյուսիսային քրեական դատարանի 2008թ. հոկտեմբերի 15–ի որոշումն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. դեկտեմբերի 23–ի որոշումը Վճռաբեկ դատարանի պատճառաբանություններով թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

9.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵԿԳ/0107/11/08

ԵԿԳ/0107/11/08

նախագահող դատավոր՝ Հ.Տեր-Աղամյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ

2009 թվականի հունիսի 2-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով «Էկոնոմիկասացիա» դուստր փակ բաժնետիրական ընկերության /այսուհետ՝ ԳՓԲԸ/ ներկայացուցիչ Արա Ջոհրաբյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի փետրվարի 11-ի որոշման դեմ,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. «Էկոնոմիկասացիա» ԳՓԲԸ-ի տնօրինության կողմից հարկման հիմք հանդիսացող փաստաթղթերի մեջ ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով առանձնապես խոշոր չափերով հարկեր վճարելուց չարամտորեն խուսափելու փաստի առթիվ 2008 թվականի օգոստոսի 16-ին նախաքննության մարմնի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է քրեական գործ:

2. 2008թ. հոկտեմբերի 10–ին «Էկոնոմիկասագիա» ԳՓԲԸ–ի տնօրեն Սամվել Գուրգենի Պետրոսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 205–րդ հոդվածի 2–րդ մասով:

3. Նախաքննության մարմնի 2008թ. հոկտեմբերի 14–ի որոշմամբ կալանք է դրվել ընկերությունում որպես հիմնական միջոցներ հաշվառված, սեփականության իրավունքով ընկերությանը պատկանող թվով 19 տրանսպորտային միջոցների վրա:

4. 2008թ. հոկտեմբերի 14–ի որոշումը բողոքարկվել է ՀՀ գլխավոր դատախազին:

ՀՀ գլխավոր դատախազության սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազի 2008թ. նոյեմբերի 3–ի որոշմամբ բողոքը մերժվել է:

5. 2008թ. նոյեմբերի 28–ին «Էկոնոմիկասագիա» ԳՓԲԸ–ի տնօրենը բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ գույքի վրա կալանք դնելու մասին 2008թ. հոկտեմբերի 14–ի որոշումը վերացնելու խնդրանքով:

Երևանի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. դեկտեմբերի 16–ի որոշմամբ բողոքը մերժվել է:

6. «Էկոնոմիկասագիա» ԳՓԲԸ–ի տնօրենի ներկայացուցչի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009թ. փետրվարի 11–ի որոշմամբ վերաքննիչ վարույթը կարճել է:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. փետրվարի 11–ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել «Էկոնոմիկասագիա» ԳՓԲԸ–ի ներկայացուցիչը:

7. Վճռաբեկ դատարանը 2009թ. ապրիլի 10–ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետի հիմքով /բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ուղարկվել:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները**

8. Վերաքննիչ դատարանը 2009թ. հունվարի 13–ի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունել է վարույթ և նշանակել ղոնրաց դատական նիստում քննության 2009թ. հունվարի 27–ին՝ ժամը 11–ին, պատշաճ կարգով ծանուցելով դատավարության մասնակիցներին՝ այդ թվում նաև բողոքաբեր Հասմիկ Ռաֆայելյանին:

9. Հասմիկ Ռաֆայելյանը դատարանին անհայտ պատճառով դատական նիստին չի ներկայացել, որի պատճառով դատական նիստը հետաձգվել է մինչև 2009թ. փետրվարի 11–ը՝ ժամը 11–ը: Գատարանը կրկին ծանուցել է «Էկոնոմիկասագիա» ԳՓԲԸ–ի ներկայացուցչին դատական նիստի օրվա և ժամի մասին, սակայն վերջինս դատարանին անհայտ պատճառով կրկին չի ներկայացել:

10. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն անհարգելի է համարել վերաքննիչ դատարանի դատական նիստերին «Էկոնոմիկասագիա» ԳՓԲԸ–ի ներկայացուցչի չներկայանալը և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383–րդ

հողվածի 4-րդ մասով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 37-րդ հողվածի 1-ին մասի 1-ին կետով 2009թ. փետրվարի 11-ի որոշմամբ «Էկոնոմիկասացիա» ԳՓԲԸ-ի ներկայացուցչի վերաքննիչ բողոքով վերաքննիչ վարույթը կարճել է:

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Գտնելով, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հողվածի դրույթների միատեսակ կիրառության համար, ինչպես նաև վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված ամբողջ դատական սխալ, որն անաչափ է ծանր հետևանքներ և բողոք բերող անձը գրկվել է իր իրավունքները դատական կարգով պաշտպանելու սահմանադրական իրավունքից /արդարադատության մատչելիության իրավունք/, բողոքաբերը խնդրել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. փետրվարի 11-ի որոշումը բեկանել և փոփոխել վերացնել ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության ավագ քննիչի 2008թ. հոկտեմբերի 14-ի՝ գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը:

12. Բողոք բերած անձը նշել է, որ վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է դատավարական իրավունքի նորմերի խախտումներով, դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հողվածի 1-ին մասի, 383-րդ հողվածի 3-րդ, 4-րդ մասերի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հողվածի, ՀՀ Սահմանադրության 5-րդ հողվածի 2-րդ մասի, 18-րդ, 19-րդ հողվածների պահանջները, կիրառել է Կոնվենցիայի 37-րդ հողվածի նորմերը, որոնք չպետք է կիրառեր:

Բողոքում նշվում է, որ բողոք ներկայացրած անձի կողմից դատական նիստերին չներկայանալը կարող է որակվել որպես նշված հողվածով սահմանված վերաքննիչ բողոքը հետ վերցնելու դատավարական իրավունքի իրացում, թե՞ ոչ և նման մեկնաբանությամբ արդյո՞ք չի խեղաթյուրվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հողվածի 3-րդ մասով սահմանված նորմի իմաստը:

Բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, կիրառելով Եվրոպական Կոնվենցիայի 37-րդ հողվածը, կատարել է այնպիսի գործողություն, որի համար լիազորված չի եղել ոչ ՀՀ Սահմանադրությամբ և ոչ էլ ՀՀ օրենքներով:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի հետևյալ հարցին՝ իրավաչափ էր արդյոք ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 37-րդ հողվածի, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հողվածի 3-րդ, 4-րդ մասերի կիրառումը, այն դեպքում, երբ բողոք բերող անձը, պատշաճ կարգով ծանուցված լինելով դատական նիստի օրվա և ժամի մասին, անհարգելի պատճառով չի ներկայանում դատական նիստին:

14. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը քննության ցանկացած փուլում կարող է որոշել զանգատը հանել գործերի ցուցակից, եթե հանգամանքները հանգեցնում են այն եզրակացության, թե՛

ա. դիմողը մտադիր չէ հետամուտ լինել իր զանգատին,

բ. վեճն արդեն կարգավորվել է,

գ. Դատարանի կողմից հիմք ընդունված որևէ այլ պատճառով զանգատի քննությունը շարունակելն արդարացված չէ:

Այդուհանդերձ, Դատարանը շարունակում է զանգատի քննությունը, եթե դա է պահանջում սույն Կոնվենցիայով և դրան կից Արձանագրություններով սահմանված իրավունքների հարգումը:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոք բերած անձը և այն անձը, որի շահերի պաշտպանության նպատակով բերվել է բողոքը, իրավունք ունեն հետ վերցնելու այն մինչև վերաքննիչ դատարանում դատական նիստը սկսվելը: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե վերաքննիչ բողոքարկման ժամկետն ավարտվել է, իսկ տվյալ դատական ակտի դեմ այլ վերաքննիչ բողոքներ չեն բերվել, ապա բողոքը հետ վերցնելու դեպքում դատարանը կասցնում է վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի 3-րդ մասի բովանդակությունից երևում է, որ բողոքը հետ վերցնելն անձի իրավունքն է, և դրանով կարգավորվում են սուբյեկտների կողմից բողոքները հետ վերցնելու իրավունքի իրացման հետ կապված հարաբերություններ: Իրավունքն անձի հնարավոր թույլատրելի վարքագիծն է՝ կատարելու այս կամ այն արարքը կամ ձեռնպահ մնալու դրա կատարումից: Հետևաբար վերաքննիչ բողոք բերելը կամ այն հետ վերցնելը անձի իրավունքն է, որն արտահայտվում է անձի ազատ կամքի դրսևորմամբ:

16. Վերաքննիչ բողոքը հետ վերցնելու վերաբերյալ փաստի հաստատման և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառման համար դատարանը պետք է ունենա բավարար հիմքեր, մասնավորապես այդպիսին կարող է հանդիսանալ բողոք բերած անձի՝ վերաքննիչ բողոքը հետ վերցնելու վերաբերյալ վերաքննիչ դատարան բերված դիմումը: Բողոքաբերի կողմից բողոքը հետ վերցնելը պետք է կատարվի ակտիվ վարքագիծ դրսևորելով, այսինքն՝ անձը պետք է իր կամքն արտահայտի բողոքը հետ վերցնելու կապակցությամբ:

Մինչդեռ գործի նյութերից երևում է, որ բողոք բերող անձը վերաքննիչ դատարանում մինչև դատական նիստը սկսվելը իր բողոքը հետ չի վերցրել, հետևաբար վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները չեն բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջներից:

17. Այս պայմաններում, վերաքննիչ դատարանը, սխալ կիրառելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասի դրույթները, դատական նիստին չներկայանալը հավասարեցրել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի դրույթներին, այն է՝ երբ դիմողը մտադիր չէ հետամուտ լինել իր զանգատին կամ բողոքին և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի

4-րդ մասի հիման վրա որոշում է կայացրել վերաքննիչ վարույթը կարճելու մասին:

Մինչդեռ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում վարույթը կանոնա-կարգող ընթացակարգային կանոնները որևէ պարագայում չեն կարող կարգավորել նաև ՀՀ դատարաններում վարույթը:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի հա-մաձայն՝ դատարանը լիազորված է իր նիստերում քննել և լուծել ստացված գործերը և նյութերը: Արդարադատություն իրականացնելուց հրաժարվելն անթույլատրելի է: Գործի նյութերից երևում է, որ վերաքննիչ բողոք բերած անձի կողմից դատական նիս-տերին չներկայանալը որակելով որպես վերաքննիչ բողոքից հրաժարում և այդ հիմ-քով կարճելով վերաքննիչ վարույթը՝ վերաքննիչ դատարանն ըստ էության հրաժար-վել է արդարադատություն իրականացնելուց և խախտել է ՀՀ քրեական դատավա-րության օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները:

19. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանը սույն գործով դա-տական ակտ կայացնելիս թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնե-լու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդ-վածների համաձայն՝ հիմք է վերաքննիչ դատարանի՝ սույն գործով կայացված դատա-կան ակտը բեկանելու և նույն դատարան նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

20. Վճռաբեկ դատարանը միաժամանակ գտնում է, որ չի կարող բավարարվել գույ-քի վրա կալանք դնելու մասին քննիչի որոշումը վերացնելու վերաբերյալ բողոքի պահան-ջը, քանի որ վերաքննիչ դատարանն առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բեր-ված բողոքն ըստ էության չի քննել և որոշում չի կայացրել, այլ կարճել է վերաքննիչ վա-րույթը, որի դեմ էլ բերվել է վճռաբեկ բողոքը: Ուստի վճռաբեկ բողոքը պետք է բավարա-րել մասնակիորեն, այն է՝ բեկանել վերաքննիչ վարույթը կարճելու մասին վերաքննիչ դա-տարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

21. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռա-բեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: «Էկոնոմիկասացիա» դուստր փակ բաժնետիրական ընկերության ներկայացուցչի բողոքով վերաքննիչ վարույթը կարճելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. փետրվարի 11-ի որո-շումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնա-կան է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

10.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի  
ՀՅԶԲԴ/0046/01/08 որոշում

ՀՅԶԲԴ/0046/01/08

նախագահող դատավոր՝ Մ.Արղամանյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝*

Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝*

Հ. ԱՄԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ

2009 թվականի հունիսի 2-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով Վարդան Վոլոդյայի Ալիխանյանի պաշտպանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 5-ի որոշման դեմ պաշտպան Ա. Եսայանի բերած վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. Քրեական գործը հարուցվել է 2008թ. հոկտեմբերի 20-ին:
2. 2008թ. հոկտեմբերի 30-ին Վարդան Վոլոդյայի Ալիխանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:
3. 2008թ. դեկտեմբերի 22-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Հյուսիսային քրեական դատարան:

Հյուսիսային քրեական դատարանի 2009թ. հունվարի 13-ի դատավճռով, դատական քննության արագացված կարգի կիրառմամբ, Վ.Ալիխանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել է ազատազրկման՝ 3 /երեք/ տարի ժամկետով:

4. Հյուսիսային քրեական դատարանի նշված դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել Վ.Ալիխանյանի պաշտպան Ա.Եսայանը: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. մարտի 5-ի որոշմամբ պաշտպանի վերաքննիչ բողոքը թողնվել է առանց քննության:

5. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. մարտի 5-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Վ.Ալիխանյանի պաշտպան Ա.Եսայանը:

2009թ. ապրիլի 21-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի հիմքով («վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ»):

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.**

6. Հյուսիսային քրեական դատարանի 2009թ. հունվարի 13-ի դատավճռով Վ. Ալիխանյանը դատապարտվել է այն բանի համար, որ նա 2008թ. հոկտեմբերի 6-ին՝ ժամը 23-ի սահմաններում, Դիլիջան քաղաքի Աբովյան 44 հասցեում գտնվող իր բնակարանում կենցաղային հարցի շուրջ վիճաբանել է վթարի ենթարկվելու կապակցությամբ իրեն տեսակցության եկած հարևան Հարություն Ալբերտի Մարտիրոսյանի հետ և, վիրավորվելով վերջինիս կողմից շարունակաբար իրեն ուղղված վիրավորանքներից, ներկաների համար անսպասելի վերցրել է սեղանին դրված դանակը և նստած դիրքից հարվածել նրան, որից հետո դանակը գցել է սեղանին և կնոջ՝ Օվսաննա Նավասարդյանի հետ վերջինիս օգնություն ցույց տվել: Այնուհետև Օվս.Նավասարդյանն իրենց տուն է կանչել Հ.Մարտիրոսյանի կնոջը, որն էլ ամուսնուն ուղեկցել է տուն: Գիշերվա ընթացքում Հ. Մարտիրոսյանի վիճակը վատացել է, նրան տեղափոխել են Դիլիջան քաղաքի հիվանդանոց և վիրահատել:

7. Սույն գործով 2009թ. փետրվարի 12-ին ներկայացվել է վերաքննիչ բողոք քրեադատավարական օրենքի էական խախտման և քրեական օրենքը ոչ ճիշտ կիրառելու հիմքով: Նշված վերաքննիչ բողոքում խնդրվել է բեկանել Հյուսիսային քրեական դատարանի 2009թ. հունվարի 13-ի դատավճռը՝ արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասից 114-րդ հոդվածի 2-րդ մասով վերադարձնելու և ազատազրկման հետ կապ չունեցող պատիժ նշանակելու առումով, իսկ եթե վերաքննիչ դատարանը գտնի, որ Հյուսիսային քրեական դատարանի կողմից կիրառված արագացված դատաքննությունը խոչընդոտում է նոր օրինական դատական ակտ կայաց-



նելուն, ապա խնդրվել է բեկանել դատավճիռն ամբողջությամբ, և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

8. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. մարտի 5-ի որոշմամբ պաշտպանի վերաքննիչ բողոքը թողնվել է առանց քննության այն պատճառաբանությամբ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.4-րդ հոդվածի համաձայն՝ դատավճիռը, որը կայացվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածին համապատասխան, կարող է բողոքարկվել քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով՝ բացառությամբ 395-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմքի: Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին կետը վերաբերում է գործի փաստական հանգամանքների մասին դատական ակտում շարադրված հետևություններին, որի առումով արագացված դատաքննության կիրառման պայմաններում բերված վերաքննիչ բողոքները պետք է թողնվեն առանց քննության:

### **Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

9. Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վճռաբեկ բողոք բերած անձը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. մարտի 5-ի՝ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշմամբ անտեսվել են բողոքը վարույթ ընդունելու համար առկա բավարար պահանջները՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումները: Դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 4-րդ մասով ղեկավարվելու փոխարեն կիրառել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասը, որը չպետք է կիրառեր:

10. Ըստ բողոք բերած անձի՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ նշված փաստերը և կատարված եզրահանգումները չեն համապատասխանում միմյանց: Բացի այդ, դատարանն անտեսել է, որ վերաքննիչ բողոքում վիճարկվել է նաև արագացված դատական քննություն անցկացնելու կարգը: Այսինքն՝ վերաքննիչ բողոքը ներկայացվել է ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին, այլ 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված հիմքերով: Հետևաբար վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշմամբ Վ.Ալիխանյանին զրկել է իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության արդյունավետ միջոցներից օգտվելու հնարավորությունից, խախտել ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածների, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջները:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Հյուսիսային քրեական դատարանի 2009թ. հունվարի 13-ի դատավճիռի դեմ Վ.Ալիխանյանի պաշտպանի բերած վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. մարտի 5-ի որոշումը, գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

*Ա. Սույն գործով վերաքննիչ բողոքի հիմքը*

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի այն հարցին, թե Հյուսիսային քրեական դատարանի դատավճիռը բեկանելու և արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասից ՀՀ քրեական օրենսգրքի 114-րդ հոդվածի 2-րդ մասի վերատրակելու վերաբերյալ փաստաբանի պահանջը վերաբերու՞մ է արդյոք գործի փաստական հանգամանքներին և սույն գործով վերաքննիչ բողոքը բերվե՞լ է արդյոք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ գործի փաստական հանգամանքների մասին դատական ակտում շարադրված դատարանի հետևությունները վերաքննիչ դատարանում հետազոտված ապացույցներին չհամապատասխանելու հիմքով:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Բողոքարկված դատական ակտը բեկանվում կամ փոփոխվում է, եթե թույլ է տրվել դատական սխալ, այն է՝ գործի փաստական հանգամանքների մասին դատական ակտում շարադրված դատարանի հետևությունները չեն համապատասխանում վերաքննիչ դատարանում հետազոտված ապացույցներին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Իատարանը արագացված կարգով դատական քննություն անցկացնելիս քրեական գործով ձեռք բերված ապացույցների ընդհանուր կարգով սահմանված հետազոտություն չի կատարում: (...)»

Վերոշարադրյալ հոդվածների վերլուծությունից երևում է, որ այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանի կողմից գործը քննվել է արագացված դատական քննության կարգով, ապա դրա արդյունքում կայացված դատավճիռը չի կարող ՀՀ վերաքննիչ քրեական դատարան բողոքարկվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով:

13. Սույն գործի նյութերի, մասնավորապես՝ վերաքննիչ բողոքի ուսումնասիրությունից, սակայն, երևում է, որ Վ.Ալիխանյանի պաշտպանը վիճարկել է ոչ թե գործի փաստական հանգամանքների մասին դատական ակտում շարադրված հետևությունները գործում առկա ապացույցներին չհամապատասխանելու հարցը, այլ, կասկածի տակ չդնելով գործի փաստական հանգամանքները, նշել է, դրանք վկայում են այն մասին, որ իր պաշտպանյալի արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 114-րդ հոդվածի 2-րդ և ոչ թե 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքին: Այսինքն՝ վերաքննիչ բողոքը պաշտպանի կողմից բերվել է ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, այլ նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի, այն է՝ քրեական օրենքի ճիշտ չկիրառման և քրեադատավարական օրենքի էական խախտման հիմքերով, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը դրա նկատմամբ չէր կարող կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները և առանց քննության թողնել այն, որի արդյունքում խախտվել է Վ.Ալիխանյանի՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը:

*Բ. Վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում կայացնելիս վերաքննիչ դատարանի կազմը*

14. Հիմնավորված համարելով բողոքաբերի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով և ոչ թե նույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով վերաքննիչ բողոք բերած լինելու փաստը՝ Վճռաբեկ դատարանը անհրաժեշտ է համարում նաև անդրադառնալ բողոքի հիմքերի հետ փոխկապակցված հետևյալ հարցին՝ արդյոք ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իրավասու՞ էր սույն գործով միանձնյա կարգով բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ որոշում կայացնել, թե՛ ոչ:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը (...) բերվել է 375.4 հոդվածի պահանջի խախտմամբ, վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Ստորադաս դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծվում է դատարանի կազմը նախագահողի կողմից»:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերում ամրագրված իրավանորմերի տառացի մեկնաբանման ու համեմատական վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գալիս է հետևության, որ գործն ըստ էության լուծող դատական ակտը վերաքննիչ դատարանում բողոքարկելու փուլում դատական ակտ կայացնելու իրավասությամբ օրենսդիրն օժտել է երկու սուբյեկտների՝ վերաքննիչ դատարանի ողջ կազմին (նախագահող դատավոր և դատական կազմում ընդգրկված երկու դատավոր)՝ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշման պարագայում, և դատարանի կազմը նախագահող դատավորին՝ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծելու պարագայում: Այլ կերպ՝ առաջին դեպքում որոշումը կայացվում է դատարանի կոլեգիալ կազմով, իսկ երկրորդ դեպքում՝ միանձնյա:

Վերաքննիչ բողոքարկման փուլում որոշում կայացնելիս դատարանի կազմի հարցում տարբերակված մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, թե վերաքննիչ դատարանի որոշումը կարող է արդյոք էական ազդեցություն ունենալ վերաքննիչ բողոքարկման իրավունքի արդյունավետ կենսագործման վրա, թե այն ընդամենը կրում է աշխատակարգային բնույթ: Առաջին դեպքում բողոքաբերին պետք է տրվի կոլեգիալության լրացուցիչ երաշխիքը, մինչդեռ երկրորդ դեպքում դրա անհրաժեշտությունը բացակայում է:

17. Վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը, իր բնույթից ելնելով, անհրաժեշտաբար էական ազդեցություն է ունենում վերաքննիչ բողոքարկման իրավունքի արդյունավետ կենսագործման վրա: Ավելին, ի տարբերություն վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշման՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը հանդիսանում է գործն ըստ էության լուծող դատական ակտ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10.1 կետի իմաստով: Համաձայն այդ

հողվածի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտեր են նաև առաջին ատյանի՝ գործն ըստ էության լուծող « (...) դատական ակտի վերաքննիչ բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտերը (...)»: Իսկ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը կայացվում է վերաքննիչ բողոքարկման արդյունքում, քանի որ բացառում է տվյալ գործով վերաքննիչ վարույթը շարունակելը:

Այս պայմաններում կոլեգիալության և վերաքննիչ դատարանի կազմում ընդգրկված դատավորների իրավահավասարության սկզբունքներից շեղումը ոչնչով արդարացված չէ:

18. Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով սույն որոշման 13–րդ կետում արտացոլված իրավական դիրքորոշումը, գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը թույլ է տվել քրեադատավարական օրենքի ակնհայտ և կոպիտ խախտումներ:

19. Հիմք ընդունելով վերոշարադրյալ փաստարկները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Մահմանադրության 92–րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403–406–րդ, 419–րդ, 422–424–րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը:

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վարդան Վոլոդյայի Ալիխանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112–րդ հոդվածի 1–ին մասով Հյուսիսային քրեական դատարանի 2009 թվականի հունվարի 13–ի դատավճռի դեմ պաշտպանի բերած վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 5–ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

11.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության

ԵՔԲԴ/0297/01/08

վերաքննիչ քրեական դատարանի որոշում

նախագահող դատավոր՝ Գ. Մելիք-Սարգսյան

դատավորներ՝ Մ. Պետրոսյան, Ս. Համբարձումյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՄԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Կ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ մեղադրող* Վ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆԻ  
*ամբաստանյալ* Ա. ԴԱՎԹՅԱՆԻ

2009 թվականի հունիսի 2-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով Արամ Թանգիի Դավթյանի վերաբերյալ  
ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 5-ի որոշման դեմ ամ-  
բաստանյալ Ա.Դավթյանի բերած վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը**

1. Քրեական գործը հարուցվել է 2007 թվականի ապրիլի 12-ին ՀՀ քրեական  
օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով:

2007 թվականի օգոստոսի 13-ին Ա.Դավթյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ  
քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով, նույն օրը նրա նկատմամբ որպես  
խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

2008 թվականի ապրիլի 25-ին Ա.Գավթյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել և լրացվել է, նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով, նույն օրը նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2. 2008 թվականի հունիսի 13-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի քրեական դատարան:

Երևանի քրեական դատարանում՝ դատական վիճաբանությունների փուլում վերլուծելով գործով ձեռք բերված ապացույցները՝ մեղադրողը միջնորդել է ամբաստանյալին մեղաագրվող արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասից վերադարձնել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով՝ պատճառաբանելով, որ դատաքննության փուլում պաշտպանության կողմի պատճառաբանությունները ճշտելու նպատակով փորձագետի կողմից կատարված լրացուցիչ հաշվարկի արդյունքում մեղադրանքի ծավալը նվազել է՝ կազմելով 14.969.925 ՀՀ դրամ:

Երևանի քրեական դատարանը 2008 թվականի դեկտեմբերի 9-ի դատավճռով Ա.Գավթյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել ազատազրկման ութ ամիս ժամկետով՝ երկու տարի ժամկետով նրան գրելով նյութական պատասխանատու պաշտոններ զբաղեցնելու իրավունքից:

Երևանի քրեական դատարանը քաղաքացիական հայցը բավարարել է մասնակիորեն և որոշել է «Մաժեստիկ» ՍՊԸ միջոցներից և Ա.Գավթյանի տնտեսությունից համապարտության կարգով բռնագանձել 29.112.749 ՀՀ դրամ հօգուտ պետությունից՝ որպես վնասի հատուցում:

Ա.Գավթյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

3. Երևանի քրեական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 9-ի դատավճռի դեմ վերաքննիչ բողոքներ են ներկայացրել «Մաժեստիկ» ՍՊԸ-ի տնօրեն Ա.Բեգլարյանը և ամբաստանյալ Ա.Գավթյանը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը վերը նշված վերաքննիչ բողոքները 2009 թվականի հունվարի 30-ի որոշմամբ ընդունել է վարույթ:

Վերաքննիչ դատարանի 2009 թվականի մարտի 5-ի որոշմամբ ամբաստանյալ Ա.Գավթյանի բողոքը մերժվել է, իսկ «Մաժեստիկ» ՍՊԸ-ի տնօրեն Ա.Բեգլարյանի բողոքը բավարարվել, այն է՝ Արամ Գավթյանի վերաբերյալ Երևանի քրեական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 9-ի դատավճիռը քաղաքացիական հայցի մասով բեկանվել է ու քրեական գործն այդ մասով ուղարկվել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության: Գատավճռի մնացած մասը թողնվել է օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ա.Գավթյանը:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա («բողոքում բարձրացված հարցի վերա-

բերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»), 2009 թվականի մայիսի 7-ի որոշմամբ բողոքն ընդունել է վարույթ:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստա-  
կան հանգամանքները**

5. Գատավճռով հաստատված է համարվել, որ Ա.Գավթյանը, հանդիսանալով ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության հանքարտադրողների ոլորտային հարկային տեսչությունում հաշվառված «Մաժեստիկ» ՍՊ ընկերության տնօրեն, 2003 թվականի երկրորդ եռամսյակից մինչև 2006 թվականի երկրորդ եռամսյակն ընկած ժամանակահատվածում բնօգտագործման հաշվարկ-հաշվետվություններում պինդ օգտակար հանածոյի մարված պաշարի ծավալը 15.979 մ<sup>3</sup> պակաս է ցույց տվել, որի արդյունքում հաշվետվություններում ցույց չտրված 15.979 մ<sup>3</sup> չափով պաշարը 2003–2006 թվականների ընթացքում իրացրել է, սակայն այն որպես իրացման շրջանառություն թաքցրել է, ինչպես նաև 2006 թվականի երրորդ, 2007 թվականի առաջին եռամսյակների համար հարկային տեսչություն ավելացված արժեքի հարկի հաշվարկներ չի ներկայացրել, իսկ 2006 թվականի չորրորդ եռամսյակի ավելացված արժեքի հարկի հաշվարկում իրացման շրջանառությունը պակաս է ցույց տվել, որոնց արդյունքում հարկման հիմք հանդիսացող փաստաթղթերում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու և հարկային հաշվարկ-հաշվետվություններ չներկայացնելու միջոցով չարամտորեն խուսափել է պետական բյուջե վճարել խոշոր չափերի հասնող՝ 13.974.942 ՀՀ դրամ հարկի և սոցիալական վճարի գումար, այդ թվում շահութահարկ՝ 6.632.668 ՀՀ դրամ, ավելացված արժեքի հարկ՝ 7.342.274 ՀՀ դրամ, սոցիալական վճար՝ 328.400 ՀՀ դրամ, բնօգտագործման վճար՝ 839.482 ՀՀ դրամ, ընդամենը՝ 1.167.882 ՀՀ դրամ, տուգանքներ՝ 8.956.746 ՀՀ դրամ, տույժեր՝ 6.013.179 ՀՀ դրամ, ընդամենը՝ 14.969.925 (տասչորս միլիոն ինը հարյուր վաթսուս ինը հազար ինը հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ:

**Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**

6. Վճռաբեկ բողոք բերած անձը գտնում է, որ ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 5-ի որոշումն անօրինական է, անհիմն և չպատճառաբանված, կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներով, ինքն անմեղ է, իսկ վերաքննիչ դատարանը կողմնակալություն է դրսևորել՝ օգնելով ՍՊԸ հիմնադիրներին խուսափել հարկային պարտավորությունների կատարումից:

Բողոքաբերը նշել է, որ վերաքննիչ դատարանը խախտել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջը, քանի որ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով քրեական գործի վարույթը չի կարճել:

7. Հիմք ընդունելով իր կողմից վկայակոչված հանգամանքները՝ բողոքի հեղինակը խնդրում է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 5-ի դատական ակտը և կարճել իր դեմ հարուցված քրեական գործի վարույթը հան-

ցակազմի բացակայության կամ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

8. Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

*1. ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքի կատարման մեջ ամբաստանյալ Ա.Դավթյանի մեղավորության հաստատված լինելը*

9. Վերաքննիչ դատարանը, ստուգման ենթարկելով ամբաստանյալ Ա.Դավթյանի վերաքննիչ բողոքի փաստարկները, դրանք համադրելով քրեական գործով ձեռք բերված ապացույցների հետ, ստուգելով ապացույցների ձեռքբերման աղբյուրները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ղեկավարվելով օրենքով, ներքին համոզմամբ Ա.Դավթյանի մեղավորության վերաբերյալ հանգել է ճիշտ հետևության: Ա.Դավթյանի մեղքը ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքում հաստատված է, իսկ ամբաստանյալի պատճառաբանությունները հերքված են վկաներ Ա.Հովհաննիսյանի, Մ.Կարապետյանի, Ա.Բեգլարյանի, Ս.Բեգլարյանի, Վ.Աբրահամյանի ցուցմունքներով, դատահաշվապահական փորձաքննության թիվ 06-0405, 07-0978 եզրակացություններով, թիվ 07-0978 եզրակացության լրացուցիչ հաշվարկով, ամբուլատոր դատահոգեբուժական համալիր փորձաքննության թիվ 265/08 եզրակացությամբ:

Այսպիսով, ամբաստանյալ Ա.Դավթյանի կողմից կատարված հանցանքն ապացուցված և նրա մեղավորությունը հաստատված է գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ, ամբաստանյալի բողոքում առկա փաստարկները հիմք չեն կարող հանդիսանալ դատական ակտը բեկանելու և գործի վարույթը հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ կարճելու համար:

*II. Քրեական պատասխանատվությունից ազատելը վաղեմության ժամկետն անցնելու հիմքով*

10. ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.

1) երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

(...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը»:



ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատազրկումը, (...)»:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայի վերլուծությունից բխում է, որ այն նկարագրում է դիտավորյալ հանցագործություն, իսկ հոդվածի սանկցիայով նախատեսված ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի գերազանցում 2 տարին, ուստի տվյալ հոդվածով նախատեսված հանցավոր արարքը դասվում է ոչ մեծ ծանրության հանցագործությունների թվին, հետևաբար այն կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահն անցել է երկու տարի:

12. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ ավելացված արժեքի հարկ վճարող համարվող անձինք իրենց հաշվառման վայրի հարկային մարմին տեղեկություններ են ներկայացնում հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո, մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 25-ը ներառյալ:

13. Վերոգրյալի վերլուծությունից և գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով Ա.Դավթյանի հանցանքն ավարտված է համարվում 2007 թվականի ապրիլի 26-ին, իսկ 2009 թվականի ապրիլի 26-ի դրությամբ նրա վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ չկա, հետևաբար ամբաստանյալ Ա.Դավթյանին քրեական պատասխանատվության ենթարկելու ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված վաղեմության ժամկետն անցել է:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները:

15. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Դավթյանի վերաբերյալ քրեական գործը ենթակա է կարճման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

16. Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Դավթյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի քրեական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 9-ի դատավճիռն ու ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 5-ի որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիման վրա անհրաժեշտ է բեկանել և քրեական գործի վարույթը կարճել:

17. Ինչ վերաբերում է բողոքաբերի փաստարկին այն մասին, որ վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջը՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով քրեական գործի վարույթը չի կար-

ճել, ապա այն հիմնագուրկ է, քանի որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից դատական ակտի կայացման պահի դրությամբ՝ 2009 թվականի մարտի 5-ին, Ա.Դավթյանին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը լրացած չի եղել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Արամ Թանգիի Դավթյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի քրեական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 9-ի դատավճիռն ու ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 5-ի որոշումն ամբողջությամբ բեկանել, գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու պատճառաբանությամբ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն  
Դատավորներ՝ ստորագրություններ*

12.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության

ՀՅԶԲԴՅ/0109/01/08

վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
քրեական գործ թիվ ՀՅԶԲԴՅ/0109/01/08

նախագահող դատավոր՝ Ժ.Հովսեփյան  
դատավորներ՝ Ռ.Ազարյան, Հ.Տեր-Աղամյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝*

Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝*

Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԳԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ

*քարտուղարությամբ  
մասնակցությամբ պաշտպան  
մեղադրող  
տուժող*

Կ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ  
Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ  
Պ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ա. ԸԽՏՈՅԱՆԻ

2009 թվականի հունիսի 2-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում քննելով պաշտպան Վ.Հարությունյանի և մեղադրող Պ.Պետրոսյանի վճռաբեկ բողոքները ամբաստանյալ Ալեքսան Երեմի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2009 թվականի մարտի 6-ի որոշման դեմ,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1.Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2005 թվականի հունիսի 23-ին ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով հարուցվել է թիվ 43150505 քրեական գործը:

2008 թվականի մայիսի 27-ին ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 43151508 քրեական գործը:

2008 թվականի հուլիսի 3-ին ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 43152108 քրեական գործը:

2008 թվականի հուլիսի 3-ին Ալեքսան Սարգսյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի 2008 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ թիվ 43150505 և թիվ 43151508 քրեական գործերը միացվել են թիվ 43152108 քրեական գործին:

2008 թվականի հուլիսի 5-ին Ա.Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Նախաքննության մարմնի 2008 թվականի հուլիսի 6-ի որոշմամբ Ա.Սարգսյանն արգելանքից ազատվել է, և նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

2008 թվականի օգոստոսի 30-ին Ա.Սարգսյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2008 թվականի հոկտեմբերի 17-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Հյուսիսային քրեական դատարան (այսուհետ՝ Քրեական դատարան):

2. Քրեական դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2008 թվականի դեկտեմբերի 5-ի դատավճռով Ա.Սարգսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտել ազատազրկման 2 տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան 2 տարի ժամկետով:

«Ռասկո» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացրած քաղաքացիական հայցը բավարարվել է, և վճռվել է Ա.Սարգսյանից հօգուտ ընկերության բռնագանձել 1.629.206 ՀՀ դրամ:

3. Տուժողի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2009 թվականի մարտի 6-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է՝ Քրեական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 5-ի դատավճիռը Ա.Սարգսյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով պայմանականորեն չկիրառելու ու 2 տարի ժամկետով փորձաշրջան սահմանելու մասով բեկանվել է և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառումը վերացվել:

ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կարգով՝ Ա.Սարգսյանի անազատության մեջ գտնված 3 օր ժամկետը հաշվակցվել է նրա նկատմամբ նշա-

նակված պատժին, և Ա.Սարգսյանին թողնվել է կրելու ազատագրկում 1 տարի 11 ամիս 27 օր ժամկետով:

Գատավճիռը մնացած մասով թողնվել է օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2009 թվականի մարտի 6-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել ամբաստանյալ Ա.Սարգսյանի պաշտպան Վ.Հարությունյանը և մեղադրող Պ.Պետրոսյանը:

Վճռաբեկ դատարանը 2009 թվականի ապրիլի 30-ի որոշմամբ պաշտպանի և մեղադրողի բողոքները վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով («վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ»):

2009 թվականի մայիսի 6-ին Վճռաբեկ դատարան մուտք է եղել Գեղարքունիքի մարզի դատախազ Վ.Սարգսյանի գրությամբ, որով վերջինս խնդրել է Վերաքննիչ դատարանի 2009 թվականի մարտի 6-ի որոշման դեմ մեղադրող Պ.Պետրոսյանի վճռաբեկ բողոքը չքննարկել և այն վերադարձնել Գեղարքունիքի մարզի դատախազության:

2009 թվականի հունիսի 1-ին տուժող Արտյոմ Ըխտոյանից ստացվել է վճռաբեկ բողոքների պատասխան, որով նա խնդրել է Վերաքննիչ դատարանի 2009 թվականի մարտի 6-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Սարգսյանի պաշտպան Վ.Հարությունյանի և մեղադրող Պ.Պետրոսյանի վճռաբեկ բողոքները մերժել:

## **2. Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները**

5. Քրեական վարույթն իրականացնող մարմինը հաստատված է համարել հետևյալը.

Գեղարքունիքի մարզի Գեղիովիտ գյուղի բնակիչ Ա.Սարգսյանը, 2003 թվականից գտնվելով Ռ-Գ Իրկուտսկ քաղաքում, զբաղվել է շինարարական աշխատանքներով: Իր քրոջ որդի Արայիկ Ըխտոյանի խնդրանքով Ա.Սարգսյանը 2004 թվականի գարնանը նրան իր հետ տարել է Ռ-Գ Իրկուտսկ քաղաք՝ գումար վաստակելու: Որոշ ժամանակ անց Արայիկ Ըխտոյանը տիրացել է Ա.Սարգսյանի կողմից հիմնած գործին, որի հետևանքով վերջինս հայտնվել է նյութական ծանր վիճակում:

2004 թվականի նոյեմբեր ամսին վերադառնալով գյուղ՝ Ա.Սարգսյանը վերջնականապես համոզվել է, որ Արայիկ Ըխտոյանի քայլերն իրեն զրկել են աշխատանքից և դրա դիմաց ստանալիք գումարներից, որի պատճառով նրանց հարաբերությունները լարվել են: Նման պայմաններում Ա.Սարգսյանը որոշել է Արայիկ Ըխտոյանին և նրա ընտանիքի անդամներին նյութական վնաս պատճառել:

Ա.Սարգսյանը 2005 թվականի մայիսի 26-ի լույս 27-ի գիշերը՝ ժամը 1-ի սահմաններում, բենզին շաղ տալու միջոցով դիտավորությամբ հրկիզել է Գեղիովիտ գյուղի բնակիչ Արտյոմ Ըխտոյանին պատկանող «Կամազ-53212» մակնիշի 16 LS 232 պետհամարանիշի և «Կռազ-250» մակնիշի 16 LO 857 պետհամարանիշի ավտոմեքենաները՝ պատճառելով 1.320.000 ՀՀ դրամի վնաս: Ա.Սարգսյանը 2008 թվականի մայիսի 26-ի լույս 27-ի գիշերը՝ ժամը 2-ի սահմաններում, բենզինի և ավտոմեքենայի

շարժիչի յուղի խառնուրդը դիտավորությամբ լցրել է «Ահարոն և եղբայրներ» ՍՊԸ-ին պատկանող երկու «Վազ 2107» մակնիշի ավտոմեքենաների սրահների մեջ և հրկիզել է դրանք՝ պատճառելով 308.000 ՀՀ դրամի վնաս: Բացի այդ, Ա.Սարգսյանը, իմանալով, որ «Ահարոն և եղբայրներ» ՍՊԸ-ին պատկանող «Վազ 2107» մակնիշի ավտոմեքենան, որը վարում է համազյուղացի Սմբատ Նալբանդյանը, կայանում է համազյուղացի Շամխալ Հակոբյանին պատկանող ավտոտնակում, 2008 թվականի հուլիսի 2-ի լույս 3-ի գիշերը տեխնիկական միջոցի գործադրմամբ բացել է ավտոտնակի դուռը, բենզինի և ավտոմեքենայի շարժիչի յուղի խառնուրդը դիտավորությամբ լցրել է նշված ավտոմեքենայի սրահ և հրկիզել այն, որի հետևանքով վառվել է Ս.Նալբանդյանին պատկանող «Վազ 21099» մակնիշի ավտոմեքենան, վնասվել է ավտոտնակը ու բնակարանը՝ պատճառելով 5.541.000 ՀՀ դրամի վնաս:

6. Ա.Սարգսյանը որպես վկա, այնուհետև որպես կասկածյալ հարցաքննվել է 2008 թվականի հուլիսի 3-ին (հատոր 1-ին, գ/թ. 27 և 49), որոնց ժամանակ մանրամասն տվյալներ է հայտնել 2008 թվականի հուլիսի 2-ի լույս 3-ի գիշերն իր կողմից կատարված հանցագործության մասին, ինչպես նաև բացահայտել է 2008 թվականի մայիսի 26-ի լույս 27-ի գիշերը կատարած հանցագործությունը: Բացահայտել է նաև 2005 թվականի մայիսի 26-ի լույս 27-ի գիշերը կատարած բռնատար ավտոմեքենաների հրկիզման դեպքը, որի կապակցությամբ հարուցված քրեական գործի վարույթը կասեցվել էր՝ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձի անհայտ լինելու հիմքով (հատոր 1-ին, գ/թ. 177):

Նույն օրն Ա.Սարգսյանը մատնացույց է արել Շ.Հակոբյանի ավտոտնակի կողպեքի, հանցագործության գործիք հանդիսացող լինզի, լուցկու, ինչպես նաև դեպքի օրն իր հագին եղած հագուստների գտնվելու վայրերը, որոնք նախաքննության մարմնի կողմից առգրավվել են (հատոր 1-ին, գ/թ. 31-37), ինչպես նաև մատնանշել է իր կողմից կատարված հանցավոր արարքների դեպքերի վայրերը (հատոր 1-ին, գ/թ. 43):

7. Քրեական գործով տուժողներ Ս.Նալբանդյանին և Շ.Հակոբյանին հանցագործությամբ պատճառված նյութական վնասը նախաքննության ընթացքում ամբողջությամբ վերականգնվել է Ա.Սարգսյանի կողմից, որի կապակցությամբ նրանք իրենց ցուցմունքներում հայտնել են, որ Ա.Սարգսյանի նկատմամբ որևէ պահանջ չունեն (հատոր 1-ին, գ/թ. 343 և 410):

8. Քրեական գործով տուժող Ա.Ըխտոյանին, համաձայն քրեական գործում առկա ապրանքագիտական փորձագետի եզրակացությունների (հատոր 1-ին, գ/թ. 110, 272 և 372), հանցագործության արդյունքում պատճառվել է ընդամենը 4.103.000 ՀՀ դրամի վնաս:

9. 2008 թվականի սեպտեմբերի 23-ին «Ռ-ասկո» ՍՊԸ-ի կողմից որպես ապահովագրական փոխհատուցում տուժող Ա.Ըխտոյանի հաշվեհամարին փոխանցվել է 1.629.206 ՀՀ դրամ (հատոր 2-րդ, գ/թ. 51):

2008 թվականի նոյեմբերի 19-ին Ա.Սարգսյանը տուժող Ա.Ըխտոյանին որպես հանցագործությամբ պատճառված վնասի հատուցում վճարել է 10.000 ԱՄՆ դոլար և պարտավորվել 5.000 ԱՄՆ դոլար վճարել մինչև 2008 թվականի նոյեմբերի 25-ը (քրեական գործ հատոր 2-րդ, 143-րդ էջ):

10. 2008 թվականի նոյեմբերի 24–ին տուժող Ա.Ըխտոյանը դիմում է ներկայացրել Քրեական դատարան, որով հայտնել է, որ ամբաստանյալ Ա.Սարգսյանից պարտք ու պահանջ չունի, քանի որ նա վերականգնել է իրեն պատճառված վնասը և խնդրել է 2008 թվականի նոյեմբերի 25–ին նշանակված դատական նիստը անցկացնել առանց իր ներկայության (հատոր 2–րդ, գ/թ. 104):

11. 2009 թվականի փետրվարի 26–ին սույն գործով տուժող Ա.Ըխտոյանին մեկ այլ քրեական գործով մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 137–րդ հոդվածի 1–ին մասով և 258–րդ հոդվածի 3–րդ մասի 2–րդ կետով այն բանի համար, որ նա 2008 թվականի նոյեմբերի 11–ին իր ընտանիքի անդամներ Լիպարիտ, Ահարոն, Արայիկ Ըխտոյանների և Սեդա Սարգսյանի հետ գնացել է մոբեդբայր Ա.Սարգսյանի բնակարան, որտեղ պահանջել է մինչև հաջորդ օրվա ժամը 10–ն իրեն տալ պահանջված պարտքի գումարը, հակառակ դեպքում սպառնալով սպանել նրան: Ա.Սարգսյանն այդ սպառնալիքն ընդունել է որպես իրական վտանգ, որի մասին հաջորդ օրն առավոտյան հաղորդում է ներկայացրել ՀՀ ոստիկանության Մարտունու բաժին:

2008 թվականի նոյեմբերի 12–ին՝ ժամը 12–ի սահմաններում, Ա.Ըխտոյանը գնացել է Ա.Սարգսյանի տուն, որտեղ տեսնելով ոստիկանության աշխատակից Կ.Ասպատուրյանին և տեղեկանալով, որ Ա.Սարգսյանը դիմել է ոստիկանություն, վերցրել է սեղանին դրված բյուրեղապակյա վազը և փորձել հարվածել Ա.Սարգսյանին, ինչը կանխվել է Կ.Ասպատուրյանի կողմից: Նույն օրը՝ ժամը 12:15–ի սահմաններում, Ա.Ըխտոյանը, հոր՝ Լիպարիտ Ըխտոյանի և եղբոր՝ Արայիկ Ըխտոյանի հետ, Գեղիկավիտ գյուղի գյուղամիջյան ճանապարհին կանգնեցրել են Ա.Սարգսյանի ավտոմեքենան, որի մեջ նստած է եղել ոստիկանության աշխատակից Կ.Ասպատուրյանը, դիտավորյալ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելով, հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելով, որը զուգորդվել է իշխանության ներկայացուցչին դիմադրություն ցույց տալով, սկսել են հայիոյանքներ տալ, քաշքշել և հարվածել Ա.Սարգսյանին:

12. Վերաքննիչ դատարան որոշման մեջ առկա է հետևյալ մոտեցումը. «(...) ամբաստանյալի վարքագիծը վկայում է այն մասին, որ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո չի հատուցելու պատճառված նյութական վնասը, ուստի նա կանգնած չէ ուղղման ճանապարհին:

Ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք չի կարող դիտվել նաև այն հանգամանքը, որ նա համարվում է ընտանիքի միակ կերակրողը՝ երբ նա չի աշխատել, իսկ ինչպես ամբաստանյալը նշեց դատարանում իր երեք երեխաները չափահաս են»:

### **3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

13. Ըստ պաշտպանի՝ Վերաքննիչ դատարանի կողմից օբյեկտիվ չեն գնահատվել Ա.Սարգսյանի օգտին առկա փաստական հանգամանքները, ինչի արդյունքում խախտվել են նյութական իրավունքի նորմերի պահանջները՝ դատարանն ամբաստանելով:

տանյալ Ա.Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառելիության հարցում հանգել է ոչ ճիշտ հետևության:

14. Բողոքի հեղինակը նշել է, որ Ա.Սարգսյանը տուժող Ա.Ըխտոյանին որպես հանցագործությամբ պատճառված վնասի հատուցում ստացականով վճարել է 10.000 ԱՄՆ դոլար, իսկ այնուհետև ևս 5.000 ԱՄՆ դոլար, որից հետո միայն տուժողը դիմում է ներկայացրել դատարան՝ հայտնելով, որ որևէ պարտք ու պահանջ չունի: Բացի այդ, «Ռասկո» ԱՄՊԸ-ի կողմից 2008 թվականի սեպտեմբերի 23-ին Ա.Ըխտոյանի հաշվին որպես ապահովագրական փոխհատուցում փոխանցվել է 1.629.206 ՀՀ դրամ, որի մասին իմանալով Ա.Սարգսյանն ընդունել է ընկերության ներկայացրած քաղաքացիական հայցը և նշված գումարը դատարանի վճռով բռնագանձվել է նրանից:

Նշված փաստերը վկայում են այն մասին, որ տուժող Ա.Ըխտոյանին պատճառված նյութական վնասը հատուցվել է փաստացի պատճառված վնասից ավելի չափով, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ամբաստանվալը չի հատուցելու պատճառված նյութական վնասը, ուստի նա կանգնած չէ ուղղման ճանապարհին, չի բխում գործի փաստական հանգամանքներից, հակասում է օբյեկտիվ իրականությանը և արդարացի չէ:

Բողոքաբերը նշել է, որ տուժող Ա.Ըխտոյանը հետապնդում է վրեժխնդրության և լրացուցիչ շահ ստանալու նպատակ:

15. Բողոքաբերը նշել է նաև, որ Ա.Սարգսյանի՝ ուղղման ճանապարհին կանգնած լինելու մասին է վկայում նաև այն փաստը, որ առաջին իսկ հարցաքննության ժամանակ նա, անկեղծորեն զոջալով, խոստովանել է կատարած արարքները, այդ թվում՝ 3 տարի առաջ իր կողմից բեռնատար ավտոմեքենաների հրկիզման դեպքը, որի վերաբերյալ նախաքննության մարմնի կողմից որևէ ապացույց ձեռք չի բերվել և միայն ամբաստանյալի խոստովանական ցուցմունքների հիման վրա է նրան մեղադրանք առաջադրվել:

16. Բողոքի հեղինակը նշել է նաև, որ Զրեական դատարանը, գյուղապետարանի և համայնքի ավագանու միջնորդության հիման վրա, որպես Ա.Սարգսյանի պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք է հաշվի առել նրա՝ ընտանիքի միակ կերակրողը հանդիսանալը, իսկ Վերաքննիչ դատարանն անհիմն կերպով հանել է այն ամբաստանյալի պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների շարքից՝ առանց որևէ հիմնավոր ապացույցի կասկածի տակ դնելով նշված միջնորդության իսկությունը:

17. Ըստ մեղադրողի՝ Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է, չի բխում գործի փաստական հանգամանքներից, դրանում սխալ են մեկնաբանվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 62-րդ, 70-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածները, որի արդյունքում խախտվել են նյութական իրավունքի նորմերի պահանջները:

ՀՀ քրեական օրենսգրքը, պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտը սահմանելով, չի նախատեսել որևէ սահմանափակում հանցագործության տեսակի, արարքի վտանգավորության աստիճանի և բնույթի, ինչպես նաև անձանց շրջա-



նակի վերաբերյալ, ինչը ենթադրում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքը դատարանի համոզմունքն է այն մասին, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու:

18. Բողոքաբերը նշել է, որ Քրեական դատարանն Ա.Սարգսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս իրավացիորեն հաշվի է առել վերջինիս պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ ամբաստանյալի կողմից հանցագործության բացահայտմանն ակտիվորեն աջակցելը, հասցված վնասը կամովին հատուցելը, իսկ Վերաքննիչ դատարանն անհիմն կերպով եզրահանգել է, որ դրանք չեն բխում գործի փաստական հանգամանքներից:

19. Վերոգրյալի հիման վրա բողոքների հեղինակները խնդրել են բեկանել Վերաքննիչ դատարանի 2009 թվականի մարտի 6-ի որոշումը և օրինական ուժ տալ Քրեական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 5-ի դատավճռին:

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

20. Նախքան վճռաբեկ բողոքներում բարձրացված հարցերին անդրադառնալը, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արտահայտել իր իրավական դիրքորոշումը սույն որոշման 4-րդ կետում նշված Գեղարքունիքի մարզի դատախազ Վ.Մարգարյանի գրության վերաբերյալ, որով վերջինս խնդրել է Վերաքննիչ դատարանի 2009 թվականի մարտի 6-ի որոշման դեմ մեղադրող Պ.Պետրոսյանի վճռաբեկ բողոքը չքննարկել և այն վերադարձնել Գեղարքունիքի մարզի դատախազության:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 413-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Բողոք բերած անձն իրավունք ունի հետ վերցնել այն մինչև վճռաբեկ դատարանում դատական նիստի սկսվելը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծում է կոլեգիալ՝ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի և առնվազն երեք դատավորի կազմով: Վճռաբեկ բողոքը համարվում է վարույթ ընդունված, եթե դրան կողմ է քվեարկել նիստին ներկա դատավորների մեծամասնությունը (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Վճռաբեկ դատարանին ներկայացրած վճռաբեկ բողոքների՝ սույն օրենսգրքի 407-րդ հոդվածի և սույն հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանության հարցը պարզելու և դատարանի վարույթ ընդունելու կամ վերադարձնելու հարցը լուծվում է կոլեգիալ՝ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի և առնվազն երեք դատավորի կազմով: Պալատի այդ որոշումները համարվում են ընդունված, եթե դրանց կողմ է քվեարկել նիստին ներկա դատավորների մեծամասնությունը»:

21. Վերոնշյալ հոդվածների բովանդակությունից երևում է, որ Վճռաբեկ դատարանի կողմից բողոքը վերադարձնելու կամ այն վարույթ ընդունելու մասին որոշում է կայացվում Վճռաբեկ դատարանի դատական նիստում: Ընդ որում, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ բողոքի շրջանակներում վերջնական որոշում կայացնելը դառնում է արդա-

րադատության պահանջ: Հետևաբար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 413-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով բողոք բերած անձն իրավունք ունի այն հետ վերցնել մինչև Վճռաբեկ դատարանի կողմից նույն օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումներից մեկի կայացումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ քրեադատավարական օրենքով Վճռաբեկ դատարանի կողմից վարույթ ընդունված բողոքն այն բերած անձի կողմից հետ վերցնելու դատավարական կարգ նախատեսված չէ:

Այս պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոք բերած անձին Վճռաբեկ դատարանի որոշմամբ արդեն իսկ վարույթ ընդունած բողոքը հետ վերցնելու իրավական հնարավորություն ընձեռված չէ:

Ինչպես երևում է սույն որոշման 4-րդ կետից, մեղադրող Պ.Պետրոսյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 2009 թվականի ապրիլի 30-ի որոշմամբ ընդունվել է վարույթ, իսկ բողոքը չքննարկելու և այն վերադարձնելու մասին Գեղարքունիքի մարզի դատախազի գրությունը ներկայացվել է 2009 թվականի մայիսի 6-ին: Հետևաբար այն պետք է թողնվի անհետևանք, իսկ մեղադրողի բողոքի հիման վրա գործի քննության արդյունքներով՝ կայացվի որոշում:

22. Պաշտպան Վ.Հարությունյանի և մեղադրող Պ.Պետրոսյանի բողոքների հիման վրա Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ արդյոք Ա.Սարգսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելն անթույլատրելի ճանաչելով՝ Վերաքննիչ դատարանը պահպանե՞լ է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի պահանջները:

23. Նախորդ կետում նշված հարցին պատասխանելու համար Վճռաբեկ դատարանը նախ քննության է առնում հետևյալ հարցը. Վերաքննիչ դատարանի կողմից սույն որոշման 12-րդ կետում նշված հանգամանքները օբյեկտիվորեն գոյություն ունե՞ն և կարո՞ղ են հանդիսանալ ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ:

Այս հարցի հետ կապված՝ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել Պ.Բայրամյանի վերաբերյալ գործով ՎԲ-84/07 որոշման մեջ, որի համաձայն՝ «Գատարանի լայն հայեցողության շրջանակներում է (...) անձի պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների կիրառման հարցը, քանի որ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն նույն հոդվածի առաջին մասում: Այնուհանդերձ, դատարանի այս լիազորությունը բացարձակ չէ, և որպես մեղմացնող հաշվի առնվող հանգամանքները պետք է բավարարեն որոշակի չափանիշներին: Դրանք են.

ա) հանգամանքը պետք է իրական լինի, այսինքն՝ գործով ձեռք բերված ապացույցները պետք է հաստատեն դրա առկայությունը,

բ) այն պետք է ողջամտորեն նվազեցրած լինի անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը,

գ) այն հաստատված ճանաչելիս դատարանը պետք է պահպանի ապացուցման ընդհանուր քրեադատավարական կանոնները. հանգամանքի առկայությունը հաստատող ապացույցները պետք է վերաբերելի և թույլատրելի լինեն, դրանք պետք է հե-

տագոտված լինեն դատաքննության ընթացքում, ինչպես նաև պետք է պահպանվեն ապացույցների ստուգման և գնահատման օրենսդրական պահանջները:»

24. Սույն գործով հիմնվելով տուժող Ա.Ըխտոյանի հայտարարության վրա այն մասին, որ ամբաստանյալն իրեն մասնակիորեն հատուցելով հանցագործության արդյունքում պատճառված վնասը, հորդորել է դիմում ներկայացնել դատարան՝ նշելով, որ պարտք ու պահանջ չունի, իսկ դատավճռի կայացումից հետո հրաժարվել է վճարել պատճառված նյութական վնասի մյուս մասը՝ Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ եզրահանգել է, որ «ամբաստանյալի վարքագիծը վկայում է այն մասին, որ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո չի հատուցելու պատճառված նյութական վնասը, ուստի նա կանգնած չէ ուղղման ճանապարհին»:

25. Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով սույն որոշման 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ կետերում նշված փաստական հանգամանքները, հաստատված է համարում պաշտպանի բողոքում առկա պնդումն այն մասին, որ տուժող Ա. Ըխտոյանին պատճառված նյութական վնասը հատուցվել է փաստացի պատճառված վնասից ավելի չափով (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը): Հետևաբար, Վերաքննիչ դատարանի կողմից արված հետևությունն այն մասին, որ ամբաստանյալ Ա.Սարգսյանը մասնակիորեն է հատուցել տուժող Ա.Ըխտոյանին պատճառված վնասը և «ամբաստանյալի վարքագիծը վկայում է այն մասին, որ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո չի հատուցելու պատճառված նյութական վնասը, ուստի նա կանգնած չէ ուղղման ճանապարհին», չի բխում գործի փաստական հանգամանքներից:

26. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Քրեական դատարանը, պահպանելով ապացուցման ընդհանուր քրեադատավարական կանոնները, որպես ամբաստանյալ Ա.Սարգսյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք իրավացիորեն դիտել է նրա կողմից սույն գործով տուժողներին հանցագործությամբ պատճառված գույքային վնասը կամովին ամբողջությամբ հատուցած լինելու փաստը: Նշված հանգամանքը սույն որոշման 23-րդ կետի «ա») ենթակետի իմաստով իրական է, իսկ Վերաքննիչ դատարանի հետևություններն անհիմն են և չեն բխում սույն որոշման 23-րդ կետի «գ») ենթակետում ամրագրված չափանիշից:

27. Սույն գործով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում պատասխանել նաև այն հարցին, թե կարո՞ղ է, արդյոք, ընտանիքի միակ կերակրող հանդիսանալը կապվել ոչ թե անչափահաս, այլ չափահաս երեխաներ ունենալու և պաշտոնապես որևէ տեղ չաշխատելու հանգամանքների հետ:

28. ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով Սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն սույն հոդվածի առաջին մասում»:

Սույն գործով Քրեական դատարանը, հիմնվելով Ա.Սարգսյանի բնակության վայրի համայնքապետի և ավագանու միջնորդության վրա, ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք է դիտել այն, որ նա հանդիսանում է ընտանիքի միակ կերակրողը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալի նկատմամբ նշանակվող պատիժը անխուսափելիորեն ազդում է նրա ընտանիքի անդամների վրա, և կախված ընտանիքի կյանքում անձի ունեցած դերից, այն կարող է նաև ծանր կացության մեջ դնել վերջիններիս:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ընտանեկան դրությունը՝ որպես այլ մեղմացնող հանգամանք, անհրաժեշտ է հաշվի առնել ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս, և այդ կապակցությամբ դատարանը յուրաքանչյուր անգամ պետք է անդրադառնա հետևյալ հարցերին՝

1. արդյոք ամբաստանյալը հանդիսանում է իր ընտանիքի միակ կերակրողը
2. արդյոք նրա խնամքին գտնվում են անչափահաս երեխան կամ զառամյալ ծնողները:

3. արդյոք առկա են ընտանիքում նրա բացասական վարքագիծը (հարբեցողություն, թմրամոլություն, դաժան վերաբերմունք ընտանիքի անդամների նկատմամբ և այլն) հիմնավորող փաստական տվյալներ:

Ինչպես երևում է վերոգրյալից, ընտանիքի միակ կերակրող հանդիսանալը և խնամքին անչափահաս երեխայի առկայությունը՝ որպես ընտանիքում անձի ունեցած դերը բնութագրող և հետևաբար նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ պետք է առանձին գնահատվեն, և մեկի գոյությունը չպետք է կապվի մյուսի հետ, ինչպես դա արվել է Վերաքննիչ դատարանի որոշման մեջ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ամբաստանյալի ընտանիքում չափահաս երեխաների առկայությունը չի կարող միանշանակ բացառել ամբաստանյալի՝ իր ընտանիքի միակ կերակրող հանդիսանալու հանգամանքը:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ այն հանգամանքը, որ Ա.Սարգսյանը որևէ տեղ պաշտոնապես չի աշխատում, չի կարող հիմք հանդիսանալ եզրահանգելու, որ նա իր ընտանիքի միակ կերակրողը չի հանդիսանում:

29. Ուստի, Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է արտահայտում Վերաքննիչ դատարանի որոշման մեջ առկա այն մոտեցմանը, որի համաձայն՝ որպես մեղմացնող հանգամանք չի կարող դիտվել այն, որ Ա.Սարգսյանը հանդիսանում է ընտանիքի միակ կերակրողը, քանի որ նա պաշտոնապես որևէ տեղ չի աշխատում, իսկ նրա երեք երեխաները չափահաս են: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Քրեական դատարանի կողմից որբայես մեղմացնող դիտված հանգամանքը համապատասխանում է սույն որոշման 23-րդ կետի «ա» ենթակետում և 28-րդ կետի 1-ին ենթակետում ամրագրված չափանիշներին, հետևաբար Քրեական դատարանն այն իրավացիորեն համարել է ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք:

*Ամբաստանյալ Ա.Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման իրավաչափությունը*

30. Այս առումով Վճռաբեկ դատարանը քննության է առնում հետևյալ հարցը. սույն գործով ամբաստանյալի անձը բնութագրող և նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող օբյեկտիվորեն գոյություն ունեցող հանգամանքների համակցությունը կարո՞ղ է, արդյոք, հիմք հանդիսանալ նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

31. Այս հարցի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել Թ.Տեր-Գրիգորյանի գործով ՎԲ–192/07 որոշման մեջ, որի համաձայն. «Պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս դատարանը հաշվի է առնում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ և 63-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Հանցակազմի սահմաններից դուրս գտնվելով, դրանք բնութագրում են ինչպես կատարված հանցագործությունը, այնպես էլ հանցավորի անձնավորությունը, հնարավորություն են տալիս պատկերացում կազմել հանցավորի անձնավորության և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին՝ համապատասխանաբար բարձրացնելով կամ իջեցնելով այն: Դրանց գնահատմամբ է հնարավոր յուրաքանչյուր կոնկրետ գործով անհատական մոտեցում ցուցաբերել՝ ինչպես պատժի տեսակը և չափը որոշելիս, այնպես էլ այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս:

(...) նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության վերաբերյալ դատարանի կողմից կայացված որոշումը պետք է հիմնված լինի կատարած հանցագործության, դրա առանձնահատկությունների, գործի կոնկրետ հանգամանքների, հանցավորի անձի, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների բազմակողմանի գնահատման վրա՝ նպատակ ունենալով ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակների իրագործման հնարավորությունը:

(...) օրենսդիրը պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմք է համարում դատարանի համոզվածությունը, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց որոշակի պատժատեսակները ռեալ կրելու:»

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակների իրագործման տեսանկյունից կարևոր է հանցավորի դրսևորած վարքագիծը կատարած հանցագործությունից հետո:

ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածով նախատեսված հանցավոր արարքն ընդգրկված է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների շարքում, որի դեպքում հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի նվազեցման համար էական նշանակություն ունի պատճառված նյութական վնասն ամբողջությամբ վերականգնված լինելու հանգամանքը:

Գործի տվյալներով հիմնավորված է, որ Ա.Սարգսյանն ամբողջությամբ կամովին հատուցել է տուժողներին հանցագործությամբ պատճառված գույքային վնասը (տե՛ս սույն որոշման 7–րդ և 25–րդ կետերը), ինչն էականորեն նվազեցնում է հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանը:

Ամբաստանյալ Ա.Սարգսյանն ակտիվորեն աջակցել է հանցագործությունները բացահայտելուն, որն արտահայտվել է նախաքննության մարմնին այնպիսի տեղեկություններ հաղորդելով, որոնք հետաքրքրություն են ներկայացրել և մինչ այդ անհայտ են եղել: Առաջին իսկ հարցաքննության ժամանակ Ա.Սարգսյանը մանրամասն ցուցմուքներ է տվել 2008 թվականի հուլիսի 2–ի լույս 3–ի գիշերն իր կողմից կատարված հանցավոր արարքի մասին, ինչպես նաև բացահայտել է 2008 թվականի մայիսի 26–ի լույս 27–ի գիշերվա և 2005 թվականի մայիսի 26–ի լույս 27–ի գիշերվա հրկիզման դեպքերը, որոնց վերաբերյալ մինչդատական վարույթն իրականացնող մարմինը որևէ տեղեկատվություն չի ունեցել, իսկ 2005 թվականին տեղի ունեցած բեռնատար ավտոմեքենաների հրկիզման դեպքի կապակցությամբ հարուցված քրեական գործի վարույթը կասեցված է եղել՝ գործով որպես մեղադրյալ ներգրավելու ենթակա անձի անհայտ լինելու հիմքով: Ա.Սարգսյանը մատնանշել է հանցագործության գործիքների գտնվելու տեղերը, ներկայացրել է իրեղեն ապացույցներ, օգնել քննչական փորձարարությունների կազմակերպմանն ու անցկացմանը (տե՛ս սույն որոշման 6–րդ կետը): Արդյունքում բացահայտվել են ևս երկու հանցագործություններ:

32. Ոստի, Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքները, հանցավորի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, հանգում է հետևության, որ ամբաստանյալ Ա.Սարգսյանի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով տվյալ գործով հնարավոր է հասնել չ՛հ քրեական օրենսգրքի 48–րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը: Այն բխում է նաև չ՛հ քրեական օրենսգրքի 10–րդ և 61–րդ հոդվածներով սահմանված՝ արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից:

*Սույն գործով վերաքննիչ դատարանի թույլ տված նյութական իրավունքի խախտումների բնույթը և իրավական հետևանքները*

33. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցավորի՝ գործում առկա և սույն որոշման 12–րդ կետում նշված պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները հիմնագուրկ համարելով և արդյունքում՝ ամբաստանյալ Ա.Սարգսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելն անթույլատրելի ճանաչելով՝ Վերաքննիչ դատարանն արդարադատություն իրականացնելիս թույլ է տվել նյութական իրավունքի խախտումներ, որոնց արդյունքում կայացված որոշումը չի համապատասխանում արդարության պահանջներին:

34. Ոստի չ՛հ քրեական դատավարության օրենսգրքի 397–րդ և 406–րդ հոդվածների հիման վրա՝ սույն գործով Վերաքննիչ դատարանի թույլ տված քրեական օրեն-

քի խախտումները ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու հիմք են: Միևնույն ժամանակ արդարադատության արդյունավետության շահից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է օրինական ուժ տալ սույն գործով Քրեական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 5-ի դատավճռին:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Ամբաստանյալ Ալեքսան Երեմի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 6-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Հյուսիսային քրեական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 5-ի դատավճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

13.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ ԵԿԴ /0146/01/08

ԵԿԴ /0146/01/08

նախագահող դատավոր՝ Մ.Պետրոսյան  
դատավորներ՝ Ս.Համբարձումյան, Ս.Չիչոյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝*

Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝*

Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ

*քարտուղարությամբ*

Կ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

*մասնակցությամբ՝*

*ամբաստանյալ*

Կ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ

*պաշտպան*

Ա. ԱԹԱՐԲԵԿՅԱՆԻ

*դատախազ*

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

2 հունիսի 2009 թվական

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Կարեն Պարույրի Հայրապետյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2009 թվականի մարտի 11-ի որոշման դեմ ՀՀ գինվորական դատախազ, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Խաչատուրյանի բերած վճռաբեկ բողոքը,



## **Պ Ա Ր Ջ Ե Ց**

### **Գործի դատավարական նախապատմությունը**

1. Քրեական գործով սուտ ցուցմունք տալու փաստի առթիվ 2008 թվականի սեպտեմբերի 13-ին ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 62212808 քրեական գործը:

2. 2008 թվականի սեպտեմբերի 18-ին Կարեն Հայրապետյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով:

3. 2008 թվականի սեպտեմբերի 19-ին քրեական գործն ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հունվարի 19-ի դատավճռով Կարեն Հայրապետյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման 1 /մեկ/ տարի ժամկետով:

4. Ամբաստանյալ Կարեն Հայրապետյանի պաշտպան Ա.Աթարբեկյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2009 թվականի մարտի 11-ի որոշմամբ մասնակիորեն բավարարել է պաշտպանի վերաքննիչ բողոքը, այն է՝ փոփոխել է Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հունվարի 19-ի դատավճիռը և Կարեն Պարույրի Հայրապետյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով՝ դատապարտել է ազատազրկման՝ 3 /երեք/ ամիս ժամկետով:

5. Վերաքննիչ դատարանի 2009 թվականի մարտի 11-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ զինվորական դատախազը:

2009 թվականի մայիսի 8-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով (Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար):

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

6. Կարեն Հայրապետյանը դատապարտվել է այն բանի համար, որ նա, հանդիսանալով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվող Արման Սպարտակի Շահինյանի վերաբերյալ քրեական գործով վկա, դատաքննության ժամանակ՝ 2008 թվականի հուլիսի 10-ին և օգոստոսի 29-ին, հերքել է նախաքննության ընթացքում՝ 2008 թվականի մայիսի 20-ին և հունիսի 10-ին, տված իր ճշմարտացի ցուցմունքները և սուտ ցուցմունք է տվել այն մասին, որ իբր ինքը երբևիցե չի հրավիրվել հատուկ քննչական ծառայություն հարցաքննության, Ա.Շահինյանին նախկինում չի ճանաչել: Կ.Հայրապետյանը

միաժամանակ նշել է, որ նախաքննական ցուցմունքներն իր կողմից չեն գրվել և ինքը նախաքննության ժամանակ ցուցմունքներ չի տվել:

7. Կ.Հայրապետյանը նախկինում դատապարտված չի եղել, 2008 թվականի հունիսի 10-ին գորակոչվել է իսկական ժամկետային զինվորական ծառայության, ըստ դպրոցի տնօրինության, բնակության վայրի, ինչպես նաև գորամասի հրամանատարության կողմից տրված բնութագրերի՝ բնութագրվում է դրական, հայրը 2-րդ խմբի հաշմանդամ է:

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ սույն գործով խախտվել են կատարված արարքի և նշանակված պատժի համաչափության վերաբերյալ նյութական իրավունքի պահանջները, թույլ տրված դատական սխալը ազդել է գործի արդյունքի վրա, խաթարել արդարադատության բուն էությունը, դատավճռի՝ որպես արդարադատության ակտի իմաստը, խախտել սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Վերաքննիչ դատարանը չի պահպանել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով սահմանված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի պահանջները: Վերաքննիչ դատարանի կողմից անտեսվել են նաև ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները և հաշվի չի առնվել հասարակական բարձր վտանգավորություն ունեցող հանցագործության վերաբերյալ գործով Կ.Հայրապետյանի կողմից մեղավոր անձին հովանավորելուն և ակնհայտ սուտ ցուցմունք տալու միջոցով օբյեկտիվ իրականությունը խեղաթյուրելուն ու քննչական մարմիններին վարկաբեկելուն միտված վարքագիծը:

9. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2009 թվականի մարտի 11-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հունվարի 19-ի դատավճռին:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

10. Սույն բողոքի շրջանակներում Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Կ.Հայրապետյանի նկատմամբ նշանակված պատժի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները համապատասխանում են արդյոք սույն գործի փաստական հանգամանքներին ու ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ պատժի արդարացիության պահանջներին:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները»:

Կարեն Տիգրանի Հարությունյանի գործով 2007 թվականի նոյեմբերի 30-ի ՎԲ-201/07 որոշման մեջ Վճռաբեկ դատարանը, վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի մի շարք դրույթներ, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ,

48–րդ և 61–րդ հոդվածները, հանգել է այն հետևության, որ պատիժը համարվում է արդարացի, եթե դատարանը ճիշտ է գնահատում գործի բոլոր հանգամանքները, անձին բնութագրող բոլոր տվյալները և քրեական օրենքով նախատեսված պահանջներից ելնելով՝ հանցագործության մեջ մեղավոր անձի նկատմամբ նշանակում է այնպիսի պատիժ, որն անհրաժեշտ և բավարար է այդ անձին ուղղելու և նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու համար (տե՛ս նաև Հ.Հաբեշյանի վերաբերյալ գործով 2007 թվականի օգոստոսի 30–ի ՎԲ–145/07 որոշումը, Ա.Սարգսյանի վերաբերյալ գործով 2007 թվականի օգոստոսի 30–ի ՎԲ–142/07 որոշումը, Ա.Մինասյանի վերաբերյալ գործով 2007 թվականի հոկտեմբերի 26–ի ՎԲ–185/07 որոշումը):

12. ՀՀ քրեական օրենսգրքի 338–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ «(...) քրեական գործով վկայի (...) կողմից սուտ ցուցմունք տալը (...) պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 19–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ «Ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատազրկումը (...)»:

Հետևաբար, ՀՀ քրեական օրենսգրքի 338–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված հանցագործությունը՝ ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի, ոչ մեծ ծանրության է:

13. Սույն գործով Վերաքննիչ դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360–րդ հոդվածի 1–ին մասի 7–րդ կետի պահանջին համապատասխան քննարկելով ամբաստանյալ Կ.Հայրապետյանի նկատմամբ պատժի նշանակման հարցը, անդրադարձել է ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 338–րդ հոդվածի 1–ին մասի սանկցիայով նախատեսված պատժի նվազ խիստ տեսակները նշանակելու հնարավորությանը և հանգել հետևության, որ կալանքի կիրառումը անհնարին է՝ Կ.Հայրապետյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառված լինելու պատճառաբանությամբ (ՀՀ քրեական օրենսգրքի 57–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ «(...) Կալանքը կարող է նշանակվել (...) միայն այն դեպքում, երբ կալանավորումը որպես խափանման միջոց չի կիրառվել»): Իսկ տուգանքի նշանակումը համարվել է աննպատակահարմար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 48–րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակների իրացումը չապահովելու նկատառումներով:

Վերաքննիչ դատարանն անդրադարձել է նաև այն հարցին, որ սույն գործով բացակայում են ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքները, նա նախկինում դատապարտված չի եղել, 2008 թվականի հունիսի 10–ին գորակոչվել է իսկական ժամկետային զինվորական ծառայության, ըստ դպրոցի տնօրինության, բնակության վայրի, ինչպես նաև զորամասի հրամանատարության կողմից տրված բնութագրերի՝ բնութագրվում է դրական, հայրը 2–րդ խմբի հաշմանդամ է (տե՛ս սույն որոշման 7–րդ կետը), և հանգել հետևության այն մասին, որ Կ.Հայրապետյանի նկատմամբ Առաջին ատյանի դատարանի կողմից սահմանված

պատժաչափը՝ մեկ տարի ժամկետով ազատազրկումը, անարդարացի է ակնհայտ խիստ լինելու պատճառով, չի համապատասխանում հանցագործության ծանրությամբ և ամբաստանյալի անձին և չի բխում պատժի նպատակներից: Վերաքննիչ դատարանը փոփոխել է Առաջին ատյանի դատարանի կողմից նշանակված պատժաչափը՝ ամբաստանյալի նկատմամբ նշանակելով ազատազրկում՝ 3 /երեք/ ամիս ժամկետով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է արտահայտում ամբաստանյալ Կ.Հայրապետյանի նկատմամբ նշանակված պատժատեսակի և պատժաչափի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունների հետ և գտնում, որ դրանք համապատասխանում են գործի փաստական հանգամանքներին ու ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ պատժի արդարացիության պահանջներին:

14. Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ առկա որոշ փաստարկներին:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում որպես ամբաստանյալի պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք նշել է. «Վերաքննիչ դատարանը, նկատի ունենալով, որ սույն հանցագործությունը դասվում է ոչ մեծ ծանրության հանցագործությունների շարքին, գտնում է, որ այն էականորեն նվազեցնում է հանցանքի և հանցավորի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը»:

Ամբաստանյալին մեղսագրվող հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի և բնույթի հարցի վերաբերյալ իր դիրքորոշումը Վճռաբեկ դատարանն արտահայտել է ԵՇԳ/0029/01/08 որոշման մեջ, որի համաձայն՝ այլընտրանքային սանկցիաների միջև ընտրություն կատարելիս պատժի արդարացիության սկզբունքի ապահովման հիմնական երաշխիքը դատարանների կողմից յուրաքանչյուր գործի քննության ժամանակ այնպիսի հանգամանքների բացահայտումն է, որոնք ազդել են անձի կողմից կատարված արարքի հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի վրա (տե՛ս *Գարուշ Նորիկի Մադաթյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի ԵՇԳ/0029/01/08 որոշման 13-րդ, 14-րդ և 15-րդ կետերը):

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը սույն գործով Կ.Հայրապետյանի արարքի հանրային վտանգավորության աստիճանի հարցի քննարկման ժամանակ իրավական գնահատական է տվել ոչ թե այդ արարքի կատարման ընթացքը բնութագրող հանգամանքներին, այլ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմին, ինչն անընդունելի է:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն իրավասու չէր ամբաստանյալին մեղսագրվող արարքը ոչ մեծ ծանրության հանցագործությունների թվին դասվելը դիտել որպես հանցանքի և հանցավորի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը նվազեցնող հանգամանք:

15. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում որպես ամբաստանյալի պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք հաշվի է առել նաև այն, որ նա առաջին անգամ հանգամանքների պատահական զուգորդմամբ կատարել է ոչ

մեծ ծանրության հանցագործություն: Նշված հանգամանքը, որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք, նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այս հանգամանքի առկայության փաստը հաստատելու համար անհրաժեշտ պայմաններն են՝

ա) անձը պետք է ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքը կատարի առաջին անգամ,

բ) հանցանքի կատարումը պետք է պայմանավորված լինի հանցավորի կամքից անկախ գոյություն ունեցող հանգամանքների այնպիսի փոփոխությամբ կամ համընկմամբ, որոնք ուղղակի կամ անուղղակի իրենց հուզական ազդեցությունն ունենան անձի նկատմամբ և նպաստեն հանցանքի կատարմանը:

Այսինքն՝ հանգամանքների պատահական զուգորդումը նախ և առաջ փաստի խնդիր է, որը դատարանի կողմից պետք է հաստատվի գործով բացահայտված բոլոր փաստական հանգամանքների համակցությամբ:

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում չի պարզաբանել, թե ո՞ր հանգամանքների պատահական զուգորդմամբ է կատարվել հանցագործությունը, իր այս հետևությունը որևէ ձևով չի հիմնավորել, չի մատնանշել այն ապացույցները, որոնք վկայում են այս մեղմացնող հանգամանքի առկայության մասին, այդպիսիք բացակայում են նաև քրեական գործի նյութերում:

16. Կ.Հայրապետյանի նկատմամբ պատիժ նշանակելիս Վերաքննիչ դատարանը հաշվի է առել նաև այն, որ ամբաստանյալն արարքը կատարելու ընթացքում չի պատկերացրել իր կողմից կատարած հանցանքի հասարակական վտանգավորության աստիճանը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այս հետևությունը նույնպես անհիմն է, քանի որ Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ իրավացիորեն ապացուցված է համարել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ Կ.Հայրապետյանի մեղավորությունը, իսկ տվյալ հանցանքի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ այն դեպքում, երբ Վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը, սակայն դատարանի կայացրած գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի է պատճառաբանված, սխալ է պատճառաբանված կամ պատճառաբանված չէ, ապա Վճռաբեկ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը:

18. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, որը թերի է պատճառաբանված: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի 2009 թվականի մարտի 11-ի որոշումը պետք է թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանությունները:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Կարեն Պարույրի Հայրապետյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 11-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանությունները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն  
Դատավորներ՝ ստորագրություններ*

14.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
քրեական գործ թիվ ԱՎԴ/0100/01/08

ԱՎԴ/0100/01/08

նախագահող դատավոր՝ Հ.Տեր-Աղամյան  
դատավորներ՝ Ռ.Ազարյան, Ժ.Հովսեփյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԳԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Կ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ՝*

*ամբաստանյալ* Տ. ԲՈՒԴԱՂՅԱՆԻ  
*պաշտպան* Ֆ. ԽԱԼԱԹՅԱՆԻ  
*դատախազ* Վ. ՀՈՎՍԵՓՅԱՆԻ

2 հունիսի 2009 թվական

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Տիրան Վոլոդյայի Բուդաղյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2009 թվականի մարտի 6-ի որոշման դեմ ամբաստանյալ Տիրան Բուդաղյանի բերած վճռաբեկ բողոքը,

## **Պ Ա Ր Ջ Ե Ց**

### **Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2008 թվականի օգոստոսի 27-ին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի հատկանիշներով հարուցվել է թիվ 27109308 քրեական գործը:

2. 2008 թվականի սեպտեմբերի 1-ին Տիրան Բուդաղյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

3. 2008 թվականի հոկտեմբերի 23-ին Տիրան Բուդաղյանի և մյուսների վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արարատի և Վալոյ Զորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան):

4. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2008 թվականի դեկտեմբերի 4-ի դատավճռով Տիրան Բուդաղյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և նրա նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկում՝ 3 /երեք/ ամիս ժամկետով:

Նույն դատավճռով դատապարտվել են նաև Կարեն Բարսեղյանը, Մարատ Հարությունյանը և Տիգրան Հարությունյանը:

5. Ամբաստանյալներ Տ.Բուդաղյանի և Տ.Հարությունյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2009 թվականի մարտի 6-ի որոշմամբ ամբաստանյալների վերաքննիչ բողոքները մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 4-ի դատավճիռը:

6. Վերաքննիչ դատարանի 2009 թվականի մարտի 6-ի որոշման դեմ ամբաստանյալ Տ.Բուդաղյանը վճռաբեկ բողոք է բերել:

2009 թվականի մայիսի 8-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի հիմքով (Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված ամերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել ծանր հետևանքներ):

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

7. Տիրան Բուդաղյանը 2008 թվականի օգոստոսի 26-ին՝ ժամը 20:30-ի սահմաններում, Արարատի մարզի Գետազատ գյուղի գերեզմանոցի տարածքից մոտ 100 մետր հեռավորության վրա, խաղողի այգիների հարևանությամբ գտնվող առվի եզրին աճած կանեփի բույսից քաղելու եղանակով ապօրինի ձեռք է բերել և առանց իրացնելու նպատակի, գործածելու նպատակով իր մոտ պահել է խոշոր չափի՝ 72, 6 գրամ քաշով, չչորացված «մարիխուանա» տեսակի թմրամիջոց:



8. Տ. Բուդաղյանը 2-րդ խմբի հաշմանդամ է, բնութագրվում է դրական, նախկինում դատապարտված չի եղել, անկեղծորեն զոջացել է կատարած արարքի համար: Առաջին ատյանի դատարանի դատավճռի կայացումից հետո՝ 2008 թվականի դեկտեմբերի 8-ին, մահացել է հայրը՝ Վոլոդյա Բուդաղյանը: Մայրը՝ Ջուլիետա Բուդաղյանը, վատառողջ է և ունի խնամքի կարիք: Ամբաստանյալ Տ.Բուդաղյանը հանդիսանում է նրան խնամող միակ անձնավորությունը (եղբայրը՝ Արմեն Բուդաղյանը, մահացել է դեռևս 2001 թվականին):

**Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոք բերած անձը փաստարկել է, որ ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 80-րդ հոդվածի, որը սահմանում է պատժից ազատելն արտակարգ հանգամանքների հետևանքով, ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձանց պատժից ազատելու հիմք կարող է հանդիսանալ դատապարտյալի կամ նրա ընտանիքի համար ծանր հետևանքների առաջացման վտանգը, որը կարող է կանխել դատապարտյալը՝ պատժից ազատվելու դեպքում: Ընդ որում, օրենքը ծանր հետևանքների առաջացման հնարավորությունը, ի թիվս այլոց, կապում է նաև ընտանիքի միակ աշխատունակ անձի ծանր հիվանդության կամ մահվան հետ:

Ըստ բողոք բերած անձի՝ ինքը Վերաքննիչ դատարան է ներկայացրել բժշկական տեղեկանք այն մասին, որ մայրը կաթվածահար է եղել և գտնվում է անկողնային ծանր վիճակում, հարևանների հայտարարությունը՝ հաստատված համատիրության կառավարչի կողմից այն մասին, որ իր ընտանիքի միակ անդամը՝ մայրը, գտնվում է իր խնամքի ներքո, ինչպես նաև եղբոր և հոր մահվան վկայականները, որոնք բավարար հիմք են առ այն, որ Առաջին ատյանի դատարանի նշանակած պատիժն իր կողմից կրելու դեպքում իր ընտանիքի համար կարող են առաջանալ ծայրահեղ ծանր հետևանքներ և խնդրել, որպեսզի Վերաքննիչ դատարանը, վերոգրյալը հաշվի առնելով և ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 80-րդ հոդվածում ամրագրված մարդասիրական սկզբունքներով, իրեն ազատի պատժի կրումից:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքում մատնանշված ՀՀ քրեական օրենսգրքի 80-րդ հոդվածի պահանջի կիրառումը քննարկելու փոխարեն, քննարկել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հնարավորությունը և գտնելով, որ նշված հոդվածով նախատեսված մեղմացնող հանգամանքները հաշվի են առնվել Առաջին ատյանի դատարանի կողմից՝ կայացված դատավճիռը թողել է անփոփոխ: Վերոգրյալից բողոքաբերը եզրակացնում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի խախտում, այն է՝ չի կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 80-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր:

10. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է մասնակիորեն բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2009 թվականի մարտի 6-ի որոշումը և իրեն ազատել Առաջին ատյանի դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 4-ի դատավճռով սահմանված պատժի կրումից:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի հետևյալ հարցին. կիրառելի՞ է արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 80-րդ հոդվածը դեռևս օրինական ուժի մեջ չմտած դատավճռով նշանակված պատժի նկատմամբ և իրավաստ՞ էր արդյոք Վերաքննիչ դատարանը վերոնշյալ հոդվածի հիմքով Տ.Բուդաղյանին ազատել Առաջին ատյանի դատարանի կողմից նշանակված պատիժը կրելուց:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 80-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար դատապարտված անձը կարող է ազատվել պատժից, եթե հրդեհի, տեխնոլոգիական կամ տարերային աղետի, ընտանիքի միակ աշխատունակ անդամի ծանր հիվանդության կամ մահվան կամ արտակարգ այլ հանգամանքների պատճառով պատժի հետագա կրումը դատապարտվածի կամ նրա ընտանիքի համար կարող է հանգեցնել ծանր հետևանքների»:

Նշված հոդվածի վերլուծությունից երևում է, որ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար դատապարտված անձի կողմից պատժի հետագա կրումը որոշ հանգամանքների (հրդեհ, տեխնոլոգիական կամ տարերային աղետ, ընտանիքի միակ աշխատունակ անդամի ծանր հիվանդություն կամ մահ, կամ այլ հանգամանքներ) առկայության դեպքում կարող է համարվել աննպատակահարմար, քանի որ այն կարող է հանգեցնել ծանր հետևանքների դատապարտյալի կամ նրա ընտանիքի անդամների համար: Նշանակված և դատապարտյալի կողմից փաստացի կրվող պատժից ազատելը նպատակ է հետապնդում կանխել վերոնշյալ ծանր հետևանքների առաջացումը:

13. Պատիժը կրելուց ազատելու հետ կապված քրեադատավարական կարգավորումները տրված են «Դատական որոշումների կատարումը» վերտառությունը կրող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ գլխում:

Նշված գլխում զետեղված 429-րդ, 431-433-րդ հոդվածներով կարգավորվող իրավահարաբերությունների սուբյեկտ է դատապարտյալը, ով իր իրավունքներն իրավասու է իրականացնել անձամբ կամ պաշտպանի օգնությամբ: Դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված հարցերը լուծող դատարանների իրավասությունը սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 437-րդ հոդվածով, իսկ դատական որոշման հետ կապված հարցերի լուծման կարգը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 438-րդ հոդվածով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Մեղադրյալը, որի վերաբերյալ կա օրինական ուժի մեջ մտած դատարանի դատավճիռ, որն ամբողջությամբ կամ մասնակիորեն մեղադրական է, կոչվում է դատապարտյալ (...):»:

Վերոշարադրյալ հոդվածների վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 80-րդ հոդվածում օրենսդրի տրված ձևակերպումները («պատժի հետագա կրումը դատապարտվածի կամ նրա ընտանիքի համար կարող է հանգեցնել ծանր հետևանքների»), կիրառելի են միայն օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի հիման վրա պատժի որոշ մասը կրած դատապարտյալի նկատմամբ:

Այսինքն, ՀՀ քրեական օրենսգրքի 80-րդ հոդվածով նախատեսված հիմքերով անձին պատժի հետագա կրումից ազատելու քրեաիրավական ինստիտուտի կիրա-

ումը հնարավոր է մեղադրական դատավճռի կատարման փուլում, երբ դատապարտ-  
յալի նկատմամբ նշանակված պատժի կրման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի  
արտակարգ հանգամանքներ, որոնք նրա կողմից պատժի հետագա կրումը դարձնում  
են աննպատակահարմար կամ անհնարին:

14. Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքում նշված՝  
ՀՀ քրեական օրենսգրքի 80-րդ հոդվածով սահմանված հիմքով պատժից ազատելու  
մասին բողոք բերած անձի խնդրանքը կարող է քննարկման առարկա դարձվել օրի-  
նական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի առկայության պայմաններում՝  
դատապարտյալի կողմից արդեն փաստացի կրվող պատժի կապակցությամբ, ՀՀ  
քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ գլխի նորմերով սահմանված ընթա-  
ցակարգով:

Մինչդեռ սույն գործով Վերաքննիչ դատարան բողոքարկվել է Առաջին ատյա-  
նի դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատավճիռ, ուստի Վճռաբեկ դատա-  
րանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 80-րդ հոդվածի կիրառման անհնարի-  
նության հիմքով ՀՀ վերաքննիչ դատարանի 2009 թվականի մարտի 6-ի որոշումը  
հիմնավորված է, Վերաքննիչ դատարանն իրավասու չէր ՀՀ քրեական օրենսգրքի  
80-րդ հոդվածի հիմքով Տ.Բուդաղյանին ազատել Առաջին ատյանի դատարանի  
կողմից նշանակված պատիժը կրելուց, և այս առումով որոշումը բեկանելու հիմքեր  
չկան:

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի նաև այն հար-  
ցին, թե արդյո՞ք Վերաքննիչ դատարանը կայացրել է հիմնավորված դատական  
ակտ, որը համապատասխանում է գործի փաստական հանգամանքներին:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 6-8-րդ  
կետերի համաձայն՝ դատավճիռ կայացնելիս դատարանը ներկայացված հաջորդակա-  
նությամբ լուծում է հետևյալ հարցերը՝

- 6) ենթակա է արդյոք պատժի ամբաստանյալն իր կատարած հանցանքի համար,
- 7) ինչ պատիժ պետք է նշանակվի ամբաստանյալի նկատմամբ,
- 8) ամբաստանյալն արդյոք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը:

Նշված իրավադրույթից երևում է, որ կոնկրետ պատժաչափով կոնկրետ պատ-  
ժատեսակի նշանակումը և նշանակված պատիժը կրելու անհրաժեշտության հարցի  
լուծումն իրենցից ներկայացնում են ինքնուրույն և հաջորդական փուլեր: Այսինքն՝  
դատարանը նախ և առաջ որոշում է ամբաստանյալի՝ պատժի ենթակա լինելու հար-  
ցը, այնուհետև՝ դրա տեսակը և չափը, որից հետո որոշում, թե ամբաստանյալն արդ-  
յոք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը՝ հաշվի առնելով առանց նշա-  
նակված պատիժը փաստացի կրելու դրա նպատակներին հասնելու հնարավորու-  
թյունը:

Նշված հարցերի լուծման ընթացքում դատարանը պետք է ղեկավարվի ՀՀ  
քրեական օրենսգրքի 10-րդ և 61-րդ հոդվածներով ամրագրված՝ արդարության և  
պատասխանատվության անհատականացման, ինչպես նաև պատիժ նշանակելու  
ընդհանուր սկզբունքներով, հաշվի առնի ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ և 63-րդ  
հոդվածներով նախատեսված պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող  
և ծանրացնող հանգամանքները (տե՛ս *Թամարա Տեր-Գրիգորյանի* վերաբերյալ

գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 26–ի թիվ ՎԲ–192/07 որոշումը):

17. ՀՀ քրեական օրենսգրքի 70–րդ հոդվածի 1–ին և 2–րդ մասերի համաձայն՝ «Եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժ կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 70–րդ հոդվածի կիրառման կապակցությամբ իր դիրքորոշումը Վճռաբեկ դատարանն արտահայտել է ինչպես վերոնշյալ՝ ՎԲ–192/07, այնպես էլ ԱՎԳ-2/0059/01/08 որոշման մեջ: Վերջինիս 24–րդ կետում Վճռաբեկ դատարանը նշել է. «(...) պատիժը կարող է պայմանականորեն չկիրառվել, եթե առկա է դատարանի համոզվածությունը, վստահությունն առանց իրական պատիժ նշանակելու ամբաստանյալի ուղղվելու հնարավորության մասին: Դատարանը նման հետևության հանգում է միայն օբյեկտիվ գոյություն ունեցող տվյալների վերլուծության հիման վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում են պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին (...)» (տե՛ս *Հուսիկ Բաղդասարյանի* վերաբերյալ գործով 2008 թվականի նոյեմբերի 28–ի թիվ ԱՎԳ-2/0059/01/08 որոշումը, կետ 24):

18. Ինչպես երևում է գործի նյութերից, Առաջին ատյանի դատարանը Տ.Բուդաղյանի նկատմամբ պատիժ նշանակելիս որպես նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ հաշվի է առել այն, որ նա խոստովանել և զղջացել է կատարածի համար, բնութագրվում է դրականորեն, 2–րդ խմբի հաշմանդամ է: Նշված հանգամանքների գնահատմամբ դատարանը գտել է, որ նրա ուղղումը հնարավոր է միայն հասարակությունից մեկուսացնելով:

Վերաքննիչ դատարանը, քննության առնելով ՀՀ քրեական օրենսգրքի 70–րդ հոդվածի կիրառման հնարավորության և ՀՀ քրեական օրենսգրքի 48–րդ հոդվածով ամրագրված պատժի նպատակների իրացվելիության հարցերը, հանգել է այն հետևության, որ Տ.Բուդաղյանի վերաքննիչ բողոքում բերված փաստարկներն արդեն իսկ հաշվի են առնվել Առաջին ատյանի դատարանի կողմից՝ պատժի տեսակը և չափը որոշելիս, և գործով բավարար հիմքեր չկան նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70–րդ կիրառելու համար:

Փաստորեն, Վերաքննիչ դատարանն ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70–րդ հոդվածի կիրառման հարցը քննարկելիս հիմք է ընդունել Առաջին ատյանի դատարանի հետևությունները, որոնք ուղղակի վերարտադրել է իր որոշման մեջ՝ առանց անդրադառնալու այն հարցին, թե ամբաստանյալ Տ.Բուդաղյանի նկատմամբ նշանակված պատիժը կրելու անհրաժեշտության մասին հետևությունն արդյոք համապատասխանում է գործի փաստական հանգամանքներին ու արդարացի պատժի քրեաիրավական սկզբունքին:

Այս առումով հարկ է նշել, որ Վերաքննիչ դատարանն ընդհանրապես չի անդրադարձել ամբաստանյալ Տ.Բուդաղյանի վերաքննիչ բողոքում նշված այն փաստարկ-

ներին, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռի կայացումից հետո մահացել է հայրը, իսկ մայրը, որը, գործում եղած էպիկրիզի և համատիրության կողմից հաստատված փաստաթղթային ապացույցների համաձայն՝ տարել է իշեմիկ ինսուլտ, գտնվում է անկողնային վիճակում և ունի խնամքի կարիք և ամբաստանյալ Տ.Բուդադյանը նրան խնամող միակ անձնավորությունն է, քանի որ եղբայրը մահացել է դեռևս 2001 թվականին (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Ամբաստանյալ Տ.Բուդադյանի նկատմամբ Առաջին ատյանի դատարանի դատավճռի վերանայման ընթացքում Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այս հանգամանքները, ինչի արդյունքում էլ հանգել է չհիմնավորված հետևության:

19. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված հանգամանքները ենթակա են գնահատման՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հնարավորության հարցը որոշելու առումով, և դրանց գնահատված չլինելը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող՝ չհիմնավորված որոշման կայացմանը, ինչը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս բեկանել Վերաքննիչ դատարանի 2009 թվականի մարտի 6-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Բողոքարկված դատական ակտի բեկանումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Տ.Բուդադյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորության հարցը քննարկելիս և որոշում կայացնելիս Վերաքննիչ դատարանը, իր դատական ակտում չգնահատելով վերոհիշյալ հանգամանքները, ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով ամրագրված՝ պատժի նպատակների իրացվելիության հնարավորության հարցում հանգել է չհիմնավորված հետևության, որի արդյունքում թույլ է տվել դատական սխալ, որը կարող է առաջացնել ծանր հետևանքներ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է նաև օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

20. Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները, որոնք ազդել են դատապարտյալի նկատմամբ նշանակված պատիժը կրելու մասով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք են: Ուստի անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա բեկանել Վերաքննիչ դատարանի դատական ակտը, գործն ուղարկելով նույն դատարան՝ նոր քննության:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Տիրան Վոլոդյայի Բուդադյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Արարատի և Վայոց

Չորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 4–ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 6–ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

15.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության

ԵՔԲԴ/0571/01/08

վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵՔԲԴ/0571/01/08

նախագահող դատավոր՝ Տ.Սահակյան  
դատավորներ՝ Ա.Հովհաննիսյան, Ա.Դանիելյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ

2 հունիսի 2009 թվական

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի փետրվարի 27–ի որոշման դեմ դատապարտյալ Հովհաննես Արտաշեսի Սահակյանի բերած վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2008 թվականի հուլիսի 3–ին Երևանի Կենտրոնի քննչական բաժնի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 178–րդ հոդվածի 2–րդ մասի 1–ին և 2–րդ կետերով հարուցվել է քրեական գործ:

2. 2008 թվականի օգոստոսի 6–ին Հովհաննես Արտաշեսի Սահակյանը ՀՀ քրեական օրենսգրքի 178–րդ հոդվածի 2–րդ մասի 1–ին և 2–րդ կետերով ներգրավվել է որպես մեղադրյալ:

3. 2008 թվականի հունիսի 20–ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Էրեբունու քննչական բաժնի կողմից հարուցվել է թիվ 12111808 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179–րդ հոդվածի 1–ին մասի հատկանիշներով:

Նույն գործի շրջանակներում Հովհաննես Արտաշեսի Սահակյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասով:

4. Կենտրոնի քննչական բաժնի 2008 թվականի օգոստոսի 14-ի որոշմամբ թիվ 12111808 քրեական գործը միացվել է թիվ 13124808 քրեական գործին:

2008 թվականի նոյեմբերի 20-ի որոշմամբ Հ. Սահակյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել է, և Հ.Սահակյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասով և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով:

5. Երևանի քրեական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 24-ի դատավճռով Հ. Սահակյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասով և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ և ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել է ազատազրկման 1 /մեկ/ տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով՝ ազատազրկման 2 /երկու/ տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կանոններով՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու սկզբունքով, վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 2 /երկու/ տարի 6 /վեց/ ամիս ժամկետով: Բավարարվել է նաև քաղաքացիական հայցը և ամբաստանյալի տնտեսությունից հոգուտ տուժող Խաչատուր Միսկարյանի վճռվել է բռնագանձել 300.000 ՀՀ դրամ՝ որպես վնասի հատուցում: Տուժողներ Յու.Հովհաննիսյանի, Մ.Վարդանյանի և Ռ.Սուվարյանի քաղաքացիական հայցերը համարվել են լուծված:

6. Ամբաստանյալ Հ.Սահակյանի կողմից բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009 թվականի փետրվարի 27-ի որոշմամբ այն մերժել է՝ Երևանի քրեական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 24-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

7. 2009 թվականի ապրիլի 30-ին ՀՀ վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով («վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ») բողոքն ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

#### **Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստա-կան հանգամանքները**

8. Հ.Սահակյանը դիտավորությամբ վատնել է 2007 թվականի դեկտեմբեր ամսից Սուրեն Հովհաննիսյանի կողմից իրեն վստահված, սակայն իրականում սեփականության իրավունքով նրա հորը՝ Յուրիկ Հովհաննիսյանին պատկանող 120.000 ՀՀ դրամ արժողությամբ «ՎԱԶ-2103» մակնիշի 67 US 020 պ/հ ավտոմեքենան, այն Խաչատուր Միսկարյանին ներկայացրել է իբրև իր սեփականը, և 2008 թվականի փետրվար ամսվա վերջերին, բանավոր պայմանավորվածություն ձեռք բերելով Խ.Միսկար-



յանի հետ, նշված ավտոմեքենան վաճառել է վերջինիս՝ հափշտակելով պայմանավորված 300.000 ՀՀ դրամ գումարը:

9. Բացի այդ, Հ.Սահակյանը խարդախության միջոցով ուրիշի գույքի խոշոր չափերի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, նախնական համաձայնության գալով հետախուզման մեջ գտնվող Ալբերտ Խոստիկյանի հետ, կրկին անգամ, 2008 թվականի ապրիլ ամսվա սկզբներին չարաշահելով Ռաֆայել Մուվարյանի վստահությունը, վերջինիս սեփականության իրավունքով պատկանող՝ 930.000 ՀՀ դրամ արժողությամբ «ԲՄՎ» մակնիշի 08 ՍԼ 652 պ/հ ավտոմեքենան 4.500 ԱՄՆ դոլարով գնելու պատրվակով, Ռ. Մուվարյանից վերցրել է այդ ավտոմեքենան, որից հետո՝ ապրիլի 4-ին, Մանվել Վարդանյանին խաբելով, այն է՝ Ա.Խոստիկյանը ներկայանալով որպես Ռ.Մուվարյանին պատկանող ավտոմեքենայի սեփականատեր, այն վաճառել է Մ.Վարդանյանին և հափշտակել պայմանավորված գումարը՝ 616.620 ՀՀ դրամին համարժեք 2.000 ԱՄՆ դոլար:

### **Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքաբերը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, հաշվի չառնելով գործի փաստական հանգամանքները, մասնավորապես այն, որ իր կողմից ամբողջությամբ վերականգնվել են տուժողներին պատճառված վնասները, խնամքին ունի փոքրահասակ երեխա, չաշխատող կին և ծնողներ, զոջացել է կատարածի համար, և վերաքննիչ բողոքի դեմ տուժողները որևէ առարկություն չեն ներկայացրել, իր նկատմամբ նշանակել է անարդարացի պատիժ, չի կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի պահանջները, որով թույլ է տվել նյութական իրավունքի էական խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

Ի հիմնավորումն պատճառված վնասները վերականգնելու փաստի՝ բողոքին կից ներկայացվել են տուժող Խ.Միսկարյանի կողմից 2008 թվականի դեկտեմբերի 24-ին տրված ստացականը և 2009 թվականի մարտի 2-ի դիմումը:

11. Բողոք բերող անձը գտնում է, որ իր նկատմամբ նշանակված պատիժը՝ ազատազրկումը, անարդարացի է ակնհայտ խիստ լինելու պատճառով:

Նա կարծիք է արտահայտում այն մասին, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը վերը նշված պայմաններում պետք է կիրառեր ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի պահանջները և իր նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառեր:

12. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրել է մասնակիորեն բեկանել և փոփոխել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի փետրվարի 27-ի որոշումը՝ կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի պահանջները և իր նկատմամբ սահմանված 2 /երկու/ տարի 6 /վեց/ ամիս ժամկետով ազատազրկումը պայմանականորեն չկիրառել:

### **Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի այն հարցին, թե ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը Հ.Սահակյանի նկատմամբ նշանակված պատիժը, արդյոք, պետք է պայմանականորեն չկիրառեր:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

Գատավճիռ կայացնելիս դատարանը ներկայացված հաջորդականությամբ լուծում է հետևյալ հարցերը՝ (...)

6. ենթակա է արդյոք պատժի ամբաստանյալն իր կատարած հանցանքի համար.

7. ինչ պատժի պետք է նշանակվի ամբաստանյալի նկատմամբ.

8. ամբաստանյալն արդյոք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատժի ժը (...):

Նշված իրավադրույթից երևում է, որ կոնկրետ պատժաչափով կոնկրետ պատժատեսակի նշանակումը և արդեն իսկ նշանակված պատժի կրելու անհրաժեշտության հարցի լուծումն իրենցից ներկայացնում են պատժի հարցերի դատական լուծման գործընթացի ինքնուրույն և հաջորդական փուլեր: Այսինքն՝ դատարանը նախ և առաջ որոշում է ամբաստանյալի՝ պատժի ենթակա լինելու հարցը, այնուհետև՝ դրա տեսակը և չափը, որից հետո որոշում, թե ամբաստանյալն արդյոք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատժի՞՝ հաշվի առնելով առանց նշանակված պատժի փաստացի կրելու դրա նպատակներին հասնելու հնարավորությունը:

15. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե դատարանը կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատժի նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատժի կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատժը պայմանականորեն չկիրառելու մասին:

Այսինքն՝ դատարանը, կայացնելով մեղադրական դատավճիռ, ամբաստանյալի նկատմամբ նշանակում է քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածում թվարկված պատժատեսակներից (կալանք, ազատագրկում, կարգապահական գումարտակում պահելը) որևէ մեկը՝ սահմանելով դրա չափը, այնուհետև համոզվելով, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց նշանակված պատժի փաստացի կրելու, որոշում է դատապարտյալի վրա որոշակի պարտականություններ դնելով՝ նշանակված պատժը պայմանականորեն չկիրառել (տե՛ս նաև *Գ. Մարտիրոսյանի* գործով 2008 թվականի փետրվարի 1-ի Վճռաբեկ դատարանի ՎԲ-01/08 որոշումը):

Այդ հոդվածի կիրառումը հանցագործության տեսակի հետ կապված որևէ սահմանափակման չի ենթարկվում: Դրա կիրառումը սահմանափակված չէ նաև հանցավոր արարքի վտանգավորության աստիճանով ու բնույթով, ինչպես նաև անձանց շրջանակով, որոնց նկատմամբ այն չի կարող կիրառվել:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հիմնական պայմանը պատժառաքանված լինելն է: Նշանակված պատժի պայմանականորեն չկիրառելիս դատարանը պետք է հանգամանորեն քննության առնի ինչպես հանցագործության կատարման, այնպես էլ հանցավորի անձին վերաբերող բոլոր հանգամանքները: Կարևորն այն է, որ հանգի հիմնավոր եզրակացության, որ դատապարտյալի ուղղումը հնարավոր է առանց նշանակված պատժի կրելու (տե՛ս նաև *Ս. Ներսիսյանի* գործով 2007 թվականի հունիսի 12-ի Վճռաբեկ դատարանի ՎԲ-124/07 որոշումը):

16. Վերը հիշատակված հարցերի լուծման ընթացքում դատարանը պետք է ղեկավարվի նաև ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի մի շարք դրույթներով:

Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հան-

ցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժն արդարացի է, եթե համապատասխանում է հանցանքի ծանրությանը, դրա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար է անձին ուղղելու և նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով նույն օրենսգրքի ընդհանուր մասի դրույթները:

Պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը քննելիս դատարանը հաշվի է առնում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ և 63-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Հանցակազմի սահմաններից դուրս գտնվելով՝ դրանք բնութագրում են ինչպես կատարած հանցագործությունը, այնպես էլ հանցավորի անձնավորությունը, հնարավորություն են տալիս պատկերացում կազմել հանցավորի անձնավորության և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին՝ համապատասխանաբար բարձրացնելով կամ իջեցնելով այն: Դրանց գնահատմամբ է հնարավոր յուրաքանչյուր կոնկրետ գործով անհատական մոտեցում ցուցաբերել՝ ինչպես պատժի տեսակը և չափը որոշելիս, այնպես էլ այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի՝ պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

17. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածով ամրագրված՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու չափանիշները սպառնիչ չեն: Պատիժը պայմանականորեն չկիրառելու իրավական հիմքերը բացահայտելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածում սահմանված իրավադրույթներն անհրաժեշտ է մեկնաբանել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված պատժի նպատակների համատեքստում, համաձայն որի՝ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

Այլ կերպ՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս իրավասու դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է քննարկի նաև պատժի՝ սոցիալական արդարության վերականգնման և պատժի ենթարկված անձի ուղղվելու նպատակների իրացման հարցը:

Սոցիալական արդարությունը վերականգնելու և պատժի ենթարկված անձի ուղղվելու մասին կարող է վկայել հանցագործությունից հետո հանցավորի դրսևորած վարքագիծը, մասնավորապես՝ տուժողին պատճառած վնասը հարթելը կամ այն հարթելուն ուղղված ողջամիտ միջոցներ ձեռնարկելը:

18. Գործի տվյալներով հիմնավորված է, որ Հ.Սահակյանը նախկինում արատավորված չի եղել, բնութագրվել է դրական, խնամքին ունի փոքրահասակ երեխա, չաշխատող կին և ծնողներ, զղջացել է կատարածի համար, նրա կողմից ամբողջությամբ

վերականգնվել են տուժողներին պատճառված վնասները, ինչը հիմնավորվել է ինչպես վճռաբեկ բողոքին կից ներկայացված տուժող Խ.Միսկարյանի կողմից տրված ստացականով և դիմումով, այնպես էլ գործում առկա մյուս տուժողների դիմումներով, իսկ պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ սույն գործով բացակայում են:

19. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թե՛ Երևանի քրեական դատարանը և թե՛ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը Հ.Սահակյանի նկատմամբ պատժատեսակի և պատժի չափի ընտրության հարցում հանգել են ճիշտ եզրակացության, սակայն երկու դատարաններն էլ անտեսել են այն հարցը, թե արդյոք Հ.Սահակյանը վերը նշված հանգամանքերի առկայության պայմաններում պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը:

20. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված հանգամանքները ենթակա են գնահատման ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման առումով, և դրանց գնահատված չի՛նելը հիմք է տալիս բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի փետրվարի 27-ի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

Բողոքարկված դատական ակտի բեկանումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հ. Սահակյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում ընդունելիս ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը չի քննարկել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով ամրագրված պատժի նպատակների իրացվելիության հարցը, գործի քննության ընթացքում թույլ է տվել առերևույթ դատական սխալ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Հովհաննես Արտաշեսի Սահակյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասով և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով Երևան քաղաքի քրեական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 24-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի փետրվարի 27-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

16.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության

ՀՅԶՐԴ 1/0074/01/08

վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ՀՅԶՐԴ 1/0074/01/08

նախագահող դատավոր՝ Ժ.Հովսեփյան  
դատավորներ՝ Ռ.Ազարյան, Հ.Տեր-Աղամյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝*

Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝*

Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ

Ե. ԳԱՆԻԵԼՅԱՆԻ

Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ

Ա. ՊՈԳՈՍՅԱՆԻ

*քարտուղարությամբ*

*մասնակցությամբ մեղադրող*

Կ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

Լ. ԹԱԳԵՎՈՍՅԱՆԻ

2 հունիսի 2009 թվական

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի բերած վճռաբեկ բողոքը Ռ-ուբեմ Վաչիկի Ազատյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 200–րդ հոդվածի 4–րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 16–ի որոշման դեմ,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը**

1. Արաքսյա Գուրգենի Կյուրեղյանի հաղորդման կապակցությամբ ՀՀ ոստիկանության Շիրակի մարզի քննչական բաժնի կողմից 2008 թվականի օգոստոսի 20–ին ՀՀ քրեական օրենսգրքի 311<sup>1</sup>–րդ հոդվածի 3–րդ մասի 1–ին կետի հատկանիշներով

քրեական գործ է հարուցվել: Վարույթն իրականացնող մարմնի 2008 թվականի օգոստոսի 20-ի որոշմամբ Ա. Կյուրեղյանը ճանաչվել է տուժող:

2. Ռուբեն Վաչիկի Ազատյանը 2008 թվականի օգոստոսի 20-ին ձերբակալվել է, իսկ օգոստոսի 23-ին ՀՀ քրեական օրենսգրքի 311<sup>1</sup>-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ներգրավվել է որպես մեղադրյալ:

3. Հյուսիսային քրեական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 8-ի դատավճռով ամբաստանյալ Ռ.Ազատյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 4-րդ մասով և դատապարտվել ազատազրկման 1 /մեկ/ տարի ժամկետով:

4. Շիրակի մարզի դատախազության դատախազ Ա.Փանոսյանի կողմից բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009 թվականի մարտի 16-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է և Հյուսիսային քրեական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 8-ի դատավճիռը թողել է օրինական ուժի մեջ:

5. Վճռաբեկ բողոքը բերել է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

2009 թվականի մայիսի 8-ին Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատապարտության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար») բողոքն ընդունել է վարույթ:

### **Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները**

6. Ռ.Ազատյանը աշխատել է առևտրային կազմակերպություն հանդիսացող, տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթ ստացող՝ «Գյումրու բնակարանների սպասարկում» փակ բաժնետիրական ընկերությունում որպես ժամանակավոր կազարանների բնակիչներին սպասարկող ծառայող:

7. Շիրակի մարզի Հովիտ գյուղում հաշվառված Արաքսյա Գուրգենի Կյուրեղյանին պատկանող, Գյումրի քաղաքի թիվ 153 տնակային տարածքում տեղադրված տնակը հաշվառելու և համարակալելու համար Ռ.Ազատյանը 2008 թվականի օգոստոս ամսի կեսերին՝ իր կառավարչական գործառույթներն իրականացնելու ժամանակ, այցելել է նշված տնակ և շորթման եղանակով, տնակը չհաշվառելու սպառնալիքով Ա.Կյուրեղյանից պահանջել է 45.000 ՀՀ դրամ կաշառք, որից 10.000 ՀՀ դրամը ստացել է նույն պահին, իսկ մնացած 35.000 ՀՀ դրամ գումարը ստացել է 2008 թվականի օգոստոսի 30-ին՝ ժամը 13-ի սահմաններում, Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհ փողոցում գտնվող Շիրակի մարզպետարանի շենքի մոտ և նույն պահին ձերբակալվել է ՀՀ ոստիկանության Շիրակի մարզի վարչության աշխատակիցների կողմից:

### **Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից Ռ.Ազատյանի արարքը ճիշտ չի որակվել, ինչը հանգեցրել է քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառման, այսինքն՝ կիրառվել է քրեական օրենքի այն նորմը, որը ենթակա չէր կիրառման, ինչպես նաև սխալ է մեկնաբանվել քրեական օրենքը: Վերոգրյալի արդ-

յունքում թույլ է տրվել դատական սխալ՝ նյութական իրավունքի այնպիսի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա, իսկ կայացված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը:

Ի հիմնավորումն ասվածի՝ նա նշում է, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է աշխատակազմի, համայնքային բյուջետային հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով, իսկ նշված օրենքի 52-րդ հոդվածը լիազորում է համայնքին, բացառապես իր լիազորությունների իրականացման նպատակով, համայնքի ավագանու որոշմամբ ստեղծել առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Ուստի տեղական ինքնակառավարման մարմնի կողմից առևտրային կազմակերպություն կարող է ստեղծվել բացառապես այդ մարմնի լիազորությունների իրականացման նպատակով, հակառակ դեպքում կխախտվի ոչ միայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի նշված դրույթը, այլև ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածը:

Բողոքաբերը նշում է, որ սույն գործով Գյումրու ավագանու 2006 թվականի հուլիսի 14-ի որոշմամբ հիմնադրվել է «Գյումրու բնակարանների սպասարկում» փակ բաժնետիրական ընկերությունն այն պատճառաբանությամբ, որ լուծարվել են սեփական տները սպասարկող թաղային կոմիտեները, բազմաբնակարան շենքերի սպասարկումը իրականացնում են համատիրությունները, իսկ Գյումրու «Բնակարանային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերությունը, որը սպասարկել է քաղաքի ժամանակավոր կացարանները, համայնքապատկան հին ֆոնդի տները սնանկ է ճանաչել:

Վերոգրյալից բողոքաբերը եզրակացնում է, որ «Գյումրու բնակարանային սպասարկում» փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է Գյումրու ավագանու որոշմամբ, գործել է քաղաքապետի հաստատած կանոնադրությամբ, տեղական ինքնակառավարման մարմնի խնդիրների և գործառույթների իրականացման, այդ թվում՝ ժամանակավոր կացարանների հաշվառման, համարակալման, հասցեավորման նպատակով: Հետևաբար այն փաստարկը, որ «Գյումրու բնակարանային սպասարկում» փակ բաժնետիրական ընկերությունը հանդիսանում է առևտրային կազմակերպություն, ամենևին չի բացառում այդ կազմակերպության և դրա աշխատակիցների կողմից տեղական ինքնակառավարման մարմնին վերապահված առանձին խնդիրների և գործառույթների իրականացումը:

9. Ըստ բողոքի հեղինակի՝ դատապարտյալի արարքում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 311<sup>1</sup>-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշները, և նրա արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 4-րդ մասով որակելը ակնհայտ սխալ է, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտը պետք է օժտված լինի կազմակերպական-տնօրինչական, կառավարչական, վարչատնտեսական գործառույթներով, մինչդեռ Ռ.Ազատյանը «Գյումրու բնակարանների սպասարկում» փակ բաժնետիրական ընկերությունում նման գործառույթներ չի իրականացրել:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը եզրակացնում է, որ եթե Ռ.Ազատյանը «Գյումրու բնակարանների սպասարկում» փակ բաժնետիրական ընկերությունում իրականացնել կառավարչական գործառույթներ, ապա նա քրեական պատասխանատվության կենթարկվել որչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածով, այլ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածով, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպություններում կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձինք հանդիսանում են պաշտոնատար անձինք և ենթակա են քրեական պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքի 29-րդ գլխով նախատեսված հանցագործությունների համար:

10. Բողոքաբերը գտնում է, որ սույն քրեական գործով Վճռաբեկ դատարանի կողմից կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և բացառել դատարանների կողմից հնարավոր դատական սխալները, ուստի խնդրում է բեկանել Ռ.Ազատյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 4-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 16-ի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության՝ Ռ.Ազատյանին ՀՀ քրեական օրենսգրքի 311<sup>1</sup>-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղավոր ճանաչելու և դատապարտելու համար:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

11. Սույն գործով վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի այն հարցին, թե Ռուբեն Ազատյանը, հանդիսանալով «Գյումրու բնակարանների սպասարկում» փակ բաժնետիրական ընկերության աշխատակից, իրականացրե՞լ է արդյոք քաղաքացիական աշխատանք և կարո՞ղ է արդյոք պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալու համար քրեական պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311.1-րդ հոդվածի 5-րդ մասի իմաստով համարվել հանրային ծառայող:

ՀՀ քրեական օրենսգրքի 311.1-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալու համար, այսինքն՝ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալու՝ վարձատրություն տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին հանրային ծառայողի կողմից իր լիազորությունների շրջանակներում որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու կամ իր ծառայողական դիրքն օգտագործելով՝ այդպիսի գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու կամ ծառայության գծով հովանավորության կամ թողտվության համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 311.1-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «(...) հանրային ծառայողներ են համարվում, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի համաձայն, հանրային ծառայություն իրականացնող անձինք»:

«Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրեն-



քի 1–ին հոդվածի 1–ին կետի համաձայն՝ «հանրային ծառայությունը պետությանն օրենսդրությամբ վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայությունը, ինչպես նաև պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններում քաղաքացիական աշխատանքը»:

«Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1–ին հոդվածի 5–րդ կետի համաձայն՝ քաղաքացիական աշխատանքը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենսդրությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված առանձին խնդիրների ու գործառնությունների իրականացումն է վարձու աշխատողների միջոցով:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ռ.Ազատյանը հանդիսացել է «Գյումրու բնակարանների սպասարկում» փակ բաժնետիրական ընկերության աշխատակից 2008թ. հունվարի 9–ին վերջինիս հետ կնքված թիվ 25 աշխատանքային պայմանագրի հիման վրա, որով նրան հանձնարարվել է սպասարկելու ժամանակավոր կացարանների բնակիչներին:

Ռ. Ազատյանը տեղական ինքնակառավարման մարմնի հետ՝ ի դեմս Գյումրու քաղաքապետարանի, վերջինիս վերապահված առանձին խնդիրների ու գործառնությունների իրականացման համար որևէ պայմանագիր չի կնքել, հետևաբար նա տեղական ինքնակառավարման մարմնի վարձու աշխատող չի հանդիսացել, նրա կատարած աշխատանքը քաղաքացիական աշխատանք չի կարող համարվել:

Հետևաբար ՀՀ քրեական օրենսգրքի 311.1–րդ հոդվածի 5–րդ մասի իմաստով Ռ-ուրեն Ազատյանը հանրային ծառայող չէր:

13. Սույն որոշման 11–րդ կետում առաջադրված հարցին բացասական պատասխան տալով՝ Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի նաև հետևյալ հարցին՝ Ռ-ուրեն Ազատյանը կարո՞ղ է արդյոք առևտրային կաշառքի համար քրեական պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 200–րդ հոդվածի իմաստով համարվել առևտրային կազմակերպության կառավարչական գործառնությունների իրականացնող ծառայող:

14. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ իրավաբանական անձինք կարող են լինել իրենց գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպություններ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել տնտեսական ընկերակցությունների և ընկերությունների ձևով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 108–րդ, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 2–րդ հոդվածների համաձայն՝ բաժնետիրական ընկերություն է համարվում առևտրային կազմակերպություն հանդիսացող այն տնտեսական ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Բաժնետիրական ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի:

ՀՀ քրեական օրենսգրքի 200–րդ հոդվածի 4–րդ մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում առևտրային կամ այլ կազմակերպության կառավարչական գործառույթներ իրականացնող ծառայողի, արբիտրի, այդ թվում՝ օտարերկրյա պետության՝ արբիտրաժի մասին օրենսդրությանը համապատասխան՝ գործառույթներ իրականացնող արբիտրի, աուդիտորի կամ փաստաբանի կողմից շորթմամբ կաշառք ստանալու համար: Ընդ որում, ՀՀ քրեական օրենսգրքի 200–րդ հոդվածի 4–րդ մասի իմաստով առևտրային կաշառք ստանալ է համարվում նշված անձանց կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով իրենց կամ այլ անձի համար ապօրինաբար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալը՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին գործողություններ կատարելու կամ չկատարելու համար, երբ առևտրային կաշառքը պահանջվում է անձի իրավունքը կամ օրինական շահերը չվերականգնելու սպառնալիքով:

Սույն գործի նյութերից երևում է, որ 2006թ. հուլիսի 7–ին տրված թիվ 03Ա 072601 վկայականի համաձայն՝ «Գ.յումրու բնակարանների սպասարկում» փակ բաժնետիրական ընկերությունը գրանցված է եղել պետական ռեգիստրի Գ.յումրու տարածքային բաժնի կողմից, 2912002221 համարի տակ, որպես անժամկետ գործող առևտրային իրավաբանական անձ:

«Գ.յումրու բնակարանների սպասարկում» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 2.1–րդ կետի համաձայն՝ ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործունեություն (այդ թվում նաև՝ բնակարանների սպասարկում) իրականացնելու նպատակով շահույթի ստացումը:

15. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 52–րդ հոդվածի համաձայն՝ «Համայնքը իր լիազորությունների իրականացման նպատակով, համայնքի ավագանու որոշմամբ կարող է ստեղծել (...) առևտրային կազմակերպություններ (...):»:

Տվյալ դեպքում գույքի սեփականատերը՝ համայնքը (Գ.յումրի քաղաքը), պահպանելով դրա նկատմամբ սեփականության իրավունքը, այն փաստացի հանձնել է իր կամքով ստեղծված քաղաքացիական իրավունքի նոր սուբյեկտի՝ առևտրային կազմակերպության («Գ.յումրու բնակարանների սպասարկում» ՓԲԸ) կառավարմանը: Սեփականատիրոջ՝ համայնքի գույքի օգտագործման հիման վրա առևտրային կազմակերպությունը կարող է թողարկել և իրացնել արտադրանք, կատարել աշխատանքներ, մատուցել ծառայություններ: Այլ կերպ՝ «Գ.յումրու բնակարանների սպասարկում» ՓԲԸ–ն հանդիսացել է քաղաքացիական իրավունքի նոր սուբյեկտ, որի հիմնական նպատակը եղել է շահույթի ստացումը: Այսպիսի առևտրային կազմակերպության իրավական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն պետք է այնպես կազմակերպի իր գործունեությունը, որպեսզի ստացած շահույթի հաշվին բավարարի և՛ իր, և՛ սեփականատիրոջ շահերը:

16. ՀՀ քրեական օրենսգրքի 200–րդ հոդվածի սուբյեկտը հատուկ է՝ ի թիվս այլոց, առևտրային կազմակերպության կառավարչական գործառույթներ իրականացնող ծառայող: ՀՀ քրեական օրենսգրքի 200–րդ հոդվածի հատուկ սուբյեկտին ապօրինաբար դրամ, արժեթղթեր կամ այլ գույք է տրվում կամ նրանց գույքային բնույթի ծառայություններ են մատուցվում, որպեսզի նրանք, իրենց գրաված դիրքի հետ կապված, կաշառք տվողի օգտին կատարեն որոշակի գործողություններ (անգործություն):

17. Սույն գործի նյութերից երևում է, որ Ռ.Ազատյանը հանդիսացել է առևտրային կազմակերպության կառավարչական գործառույթներ իրականացնող ծառայող, քանի որ ամբաստանյալ Ռ.Ազատյանի կողմից ապօրինաբար դրամ ստանալը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը) կապված է առևտրային կազմակերպությունում նրա զբաղեցրած դիրքի, ինչպես նաև նրա կողմից իրականացվող հատուկ լիազորությունների շրջանակի հետ: Նրանից է կախված եղել տուժողին պատկանող տնակը հաշվառելու հարցը, վերջինով էլ, իր հերթին, պայմանավորված է եղել տուժողին հետագայում բնակարան հատկացնելու հարցի լուծումը: Հետևաբար, Ռուբեն Ազատյանը հանդիսանում է առևտրային կաշառքի համար քրեական պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի իմաստով առևտրային կազմակերպության կառավարչական գործառույթներ իրականացնող ծառայող:

18. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ռ.Ազատյանը պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալու համար քրեական պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311.1-րդ հոդվածի 5-րդ մասի իմաստով հանրային ծառայող չի համարվում, նա հանդիսացել է հանցագործության սուբյեկտ ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 311.1-րդ հոդվածի 5-րդ մասի, այլ 200-րդ հոդվածի 5-րդ մասի իմաստով, ուստի նրան մեղսագրվող արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի ոչ թե 311.1-րդ հոդվածի 1-ին, այլ 200-րդ հոդվածի 4-րդ մասով: Դրա համար էլ նա ենթարկվել է քրեական պատասխանատվության և պատժի (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը):

19. Ուստի, ստորադաս դատարանի կողմից Ռ.Ազատյանի կատարած արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 311<sup>1</sup>-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ճիշտ է վերաորակվել ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 4-րդ մասի, որի համար էլ վերջինս ենթարկվել է քրեական պատասխանատվության և պատժի:

20. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր, ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ռուբեն Վաչիկի Ազատյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 4-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 16-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանությունները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

17.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության

ԵԿԴ/0009/11/09

վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵԿԴ/0009/11/09

նախագահող դատավոր՝ Ս.Համբարձումյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝*

Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝*

Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ

Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ

Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ

*քարտուղարությամբ*

*դատախազ*

Կ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

2 հունիսի 2009 թվական

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով խափանման միջոց կալանավորումը չհեռանալու մասին ստորագրությամբ փոխարինելու մասին որոշումը և դրա հետ կապված իրավունքների սահմանափակումները վերացնելու պահանջի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 24-ի որոշման դեմ պաշտպան Ալեքսանդր Ծատինյանի բերած վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2008 թվականի սեպտեմբերի 6-ին ՀՀ ոստիկանության ՔՀԳ վարչության և «Զվարթնոց» օ/կ գծային բաժնի աշխատակիցների կողմից բերման է ենթարկվել Ռուկ-

րաինայի Չսպորոժիեի մարզի Շևչենկոյի շրջանի ՆԳԲ կողմից Ուկրաինայի քրեական օրենսգրքի 185–րդ հոդվածի 2–րդ մասի հատկանիշներով 2007 թվականի հունիսի 22–ից հետախուզման մեջ գտնվող Անդրանիկ Գրիգորի Պողոսյանը:

2008 թվականի սեպտեմբերի 8–ին Ա.Պողոսյանը տեղափոխվել է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ:

2. 2008 թվականի սեպտեմբերի 9–ին ՀՀ գլխավոր դատախազությունը Ուկրաինայի իրավասու մարմիններին գրավոր հայտնել է Հայաստանի Հանրապետությունում Ա.Պողոսյանի հայտնաբերման, ինչպես նաև այն մասին, որ վերջինս հանդիսանում է ՀՀ քաղաքացի: Նույն գրությամբ Ուկրաինայի իրավասու մարմիններից պահանջվել է Ա.Պողոսյանի նկատմամբ Ուկրաինայում հարուցված քրեական գործը:

3. 2008 թվականի հոկտեմբերի 16–ին ՀՀ գլխավոր դատախազության միջազգային իրավական կապերի բաժնի դատախազ Գ.Տիգրանյանի կողմից որոշում է կայացվել Ա.Պողոսյանի խափանման միջոցը՝ կալանավորումը, չհեռանալու մասին ստորագրությամբ փոխարինելու մասին՝ մինչև Ուկրաինայի իրավասու մարմիններից պահանջված քրեական գործի ստացումը:

4. 2008 թվականի դեկտեմբերի 10–ին Ա.Պողոսյանի պաշտպան Ա.Ծատինյանը ընտրված խափանման միջոցը վերացնելու մասին միջնորդություն է ներկայացրել դատախազ Գ.Տիգրանյանին: 2008 թվականի դեկտեմբերի 30–ի գրությամբ դատախազ Գ.Տիգրանյանը մերժել է պաշտպանի միջնորդությունը:

5. 2009 թվականի հունվարի 22–ին Ա.Պողոսյանի պաշտպան Ա.Ծատինյանի կողմից դատախազ Գ.Տիգրանյանի 2008 թվականի հոկտեմբերի 16–ի որոշումը բողոքարկվել է Երևանի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան:

2009 թվականի փետրվարի 11–ի որոշմամբ Երևանի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը մերժել է դատախազ Գ.Տիգրանյանի 2008 թվականի հոկտեմբերի 16–ի որոշումը և դրա հետ կապված իրավունքների սահմանափակումներ հանդիսացող հայտարարված հետախուզումը և քրեական հետապնդումը վերացնելու մասին Ա.Պողոսյանի պաշտպան Ա.Ծատինյանի բողոքը:

6. 2009 թվականի փետրվարի 25–ին պաշտպանի կողմից Երևանի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի փետրվարի 11–ի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերվել:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 24–ի որոշմամբ պաշտպանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն: Երևանի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի փետրվարի 11–ի որոշումը բեկանվել է, իսկ խափանման միջոց կալանավորումը չհեռանալու մասին ստորագրությամբ փոխարինելու մասին որոշումը ու դրա հետ կապված իրավունքների սահմանափակումները վերացնելու պահանջի վերաբերյալ փաստաբան Ա.Ծատինյանի կողմից 2009 թվականի հունվարի 19–ին՝ փոստին հանձնելու միջոցով Երևանի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան ներկայացված բողոքը թողնվել է առանց քննության՝ դատախազի կայացրած որոշման բողոքարկման մինչդատական կարգը պահպանված չլինելու պատճառով:

7. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 24-ի որոշման դեմ 2009 թվականի ապրիլի 4-ին պաշտպանը վճռաբեկ բողոք է բերել:

2009 թվականի մայիսի 8-ին ՀՀ Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ») բողոքն ընդունել է վարույթ:

### **Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող վիստակական հանգամանքները**

8. Ուկրաինայի Հանրապետությունում 2000 թվականի փետրվարի 15-ին թիվ 2000004 քրեական գործով Ա.Պողոսյանին մեղադրանք է առաջադրվել ՈւՀ քրեական օրենսգրքի 140-րդ հոդվածի 2-րդ մասով /ներկայումս՝ Ուկրաինայի Հանրապետության քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մաս, որը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությանը/:

Ուկրաինայի Հանրապետության Չապորոժե քաղաքի Շևչենկոյի շրջանի դատարանի 2000 թվականի հուլիս ամսվա որոշմամբ Ա.Պողոսյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում և նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, փոխարինվել է կալանքով:

### **Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքաբերը գտնում է, որ ինչպես առաջին ատյանի, այնպես էլ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

Մասնավորապես, առաջին ատյանի դատարանը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ, 15-րդ, 75-րդ, 290-րդ հոդվածների պահանջները, ըստ էության անդրադարձել է և որպես բողոքի մերժման հիմք նշել է Ա.Պողոսյանին մեղսագրվող արարքի նկատմամբ վաղեմության ժամկետների կիրառման խնդիրը: Բացի այդ, դատարանը, հղում կատարելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ և 290-րդ հոդվածներին, գտել է, որ բողոքը ենթակա է մերժման մաս այն հիմքով, որ դատախազի որոշումը բողոքարկվել է դատարան՝ առանց այն վերադաս դատախազին բողոքարկելու:

Բողոքաբերը նշում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, հաշվի չառնելով գործի վիստակական հանգամանքները, բողոքը մասնակի բավարարելու հիմք է դիտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը և գտել, որ դատախազ Գ.Տիգրանյանի որոշումը պետք է բողոքարկվեր վերադաս դատախազին և այնուհետև դատարան: Ըստ բողոք բերող անձի, սակայն, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածում նման դրույթ նախատեսված չէ,

ավելին, այդ հոդվածի 1-ին մասը հնարավորություն է տալիս համապատասխան որոշումը բողոքարկել անմիջապես դատական կարգով:

10. Բողոքաբերը նշում է նաև, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը պարտավոր էր գործը քննել բողոքի սահմաններում և իրավունք չուներ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանին ներկայացված բողոքը առանց քննության թողնել: Ի հիմնավորումն ասվածի՝ բողոքաբերը վկայակոչում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածը, որն ամրագրում է ՀՀ վերաքննիչ դատարանի լիազորությունները և պնդում, որ նշված դատարանն իրավասու չէ գործն ըստ էության լուծող և ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում մասնակի բավարարել բողոքը և չբավարարված մասով առանց քննության թողնել ընդհանուր իրավասության դատարան ներկայացված բողոքը:

11. Ըստ բողոք բերող անձի՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը թույլ է տվել նաև քրեական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի խախտում, քանի որ վերաքննիչ դատարանում գործը քննվել է առանց դատախազի մասնակցության:

Հիմք ընդունելով իր կողմից նշված փաստարկները՝ բողոքաբերը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը թույլ է տվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ, որոնք Ա.Պողոսյանին գրկել են օրենքով երաշխավորված իրավունքներից, խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատական ակտը վերջինիս համար առաջացրել է ծանր հետևանքներ, քանի որ դրա արդյունքում նա գրկվում է իր իրավունքները սահմանափակող՝ անհիմն և անօրինական քրեական հետապնդման, քրեական հետախուզման և Գ.Տիգրանյանի 2008 թվականի հոկտեմբերի 16-ին կայացված որոշումը վերացնելու հնարավորությունից: Ուստի բողոքաբերը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 24-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

### **Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի այն հարցին, թե Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը իրավասու էր արդյոք սույն գործով ներկայացված բողոքը քննել ըստ էության:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

(...)

3. Բողոքը կարող է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն ստանալու կամ, եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում:

(...)»:

Վերոշարադրյալ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից երևում է, որ մինչդասական վարույթն իրականացնող մարմինների որոշումների ու գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել դատախազին բողոքարկվելուց և ներկայացված բողոքին վերջինիս կողմից բավարարում չտրվելու դեպքում միայն: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասն այս ընթացակարգի առումով որևէ բացառություն չի նախատեսում:

Նշված հոդվածի 3-րդ մասը, ելնելով անձի իրավունքների դատական պաշտպանության արդյունավետության պահանջից, որպես մինչդասական վարույթն իրականացնող մարմինների գործողությունների և որոշումների՝ դատական կարգով բողոքարկման լրացուցիչ հիմք, նախատեսում է այն, որ բողոքը կարող է վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան ներկայացվել դատախազի կողմից դրան պատասխանելու մեկամսյա ժամկետը սպառվելուց հետո մեկ ամիս հետո՝ այն դեպքում, եթե ներկայացված բողոքը դատախազի կողմից որևէ արձագանք չի ստացել:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «(...) Քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի գործողությունները և որոշումները կարող են բողոքարկվել համապատասխան դատախազին, դատախազի որոշումները և գործողությունները՝ վերադաս դատախազին (...): Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում քրեական հետապնդման մարմնի գործողությունները և որոշումները կարող են բողոքարկվել դատարան»:

Նշված հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունների վերլուծությունից երևում է, որ դատախազի որոշումները, նախքան դատական կարգով բողոքարկվելը, բողոքարկվում են վերադասության կարգով, այսինքն՝ վերադաս դատախազին:

14. Սույն գործի նյութերից երևում է, որ 2008 թվականի հոկտեմբերի 16-ին ՀՀ գլխավոր դատախազության միջազգային իրավական կապերի բաժնի դատախազ Գ.Տիգրանյանի կողմից որոշում է կայացվել Ա.Պողոսյանի խափանման միջոցը՝ կալանավորումը, չհեռանալու մասին ստորագրությամբ փոխարինելու մասին: Ա.Պողոսյանի պաշտպանի կողմից 2008 թվականի դեկտեմբերի 10-ին ընտրված խափանման միջոցը վերացնելու մասին միջնորդություն է ներկայացվել դատախազ Գ.Տիգրանյանին, որը վերջինիս կողմից 2008 թվականի դեկտեմբերի 30-ի գրությամբ մերժվել է (տե՛ս սույն որոշման 3-րդ, 4-րդ կետերը): 2009 թվականի հունվարի 22-ին Ա.Պողոսյանի պաշտպան Ա.Ծատիսյանի կողմից դատախազի 2008 թվականի հոկտեմբերի 16-ի որոշումը բողոքարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը): Այսինքն սույն գործով քրեական հետապնդման մարմնի որոշումը չէր բողոքարկվել վերադասության կարգով և բողոքարկվել էր միանգամից առաջին ատյանի դատարան:



Երևանի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103–րդ և 290–րդ հոդվածների 1–ին մասերի պահանջները պահպանված չլինելու հիմքով մերժել է ներկայացված բողոքը, սակայն իր որոշման մեջ անդրադարձել և հանգամանորեն քննության է առել նաև բողոքի հիմքերը (գ/թ. 36–38):

Հիմք ընդունելով վերոգրյալ դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը իրավասու չէր սույն գործով ներկայացված բողոքի քննության ժամանակ անդրադառնալ բողոքի հիմքերին, քանի որ այն ներկայացվել էր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103–րդ և 290–րդ հոդվածների 1–ին մասերով նախատեսված դատավարական ընթացակարգի խախտմամբ, այն է՝ դատախազի որոշման դեմ բողոքը ներկայացվել էր դատարան՝ առանց վերադաս դատախազին բողոքարկելու:

15. Սույն գործով վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի նաև այն հարցին, թե ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իրավասու էր արդյոք մասնակի բավարարել պաշտպան Ա.Ծատինյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը՝ դատախազի որոշման բողոքարկման քրեադատավարական կարգը պահպանված չլինելու հիմքով առանց քննության թողնելով այն:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ «Այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածով սահմանված պահանջներին, բերել է այն անձը, ով չուներ այդ իրավունքը կամ բողոքը ժամկետանց է կամ բերվել է այնպիսի դատական ակտի դեմ, որը ենթակա չէ վերաքննիչ բողոքարկման կամ բերվել է 375<sup>4</sup> հոդվածի պահանջի խախտմամբ, վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության»:

ՀՀ քրեական օրենսգրքի նշված հոդվածի բովանդակությունից երևում է, որ այն սպառնիչ թվարկում է վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու հիմքերը:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376<sup>1</sup>–րդ հոդվածի 5–րդ կետի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են առաջին ատյանի դատարանի՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ–հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքների կապակցությամբ կայացված որոշումները:

Վերոշարադրյալ հոդվածների վերլուծությունից երևում է, որ սույն գործով առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտը, այն է՝ պաշտպան Ա.Ծատինյանի դիմում–բողոքը ՀՀ գլխավոր դատախազության միջազգային իրավական կապերի բաժնի դատախազ Գ.Տիգրանյանի 16.10.2008թ. կայացրած որոշումը և դրա հետ կապված իրավունքի սահմանափակումներ հանդիսացող հետախուզումը և քրեական հետապնդումը վերացնելու մասին մերժելու վերաբերյալ որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376<sup>1</sup>–րդ հոդվածի 5–րդ կետի ուժով հանդիսանում է վերաքննության կարգով բողոքարկման ենթակա որոշում: Հետևաբար ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, հիմք ընդունելով նաև այն հանգամանքը, որ վերաքննիչ բողոքը բերվել է 381–րդ հոդվածի 2–րդ մասով նախատեսված պահանջների պահպանմամբ, իրավասու չէր այն թողնել առանց քննության:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը պետք է բողոքը վարույթ ընդունելուց հետո պետք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով մերժեր վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

18. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշման պատճառաբանական մասում առկա մոտեցումները հիմք են տալիս ներկայացված վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան նոր քննության:

19. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ և 290-րդ հոդվածների 1-ին մասերի, ինչպես նաև 381-րդ հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն՝ բեկանել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի փետրվարի 11-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 24-ի որոշումները և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

18.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության

ԱՐԳ/0117/01/08

վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԱՐԳ/0117/01/08

նախագահող դատավոր՝ Ա.Գանիելյան  
դատավորներ՝ Մ.Ռեհանյան, Ա.Հովհաննիսյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ*՝ Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ*՝ Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԳԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Կ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

2 հունիսի 2009 թվական

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 6-ի որոշման դեմ ամբաստանյալ Ռուբեն Գվիղոնի Հովակիմյանի բերած վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2008 թվականի հոկտեմբերի 28-ին հարուցվել է թիվ 58209708 քրեական գործը:
2. 2008 թվականի նոյեմբերի 3-ին Ռուբեն Գվիղոնի Հովակիմյանը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով ներգրավվել է որպես մեղադրյալ:

3. Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 24-ի դատավճռով դատական քննության արագացված կարգի կիրառմամբ Ռ.Հովակիմյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել է ազատազրկման 6 /վեց/ ամիս ժամկետով:

4. Ամբաստանյալ Ռ.Հովակիմյանի կողմից բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 6-ի որոշմամբ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 24-ի դատավճիռը թողնվել է օրինական ուժի մեջ, իսկ ամբաստանյալի վերաքննիչ բողոքը մերժվել է:

5. Վճռաբեկ բողոքը բերվել է դատապարտյալ Ռ.Հովակիմյանի կողմից:

2009 թվականի մայիսի 8-ին Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով («վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ») բողոքն ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները**

6. Ռ. Հովակիմյանը դատապարտվել է այն բանի համար, որ 1989-90 թվականներին ապօրինի կերպով ձեռք է բերել և մինչև 2008 թվականի հոկտեմբերի 27-ն իր սեփական տանը պահել է 5.6 մմ տրամաչափի թմրուկավոր ինքնաշեն ատրճանակ և 5.6 մմ տրամաչափի «6868» համարի ТО3-8 տեսակի ակոսափող հրացան, որոնք 2008 թվականի հոկտեմբերի 27-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության Արմավիրի աշխատակիցների կողմից օպերատիվ տվյալներն ստուգելիս զննությամբ հայտնաբերվել և առգրավվել են:

**Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքաբերը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

Նա նշում է, որ հաշվի չառնելով գործի փաստական հանգամանքները՝ մասնավորապես այն, որ 2007 թվականին ինքը ենթարկվել է սրտի բարդ վիրահատության, տառապում է շաքարախտով, նախկինում արատավորված չի եղել, ակտիվ մասնակցություն է ունեցել Վարաբաղյան շարժման մարտերին, Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարաններն իր նկատմամբ նշանակել են անարդարացի՝ հանցագործության ծանրությանը և իր անձին չհամապատասխանող պատիժ՝ դրանով թույլ տալով նյութական իրավունքի խախտում, որը կարող է ծանր հետևանքներ առաջացնել իր համար: Բողոքաբերի կարծիքով, դա-

տարանները վերոնշյալ պայմաններում պետք է կիրառեին ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի պահանջները, ուստի նա խնդրում է մասնակիորեն բեկանել և փոփոխել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 6-ի որոշումը, և իր նկատմամբ կիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի պահանջները՝ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն հետևյալ պատճառաբանություններով.

8. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի այն հարցին, թե ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն արդյոք պետք է Ռ.Հովակիմյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառեր:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե դատարանը կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

Վերոնշյալ հարցի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն այն տեսակետն է արտահայտել, որ եթե դատարանը, կայացնելով մեղադրական դատավճիռ ամբաստանյալի նկատմամբ նշանակում է քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածում թվարկված պատժատեսակներից (կալանք, ազատագրկում, կարգապահական գումարտակում պահելը) որևէ մեկը՝ սահմանելով դրա չափը, այնուհետև համոզված լինելով, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց նշանակված պատիժը փաստացի կրելու՝ որոշում է դատապարտյալի վրա որոշակի պարտականություններ դնելով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել (տես Վճռաբեկ դատարանի *Գ.Սարտիրոսյանի* վերաբերյալ 2008 թվականի փետրվարի 1-ի ՎԲ-01/08 որոշումը):

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հիմնական պայմանը պատճառաբանված լինելն է: Նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը պետք է հանգամանորեն քննության առնի ինչպես հանցագործության կատարման, այնպես էլ հանցավորի անձին վերաբերող բոլոր հանգամանքները: Կարևորն այն է, որ հանգի հիմնավոր եզրակացության, որ դատապարտյալի ուղղումը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու:

Այդ հոդվածի կիրառումը հանցագործության տեսակի հետ կապված որևէ սահմանափակման չի ենթարկվում: Դրա կիրառումը սահմանափակված չէ նաև հանցավոր արարքի վտանգավորության աստիճանով ու բնույթով, ինչպես նաև անձանց շրջանակով, որոնց նկատմամբ այն չի կարող կիրառվել: (Տե՛ս նաև *Ս.Ներսիսյանի* գործով 2007 թվականի հունիսի 12-ի Վճռաբեկ դատարանի ՎԲ-124/07 որոշումը):

9. Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի՝ դատավճիռ կայացնելիս դատարանը ներկայացված հաջորդականությամբ լուծում է հետևյալ հարցերը` (...)

6. Ենթակա է արդյոք պատիժ ամբաստանյալն իր կատարած հանցանքի համար.

7. ինչ պատիժ պետք է նշանակվի ամբաստանյալի նկատմամբ.

8. ամբաստանյալն արդյոք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը:

Նշված իրավադրույթից երևում է, որ կոնկրետ պատժաչափով կոնկրետ պատժատեսակի նշանակումը և արդեն իսկ նշանակված պատիժը կրելու անհրաժեշտության հարցի լուծումն իրենցից ներկայացնում են պատժի հարցերի դատական լուծման գործընթացի ինքնուրույն և հաջորդական փուլեր: Այսինքն՝ դատարանը նախ և առաջ որոշում է ամբաստանյալի պատժի ենթակա լինելու հարցը, այնուհետև՝ դրա տեսակը և չափը, որից հետո որոշում՝ ամբաստանյալն արդյոք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը, թե ոչ՝ հաշվի առնելով նշանակված պատիժն առանց փաստացի կրելու պատժի նպատակներին հասնելու հնարավորության հանգամանքը:

Վերը հիշատակված հարցերի լուծման ընթացքում դատարանը պետք է ղեկավարվի ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի մի շարք դրույթներով:

Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժն արդարացի է, եթե համապատասխանում է հանցանքի ծանրությանը, դրա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար է անձին ուղղելու և նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով նույն օրենսգրքի ընդհանուր մասի դրույթները:

Պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը քննելիս դատարանը հաշվի է առնում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ և 63-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Հանցակազմի սահմաններից դուրս գտնվելով՝ դրանք բնութագրում են ինչպես կատարած հանցագործությունը, այնպես էլ հանցավորի անձնավորությունը, հնարավորություն են տալիս պատկերացում կազմել հանցավորի անձնավորության և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին՝ համապատասխանաբար բարձրացնելով կամ իջեցնելով պատժաչափը: Դրանց գնահատմամբ է հնարավոր յուրաքանչյուր կոնկրետ գործով անհատական մոտեցում ցուցաբերել՝ ինչպես պատժի տեսակը և չափը որոշելիս, այնպես էլ այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս:

10. Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի՝ պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածով ամրագրված՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու չափանիշները սպառնիչ չեն: Պատիժը պայմանականորեն չկիրառելու իրավական հիմքերը բացահայտելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածում սահմանված իրավադրույթներն անհրաժեշտ է մեկնաբանել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված պատժի նպատակների համատեքստում, համաձայն որի՝ պատժի նպատակ

տակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

Այլ կերպ՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս իրավասու դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է քննարկի նաև պատժի՝ սոցիալական արդարության վերականգնման և պատժի ենթարկված անձի ուղղվելու նպատակների իրացման հարցը:

Սոցիալական արդարությունը վերականգնելու և պատժի ենթարկված անձի ուղղվելու մասին կարող է վկայել հանցագործությունից հետո հանցավորի դրսևորած վարքագիծը:

11. Գործի տվյալներով հիմնավորված է, որ Ռ.-Հովակիմյանը նախկինում արատավորված չի եղել, բնութագրվել է դրական, 2007 թվականին տարել է սրտի բարդ վիրահատություն, տառապում է շաքարախտով, ակտիվ մասնակցություն է ունեցել Դևրաբադյան շարժման մարտերին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման առումով վերը նշված հանգամանքները ենթակա են գնահատման և դրանց գնահատված չլինելը հիմք է տալիս բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի փետրվարի 27-ի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

12. Բողոքարկված դատական ակտի բեկանումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Ռ.-Հովակիմյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում ընդունելիս ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը չի քննարկել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով ամրագրված պատժի նպատակների իրացվելության հարցը, գործի քննության ընթացքում թույլ է տրվել առերևույթ դատական սխալ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ռուբեն Գվիդոնի Հովակիմյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 6-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

19.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության

ԵԿԴ/0111/11/08

վերաքննիչ քրեական դատարանի ԵԿԴ/0111/11/08

որոշում

նախագահող դատավոր՝ Ս. Համբարձումյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՄԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատախազ* Լ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ

29 հունիսի 2009 թվական

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2009 թվականի մայիսի 13-ի որոշման դեմ «ԷՍԱԿ-Չորրորդ» ավտոտեխսպասարկում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչների բերած վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2008 թվականի փետրվարի 25-ին «ԷՍԱԿ-Չորրորդ» ավտոտեխսպասարկում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ՀՀ ոստիկանություն դիմում է ներկայացրել այն մասին, որ ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթի տարածքային ստորաբաժանման կողմից



ՀՀ տնտեսական դատարանի 2007 թվականի մայիսի 31-ի վճռի հիման վրա իր սեփականության իրավունքի պետական գրանցում չի կատարվել:

Գիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով ՀՀ ոստիկանության Շենգավիթի քննչական բաժնի քննիչ Կ.Շառոյանի 2008 թվականի մարտի 25-ի որոշմամբ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման պաշտոնատար անձ Էդուարդ Ներսեսի Կարապետյանի նկատմամբ հարուցվել է թիվ 11105608 քրեական գործը:

2. 2008 թվականի մայիսի 16-ին կայացվել է հարուցված թիվ 11105608 քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում՝ հիմք ընդունելով ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասը:

3. 2008 թվականի նոյեմբերի 28-ին «ԷՄԱԿ-Չորրորդ» ավտոտեխսպասարկում ՍՊԸ-ի կողմից նշված որոշումը բողոքարկվել է ՀՀ գլխավոր դատախազին:

2008 թվականի դեկտեմբերի 12-ին վերոնշյալ բողոքին ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների գործերով վարչության պետ Ա.Աշրաֆյանի կողմից պատասխան է ներկայացվել գրությամբ, որով բողոքաբերին տեղեկացվել է, որ քննիչի կողմից կայացված որոշումն օրինական է, հիմնավորված, և այն վերացնելու հիմքեր չկան:

4. 2008 թվականի դեկտեմբերի 22-ին «ԷՄԱԿ-Չորրորդ» ավտոտեխսպասարկում ՍՊԸ-ն դատախազի վերոնշյալ գրությունը բողոքարկել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով վերացնել այն: Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում բողոքաբերը լրացրել է իր բողոքը՝ խնդրելով վերացնել նաև քննիչի՝ քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 2008 թվականի մայիսի 16-ի որոշումը և քննիչին հարկադրել վերսկսել տվյալ գործով վարույթը:

5. 2009 թվականի ապրիլի 15-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը բավարարել է բողոքը. որոշում է կայացրել քննիչի 2008 թվականի մայիսի 16-ի որոշումը և դատախազի 2008 թվականի դեկտեմբերի 18-ի գրությունը վերացնելու մասին և քննիչին պարտավորեցրել է վերսկսել թիվ 11105608 քրեական գործով վարույթը:

6. 2009 թվականի ապրիլի 23-ին ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների գործերով վարչության դատախազ Լ. Թադևոսյանը ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի ապրիլի 15-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել:

2009 թվականի մայիսի 13-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը բավարարել է դատախազի բողոքը. բեկանել է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի ապրիլի 15-ի որոշումը, իսկ դատախազի 2008 թվականի դեկտեմբերի 12-ի գրության դեմ «ԷՄԱԿ-Չորրորդ» ՍՊԸ-ի 2008 թվականի դեկտեմբերի 22-ի բողոքը մերժել է՝ վերադատության կարգով բողոքարկման կարգը պահպանված չլինելու հիմքով:

7. 2009 թվականի մայիսի 25-ին «ԷՄԱԿ-Չորրորդ» ավտոտեխսպասարկում ՍՊԸ ներկայացուցիչները ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մայիսի 13-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք են բերել, որը 2009 թվականի հունիսի 16-ին

ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ընդունվել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.**

8. 2006 թվականի օգոստոսի 1-ին Երևանի քաղաքապետի թիվ 1251-4 որոշմամբ Երևան քաղաքի Արին-Բերդի 1 նրբ., թիվ 1 հասցեում գտնվող շենք-շինությունների զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 3.440.0 քմ մակերեսով հողամասը սեփականության իրավունքով փոխանցվել է «ԷՄԱԿ-Չորրորդ» ավտոտեխսպասարկում ՍՊԸ-ին: 2006 թվականի օգոստոսի 11-ին Երևան քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրվել է նաև Հ 2274-2006 հողամասի գլխավոր հատակագիծը: Քաղաքապետարանի այս որոշման հիման վրա «ԷՄԱԿ-Չորրորդ» ավտոտեխսպասարկում ՍՊԸ-ն դիմում է ներկայացրել ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանում պետական գրանցում կատարելու համար, սակայն այն 2006 թվականի հոկտեմբերի 11-ին մերժվել է:

9. 2007 թվականի փետրվարի 27-ին «ԷՄԱԿ-Չորրորդ» ավտոտեխսպասարկում ՍՊԸ-ն դիմում է ներկայացրել ՀՀ տնտեսական դատարան ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման գործողություններն անվավեր ճանաչելու և պետական գրանցում կատարելուն պարտավորեցնելու պահանջներով:

ՀՀ տնտեսական դատարանը 2007 թվականի մայիսի 31-ին վճիռ է կայացրել, որով բավարարվել է այս դիմումը. ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման 2006 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 3373 ակտն անվավեր է ճանաչվել, և վերջինս պարտավորեցվել է գրանցել Երևան քաղաքի Արին-Բերդի 1 նրբ. թիվ 1 հասցեում գտնվող 3.440.0 քմ. հողամասի և անշարժ գույքի նկատմամբ «ԷՄԱԿ-Չորրորդ» ավտոտեխսպասարկում ՍՊԸ-ի իրավունքը:

10. 2007 թվականի սեպտեմբերի 7-ին ՀՀ տնտեսական դատարանի կողմից տրվել է կատարողական թերթ, որը 2007 թվականի հոկտեմբերի 10-ին ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն հարկադիր կատարման:

«ԷՄԱԿ-Չորրորդ» ավտոտեխսպասարկում ՍՊԸ ներկայացուցիչը դիմում է ներկայացրել ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթի տարածքային ստորաբաժանում՝ ՀՀ տնտեսական դատարանի 2007 թվականի մայիսի 31-ի վճիռի հիման վրա իր սեփականության իրավունքի պետական գրանցման համար, սակայն պետական գրանցում այդպես էլ չի կատարվել, ինչից հետո վերջիններս դիմել են ՀՀ ոստիկանություն:

**Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Վճռաբեկ բողոք բերած անձը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մայիսի 13–ի որոշումը խախտում է ՀՀ Սահմանադրության 31–րդ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 1–ին լրացուցիչ արձանագրության 1–ին և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135–րդ հոդվածներով երաշխավորված իր սեփականության իրավունքը, ինչպես նաև «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով երաշխավորված իր մյուս իրավունքները, որովհետև ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը, բավարարելով ՀՀ գլխավոր դատախազության վերաքննիչ բողոքը, իրեն զրկել է իր սեփականությունն ազատ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու հնարավորությունից:

12. Բողոքաբերը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37–րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 74–րդ հոդվածները, քանի որ հաշվի չի առել, որ սույն գործով բացակայել են վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերը:

13. Ըստ բողոքաբերի, ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18–րդ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 13–րդ հոդվածները, քանի որ հաշվի չի առել այն հանգամանքը, որ իրավասու պետական մարմինների գործողությունների արդյունքում ինքը զրկվել է իր իրավունքների արդյունավետ պաշտպանության հնարավորությունից:

14. Բողոքաբերը նշում է, որ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը չի կիրառել և սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263–րդ և 290–րդ հոդվածները, քանի որ «ԷՄԱԿ–Չորրորդ» ավտոտեխնապատարկում ՍՊԸ–ն, քննիչի որոշումը՝ դատախազին, իսկ վերջինիս գրությունն էլ դատարան բողոքարկելով, պահպանել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263–րդ և 290–րդ հոդվածների պահանջները:

15. Ըստ բողոքաբերի, ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը խախտել է նաև ՀՀ դատական օրենսգրքի 15–րդ հոդվածի 4–րդ մասի պահանջները, քանզի սույն գործով չի կիրառել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն նախադեպային որոշումները, որոնք իր կողմից վկայակոչվել էին ՀՀ քրեական վերաքննիչ դատարան ներկայացրած առարկություններում:

Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2009 թվականի մայիսի 13–ի որոշումը, օրինական ուժ տալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի ապրիլի 15–ի որոշմանը:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

16. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացվել է երկու իրավական հարց, որոնցից առաջինը վերաբերում է նրան, թե Երևանի կենտրոն և Նորք–Մարաշ

համայնքների ընդհանուր իրավասության դատարանն իրավասո՞ւ էր արդյոք քննության առնել դատախազի գրության դեմ ներկայացված բողոքը:

17. Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում բողոքարկվող դատավարական ակտերի վերաբերյալ իր դիրքորոշումը Վճռաբեկ դատարանն արտահայտել է *Մ.Ավետիսյանի* վերաբերյալ 2009 թվականի հունիսի 29-ի ԵԿԳ/0019/11/09 որոշման 13-րդ կետում, որի համաձայն՝ « (...) եթե դատախազին ներկայացված բողոքի կապակցությամբ նա որոշում չի կայացրել, այլ բողոքաբերին պատասխանել է ցանկացած այլ եղանակով, որը նախատեսված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, ապա, եթե չեն անցել ներկայացված բողոքի կապակցությամբ դատախազի կողմից որոշում կայացնելու դատավարական ժամկետները, այդ պատասխանների նկատմամբ չեն կարող կիրառվել ո՛չ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կանոններն ընդհանրապես, ո՛չ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի կանոնները մասնավորապես: Այլ կերպ ասած, եթե դատախազի կողմից իրեն ուղղված բողոքի կապակցությամբ կայացվել է ցանկացած այլ ակտ և ոչ թե որոշում, ապա այդ ակտը դատական բողոքարկման առարկա հանդիսանալ չի կարող: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատախազի կողմից որոշում կայացնելու դատավարական ժամկետներն անցնելուց հետո ընդհանուր իրավասության դատարան պետք է բողոքարկվի դատախազի անգործությունը, քանի որ քրեադատավարական օրենքով նախատեսված ընթացակարգը չպահպանելն այդ դեպքում հավասարազոր է անգործության»:

Սույն գործի նյութերից երևում է, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2009 թվականի ապրիլի 15-ի որոշմամբ բավարարել է դատախազի գրության դեմ բերված բողոքը (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը սույն գործով իրավասու չէր ըստ էության քննության առնել դատախազի գրության դեմ ներկայացված բողոքը:

18. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է՝ ՀՀ գլխավոր դատախազին ուղղված բողոքը, եթե այն կատարման է հանձնվել ՀՀ գլխավոր դատախազության ստորաբաժանման ղեկավարին, նախքան դատական կարգով բողոքարկվելը ենթակա՞ է արդյոք կրկին բողոքարկման վերադատության կարգով:

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 23-րդ կետի համաձայն՝ դատախազը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը և նրան ենթակա դատախազներն են, նրանց տեղակալները և օգնականները:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Գլխավոր դատախազն իրականացնում է դատախազության ղեկավարումը»:

Նույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գլխավոր դատախազը վերադաս է բոլոր դատախազների նկատմամբ»:

Վերոշարադրյալ հոդվածների վերլուծությունից երևում է, որ ՀՀ գլխավոր դատախազին ուղղված բողոքը վերադատության կարգով այլևս չի կարող բողոքարկվել, քա-

նի որ ՀՀ գլխավոր դատախազին վերադաս դատախազ ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ բողոքաբերը քննիչի որոշումը բողոքարկել է ՀՀ գլխավոր դատախազին, ում անունից հանդես է եկել ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների գործերով վարչության պետ Ա.Աշրաֆյանը (տե՛ս սույն որոշման 3–րդ կետը):

Այսինքն սույն գործով Ա.Աշրաֆյանը գործել է ՀՀ գլխավոր դատախազի կարգադրությամբ և նրա անունից, ուստի տվյալ դեպքում Ա.Աշրաֆյանի գրությունը իրավական առումով հավասարագոր է եղել ՀՀ գլխավոր դատախազի գրությանը: Այլ կերպ ասած սույն գործով բողոքաբերն արդեն բողոք ներկայացրել է ՀՀ գլխավոր դատախազին և սպառել է իր իրավունքների պաշտպանության այդ միջոցը՝ անկախ այն հանգամանքից, թե ով է հանդես եկել որպես ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարության կատարող:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ գլխավոր դատախազին ուղղված բողոքը, որը կատարման է հանձնվել ՀՀ գլխավոր դատախազության ստորաբաժանման ղեկավարին, ենթակա չէ կրկին բողոքարկման վերադասության կարգով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը թույլ է տվել քրեադատավարական օրենքի էական խախտում, մասնավորապես՝ սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290–րդ հոդվածի 1–ին մասը, ինչը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս բեկանել ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ քրեական դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92–րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403–406–րդ, 419–րդ, 422–424–րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը:

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: «ԷՄԱԿ–Չորրորդ» ավտոտեխսպասարկում ՍՊԸ–ի ներկայացուցիչների բողոքով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի ապրիլի 15–ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մայիսի 13–ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

20.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության ՀՅԶԲԴ 2/0086/01/08  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ՀՅԶԲԴ 2/0086/01/08

նախագահող դատավոր՝ Մ.Ռեհանյան  
դատավորներ՝ Ա.Գանիեյան, Ա.Հովհաննիսյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ Ե. ԳԱՆԻԵԼՅԱՆԻ Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

<i>քարտուղարությամբ</i>	Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատախազ</i>	Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ

29 հունիսի 2009 թվական ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Վլադիմիր Շավալի Գազարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104–րդ հոդվածի 2–րդ մասի 2–րդ, 10–րդ, 15–րդ կետերով, 235–րդ հոդվածի 1–ին և 4–րդ մասերով և 137–րդ հոդվածի 1–ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 4–ի որոշման դեմ դատապարտյալի և պաշտպան Լ.Գոգինյանի բերած վճռաբեկ բողոքները,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2008 թվականի մայիսի 17–ին Լոռու մարզի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 104–րդ հոդվածի 1–ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 19111008 քրեական գործը:

2. 2008 թվականի մայիսի 18-ին Վլադիմիր Ղազարյանը ձերբակալվել է:

2008 թվականի մայիսի 21-ին որոշում է կայացվել Վ.Ղազարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 10-րդ, 15-րդ կետերով, 235-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

3. 2008 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ Վ.Ղազարյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 10-րդ, 15-րդ կետերով, 235-րդ հոդվածի 1-ին և 4-րդ և 137-րդ հոդվածի 1-ին մասերով:

4. 2008 թվականի հուլիսի 18-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Հյուսիսային քրեական դատարան:

Հյուսիսային քրեական դատարանի 2008 թվականի նոյեմբերի 6-ի դատավճռով Վլադիմիր Շավալի Ղազարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 10-րդ, 15-րդ կետերով, 235-րդ հոդվածի 1-ին և 4-րդ և 137-րդ հոդվածի 1-ին մասերով և դատապարտվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 10-րդ, 15-րդ կետերով՝ ցմահ ազատազրկման, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման 2 /երկու/ տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ազատազրկման 2 /երկու/ տարի ժամանակով, ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման 2 /երկու/ տարի ժամանակով:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով նվազ խիստ պատիժները կլանելով առավել խիստ պատժի մեջ՝ Վլադիմիր Շավալի Ղազարյանը դատապարտվել է ցմահ ազատազրկման:

5. Ամբաստանյալ Վ.Ղազարյանի և պաշտպան Լևոն Գոգինյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009 թվականի մարտի 4-ի որոշմամբ Հյուսիսային քրեական դատարանի 2008 թվականի նոյեմբերի 6-ի դատավճիռը թողել է օրինական ուժի մեջ, իսկ ամբաստանյալի և պաշտպանի վերաքննիչ բողոքները մերժել է:

6. Վճռաբեկ բողոքներ են բերել դատապարտյալ Վլադիմիր Ղազարյանը և պաշտպան Լ. Գոգինյանը:

2009 թվականի ապրիլի 23-ին վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել տուժողի իրավահաջորդ Լուսյա Խումարյանը:

2009 թվականի մայիսի 8-ին ՀՀ Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար») բողոքն ընդունել է վարույթ:

### **Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները**

7. Վլադիմիր Ղազարյանը, նախկինում դատապարտված լինելով, այդ թվում՝ սպանության փորձ կատարելու համար, դատավաժությունները դեռևս չմարված, խուլիզանական դրդումներով, դիտավորությամբ, ապօրինաբար կյանքից զրկել է Վահե

Խումարյանին՝ կապված նրա կողմից ծառայողական գործունեության կատարման հետ, բացի այդ ապօրինի ձեռք է բերել և պահել ռազմամթերք, ապօրինի կերպով կրել սառը զենք, ինչպես նաև ոստիկանության աշխատակիցներին տվել սպանության սպառնալիքներ:

8. 2008 թվականի մայիսի 17-ին Վ.Ղազարյանը իր մոր՝ Լենա Ղազարյանի մահվան քառասուներորդ օրվա կապակցությամբ, իր ընկեր Արտակ Դարբինյանի հետ իրենց տանը ալկոհոլ օգտագործելուց հետո գնացել են գերեզմանատուն: Այնտեղից վերադառնալուց հետո Արտակ Դարբինյանը գնացել է իր բարեկամի տուն, իսկ Վլադիմիր Ղազարյանը, նկատի ունենալով, որ նախորդ օրը վճարել է իր բնակարանի հեռախոսի վարձը, սակայն այն չի աշխատել, ժամը 19.40-ի սահմաններում, հեռախոսի անսարքությունը պարզելու նպատակով, գտնվելով ալկոհոլային հարբածության վիճակում, դուրս է եկել բնակարանից, Վանաձոր քաղաքի Կարեն Դեմիրճյան փողոցում նստել Արտակ Գևորգյանի ՎԱԶ 2107 մակնիշի 36 ՕՍ 835 պետհամարանիշի տաքսի ավտոմեքենան ու գնացել «Արմենթել» ՓԲԸ Վանաձորի մասնաճյուղի՝ Տիգրան Մեծի պողոտայի 18 հասցեում գտնվող վարչական շենք:

Աշխատանքային ժամի ավարտի պատճառով «Արմորիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անվտանգության ծառայության աշխատակից Վահե Խումարյանը արգելել է նրան մասնաշենք մուտք գործել, որի պատճառով Վ.Ղազարյանը վիճաբանության մեջ է մտել նրա հետ:

Այդ ընթացքում Վ.Խումարյանը հրել է ամբաստանյալին, որի հետևանքով վերջինս գործվել է աստիճաններից, ապա, գնալով պահակակետ, ասել է, որ հիմա կգանգահարի ոստիկանություն:

Վ.Ղազարյանը, գնացել է Վ.Խումարյանի հետևից, մտել պահակակետ և խուլիգանական դրդումներով, կյանքից զրկելու դիտավորությամբ, չնչին առիթն օգտագործելով իր անձի առավելությունները ընդգծելու համար, իր կողմից նախապես կրած սառը զենք հանդիսացող դանակով սկզբից կտրել է հեռախոսի լարը, իսկ հետո մեկ անգամ հարվածել Վ.Խումարյանի պարանոցի առաջային երեսին, ապա նշված տաքսի ավտոմեքենայով դիմել փախուստի, իսկ Վ.Խումարյանը ստացած մարմնական վնասվածքներից կարճ ժամանակ անց իր աշխատանքի վայրում մահացել է:

Դեպքից հետո ամբաստանյալ Վ.Ղազարյանը գնացել է Վանաձոր քաղաքի Կ.Դեմիրճյան փողոցի Յ 6-6/7 հասցեում գտնվող իր բնակարան, թաքնվել ոստիկանության աշխատակիցներից, իսկ երբ վերջիններս փորձել են բնակարան մուտք գործել, իր մոտ ապօրինի պահվող նռնակով սպառնացել է պայթեցնել և վնասել բոլորին, տվել սպանության սպառնալիքներ, որոնց իրականացման համար եղել է իրական վտանգ:

9. Բացի այդ, Վ.Ղազարյանը ապօրինի ձեռք է բերել և իր բնակարանում պահել ռազմամթերք հանդիսացող Ֆ1 տեսակի նռնակ ու սառը զենք հանդիսացող դանակ, որոնք 2008 թվականի մայիսի 18-ին նրա բնակարանի խուզարկության ժամանակ ոստիկանության աշխատակիցների կողմից հայտնաբերվել և առգրավվել են:

### **Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.



10. Բողոքաբերները, համաձայն չլինելով ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ, 235-րդ, 137-րդ հոդվածներով առաջադրված մեղադրանքի և նշանակված պատժի հետ, գտնում են, որ դրանք հիմնավորված չեն:

Ի հիմնավորումն ասվածի՝ նրանք նշում են, որ սպանությունը խուլիգանական դրդումներով կատարված կարող է համարվել այն դեպքում, երբ չկա շարժառիթը, կամ եղածն աննշան է: Նրանք նշում են նաև, որ Վ.Ղազարյանի արարքը միաժամանակ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, և 10-րդ կետերով որակելը հիմնավորված չէ, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշների առկայությունը բացառում է նույն մասի 10-րդ կետի կիրառումը:

11. Ըստ բողոքաբերների ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետը պատասխանատվություն է նախատեսում նախկինում սպանություն կատարած անձի կողմից կատարելը, իսկ Վ.Ղազարյանը նախկինում կատարել է սպանության փորձ և ոչ թե սպանություն, հետևաբար ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետով նրան մեղադրելն ու դատապարտելը նույնպես հիմնավորված չէ:

12. Բողոք բերող անձինք գտնում են, որ Վ.Ղազարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով, 235-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով մեղադրելն ու դատապարտելը բավարար ապացույցներով հիմնավորված չէ, քանի որ սպանության սպառնալիքի ենթարկված տուժողը պետք է լինի կոնկրետ անձ, իսկ դատապարտյալի բնակարանից նոնակի հայտնաբերման փաստի վերաբերյալ որևէ հիմնավոր ապացույց չկա:

Հինք ընդունելով իրենց կողմից վկայակոչված հանգամանքները՝ բողոքաբերները եզրակացնում են, որ դատարանները խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի և 360-րդ հոդվածի պահանջները և չեն պատճառաբանել առավելագույն պատժի՝ ցմահ ազատազրկման անհրաժեշտությունն ու կարևորությունը՝ դրանով թույլ տալով առերևույթ դատական սխալ, որը Վ.Ղազարյանի համար առաջացրել է ծանր հետևանքներ: Նրանք գտնում են, որ սույն քրեական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և բացառել դատարանների կողմից հնարավոր դատական սխալները, ուստի խնդրում են մասնակիորեն բեկանել և փոփոխել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 4-ի որոշումը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 10-րդ, 15-րդ կետերից Վ.Ղազարյանի արարքը վերադրակել ՀՀ քրեական օրենսգրքի 109-րդ հոդվածով, ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով գործի վարույթը կարճել, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով դատական ակտը թողնել անփոփոխ:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

*1. ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 10-րդ կետերի կիրառելիությունը*

13. Սույն գործով վճռաբեկ դատարանի առջև բարձրացվել է այն հարցը, թե Վ.Ղազարյանի կողմից կատարված սպանությունը կարո՞ղ է արդյոք միաժամանակ

որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 10-րդ կետերով, այն է՝ որպես անձի ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ կապված և որպես խուլիգանական դրդումներով կատարված սպանություն:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետը քրեական պատասխանատվություն է նախատեսում խուլիգանական դրդումներով կատարված սպանության համար:

Խուլիգանական դրդումներով կատարված սպանության առանձնահատկությունների վերաբերյալ իր դիրքորոշումը ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է Ա.Մաթևոսյանի գործով 2008 թվականի հուլիսի 25-ի ՎԲ-48/08 որոշման 17-21-րդ կետերում, որտեղ անդրադարձ է կատարվել ինչպես այդ հանցագործության առավել վտանգավոր բնույթին, այնպես էլ հանցագործի անձը բնութագրող հանգամանքներին: Հիմք ընդունելով այդ որոշման մեջ առկա հիմնավորումներն ու դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ խուլիգանական դրդումներով կատարված սպանությունը անպայման չէ, որ պետք է գուգորդված լինի խուլիգանության հետ, իսկ խուլիգանության հետ գուգորդված սպանությունը ինքնին չի նշանակում, թե այն կատարվել է խուլիգանական շարժառիթներով:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը պատասխանատվություն է նախատեսում անձի կամ նրա մերձավորի սպանության համար՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ:

Սպանության տվյալ տեսակն առանձնանում է նպատակային ուղղվածությամբ, որն արտահայտվում է իր ծառայողական գործունեությունն իրականացնող կամ հասարակական պարտքը կատարող անձին կամ նրա մերձավորներին կյանքից զրկելու մեջ:

ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի իմաստով ծառայողական գործունեությունը անձի այնպիսի գործունեությունն է, որը մտնում է նրա ծառայողական պարտականությունների մեջ, որոնք էլ բխում են օրենքով սահմանված կարգով գրանցված պետական կամ մասնավոր կազմակերպությունների հետ կնքած աշխատանքային պայմանագրի դրույթներից: Հետևաբար քննարկվող հանցագործություններից տուժող կարող են հանդիսանալ իրենց օրինական ծառայողական գործառույթներն իրականացնող բոլոր անձինք /ինչպես պաշտոնատար, այնպես էլ ոչ պաշտոնատար/ կամ նրանց մերձավորները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ սպանությունը պայմանավորված է տուժողի կողմից հասարակական պարտքի կատարման ընթացքում հանցավորի չարամիտ խուլիգանական գործողությունների կանխմանն ուղղված ակտիվ միջամտությամբ, հանցավորի արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ որպես տուժողի կողմից իր հասարակական պարտքի կատարման հետ կապված սպանություն, իսկ այն դեպքում, երբ տուժողի գործողություններն իրենց մեջ չեն պարունակել հանցավորի խուլիգանական գործողությունների կանխմանն ուղղված ակտիվ միջամտություն, այլ կրել են սոսկ դիտողության բնույթ, հանցավորի արարքը ենթակա է որակման ՀՀ

քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով՝ որպես խուլիգանական դրդումներով կատարված սպանություն:

16. Սույն գործի նյութերից երևում է, որ առկա պայմաններում տուժող Վ.Խումարյանը գործել է որպես «Արմոքիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անվտանգության ծառայության աշխատակից (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը), և նրա սպանությունը կապված է վերջինիս կողմից իր ծառայողական պարտքի կատարման հետ: Այսինքն՝ Վ.Խումարյանին Վ.Ղազարյանը սպանել է ոչ թե իր անձի առավելություններն ընդգծելու մոլուցքից ելնելով, այն է՝ խուլիգանական դրդմամբ, այլ նրա կողմից իր ծառայողական պարտականությունների իրականացման կապակցությամբ:

*II. ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետի կիրառելիությունը*

17. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացվել է նաև այն հարցը, թե նախկինում սպանության փորձ կատարած անձի կողմից սպանություն կատարելու դեպքում նրա արարքը ենթակա՞ է արդյոք որակման ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետով՝ որպես սպանություն նախկինում սպանություն կատարած անձի կողմից:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետը պատասխանատվություն է նախատեսում սպանություն կատարելու համար այն անձի կողմից, ով նախկինում սպանություն է կատարել՝ բացառությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 105–108-րդ հոդվածներով (մեղմացնող հանգամանքներում կատարված սպանություն) նախատեսված արարքների:

Նշված հոդվածի վերլուծությունից երևում է, որ այս հանցագործության համար բնութագրականն այն է, որ սպանություն կատարելուց հետո՝ որոշ ժամանակ անց, հանցավորի կողմից կատարվում է նախորդի հետ որևէ առնչություն չունեցող նոր սպանություն: Նախորդ և նոր կատարված սպանությունների միջև բացակայում է միասնական դիտավորությունը, և յուրաքանչյուր դեպքում հանցավորը գործում է նոր ծագած դիտավորությամբ: Այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետով նախատեսված հանցագործության տակ հասկացվում է երկու կամ ավելի անգամ կատարված սպանությունը, այլ կերպ ասած՝ սպանությունների կրկնակիությունը:

19. Սպանությունների կրկնակիության առումով Վճռաբեկ դատարանն այն իրավական դիրքորոշումն է արտահայտում, որ արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետով որակելու ժամանակ իրավական առումով որևէ նշանակություն չի կարող տրվել այն հարցին, թե նախկինում կատարված սպանությունը եղել է ավարտված հանցագործություն, թե՝ ընդհատվել է հանցավորի կամ հանցագործության նախապատրաստության փուլում, հանցավորը եղել է սպանության անմիջական կատարողը, թե այլ հանցակից՝ կազմակերպիչ, դրդիչ, օժանդակող:

Արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետով որակելու համար հիմք է հանդիսանում ինչպես ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սպանությունների կատարումը, այնպես էլ ՀՀ

քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ ծանրացնող հանգամաներում կատարված սպանությունները: Այսինքն՝ սպանությունը համարվում է կրկնակի կատարված, եթե նրան նախորդել են ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով նախատեսված արարքները:

Ուստի անհիմն են բողոքաբերի պնդումներն այն մասին, որ Վ.Ղազարյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետով ենթակա չէր որակման, քանի որ նա նախկինում կատարել էր սպանության փորձ և ոչ թե սպանություն:

20. Ինչ վերաբերում է բողոքաբերների մյուս պատճառաբանություններին, ապա Վճռաբեկ դատարանը նշում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման ենթարկելով գործով ձեռք բերված ապացույցները, հանգել է հիմնավոր հետևության այն մասին, որ Վ.Ղազարյանի կողմից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին և 4-րդ և 137-րդ հոդվածի 1-ին մասերով որակված հանցավոր արարքների կատարումը միանգամայն հիմնավորված է:

21. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն:

Վլադիմիր Շավալի Ղազարյանի վերաբերյալ Հյուսիսային քրեական դատարանի 2008 թվականի նոյեմբերի 6-ի դատավճիռը օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 4-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 15-րդ կետերով, 235-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, 137-րդ հոդվածի 1-ին մասով՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանությունները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն  
Դատավորներ՝ ստորագրություններ*

21.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության

ԵՔԲԴ/0569/01/08

վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵՔԲԴ/0569/01/08

նախագահող դատավոր՝ Մ.Պետրոսյան  
դատավորներ՝ Տ.Սահակյան, Ս.Համբարձումյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԳԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատախազ* Ա. ԲՈՇՆԱԳՅԱՆԻ  
*պաշտպան* Մ. ՊՈՂՈՍՅԱՆԻ

29 հունիսի 2009 թվական

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 20–ի որոշման դեմ ամբաստանյալ Արման Վլադիմիրի Կարախանյանի պաշտպանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը**

1. Քրեական գործը հարուցվել է 2008 թվականի մայիսի 29–ին:

2. 2008 թվականի սեպտեմբերի 30–ին Արման Վլադիմիրի Կարախանյանին մե-

դադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 189–րդ հոդվածի 3–րդ մասով և 205–րդ հոդվածի 2–րդ մասով:

2008 թվականի հոկտեմբերի 13–ին Ա.Կարախանյանը ձերբակալվել է, 2008 թվականի հոկտեմբերի 15–ին՝ ներգրավվել որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 189–րդ հոդվածի 3–րդ մասով և 205–րդ հոդվածի 2–րդ մասով:

3. Երևանի քրեական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 26–ի դատավճռով ամբաստանյալ Ա.Կարախանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 189–րդ հոդվածի 3–րդ մասով և 205–րդ հոդվածի 2–րդ մասով և դատապարտվել ՀՀ քրեական օրենսգրքի 205–րդ հոդվածի 2–րդ մասով ազատազրկման 3 /երեք/ տարի ժամկետով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 189–րդ հոդվածի 3–րդ մասով դրամական տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 66–րդ հոդվածի կիրառմամբ Ա.Կարախանյանը վերջնականապես դատապարտվել է ազատազրկման 3 /երեք/ տարի ժամկետով և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

Նույն դատավճռով «Սպանդարյան 1» հարկային տեսչության 514545.1 հազ. ՀՀ դրամի, «Էրեբունու» հարկային տեսչության 137.894.190 ՀՀ դրամի, «Արաբկիրի» հարկային տեսչության 211541.4 հազար ՀՀ դրամի և 151341.3 հազ. ՀՀ դրամի, «Վանաձորի» հարկային տեսչության 17.427.000 ՀՀ դրամի քաղաքացիական հայցերը թողնվել են առանց քննության:

4. Պաշտպանի և մեղադրողի կողմից բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009 թվականի մարտի 20–ի որոշմամբ պաշտպանի վերաքննիչ բողոքը մերժել է, մեղադրողի վերաքննիչ բողոքը՝ բավարարել՝ Երևանի քրեական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 26–ի դատավճռը քաղաքացիական հայցի մասով ամբողջությամբ բեկանել է: ՀՀ Հարկային տեսչության համապատասխան ստորաբաժանումների /Արաբկիր, Վանաձոր, Էրեբունու/ կողմից հարուցված քաղաքացիական հայցերը բավարարել մասնակիորեն, իսկ «Սպանդարյան 1» հարկային տեսչության քաղաքացիական հայցը բավարարել ամբողջությամբ՝ ամբաստանյալ Ա.Կարախանյանից հօգուտ պետությունից բռնագանձել 274.236.700 ՀՀ դրամ՝ որպես պետությանը պատճառված նյութական վնասի փոխհատուցում:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը քաղաքացիական հայցերը մնացած մասով թողնել է առանց քննության, ինչպես նաև առանց քննության է թողել դատավճռի մնացած մասը:

5. Վճռաբեկ բողոքը բերել է ամբաստանյալ Ա.Կարախանյանի պաշտպանը:

2009 թվականի մայիսի 26–ին ՀՀ վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար») բողոքն ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները**

6. Ամբաստանյալներից Արման Կարախանյանը, հանդիսանալով Արաբկիրի հարկային տեսչությունում հաշվառված, «Սպաուն» ՍՊ ընկերության տնօրենը, 2004–2006 թթ. տարբեր կազմակերպությունների մատակարարել է 193 միլիոն դրամի ապրանքներ, սակայն խախտելով «Շահութահարկի մասին» օրենքի 7–րդ, 10–րդ և 46–րդ, «ԱԱՀ–ի մասին» օրենքի 20–րդ, 23–րդ, 32–րդ և 33–րդ հոդվածների պահանջները՝ հարկային հաշվարկների, հաշվետվությունների և հարկման հիմք հանդիսացող փաստաթղթերի մեջ ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով չարամտորեն խուսափել է առանձնապես խոշոր չափերի՝ 45.748.200 դրամ հարկերը պետական բյուջե վճարելուց:

2005–2007 թթ., հանդիսանալով «Յուսմե» ՍՊ ընկերության տնօրենը, տարբեր կազմակերպությունների մատակարարել է 452 միլիոն դրամի ապրանքներ, սակայն խախտելով «Շահութահարկի մասին» օրենքի 7–րդ, 10–րդ, «ԱԱՀ–մասին» օրենքի 20–րդ, 23–րդ և 43–րդ, «Եկամտահարկի մասին» օրենքի 20–րդ և 21–րդ հոդվածների պահանջները՝ հարկային տեսչություն ներկայացվող հարկային հաշվարկների, հաշվետվությունների և հարկման հիմք հանդիսացող փաստաթղթերի մեջ ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով չարամտորեն խուսափել է անձնապես խոշոր չափերի՝ 140.445.100 դրամ հարկերը պետական բյուջե վճարելուց:

Բացի այդ, հանդիսանալով «Յուսմե» ՍՊԸ–ի տնօրենը, առանց իրականում ապրանքներ մատակարարելու և ծառայություններ մատուցելու, կազմել և «Անդրանիկ–20» ՍՊ ընկերության տնօրեն Գրիշա Դոդոյանին տրամադրել է 24.803.000 դրամի կեղծ հաշիվ–ապրանքագրեր, որի հետևանքով պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափի՝ 5.324.400 դրամի վնաս:

Փաստացի հանդիսանալով «Մոնումենտալ» ՍՊ ընկերության տնօրենը, 2007–2008 թթ. ՀՀ տարածքում զբաղվել է ապրանքների ձեռք բերմամբ և իրացմամբ, սակայն խախտելով «Շահութահարկի մասին» օրենքի 44–րդ, 46–րդ և 50–րդ, «ԱԱՀ–ի մասին» օրենքի 32–րդ և 33–րդ, «Եկամտահարկի» մասին օրենքի 20–րդ, 21–րդ, 23–րդ և 37–րդ հոդվածների պահանջները՝ հարկային տեսչություն ներկայացվող հարկային հաշվարկների, հաշվետվությունների և հարկման հիմք հանդիսացող փաստաթղթերի մեջ ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով չարամտորեն խուսափել է առանձնապես խոշոր չափերի՝ 60.416.100 դրամ հարկերը պետական բյուջե վճարելուց:

Փաստացի հանդիսանալով «Արմալա» ՍՊ ընկերության տնօրենը, 2006–2007 թթ. ՀՀ տարածքում զբաղվել է առևտրամիջնորդական գործունեությամբ, սակայն խախտելով «Շահութահարկի մասին» օրենքի 7–րդ և 10–րդ, «ԱԱՀ–ի մասին» օրենքի 6–րդ, 9–րդ և 20–րդ հոդվածների պահանջները՝ հարկային տեսչություն ներկայացվող հարկային հաշվարկների, հաշվետվությունների և հարկման հիմք հանդիսացող փաստաթղթերի մեջ ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով չարամտորեն խուսափել է առանձնապես խոշոր չափերի՝ 27.901.200 դրամ հարկերը պետական բյուջե վճարելուց:

Փաստացի հանդիսանալով «Անտոռիմ» ՍՊ ընկերության տնօրեն, 2006–2008 թթ.

ՀՀ տարածքում զբաղվել է ապրանքների ձեռք բերմամբ և իրացմամբ, սակայն խախտելով «Շահութահարկի մասին» օրենքի 46-րդ, «ԱԱՀ մասին» օրենքի 20-րդ, «Եկամտահարկի մասին» օրենքի 21-րդ, «Պարզեցված հարկի մասին» օրենքի 11-րդ հոդվածների պահանջները՝ պարզեցված հարկի, ավելացած արժեքի հարկի, շահութահարկի հաշվարկ հաշվետվություններ չներկայացնելու միջոցով չարամտորեն խուսափել է խոշոր չափերի՝ 4.948.700 դրամ հարկերը պետական բյուջե վճարելուց:

7. Այսպիսով, Ա.Կարախանյանը, փաստացի հանդիսանալով «Սպառուն», «Յուսմեն», «Արմալա», «Մոնումենտալ» և «Անտոռիմ» ՍՊ ընկերությունների տնօրենը, խուսափել է առանձնապես խոշոր չափերի՝ 279.459.300 դրամ հարկեր վճարելուց և զբաղվելով կեղծ ձեռնարկատիրությամբ՝ պետության պատահառեղ է առանձնապես խոշոր չափերի՝ 5.324.400 դրամ:

8. Գրիշա Դոդոյանը, հաղիսանալով «Անդրանիկ 20» ՍՊ ընկերության տնօրենը, 2005 թվականի ընթացքում «Յուսմեն» ՍՊ ընկերության տնօրեն Ա.Կարախանյանին վճարելով ապրանքների գումարը 8 տոկոսը՝ վերջինիցս առանց ապրանքների փաստացի մատակարարման ստացել է 15.971.972 դրամի կեղծ հաշիվ ապրանքագրեր, որոնց հիման վրա Գ.Դոդոյանը Վանաձորի հարկային տեսչություն ներկայացվող հարկային հաշվարկներում և հաշվետվություններում ծախսերի վերաբերյալ մտցրել է կեղծ տեղեկություններ, ինչի հետևանքով խուսափել է խոշոր չափի 5.324.400 դրամի հարկային պարտավորությունները կատարելուց:

9. Նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարությունում քրեական գործի քննության հետ միասին կարող է հարուցվել և լուծվել միայն հանցագործությամբ անմիջականորեն պատճառված գույքային վնասի հատուցման հետ կապված քաղաքացիական հայցը, մինչդեռ հայցադիմումների հետազոտությունից պարզվել է, որ հայցվորների կողմից հայցապահանջի չափը զգալիորեն գերազանցում է ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքի ծավալում ներառված գումարի չափերը, որի դեմ ամբաստանյալները առարկել են, դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375<sup>1</sup>-րդ հոդվածի 6-րդ մասով, հարուցված քաղաքացիական հայցերը թողել է առանց քննության՝ քաղաքացիական հայցվորներին բացատրելով քաղաքացիական դատավարության կարգով հայց ներկայացնելու նրանց իրավունքը:

10. Երևանի քրեական դատարանում գործի քննության ընթացքում ամբաստանյալ Ա.Կարախանյանը առարկություն է ներկայացրել կապված այն հանգամանքի հետ, որ հայցապահանջի չափը զգալիորեն գերազանցում է մեղադրանքի ծավալում ներառված գումարի չափերին:

### **Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոք բերած անձը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 20-ին որոշմամբ որպես պետությանը պատճառված վնասի փոխհատուցում՝ Ա.Կարախանյանից բռնագանձվել է 274.236.300 ՀՀ դրամ, որը սխալ հաշվարկի արդյունք է: Իրականում այդ գումարը պետք էր կազմեր 189.258.200 դրամ և պետք է բռնագանձվեր ոչ թե Ա. Կարախանյանից, այլ նրա կողմից ղեկավարված



ՍՊԸ–ներից՝ խախտելով «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 5–րդ հոդվածի 1–ին և 3–րդ կետերի պահանջները:

12. Ըստ բողոքաբերի, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1–րդ հոդվածի 6–րդ կետի պահանջը, որի համաձայն՝ «(...) այն դեպքում, երբ ամբաստանյալը կամ քաղաքացիական պատասխանողը քաղաքացիական հայցը չի ընդունում, ապա դատարանը քաղաքացիական հայցը թողնում է առանց քննության՝ քաղաքացիական հայցվորին բացատրելով քաղաքացիական դատավարության կարգով հայցը ներկայացնելու նրա իրավունքը»:

13. Բողոքաբերը նշում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 402–րդ հոդվածի 2–րդ մասի պահանջը, որի համաձայն՝ վերաքննիչ դատարանի դատական ակտը հրապարակման օրվանից ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում ուղարկվում է դատապարտյալին, արդարացվածին, նրանց պաշտպաններին և օրինական ներկայացուցիչներին, մեղադրողին, տուժողին և նրա ներկայացուցչին, ինչպես նաև քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին, եթե նրանք մասնակցել են գործի քննությանը վերաքննիչ դատարանում:

Մինչդեռ բողոքաբերը պնդում է, որ պաշտպանին հասցեագրված՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի գրությունը գրվել է 2009 թվականի մարտի 26–ին, փոստային առաքման միջոցով ուղարկվել է 2009 թվականի ապրիլի 1–ին, հասցեատիրոջն է հանձնվել 2009 թվականի ապրիլի 3–ին, այսինքն 12 օր հետո, ինչի արդյունքում Ա.Կարախանյանի պաշտպանը գրկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատական ակտը խորությամբ վերլուծելու հնարավորությունից:

14. Բողոքաբերը, հիմք ընդունելով ՀՀ քրեական օրենսգրքի 74–րդ հոդվածի պահանջը և նկատի ունենալով, որ մինչև Երևանի քրեական դատարանի կողմից դատավճիռ կայացնելը Ա.Կարախանյանը վերականգնել է պետությանը պատճառված՝ 5.324.400 դրամ վնասը, խնդրել է նրան քրեական պատասխանատվությունից ազատել իրադրության փոփոխման պատճառաբանությամբ:

Բողոքաբերը գտնում է, նաև, որ Ա.Կարախանյանի նկատմամբ նշանակված 3 տարի ժամկետով ազատագրկումը ենթակա էր պայմանականորեն չկիրառման, քանի որ ՀՀ հարկային տեսչության ծառայությունների կողմից ներկայացվել են նոր հայցապահանջներ և նա, գտնվելով կալանքի տակ, հնարավորություն չունի լիովին պաշտպանելու իր շահերը դատարաններում: Ի հիմնավորումն իր պահանջի՝ բողոքաբերը խնդրել է գնահատման արժանացնել այն հանգամանքը, որ Ա.Կարախանյանը, ինչպես նախնական, այնպես էլ դատական քննության ընթացքում անկեղծորեն զղջացել է իր կատարած արարքի համար, նախկինում արատավորված չի եղել, երիտասարդ է և դեռ չի հասցրել ընտանիք կազմել:

Հիմք ընդունելով իր կողմից վկայակոչված հանգամանքները՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 20–ի որոշումը:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

*1. Վերաքննիչ դատարանի լիազորությունները քաղաքացիական հայցն առանց քննության թողնելու մասին որոշումները վերանայելիս:*

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի հետևյալ հարցին. երբ քրեական գործով դատավարության ընթացքում հարուցված քաղաքացիական հայցը Երևանի քրեական դատարանի կողմից թողնվել է առանց քննության, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իրավասո՞ւ էր արդյոք քաղաքացիական հայցի մասով գործին ըստ էության լուծում տալ և կայացնել նոր դատական ակտ:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6–րդ հոդվածի 13–րդ կետի համաձայն՝ «վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի հիման վրա վերաքննության կարգով գործը քննող դատարանն է»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385–րդ հոդվածի 3–րդ մասի համաձայն՝ «Վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստական հանգամանքները ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքի, երբ բողոքում վիճարկվում է որևէ փաստական հանգամանք, և վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստական հանգամանքի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել: (...)»

17. Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից բխում է, որ ՀՀ վերաքննիչ դատարանը հանդես է գալիս որպես առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտի օրինակաչության և հիմնավորվածության ստուգման իրավասությամբ օժտված դատարան, որն առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է, որպես կանոն, վերջինիս կողմից հետազոտված փաստական տվյալների հիման վրա: Այսինքն, ամբողջ ծավալով գործի քննություն, ինչպես նաև գործով ներկայացված բոլոր ապացույցների հետազոտություն իրականացնելու լիազորություն ՀՀ վերաքննիչ քրեական դատարանին վերապահված չէ, հետևաբար, եթե վերաքննիչ դատարանը փորձում է դուրս գալ իր լիազորությունների շրջանակից, այն սկսում է գործել որպես առաջին ատյանի դատարան, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով անթույլատրելի է:

18. Սույն գործի նյութերից երևում է, որ Երևանի քրեական դատարանը, 2008 թվականի դեկտեմբերի 26–ի դատավճռով, հարուցված քաղաքացիական հայցերը թողել է առանց քննության՝ քաղաքացիական հայցվորներին բացատրելով քաղաքացիական դատավարության կարգով հայց ներկայացնելու նրանց իրավունքը (տե՛ս սույն որոշման 9–րդ կետը): ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, հարուցված քաղաքացիական հայցերը բավարարելով մասնակիորեն, իսկ «Սպանդարյան 1» հարկային տեսչության քաղաքացիական հայցը՝ ամբողջությամբ, ամբաստանյալ Ա.Կարախանյանից հօգուտ պետքույզե բռնագանձել է 274.236.700 ՀՀ դրամ՝ որպես պետությանը պատճառված նյութական վնասի փոխհատուցում (տե՛ս սույն որոշման 4–րդ կետը):

Սույն գործով վերաքննիչ դատարանը փաստորեն հանդես է եկել որպես առաջին ատյանի դատարան, քանի որ առանց առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքների քննության է առել և բավարարել վերջինիս կողմից ըստ էության չքննված քաղաքացիական հայցը: Այսինքն, սույն գործով ՀՀ

վերաքննիչ քրեական դատարանը դուրս է եկել ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակից և կայացնելով քաղաքացիական հայցն ըստ էության լուծող որոշում՝ թույլ է տվել քրեական դատավարության օրենքի խախտում և չի գործել որպես «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» (Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարան, *Մոկուրենկոն և Մտրիգունն ընդդեմ Ուկրաինայի* գործը, 20 հուլիսի 2006թ., գանգատներ թիվ 29458/04 և 29465/04):

19. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը իրավասու չէր սույն գործով ներկայացված բողոքի քննության ժամանակ անդրադառնալ քաղաքացիական հայցերի հարցին, քննել և ըստ էության լուծում տալ դրանց, այլ ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 2-րդ մասով, կարող էր բեկանել առաջին ատյանի դատարանի դատական ակտը և գործն ուղարկել նոր քննության:

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի խախտումներ: Այդ խախտումներն իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ դրանք հիմք են կայացված դատական ակտը մասնակիորեն բեկանելու համար: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քաղաքացիական հայցի մասով առաջին ատյանի դատարանի դատական ակտը օրինական է և հիմնավորված, հետևաբար, այդ մասով բեկանելով վերաքննիչ դատարանի ակտը՝ անհրաժեշտ է քաղաքացիական հայցի մասով օրինական ուժ տալ առաջին ատյանի դատարանի դատավճռին:

## *II. Վճռաբեկ բողոքում ներկայացված այլ փաստարկներ.*

21. Ինչ վերաբերում է բողոքում բարձրացված այն հարցին, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը վնասի հատուցման պարտականություն պետք է դնել ոչ թե Ա.Կարախանյանի վրա, այլ համապատասխան ՄՊԸ-ի վրա, որի տնօրենն է հանդիսացել վերջինս, ապա Վճռաբեկ դատարանը դրան չի անդրադառնում, քանի որ կողմերին հնարավորություն է ընձեռնվել քաղաքացիական հայց ներկայացնել քաղաքացիական դատավարության կարգով, հետևաբար, այդ փաստարկը կքննարկվի համապատասխան առաջին ատյանի դատարանի կողմից:

22. Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ անհիմն է բողոքաբերի այն փաստարկը, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 402-րդ հոդվածի 2-րդ մասը և Ա.Կարախանյանի

պաշտպանին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումն ուղարկվել է 12 օր ուշացմամբ, քանի որ գործի նյութերից երևում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը պաշտպանին ուղարկելու վերաբերյալ գրության վրա առկա է այն ստանալու մասին նշում՝ թվագրված 2009 թվականի մարտի 26-ով:

23. Անհիմն են նաև իրադրության փոփոխման հետևանքով Ա.Կարախանյանին քրեական պատասխանատվությունից ազատելու կամ նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին բողոքի փաստարկները (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պետությանը պատճառված վնասից 5.324.400 ՀՀ դրամը հատուցելը, ինչպես նաև հարկային տեսչության ծառայությունների կողմից նոր հայցապահանջներ ներկայացնելը բավարար հիմք չեն նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ կամ 74-րդ հոդվածները կիրառելու համար:

24. ՀՀ Ազգային ժողովի կողմից 2009 թվականի հունիսի 19-ին ընդունված «Համաներում հայտարարելու մասին» որոշման 1-ին կետի 1-ին և 3-րդ ենթակետերի համաձայն՝ առավելագույնը երեք տարի ժամկետով ազատությունից զրկելու հետ կապված պատիժների դատապարտված անձինք և ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների դատապարտված անձինք ազատվում են պատժից:

Հետևաբար, վերոնշյալ կետի հիմքով և «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ որոշման 12-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված կարգով Ա.Կարախանյանը ենթակա է պատժից ազատման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Արման Վլադիմիրի Կարախանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասով և 205-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 20-ի որոշման քաղաքացիական հայցի մասը բեկանել և այդ մասով օրինական ուժ տալ Երևան քաղաքի քրեական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 26-ի դատավճռին:

2. Արման Վլադիմիրի Կարախանյանի նկատմամբ կիրառել «Համաներում հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 1-ին կետի 1-ին և 3-րդ ենթակետերը և նրան ազատել նշանակված պատժից՝ երեք տարի ազատագրկումից և նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով տուգանքից:

3. Արման Վլադիմիրի Կարախանյանին անհապաղ ազատել կալանքից:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

22.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵԿԴ/0019/11/09

ԵԿԴ/0019/11/09

նախագահող դատավոր՝ Ե.Գարբինյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԳԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

29 հունիսի 2009 թվական

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մայիսի 8-ի որոշման դեմ Մյասնիկ Հարութիկի Ավետիսյանի բերած վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2008 թվականի հոկտեմբերի 1-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 2-րդ մասի և 38-314-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 62216908 քրեական գործը:

2. 2008 թվականի դեկտեմբերի 29-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերով քննիչ Ա.Մինասյանի որոշմամբ թիվ 62216908 քրեական

գործի վարույթը կարճվել է, և Մ.Ավետիսյանի, Ա.Սաղաթեյանի ու Ջ.Ջարոյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

Վերը նշված որոշման դեմ 2009 թվականի հունվարի 19-ին Մ.Ավետիսյանը բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ խնդրելով այն վերացնել:

2009 թվականի հունվարի 30-ին ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Ջ.Թադևոսյանի գրությամբ Մ.Ավետիսյանի բողոքը մերժվել է:

3. 2009 թվականի մարտի 4-ին Մ.Ավետիսյանը բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին՝ պահանջելով վերացնել քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 2008 թվականի դեկտեմբերի 29-ի որոշումը:

2009 թվականի մարտի 16-ի որոշմամբ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը մերժել է Մ.Ավետիսյանի կողմից ներկայացված բողոքը:

4. Մ.Ավետիսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009 թվականի մայիսի 8-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի մարտի 16-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

5. Վճռաբեկ բողոք է բերել Մ.Ավետիսյանը:

2009 թվականի հունիսի 16-ին ՀՀ Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար») բողոքն ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

#### **Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները**

6. 2009 թվականի հունվարի 30-ին ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Ջ.Թադևոսյանի գրությամբ Մ.Ավետիսյանի բողոքը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ մինչ 2008 թվականի դեկտեմբերի 29-ի որոշման կայացումը քրեական գործը քննող քննիչի կողմից Մ.Ավետիսյանին պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները, այն է՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը, սակայն Մ.Ավետիսյանը կարճման դեմ որևէ առարկություն չի ներկայացրել:

7. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի մարտի 16-ի որոշմամբ Մ.Ավետիսյանի բողոքը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ դատախազի որոշման պատ-

ճենն ստանալուց հետո 7 օրվա ընթացքում այն չի բողոքարկվել, հետևաբար չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263–րդ հոդվածի 2–րդ մասով սահմանված ժամկետը: Բացի այդ, Մ.Ավետիսյանը հնարավորություն է ունեցել մինչև քննիչի կողմից վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելը առարկել դրա դեմ:

8. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը փոփոխել է Երևանի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի որոշման պատճառաբանությունները՝ արձանագրելով, որ բողոքաբերի կողմից պահպանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290–րդ հոդվածով սահմանված ժամկետները, սակայն քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումն ըստ էության օրինական է, և այն վերացնելու հիմքեր չկան:

### **Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքաբերը գտնում է, որ ինչպես առաջին ատյանի, այնպես էլ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումները կայացվել են դատավարական իրավունքի նորմերի խախտումներով, թույլ է տրվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա:

Նա նշում է, որ դատարանը չի կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35–րդ հոդվածը, սխալ է կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263–րդ հոդվածը և խախտել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6–րդ հոդվածով երաշխավորված արդար դատական քննության իր իրավունքը՝ անտեսելով դատական նիստը հետաձգելու մասին ներկայացված միջնորդությունը և դատական քննությունն անցկացնելով իր բացակայությամբ:

Ի հիմնավորումն ասվածի՝ բողոքաբերը նշում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263–րդ հոդվածը վերաբերում է դատախազի կողմից օրենքով սահմանված կարգով կայացրած որոշումներին, մինչդեռ այս պարագայում դատախազը իրեն պատասխանել է գրությամբ և իր բողոքի կապակցությամբ որոշում չի կայացրել:

Բողոքաբերը նշում է նաև, որ իրեն գրությամբ պատասխանելով՝ դատախազը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290–րդ հոդվածի պահանջները:

10. Բողոքաբերը նշել է նաև, որ դատաքննությունը հետաձգելու մասին 2009 թվականի մարտի 16–ին հեռախոսով արված իր միջնորդությունը Երևանի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը անհիմն կերպով չի բավարարել՝ չնայած ինքը տեղյակ է պահել, որ այդ օրը տեղացած ձյան առատության պատճառով զրկված է եղել ժամանակին Երևան հասնելու հնարավորությունից:

Հիմք ընդունելով իր կողմից նշված հիմքերը՝ բողոքաբերը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մայիսի 8–ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

11. Վճռաբեկ դատարանը, ելնելով օրենքի միատեսակ կիրառության ապահովման իր սահմանադրական գործառույթից, ինչպես նաև հաշվի առնելով այն, որ սույն գործի նյութերի վերանայման ընթացքում թույլ են տրվել դատավարական խախտումներ, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել մի շարք իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ համանման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

*1. Հետագա դատական վերահսկողության առարկայի շրջանակները*

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. քննիչի կողմից քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշման վերանայման արդյունքում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից ի՞նչ դատավարական ակտ պետք է կայացվի, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով այդ ակտի նկատմամբ դատական բողոքարկման ի՞նչ ընթացակարգ է ենթակա կիրառման:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ «Գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քննիչը կայացնում է պատճառաբանված որոշում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263–րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի, նրանց պաշտպանների, տուժողի, նրա ներկայացուցչի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի կամ նրանց ներկայացուցիչների (...) կողմից (...) կարող է բողոքարկվել վերադաս դատախազին:

2. Գատախազը բողոքը ստանալու պահից 7 օրվա ընթացքում որոշում է կայացնում բողոքը մերժելու կամ բավարարելու մասին: Կայացված որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է բողոքը ներկայացնող անձին: Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը մերժելու մասին դատախազի որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290–րդ հոդվածի համաձայն՝

«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ–հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

(...)

3. Բողոքը կարող է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն ստանալու կամ, եթե դրա վերա-



բերյալ պատասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում:

(...):»:

14. Վերոշարադրյալ հոդվածների վերլուծությունից երևում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության շրջանակներում բողոքարկման ենթակա են բացառապես քրեական հետապնդման մարմինների դատավարական գործողությունները (անգործությունը) և որոշումները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ դատավարական գործողությունները գործով վարույթի ընթացքում սույն օրենսգրքով նախատեսված գործողություններն են:

Նույն հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ որոշումը քրեական գործով դատարանի որոշումներն են, բացի դատավճռից, ինչպես նաև մինչդատական վարույթի ընթացքում հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կայացրած որոշումներն են:

15. Ինչպես երևում է վերոշարադրյալ հոդվածներից, քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից ներկայացված գրությունները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով որոշում չեն հանդիսանում և հետևաբար չեն կարող առաջացնել նույն դատավարական հետևանքները, ինչ որոշումները:

Սույն գործի նյութերից երևում է, որ քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որոշումը մեղադրյալի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետի պահպանմամբ բողոքարկվել է ՀՀ գլխավոր դատախազին, սակայն այդ բողոքի կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Ջ.Թադևոսյանի կողմից որոշում չի կայացվել (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

16. Վերոգրյալը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս եզրահանգել, որ եթե դատախազին ներկայացված բողոքի կապակցությամբ նա որոշում չի կայացրել, այլ բողոքաբերին պատասխանել է ցանկացած այլ եղանակով, որը նախատեսված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, ապա, եթե չեն անցել ներկայացված բողոքի կապակցությամբ դատախազի կողմից որոշում կայացնելու դատավարական ժամկետները, այդ պատասխանների նկատմամբ չեն կարող կիրառվել ո՛չ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կանոններն ընդհանրապես, ո՛չ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի կանոնները մասնավորապես: Այլ կերպ ասած, եթե դատախազի կողմից իրեն ուղղված բողոքի կապակցությամբ կայացվել է ցանկացած այլ ակտ և ոչ թե որոշում, ապա այդ ակտը դատական բողոքարկման առարկա հանդիսանալ չի կարող: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատախազի կողմի որոշում կայացնելու դատավարական ժամկետներն անցնելուց հետո ընդհանուր իրավասության դատարան կարող է բողոքարկվել դատախազի անգործությունը, քանի որ քրեադատավարական օրենքով նախատեսված ընթացակարգը չպահպանելն այդ դեպքում հավասարազոր է անգործության:

17. Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Ջ.Թադևոսյանի 2009 թվականի հունվարի 30-ի գրությունը որոշման փոխարեն չէր կարող Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհա-

նուր իրավասության դատարանի կողմից մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության առարկա հանդիսանալ:

*II. Դատական վերահսկողության կարգով դատական նիստին դիմողի մասնակցությունը*

18. Սույն գործով բողոքաբերի կողմից բարձրացվել է նաև այն հարցը, թե առաջին ատյանի դատարանում բողոքաբերի բացակայությամբ իրականացված դատաքննությամբ խախտվել են արդյոք նրա դատավարական իրավունքները, այն պարագայում, երբ գործով վարույթը կարճվել է վաղեմության ժամկետը լրանալու հիմքով:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290–րդ հոդվածի 4–րդ մասի համաձայն՝ «(...) Դիմողի կամ վարույթն իրականացնող մարմնի չներկայանալը չի խոչընդոտում բողոքը քննելուն, սակայն դատավորը կարող է պարտադիր համարել նշված անձանց ներկայությունը (...):»:

Տվյալ դեպքում գործի նյութերով հաստատված է, որ դիմող Մ.Ավետիսյանը դատական նիստին իր մասնակցությունը խոչընդոտող հանգամանքների՝ եղանակային վատ պայմանների մասին նախապես հայտնել է դատարանին, սակայն գործը քննող դատավորի կողմից այն հաշվի չի առնվել (տե՛ս սույն որոշման 10–րդ կետը):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ելնելով սույն գործի առանձնահատկություններից, մասնավորապես՝ դիմողն իր բողոքում նշել է, որ մինչ գործի վարույթի կարճումը ինքը որպես մեղադրյալ չի հարցաքննվել և որ զրկված է եղել վաղեմության ժամկետների կիրառման վերաբերյալ իր դիրքորոշումը հայտնելու հնարավորությունից, դատավորը պետք է պարտադիր համարեր դիմողի ներկայությունը դատական նիստին:

Վճռաբեկ դատարանի այս դիրքորոշման հիմքում ընկած է այն, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35–րդ հոդվածի 6–րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի առաջին մասի 6–րդ և 13–րդ կետերում նշված հիմքերով գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35–րդ հոդվածի 1–ին մասի 6–րդ կետի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները»:

Վերոշարադրյալ հոդվածի վերլուծությունից երևում է, որ, չժխտելով, որ անձի կատարած արարքն իր մեջ պարունակում է հանցակազմի հատկանիշներ, վարույթն իրականացնող մարմինը կարող է նրան ազատել քրեական պատասխանատվությունից՝ հիմք ընդունելով այն, որ կատարված արարքը կորցրել է իր վտանգավորության աստիճանը: ՀՀ քրեադատավարական օրենքն այս հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու պարտադիր նախապայման է դիտում նրա համաձայնությունը, որի բացակայությունը ենթադրում է վարույթի շարունակում ընդհանուր կարգով:

Հիմք ընդունելով վերոգրյալ դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35–րդ հոդվածի 1–ին մասի 6–րդ կետի հիմքով սույն քրեական գործի վարույթը կարճելու և Մ.Ավետիսյանի նկատմամբ

քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելով՝ քննիչը դուրս է եկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի կիրառման թույլատրելի շրջանակներից, քանի որ գործի նյութերից երևում է, որ մեղադրյալը՝ Մ.Ավետիսյանը, ո՛չ իր ցուցմունքներում, ո՛չ էլ գրավոր այլ եղանակով քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական գործի կարճման կապակցությամբ իր համաձայնությունը չի տվել:

16. Ուստի, հիմք ընդունելով վերոշարադրյալ դատողությունները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ներկայացված բողոքը ենթակա է բավարարման, և սույն գործը պետք է ուղարկվի Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մյասնիկ Հարութիկի Ավետիսյանի բողոքի վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի մարտի 16-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մայիսի 8-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

23.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության

ԱՐԱԴ/0050/01/08

վերաքննիչ քրեական դատարանի որոշում

նախագահող դատավոր՝ Ա.Հովհաննիսյան

դատավորներ՝ Տ.Սահակյան, Ե.Դարբինյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԳԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈԳՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*մասնակցությամբ դատախազ  
պաշտպաններ* Ա. ԲՈՇՆԱԳՅԱՆԻ  
Ա. ՇԱՀԲԱԶՅԱՆԻ  
Գ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻ

29 հունիսի 2009 թվական

բ. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով Հասմիկ Արտաշեսի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 19-ի որոշման դեմ ամբաստանյալ Հ. Պետրոսյանի բերած վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

Քրեական գործը հարուցվել է 2008թ. հոկտեմբերի 10-ին:

2008թ. հոկտեմբերի 13-ին Հ. Պետրոսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 311<sup>1</sup>-րդ հոդվածի 2-րդ մասով ներգրավվել է որպես մեղադրյալ:

2008թ. հոկտեմբերի 30–ին գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարան:

Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը գործը քննել է դատական քննության արագացված կարգի կիրառմամբ և 2009թ. հունվարի 21–ի դատավճռով Հ.Պետրոսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 311<sup>1</sup>–րդ հոդվածի 2–րդ մասով ու դատապարտել ազատազրկման 3 տարի ժամկետով՝ 2 տարի ժամկետով զրկելով որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. մարտի 19–ի որոշմամբ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. հունվարի 21–ի դատավճիռը թողնվել է անփոփոխ, իսկ պաշտպանի վերաքննիչ բողոքը՝ առանց բավարարման:

Վճռաբեկ բողոքը բերվել է 2009թ. ապրիլի 20–ին ամբաստանյալի կողմից:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2–րդ հոդվածի 1–ին մասի 2–րդ և 3–րդ կետերի հիման վրա, 2009 թվականի մայիսի 19–ի որոշմամբ բողոքն ընդունել է վարույթ:

### **Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.**

Գատավճռով հաստատված է համարվել այն, որ 2008թ. հոկտեմբերի 10–ին՝ ժամը 16–ին, «Ապարան բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տեսուչ, բժշկական հանձնաժողովի քարտուղար Հասմիկ Պետրոսյանը, չլինելով պաշտոնատար անձ և հանդիսանալով հանրային ծառայող, 2000 թվականից էլիելատիկ հիվանդությամբ տառապող և վարորդական վկայական ստանալու իրավունք չունեցող Ռ.Բաղդասարյանի օգտին ակնհայտ ապօրինի գործողության՝ առողջական վիճակի վերաբերյալ կեղծ տեղեկանք տալու դիմաց, որպես ապօրինի վարձատրություն նրանից պահանջել և անձամբ ստացել է 30.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության 6 հատ 5000 դրամանոց թղթադրամներ, ինչը ըստ էության անց Հ.Պետրոսյանի անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է նրա բժշկական հագուստի գրպանից:

### **Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքի հեղինակը գտնում է, որ ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 19–ի որոշումն անօրինական է, անհիմն և չպատճառաբանված, կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի էական խախտումներով, չեն կիրառվել ՀՀ քրեական օրենսգրքի 10–րդ, 48–րդ, 61–րդ և 70–րդ հոդվածների պահանջները, խախտվել է ՀՀ դատական օրենսգրքի 15–րդ հոդվածի 4–րդ մասի պահանջը և անտեսվել Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը, որն արտահայտված է ՎԲ –192/07 և ՎԲ –55/07 որոշումներում, հաշվի չի առնվել, որ ինքը կին է, նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրականորեն, զղջում է կատարածի համար, վատառողջ է:

Վերոգրյալի հիման վրա բողոքը բերած անձը խնդրում է «պատժաչափի կիրառման մասով» բեկանել և փոփոխել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվակա-

նի մարտի 19–ի դատական ակտը և իր նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ «Դատավճիռ կայացնելիս դատարանը ներկայացված հաջորդականությանը լուծում է հետևյալ հարցերը. (...)

6) ենթակա է արդյո՞ք պատժի ամբաստանյալն իր կատարած հանցանքի համար.

7) ին՞չ պատիժ պետք է նշանակվի նրա նկատմամբ.

8) ամբաստանյալն արդյո՞ք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը (...):»:

Նշված հարցերի լուծման ընթացքում դատարանը պետք է ղեկավարվի ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի մի շարք դրույթներով:

Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 10–րդ հոդվածի համաձայն՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժն արդարացի է, եթե համապատասխանում է հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անճնավորությանը, անհրաժեշտ և բավարար է անձին ուղղելու և նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 61–րդ հոդվածի 1–ին մասը սահմանում է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով նույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

ՀՀ քրեական օրենսգրքի 48–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվող պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

Պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս դատարանը հաշվի է առնում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 62–րդ և 63–րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Հանցակազմի սահմաններից դուրս գտնվելով՝ դրանք բնութագրում են ինչպես կատարված հանցագործությունը, այնպես էլ հանցավորի անճնավորությունը, հնարավորություն են տալիս պատկերացում կազմել հանցավորի անճնավորության և հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի մասին՝ համապատասխանաբար բարձրացնելով կամ իջեցնելով այն: Դրանց գնահատմամբ է հնարավոր յուրաքանչյուր կոնկրետ գործով անհատական մոտեցում ցուցաբերել ինչպես պատժի տեսակը և չափը որոշելիս, այնպես էլ այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս:

Քրեական օրենքի Ընդհանուր մասի վերը թվարկված դրույթներից հետևում է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ ինչպես պատժատեսակի և պատժաչափի, այնպես էլ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության վերաբերյալ դատարանի կողմից կայացված որոշումը պետք է հիմնված լինի կատարած հանցագործության, դրա առանձնահատկությունների, գործի կոնկրետ հանգամանքների, հանցավորի անձի, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների բազմակողմանի գնահատման վրա՝ նպատակ ունենալով ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48–րդ հոդվածի 2–րդ մասում նշված պատժի նպատակների իրագործման հնարավորությունը:

ՀՀ քրեական օրենսգրքի 70–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

Նույն հոդվածի 2–րդ մասը սահմանում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Ընդ որում, պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգրքը ինչպես հանցագործությունների տեսակների, հանցավոր արարքի վտանգավորության աստիճանի ու բնույթի, այնպես էլ անձանց շրջանակի հետ կապված որևէ հատուկ սահմանափակում չի նախատեսել:

Այսինքն՝ օրենսդիրը պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմք է համարում դատարանի հանդիմանությունը, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց որոշակի պատժատեսակները ռեալ կրելու:

Նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը պետք է հանգամանորեն քննության առնի ինչպես հանցագործության կատարման, այնպես էլ հանցավորի անձին վերաբերող բոլոր հանգամանքները: Կարևորն այն է, որ դատարանը հանգի հիմնավոր եզրակացության, որ դատապարտյալի ուղղումը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու:

Արագաձուտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը դատավճռում նշել է, որ Հ.Պետրոսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի է առնում նրա կատարած արարքի հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք դիտում է այն, որ նա կին է, նախկինում ոչնչով արատավորված չի եղել, բնութագրվում է դրականորեն, վատառողջ է, զոջացել է կատարածի համար: Դատարանը նշել է, որ պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները բացակայում են:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը առաջին ատյանի դատարանի դատավճիռն անփոփոխ թողնելու վերաբերյալ որոշման մեջ նշել է, որ հաշվի է առնում կատարված հանցագործության բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, հանցագործության կատարման կոնկրետ հանգամանքները, ամբաստանյալի անձը բնութագրող ու պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակա-

յությունը, մեղքի ձևը: Վերաքննիչ դատարանը գտել է, որ Հ.Պետրոսյանի նկատմամբ նշանակվել է համաչափ պատիժ, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառումը «անհրաժեշտ ու բավարար չէ ամբաստանյալի ուղղման և նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու համար»:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանը սխալ հետևության է հանգել Հ.Պետրոսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակներին հասնելու հնարավորության մասին:

Ինչպես երևում է գործի նյութերից, Հասմիկ Պետրոսյանը կատարել է միջին ծանրության հանցանք, նախկինում դատապարտված չի եղել, կին է, բնութագրվում է դրականորեն, գղջում է կատարածի համար, վատառողջ է: Նրա պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Հաշվի առնելով Հասմիկ Պետրոսյանի անձը բնութագրող վերը նշված տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ուստի նրա նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չպետք է կիրառել:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա Հասմիկ Պետրոսյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը: Հասմիկ Պետրոսյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելը բխում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված՝ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքից ու պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից:

Գործում Հասմիկ Պետրոսյանի անձը բնութագրող տվյալների, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների առկայության և պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում որոշում կայացնելով նրա նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելը մերժելու մասին՝ վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում. չի կիրառել օրենքի այն հոդվածը, որը ենթակա էր կիրառման: Դ-ա հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող չիմնավորված որոշման կայացման, ինչը նույն օրենսգրքի 398-րդ հոդվածով նախատեսված քրեադատավարական օրենքի էական խախտում է:

Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները, որոնք ազդել են դատապարտյալի նկատմամբ նշանակված պատիժը կրելու մասով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա, վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք են: Ուստի անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ



հողվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա բեկանել և փոփոխել վերաքննիչ դատարանի դատական ակտը, քանի որ վերջինիս կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնել նման ակտ, և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Նկատի ունենալով, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2009թ. հունիսի 19-ին ընդունված «Համաներում հայտարարելու մասին» որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ այն անձինք, որոնց նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, ազատվում են պատժից, ուստի Հասմիկ Պետրոսյանը պետք է ազատվի սույն գործով նշանակված հիմնական պատժից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Հասմիկ Արտաշեսի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 311<sup>1</sup>-րդ հոդվածի 2-րդ մասով Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հունվարի 21-ի դատավճիռն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 19-ի որոշումն ազատագրկման ձևով նշանակված պատժի մասով բեկանել և փոփոխել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311<sup>1</sup>-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակված 3 /երեք/ տարի ժամկետով ազատագրկումը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան 2 /երկու/ տարի ժամկետով:

2. «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի հիման վրա Հասմիկ Արտաշեսի Պետրոսյանին ազատել նշանակված հիմնական պատժից:

3. Հասմիկ Արտաշեսի Պետրոսյանին անհապաղ ազատել կալանքից:

4. Մնացած մասերով դատական ակտը թողնել օրինական ուժի մեջ:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

24.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի  
ԵՔԲԴ/0219/01/08 որոշում

ԵՔԲԴ/0219/01/08

նախագահող դատավոր՝ Հ. Տեր-Աղամյան  
դատավորներ՝ Ռ. Ազարյան, Ժ. Հովսեփյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

29 հունիսի 2009 թվական

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով Գևորգ Արմենի Հախնազարյանի վերաբերյալ գործով Երևանի քրեական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 12-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 13-ի որոշման դեմ ամբաստանյալ Գ.Հախնազարյանի օրինական ներկայացուցիչ Ա.Հախնազարյանի բերած վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. Քրեական գործը հարուցվել է 2007թ. նոյեմբերի 13-ին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

2. Նախաքննության մարմնի 2007թ. նոյեմբերի 20-ի որոշմամբ Գ.Հախնազարյանը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ներգրավվել է որպես մեղադրյալ:

2007թ. դեկտեմբերի 11-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել Ա.Հախնազարյանին որպես ամբաստանյալ Գ.Հախնազարյանի օրինական ներկայացուցիչ ճանաչելու մասին:

Նախաքննության մարմնի 2007թ. դեկտեմբերի 11-ի որոշմամբ Գ.Հախնազարյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով:

3. 2008թ. մայիսի 5-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի քրեական դատարան:

Երևանի քրեական դատարանի 2008թ. դեկտեմբերի 12-ի դատավճռով Գ.Հախնազարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով և դատապարտվել ազատազրկման 8 տարի ժամկետով:

Տուժողի օրինական ներկայացուցիչ Գ.Զաքոյանի կողմից հարուցված քաղաքացիական հայցը բավարարվել է մասնակիորեն: Դատավճռով որոշվել է Գ.Հախնազարյանի ծնողներից՝ Ա.Հախնազարյանից և Հ.Հովսեփյանից, հօգուտ Գ.Զաքոյանի և նրա օրինական ներկայացուցիչ Գ.Զաքոյանի որպես հանցագործությամբ պատճառված վնաս բռնագանձել 881.000 ՀՀ դրամ:

4. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. մարտի 13-ի որոշմամբ Երևանի քրեական դատարանի 2008թ. դեկտեմբերի 12-ի դատավճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ դատարանի 2009թ. մարտի 13-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Գ.Հախնազարյանի օրինական ներկայացուցիչ Ա.Հախնազարյանը:

Վճռաբեկ բողոքին պատասխան է ներկայացրել Շենգավիթ համայնքի դատախազության ավագ դատախազ Գ.Լյուդվիգյանը:

Վճռաբեկ դատարանի 2009 թվականի մայիսի 7-ի որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար») վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.**

6. Գևորգ Արմենի Հախնազարյանը 2007թ. նոյեմբերի 13-ին՝ ժամը 19.00-ի սահմաններում, Երևան քաղաքի Մանթաշյան փողոցի 4/7-րդ շենքի բակում անհիմն վիճաբանել է անչափահաս Դավիթ Գազիկի Զաքոյանի հետ, որի ընթացքում խուլիգանական դրդումներով, այն է՝ իր անձի առավելությունը վերջինիս նկատմամբ ցուցադրելու միտումով, Գ.Զաքոյանին ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ, նախապես իր հետ վերցրած և գրպանում պահած դանակով հինգ անգամ հարված է հասցրել նրան, որոնցից չորսը դիպել են Դավիթ Զաքոյանի կյանքի համար կարևոր օրգաններին, իսկ հինգերորդ հարվածը՝ դանակի հարվածները կանխել փորձող Դավիթ Հովսեփյանի ձախ ձեռքին: Դրանից հետո Գ.Հախնազարյանը դիմել է փախուստի՝ իր կամքից անկախ պատճառներով չկարողանալով դիտավորությունը հասցնել մինչև վերջ:

7. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից սույն գործը քննվել է վճռաբեկ դատարանում գործերի քննության համար սահմանված կանոններով: Նշված կարգով գործը քննելու իր որոշման մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը հայտարարել է ըստ էության որոշում կայացնելու համար խորհրդակցական սենյակ հեռանալուց անմիջապես առաջ:

**Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Ըստ վճռաբեկ բողոքի հեղինակի՝ վերաքննիչ քրեական դատարանի որոշումն անօրինական է և չպատճառաբանված, նախաքննության մարմնի կողմից առաջադրված մեղադրանքը դատաքննությամբ չի հիմնավորվել, Գ.Հախնազարյանի կատարած գործողությունները չեն համապատասխանում ՀՀ քրեական օրենսգրքի 34–104–րդ հոդվածի 2–րդ մասի 10–րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին, նրա արարքը պետք է որակվի ՀՀ քրեական օրենսգրքի 112–րդ հոդվածի 1–ին մասով: Բողոք բերող անձը գտնում է, որ տվյալ դեպքում բացակայում են սպանության փորձի հանցակազմի հատկանիշները, քանի որ կողմնակի անձանց միջամտություն չի եղել, որը կարող էր արգելք հանդիսանալ հանցանքը ավարտին հասցնելու համար, ինչպես նաև Գ.Հախնազարյանի կողմից ծանր մարմնական վնասվածքը հասցվել է առանց խուլիգանական դրդումների, քանի որ նրա գործողությունները զուգորդված չեն եղել հասարակական կարգի կոպիտ խախտումներով, նա չի դրսևորել բացառիկ ցինիզմ կամ բացահայտ անհարգալից վերաբերմունք հասարակության նկատմամբ:

9. Բողոք բերած անձի կարծիքով՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը ենթակա է բեկանման նաև այն պատճառով, որ այն կայացվել է դատավարական իրավունքի նորմերի կոպիտ խախտմամբ՝ չեն կիրառվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 354–րդ, 355–րդ և 392–րդ հոդվածներով նախատեսված պահանջները, այն է՝ անտեսվել է դատական վիճաբանություններին անցնելու պարտադիր լինելը և ամբաստանյալին չի տրամադրվել վերջին խոսքի իրավունք:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքի հեղինակը խնդրել է ամբողջովին բեկանել Գ.Հախնազարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34–104–րդ հոդվածի 2–րդ մասի 10–րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. մարտի 13–ի որոշումը, փոխել հանցագործության որակումը և պատիժ սահմանել ՀՀ քրեական օրենսգրքի 112–րդ հոդվածի 1–ին մասով:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

10. Նախքան վճռաբեկ բողոքում բարձրացված հարցերին անդրադառնալը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում դիրքորոշում հայտնել նշված հարցերի միջև առկա կապի վերաբերյալ: Այսպես, բողոքաբերի կողմից բարձրացված առաջին հարցը վերաբերում է Գ.Հախնազարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 34–104–րդ հոդվածի կիրառման իրավաչափությանը, այսինքն այս հիմքով բողոքը վերաբերում է նյութական իրավունքի խախտմանը: Բարձրացված երկրորդ հարցը վերաբերում է նրան, թե Գ.Հախնազարյանի գործով ներկայացված վերաքննիչ բողոքի

քննության ժամանակ վերաքննիչ դատարանն իրավասու էր արդյոք գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնել՝ առանց դատական վիճաբանություններն ու ամբաստանյալի վերջին խոսքն ունկնդրելու, այսինքն՝ փաստարկվում է դատավարական իրավունքի խախտման առկայությունը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքաբերի կողմից վկայակոչված նյութական և դատավարական իրավունքի խախտումները փոխկապակցված են. նյութական իրավունքի ենթադրյալ խախտումը կարող է հետևանք լինել ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի ենթադրյալ խախտման, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջին հերթին անհրաժեշտ է քննության առնել ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից սույն բողոքի քննության ժամանակ թույլ տրված դատավարական իրավունքի նորմի ենթադրյալ խախտման հարցը, քանի որ նման խախտման փաստի արձանագրման դեպքում անհնար կլինի դատողություններ անել անձին մեղսագրվող արարքի հիմնավոր կամ անհիմն լինելու, այսինքն՝ անձի նյութական իրավունքի խախտման առկայության կամ բացակայության վերաբերյալ:

11. Դատավարական իրավունքի խախտմանն առնչվող՝ նախորդ կետում բարձրացված հարցին պատասխանելու համար մախ և առաջ անհրաժեշտ է պարզել, թե որ դեպքերում է վերաքննիչ դատարանը գործը քննում վերաքննության և որ դեպքերում՝ վճռաբեկության կարգով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վերաքննիչ դատարանում գործերի քննությունը կատարվում է սույն գլխում շարադրված կանոններով, ինչպես նաև վճռաբեկ դատարանում գործերի քննության համար սահմանված կանոններով»:

Նշված հոդվածի վերլուծությունից երևում է, որ վերաքննիչ դատարանում գործերի քննության կարգի նախատեսման հետ կապված դրույթները միայնացից տարանջատված են «ինչպես նաև» շաղկապով:

Իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ «(...) եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «ինչպես նաև» բառերով բաժանված պայմաններով, ապա «ինչպես նաև» բառերից հետո շարադրված պայմանները համարվում են նախկին պայմանների հետ չկապված պայմաններ»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը»:

Վերոգրյալ հոդվածները թույլ են տալիս եզրակացնել, որ վերաքննիչ դատարանում գործերի քննությունը կարող է իրականացվել կամ վերաքննության կարգով (քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ գլխի կանոններով) կամ վճռաբեկության կարգով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 48-րդ գլխի կանոններով):

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ բաժինը, որը կարգավորում է վերաքննիչ դատարանում վարույթի հետ կապված հարցերը, չի սահմանում այն դեպքերն ու պայմանները, որոնց առկայության պարագայում գործը կարող է քննվել

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կա՛մ 47–րդ, կա՛մ 48–րդ գլխի կանոններով: Այսինքն, օրենսդիրը այդ վարույթի իրականացման դատավարական ձևի կիրառման հետ կապված հարցերը թողել է վերաքննիչ դատարանի հայեցողությանը:

Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381–րդ հոդվածի 1–ին մասի 6–րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը պետք է բովանդակի՝ առկայության դեպքում՝ այն ապացույցները, որոնցով դիմողը հիմնավորում է իր պահանջները, և որոնք պետք է հետազոտվեն վերաքննիչ դատարանում, այդ թվում՝ նաև առաջին ատյանի դատարանում օբյեկտիվ պատճառներով չհետազոտված ապացույցները:

ՀՀ քրեական օրենսգրքի 382–րդ հոդվածի 3–րդ մասի համաձայն՝ «Բացառիկ դեպքերում կողմերն իրավունք ունեն իրենց բողոքի, ինչպես նաև մյուս կողմի բողոքի կապակցությամբ տրված պատասխանների հիմքերը հաստատելու համար դատարան ներկայացնելու նոր նյութեր կամ միջնորդելու դատարան կանչել իրենց նշած վկային կամ փորձագետին, նշանակելու փորձաքննություն, եթե նրանք հիմնավորում են, որ օբյեկտիվորեն հնարավորություն չեն ունեցել ներկայացնելու այդ նյութերը, կանչելու վկային կամ փորձագետին, ինչպես նաև առաջին ատյանի դատարանում միջնորդելու նշանակել փորձաքննություն, կամ հիմնավորում են, որ ներկայացված միջնորդությունն առաջին ատյանի դատարանի կողմից մերժվել է անհիմն»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ «Բացառությամբ սույն օրենսգրքի 45<sup>1</sup> գլխի կանոններով քննված գործերի, վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է գործում եղած, իսկ սույն օրենսգրքի 382 հոդվածի երրորդ մասով նախատեսված բացառիկ դեպքերում՝ նաև լրացուցիչ ներկայացվող ապացույցներով»:

13. Նախորդ կետում շարադրված իրավանորմների վերլուծությունից բխում է, որ լրացուցիչ ներկայացվող ապացույցներով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը բողոքը կարող է քննել այն դեպքերում, երբ համոզվում է, որ բողոքաբերը օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել այդ ապացույցները ներկայացնել մինչև վերաքննիչ դատարանում գործի քննությունը, այսինքն՝ գործով մինչդատական վարույթի և առաջին ատյանի դատարանում վարույթի ընթացքում:

Լրացուցիչ ապացույցների ներկայացման կամ հետազոտման օբյեկտիվ հիմքերի բացակայության դեպքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը իրավասու է գործը քննել վճռաբեկության, այսինքն, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 418–րդ հոդվածով սահմանված կարգով:

14. Սույն գործով վճռաբեկ դատարանի քննության առարկա հանդիսացող հաջորդ հարցն այն է, թե վերաքննիչ դատարանում գործի քննության դատավարական ձևը որոշելուց հետո վերաքննիչ դատարանը պարտավո՞ր է արդյոք դատավարության մասնակիցներին տեղեկացնել վերաքննիչ դատարանում բողոքի քննության կարգի մասին, թե՛ ոչ, և եթե՛ այո, ապա ի՞նչ որոշմամբ և ե՞րբ:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 389–րդ հոդվածի 3–րդ մասի համաձայն՝ «(վերաքննիչ դատարանի) դատական նիստ նշանակելու որոշման մեջ պետք է լուծվեն հետևյալ հարցերը՝ գործի քննությունը սկսելու ժամանակը և տեղը, ելնելով դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը պատշաճ կերպով ստուգելու անհրաժեշտությունից՝ դատական նիստում անմիջականորեն հետազոտ-

ման ենթակա ապացույցների ծավալը, դատական նիստին կանչվող վկաները, փորձագետը և այլ անձինք, եթե դա անհրաժեշտ է (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նշված հոդվածի բովանդակությունից երևում է, որ դատական նիստ նշանակելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը հանդիսանում է այն դատավարական փաստաթուղթը, որի միջոցով դատավարության մասնակիցները տեղեկանում են վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակի և տեղի վերաբերյալ, ինչպես նաև, էլնելով դատարանի կողմից որոշված՝ հետազոտման ենթակա ապացույցների ծավալից, պատկերացում են կազմում, թե ինչ սահմաններում է քննվելու բողոքը: Հետևաբար՝ դատական նիստ նշանակելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումն այն դատավարական փաստաթուղթն է, որում պետք է ամրագրվի, թե արդյոք վերաքննիչ դատարանը մտադիր է վճռաբեկության կարգ կիրառել, թե ոչ:

16. Հիմնվելով Ալիխանյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի որոշման 16-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշման վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկության կարգ կիրառելու որոշում պարունակող Վերաքննիչ դատարանի դատական նիստ նշանակելու մասին որոշումը, գործն ըստ էության լուծող դատական ակտի վերանայմանը վերաբերելու դեպքում, կարող է կայացվել միայն դատարանի կոլեգիալ կազմով: Այդպիսի որոշումը կարող է էական ազդեցություն ունենալ վերաքննիչ բողոքարկման իրավունքի արդյունավետ կենսագործման վրա, ուստի բողոքաբերին պետք է տրվի կոլեգիալության լրացուցիչ երաշխիք:

Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ «Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծում է կոլեգիալ (...):»: Ուստի վճռաբեկության կարգ կիրառելու մասին վերաքննիչ դատարանի որոշումը ևս պետք է կայացվի կոլեգիալ:

17. Մույն որոշման 15-րդ կետում շարադրված վճռաբեկ դատարանի դիրքորոշումը բխում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածում ամրագրված արդար դատական քննության իրավունքի երաշխիքներից, որոնցից մեկն էլ քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի համար իր պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար ժամանակ ու հնարավորություններ ունենալու իրավունքն է, ինչպես նաև Կոնվենցիային կից 7-րդ Արձանագրության 2-րդ հոդվածից, որը հանցագործության համար դատապարտված յուրաքանչյուր անձի համար նախատեսում է իր գործի վերանայման իրավունք:

Վճռաբեկ դատարանի այս դիրքորոշումը հիմնված է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների վրա: Այսպես, *Դելկուրն ընդդեմ Բելգիայի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ այն դեպքում, երբ պետությունն իր ազգային իրավունքում նախատեսում է վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, ապա այդ դատարաններում վարույթի ընթացում անձինք պետք է օժտված լինեն 6-րդ հոդվածի՝ արդար դատաքննության իրավունքի հիմնարար երաշխիքներով: Երաշխիքների կիրառման եղանակները, այնուամենայնիվ, կախված են գործի քննության առանձնա-

հատկություններից (տե՛ս *Delcourt v. Belgium* գործով 1970թ. հունվարի 17–ի վճիռը, գանգատ թիվ 2689/65, կետ 25):

*Մոնեյլը և Մորիսն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նմանապես նշել է, որ դատական վերանայման վարույթներում Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 1–ին կետի և 3–րդ կետի «գ» ենթակետի կիրառելիության հարցը լուծելիս պետք է հաշվի առնել ազգային իրավական համակարգերում իրականացվող վարույթների ընդհանուր քանակը, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դերը (տես՝ *Monnell and Morris v. the United Kingdom* գործով 1987թ. մարտի 2–ի վճիռը, գանգատներ թիվ 9562/81, 9818/82, կետ 56):

18. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատավարության մասնակիցները պետք է նախապես տեղյակ լինեն, թե ինչ դատավարական ձևով է իրականացվելու բողոքի քննությունը վերաքննիչ դատարանում, քանի որ դա անձի արդար դատական քննության իրավունքի ապահովման կարևորագույն երաշխիք է:

Մինչդեռ սույն գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը վճռաբեկ դատարանում գործի քննության համար սահմանված կանոններով գործը քննելու իր որոշման մասին հայտարարել է ըստ էության որոշում կայացնելու համար խորհրդակցական սենյակ հեռանալուց անմիջապես առաջ (տե՛ս սույն որոշման 7–րդ կետը): Այսինքն՝ մինչ այդ պահը դատավարության մասնակիցները չեն իմացել և չէին կարող իմանալ, որ վերաքննիչ դատարանը գործը քննելու է վճռաբեկ դատարանում գործերի քննության համար սահմանված կանոններով, և հետևաբար՝ դատական վիճաբանություններ չեն լինելու և ամբաստանյալին վերջին խոսքի իրավունք չի տրամադրվելու: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դա Կոնվենցիայի 6–րդ հոդվածի խախտում է:

19. Այսպիսով, սույն գործով բարձրացված այն հարցի կապակցությամբ, թե որ դեպքերում է վերաքննիչ դատարանը գործը քննում վերաքննության և որ դեպքերում՝ վճռաբեկության կարգով, Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը հետևյալն է՝ վերաքննիչ դատարանը կարող է գործը քննել վճռաբեկ դատարանում գործերի քննության համար սահմանված կանոններով միայն այն դեպքում, երբ՝

ա) դատական նիստ նշանակելու մասին որոշման մեջ նշել է այդ մասին և հիշյալ որոշումը պատշաճ կարգով ուղարկվել է դատավարության մասնակիցներին,

բ) վերաքննիչ բողոք կամ բողոքի պատասխան ներկայացրած կողմը նոր նյութեր չի ներկայացրել և չի միջնորդել հավաքելու կամ հետազոտելու նոր ապացույցներ, կամ վերաքննիչ դատարանն այն համոզման է եկել, որ կողմը, միջնորդելով գործին կցել նոր նյութեր, կամ դատարան կանչել իր նշած վկային կամ փորձագետին կամ նշանակել փորձաքննություն, չի հիմնավորել, որ առաջին ատյանի դատարանում օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել կատարելու վերոնշյալ գործողությունները, կամ որ դրանց կատարման վերաբերյալ միջնորդությունները առաջին ատյանի դատարանի կողմից մերժվել են անհիմն:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ եթե վերաքննիչ դատարանը գործը դատական քննության նշանակելու մասին որոշման մեջ չի նշել վճռաբեկության կարգով գործը քննելու իր մտադրության մասին, ապա այլևս չի կարող բողոքի քննության ժամանակ փոխել այդ որոշումը և գործը քննել վճռաբեկ դատարանում գործի քննության համար սահմանված կանոններով: Սակայն, եթե վերաքննիչ դա-



տարանը որոշել է գործը քննել վճռաբեկ դատարանում գործի քննության համար սահմանված կանոններով, ապա գործի քննության ժամանակ կարող է փոխել որոշումը և գործը քննել վերաքննիչ դատարանում գործի քննության համար սահմանված կանոններով, եթե օբյեկտիվորեն առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 382-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքերը:

20. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, առանց դատական վիճաբանություններն ունկնդրելու և ամբաստանյալի վերջին խոսքը լսելու խորհրդակցական սենյակ հեռանալով և գործով ըստ էության որոշում կայացնելով, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 354-րդ, 355-րդ և 392-րդ հոդվածների պահանջների խախտումներ: Այդ խախտումներն իրենց բնույթով էական են և կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ դրանք հիմք են դատական ակտը բեկանելու և գործը վերաքննիչ դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

21. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ անհնար է դատողություն անել անձին մեղսագրվող արարքի հիմնավոր կամ անհիմն լինելու, այսինքն՝ անձի նյութական իրավունքի խախտման առկայության կամ բացակայության վերաբերյալ: Հետևաբար՝ Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում բողոքաբերի կողմից փաստարկված՝ նյութական իրավունքի խախտման հարցին, որը կապված է Գ.Հախնազարյանի արարքի որակման հետ:

22. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանի կողմից գործը վճռաբեկ դատարանում գործի քննության համար սահմանված կանոններով քննելու իրավական հարցի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Գևորգ Արմենի Հախնազարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 13-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն  
Դատավորներ՝ ստորագրություններ*

25.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության ՀՔԲԴ/0436/01/08  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
քրեական գործ թիվ ՀՔԲԴ/0436/01/08

նախագահող դատավոր՝ Մ.Արղամանյան  
դատավորներ՝ Ա.Գանիեյան, Մ.Ռեհանյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՄԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԳԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԴՌԻԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
*մասնակցությամբ մեղադրող* Մ. ՇԱՀԳԱԼԳՅԱՆԻ

2009 թվականի հունիսի 29–ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ամբաստանյալ Լևոն Կարապետի Հովհաննիսյանի պաշտպաններ Ռ.Սիրեկանյանի, Գ.Հակոբյանի, ամբաստանյալ Վարդան Մուրիկի Հակոբյանի պաշտպան Ա.Ջուվանովայի և ամբաստանյալ Սամվել Վարդանի Գրիգորյանի պաշտպան Վ.Գրիգորյանի վճռաբեկ բողոքները ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2009 թվականի մարտի 23–ի որոշման դեմ,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1.Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2008 թվականի մայիսի 9–ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Շենգավիթի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 175–րդ հոդվածի

2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է թիվ 11108408 քրեական գործը՝ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, շինութ-յուն ապօրինի մուտք գործելու եղանակով ավազակային հարձակում կատարելու և խոշոր չափերի գույք հափշտակելու փաստի առթիվ:

Նույն օրը Լ.Հովհաննիսյանը, Վ.Հակոբյանը և Ս.Գրիգորյանը ձերբակալվել են:

2008 թվականի մայիսի 12-ին Լ.Հովհաննիսյանը, Վ.Հակոբյանը և Ս.Գրիգորյանը ներգրավվել են որպես մեղադրյալ, նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեա-կան օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Երևանի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի մայիսի 12-ի որոշումներով Լ.Հովհաննիսյանի, Վ.Հակոբյանի և Ս.Գրիգորյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալա-նավորումը:

2008 թվականի հունիսի 12-ին Լ.Հովհաննիսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2008 թվականի հունիսի 13-ին Ս.Գրիգորյանին առաջադրված մեղադրանքը փո-փոխվել և լրացվել է, նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 165-րդ հոդվածի 4-րդ մասով:

2008 թվականի օգոստոսի 26-ին Վ.Հակոբյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել և լրացվել է, նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենս-գրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 177-րդ հոդվածի 1-ին մասով:

2008 թվականի սեպտեմբերի 5-ին քրեական գործը մեղադրական եզրակացութ-յամբ ուղարկվել է Երևանի քրեական դատարան (այսուհետ՝ Քրեական դատարան):

2. Քրեական դատարանի 2009 թվականի հունվարի 16-ի դատավճռով Ս.Գրիգոր-յանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 165-րդ հոդվածի 4-րդ մասով և դատապարտվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ազատազրկման 9 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, 165-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ազատազրկման 5 տարի ժամկե-տով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կարգով, պատիժները մաս-նակիորեն գումարելու միջոցով, Ս.Գրիգորյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 10 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Լ.Հովհաննիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվա-ծի 3-րդ մասի 1-ին կետով և նույն օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ՝ դատա-պարտվել ազատազրկման 6 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Վ.Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 177-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել 175-րդ հոդ-վածի 3-րդ մասի 1-ին կետով, նույն օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ, ազա-տազրկման 6 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, 177-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման 6 ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կարգով, պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Վ.Հակոբյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 6 տարի 3 ամիս ժա-մկետով՝ առանց գույքի բռնագրավման:

3. Պաշտպանի և մեղադրողի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2009 թվականի մարտի 23-ի որոշմամբ պաշտպանի և բողոքը մերժել է, իսկ մեղադրողի բողոքը՝ բավարարել է: Լ.Հովհաննիսյանի և Վ.Հակոբյանի նկատմամբ նշանակված պատիժների մասով փոփոխելով Քրեական դատարանի 2009 թվականի հունվարի 16-ի դատավճիռը:

Լ.Հովհաննիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել ազատազրկման 8 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Վ.Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 177-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ազատազրկման 8 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, 177-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման 6 ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կարգով, պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Վ.Հակոբյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 8 տարի 3 ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Գատավճիռը մնացած մասով թողնվել է օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2009 թվականի մարտի 23-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել ամբաստանյալ Լ.Հովհաննիսյանի պաշտպաններ Ռ.Միրելյանյանը, Գ.Հակոբյանը, ամբաստանյալ Վ.Հակոբյանի պաշտպան Ա.Ջուվանովան և ամբաստանյալ Ս.Գրիգորյանի պաշտպան Վ.Գրիգորյանը:

Վճռաբեկ դատարանը 2009 թվականի հունիսի 4-ի որոշմամբ պաշտպանների բողոքները վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ»):

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքների պատասխան չի ներկայացվել:

## **2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

5. Ս.Գրիգորյանը, նախնական համաձայնության գալով Լ.Հովհաննիսյանի և անչափահաս՝ 1991 թվականի փետրվարի 7-ին ծնված Վ.Հակոբյանի հետ, վերջինիս խոստումներ տալու և շահագրգռելու միջոցով ներգրավելով առանձնապես ծանր հանցանք կատարելու մեջ, 2008 թվականի մայիսի 8-ի լույս 9-ի գիշերը՝ ժամը 2-ի սահմաններում, ավագակալին հարձակում կատարելու նպատակով պարսպի վրայով մուտք են գործել Երևանի Արշակունյաց պողոտա 25/1 հասցեում տեղակայված «Վան» փակ բաժնետիրական ընկերության տարածք, որտեղ որպես զենք օգտագործվող դանակի գործադրմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բնություն գործադրելու սպառնալիքներ են տվել ընկերության պահակ Մաքսիմ Խա-

չատրյանին, կաշուն ժապավենով կապել են նրա ձեռքերը, ոտքերն ու դեմքը, որից հետո տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել են վարձակալական հիմունքներով այնտեղ գործող «Սերգեյ Հովհաննիսյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության խանութի և պահեստի դռներն ու հափշտակել ընկերությանը պատկանող առանձնապես խոշոր չափերի՝ 7.802.775 ՀՀ դրամի տարբեր տեսակի կենցաղային և շինարարական ապրանքներ: Ավագակային հարձակմամբ հափշտակված գույքը Լ.Հովհաննիսյանի հորը պատկանող «Ռաֆ» մակնիշի ավտոմեքենայով երկու անգամ ընկերության տարածքից հանել են և նույն գիշեր՝ ժամը 5–ի սահմաններում, հանձնել Երևան քաղաքի բնակիչ Վ.Գազարյանին, որն իմանալով դրա՝ ակնհայտ հանցավոր ճանապարհով ձեռք բերված լինելու մասին, գնել է այն՝ հետագայում 8.000 ԱՄՆ դոլար վճարելու պայմանով:

Բացի այդ, Վ.Հակոբյանը, 2007 թվականի օգոստոսից մինչև 2008 թվականի ապրիլ ամսվա սկիզբն աշխատելով «Սերգեյ Հովհաննիսյան» ՍՊԸ–ում որպես բանվոր և աշխատանքային ժամերին գտնվելով խանութի պահեստի ներսում, զգալի չափերի գումար վաստակելու նպատակին ուղղված մեկ միասնական դիտավորությամբ, 2008 թվականի մարտ ամսվա կեսերից մինչև նույն ամսվա վերջերն ընկած ժամանակահատվածում, շարունակաբար, երեք անգամ, ընկերության պահեստից գաղտնի հափշտակել է տարբեր ապրանքներ՝ «Սերգեյ Հովհաննիսյան» ՍՊԸ–ին պատճառելով զգալի չափերի՝ 386.500 ՀՀ դրամի վնաս:

6. ՀՀ փաստաբանների պալատի Հանրային պաշտպանի գրասենյակի փաստաբաններ Վ.Գրիգորյանը և Ռ.Միրեկանյանը քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի որոշումներով որպես պաշտպան ներգրավվել են նախաքննության ընթացքում (քրեական գործ հատոր 1–ին, գ/թ 93, 136), իսկ Ա.Ջուվանովան՝ Քրեական դատարանի դատական քննության ընթացքում (քրեական գործ հատոր 3–րդ, գ/թ 154):

7. 2009 թվականի մարտի 2–ին Վերաքննիչ դատարանի կողմից Քրեական դատարանում ամբաստանյալների պաշտպանությունն իրականացրած հանրային պաշտպաններ Վ.Գրիգորյանին, Ա.Ջուվանովային և Ռ.Միրեկանյանին ուղարկվել են ծանուցագրեր, որոնցով հայտնվել է, որ քրեական գործը քննության է առնվելու 2009 թվականի մարտի 5–ին՝ ժամը 14–ին (քրեական գործ հատոր 3–րդ, գ/թ 329, 331, 333): Դատական նիստի օրվա և ժամի վերաբերյալ պաշտպաններին ուղարկված այլ ծանուցագրեր քրեական գործում առկա չեն:

8. ՀՀ փաստաբանների պալատի Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի կողմից 2009 թվականի մարտի 4–ին պաշտպաններ Վ.Գրիգորյանին, Ռ.Միրեկանյանին և Ա.Ջուվանովային տրվել են օրդերներ՝ Վերաքննիչ դատարանում գործի քննությանը մասնակցելու համար:

2009 թվականի մարտի 5–ին պաշտպան Ա.Ջուվանովայի կողմից Վերաքննիչ դատարանին է ներկայացվել դիմում, որտեղ վերջինս հայտնել է, որ նույն թվականի մարտի 6–ին՝ ժամը 14–ին, նշանակված դատական նիստին չի կարող ներկա գտնվել և խնդրել է այն հետաձգել:

9. Սույն գործով առաջին դատական նիստը Վերաքննիչ դատարանում տեղի է ունեցել 2008 թվականի մարտի 6–ին, որը հետաձգվել է պաշտպանների բացակայության պատճառով: Վերաքննիչ դատարանի 2009 թվականի մարտի 16–ի դատական

նիստն անց է կացվել պաշտպանների բացակայության պայմաններում, իսկ 2009 թվականի մարտի 23–ի դատական նիստի ժամանակ ամբաստանյալներ Ս. Գրիգորյանը, Լ. Հովհաննիսյանը և Վ. Հակոբյանն իրենց պաշտպանների բացակայության պայմաններում հրաժարվել են վերջիններից, ինչն ընդունվել է դատարանի կողմից:

### **3. Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջները**

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Ըստ պաշտպաններ Ռ.Սիրեկանյանի, Գ.Հակոբյանի և Ա.Ջուվանովայի՝ Քրեական դատարանը Լ.Հովհաննիսյանի և Վ.Հակոբյանի նկատմամբ պատիժ նշանակելիս, պատժի տեսակը և չափը որոշելիս, հաշվի է առել ամբաստանյալների կողմից կատարված հանցագործությունների՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, նրանց անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները և ՀՀ քրեական օրենսգրքի 64–րդ հոդվածի կիրառմամբ վերջիններիս նկատմամբ նշանակել արդարացի պատիժ, իսկ Վերաքննիչ դատարանը, թույլ տալով նյութական իրավունքի նորմերի խախտումներ, պատիժները խստացման առումով փոփոխել է:

11. Պաշտպան Վ. Գրիգորյանն իր բողոքում նշել է, որ Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել նյութական իրավունքի նորմերի խախտումներով, ճիշտ չի կիրառել քրեական օրենքը՝ իրավաբանորեն ճիշտ չի որակել Ս.Գրիգորյանին մեղսագրվող արարքը:

12. Ռ.Սիրեկանյանը, Ա.Ջուվանովան և Վ.Գրիգորյանն իրենց բողոքներում նշել են, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69–րդ, 72–րդ, 73–րդ և 360–րդ հոդվածների խախտումներ: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանի կողմից 2009 թվականի փետրվարի 27–ին ծանուցագիր է ուղարկվել ՀՀ փաստաբանների պալատի Հանրային պաշտպանի գրասենյակ, որով հայտնվել է, որ նույն թվականի մարտի 5–ին՝ ժամը 14–ին, դատարանը քննելու է սույն գործը: Նշված օրը ներկայանալով դատարան՝ իրենք պարզել են, որ ծանուցագրում դատական նիստի օրը սխալ է նշված՝ իրականում այն նշանակված է 2009 թվականի մարտի 6–ին: Մեկ այլ գործով զբաղված լինելու պատճառով դիմում են ներկայացրել դատարան՝ խնդրելով հետաձգել դատական նիստը և նշանակել մեկ այլ օր: Հիշատակված ծանուցագրից բացի սույն գործով այլ ծանուցագիր Հանրային պաշտպանի գրասենյակ մուտք չի եղել, դատական նիստերը մի քանի անգամ հետաձգվել են, իսկ 2009 թվականի մարտի 23–ի դատական նիստի ժամանակ ամբաստանյալները, նշանակված պաշտպանների բացակայության հանգամանքով պարտադրված, հրաժարվել են պաշտպաններից, ինչն ընդունվել է դատարանի կողմից:

Ըստ բողոք բերող անձանց, իրենք սույն գործով հանդիսացել են նշանակված պաշտպաններ, հետևաբար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 72–րդ հոդվածի 2–րդ մասի հիման վրա Վերաքննիչ դատարանը նշանակված պաշտպաններից ամբաստանյալների հրաժարվելն իրավունք ունեւ ընդունել միայն իրենց ներկայությամբ: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 72–րդ հոդվածի 2–րդ մասը, իրենց բացակայությամբ ընդունել է ամբաստանյալներից:

տանյալների հրաժարումը պաշտպաններից, պաշտպանների պարտադիր մասնակցության պայմաններում գործը քննել է իրենց բացակայությամբ՝ այդպիսով խախտելով իրենց պաշտպանյալների պաշտպանության իրավունքը, ինչը դատական ակտը բեկանելու հիմք է հանդիսանում:

13. Վերոգրյալի հիման վրա պաշտպաններ Ռ.Սիրեկանյանը, Գ.Հակոբյանը և Ա.Ջուվանովան խնդրել են բեկանել Վերաքննիչ դատարանի 2009 թվականի մարտի 23-ի որոշումը և օրինական ուժ տալ Քրեական դատարանի 2009 թվականի հունվարի 16-ի դատավճռին:

14. Պաշտպան Վ.Գրիգորյանը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2009 թվականի մարտի 23-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

15. Նախքան վճռաբեկ բողոքներում բարձրացված հարցերին անդրադառնալով՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում դիրքորոշում հայտնել սույն որոշման 10-րդ, 11-րդ և 12-րդ կետերում բարձրացված հարցերի միջև առկա կապի վերաբերյալ: Այսպես, պաշտպաններ Ռ.Սիրեկանյանի, Գ.Հակոբյանի և Ա.Ջուվանովայի կողմից բարձրացված առաջին հարցը վերաբերում է ամբաստանյալներ Լ.Հովհաննիսյանի և Վ.Հակոբյանի նկատմամբ պատիժ նշանակելիս Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված նյութական իրավունքի ենթադրյալ խախտմանը (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը), իսկ պաշտպան Վ.Գրիգորյանն իր բողոքում վիճարկում է ամբաստանյալ Ս.Գրիգորյանին մեղսագրվող արարքի իրավաբանական որակումը (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը), այսինքն՝ այս հիմքով բողոքը նույնպես վերաբերում է նյութական իրավունքի խախտմանը: Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ հարցը վերաբերում է նրան, թե իրավաչափ էր արդյոք Վերաքննիչ դատարանի կողմից դատական նիստերն անցկացնել պաշտպանների բացակայության պայմաններում և ընդունել ամբաստանյալների կողմից իրենց պաշտպաններից հրաժարվելը (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը), այսինքն՝ փաստարկվում է դատավարական իրավունքի խախտման առկայությունը:

Բողոքաբերների կողմից վկայակոչված նյութական և դատավարական իրավունքի խախտումները փոխկապակցված են. նյութական իրավունքի ենթադրյալ խախտումը կարող է հետևանք լինել Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի ենթադրյալ խախտման, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջին հերթին անհրաժեշտ է քննության առնել Վերաքննիչ դատարանի կողմից սույն գործի քննության ժամանակ թույլ տրված դատավարական իրավունքի ենթադրյալ խախտման հարցը:

16. Դատավարական իրավունքի խախտմանն առնչվող՝ նախորդ կետում բարձրացված հարցերին պատասխանելու համար Վճռաբեկ դատարանը նախ քննության է առնում հետևյալ հարցը. Վերաքննիչ դատարանն արդյո՞ք պատշաճ կերպով ծանուցել է պաշտպաններին սույն գործով նշանակված դատական նիստերի օրվա և ժամի մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Դատարանն ապահովում է առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում գործի քննությանը կողմերի մասնակցության իրավունքը: (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ «Պաշտպանը (...) իրավունք ունի մասնակցել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նիստերի և գործի նյութերի հետազոտմանը (...):»

Վերաքննիչ դատարանում գործի քննության կարգը սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Գործի քննության տեղի և ժամանակի մասին կողմերը ծանուցվում են»:

Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նշանակված դատական նիստի տեղի և ժամանակի մասին սահմանված ձևի ծանուցագիր պաշտպաններին ուղարկվել է մեկ անգամ, որում դատական նիստի օրը սխալ է նշված եղել:

Վերաքննիչ դատարանում 2008 թվականի մարտի 6-ին տեղի ունեցած առաջին դատական նիստին պաշտպանները չեն մասնակցել, իսկ քրեական գործի նյութերում բացակայում է որևէ ապացույց այն մասին, որ հետագա դատական նիստերի տեղի և ժամանակի մասին պաշտպանները պատշաճ կերպով ծանուցված են եղել (տե՛ս սույն որոշման 7-րդ և 9-րդ կետերը):

17. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, անտեսելով հիշատակված իրավանորմերի պահանջները, պաշտպաններին պատշաճ կերպով չի ծանուցել գործի քննության տեղի և ժամանակի մասին, հետևաբար պաշտպանները զրկված են եղել գործի դատական քննությանը մասնակցելու հնարավորությունից, ինչի արդյունքում խախտվել են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված «զենքերի հավասարության» և ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ ամրագրված մրցակցության սկզբունքները:

18. Բողոքաբերների կողմից փաստարկված դատավարական իրավունքի խախտման հետ կապված հաջորդ հարցը, որը բարձրացվել է Վճռաբեկ դատարանի առաջ, վերաբերում է նրան, թե սույն գործով Վերաքննիչ դատարանն իրավասո՞ւ էր արդյոք նշանակված պաշտպանների բացակայության պայմաններում ընդունել վերջիններից ամբաստանյալների հրաժարումը:

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք սույն օրենսգրքով նախատեսված կարգով իրավունք ունի ստանալ իրավաբանական օգնություն:

2. Կասկածյալի, մեղադրյալի կողմից ցանկություն հայտնելու կամ այն դեպքերում, երբ դա է պահանջում արդարադատության շահը, ինչպես նաև սույն օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով պարտադիր համարվող դեպքերում քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ապահովել նրանց իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը:

(...):»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պաշտպան է այն փաստաբանը, որը քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում է կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը և նրանց ցույց է տալիս իրավաբանական օգնություն՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Փաստաբանները քրեական գործով վարույթին որպես պաշտպան մասնակցում են՝



1) կասկածյալի, մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, ազգականի, ինչպես նաև կասկածյալի կամ մեղադրյալի խնդրանքով կամ համաձայնությամբ՝ այլ անձանց հրավերով:

2) ՀՀ փաստաբանների պալատի կողմից նշանակվելով՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջի հիման վրա»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի համաձայն՝

«1. Պաշտպանից հրաժարվելը նշանակում է մեղադրյալի մտադրությունը՝ իր պաշտպանությունն իրականացնել առանց որևէ պաշտպանի իրավաբանական օգնության:

2. Պաշտպանից հրաժարվելը քրեական վարույթն իրականացնող մարմինն ընդունում է միայն այն դեպքում, երբ մեղադրյալի կողմից այդ մասին հայտարարվել է սեփական նախաձեռնությամբ, կամավոր և այն պաշտպանի ներկայությամբ, որը կարող էր նշանակվել կամ նշանակված է պաշտպան: Չի ընդունվում պաշտպանից հրաժարումը, եթե այն հարկադրված է իրավաբանական օգնության վճարման համար միջոցների բացակայությամբ: Սույն օրենսգրքի 69 հոդվածի առաջին մասի 2–5–րդ և 8–րդ կետերով նախատեսված դեպքերում քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի չընդունել պաշտպանից մեղադրյալի կամ կասկածյալի հրաժարվելը և նշանակել պաշտպան կամ պահպանել նշանակված պաշտպանի լիազորությունները:

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ «քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ հանցանքը կատարելու պահին կասկածյալը կամ մեղադրյալն անչափահաս է»:

20. Վերոշարադրյալ հոդվածների բովանդակությունից երևում է, որ քրեական գործով վարույթի ընթացքում անձն իրավունք ունի իր պաշտպանությունն իրականացնել անձամբ կամ իր կամ այլ անձանց կողմից հրավիրված, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև վարույթն իրականացնող մարմնի կողմից նշանակված պաշտպանի միջոցով:

Իրավաբանական օգնությունից օգտվելու, այն է՝ պաշտպան ունենալու վերաբերյալ անձի հստակ և կամավոր արտահայտած ցանկությունը պարտադիր է վարույթն իրականացնող մարմնի համար: Ինչ վերաբերում է իրավաբանական օգնությունից, այն է՝ պաշտպան ունենալուց կամ նշանակված պաշտպանից հրաժարվելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով թույլատրելի դեպքերին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից անձի հրաժարումը պետք է ընդունվի միայն այն դեպքում, երբ, հաշվի առնելով անձի տարիքը և հետազոտելով պաշտպանության իրավունքից նրա հրաժարվելու դրդապատճառները, վարույթն իրականացնող մարմինը կգա այն համոզման, որ.

ա) մման ցանկություն նա հայտնել է ինքնակամ, սեփական նախաձեռնությամբ և այն պարտադրված չէ գործի քննության հանգամանքներով,

բ) նա կարողանում է ամբողջությամբ գիտակցել իր վարքագծի հետևանքները,

գ) անձն ի վիճակի է ինքնուրույն իրականացնել իր պաշտպանությունը:

Մինչդեռ սույն գործի նյութերից երևում է, որ Վերաքննիչ դատարանի դատական քննության ընթացքում ամբաստանյալների կողմից իրենց պաշտպաններից հրաժարվելը եղել է ոչ թե նրանց սուբյեկտիվ կամահայտնության արդյունք, այլ պաշտպանների՝ դատական նիստերին չներկայանալու հանգամանքով պարտադրված քայլ: Ինչպես Վճռաբեկ դատարանն արդեն նշել է, պաշտպանները գործի քննությանը չեն ներկայացել վարույթն իրականացնող մարմնի կողմից գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ կերպով ծանուցված չլինելու պատճառով (տե՛ս սույն որոշման 17-րդ կետը):

Գործի նյութերից երևում է նաև, որ պաշտպաններից հրաժարված ամբաստանյալներից մեկն անչափահաս է եղել (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը): Մինչդեռ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից *Պանովիցն ընդդեմ Կիպրոսի* (11.12.2008 թվական *Panovits v Cyprus, գանգառ թիվ 4268/04*, կետ 68) որոշմամբ այն մոտեցումն է արտահայտվել, որի համաձայն՝ «...Դատարանը գտնում է, որ, հաշվի առնելով անչափահաս կասկածյալի խոցելիությունը, և ուժերի անհավասարակշռությունը, որը հանդիսանում է քրեական վարույթի բնույթի արդյունք, 6-րդ հոդվածով նախատեսված կարևոր իրավունքից նրա հրաժարումը կարող է ընդունվել միայն եթե այն արտահայտվել է աներկբայորեն և իշխանությունները ձեռնարկել են բոլոր անհրաժեշտ միջոցառումները համոզվելու համար, որ նա ամբողջությամբ տեղյակ է իր պաշտպանության իրավունքի վերաբերյալ և կարող է անհրաժեշտության դեպքում ընկալել իր վարքագծի հետևանքները...»:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանն իրավասու չէր պաշտպանների հարգելի բացակայության պայմաններում ընդունել վերջիններից ամբաստանյալների հրաժարումը:

21. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, դատական նիստերն անցկացնելով պաշտպանների բացակայության պայմաններում և ընդունելով պաշտպանների բացակայությամբ պայմանավորված ամբաստանյալների կողմից իրենց պաշտպաններից հրաժարվելը, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի, 69-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 72-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի պահանջների խախտումներ, ինչի արդյունքում խախտվել է ամբաստանյալների պաշտպանության իրավունքը: Այդ խախտումներն իրենց բնույթով էական են և կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ «Դատավճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե գործը քննվել է պաշտպանի բացակայությամբ, երբ նրա մասնակցությունը, համաձայն օրենքի, պարտադիր էր, կամ այլ կերպ խախտվել է մեղադրյալի՝ պաշտպան ունենալու իրավունքը»: Ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 419-րդ հոդվածների համաձայն, սույն գործով Վերաքննիչ դատարանի դատական ակտը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

22. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ չի համարում քննության առնել բողոքներում բարձրացված նյութական իրավունքի նորմերի ենթադրյալ խախտումների վերաբերյալ փաստարկները. դրանց հնարավոր է անդրա-

դառնալ միայն սույն որոշման մեջ արձանագրված դատավարական իրավունքի խախտումը վերացնելուց հետո:

23. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իր կամ այլ անձանց կողմից հրավիրված կամ օրենքով սահմանված կարգով նշանակված պաշտպանից անձի հրաժարումը վարույթն իրականացնող մարմնի կողմից ընդունելու իրավական հարցի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքները բավարարել մասնակիորեն: Սամվել Վարդանի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 165-րդ հոդվածի 4-րդ մասով, Լևոն Կարապետի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և Վարդան Սուրիկի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 177-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 23-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

26.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության ԼԳ-1/0003/11/08  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԼԳ-1/0003/11/08

նախագահող դատավոր՝ Ա.Հովհաննիսյան  
դատավորներ՝ Տ.Սահակյան, Ե.Դարբինյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՄԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատախազ* Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

29 հունիսի 2009 թվական ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հունվարի 27-ի որոշման դեմ Ա.Ծատինյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի ապրիլի 23-ի որոշման դեմ դիմող Ալեքսանդր Սամվելի Ծատինյանի բերած վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ջ Ե Ց

**Գործի դատավարական նախապատմությունը և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

1. Փաստարան Ա.Ծատինյանը դիմում է ներկայացրել Լոռու մարզի դատախա-

գություն, հայտնելով, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության» Լոռու մարզային կենտրոնի պետը 2008 թվականի հուլիսի 1-ի գրությամբ իրեն վերավորանք է հասցրել:

2. Թումանյանի քննչական բաժանմունքի քննիչ Ս.Թանդիլյանը փաստաբան Ա.Ծատինյանի դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով 2008 թվականի հոկտեմբերի 20-ին որոշում է կայացրել ՀՀ քրեական օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործ հարուցելու և վարույթ ընդունելու մասին:

3. 2008 թվականի հոկտեմբերի 24-ին Լոռու մարզի դատախազի տեղակալ Ս. Առաքելյանը որոշում է կայացրել քննիչի որոշումը վերացնելու և նյութերը ոստիկանության Լոռու մարզի քննչական բաժին վերադարձնելու մասին՝ լրացուցիչ նախապատրաստելու և ընթացքը լուծելու համար:

4. Լոռու մարզի դատախազի տեղակալի 2008 թվականի հոկտեմբերի 24-ի որոշման դեմ Ա.Ծատինյանը 2008 թվականի նոյեմբերի 3-ին բողոք է ներկայացրել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան) խնդրելով վերացնել այն:

Առաջին ատյանի դատարանը 2008 թվականի նոյեմբերի 5-ի որոշմամբ Ա.Ծատինյանի ներկայացրած բողոքը վերադարձրել է:

5. Ա.Ծատինյանի վերաքննիչ բողոքի հիման վրա ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2008 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ բեկանել է Առաջին ատյանի դատարանի 2008 թվականի նոյեմբերի 5-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Նոր քննության արդյունքներով Առաջին ատյանի դատարանը 2009 թվականի հունվարի 27-ի որոշմամբ Լոռու մարզի դատախազի տեղակալի 2008 թվականի հոկտեմբերի 24-ի որոշման դեմ դիմող Ա.Ծատինյանի բողոքը մերժել է:

6. Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հունվարի 27-ի որոշման դեմ Ա.Ծատինյանը վերաքննիչ բողոք է բերել:

Վերաքննիչ դատարանը 2009 թվականի ապրիլի 23-ի որոշմամբ փաստաբան Ա.Ծատինյանի վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության այն պատճառաբանությամբ, որ վերջինս, պատշաճ ծանուցված լինելով նշանակված երկու դատական նիստերի մասին, անհարգելի պատճառով չի ներկայացել: Վերաքննիչ դատարանը, ղեկավարվելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 37-րդ հոդվածով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի 4-րդ մասով, գտել է, որ բողոքը հետ վերցնելը ոչ միայն բողոք բերած անձի ակտիվ գործողությունն է՝ ուղղված բողոքը հետ վերցնելուն, այլ նաև այնպիսի պասիվ վարքագիծը, որը ենթադրում է, որ բողոք բերած անձը հետամուտ չէ իր բողոքի հիման վրա գործի վերաքննությանը:

Վերաքննիչ դատարանում գործի քննությանը դիմող Ա.Ծատինյանի երկու անգամ անհարգելի չներկայանալը վերաքննիչ դատարանը դիտել է որպես բողոքից հրաժարում և բողոքը հետ վերցնել:

7. Վերաքննիչ դատարանի 2009 թվականի ապրիլի 23-ի որոշման դեմ դիմող Ա.Ծատինյանը վճռաբեկ բողոք է բերել:

2009 թվականի հունիսի 18-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը դիմող Ա.Ծատին-

յանի բողոքն ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով (Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար):

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոք բերած անձը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է և անօրինական, դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածը և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 37-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածը:

Բողոքի հեղինակը նշել է, որ քրեական դատավարության օրենսգրքով բողոքը հետ վերցնելու պատիվ կարգ նախատեսված չէ, իսկ դատական նիստին ներկայանալն իր իրավունքն է, այլ ոչ թե պարտականությունը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի համաձայն՝ դատական նիստին պարտադիր մասնակցում են դատախազը, ամբաստանյալը, նրա շահերի պաշտպանության համար բողոք ներկայացրած պաշտպանը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածով նախատեսված դեպքերում, այսինքն՝ համապատասխան հոդվածով բողոք բերած անձի պարտադիր մասնակցություն չի նախատեսվում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատական նիստի մասին ծանուցված անձանց չներկայանալը չի խոչընդոտում գործը քննելուն և դատական ակտ կայացնելուն: Այնինչ, Վերաքննիչ դատարանն անտեսել է նշված հոդվածի պահանջը և իր չներկայանալը համարել է գործի քննության խոչընդոտ:

Բողոքի հեղինակը նշել է նաև, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 37-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը պետք է շարունակի զանգատի քննությունը, եթե դա է պահանջում Կոնվենցիայով և դրան կից Արձանագրություններով սահմանված իրավունքների հարգումը:

9. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2009 թվականի մարտի 23-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

*1. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 37-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառման իրավաչափությունը.*

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի հետևյալ հարցին՝ իրավաչափ էր արդյոք Վերաքննիչ դատարանի կողմից «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա-

յի (այսուհետ՝ Կոնվենցիա) 37-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառումն այն դեպքում, երբ բողոք բերող անձը, պատշաճ կերպով ծանուցված լինելով դատական նիստի օրվա և ժամի մասին, չի ներկայանում դատական նիստին:

11. Խնդրո առարկա հարցադրումները Կոնվենցիայի 37-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի 3-րդ և 390-րդ հոդվածի 1-ին մասերի լույսի ներքո վերլուծելու արդյունքում ձևավորված դիրքորոշումը Վճռաբեկ դատարանն արտահայտել է 2009 թվականի հունիսի 2-ին «*Էկոնոմիկասագիա*» ԳՊԲԸ գործով կայացված ԵԿԳ/0107/11/08 որոշմամբ. « (...) Իրավունքն անձի հնարավոր թույլատրելի վարքագիծն է՝ կատարելու այս կամ այն արարքը կամ ձեռնպահ մնալու դրա կատարումից: Հետևաբար վերաքննիչ բողոք բերելը կամ այն հետ վերցնելը անձի իրավունքն է, որն արտահայտվում է անձի ազատ կամքի դրսևորմամբ:

(...) Վերաքննիչ բողոքը հետ վերցնելու վերաբերյալ փաստի հաստատման և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառման համար դատարանը պետք է ունենա բավարար հիմքեր, մասնավորապես այդպիսին կարող է հանդիսանալ բողոք բերած անձի՝ վերաքննիչ բողոքը հետ վերցնելու վերաբերյալ վերաքննիչ դատարան բերված դիմումը: Բողոքաբերի կողմից բողոքը հետ վերցնելը պետք է կատարվի ակտիվ վարքագիծ դրսևորելով, այսինքն՝ անձը պետք է իր կամքն արտահայտի բողոքը հետ վերցնելու կապակցությամբ (...) » (տե՛ս նշված որոշման 15-րդ և 16-րդ կետերը):

Մինչդեռ սույն գործի նյութերից երևում է, որ բողոք բերող անձը՝ Ա.Ծատինյանը, Վերաքննիչ դատարանում մինչև դատական նիստը սկսվելը իր բողոքը հետ չի վերցրել, հետևաբար վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները չեն բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներից:

Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այս պայմաններում, Վերաքննիչ դատարանը, սխալ կիրառելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի 3-րդ մասը, դատական նիստին չներկայանալը հավասարեցրել է Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի դրույթներին, այն է՝ երբ դիմողը մտադիր չէ հետամուտ լինել իր գանգատին կամ բողոքին, և որոշում է կայացրել վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին:

Մինչդեռ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում վարույթը կանոնակարգող ընթացակարգային կանոնները որևէ պարագայում չեն կարող կարգավորել նաև ՀՀ դատարաններում վարույթը:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը լիազորված է իր նիստերում քննել և լուծել ստացված գործերը և նյութերը: Արդարադատություն իրականացնելուց հրաժարվելն անթույլատրելի է:

Գործի նյութերից երևում է, որ վերաքննիչ բողոք բերած անձի կողմից դատական նիստերին չներկայանալը որակելով որպես վերաքննիչ բողոքից հրաժարում և այդ հիմքով բողոքը թողնելով առանց քննության՝ վերաքննիչ դատարանն ըստ էության հրաժարվել է արդարադատություն իրականացնելուց և խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները:

13. Հետևաբար, Վերաքննիչ դատարանի կողմից «Մարդու իրավունքների և հիմնա-

րար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 37-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառումը սույն գործով իրավաչափ չէր:

*II. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառումամբ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու իրավաչափությունը.*

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի նաև հետևյալ հարցին՝ իրավաչափ էր արդյոք Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառումամբ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում կայացնելը:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Եթե վերաքննիչ բողոքարկման ժամկետն ավարտվել է, իսկ տվյալ դատական ակտի դեմ այլ վերաքննիչ բողոքներ չեն բերվել, ապա բողոքը հետ վերցնելու դեպքում դատարանը կայացնում է վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշում (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածով սահմանված պահանջներին, բերել է այն անձը, ով չունի այդ իրավունքը, կամ բողոքը ժամկետանց է կամ բերվել է այնպիսի դատական ակտի դեմ, որը ենթակա չէ վերաքննիչ բողոքարկման կամ բերվել է 375<sup>4</sup>-րդ հոդվածի պահանջի խախտմամբ, վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության:»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի որևէ այլ հոդվածով վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու հիմք նախատեսված չէ, ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված բողոքն առանց քննության թողնելու հիմքերի ցանկը սպառիչ է:

Մինչդեռ սույն գործով կայացված՝ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշման հիմքում Վերաքննիչ դատարանը դրել է պատշաճ ծանուցված բողոքաբերի դատարան չներկայանալու հանգամանքը՝ այն դիտելով որպես բողոքը հետ վերցնել, որպիսին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված չէ:

Փաստորեն, Վերաքննիչ դատարանը, սույն գործով պատշաճ ծանուցված բողոքաբերի դատարան չներկայանալու հանգամանքը դիտելով որպես բողոքը հետ վերցնել և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի 4-րդ մասով, որը բողոքը հետ վերցնելու դեպքում նախատեսում է կայացնել որոշում վերաքննիչ վարույթը կարճելու մասին՝ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի 4-րդ մասի և 381-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները և բողոքն առանց քննության թողնելու հիմքերի բացակայության պայմաններում անհիմն որոշում է կայացրել վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին:

16. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, կայացնելով բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում, չի գործել որպես Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ի մասի իմաստով «օրենքի հիման վրա ստեղծված դատարան»: Նշված հարցի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր դիր-



քորոշումն արտահայտել է *Սոկուրենկոն* և *Ստրիգունն ընդդեմ Ուկրաինայի* գործով (20 հուլիսի 2006թ., գանգատներ թիվ 29458/04 և 29465/04) որոշման մեջ, որում նշվում է, որ այն դատարանը, որը որոշումը կայացրել է օրենքով հստակ սահմանված լիազորությունների սահմանն անցնելով՝ գանգատարկվող վարույթի կապակցությամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման իմաստով, չի կարող համարվել օրենքի հիման վրա ստեղծված դատարան (տե՛ս «Նարեկ» ՍՊԸ գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԵԿԴ/0050/11/08 որոշումը, կետ 24):

17. Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով բողոքարկվել է վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտ, որն առանց քննության թողնելու ենթակա չէր: Բողոքը բերվել է օրենքով սահմանված կարգով և ժամկետներում, օրենքով սահմանված կարգով այն հետ չի վերցվել, ուստի Վերաքննիչ դատարանը պարտավոր էր այն ըստ էության քննել:

18. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Լռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հունվարի 27-ի որոշման դեմ դիմող Ալեքսանդր Սամվելի Ծատինյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի ապրիլի 23-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

27.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵԷԴ-0002/15/08

ԵԷԴ-0002/15/08

նախագահող դատավոր՝ Հ.Ասատրյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Ե. ԳԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

2009թ. օգոստոսի 21-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. նոյեմբերի 3-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

**Գործի դատավարական նախապատմությունը**

1. Լ.Արզումանյանը Լեհաստանի Հանրապետության /այսուհետ՝ ԼՀ/ Շելդաչայի շրջանային դատարանի 2001թ. դեկտեմբերի 21-ի դատավճռով ԼՀ քրեական օրենսգրքի 148-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ կետերով /զենքի գործադրմամբ գուգորդված սպանություն, անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարված ավագակային հարձակում/, ԼՀ քրեական օրենսգրքի 280-րդ հոդվածի 2-րդ մասով /զենքի գործադրմամբ կատարված ավագակային հարձակում/ և ԼՀ քրեական օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասով /սպօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ

նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը/ ԼՀ քրեական օրենսգրքի 11-րդ հոդվածի /հանցանքների համակցություն/ կիրառմամբ դատապարտվել է ազատազրկման 25 տարի ժամկետով:

Նշված դատավճիռը բողոքարկվել է ամբաստանյալ Լ.Արզումանյանի և նրա պաշտպանի կողմից:

2. Լյուբլին քաղաքի վերաքննիչ դատարանի 2002թ. հոկտեմբերի 22-ի դատավճռով բեկանվել, փոփոխվել է ԼՀ Շելդաչայի շրջանային դատարանի 2001թ. դեկտեմբերի 21-ի դատավճիռը. Լ.Արզումանյանը ԼՀ քրեական օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասով /սպորինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը/ դատապարտվել է ազատազրկման 5/հինգ/ տարի ժամկետով, իսկ մնացած մասով ԼՀ քրեական օրենսգրքի 148-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ կետերով /զենքի գործադրմամբ զուգորդված սպանություն, անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարված ավագակային հարձակում/, և 280-րդ հոդվածի 2-րդ մասով /զենքի գործադրմամբ կատարված ավագակային հարձակում/, գործն ուղարկվել է նոր դատաքննության:

3. ԼՀ Շելդաչայի մարզային դատարանի 2003թ. հունիսի 11-ի դատավճռով Լ. Արզումանյանը մեղավոր է ճանաչվել ԼՀ քրեական օրենսգրքի 280-րդ հոդվածի 2-րդ մասով/ զենքի գործադրմամբ կատարված ավագակային հարձակում/, ԼՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածով /անզգուշությամբ մահ պատճառել/ և ԼՀ քրեական օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի /հանցանքների համակցություն/ հիման վրա դատապարտվել է ազատազրկման 15 տարի ժամկետով:

Գատավճիռն ամբաստանյալի կողմից բողոքարկվել է վերադաս դատարան, ԼՀ Լյուբլին քաղաքի վերաքննիչ դատարանի 2003թ. դեկտեմբերի 11-ի դատավճռով այն թողնվել է անփոփոխ:

4. Այդ ընթացքում Լ.Արզումանյանը նախնական կալանքի տակ է գտնվել ԼՀ Շելդաչայի մարզի Կառնուտի բանտում /քննչական մեկուսարան/: Մինչ վերադաս դատարանի կողմից վերաքննության կարգով դատավճռի քննարկումը, Շելդաչայի մարզի Կառնուտի քննչական մեկուսարանում նախնական կալանքի տակ գտնվելու ընթացքում, 2002թ. դեկտեմբերի 6-ին, բանտախցում վիճաբանության ընթացքում Լ.Արզումանյանը եռացրած ջուր է լցրել նույն բանտախցի կալանավոր Մայրուշ Շաչայակի գլխին, որի հետևանքով վերջինս դեմքի մաշկի, աջ թիկունքի, ձախ ականջի թաղանթի այրվածքների ձևով ստացել է մարմնական թեթև վնասվածքներ:

Նշված արարքի համար Լ.Արզումանյանը ԼՀ Շելդաչայի շրջանային դատարանի 2004թ. հունվարի 14-ի դատավճռով մեղավոր է ճանաչվել ԼՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման 1 տարի ժամկետով:

Սույն դատավճիռն ամբաստանյալի կողմից բողոքարկվել է ԼՀ Շելդաչայի մարզային դատարան:

ԼՀ Շելդաչայի մարզային դատարանի 2004թ. օգոստոսի 27-ի դատավճռով այն թողնվել է անփոփոխ:

5. ՀՀ և ԼՀ արդարադատության նախարարությունների երկկողմ համաձայնության հիման վրա ԼՀ արդարադատության նախարարության միջազգային համագործակցության ղեկարտամենտի 2005թ. ապրիլի 25-ի որոշման համաձայն՝ բավարար-

վել է ՀՀ քաղաքացի Լ.Արզումանյանի խնդրանքը /հայտը/, և նա հետագա պատիժը ՀՀ-ում կրելու համար հանձնվել է Հայաստանի Հանրապետությանը:

ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության պետը միջնորդություն է ներկայացրել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ ԼՀ Շելդաչայի դատարանի դատավճիռը ՀՀ քրեական օրենսդրությանը համապատասխանեցնելու և ի կատար ածելու մասին:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանը 2007թ. նոյեմբերի 28-ի որոշմամբ միջնորդությունը բավարարել է:

Սույն որոշումը դատապարտյալ Լ.Արզումանյանի կողմից բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան, որը 2007թ. դեկտեմբերի 19-ի որոշմամբ բողոքը բավարարել է: Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007թ. նոյեմբերի 28-ի որոշումը բեկանվել է, և գործը վերադարձվել է նույն դատարան՝ ըստ էության քննելու համար:

6. Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյան դատարանը 2008թ. ապրիլի 8-ի որոշմամբ բավարարել է դատախազի միջնորդությունը և դատապարտյալ Լ. Արզումանյանի նկատմամբ ԼՀ Շելդաչայի մարզային դատարանի 2003թ. հունիսի 11-ի դատավճիռը ԼՀ քրեական օրենսգրքի 280-րդ հոդվածի 2-րդ մասով, 155-րդ հոդվածով, ԼՀ քրեական օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով, ինչպես նաև Շելդաչայի շրջանային դատարանի 2004թ. հունվարի 14-ի դատավճիռը ԼՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասով համապատասխանեցրել է ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետին, 109-րդ հոդվածի 1-ին մասին, 117-րդ հոդվածին և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ կետերի կիրառմամբ Լ.Արզումանյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 15/տասնհինգ/ տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: Պատժի սկիզբը հաշվվել է 2000թ. փետրվարի 24-ից:

Որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել դատախազը՝ խնդրելով բեկանել այն և Լ.Արզումանյանի նկատմամբ դատավճիռների համակցությամբ վերջնական պատիժ նշանակել ազատազրկում 20 /քսան/ տարի ժամկետով:

7. Դատախազի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2008թ. նոյեմբերի 3-ի որոշմամբ մերժել է դատախազի վերաքննիչ բողոքը՝ Լ.Արզումանյանի վերաբերյալ օտարերկրյա պետության դատավճիռը ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու մասին Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. ապրիլի 8-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. նոյեմբերի 3-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ դատարանը 2009թ. հուլիսի 17-որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Գործի փաստական հանգամանքները.**

8. Լ.Արզումանյանը ԼՀ Շելդաչայի դատարանի դատավճռով դատապարտվել է այն բանի համար, որ գողություն կատարելու նպատակով 2000թ. հունվարի 18-ին քննությամբ չպարզված երեք անձի հետ դիմակավորված մուտք են գործել Գմինա Սաղովնայի Ջվողկայում բնակվող Խալինա և Ստանիսլավ Կովալչուկների բնակարան, որտեղ հրազենի և դանակի սպառնալիքի ներքո ծեծի են ենթարկել տուժողներին, այնուհետև կաշուն ժապավենով կապել նրանց և ավազակային հարձակմամբ բնակարանից հափշտակել են 15000/տասնհինգ հազար/ զլոտի արժողության «Ֆոլկլավագեն Գոլֆ» մակնիշի ՍՕՌ- 0797 պետհամարանիշի ավտոմեքենան և մեքենայի փաստաթղթերը, «Մաուզեր» տեսակի հրացան, 165 հատ որսորդական փամփուշտ, որսորդական գոտի, «Մոռո» ֆիրմայի 3 հատ բաճկոն, ձեռքի ոսկյա շղթա և 2 հատ ոսկյա մատանի: Ավազակային հարձակման ընթացքում ծնողներին ցանկացել է օգնության հասնել տուժողների որդին՝ Յան Կովալչուկը, սակայն այդ պահին նրա որովայնին կրակել և վիրավորել են Պ-83 9մմ. տրամաչափի ատրճանակից, վերջինիս նույնպես կապել են կաշուն ժապավենով, այնուհետև առանց որևէ օգնություն ցուցաբերելու, անօգնական վիճակում թողնելով Յան Կովալչուկին, հանցագործները դեպքի վայրից դիմել են փախուստի: Երկարատև արնահոսության հետևանքով Յան Կովալչուկը բնակարանում մահացել է:

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Գտնելով, որ Վճռաբեկ դատարանի կողմից կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ դատարանների կողմից օտարերկրյա պետությունների դատավճիռները ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների ճիշտ և միատեսակ կատարման համար, բողոք բերած անձը խնդրել է.

1) բեկանել Լ.Արզումանյանի վերաբերյալ օտարերկրյա պետության դատավճիռը ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու մասին Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. ապրիլի 8-ի որոշումը օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. նոյեմբերի 3-ի որոշումը,

2) ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի հիման վրա՝ 2 դատավճիռների համակցությամբ, Լ.Արզումանյանի նկատմամբ վերջնական պատիժ նշանակել ազատագրկում 16 տարի ժամկետով՝ պատժի կրման սկիզբը հաշվելով 2005թ. մարտի 16-ից:

10. Բողոք բերած անձը նշել է, որ ստորադաս դատարանները ճիշտ չեն վերլուծել և գնահատել օտարերկրյա պետության դատավճիռները ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու մասին վերաքննիչ բողոքում ներկայացված հիմնավորումներն ու ապացույցները, արդյունքում կայացվել է այնպիսի դատական ակտ, որը խախ-

տում է ՀՀ-ի կողմից միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների իրականացումը և խաթարում է արդարադատության էությունը:

Ի հիմնավորումն վերոգրյալի՝ բողոք բերած անձը նշել է, որ Լ.Արզումանյանի վերաբերյալ ԼՀ-ում կայացվել է երեք դատավճիռ՝ 2001թ. դեկտեմբերի 21 /ազատազրկում 5 տարի ժամկետով/, 2003թ. հունիսի 11 /ազատազրկում 15 տարի ժամկետով/, 2004թ. հունվարի 14 /ազատազրկում 1 տարի ժամկետով/:

ԼՀ արդարադատության նախարարը, ՀՀ-ում հետագա պատիժը կրելու համար Լ.Արզումանյանին հանձնելիս, իր՝ 2005թ. ապրիլի 25-ի թիվ ԳՎՄ 11470 ԿԶ 03/1/05 գրությամբ պահանջել է ապահովել 2 դատավճռով նշանակված պատիժները՝ 15 տարի և 1 տարի ազատազրկում՝ որպես պատժի ավարտ նշելով 2021թ մարտի 16-ը՝ միաժամանակ շեշտելով այն հանգամանքը, որ Լյուբլին քաղաքի վերաքննիչ քրեական դատարանի 2002թ. հոկտեմբերի 22-ի դատավճռով նշանակված պատիժը՝ 5 տարի ազատազրկումը, Լ.Արզումանյանը ԼՀ-ում արդեն իսկ կրել է, և ՀՀ-ում նա պետք է կրի 15 և 1 տարի ժամկետով ազատազրկման ձևով պատիժները: Հետևաբար, ըստ բողոքաբերի՝ Լ.Արզումանյանի պատժի կրման սկիզբը պետք է հաշվվեր 2005թ. մարտի 16-ից:

11. Բողոքաբերի պնդմամբ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի և Վերաքննիչ քրեական դատարաններն անգամ հիմք ընդունելով, որ Լ.Արզումանյանի նկատմամբ կայացվել է երկու դատավճիռ /նշանակված պատիժները՝ ազատազրկում 15 տարի և 1 տարի ժամկետով/, ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելիս անշեղորեն պետք է ղեկավարվելին ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի կանոններով, քանի որ Լ.Արզումանյանը վերջին անգամ 1 տարվա ազատազրկման է դատապարտվել արդեն իսկ պատիժը կրելու ընթացքում կատարած հանցագործության համար: Բացի այդ, պետք է հաշվի առնվեր հանձնող պետության պահանջը, որ ՀՀ-ում Լ.Արզումանյանը ազատազրկման ձևով պատիժ պետք է կրի 15 տարի և 1 տարի:

12. Բողոք բերած անձը նշում է նաև, որ ԼՀ դատավճիռները ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցվել են ճիշտ, սակայն սխալ է կիրառվել ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածը՝ հանցանքների համակցությունը, քանի որ առկա երկու դատավճիռների պայմաններում /պատժի կրման ընթացքում կատարած նոր հանցագործություն/ պետք է կիրառվեր ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածը՝ դատավճիռների համակցություն: Դատարանները պետք է հաշվի առնեին հանձնող պետության պահանջը, քանի որ հանձնման պահին Լ.Արզումանյանը ԼՀ-ում կրել է Լյուբլին քաղաքի վերաքննիչ դատարանի 2002թ. հոկտեմբերի 22-ի դատավճռով նշանակված 5 տարի ժամկետով ազատազրկումը:

13. Ըստ բողոք բերած անձի՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, դատական ստուգման ենթարկելով Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. ապրիլի 8-ի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը, խախտել է Ստրասբուրգի միջազգային կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջները, կայացրել է դատական ակտ, որն իրավական բնույթով և տևողությամբ չի համապատասխանում միջազգային կոնվենցիայի պահանջներին:

Հիմք ընդունելով վերոգրյալ փաստարկները՝ բողոքաբերը նշել է, որ սույն գործի դատաքննությունների ընթացքում խախտվել են ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի 21–րդ հոդվածի 6–րդ մասով նախատեսված սկզբունքները, թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնք նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397–398–րդ հոդվածների 1–ին մասերով, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. նոյեմբերի 3–ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության հետևյալ պատճառաբանությամբ.

Ինչպես երևում է գործի նյութերից, Լեհաստանի Հանրապետությունում Լ.Արզումանյանի վերաբերյալ կայացվել է 3 դատավճիռ՝ 2001թ. դեկտեմբերի 21 /ազատազրկում 5 տարի ժամկետով/, 2003թ. հունիսի 11 /ազատազրկում 15 տարի ժամկետով/ և 2004թ. հունվարի 14 /ազատազրկում 1 տարի ժամկետով/: Ընդ որում, առաջին երկու դատավճիռներով Լ.Արզումանյանը դատապարտվել է 2000թ. հունվար–փետրվար ամիսներին կատարած հանցագործությունների համար: Նշված արարքների համար Լ.Արզումանյանը նախնական կալանքի է վերցվել 2000թ. փետրվարի 24–ին:

14. «Դատապարտյալների փոխանցման մասին» կոնվենցիայի 3–րդ հոդվածի 1–ին մասի «բ» կետի բովանդակությունից երևում է, որ դատապարտյալի փոխանցման պայմաններից մեկը վերջնական դատավճիռն է: Նույն կոնվենցիայի 10–րդ հոդվածի 1–ին մասը սահմանում է, որ Կատարող պետությունը պարտավոր է ղեկավարվել Դատապարտող պետության կողմից կայացված դատավճռի պատժամիջոցի իրավական բնույթով և տևողությամբ:

Չնայած դրան՝ Լ.Արզումանյանի վերաբերյալ 3 դատավճիռներով Դատապարտող պետությունը՝ Լեհաստանի Հանրապետությունը, հանցանքների կամ դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելու սկզբունքներից ելնելով, վերջնական պատիժ չի նշանակել: Փաստորեն պատժի տևողությամբ դատավճիռ Կատարող պետությանը չի ուղարկվել: Մինչդեռ ՀՀ արդարադատության նախարարությանը հասցեագրված 2005թ. ապրիլի 25–ի գրությամբ ԼՀ արդարադատության նախարարությունը հայտնել է, որ Լ.Արզումանյանի պատժի կրման ավարտը 2021թ. մարտի 16–ն է: Իսկ 2009թ. փետրվարի 24–ի գրությամբ ԼՀ արդարադատության նախարարությունը տեղյակ է պահել, որ Լ.Արզումանյանը փոխանցվել է ՀՀ իրավապահ մարմիններին երկու առանձին պատիժ՝ 15 տարի և 1 տարի ազատազրկումը կրելու համար: Այդ երկու դատավճիռները չեն միացվել /չեն գումարվել/, և ՀՀ դատարանը կարող է միացնել /համակցել/ այդ դատավճիռները: Ինչ վերաբերում է 5 տարի ժամկետով ազատազրկմանը, այն Լ.Արզումանյանը լրիվ կրել է: Լ.Արզումանյանը երբևէ ԼՀ–ում վերջնական 25 կամ 21 տարի ազատազրկման չի դատապարտվել: Այս դեպքում պարզ չէ, թե պատժի ինչպիսի տևողություն և պատիժ կրելու ինչ սկիզբ է նկատի ունեցել Դատապարտող պետությունը՝ Լ.Արզումանյանի պատժի կրման ավարտը համարելով 2021թ. մարտի 16–ը:

Բացի այդ, չնայած Լ.Արզումանյանը 2000թ. փետրվարի 24-ից գտնվել է նախնական կալանքի տակ, Դատապարտող պետությունը նախնական կալանքի ժամանակի հաշվակցման հարցը չի լուծել: Նշված չէ նաև Լ.Արզումանյանի պատիժը կրելու սկիզբը:

Վերը շարադրված բազմաթիվ թերությունների ու բացթողումների պայմաններում, որոնց արդյունքում չկա ազատագրկման հստակ տևողությամբ վերջնական դատավճիռ, չի լուծված նախնական կալանքի ժամանակի հաշվակցման հարցը, նշված չէ պատիժը կրելու սկիզբը, հնարավոր չէ ապահովել Լ.Արզումանյանի վերաբերյալ դատավճռի կատարումը:

Առաջադրված բոլոր հարցերի վերաբերյալ նոր քննությամբ անհրաժեշտ է իրականացնել Դատապարտող պետությունից ստացված փաստական տվյալների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն և հանգել համապատասխան հետևության:

Մույն գործով թույլ տրված նյութական և դատավարական իրավունքի խախտումները հանգեցրել են դատական սխալի, որի արդյունքում կայացված որոշումը չի համապատասխանում արդարության պահանջներին:

Նշված դատական սխալը, որն ազդել է գործի արդյունքի վրա, խաթարում է արդարադատության բուն էությունը, դատարանի որոշման՝ որպես արդարադատության ակտի իմաստը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննարկվող բողոքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Լևոն Մայիսի Արզումանյանի վերաբերյալ օտարերկրյա պետության դատավճիռը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխանեցնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. նոյեմբերի 3-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*



28.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում

ԵԱՆԴ/0013/11/08

նախագահող դատավոր՝ Ժ. Հովսեփյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՄԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատախազ* Զ. ՖԱՐԻՈՅԱՆԻ  
*փաստաբան* Վ. ԶՈՍՅԱՆԻ

2009թ. օգոստոսի 21-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի փետրվարի 19-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ. Սարգսյանի բերած վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2006 թվականի մայիսի 16-ին Սերգեյ Արշակի Հակոբյանը դիմում է ներկայացրել Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների դատախազություն այն մասին, որ իր տնօրինած «Իրինա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պատվերով դեռևս 2002 թվականին կառուցված գազատարի կատարողական-տեխ-

նիկական փաստաթղթերում իր ստորագրությունները կեղծված են, և որ 2003 թվականի հոկտեմբեր ամսին Հակոբ Խաչիկի Քոսյանի կողմից ապամոտաժվել և վաճառվել է 1.080 մետր երկարությամբ խողովակաշարը:

2. Ս.Հակոբյանի դիմումի հիման վրա նախապատրաստած նյութերով 2006 թվականի հուլիսի 7-ին հարուցվել է թիվ 17204706 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի 2006 թվականի նոյեմբերի 7-ի որոշմամբ թիվ 17204706 քրեական գործի վարույթը կարճվել է հանցակազմի բացակայության հիմքով:

3. ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության ավագ դատախազ Ս.Հովսեփյանի 2007 թվականի փետրվարի 8-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կարճելու մասին նախաքննության մարմնի որոշումը վերացվել է:

4. Վերոգրյալ որոշումը Հ.Քոսյանի պաշտպան Վաչագան Քոսյանի կողմից բողոքարկվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան: Դատարանի 2008 թվականի փետրվարի 25-ի որոշմամբ պաշտպանի բողոքը բավարարվել է, թիվ 17204706 քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումը վերացնելու մասին ավագ դատախազ Ս.Հովսեփյանի 2007 թվականի փետրվարի 8-ի որոշումը վերացվել է:

5. Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների դատախազության ավագ դատախազ Հ.Հովսեփյանը, քննարկելով Ս.Հակոբյանի կողմից 2008 թվականի օգոստոսի 26-ին ներկայացված դիմումը, 2008 թվականի սեպտեմբերի 5-ին որոշում է կայացրել նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վարույթ հարուցելու մասին:

6. Նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վարույթ հարուցելու մասին որոշումը Վ.Քոսյանի կողմից բողոքարկվել է Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների դատախազին, որի կապակցությամբ 2008 թվականի նոյեմբերի 4-ին հայտնվել է, որ բողոքարկվող որոշումը հիմնավոր է, և այն վերացնելու հիմքեր չկան:

7. 2008 թվականի նոյեմբերի 5-ին Վ. Քոսյանը բողոք է ներկայացրել Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով վերացնել նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վարույթ հարուցելու մասին ավագ դատախազ Հ.Հովսեփյանի 2008 թվականի սեպտեմբերի 5-ի որոշումը:

Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ Վ.Քոսյանի բողոքը բավարարվել է, իսկ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վարույթ հարուցելու մասին ավագ դատախազ Հ.Հովսեփյանի 2008 թվականի սեպտեմբերի 5-ի որոշումը՝ վերացվել:

8. Դատախազի վերաքննիչ բողոքի հիման վրա դատական ստուգման ենթարկելով Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 23-ի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009 թվականի փետրվարի 19-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, իսկ դատարանի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

9. Վերոգրյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազը, որը Վճռաբեկ դատարանի 2009 թվականի մայիսի 7-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

10. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի փետրվարի 19-ի որոշման դեմ 2009 թվականի հունիսի 11-ին վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը՝ խնդրելով վճռաբեկ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողումը համարել հարգելի:

Վճռաբեկ դատարանը 2009 թվականի հուլիսի 17-ի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի փետրվարի 19-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք բերելու համար բաց թողնված ժամկետը համարել է հարգելի և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ»):

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները**

11. Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վարույթ հարուցելու մասին ավագ դատախազ Հ.Հովսեփյանի 2008 թվականի սեպտեմբերի 5-ի որոշումը վերացվել է այն պատճառաբանությամբ, որ «Նոր երևան եկած հանգամանքների հետևանքով դատական ակտի վերանայման սպառիչ հիմքերը նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>3</sup>-րդ հոդվածով: Տվյալ դեպքում բացակայում է նշված հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը»:

12. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009 թվականի փետրվարի 19-ի որոշմամբ դատախազի բողոքը մերժել, իսկ Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 23-ի որոշումն օրինական ուժի մեջ է թողել՝ եզրահանգելով, որ «Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանը պահպանելով օրենքը, կայացրել է օրինական, հիմնավորված, պատճառաբանված որոշում, այն բեկանելու հիմքեր չկան, ուստի դատախազի վերաքննիչ բողոքը պետք է մերժել»:

### **Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

13. Բողոք բերած անձը գտնում է, որ Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների դատախազության ավագ դատախազ Հ.Հովսեփյանի՝ նոր երևան եկած հանգամանք-

ների հետևանքով վարույթ հարուցելու մասին 2008 թվականի սեպտեմբերի 5-ի որոշումն օրինական է և հիմնավորված, դրա հիմքում դրված հանգամանքները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>3</sup>-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ակտը վերանայելու համար նոր երևան եկած հանգամանքներ են, հետևաբար դատարաններն անհիմն կերպով վերացրել են հիշատակված որոշումը՝ գրկելով նախաքննության մարմնին քննություն կատարելու և ճշմարտությունը բացահայտելու հնարավորությունից:

14. Բողոքի հեղինակը նշել է նաև, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, մերժելով դատախազի վերաքննիչ բողոքն ու Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 23-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելով, հաշվի չի առել այն հանգամանքը, որ նոր երևան եկած հանգամանքներով վարույթ հարուցելու որոշումը դատական վերահսկողության ոլորտից դուրս է, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով այն բողոքարկելու հիմքեր կամ կարգ սահմանված չէ:

Ըստ բողոքաբերի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վարույթ հարուցելու հիմնական նպատակը ոչ թե անձի իրավունքների և ազատությունների սահմանափակումն է, այլ օրինական քննության համար քրեադատավարական հիմք ստեղծելը, որը հնարավորություն է տալիս արդյունավետ քննություն իրականացնելու և դիմողի կողմից նշված փաստարկները ստուգելու նպատակով օգտագործել քրեադատավարական օրենքով նախատեսված իրավական գործիքները՝ ստանալ փաստաթղթեր, նշանակել փորձաքննություններ և այլն:

15. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների դատախազության ավագ դատախազ Հ.Հովսեփյանի՝ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վարույթ հարուցելու մասին որոշումը վերացնելու վերաբերյալ Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 23-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի փետրվարի 19-ի որոշումը:

### **Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

16. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքի հիման վրա Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>5</sup>-րդ հոդվածով նախատեսված՝ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վարույթ հարուցելու մասին դատախազի որոշումը կարո՞ղ է արդյոք բողոքարկվել դատական կարգով:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>5</sup>-րդ հոդվածի համաձայն՝

«1. Նոր երևան եկած հանգամանքների մասին հայտարարությունները և հաղորդումներն ուղարկվում են դատախազին:

2. Սույն օրենսգրքի 426<sup>3</sup> հոդվածի առաջին մասով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում դատախազը որոշում է կայացնում նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վարույթ հարուցել և այդ հանգամանքների առթիվ կատարում է քննություն կամ այդ մասին հանձնարարություն է տալիս քննիչին: (...):»:

Վերոնշյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քրեական դատավարությունում նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վարույթ դատախազի կողմից հարուցվում է իրեն ուղղված հայտարարության կամ հաղորդման մեջ նշված նոր երևան եկած հանգամանքների առկայությունը հաստատելու կամ հերքելու նպատակով: Նշված որոշման կայացման պահից է սկսվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>5</sup>-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված քննությունը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վարույթ հարուցելու մասին որոշման կայացումը բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածով նախատեսված խնդիրներից: Այդ որոշումը, որպես վարույթի վերաբացման հիմքը ձևավորող իրավական միջոց, կարևոր երաշխիք է հանդիսանում ապահովելու համար անձի, հասարակության և պետության պաշտպանությունը հանցագործությունից, ինչպես նաև հնարավորություն է տալիս քրեական դատավարություն իրականացնող մարմիններին ձեռնարկելու բոլոր միջոցառումները, որպեսզի իրենց գործունեության արդյունքում քրեական օրենսգրքերով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի և քրեական օրենքով նախատեսված դեպքերում և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվի:

18. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»:

Անձի դատական պաշտպանության իրավունքն ամրագրող սահմանադրական այս նորմից երևում է, որ խախտված իրավունքների վերականգնման պահանջով դատարան դիմելու անձի իրավունքը տարածվում է քրեական դատավարություն իրականացնող մարմինների բոլոր այն որոշումների և գործողությունների վրա, որոնք խախտում են իր իրավունքները և օրինական շահերը: Այլ կերպ ասած, եթե քրեական դատավարություն իրականացնող մարմինների որոշումները և գործողությունները խախտում են անձի իրավունքները և օրինական շահերը, ապա ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով ամրագրված դատական պաշտպանության իրավունքի ուժով դրանք ենթակա են բողոքարկման դատական կարգով:

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների դատախազության ավագ դատախազ Հ.Հովսեփյանը, քննարկելով Ս.Հակոբյանի դիմումը, որոշում է կայացրել նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վարույթ հարուցելու մասին (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը): Ինչպես նշվել է սույն որոշման 17-րդ կետում, նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վարույթի հարուցումը նպատակ է հետապնդում հաստատել կամ հերքել դատախազին ուղղված հայտարարության կամ հաղորդման մեջ նշված նոր երևան եկած հանգամանքների առկայությունը: Նշված որոշումը կայացվում է փաստի (հայտարարության կամ հաղորդման) առթիվ, և ինքնին չի առնչվում քրեական դատավարության ոլորտ ներգրավված որևէ անձի իրավունքների և օրինական շահերի հետ:

20. Հիմք ընդունելով վերոշարադրյալ դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վարույթ հարուցելու վերաբերյալ դատախազի որոշումը դատական բողոքարկման առարկա չինել չի կարող:

Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն իրավասու չէր դատական ստուգման ենթարկելու նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վարույթ հարուցելու մասին ավագ դատախազ Հ.Հովսեփյանի 2008 թվականի սեպտեմբերի 5-ի որոշման օրինակառությունն ու հիմնավորվածությունը, իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի եզրահանգումն այն մասին, որ «Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանը պահպանելով օրենքը, կայացրել է օրինական, հիմնավորված, պատճառաբանված որոշում, այն բեկանելու հիմքեր չկան, (...)» (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը), անհիմն է: Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ, օրինական ուժի մեջ թողնելով ընդհանուր իրավասության դատարանի որոշումը, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը թույլ է տվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, այն է՝ վարույթն իրականացնող մարմինը գրկվել է հաղորդման մեջ նշված նոր երևան եկած հանգամանքների առթիվ քննություն կատարելու, դրանց առկայությունը հաստատելու կամ հերքելու հնարավորությունից:

21. Գատավարական իրավունքի վերոնշյալ խախտումը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի համաձայն, Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանների դատական ակտերը բեկանելու հիմք է:

Վճռաբեկ դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասով, անհրաժեշտ է համարում կայացնել նոր դատական ակտ՝ բավարարել վճռաբեկ բողոքը, բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և փաստաբան Վ.Քոսյանի կողմից՝ Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների դատախազության ավագ դատախազ Հ.Հովսեփյանի՝ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վարույթ հարուցելու մասին 2008 թվականի սեպտեմբերի 5-ի որոշման բողոքարկման արդյունքում դատարանում հարուցված վարույթը կարճել:

22. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վարույթ հարուցելու մասին որոշումը դատական բողոքարկման առարկա չի հանդիսանում, Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում վճռաբեկ բողոքի այն փաստարկին, որ Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների դատախազության ավագ դատախազ Հ.Հովսեփյանի՝ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վարույթ հարուցելու մասին 2008 թվականի սեպտեմբերի 5-ի որոշման հիմքում դրված հանգամանքները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>3</sup>-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ակտը վերանայելու համար նոր երևան եկած հանգամանքներ են:

23. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վարույթ հարուցելու մասին որոշման դատական վերահսկողության առարկա չլինելու հարցի վերաբերյալ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապե-

տույքյան քրեական դատավարության օրենսգրքի 403–406–րդ, 419–րդ, 422–424–րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 23–ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի փետրվարի 19–ի որոշումները բեկանել և փաստաբան Վ.Զոսյանի բողոքի հիման վրա դատարանում հարուցված վարույթը կարճել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

29.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության

ԵՔՐԴ/0512/01/08

վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵՔՐԴ/0512/01/08

նախագահող դատավոր՝ Մ.Արղամանյան  
դատավորներ՝ Ա.Գանիեյան, Մ.Ռեհանյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝*

Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝*

Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԳԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

2009թ. օգոստոսի 21-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ամբաստանյալ Վալերի Արամայիսի Բաբայանի պաշտպանի վճռաբեկ բողոքը Վ.Բաբայանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 19-ի որոշման դեմ,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2007թ. նոյեմբերի 8-ին անհայտ անձի կողմից ապօրինի կերպով զենք կրելու և Սայաթ Գավթյանին դիտավորությամբ սպանելու փաստի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին և 104-րդ հոդվածի 1-ին մասերով հարուցվել է թիվ 14124007 քրեական գործը:



2. 2007թ. նոյեմբերի 12-ին Վալերի Բաբայանը ձերբակալվել է:

2007թ. նոյեմբերի 15-ի որոշմամբ Վալերի Բաբայանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով և 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով:

2008թ. հոկտեմբերի 8-ի որոշմամբ մեղադրյալ Վ.Բաբայանին առաջադրված մեղադրանքը լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով, 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով:

3. 2008թ. հոկտեմբերի 16-ին քրեական գործը մեղադրական եզրակացությանը ուղարկվել է Երևանի քրեական դատարան:

Երևանի քրեական դատարանի 2009թ. հունվարի 19-ի դատավճռով Վ. Բաբայանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով և 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով: ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով նա դատապարտվել է ազատազրկման 13 /տասներեք/ տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման 2 /երկու/ տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Վ.Բաբայանը վերջնականապես դատապարտվել է ազատազրկման 14 /տասնչորս/ տարի ժամկետով:

4. Վ.Բաբայանի պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009թ. մարտի 19-ի որոշմամբ անփոփոխ է թողել Երևանի քրեական դատարանի 2009թ. հունվարի 19-ի դատավճիռը, իսկ պաշտպանի վերաքննիչ բողոքը՝ մերժել:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. մարտի 19-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Վալերի Բաբայանի պաշտպանը:

5. Վճռաբեկ դատարանը 2009թ. հունիսի 16-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ»):

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ուղարկվել:

### **Գործի փաստական հանգամանքները**

6. Վալերի Բաբայանը ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել է հետևյալ արարքների համար.

Վ.Բաբայանը 1990թ. առանց համապատասխան թույլտվության ձեռք է բերել, պահել և կրել հրազեն հանդիսացող «Մակարով» տեսակի ատրճանակ և ռազմամթերք հանդիսացող 9մմ տրամաչափի ութ փամփուշտ: Գործով չչարգված շարժանիքներով ՀՀ որսորդների միության նախագահ Սայաթ Գավթյանին կյանքից զրկելու նպատակով նախնական հանցավոր համաձայնության գալով Երևանի բնակիչ, գործով մեղադրյալ Անդրանիկ Շառոյանի և այլ անձանց հետ՝ նրանք 2007թ. նոյեմբերի

8-ին Երևանի Ազատության և Ադոնցի փողոցների խաչմերուկից հետևել են Սայաթ Դավթյանին, ով ժամը 17-ի սահմաններում իր սեփական «Միցուբիշի պաջերո» մակնիշի ավտոմեքենայով անցել է «Լամբադա» կամրջով և Կոմիտասի պողոտայով միայնակ գնացել է դեպի շուկայի կողմը: Ա.Շառոյանին պատկանող ԲՄՎ-520 մակնիշի 03 ՍՍ 644 պետհամարանիշի ավտոմեքենայով շարունակելով հետևել Ս.Դավթյանին՝ Վ.Բաբայանը նկատել է, որ նա մեքենայով մտել է Կոմիտասի 53 հասցեում գտնվող գյուղմթերքների շուկա: Շրջանցելով շուկան և անցնելով Ն.Տիգրանյան ու Մամիկոնյանց փողոցներով՝ նրանք մեքենան կանգնեցրել են Կոմիտասի 49/4 հասցեում գտնվող բժիշկների կատարելագործման ինստիտուտի շենքի բակում, որտեղից Վալերի Բաբայանը հետիոտն ճանապարհահատվածով մտել է շուկա: Շուկայի ավտոկայանատեղի տարածքում որպես պահեստարան ծառայող «Ռ-աֆ» մակնիշի ավտոմեքենայի մոտ ժամը 17<sup>30</sup>-ի սահմաններում նա նկատել է Սայաթ Դավթյանին և մոտ տարածությունից, իր մոտ եղած «Մակարով» տեսակի ատրճանակից, հետևի կողմից մեկ անգամ կրակել է նրա գլխի ծոծրակային շրջանին, որից վերջինս, կորցնելով հավասարակշռությունը, վայր է ընկել: Այդ պահին Վ. Բաբայանը ևս երկու անգամ կրակել է Ս.Դավթյանի աջ ականջախեցու շրջանին, դիտավորությամբ նրան գրկել է կյանքից և Ա.Շառոյանի ավտոմեքենայով դիմել փախուստի:

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

7. Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոք բերած անձը գտնում է, որ վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Երևանի քրեական դատարանի դատավճիռը, թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք հիմք են հանդիսանում վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: Մասնավորապես դատարանների հետևությունները հիմնված չեն գործի հանգամանքների օբյեկտիվ և բազմակողմանի գնահատման վրա, որոնց վերլուծությունից հետևում է, որ գործով ձեռք չի բերվել որևէ ապացույց այն մասին, որ Ս.Դավթյանի սպանությունը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ: Բողոքում նշվում է, որ գործով ձեռք են բերվել հավաստի ապացույցներ /ականատես վկաների ցուցմունքներ/ այն մասին, որ սպանությունը կատարելու պահին Վ.Բաբայանը միայնակ է մտել շուկա, իսկ սպանությունից հետո վազբով հեռացել է դեպքի վայրից, նստել ԲՄՎ մակնիշի մեքենան և միայնակ հեռացել: Նրա հետ որևէ այլ անձնավորություն չի եղել ո՛չ հանցանքը կատարելու պահին և ո՛չ էլ ավտոմեքենայով փախուստի դիմելու ժամանակ: Բացի այդ, Վ.Բաբայանի հանցանքը հիմնավորող մի շարք վկաների ցուցմունքները, ինչպես նաև փորձաքննությունների եզրակացություններն ու իրեղեն ապացույցներ ճանաչելու և քննչական փորձարարությունների վերաբերյալ արձանագրությունները հաստատում են միայն Վալերի Բաբայանի կողմից Ս.Դավթյանին սպանելու և ոչ թե այդ հանցանքը խմբի կողմից կատարելու փաստը:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ բողոք բերած անձը գտել է, որ թե՛ առաջին ատյանի և թե՛ վերաքննիչ դատարանները Վ.Բաբայանի կատարած արարքի քրեաիրավական որակման հարցում հանգել են սխալ եզրակացության: Վ.Բաբա-

յանի արարքը նախաքննության մարմնի կողմից ճիշտ չի որակվել, և նա ենթակա է քրեական պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին և 235-րդ հոդվածի 1-ին մասերով նախատեսված հանցագործությունների կատարման համար:

Ելնելով վերոգրյալից՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել և փոփոխել Երևանի քրեական դատարանի 2009թ. հունվարի 19-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. մարտի 19-ի դատական ակտերը և Վալերի Բաբայանի նկատմամբ պատիժ նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին և 235-րդ հոդվածի 1-ին մասերով:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

8. Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ Վալերի Արամյանի Բաբայանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. մարտի 19-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի կիրառումը.

9. ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետը քրեական պատասխանատվություն է նախատեսում ծանրացնող հանգամանքներում՝ մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից կատարած սպանության համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցանքը համարվում է մի խումբ անձանց կողմից առանց նախնական համաձայնության կատարված, եթե դրան մասնակցել են այնպիսի համակատարողներ, ովքեր նախապես չեն պայմանավորվել հանցանքը համատեղ կատարելու մասին:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանցանքը համարվում է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված, եթե դրան մասնակցել են այնպիսի համակատարողներ, ովքեր նախապես՝ մինչև հանցագործությունն սկսելը, պայմանավորվել են հանցանքը համատեղ կատարելու համար:

Վերոշարադրյալ հոդվածների վերլուծությունից երևում է, որ սպանությունը համարվում է մի խումբ անձանց կողմից կատարված, երբ երկու և ավելի անձինք, գործելով սպանություն կատարելուն ուղղված համատեղ դիտավորությամբ, անմիջականորեն մասնակցել են տուժողին կյանքից զրկելու պրոցեսին՝ նրա նկատմամբ բռնություն կիրառելով, ընդ որում, պարտադիր չէ, որ մահ առաջացնող վնասվածքները պատճառված լինեն նրանցից յուրաքանչյուրի կողմից (օրինակ՝ մեկը հաղթահարում է տուժողի դիմադրությունը՝ զրկելով նրան պաշտպանվելու հնարավորությունից, իսկ մյուսը պատճառում է մահացու վնասվածքներ):

Սպանությունը համարվում է մի խումբ անձանց կողմից կատարված նաև այն դեպքում, երբ մի անձի կողմից դիտավորյալ մահ պատճառելուն ուղղված գործողություններ կատարելու պրոցեսում նույն նպատակով նրան է միանում այլ անձ (անձինք):

10. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ ծանրացուցիչ հանգամանքներում կատարված սպանություն համարելով մի խումբ անձանց կողմից սպանություն կատարելը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մաս

սի 7-րդ կետն ըստ էության տարբերություն չի դնում, թե խումբը սպանությունը կատարել է նախնական համաձայնությամբ, թե առանց նախնական համաձայնության:

Ինչպես առանց նախնական համաձայնության, այնպես էլ նախնական համաձայնությամբ խմբի կողմից սպանություն կատարելու դեպքում պարտադիր պայման է երկու կամ ավելի կատարողների՝ համակատարողների առկայությունը, որոնցից յուրաքանչյուրը պետք է անմիջականորեն լրիվ կամ մասամբ կատարի հանցագործության օբյեկտիվ կողմին բնորոշ գործողություններ:

Սպանության համակատարողներ են այն անձինք, ովքեր սպանության պրոցեսում գործել են համաձայնեցված, նրանց գործողությունները միավորված են միասնական դիտավորությամբ, իսկ հանցագործության օբյեկտիվ կողմը՝ ներառյալ տուժողի նկատմամբ ֆիզիկական բռնությունը, կատարվել է հանցակիցներից յուրաքանչյուրի կողմից:

Փաստորեն, սպանության համատեղ կատարման տակ պետք է հասկանալ հանցակիցների փոխադարձ համաձայնությամբ հանցագործության օբյեկտիվ կողմի կատարումը: Ընդ որում, համատեղ կատարած սպանության դեպքում պարտադիր չէ, որ համակատարողները կատարեն միևնույն գործողությունները, նրանց գործողությունները կարող են տարբեր լինել:

11. Խմբի կողմից սպանություն կատարելիս օբյեկտի նկատմամբ ոտնձգությունը կատարվում է հանցակիցների համատեղ գործողություններով:

Ելնելով հանցանքը համատեղ կատարելու մասին ունեցած պայմանավորվածությունից՝ հանցակիցների միջև կարող է կատարվել դերաբաշխում: Այս դեպքում հանցակցի կողմից կատարվող գործողությունների ծավալը կարող է էապես տարբերվել հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող մյուս հանցակցի գործողություններից, սակայն համակատարողների ունեցած մասնակցության աստիճանն արարքի որակման համար նշանակություն չունի: Եթե խմբակային սպանության օբյեկտիվ կողմի կատարման դեպքում համակատարողների միջև կարող է դերաբաշխում կատարվել, ապա այդ հանցակազմի սուբյեկտիվ կողմի հետ կապված մույնը լինել չի կարող, քանի որ հանցակիցներից յուրաքանչյուրը գիտակցում և խմբի այլ անդամի կամ անդամների հետ համատեղ իրականացնում է հանրորեն վտանգավոր արարքը: Ընդ որում, եթե մի խումբ անձանց կողմից առանց նախնական համաձայնության սպանությունը կարող է կատարվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ, ապա նախնական համաձայնությամբ սպանությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորությամբ:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով նախատեսված հանցակազմի համար պարտադիր է ինչպես հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշների առկայությունը՝ երկու կամ ավելի անձանց կողմից համատեղ տուժողին կյանքից զրկելու անմիջական գործողությունների կատարումը, այնպես էլ հանցակազմի սուբյեկտիվ կողմի հատկանիշի առկայությունը՝ սպանությունը միասին կատարելու հանցակիցների գիտակցումը:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ հանցակցության հասկացությունը սահմանում է, որ հանցակցություն է համարվում երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությունը դիտավորյալ հանցագործությանը:

ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ կատարողի հետ մեկտեղ հանցակիցներ են համարվում կազմակերպիչը, դրդիչը և օժանդակողը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կատարող է համարվում այն անձը, ով անմիջականորեն մասնակցել է այլ անձանց (համակատարողների) հետ համատեղ, ինչպես նաև հանցանքը կատարել է այլ այնպիսի անձանց օգտագործելու միջոցով, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության կամ հանցանքը կատարել են անգուշությամբ:

Նկատի ունենալով, որ սպանության դեպքում համակատարողներ են այն անձինք, ովքեր անմիջականորեն մասնակցել են տուժողին մահ պատճառելուն կամ էլ անմիջական ֆիզիկական ներգործություն են ունեցել տուժողի վրա՝ դրանով իսկ սպառնալիքով այլ անձի կողմից նրան մահ պատճառելը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նրանց արարքները ենթակա են որակման ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, այսինքն՝ խմբի կողմից կատարված սպանություն:

Սպանության համակատարողների հետ հանցավոր խմբի մյուս մասնակիցները կարող են հանդես գալ հանցագործության կազմակերպիչի, դրդիչի կամ օժանդակողի դերում: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ դեպքում նրանց արարքները ենթակա են որակման ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի համապատասխան մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով: Իսկ եթե սպանությունն անմիջական կատարվել է մեկ անձի կողմից, սակայն դրա կատարմանը մասնակցել են հանցակիցներ՝ կազմակերպիչներ, դրդիչներ կամ օժանդակողներ, ապա արարքը չի կարող համարվել որպես խմբի կողմից կատարված սպանություն: Նման դեպքում, եթե բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի այլ ծանրացնող հանգամանքները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կատարողի արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ կազմակերպիչի, դրդիչի կամ օժանդակողի գործողությունները՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի համապատասխան մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով: Եթե հանցագործության կազմակերպիչը, դրդիչը կամ օժանդակողը միաժամանակ հանդիսացել է նաև սպանության համակատարող, ապա նրանց արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, այսինքն՝ որպես նախնական համաձայնությամբ խմբի կողմից կատարված սպանություն՝ առանց ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի վրա հղում կատարելու:

Նշված հարցերի հետ կապված Վճռաբեկ դատարանն իր իրավական դիրքորոշումն է արտահայտել Ալիկ Մաթևոսյանի և Ռաֆիկ Հարությունյանի վերաբերյալ գործով (2008թ. հուլիսի 25-ին կայացված թիվ ՎԲ-48/08 որոշման մեջ):

13. Սպանությունը ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով որակելու համար անհրաժեշտ է ճշտել սպանությանը մասնակցած յուրաքանչյուր անձի մասնակցության աստիճանը, բնույթը, պարզել՝ մասնակիցները գործել են առանց նախնական համաձայնության, թե նախնական համաձայնությամբ, սպանություն կատարելիս դերաբաշխում եղե՞լ է, թե ոչ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Ս.Դավթյանի սպանությունը խմբի կողմից կատարված լինելու մասին վերաքննիչ դատարանի հետևությունները չեն բխում գործի օբյեկտիվ տվյալներից:

Այսպես՝ նախաքննությամբ և դատական ակտերով հաստատված է համարվել, որ Սայաթ Դավթյանին կյանքից զրկելու նպատակով Վալերի Բաբայանը նախնական հանցավոր համաձայնության է եկել գործով մեղադրյալ Անդրանիկ Շառոյանի և այլ անձանց հետ: 2007թ. նոյեմբերի 8-ին՝ ժամը 17-ի սահմաններում, երբ Սայաթ Դավթյանը գնացել է Կոմիտասի փողոցի շուկայի կողմը, նրանք հետևել են տուժողին Անդրանիկ Շառոյանին պատկանող ԲՄՎ-520 մակնիշի ավտոմեքենայով: Այնուհետև Վալերի Բաբայանը հետիոտն ճանապարհահատվածով մտել է շուկա և շուկայի ավտոկայանատեղի տարածքում նկատելով Սայաթ Դավթյանին՝ «Մակարով» տեսակի ատրճանակից երեք կրակոցով սպանել է նրան, որից հետո Անդրանիկ Շառոյանի ավտոմեքենայով դիմել է փախուստի (տես սույն որոշման 6-րդ կետը):

Փաստորեն դատական ակտերով հաստատված է, որ տուժողն սպանվել է Վ.Բաբայանի արձակած երեք կրակոցով, Ս.Դավթյանին կյանքից զրկելու անմիջական գործողությունները կատարվել են նրա կողմից: Եվ քանի որ վերջինս դատապարտվել է խմբի կողմից կատարված սպանության համար, որը նախատեսում է ոչ պակաս, քան երկու համակատարող, ուստի դատարանը պարտավոր էր պարզել, թե ո՞վ կամ ովքե՞ր են Վ.Բաբայանի հետ մասնակցել տուժողին կյանքից զրկելու անմիջական գործողություններին: Սակայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածով նախատեսված գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման սկզբունքի խախտման արդյունքում ոչ միայն չի ճշտվել, թե ովքե՞ր են Վ.Բաբայանի հետ սպանության համակատարողները և կա՞ն արդյոք այդպիսիք, թե ոչ, այլև չեն պարզվել Ա.Շառոյանի և այլ անձանց մասնակցության աստիճանն ու բնույթը կատարված հանցագործությանը, հանցակցության ի՞նչ տեսակներ են առկա:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես նախաքննության մարմինը, այնպես էլ դատարանները, խախտելով ապացույցների գնահատումն ամրագրած՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի պահանջները, պատշաճ գնահատման չեն ենթարկել Վ.Բաբայանի արարքի ճիշտ որակման համար էական նշանակություն ունեցող վերը նշված հանգամանքները: Դատարանի հետևություններն այն մասին, որ Վ.Բաբայանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով նախատեսված հանցագործություն, չեն համապատասխանում դատարաններում հետազոտված ապացույցներին: Գործի նյութերից երևում է, որ դատարանների կողմից չեն հետազոտվել օբյեկտիվ փաստական տվյալներն այն մասին, որ Ս.Դավթյանի սպանությանը մասնակցել են երկու կամ ավելի համակատարողներ:

Փաստորեն դատարանները խմբի կողմից կատարված սպանության համար Վ.Բաբայանին դատապարտել են՝ առանց գործի փաստական հանգամանքները հաշվի առնելու: Ուստի հիմնավորված ու պատճառաբանված չեն վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, որ Վ.Բաբայանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով ճիշտ է որակված:

Հետևաբար դատարանները թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում. կիրառել են քրեական օրենքի այն հոդվածը, որը ենթակա չէր կիրառման և չեն կիրառել այն հոդվածը, որը ենթակա էր կիրառման: Սույն գործով դատական ակտ կայաց-

նելիս դատարանները խախտել են նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածում ամրագրված դատավճռի օրինական, հիմնավորված և պատճառաբանված լինելու մասին պահանջները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք են: Ուստի անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ կետի հիման վրա բեկանել վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Նոր դատական քննությամբ անհրաժեշտ է վերը շարադրված հարցերի շուրջ կատարել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի պահանջներից ելնելով՝ պատշաճ գնահատման ենթարկել գործում եղած ապացույցները և հանգել համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Վալերի Արամայիսի Բաբայանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 235-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. մարտի 19-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

30.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության

ԵԱԶԳ /0003/15/09

վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵԱԶԳ /0003/15/09

նախագահող դատավոր՝ Ս.Համբարձումյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2009թ. օգոստոսի 21–ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Խաչատուր Գազիկի Հեքիմյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2009 թվականի ապրիլի 7–ի որոշման դեմ պաշտպան Տիգրան Հայրապետյանի բերած վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 1999 թվականի հունիսի 10–ին Երևանի Արաբկիր և Քանաքեռ–Զեյթուն համայնքների դատախազությունում հարուցվել է թիվ 14209799 քրեական գործը ՀՀ 1961թ. քրեական օրենսգրքի 75–րդ հոդվածի 1–ին մասով:



1999 թվականի հուլիսի 28-ին որոշում է կայացվել Խաչատուր Հեքիմյանին նույն քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 1999 թվականի հուլիսի 28-ի որոշմամբ մեղադրյալ Խ.Հեքիմյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը երկու ամիս ժամկետով:

Նախաքննության մարմնի 1999 թվականի հուլիսի 28-ի որոշմամբ Խ.Հեքիմյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

1999 թվականի օգոստոսի 10-ին քրեական գործով վարույթը կասեցվել է:

2. 2009 թվականի փետրվարի 18-ին Խ.Հեքիմյանը հայտնաբերվել է, քրեական գործով վարույթը վերսկսվել:

2009 թվականի փետրվարի 19-ին Խ.Հեքիմյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ 2003 թվականի քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով:

3. Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան) 1999 թվականի հուլիսի 28-ի որոշման դեմ 2009 թվականի փետրվարի 27-ին վերաքննիչ բողոք է բերել պաշտպան Տ.Հայրապետյանը, որը Վերաքննիչ դատարանի 2009 թվականի մարտի 5-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

4. Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի մարտի 12-ի որոշմամբ բավարարվել է պաշտպան Տ.Հայրապետյանի միջնորդությունը և Խ.Հեքիմյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 1999 թվականի հուլիսի 28-ի որոշման բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնվել է:

5. 2009 թվականի մարտի 10-ին պաշտպան Տ.Հայրապետյանը նաև միջնորդություն է ներկայացրել մեղադրյալ Խ.Հեքիմյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու մասին, որն Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի մարտի 17-ի որոշմամբ մերժվել է:

6. Պաշտպան Տ.Հայրապետյանը վերաքննիչ բողոքներ է ներկայացրել ինչպես մեղադրյալ Խ.Հեքիմյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 1999 թվականի հուլիսի 28-ի, այնպես էլ կալանավորումը գրավով փոխարինելու միջնորդությունը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի մարտի 17-ի որոշումների դեմ:

Վերաքննիչ դատարանը, նկատի ունենալով, որ բողոքարկվել են նույն անձի վերաբերյալ նույն դատարանի կայացրած որոշումները, 2009 թվականի ապրիլի 6-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները միացրել է մեկ վարույթում:

Քննության առնելով մեղադրյալ Խ.Հեքիմյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 1999 թվականի հուլիսի 28-ի և նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը գրավով փոխարինելու միջնորդությունը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի մարտի 17-ի որոշումների օրինականության և հիմնավորվածության հարցը՝ Վերաքննիչ դատարանը 2009 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ պաշտպան Տ.Հայրապետյանի վերաքննիչ բողոքները մերժել է՝ որոշումները թողնելով օրինական ուժի մեջ:

7. Նախաքննության մարմնի 2009 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ Խ.Հեքիմյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել և լրացվել է, նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով, 327-րդ հոդվածի 1-ին մասով և 329-րդ հոդվածի 1-ին մասով:

8. Վերաքննիչ դատարանի 2009 թվականի ապրիլի 7-ի որոշման դեմ Խ.Հեքիմյանի պաշտպան Տ.Հայրապետյանը վճռաբեկ բողոք է բերել:

2009 թվականի հունիսի 18-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի հիմքով («Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է Վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշումներին»):

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

9. Քրեական վարույթն իրականացնող մարմնի 2009 թվականի հունիսի 17-ի որոշմամբ Խ.Հեքիմյանին ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը վերացվել է, իսկ 2009 թվականի հուլիսի 27-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով և 329-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման կիրառմամբ կարճվել է, և Խ.Հեքիմյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

10. Առաջին ատյանի դատարանի կողմից Խ. Հեքիմյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ քննիչի միջնորդության քննարկման ժամանակ՝ 1999 թվականի հուլիսի 28-ի դրությամբ, վերջինս թաքնվել է քրեական վարույթն իրականացնող մարմնից և դատական նիստին չի մասնակցել:

Քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու պատճառով նախաքննության մարմնի 1999 թվականի հուլիսի 28-ի որոշմամբ Խ.Հեքիմյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

11. 2009 թվականի փետրվարի 18-ին Խ.Հեքիմյանը հայտնաբերվել է և կալանավորվել՝ առանց դատարանի առջև կանգնելու:

12. 2009 փետրվարի 19-ին Խ.Հեքիմյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով այն արարքի համար, որ նա, լինելով Երևան քաղաքի Գյուլբենկյան 43 շենքի 15 բնակարանի բնակիչ, Արաբկիրի զինկոմիսարիատի աշխատակիցների կողմից բազմիցս հրավիրվել է զինկոմիսարիատ՝ զինվորական բժշկական հանձնաժողովի կողմից հետազոտվելու, հաշվառման կանգնելու և ծառայության մեկնելու համար, սակայն նա, խախտելով «Ձիմնապարտության մասին» ՀՀ օրենքի պահանջները, խուսափել է իսկական զինվորական ծառայության 1999 թվականի գարնանային գորակոչից՝ չունենալով այդ ծառայությունից ազատվելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքեր:

13. Դրանից հետո Խ.Հեքիմյանը չի մասնակցել նաև կալանավորումը գրավով փոխարինելու վերաբերյալ պաշտպանի հարուցած միջնորդության քննարկմանը, որը տեղի է ունեցել Առաջին ատյանի դատարանում 2009 թվականի մարտի 17-ին, ինչպես նաև չի մասնակցել Վերաքննիչ դատարանի 2009 թվականի ապրիլի 7-ի դատական նիստին, որտեղ քննության է առնվել Առաջին ատյանի դատարանի 1999 թվականի հուլիսի 28-ի և 2009 թվականի մարտի 17-ի որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը:

14. Նախաքննության մարմնի 2009 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ Խ.Հեքիմյանին ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը փոփոխվել է ու լրացվել, նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին, 325-րդ հոդվածի 1-ին և 329-րդ հոդվածի 1-ին մասերով այն բանի համար, որ նա խուսափել է 1997 թվականի գարնանային ժամկետային զինվորական ծառայության հերթական զորակոչից: Բացի այդ, Խ.Հեքիմյանը 1995 թվականի նոյեմբերի 22-ին ՀՀ ներքին գործերի նախարարության Արաբկիրի բաժնի անձնագրային ծառայությունից սահմանված կարգով ՀՀ քաղաքացու AA սերիայի 0272458 համարի անձնագիրը ստանալով՝ մեկնել է Չեխիայի Հանրապետություն, որտեղ գտնվել է օրենքով սահմանված կարգի խախտմամբ:

1999 թվականի փետրվարի 5-ին Խ.Հեքիմյանին, ՀՀ ներքին գործերի նախարարության Շիրակի մարզային վարչության Ամասիայի բաժնի անձնագրային ծառայությունից, գործով չարգված հանգամանքներում Խաչատուր անունը Խաչիկ դարձնելով՝ առանց օրինական հիմքերի հատկացվել է ՀՀ քաղաքացու՝ AC սերիայի 0625071 համարի կեղծ անձնագիր: Նշված կեղծ անձնագիրը ստանալով՝ այն օգտագործել է Չեխիայի Հանրապետությունում հաշվառվելու և կացության կարգավիճակ ստանալու համար: Այնուհետև, նշված կեղծ անձնագիրն օգտագործելով, Խ.Հեքիմյանը 2008 թվականի մարտի 6-ին ՀՀ պետական սահմանը ապօրինի հատելով՝ վերադարձել է Հայաստանի Հանրապետություն:

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

15. Բողոք բերած անձը, վկայակոչելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 5-րդ հոդվածի 3-րդ կետը, որի համաձայն՝ ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք, ինչպես նաև այն, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի հետ փոխկապակցված նույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի հիման վրա՝ ձերբակալված և կալանավորված բոլոր անձինք իրավունք ունեն անհապաղ ներկայացվել դատարանի առջև, բողոք բերած անձը նշել է, որ Կոնվենցիան չի նախատեսում անձին ազատությունից զրկելու վերաբերյալ միջնորդության քննությունը դատարանում անցկացնել առանց անձի մասնակցության, քանի որ նա պետք է

հնարավորություն ունենա բացատրություններ տալ դատարանին, ներկայացնել իր փաստարկները և դիրքորոշումները:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ բողոքաբերը պնդում է, որ իր պաշտպանյալն իրավունք ունեն ձերբակալվելուց անմիջապես հետո տարվել դատավորի մոտ և ներկա գտնվել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հարցի քննությանը, ինչը սույն գործով չի իրականացվել. Խ.Հեքիմյանը 2009 թվականի փետրվարի 18-ին կալանավորվել է դատարանի 1999 թվականի հուլիսի 28-ին կայացրած որոշման հիման վրա և դրանից հետո դատավորի մոտ չի տարվել, հետևաբար նրա կալանավորումը չի համապատասխանում Կոնվենցիայի չափանիշներին, և նա պետք է անհապաղ ազատ արձակվի:

16. Բողոքի հեղինակը նշել է նաև, որ խախտվել են ՀՀ Սահմանադրության 4-րդ և 16-րդ, Կոնվենցիայի 5-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ և 285-րդ հոդվածների պահանջները:

Մասնավորապես՝ Խ.Հեքիմյանի կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին քննիչի միջնորդությունը և դատարանի որոշումը պատճառաբանված չեն և չեն բխում գործի փաստական հանգամանքների հիման վրա կատարված ողջամիտ ենթադրություններից: Բողոքաբերի պնդմամբ, քննիչը և դատարանը բավարարվել են միայն կալանավորման հիմքերի օրենսդրական ձևակերպումների շարադրանքով, մինչդեռ Խ.Հեքիմյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելիս դատարանը պարտավոր էր բավարար փաստերի ներքո հիմնավորված ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում ամրագրված մեկ կամ մի քանի հիմքի առկայությունը, պետք է բավարար չափով հիմնավորվեր քրեական վարույթն իրականացնող մարմնի «պատշաճ ջանասիրությունը», բացի այդ, սույն գործով չկան հասարակական շահի իրական պահանջների հատկանիշներ, որոնք ինքնուրույն, չվտանգելով անմեղության կանխավարկածը, գերակշռում են ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերով երաշխավորված անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքը: Բողոքաբերը նշել է նաև, որ դատարանը հաշվի չի առել, որ Խ.Հեքիմյանը ծնված օրից ունեցել է սրտի արատ, նա բազմաթիվ անգամներ տարել է սրտի ծանր վիրահատություններ, նրա մոտ սկսվել է «տրոմբոֆլեբիտ» հիվանդություն, նրան անհրաժեշտ է մշտական բժշկական հսկողություն:

17. Ըստ բողոք բերած անձի՝ Խ.Հեքիմյանի նկատմամբ գրավ կիրառելու մասին միջնորդությունը դատարանի կողմից մերժվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածին հակասող պատճառաբանություններով, մասնավորապես, մերժման մասին որոշում կայացնելիս ընդհանուր իրավասության դատարանը եզրահանգել է, որ Խ.Հեքիմյանը Չեխիայի Հանրապետությունում կատարած հանցագործության համար հետախուզվում է, մինչդեռ դատարան ներկայացված փաստաթուղթը նման տեղեկատվություն չի պարունակում: Բացի այդ, նշված փաստաթուղթը ընդհանուր իրավասության դատարանում չի հետազոտվել, այն ներկայացվել է միայն վերաքննիչ դատարան:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Խաչատուր Գագիկի Հեքիմյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 1999 թվականի հուլիսի 28-ի որոշումը և

Խ.Հեքիմյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը գրավով փոխարինելու միջնորդությունը մերժելու մասին նույն դատարանի 2009 թվականի մարտի 17-ի որոշումը, այն անփոփոխ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2009 թվականի ապրիլի 7-ի որոշումը, մեղադրյալ Խ.Հեքիմյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց վերացնել և նրան ազատել կալանքից:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

18. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հետախուզման մեջ գտնված Խ.Հեքիմյանը իրավունք ունե՞ր, արդյոք, հայտնաբերվելուց հետո տարվել դատավորի մոտ իր նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցի կրկնակի քննարկման համար:

19. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «(...) Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը (...):»:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

(...)

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար.

(...)

3. Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան՝ ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով.

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերության համաձայն՝ «Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն հարուցելու մասին որոշումը ենթակա է անհապաղ քննման նախաքննության կատարման վայրի դատարանում, դատավորի կողմից միանձնյա՝ միջնորդություն ներկայացրած անձի, մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, պաշտպանի մասնակցությամբ, եթե նա մասնակցում է գործին (...):»:

20. Վերոշարադրյալ հոդվածների մեկնաբանության վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել Տիգրան Մայիսի Վահրադյանի գործով

2008 թվականի դեկտեմբերի 26-ին կայացված ԼԳ/0197/06/08 որոշման մեջ, որի 33-րդ և 34-րդ կետերի համաձայն՝ «(...) ՀՀ ներպետական օրենդորության մակարդակում ազատության իրավունքի ապահովման անհրաժեշտ երաշխիք պետք է լինի հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո, արդեն նրա ներկայությամբ, նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցի կրկնակի քննարկումը նախաքննության կատարման վայրի դատարանում: Դա հնարավորություն կտա նվազեցնել կամայական կալանավորման ռեպերը, ինչպես նաև կապահովի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության համար միջազգային պարտավորություն հանդիսացող պահանջների կատարումը:

Հետևաբար՝ հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո նա պետք է անհապաղ (72 ժամվա ընթացքում) տարվի դատավորի մոտ (...):

Նշված որոշման 25-րդ կետի համաձայն՝ «(...) տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն» կոնվենցիոնալ պահանջը ՀՀ ներպետական իրավունքում արտացոլված է դատարանում կալանավորման միջնորդության քննարկմանը վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ գտնվող մեղադրյալի մասնակցությունն ապահովելու՝ այդ մարմնի պարտականության մեջ (...):

21. Սույն գործի նյութերից երևում է, սակայն, որ Խ.Հեքիմյանը 2009 թվականի փետրվարի 18-ին հայտնաբերվել և ձերբակալվել է, սակայն նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցը կրկին քննարկելու համար վարույթն իրականացնող մարմնի կողմից չի տարվել նախաքննության կատարման վայրի դատարան (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Խ.Հեքիմյանը հայտնաբերվելուց և ձերբակալվելուց հետո պետք է անհապաղ տարվեր դատավորի մոտ, և մասնակից դարձվեր իր նկատմամբ խափանման միջոց ընտրելու հարցի կրկնակի քննարկմանը:

22. Ինչ վերաբերում է բողոք բերած անձի այն փաստարկներին, որ Խ.Հեքիմյանի կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին քննիչի միջնորդությունը և ընդհանուր իրավասության դատարանի որոշումը պատճառաբանված չեն, դատարանը հաշվի չի առել, որ Խ.Հեքիմյանը ծնված օրից ունեցել է սրտի արատ և նրան անհրաժեշտ է մշտական բժշկական հսկողություն, ինչպես նաև, որ Խ.Հեքիմյանի նկատմամբ գրավ կիրառելու մասին միջնորդությունը ընդհանուր իրավասության դատարանի կողմից մերժվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածին հակասող պատճառաբանություններով, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտում առկա են անհրաժեշտ և բավարար հիմնավորումներ ինչպես Առաջին ատյանի դատարանի որոշման պատճառաբանվածության և Խ.Հեքիմյանի մոտ հիվանդության առկայությունը հիմնավորող փաստաթղթի կիրառելիության, այնպես էլ Խ.Հեքիմյանի նկատմամբ գրավ կիրառելու միջնորդության մերժման հարցի վերաբերյալ, հետևաբար այդ կապակցությամբ բողոքաբերի փաստարկները հիմնավորված չեն:

23. Սույն որոշման 20-րդ և 21-րդ կետերից երևում է, որ բողոքարկված դատական ակտերն հակասում են Վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշմանը:

Սակայն հաշվի առնելով այն, որ «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19–ի որոշման կիրառմամբ գործով վարույթի կարճման և Խ.Հեքիմյանի նկատմամբ քրեական հետապնդման դադարեցման հետևանքով բողոքարկված դատական ակտերն այլևս իրավաբանորեն գոյություն չունեն, Վճռաբեկ դատարանը սույն որոշման մեջ նշված պատճառաբանություններով օրինական ուժի մեջ է թողնում Առաջին ատյանի դատարանի 1999 թվականի հուլիսի 28–ի և 2009 թվականի մարտի 17–ի որոշումները, ինչպես նաև Վերաքննիչ դատարանի 2009 թվականի ապրիլի 7–ի որոշումը:

24. Բողոքարկված դատական ակտերը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այդ առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նույնանման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92–րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403–406–րդ, 419–րդ, 422–424–րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Մ Ց**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Խաչատուր Գագիկի Հեքիմյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ Երևան քաղաքի Արաբկիր և Բանաբեռ–Ձեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 1999 թվականի հուլիսի 28–ի և կալանավորումը գրավով փոխարինելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ նույն դատարանի 2009 թվականի մարտի 17–ի որոշումներն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի ապրիլի 7–ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ Վճռաբեկ դատարանի որոշման մեջ նշված պատճառաբանություններով:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն  
Դատավորներ՝ ստորագրություններ*

31.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում

ԵԿԴ /0014/01/09

նախագահող դատավոր՝ Մ.Արղամանյան  
դատավորներ՝ Ա.Գանիելյան, Մ.Ռեհանյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԳԱՆԻԵԼՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Կ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

16 սեպտեմբերի 2009 թվականին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հուլիսի 15–ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2008 թվականի օգոստոսի 12–ին ՀՀ քրեական օրենսգրքի 343–րդ հոդվածի 3–րդ մասով հարուցվել է թիվ 13132308 քրեական գործը:
2. 2008 թվականի դեկտեմբերի 24–ին Գազիկ Գևորգի Շամշյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 343–րդ հոդվածի 3–րդ մասով:



3. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի ապրիլի 17–ի դատավճռով Գ.Շամշյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 343–րդ հոդվածի 3–րդ մասով և դատապարտվել տուգանքի նվազագույն աշխատավարձի երեք հարյուր հիսնասպասիկի՝ 350.000 /երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով:

4. Գ.Շամշյանի պաշտպանի կողմից բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009 թվականի հունիսի 15–ի որոշմամբ Երևանի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի ապրիլի 17–ի դատավճիռը թողել է անփոփոխ, իսկ պաշտպանի վերաքննիչ բողոքը՝ մերժել:

2009 թվականի հուլիսի 15–ի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը Գ.Շամշյանի նկատմամբ կիրառել է ՀՀ Ազգային ժողովի «Համաներում հայտարարելու մասին» որոշման 1–ին կետի 3–րդ ենթակետը և նրան ազատել Երևանի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի ապրիլի 17–ի դատավճռով նշանակված և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հունիսի 15–ի որոշմամբ անփոփոխ թողնված՝ 350.000 /երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ տուգանք պատժից:

5. Գ.Շամշյանի պաշտպանը 2009 թվականի հուլիսի 15–ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հունիսի 15–ի որոշման դեմ բերել է վճռաբեկ բողոք, որը ՀՀ Վճռաբեկ դատարանի 2009 թվականի օգոստոսի 21–ի որոշմամբ վերադարձվել է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407–րդ հոդվածի և 414.2–րդ հոդվածի 1–ին մասի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հուլիսի 15–ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

2009 թվականի օգոստոսի 21–ին ՀՀ վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար») բողոքն ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող վիստակյան հանգամանքները**

6. Գ.Շամշյանը մեղավոր է ճանաչվել և դատապարտվել այն բանի համար, որ 2008 թվականի օգոստոսի 5–ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի թիվ 5 նիստերի դահլիճում, դատական նիստի ժամանակ, իր պաշտոնեական լիազորությունների իրականացման առնչությամբ նույն դատարանի դատավոր Գագիկ Ավետիսյանի կարգադրություններին չի ենթարկվել և դատարանի նկատմամբ ցուցաբերել է անհարգալից վերաբերմունք, որը դրսևորվել է դատավորին վիրավորելով, ինչն արտահայտվել է դատավորի հասցեին հնչեցրած՝ «այ մառթ, արի մեր տեղը նյութ գրի, սրբազորություն արա, էտ էլ արա պռծի

ելի», «Սաղ կյանքս ... էս, արգելանքի մեջ էս եղել հա», «հորթ», «տխմար» և այլ վիրավորական արտահայտություններով:

7. Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 27-ի որոշմամբ տուժող Արթուր Պողոսյանի գույքը խարդախությամբ հափշտակելու դրվագով Գ.Շամշյանի նկատմամբ կիրառվել է «ՀՀ անկախության հռչակման 7-րդ տարեդարձի կապակցությամբ» համաներում հայտարարելու մասին ՀՀ Ազգային ժողովի 1998 թվականի սեպտեմբերի 15-ի որոշման 2-րդ կետը, և ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով նրա նկատմամբ դադարեցվել է քրեական հետապնդումը ու այդ մասով նա ազատվել է քրեական պատասխանատվությունից:

Նույն դատարանի 2007 թվականի ապրիլի 27-ի որոշմամբ տուժող Ծովիկ Հայրապետյանի գույքը խարդախությամբ հափշտակելու դրվագով Գ.Շամշյանի նկատմամբ կիրառվել է «Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2001 թվականի հունիսի 12-ի որոշման 2-րդ կետը, ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով նրա նկատմամբ դադարեցվել է քրեական հետապնդումը, ու այդ մասով նա ազատվել է քրեական պատասխանատվությունից:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հունիսի 6-ի դատավճռով Գ.Շամշյանը ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասով և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով դատապարտվել է ազատազրկման 2/երկու/ տարի 6/վեց/ ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան 2/երկու/ տարի ժամկետով:

### **Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Ըստ բողոք բերած անձի՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի հուլիսի 15-ի որոշմամբ թույլ է տրվել դատական սխալ, որի արդյունքում անհիմն և չարդարացված բարելավվել է ամբաստանյալի վիճակը: Վկայակոչելով ՀՀ Ազգային ժողովի «Համաներում հայտարարելու մասին» 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 8-րդ հոդվածի 2-րդ կետը՝ բողոք բերած անձը փաստարկել է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից Գ.Շամշյանի նկատմամբ չէր կարող կիրառվել ՀՀ Ազգային ժողովի «Համաներում հայտարարելու մասին» 2009 թվականի հունիսի 19-ի որոշումը:

Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի «Համաներում հայտարարելու մասին» որոշումը կիրառելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հուլիսի 15-ի որոշումը և ուժի մեջ թողնել նույն դատարանի 2009 թվականի հունիսի 15-ի որոշումը:

### **Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի հետևյալ հարցին. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իրավասո՞ւ էր արդյոք Գ.Շամշյանի նկատ-

մամբ կիրառել համաներման ակտ և նրան ազատել նշանակված պատժից այն դեպքում, երբ նրա նկատմամբ նախկինում կիրառվել է համաներման ակտ:

10. ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն՝ «Ազգային ժողովը Հանրապետության նախագահի առաջարկությամբ հայտարարում է համաներում»:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 113-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Համաներում կիրառելու կարգը սահմանում է համաներման ակտն ընդունող մարմինը»:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից բխում է, որ համաներման կիրառման կարգը, այդ թվում՝ ըստ անձանց շրջանակի դրա կիրառման սահմանափակումները նախատեսվում են այն ընդունող մարմնի՝ Ազգային ժողովի կողմից:

11. ՀՀ Ազգային ժողովի «Համաներում հայտարարելու մասին» 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 8-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ համաներումը չպետք է կիրառել այն անձանց նկատմամբ (...) և որոնք դիտավորությամբ կատարած հանցագործության համար պատիժը կրելուց ազատվել են (...) ՀՀ Ազգային ժողովի համաներման մասին որոշումներով, կամ որոնց նկատմամբ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար քրեական հետապնդում չի հարուցվել, կամ քրեական գործերը կարճվել են ՀՀ Ազգային ժողովի համաներման մասին որոշումներով, և կրկին կատարել են դիտավորյալ հանցագործություն, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ հանցագործությունների համար դատվածությունը մարելուց հետո անցել է 10 տարի:

Վերոշարադրյալ դրույթի վերլուծությունից երևում է, որ ՀՀ Ազգային ժողովի «Համաներում հայտարարելու մասին» 2009 թվականի հունիսի 19-ի որոշումը չի կարող կիրառվել այն անձանց նկատմամբ, ում վերաբերյալ քրեական գործը նախկինում կարճվել է կամ ազատվել է նշանակված պատժից ՀՀ Ազգային ժողովի համաներման մասին որոշմամբ:

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 27-ի և 2007 թվականի ապրիլի 27-ի որոշումներով Գ.Շամշյանի նկատմամբ կիրառվել է համաներման ակտ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը): Իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, ղեկավարվելով ՀՀ Ազգային ժողովի «Համաներում հայտարարելու մասին» 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով, Գ.Շամշյանի նկատմամբ կրկին կիրառել է ՀՀ Ազգային ժողովի «Համաներում հայտարարելու մասին» որոշումը և նրան ազատել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի ապրիլի 17-ի դատավճռով նշանակված և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հունիսի 15-ի որոշմամբ անփոփոխ թողնված՝ 350.000 /երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ տուգանք պատժից (տե՛ս սույն որոշման 4-րդ կետը):

Փաստորեն, սույն գործով վերաքննիչ դատարանը, Գ.Շամշյանի նկատմամբ համաներման ակտ կիրառելով, թույլ է տվել ՀՀ Ազգային ժողովի «Համաներում հայտարարելու մասին» 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 8-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների խախտում:

Հինք ընդունելով վերը շարադրվածը և նկատի ունենալով, որ ՀՀ Ազգային ժողովի «Համաներում հայտարարելու մասին» 2009 թվականի հունիսի 19-ի որոշման կիրառման սահմանափակումները թույլ չեն տալիս Գ.Շամշյանի նկատմամբ կիրառել վե-

րունշյալ ակտը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, ՀՀ Ազգային ժողովի «Համաներում հայտարարելու մասին» 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 8-րդ հոդվածի 2-րդ կետում ամրագրված պահանջների պայմաններում Գ.Շամշյանի նկատմամբ համաներում կիրառելու և նրան պատժից ազատելու որոշում կայացնելով, թույլ է տվել նյութական իրավունքի խախտումներ, որոնք, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ և 406-րդ հոդվածների համաձայն, հիմք են հանդիսանում որոշումը բեկանելու և համաներման կիրառման մասով գործի վարույթը կարճելու համար:

Վերոգրյալի հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ Ազգային ժողովի «Համաներում հայտարարելու մասին» 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 8-րդ հոդվածի 2-րդ կետը և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Գագիկ Գևորգի Շամշյանին «Համաներում հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի կիրառմամբ պատժից ազատելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հուլիսի 15-ի որոշումը բեկանել և համաներման կիրառման մասով գործի վարույթը կարճել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

32.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության

ԵՔԲԴ/0270/01/08

վերաքննիչ քրեական դատարանի որոշում

նախագահող դատավոր՝ Ս. Համբարձումյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՄԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Կ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ տուժողի ներկայացուցիչ* Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆԻ

16 սեպտեմբերի 2009 թվականին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Գագիկ Համլետի Հովհաննիսյանի և մյուսների վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով տուժողի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 16-ի որոշման դեմ տուժող Ռոբերտ Կարապետյանի ներկայացուցիչ Սուսաննա Մարգարյանի բերած վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. Քրեական գործը հարուցվել է 2007 թվականի սեպտեմբերի 4-ին ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

2. 2008 թվականի փետրվարի 10-ի որոշմամբ Գագիկ Համլետի Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով:

2008 թվականի մայիսի 26-ի որոշմամբ Արսեն Նվերի Գրիգորյանին և Լևոն Ավագի Հովակիմյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով:

3. Երևանի քրեական դատարանի 2009 թվականի հունվարի 12-ի դատավճռով Գ.Հովհաննիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել ազատազրկման 2 /երկու/ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկվելով 1 /մեկ/ տարի ժամկետով:

Նույն դատավճռով Ա.Գրիգորյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել ազատազրկման 2 /երկու/ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկվելով 1 /մեկ/ տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ Ա.Գրիգորյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, նրա նկատմամբ նշանակվել է փորձաշրջան 1 /մեկ/ տարի ժամկետով, և նա զրկվել է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից 1 /մեկ/ տարի ժամկետով:

Լ.Հովակիմյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել ազատազրկման 2 /երկու/ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկվելով 1 /մեկ/ տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ Լ.Հովակիմյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, նրա նկատմամբ նշանակվել է փորձաշրջան 1 /մեկ/ տարի ժամկետով, և նա զրկվել է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից 1 /մեկ/ տարի ժամկետով:

4. Գ.Հովհաննիսյանի պաշտպաններ Հ.Արսենյանի և Գ.Հովհաննիսյանի վերաբնիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009 թվականի ապրիլի 2-ի որոշմամբ Երևանի քրեական դատարանի 2009 թվականի հունվարի 12-ի դատավճիռը Գ.Հովհաննիսյանի մասով թողել է օրինական ուժի մեջ, իսկ պաշտպանների վերաքննիչ բողոքը մերժել է:

Ա.Գրիգորյանի և Լ.Հովակիմյանի մասով դատավճիռը չի բողոքարկվել:

ՀՀ Վճռաբեկ դատարանի 2009 թվականի հունիսի 16-ի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի ապրիլի 2-ի որոշման դեմ Գ.Հովհաննիսյանի պաշտպանների բերած վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

5. Երևանի քրեական դատարանի 2009 թվականի փետրվարի 19-ի որոշմամբ բավարարվել է տուժող Ռոբերտ Կարապետյանի միջնորդությունը, և վերականգնվել է թիվ ԵԶԳ- 0270/01/08 քրեական գործով 2009 թվականի հունվարի 12-ին կայացված դատավճռի բողոքարկման բաց թողնված ժամկետը, և այն երկարացվել է մեկ ամսով:

6. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 16-ի որոշմամբ ամբաստանյալ Գ.Հովհաննիսյանի և մյուսների վերաբերյալ Երևանի քրեական դատարանի 2009 թվականի հունվարի 12-ի դատավճռի դեմ տուժող Ռ.Կարապետյանի բերած վերաքննիչ բողոքը թողնվել է առանց քննության ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

7. Տուժողի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 16-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել տուժողի ներկայացուցիչ Սուսաննա Մարգարյանը:

2009 թվականի օգոստոսի 21-ին ՀՀ վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար») բողոքն ընդունել է վարույթ:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.**

8. ՀՀ արդարադատության նախարարության «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի պաշտոնատար անձինք հանդիսացող՝ պետի տեղակալ Գ.Հովհաննիսյանը, անվտանգության ապահովման բաժնի պետ Ա.Գրիգորյանը և անվտանգության ապահովման բաժնի կրտես մասնագետ Լ.Հովակիմյանը դատապարտվել են այն բանի համար, որ 2007 թվականի օգոստոսի 23-ին՝ ժամը 12-ի սահմաններում, քրեակատարողական հիմնարկի կալանավոր, դատապարտյալ Ռ.Կարապետյանին տարել են Ա.Գրիգորյանի աշխատասենյակ, որտեղ կշտամբել են նրան, թե 2007 թվականի օգոստոսի երկարատև տեսակցության ժամկետը երկարացնելու հարցով ինչու է դիմել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետին, այլ ոչ թե իրենց, որից հետո դիտավորությամբ կատարել են գործողություններ, որոնք ակնհայտորեն դուրս են եկել իրենց՝ «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված պաշտոնական լիազորությունների շրջանակներից, այն է՝ բռնության և հատուկ միջոցների գործադրմամբ՝ ռետինե մահակներով ծեծի են ենթարկել Ռ.Կարապետյանին՝ նրան հասցնելով ձախ աչքի և ոտքերի վնասվածքներ, դրանով իսկ էական վնաս պատճառել դատապարտյալի՝ օրենքով պաշտպանվող իրավունքներին:

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Վճռաբեկ բողոք բերած անձը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 16-ի որոշմամբ խախտվել են տուժողի նյութական և դատավարական իրավունքները, կայացված դատական ակտը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Բողոք բերած անձը, վկայակոչելով այն հանգամանքը, որ Երևանի քրեական դատարանի 2009 թվականի մարտի 16-ի որոշմամբ բավարարվել է տուժող Ռ.Կարապետյանի միջնորդությունը և արդեն իսկ վերականգնված է եղել 2009 թվականի հունվարի 12-ի դատավճռի բողոքարկման ժամկետը, հետևաբար ժամկետանց լինելու պատճառաբանությամբ բողոքն առանց քննության թողնելու հիմքեր չեն եղել, նշել է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի պահանջները, այն սխալ է մեկնաբանել և որևէ իրավա-

կան նորմով չի հիմնավորել վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելը:

Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Գ.Հովհաննիսյանի և մյուսների վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով տուժողի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 16-ի որոշումը, կայացնել նոր դատական ակտ:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի այն հարցին, թե դատական ակտ կայացրած դատարանի կողմից բաց թողնված ժամկետը վերականգնված լինելու պարագայում վերաքննիչ դատարանն իրավասո՞ւ էր արդյոք ժամկետանց լինելու հիմքով առանց քննության թողնել վերաքննիչ բողոքը:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հարգելի պատճառներով բողոքարկման համար սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք կարող են դատական ակտ կայացրած դատարանի առաջ միջնորդել՝ վերականգնելու բաց թողնված ժամկետը: (...)»:

Վերոշարադրյալ հոդվածի վերլուծությունից երևում է, որ դատական ակտի բողոքարկման համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու և ժամկետը վերականգնելու միջնորդությունը քննարկվում է բողոքարկման ենթակա դատական ակտը կայացրած դատարանի կողմից, որն իրավասու է հարգելի համարել ժամկետի բացթողումը և վերականգնել դատական ակտի բողոքարկման ժամկետը:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածով սահմանված պահանջներին, բերել է այն անձը, ով չուներ այդ իրավունքը, կամ բողոքը ժամկետանց է կամ բերվել է այնպիսի դատական ակտի դեմ, որը ենթակա չէ վերաքննիչ բողոքարկման կամ բերվել է 375.4-րդ հոդվածի պահանջի խախտմամբ, վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի որևէ այլ հոդվածով վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու հիմք նախատեսված չէ, ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ բողոքն առանց քննության թողնելու հիմքերի ցանկը սպառիչ է:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Երևանի քրեական դատարանի 2009 թվականի փետրվարի 19-ի որոշմամբ բավարարվել է տուժող Ռ.Կարապետյանի միջնորդությունը և վերականգնվել է 2009 թվականի հունվարի 12-ին կայացված դատավճռի բողոքարկման համար բաց թողնված ժամկետը (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

2009 թվականի մարտի 16-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը որոշում է կայացրել տուժողի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Նշված որոշման մեջ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն այն մտտեցումն է արտահայտել, որ բողոք բերած անձը կարող էր դատական ակտ կայացրած դատարանի առաջ միջնորդել վերականգնելու բաց թողնված ժամկետը միայն բողոքն առանց քննության թողնելու մասին որոշման կայացումից հետո:



Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի կարգավորումից բխում է, որ վերաքննիչ բողոքարկման ժամկետն առաջին ատյանի դատարանի կողմից կարող է վերականգնվել մինչև վերաքննիչ բողոք ներկայացնելը: Հետևաբար բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնված լինելու պայմաններում վերաքննիչ բողոքը չի կարող համարվել ժամկետանց:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով բողոքարկվել է վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտ, որն առանց քննության թողնելու ենթակա չէր: Բողոքը բերվել է օրենքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական ակտ կայացրած դատարանի որոշմամբ բաց թողնված ժամկետը վերականգնելուց հետո, ուստի վերաքննիչ դատարանը որևէ իրավական հիմք չուներ այդ վերաքննիչ բողոքը քննության չընդունելու և դրա նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածը կիրառելու համար: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից Երևանի քրեական դատարանի 2009 թվականի հունվարի 12-ի դատավճռի դեմ բերված վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումն անհիմն է:

14. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել քրեադատավարական օրենքի խախտումներ: Այդ խախտումներն իրենց բնությամբ էական են, քանի որ դրանց արդյունքում սահմանափակվել է տուժողի դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, խախտվել են գործի արդարացի քննության և արդարադատության մատչելիության իրավունքները, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ դրանք հիմք են կայացված դատական ակտը մասնակիորեն բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

15. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Գագիկ Համլետի Հովհաննիսյանի և մյուսների վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով Երևանի քրեական դատարանի 2009 թվականի հունվարի 12-ի դատավճռի դեմ տուժող Ռոբերտ Կարապետյանի բերված վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 16-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

33.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵԶՐԴ /0295/01/08

ԵԶՐԴ /0295/01/08

նախագահող դատավոր՝ Գ.Սելիք–Սարգսյան  
դատավորներ՝ Մ.Պետրոսյան, Ս.Համբարձումյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԳԱՆԻԵԼՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Կ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ պաշտպան* Ի. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

16 սեպտեմբերի 2009 թվականին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արմեն Սելյանի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 225–րդ հոդվածի 2–րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2008 թվականի նոյեմբերի 5–ի որոշման դեմ դատապարտյալ Ա.Սարգսյանի պաշտպան Ինեսաս Պետրոսյանի բերած վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2008 թվականի մարտի 1–ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է թիվ 62202508 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 225<sup>1</sup>–րդ հոդվածի 1–ին,

2-րդ մասերի, 235-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի և 316-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով, 2008 թվականի մարտի 2-ին՝ թիվ 62202608 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասի և 235-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

2008 թվականի մարտի 2-ի որոշմամբ թիվ 62202508 քրեական գործը միացվել է թիվ 62202608 քրեական գործին:

Արմեն Սարգսյանը ձերբակալվել է 2008 թվականի մարտի 3-ին:

2008 թվականի մարտի 6-ին Ա.Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով:

2008 թվականի հունիսի 11-ին Ա.Սարգսյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել և լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով:

2008 թվականի հունիսի 12-ի որոշմամբ թիվ 62202608 քրեական գործից անջատվել են Ա.Սարգսյանի վերաբերյալ քրեական գործի նյութերը:

2008 թվականի հունիսի 17-ին Ա.Սարգսյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի քրեական դատարան (այսուհետ՝ Քրեական դատարան):

2. Քրեական դատարանի 2008 թվականի սեպտեմբերի 16-ի դատավճռով Արմեն Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել ազատազրկման 4 /չորս/ տարի ժամկետով:

3. Ամբաստանյալ Ա.Սարգսյանի և պաշտպան Ի.Պետրոսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2008 թվականի նոյեմբերի 5-ի որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքը՝ օրինական ուժի մեջ թողնելով Քրեական դատարանի 2008 թվականի սեպտեմբերի 16-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի 2008 թվականի նոյեմբերի 5-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել պաշտպան Ի.Պետրոսյանը:

2009 թվականի հունիսի 18-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը պաշտպան Ի.Պետրոսյանի բերած վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Գործի փաստական հանգամանքները և Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. Ա.Սարգսյանը մեղադրվել է այն բանի համար, որ անմիջականորեն մասնակցել է 2008 թվականի մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում տեղի ունեցած, բռնություններով, ջարդերով, հրկիզումներով, պետական, հանրային և մասնավոր գույքի ոչնչացմամբ, վնասումով, բացահայտ հափշտակություններով, իշխանության ներկայացուցիչներին զինված դիմադրություն ցույց տալով, հրագենի, պայթուցիկ նյութերի, որպես զենք օգտագործելու համար հարմարեցված տարատեսակ առարկաների գործադրմամբ զուգորդված զանգվածային անկարգությունների կատարմանը, այն է՝ 2008 թվականի մարտի 1-ին՝ ժամը 23-ից 24-ի սահմաններում, Երևանի Մաշտոցի պողոտայի, Գր.Լուսավորիչ և Պարոնյան փողոցների

խաչներուկում հայիոյանքներ է տվել ու բռնություն գործադրել նշված վայրում ծառայություն իրականացնող՝ ՀՀ ոստիկանության գործերի թիվ 1033 գործառնասի ծառայողների նկատմամբ, նրանց ուղղությամբ նետել է քարեր, փայտի կտորներ և այլ առարկաներ:

6. 2008 թվականի մարտի 1-ի լույս 2-ի գիշերը զանգվածային անկարգությունների վայրում Ա.Սարգսյանը գործով չպարզված հանգամանքներում ստացել է թեթև մարմնական վնասվածք՝ առողջության կարճատև քայքայումով: 2008 թվականի մարտի 2-ին՝ ժամը 2:10 ընդհատելով, Արմեն Սարգսյանը ընդունվել է «Էրեբունի» բժշկական կենտրոն՝ «ճախ ոտնաթաթի միջային մակերեսի վնասվածք» նախնական ախտորոշմամբ, սակայն ինքնակամ, առանց բժշկական անձնակազմին տեղյակ պահելու, հագին եղած բաճկոնը թողնելով հիվանդանոցում՝ հեռացել է այնտեղից և վերադառնալով վերոհիշյալ զանգվածային անկարգությունների վայր՝ բռնվել ու բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից:

7. Նախաքննության մարմնի կողմից մեղադրական եզրակացության հիմքում դրվել են.

ա) Վկաներ, ՀՀ ոստիկանության ներքին գործերի թիվ 1033 գործառնասի զինծառայողներ Անտոն Ասրյանի և Տիգրան Խաչատրյանի ճանաչմանը մեղադրյալ Ա.Սարգսյանին ներկայացնելու մասին 2008 թվականի հունիսի 6-ի արձանագրությունները, որոնց համաձայն՝ ճանաչմանը ներկայացված անձանց մեջ նշված վկաները ճանաչել են Ա.Սարգսյանին՝ որպես զանգվածային անկարգությունների ժամանակ ոստիկանների նկատմամբ հայիոյանքներ տվող և նրանց ուղղությամբ քարեր, փայտեր և այլ առարկաներ նետող անձի:

բ) Նույն ոստիկանների ցուցմունքները, որտեղ վերջիններս նկարագրել են մեղադրյալ Ա.Սարգսյանի գործողությունները՝ զանգվածային անկարգությունների ժամանակ (հայիոյանքներ տալը, իրենց ուղղությամբ քարեր, փայտեր և այլ առարկաներ նետելը):

գ) Նույն վկաների և Ա.Սարգսյանի առերես հարցաքննության արձանագրությունները, որի ընթացքում վերջինը հրաժարվել է վկաների հետ առերես հարցաքննվելուց:

դ) Վկաներ, ՀՀ ոստիկանության ներքին գործերի թիվ 1035 գործառնասի զինծառայողներ Ռազմիկ Այվազյանի, Սարգիս Խանջյանի, Էմին Բալայանի և Սամվել Պետրոսյանի նույնաբովանդակ ցուցմունքները, որոնց համաձայն՝ 2008 թվականի մարտի 2-ին՝ ժամը 04:30-ի սահմաններում, ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումների ծառայողներ բերման են ենթարկել և իրենց հանձնել թիվ 16 քաղաքացիների՝ որպես զանգվածային անկարգությունների կատարմանը առավել ակտիվ մասնակցություն ունեցած անձանց:

ե) Վկա, Ա.Սարգսյանի հայր Սեյրան Սարգսյանի ցուցմունքը, որով հաստատված է համարվել Արմեն Սարգսյանի կողմից 2008 թվականի փետրվարի 20-ից Երևանում կազմակերպված հրապարակային միջոցառումներին մասնակցելու հանգամանքը:

զ) Վկա Գագիկ Գինոսյանի ցուցմունքը, որով ժխտված է համարվել Ա.Սարգսյանի այն պատճառաբանությունը, որ նա զանգվածային անկարգությունների կատարման վայր է գնացել աշխատավայրից:

է) «Էրեբունի» բժշկական կենտրոնից առգրավված անհետաձգելի բուժօգնության քարտի գրանցումները, որոնցով հաստատված է համարվել Ա.Սարգսյանի կողմից նշված հիվանդանոցում բուժօգնություն ստանալու և առանց տեղյակ պահելու հեռանալու փաստը:

ը) «Էրեբունի» բժշկական կենտրոնից առգրավված Ա.Սարգսյանի բաճկոնը, որով հաստատված է համարվել զանգվածային անկարգությունների կատարման վայր վերադառնալու նրա շտապողականությունը:

Մեղադրանքի հիմքում դրվել են նաև դեպի վայրի զննության արձանագրությունները, փորձագիտական եզրակացությունները, ՀՀ ոստիկանության պետի տեղակալի, Երևանի քաղաքապետի գրությունները, որոնք վերաբերում են տեղի ունեցած զանգվածային անկարգություններին և դրանց արդյունքում պատճառված վնասներին:

Ամբաստանյալ Ա.Սարգսյանն առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել՝ նշելով, որ 2008 թվականի մարտի 1-ին եղել է նշված վայրերում, սակայն զանգվածային անկարգություններին անմիջական մասնակցություն ունենալու (դիմադրություն ցույց տալու, բռնություն գործադրելու) հանգամանքը ժխտել է:

8. Քրեական դատարանի 2008 թվականի սեպտեմբերի 16-ի դատավճռով ճանաչման ներկայացնելու մասին 2008 թվականի հունիսի 6-ի երկու արձանագրությունները ճանաչվել են որպես անթույլատրելի ապացույցներ: Քրեական դատարանը հաստատված է համարել, որ մեղադրյալ Ա.Սարգսյանին վկաներ Ա.Ասրյանի ու Տ.Խաչատրյանի ճանաչմանը ներկայացնելու ընթացքում թույլ են տրվել նշված քննչական գործողության կատարման կարգի և մեղադրյալի պաշտպանական իրավունքի էական խախտումներ, մասնավորապես, 2008 թվականի հունիսի 6-ին անձին ճանաչման ներկայացնելու քննչական գործողության ընթացքում Ա.Սարգսյանը վկա Անտոն Ասրյանի ճանաչմանն է ներկայացվել ձախ ձեռքին կրելով ձեռնաշղթա: Քրեական դատարանը գտել է, որ անձին ձեռնաշղթայով ճանաչման ներկայացնելը հակասում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին (ճանաչման ենթակա անձը ներկայացվում է ճանաչողին մույն սեռի և արտաքինով ու հագուստով ճանաչվողին հնարավորին չափ մնան առնվազն երեք այլ անձանց հետ): Նշված հանգամանքը գնահատելով որպես տվյալ քննչական գործողության կատարման կարգի էական խախտում և դեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջով (քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ), Քրեական դատարանը հաստատել է Ա.Սարգսյանին վկա Ա.Ասրյանի ճանաչմանը ներկայացնելու 2008 թվականի հունիսի 6-ի արձանագրության՝ որպես ապացույցի օգտագործման անթույլատրելիությունը:

Քրեական դատարանն արձանագրել է նաև, որ վկա Ա.Ասրյանի ճանաչմանը ներկայացվելուց անմիջապես հետո Ա.Սարգսյանը ցանկություն է հայտնել ունենալ պաշտպան, ինչը հաստատվել է նաև վկա Ա.Ասրյանի դատաքննության ընթացքում տված ցուցմունքով: Սակայն նախաքննության մարմինը, անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 2-րդ մասի

1-ին կետի պահանջները (քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ այդպիսի ցանկություն է հայտնել մեղադրյալը՝ ցանկություն հայտնելու պահից), առանց Ա.Սարգսյանին պաշտպանով ապահովելու, մեղադրյալի մասնակցությամբ կատարել է քննչական գործողություն՝ նրան ներկայացրել է վկա Տ.Խաչատրյանի ճանաչմանը:

Քրեական դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով (քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել մեղադրյալի պաշտպանության իրավունքի խախտմամբ), հաստատել է նաև մեղադրյալ Ա.Սարգսյանին վկա Տ.Խաչատրյանի ճանաչմանը ներկայացնելու 2008 թվականի հունիսի 6-ի արձանագրության՝ որպես ապացույցի օգտագործման անթույլատրելիությունը՝ տվյալ քննչական գործողությունը մեղադրյալի պաշտպանության իրավունքի խախտմամբ կատարված լինելու պատճառաբանությամբ:

9. Քրեական դատարանը 2008 թվականի սեպտեմբերի 16-ին կայացրել է լրացուցիչ որոշում, որում, բացի նախորդ կետում թվարկված էական խախտումներից, արձանագրել է նաև քրեական գործով մինչդատական վարույթում թույլ տրված և դատական քննության ընթացքում ի հայտ եկած հետևյալ խախտումները.

Ա.Սարգսյանի ձերբակալումը տևել է օրենքով նախատեսված 72 ժամից ավելի, քանի որ նա ձերբակալվել է բերման ենթարկվելուց հետո ոչ թե երեք ժամվա ընթացքում, այլ 39 ժամ անց (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 130-րդ և 131<sup>1</sup>-րդ հոդվածների պահանջների էական խախտումներ), քննիչի կողմից կայացված դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին 2008 թվականի մարտի 4-ի որոշմամբ փորձագետներին պարզաբանման համար հարցեր են առաջադրվել «տուժող Արմեն Սարգսյանի» մարմնական վնասվածքների վերաբերյալ, սակայն քրեական գործով վերջինս տուժող չի ճանաչվել:

10. Քրեական և Վերաքննիչ դատարանները Ա.Սարգսյանի կատարած հանցանքը և նրա մեղքը հաստատված են համարել ճանաչման ներկայացնելու քննչական գործողությանը մասնակցած վկաներ Ա.Ասրյանի և Տ.Խաչատրյանի ցուցմունքներով և նրանց ու Ա.Սարգսյանի առերես հարցաքննության արձանագրություններով, վկաներ Ռ.Այվազյանի, Ս.Խանջյանի, Է.Բալայանի, Ս.Պետրոսյանի ցուցմունքներով, առգրավման, դեպքի վայրի զննության արձանագրություններով, փորձագիտական եզրակացություններով, ՀՀ ոստիկանության պետի տեղակալի, Երևանի քաղաքապետի գրություններով:

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

11. Բողոք բերած անձը փաստարկել է, որ առկա է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը, այն է՝ Վճռաբեկ դատարանի կողմից սույն գործով դատական ակտի կայացումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Բողոք բերած անձը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը չի կատարել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն՝ ճանաչման ներկայացնելու 2008 թվականի հունիսի 6-ի արձանագրությունները որպես անթույլատրելի ապացույց ճանաչելու պայմաններում օրինական ուժի մեջ է թողել Քրեական դատարանի դատավճիռը:

Ըստ բողոքաբերի՝ եթե անձին ճանաչման ներկայացնելու քննչական գործողությունը կատարվում է քրեադատավարական օրենքի էական խախտմամբ, ապա դրանից բխող բոլոր գործողությունները չեն կարող դիտվել որպես ապացույց: Սակայն Քրեական դատարանը, անթույլատրելի ճանաչելով ճանաչման ներկայացնելու արձանագրությունները, որպես իր պաշտպանյալի մեղքը հիմնավորող ապացույց է դիտել Ա.Սարգսյանին ճանաչելու ներկայացած վկաներ Ա.Ասրյանի և Տ.Խաչատրյանի ցուցմունքները և նրանց ու Ա.Սարգսյանի առերես հարցաքննության արձանագրությունները, որոնց իր պաշտպանյալը հրաժարվել է մասնակցել: Բողոքաբերի պնդմամբ, թեև Քրեական դատարանն իր կայացրած լրացուցիչ որոշման մեջ արձանագրել է նախաքննական մարմնի խախտումները, սակայն լուրջ հետևություն չի կատարել, իսկ Վերաքննիչ դատարանը, իր որոշման մեջ փաստելով և ընդունելով քրեադատավարական օրենքի էական խախտումների առկայությունը, իր պաշտպանյալին արդարացնելու փոխարեն օրինական ուժի մեջ է թողել անհիմն ու անօրինական դատական ակտը:

Բողոքի հեղինակը նշել է նաև, որ գործով ձեռք բերված ապացույցներով հաստատված չէ մեղսագրված արարքում Ա.Սարգսյանի մեղքը: Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել վերաքննիչ բողոքում բարձրացված հարցին՝ կապված վկաներ Ռ.Այվազյանի, Ս.Խանջյանի, Է.Բալայանի և Ս.Պետրոսյանի ցուցմունքների հետ: Ըստ մեղադրանքի կողմի՝ նշված վկաները Ա.Սարգսյանին բերման են ենթարկել ոստիկանության Կենտրոն բաժին, մինչդեռ վերոնշյալ վկաները հայտնել են, որ Ա.Սարգսյանին չեն տեսել և նրան բերման չեն ենթարկել: Այդ փաստը հաստատվել է նաև Քրեական դատարանում հրապարակված և հետագոտված՝ անձանց ոստիկանության բաժին բերման ենթարկելու մասին արձանագրությամբ: Ա.Սարգսյանի մեղքը հերքվում է նաև Քրեական դատարանում հրապարակված և հետագոտված դատաձգաբանական և դատաքիմիական փորձաքննությունների եզրակացություններով:

12. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը, գտնելով, որ գործով հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս ստորադաս դատարանի կողմից կայացված դատական ակտը բեկանելու, և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից, խնդրել է Արմեն Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով Վերաքննիչ դատարանի 2008 թվականի նոյեմբերի 5-ի որոշումը բեկանել և Ա.Սարգսյանի վերաբերյալ կայացնել արդարացնող դատական ակտ:

### **Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանն ըստ էության պետք է պատասխանի այն հարցին, թե իրավաչափ էր արդյոք Ա.Սարգսյանին երկու վկաների ճանաչմանը ներկայացնելու արձանագրությունները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 5-րդ կետերի հիմքով որպես անթույլատրելի ապացույց

ճանաչելու պայմաններում նույն վկաների՝ Ա.Սարգսյանին որպես զանգվածային անկարգությունների անմիջական մասնակցի մատնացույց անելու մասին ցուցմունքները որպես ապացույց օգտագործելու և մեղադրանքի հիմքում դնելու դատարանների որոշումը:

14. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք (...):»:

ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը (...):»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ «1. Քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել՝

(...)

2) կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի (...), էական խախտմամբ.

(...)

5) քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ.

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ապացույցներ ձեռք բերելիս էական են այն խախտումները, որոնք, դրսևորվելով մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների կամ սույն օրենսգրքի որևէ պահանջի խախտմամբ, դատավարության մասնակիցներին՝ օրենքով երաշխավորված իրավունքների զրկմամբ կամ սահմանափակմամբ



կամ որևէ այլ կերպ ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա»:

15. Նշված իրավադրույթներից հետևում է, որ որպես քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները պարզելու միջոց կարող են օգտագործվել միայն այնպիսի ապացույցներ, որոնք ձեռք են բերվել, ամրագրվել և գործին կցվել են քրեադատավարական օրենքով սահմանված և թույլատրելի համարվող կարգով: Ապացույցների ձեռքբերման և ամրագրման թույլատրելիությունը կարգավորող նորմերից հետևում է, որ որպես ապացույց չեն կարող օգտագործվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալները, հատկապես եթե դրանք իրենց հերթին հանգեցրել են դատավարության մասնակիցների իրավունքների էական խախտման, ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա:

Այսպիսով, ապացույցների հավաքմանը և ստուգմանն ուղղված դատավարական գործողությունների կատարման ընթացքում պետք է ապահովվի անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Հակառակ դեպքում կատարված դատավարական գործողության արդյունքում ստացված փաստական տվյալը, անկախ գործի համար ունեցած նշանակությունից, կորցնում է իր իրավական ուժը, ապացուցողական նշանակությունը և չի կարող ընդգրկվել կոնկրետ քրեական գործով ապացույցների համակցության մեջ և դրվել մեղադրանքի հիմքում:

16. Սույն գործի ուսումնասիրությունից երևում է, որ նախաքննության մարմինը մեղադրական եզրակացության մեջ որպես Արմեն Սարգսյանի մեղադրանքը հիմնավորող ապացույցներ նշել է վկաներ Ա.Ասրյանի և Տ.Խաչատրյանի ճանաչմանը մեղադրյալ Ա.Սարգսյանին ներկայացնելու մասին 2008 թվականի հունիսի 6-ի արձանագրությունները, նույն վկաների ցուցմունքները, նրանց և Ա.Սարգսյանի առերես հարցաքննության արձանագրությունները, վկաներ Ռ.Ավվազյանի, Ս.Խանջյանի, Է.Բալայանի, Ս.Պետրոսյանի, Ս.Սարգսյանի և Գ.Գինոսյանի ցուցմունքները, «Էրեբունի» բժշկական կենտրոնից առգրավված անհետաձգելի բուժօգնության քարտի գրանցումները և Ա.Սարգսյանի բաճկոնը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Ա.Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրական դատավճիռ կայացնելով՝ Քրեական դատարանը նույն դատավճռով հաստատված է համարել, որ մեղադրյալ Ա. Սարգսյանին վկաներ Ա. Ասրյանի ու Տ.Խաչատրյանի ճանաչմանը ներկայացնելու քննչական գործողությունների ընթացքում քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից թույլ են տրվել դրանց կատարման կարգի և մեղադրյալի պաշտպանական իրավունքի էական խախտումներ, որի հիման վրա այդ արձանագրությունները ճանաչել է որպես անթույլատրելի ապացույց (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Քրեական գործով մինչդատական վարույթում թույլ տրված խախտումների վերաբերյալ Քրեական դատարանը 2008 թվականի սեպտեմբերի 16-ին կայացրել է

լրացուցիչ որոշում, որում արձանագրել է քրեական գործով մինչդատական վարույթում թույլ տրված և դատական քննության ընթացքում ի հայտ եկած նաև այլ խախտումներ (տե՛ս սույն որոշման 9–րդ կետը):

17. Վերոգրյալից հետևում է, որ Քրեական դատարանը, Ա.Սարգսյանին երկու վկաների ճանաչմանը ներկայացնելու արձանագրությունները ճանաչելով որպես անթույլատրելի ապացույց և դրանք հանելով ապացուցողական զանգվածից, ամբաստանյալի մեղավորությունը ապացուցված է համարել ճանաչման ներկայացնելուց հետո վկաների տված ցուցմունքներով այն մասին, որ իրենց կողմից ճանաչված Ա.Սարգսյանը հանդիսացել է 2008 թվականի մարտի 1–ից 2–ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքի կենտրոնական փողոցներում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների անմիջական մասնակից: Այսինքն՝ սույն գործով Քրեական դատարանն անձի դատապարտման հիմքում դրել է այնպիսի ապացույցներ, որոնց բովանդակությունն ամբողջությամբ բխում է քրեադատավարական օրենքի էական խախտմամբ կատարված քննչական գործողությունից:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրյալ Ա.Սարգսյանին վկաներ Ա.Ասրյանի և Տ.Խաչատրյանի ճանաչմանը ներկայացնելու երկու արձանագրությունները որպես անթույլատրելի ապացույց ճանաչելու պարագայում ճանաչման ներկայացնելուց հետո այդ նույն վկաների տված ցուցմունքները չէին կարող որպես ապացույց օգտագործվել և դրվել Ա.Սարգսյանի մեղադրանքի հիմքում: Այդ ապացույցները թույլատրելի չեն, քանի որ դրանց բովանդակությունն ամբողջությամբ հիմնված է եղել անթույլատրելի ճանաչված քննչական գործողության տվյալների վրա, իսկ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման սահմանադրական արգելքը վերաբերում է նաև դրանցից բխող ապացույցներին:

Հետևաբար, սույն գործով իրավաչափ չի եղել Ա.Սարգսյանին երկու վկաների ճանաչմանը ներկայացնելու արձանագրությունները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105–րդ հոդվածի 1–ին մասի 2–րդ և 5–րդ կետերի հիմքով որպես անթույլատրելի ապացույց ճանաչելու պայմաններում նույն վկաների՝ Ա.Սարգսյանին որպես զանգվածային անկարգությունների անմիջական մասնակցի մատնացույց անելու մասին ցուցմունքները որպես ապացույց օգտագործելու և մեղադրանքի հիմքում դնելու դատարանների որոշումը:

Հիմք ընդունելով վերոգրյալ հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է հետևության, որ ինչպես Քրեական դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը, ճանաչման ներկայացնելու մասին 2008 թվականի հունիսի 6–ի արձանագրությունները որպես քրեադատավարական օրենքով սահմանված կարգի էական խախտմամբ և Ա.Սարգսյանի պաշտպանության իրավունքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներ անթույլատրելի ճանաչելու հետ մեկտեղ ամբաստանյալ Ա.Սարգսյանի մեղադրանքի հիմքում դնելով ճանաչման գործընթացի մասնակիցներ, վկաներ Ա.Ասրյանի և Տ.Խաչատրյանի՝ ճանաչման ներկայացնելուց հետո տրված ցուցմունքները, թույլ են տվել ՀՀ Սահմանադրության 22–րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105–րդ, 358–րդ, 360–րդ, 365–րդ, իսկ Վերաքննիչ դատարանը՝ նաև 398–րդ հոդվածների պահանջների խախտումներ, որոնք հանգեցրել են Ա.Սարգսյանի իրավունքների էական խախտման: Արդյունքում խախտվել է նաև ՀՀ Սահմանադրության 19–րդ հոդ–

վածով և Կոնվենցիայի 6–րդ հոդվածով երաշխավորված՝ Ա.Սարգսյանի արդարացի դատաքննության իրավունքը:

18. Վերլուծելով գործով ձեռք բերված ապացույցները՝ ամբաստանյալի ցուցմունքները, մինչև ճանաչման ներկայացնելը վկաներ Ա.Ասրյանի և Տ.Խաչատրյանի ցուցմունքները, մյուս վկաների ցուցմունքները, «Էրեբունի» բժշկական կենտրոնից առգրավված Ա.Սարգսյանի բաճկոնը, դեպքի վայրի զննության արձանագրությունները, փորձագիտական եզրակացությունները, ՀՀ ոստիկանության պետի տեղակալի, Երևանի քաղաքապետի գրությունները, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք 2008 թվականի մարտի 1–ից 2–ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքի կենտրոնական փողոցներում տեղի ունեցած զանգվածային անկարգություններին Ա.Սարգսյանի անմիջական մասնակցությունը հիմնավորող փաստական տվյալներ չեն պարունակում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, իսկ գործի վարույթը ենթակա է կարճման՝ կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու արդյունքում, եթե սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձին ճանաչման ներկայացնելու քննչական գործողությունը դասվում է այն դատավարական գործողությունների շարքին, որն իր բնույթով կրկնակի կատարման հնարավորություն չի ընձեռում: Կրկնակի ճանաչման դեպքում դրա արդյունքների վերաբերյալ կարող են հարուցվել քրեադատավարական օրենքի իմաստով փարատման ոչ ենթակա կասկածներ, քանի որ ճանաչողն արդեն տիրապետում է նրա ցուցմունքների օբյեկտիվությունը բացառող տեղեկությունների:

Հետևաբար, սույն գործով սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները:

19. Հիմք ընդունելով վերը շարադրված պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Սարգսյանի վերաբերյալ կայացված դատական ակտերը ենթական են բեկանման, քրեական հետապնդումը՝ դադարեցման, քանի որ քրեական գործով ձեռք բերված ապացույցները բավարար չեն Ա.Սարգսյանին առաջադրված մեղադրանքը հաստատված և կատարված հանցագործությանը նրա մասնակցությունն ապացուցված համարելու համար, և սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է անթույլատրելի ճանաչված ապացույցներից անմիջականորեն բխող այլ ապացույցների անթույլատրելիության հարցի վերաբերյալ օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92–րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35–րդ, 403–406–րդ, 419–րդ, 422–424–րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Արմեն Սեյրանի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով Երևանի քրեական դատարանի 2008 թվականի սեպտեմբերի 16-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի նոյեմբերի 5-ի որոշումը բեկանել, Ա. Սարգսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել և քրեական գործի վարույթը կարճել՝ կատարված հանցագործությանը նրա մասնակցությունն ապացուցված չլինելու պատճառաբանությամբ:

2. Արմեն Սեյրանի Սարգսյանին անհապաղ ազատել ազատագրկման ձևով նշանակված պատիժը կրելուց:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն  
Դատավորներ՝ ստորագրություններ*

34.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում

ԵԿԳ/0020/11/09

նախագահող դատավոր՝ Ռ. Ազարյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

16 սեպտեմբերի 2009 թվականին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով Անահիտ Հայկի Սաղաթեյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. հունիսի 15-ի որոշման դեմ դիմող Ա.Սաղաթեյանի բերած վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. ՀՀ գլխավոր դատախազի 2000թ. մարտի 1-ի որոշմամբ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Անահիտ Հայկի Սաղաթեյանի կողմից կաշառք ստանալու վերաբերյալ նյութերով, ՀՀ 1961թ. քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասով հարուցվել է թիվ 62201100 քրեական գործը: Նախաքննության կատարումը հանձնարարվել է ՀՀ գլխավոր դատախազության քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ա.Թարվերդյանին: Վերջինս 2000թ. մարտի 1-ի որոշմամբ գործն ընդունել է վարույթ և ձեռնամուխ է եղել նախաքննության կատարմանը:

2. 2000թ. հունիսի 22-ին ՀՀ գլխավոր դատախազը միջնորդություն է ներկայացրել ՀՀ արդարադատության խորհուրդ՝ խնդրելով քննության առնել Ա.Սաղաթելյանին քրեական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու համար ՀՀ նախագահին առաջարկ ներկայացնելու հարցը:

2000թ. օգոստոսի 21-ին ՀՀ արդարադատության խորհուրդը որոշել է ՀՀ գլխավոր դատախազի ներկայացրած միջնորդությունը մերժել:

3. 2000թ. սեպտեմբերի 1-ին ՀԿԳ քննիչ Ա.Թարվերդյանը որոշում է կայացրել թիվ 62201100 քրեական գործի վարույթը կասեցնելու մասին:

4. ՀՀ նախագահի 2004թ. ապրիլի 30-ի հրամանագրով Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Անահիտ Հակիկ Սաղաթելյանի լիազորությունները դադարեցվել են:

5. 2008թ. հոկտեմբերի 1-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 2-րդ մասի և 38-314-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 62216908 քրեական գործը:

6. 2008թ. հոկտեմբերի 3-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ա.Մինասյանը որոշում է կայացրել թիվ 62201100 քրեական գործով վարույթը վերսկսելու մասին:

Նույն օրը ՀԿԳ քննիչ Ա.Մինասյանը որոշում է կայացրել վերոհիշյալ քրեական գործը և 2008թ. հոկտեմբերի 1-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 2-րդ մասի և 38-314-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցված թիվ 62216908 քրեական գործը միացնել մեկ վարույթում:

Ա.Մինասյանի 2008թ. նոյեմբերի 14-ի որոշմամբ Ա.Սաղաթելյանը ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, 38-312-րդ հոդվածի 1-ին մասով և 314-րդ հոդվածի 2-րդ մասով ներգրավվել է որպես մեղադրյալ:

7. 2008թ. նոյեմբերի 24-ին Ա.Սաղաթելյանը ՀԿԳ քննիչ Ա.Մինասյանի գործողությունները և որոշումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կարգով բողոքարկել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. դեկտեմբերի 22-ի որոշմամբ Ա.Սաղաթելյանի բողոքը մերժվել է:

Վերոնշյալ որոշումը Ա.Սաղաթելյանի կողմից բողոքարկվել է վերաքննության կարգով:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009թ. հունիսի 15-ի որոշմամբ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008թ. դեկտեմբերի 22-ի որոշումը թողել է օրինական ուժի մեջ:

8. 2008թ. դեկտեմբերի 29-ին ՀՀ Հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ա.Մինասյանը որոշում է կայացրել քրեական գործի վարույթը կարճելու և Անահիտ Սաղաթելյանի, Մյասնիկ Ավետիսյանի ու Զաբելա Զարոյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին՝ նրանց մեղսագրված հանցանքների համար քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով:

2009թ. հունվարի 19–ին Ա.Սաղաթեյանը և Մ.Ավետիսյանը բողոք են ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ խնդրելով վերացնել քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին ՀԿԳ քննիչ Ա.Մինասյանի 2008թ. դեկտեմբերի 29–ի որոշումը:

2009թ. հունվարի 30–ին ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Ջ.Թադևոսյանի գրությամբ Ա.Սաղաթեյանին և Մ.Ավետիսյանին տրվել է պատասխան, ըստ որի՝ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու հիմքեր չկան:

9. 2009թ. մարտի 4–ին Ա.Սաղաթեյանը բողոք է բերել առաջին ատյանի դատարան՝ խնդրելով վերացնել քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին ՀԿԳ քննիչ Ա.Մինասյանի 2008թ. դեկտեմբերի 29–ի որոշումը:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2009թ. մարտի 16–ին որոշում է կայացրել Ա.Սաղաթեյանի բողոքը մերժելու մասին:

10. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008թ. դեկտեմբերի 22–ի և 2009թ. մարտի 16–ի որոշումների դեմ Ա.Սաղաթեյանի կողմից բերված երկու վերաքննիչ բողոքները ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. մայիսի 5–ի որոշմամբ միացվել են մեկ վարույթում և նշանակվել քննության:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. հունիսի 15–ի որոշմամբ առաջին ատյանի դատարանի վերոհիշյալ որոշումները թողնվել են օրինական ուժի մեջ:

11. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. հունիսի 15–ի որոշման դեմ 2009թ. հուլիսի 11–ին Ա.Սաղաթեյանի կողմից վճռաբեկ բողոք է բերվել:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետի հիման վրա («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»), 2009թ. օգոստոսի 19–ի որոշմամբ բողոքն ընդունել է վարույթ:

### **Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.**

12. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008թ. դեկտեմբերի 22–ի որոշմամբ Ա.Սաղաթեյանի կողմից ՀՀ Հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ա.Մինասյանի գործողությունների և որոշումների դեմ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290–րդ հոդվածի կարգով ներկայացված բողոքը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ քրեական գործ հարուցելու մասին որոշումը նախատեսված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290–րդ հոդվածի 2–րդ մասում թվարկված՝ բողոքարկման ենթակա որոշումների շարքում, ուստի, որպեսզի քրեական գործ հարուցելու մասին որոշումը լինի դատական կարգով բողոքարկման առարկա, պետք է պարզել, թե քրեական գործ հարուցելու մասին որոշումը արդյո՞ք խախտում է անձի իրավունքներն ու

օրինական շահերը: Քննության արդյունքում դատարանը գտել է, որ վարույթն իրականացնող մարմինը չի խախտել Ա.Սաղաթեյանի իրավունքները և ազատությունները, կայացված որոշումները հիմնավոր են, իսկ բողոքարկված գործողությունները կատարվել են օրենքին համապատասխան:

13. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. մարտի 16–ի որոշմամբ Ա.Սաղաթեյանի բողոքը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ նա դատախազի մերժումը ստանալուց հետո այն դատարան չի բողոքարկել 7 օրվա ընթացքում, այսինքն՝ չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263–րդ հոդվածի 2–րդ մասով սահմանված ժամկետը, և բացի այդ, մինչև քննիչի կողմից վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման կայացումը Ա.Սաղաթեյանը հնարավորություն է ունեցել առարկելու դրա դեմ, սակայն այդ կապակցությամբ որևէ առարկություն չի ներկայացրել:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը փոփոխել է Երևանի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. մարտի 16–ի որոշման պատճառաբանությունները՝ արձանագրելով, որ բողոքարկի կողմից պահպանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290–րդ հոդվածով սահմանված ժամկետները, սակայն քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումն ըստ էության օրինական է, և այն վերացնելու հիմքեր չկան:

**Վճռարեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

14. Ըստ բողոքարկի՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. հունիսի 15–ի որոշումն անօրինական է և կայացվել է դատավարական իրավունքի նորմերի էական խախտումներով:

Ի հիմնավորումն վերոգրյալի՝ բողոքարկերը նշում է, որ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290–րդ հոդվածը: Բողոք բերած անձը գտնում է, որ ընդհանուր իրավասության դատարանը պարտավոր է քննել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290–րդ հոդվածում նշված սուբյեկտների յուրաքանչյուր որոշման և գործողության դեմ բերված բողոք՝ պատճառաբանելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգավորման համաձայն՝ քրեական դատավարության մինչդատական փուլում դատական վերահսկողությունը չի կարող սահմանափակվել:

15. Ըստ բողոքարկի՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը սխալ եզրահանգման է եկել այն մասին, որ ՀԿԳ քննիչ Ա.Մինասյանը քրեական գործը հարուցել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, ինչպես նաև վերաքննիչ դատարանն անհիմն է արձանագրել այն փաստը, որ Ա.Սաղաթեյանի իրավունքներն ու ազատությունները սահմանափակող որևէ ապօրինի գործողություն ՀԿԳ քննիչ Ա.Մինասյանի կողմից չի կատարվել:

Ի հիմնավորումն վերոնշյալ պնդման՝ բողոքարկերը նշում է, որ բացի այն, որ իր վերաբերյալ գործով ընդհանրապես բացակայում է հանցագործության դեպքը, ինչպես նաև իր արարքի մեջ հանցակազմ չկա, քրեական գործ հարուցելու պահին առն-



վազն ակնհայտ էր, որ անցել են իրեն քրեական պատասխանատվության ենթարկելու՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված վաղեմության ժամկետները, ինչից բողոք բերող անձը հետևություն է անում այն մասին, որ թիվ 62216908 քրեական գործի հարուցումն ինքնին անօրինական է եղել, քանի որ հարուցվել է իրեն քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած լինելու պարագայում: Բողոքաբերը պնդում է նաև, որ ՀԿԳ քննիչ Ա.Սիմասյանը քրեական գործ հարուցելու վերաբերյալ որոշման մեջ չի կարողացել նշել քրեական գործի հարուցման առիթը, քանի որ այն հարուցել է առանց օրինական առիթի ու հիմքի:

16. Ըստ բողոք բերող անձի, քննիչ Ա.Սիմասյանը քրեական գործում կեղծ տեղեկություններ է մտցրել այն մասին, որ ինքը հրաժարվում է ցուցմունք տալ, առերես հարցաքննվել, արձանագրությունների տակ ստորագրել, չի կողմնորոշվում պաշտպան ունենալու հարցում:

17. Բողոքի հեղինակը գտնում է նաև, որ ապօրինի է թիվ 62216908 քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ 2008թ. դեկտեմբերի 29–ի որոշումը: Իր պնդումը բողոքաբերը հիմնավորում է նրանով, որ քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումը կայացվել է ապօրինի հարուցված քրեական գործի շրջանակներում, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմնի կողմից թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35–րդ հոդվածի 6–րդ մասի պահանջների կոպիտ խախտում, որոնց համաձայն՝ քրեական գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը:

Բողոքի հեղինակի պնդմամբ, ինքը բազմիցս՝ թե՛ հեռախոսով, թե՛ անձնական հանդիպումների ժամանակ, քննիչ Ա.Սիմասյանին հայտնել է, որ համաձայն չէ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով գործի վարույթի կարճմանը:

18. Բողոքի հեղինակը նշում է նաև, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը պատշաճ գնահատական չի տվել այն հարցին, որ ինքը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. մարտի 16–ի դատական նիստի մասին չի ծանուցվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրում է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. հունիսի 15–ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն հետևյալ պատճառաբանություններով.

*1. Քրեական գործի վարույթի կարճումը և քրեական հետապնդման դադարեցումը քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով:*

19. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի այն հարցին, թե մինչդատական վարույթն իրականացնող մարմնին իրավասո՞ւ էր արդյոք կարճել քրեական գործի վարույթը և Ա.Սաղաթեյանի նկատմամբ դադարեցնել քրեական հե-

տապնդումը վերջինիս քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով այն պարագայում, երբ նա այդ կապակցությամբ իր համաձայնությունը չէր տվել:

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի առաջին մասի 6-րդ և 13-րդ կետերում նշված հիմքերով գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով»:

21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի մեկնաբանությանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Մյասնիկ Հարութիկի Ավետիսյանի* վերաբերյալ գործով 2009թ. հունիսի 29-ին կայացված թիվ ԵԿԳ/0019/11/09 որոշման մեջ և արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝ «(...) չժխտելով, որ անձի կատարած արարքն իր մեջ պարունակում է հանցակազմի հատկանիշներ, վարույթն իրականացնող մարմինը կարող է նրան ազատել քրեական պատասխանատվությունից՝ հիմք ընդունելով այն, որ կատարված արարքը կորցրել է իր վտանգավորության աստիճանը: ՀՀ քրեադատավարական օրենքն այս հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու պարտադիր նախապայման է դիտում նրա համաձայնությունը, որի բացակայությունը ենթադրում է վարույթի շարունակում ընդհանուր կարգով (...)»:

22. Հետևաբար, հիմք ընդունելով վերոգրյալ դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով սույն քրեական գործի վարույթը կարճելու և Ա.Սաղաթեյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելով՝ քննիչը դուրս է եկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի կիրառման թույլատրելի շրջանակներից, քանի որ գործի նյութերից երևում է, որ մեղադրյալը՝ Ա.Սաղաթեյանը, քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական գործի վարույթի կարճման կապակցությամբ համաձայնություն չի տվել:

## *II. Քրեական գործ հարուցելու մասին որոշման՝ դատական կարգով բողոքարկման հնարավորությունը*

23. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի նաև այն հարցին, թե մինչդատական վարույթն իրականացնող մարմնի՝ քրեական գործ հարուցելու մասին որոշումը ենթակա՞ էր արդյոք բողոքարկման մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում:

24. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով

նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»:

25. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290–րդ հոդվածի մեկնաբանությանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Վալերի Գրիգորյանի* վերաբերյալ գործով 2008թ. հունիսի 25–ին կայացված թիվ ԵԿԳ/0031/11/08 որոշմամբ, որում իրավական դիրքորոշում է արտահայտել քրեական գործ հարուցելու մասին որոշման՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա հանդիսանալու հարցի վերաբերյալ:

Վերոնշյալ որոշման մեջ Վճռաբեկ դատարանն այն տեսակետն է արտահայտել, որի համաձայն՝ «(...) Եթե հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ–հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումները և գործողությունները խախտում են անձի իրավունքները և օրինական շահերը, ապա ՀՀ Սահմանադրության 19–րդ հոդվածում ամրագրված՝ դատական պաշտպանության իրավունքի ուժով դրանք ենթակա են դատական կարգով բողոքարկման:

Քանի որ քրեական գործ հարուցելու մասին որոշումը նախատեսված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290–րդ հոդվածի 2–րդ մասում թվարկված բողոքարկման ենթակա որոշումների շարքում, ուստի, որպեսզի մինչդատական վարույթի ընթացքում քրեական գործ հարուցելու մասին որոշումը լինի դատական բողոքարկման առարկա, ապա պետք է պարզել, թե քրեական գործ հարուցելու մասին որոշումը խախտում է անձի իրավունքները և օրինական շահերը, թե՛ ոչ:

(...)

ՀՀ քրեական դատավարության օրենսդրության իմաստով քրեական գործ հարուցելու նպատակը ոչ թե անձին դատավարական կարգավիճակ տալն է, այլ օրինական քննության համար քրեադատավարական հիմք ստեղծելն է, որը հնարավորություն է տալիս արդյունավետ քննություն իրականացնելու նպատակով օգտագործել քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված բոլոր իրավական գործիքները (...):»:

26. Սույն գործի նյութերի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. հունիսի 15–ի դատական ակտի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը դատական ստուգման ընթացքում հետազոտված նյութերի և գործի փաստական հանգամանքների վերլուծությամբ իրավացիորեն եկել է այն համոզման, որ քննիչ Ա.Մինասյանի գործողությունները բխել են ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի պահանջներին: Քրեական գործ հարուցելու մասին քննիչի կողմից կայացված որոշմամբ ըստ էության չեն խախտվել Ա.Սաղաթեյանի իրավունքները, իսկ հարուցված քրեական գործը քննիչի կողմից կարճվել է այն պատճառաբանությամբ, որ անցել են քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները, և այդ ընթացքում ևս քննիչի կողմից Ա.Սաղաթեյանի նկատմամբ որևէ ապօրինի գործողություն չի կատարվել:

27. Հետևաբար, նկատի ունենալով, որ քրեական գործ հարուցելու մասին որոշմամբ չեն խախտվել Ա.Սաղաթեյանի իրավունքները և օրինական շահերը, քննիչի կողմից նրա նկատմամբ ապօրինի գործողություններ չեն կատարվել, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008թ. դեկտեմբերի 22-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասով նաև ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. հունիսի 15-ի որոշումն օրինական են, հիմնավորված և պատճառաբանված, իսկ բողոքի հեղինակի փաստարկները հիմնավոր չեն:

28. Ինչ վերաբերում է բողոքաբերի փաստարկներին այն մասին, որ ՀԿԳ քննիչ Ա.Մինասյանը կեղծ տեղեկություններ է մտցրել քրեական գործում (տե՛ս սույն որոշման 16-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Սաղաթեյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին 2008թ. նոյեմբերի 14-ի որոշումը քննիչ Ա.Մինասյանը նույն օրը հայտարարել է Ա.Սաղաթեյանին, նրան պարզաբանել է ինչպես մեղադրանքի էությունը, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածով նախատեսված՝ մեղադրյալի իրավունքները և պարտականությունները:

Քննիչի կողմից 2008թ. նոյեմբերի 14-ին՝ ժամը 14:36-ին, Ա.Սաղաթեյանին է հանձնվել նաև որպես մեղադրյալ ներգրավելու մասին 2008թ. նոյեմբերի 14-ի որոշման պատճենը՝ իրավունքների և պարտականությունների ցանկի հետ միասին, և այդ մասին կազմվել է համապատասխան արձանագրություն, որի մեջ առկա է Ա.Սաղաթեյանի ստորագրությունը (տե՛ս քրեական գործ հատոր 3-րդ, 184-187-րդ էջեր): Այնուհետև քննիչ Ա.Մինասյանը Ա.Սաղաթեյանին բացատրել է պաշտպան ունենալու իրավունքը, իսկ Ա.Սաղաթեյանը հայտարարել է, որ պաշտպան ունենալու կամ չունենալու հարցում դեռևս չի կողմնորոշվել, և առանց որևէ պատճառաբանության հրաժարվել է ստորագրել քննիչի կազմած արձանագրությունը, հրաժարվել է նաև ցուցմունք տալուց, որի մասին 2008թ. նոյեմբերի 14-ին՝ ժամը 14:40-14:44-ին, քննիչ Ա.Մինասյանի կողմից կազմվել է արձանագրություն (տե՛ս քրեական գործ հատոր 3-րդ, 188-189-րդ էջեր):

29. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն է նաև բողոքաբերի պնդումն այն մասին, որ ՀԿԳ քննիչ Ա.Մինասյանը քրեական գործ հարուցելու վերաբերյալ որոշման մեջ չի կարողացել նշել քրեական գործի հարուցման առիթը, քանի որ այն հարուցել է առանց օրինական առիթի ու հիմքի:

Նշված հարցի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀԿԳ քննիչ Ա.Մինասյանի կողմից 2008թ. հոկտեմբերի 1-ին կայացված՝ քրեական գործ հարուցելու մասին որոշման բովանդակությունից երևում է, որ քրեական գործի հարուցման առիթը քաղաքացի Սոս Մելքոնյանի հաղորդումն է եղել:

30. Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ սույն գործով չի հիմնավորվում բողոքի հեղինակի պնդումն այն մասին, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. մարտի 16–ի դատական նիստի մասին ինքը պատշաճ չի ծանուցվել, իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն այդ հարցին պատշաճ գնահատական չի տվել:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ 2009թ. մարտի 16–ին նշանակված դատական նիստի մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը պատշաճ կարգով ծանուցել է Ա.Սաղաթելյանին և գործի նյութերում առկա է հանձնման ծանուցումը՝ 2009թ. մարտի 13–ի ստացման ստորագրությամբ (տե՛ս նյութեր 130–րդ էջ):

Այսպիսով, հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ներկայացված բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. մարտի 16–ի որոշման և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. հունիսի 15–ի որոշման մասով սույն գործը պետք է ուղարկվի Երևանի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92–րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403–406–րդ, 419–րդ, 422–424–րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Անահիտ Հայկի Սաղաթելյանի վերաբերյալ՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. մարտի 16–ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. հունիսի 15–ի որոշումը բեկանել և այդ մասով գործն ուղարկել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. հունիսի 15–ի որոշման մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

35.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության

ԵԷԴ/0013/15/09

վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵԷԴ/0013/15/09

նախագահող դատավոր՝ Ս.Համբարձումյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈԳՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

26 նոյեմբերի 2009 թվական

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արմեն Ռուբենի Մաթևոսյանի վերաբերյալ ՌԴ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասի «ա, վ» կետերով, 139-րդ հոդվածի 1-ին մասով և 115-րդ հոդվածի 1-ին մասով Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասի դատարանի 2005 թվականի սեպտեմբերի 19-ի դատավճիռը ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հունիսի 29-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի բերած վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. ՀՀ քաղաքացի Արմեն Ռուբենի Մաթևոսյանը Ռուսաստանի Գաշնուքյան Կրասնոդարի երկրամասային դատարանի 2005 թվականի սեպտեմբերի 19-ի դատավճռով մեղավոր է ճանաչվել Ռ-Գ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասի «ա, վ» կետերով, 139-րդ հոդվածի 1-ին մասով և 115-րդ հոդվածի 1-ին մասով: Ռ-Գ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասի «ա, վ» կետերով նա դատապարտվել է ազատազրկման՝ 20 /քսան/ տարի ժամկետով, 139-րդ հոդվածի 1-ին մասով՝ ուղղիչ աշխատանքների 6 /վեց/ ամիս ժամկետով՝ աշխատավարձի 20 /քսան/ տոկոսի պահումով՝ որպես պետության եկամուտ, 115-րդ հոդվածի 1-ին մասով՝ ուղղիչ աշխատանքների 6 /վեց/ ամիս ժամկետով՝ աշխատավարձի 20 /քսան/ տոկոսի պահումով՝ որպես պետության եկամուտ: Ռ-Գ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ՝ հանցանքների համակցությամբ պատիժները լրիվ գումարելու միջոցով Ա.Մաթևոսյանի նկատմամբ վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկումը 20 /քսան/ տարի 4 /չորս/ ամիս ժամկետով՝ առաջին տասը տարին բանտում կրելով, իսկ պատժի մնացած մասը՝ խիստ ռեժիմի ուղղիչ գաղութում:

Պատժի սկիզբը հաշվվել է 2005 թվականի մայիսի 30-ից:

2. Ռ-Գ Չելյաբինսկի մարզային դատարանը 2008 թվականի դեկտեմբերի 9-ին որոշում է կայացրել Ա.Մաթևոսյանին հետագա պատիժը կրելու համար Հայաստանի Հանրապետությանը փոխանցելու մասին:

3. 2009 թվականի մարտի 6-ին ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության պետ Շ.Տիգրանյանը դիմել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ Ա.Մաթևոսյանի նկատմամբ Ռուսաստանի Գաշնուքյան Կրասնոդարի երկրամասային դատարանի 2005 թվականի սեպտեմբերի 19-ի դատավճիռը 1998 թվականի մարտի 6-ին Մոսկվայում ստորագրված «Պատժի հետագա կրման համար ազատազրկման դատապարտվածներին փոխանցելու մասին» Կոնվենցիայի 12-րդ հոդվածի համաձայն՝ ճանաչելու, ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու և ի կատար ածելու միջնորդությամբ:

4. Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի մայիսի 15-ի որոշմամբ դատախազի միջնորդությունը բավարարվել է և դատապարտյալ Ա.Մաթևոսյանի նկատմամբ Ռ-Գ Կրասնոդարի երկրամասային դատարանի 2005 թվականի սեպտեմբերի 19-ի դատավճռով Ռ-Գ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» և «վ» կետերով նախատեսված արարքը հապատասխանեցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերին, Ռ-Գ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասին և Ռ-Գ քրեական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածին, և Ա.Մաթևոսյանի նկատմամբ նշանակված պատիժը թողնվել է անփոփոխ:

5. Դատապարտյալ Ա.Մաթևոսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հունիսի 29-ի որոշմամբ դատապարտյալի վերաքննիչ բողոքը բավարարվել է. դատավճիռը օրենսդրությանը համապատասխանեցնելու մասին Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի մայիսի 15-ի որոշումը բեկանվել է և կայացվել է նոր որոշում՝ դատավճիռը ճանաչելու, ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու և ի կատար ածելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությունը բավարարելու մասին:

Համաձայն ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հունիսի 29-ի դատական ակտի որոշվել է՝

- Հայաստանի Հանրապետություն ճանաչել և ի կատար ածել Արմեն Ռուբենի Մաթևոսյանի նկատմամբ Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասային դատարանի 2005 թվականի եպտեմբերի 19-ի դատավճիռը Ռ.Գ. քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» և «վ» կետերով, 139-րդ հոդվածի 1-ին և 115-րդ հոդվածի 1-ին մասերով:

- Ա.Մաթևոսյանի նկատմամբ Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասային դատարանի 2005 թվականի սեպտեմբերի 19-ի դատավճիռը համապատասխանեցնել ՀՀ քրեական օրենսգրքին.

ա/ Ռ.Գ. քրեական օրենսգրքի 150-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» և «վ» կետերով նախատեսված արարքը համապատասխանեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին և պատիժ սահմանել ազատազրկում 15 /տասնհինգ/ տարի ժամկետով:

բ/ Ռ.Գ. քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը համապատասխանեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասին և պատիժ սահմանել տուգանք՝ 100.000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:

գ/ Ռ.Գ. քրեական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը համապատասխանեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածին և պատիժ սահմանել տուգանք՝ 150.000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով:

դ/ Ռ.Գ. քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասին և դրա կանոնների կիրառմամբ հանցանքների համակցությամբ պատիժները լրիվ գումարելու միջոցով Ա.Մաթևոսյանի նկատմամբ վերջնական պատիժ սահմանել ազատազրկում 15 /տասնհինգ/ տարի ժամկետով և տուգանք 250.000 /երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով՝ պատժի սկիզբը հաշվելով 2005 թվականի մայիսի 30-ից:

6. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հունիսի 29-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանը:

2009 թվականի հոկտեմբերի 23-ին ՀՀ վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար») բողոքն ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:



**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող վիստակական հանգամանքները.**

7. Արմեն Ռուբենի Մաթևոսյանը Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասային դատարանի դատավճռով մեղավոր է ճանաչվել և դատապարտվել է հետևյալ արարքի համար. Ա.Մաթևոսյանը, անբարյացակամ վերաբերմունք ունենալով Լ.Չիչկովայի նկատմամբ, որը հրաժարվել է իր հետ հանդիպել և որևէ հարաբերություններ պահպանել, որոշել է նրան սպանել: Այդ նպատակով 2005 թվականի մայիսի 30–ին՝ առավոտյան ժամը 04<sup>00</sup>–ի սահմաններում, զինվելով խոհանոցային դանակով՝ գազի խողովակով, բաց պատշգամբով մուտք է գործել Կրասնոդար քաղաքի Գագարինի թիվ 242 շենքի 8 բնակարան, որտեղ բնակվել են Լ.Չիչկովան, նրա մայրը՝ Տ.Չիչկովան, ինչպես նաև նրա ազգականներ Ե.Անդրիեցը և Վ.Ռուսիլը:

Երբ Տ.Չիչկովան բնակարանում հայտնաբերել է կողմնակի անձի, նա վառել է լույսը և փորձել է խանգարել Ա.Մաթևոսյանին մտնելու սենյակ: Ա.Մաթևոսյանը Տ.Չիչկովային սպանելու նպատակով դանակով երեք հարված է հասցրել նրա կրծքավանդակի առաջնային և ետային պատերին, ինչի հետևանքով Տ.Չիչկովան տեղում մահացել է:

Այնուհետև Ա.Մաթևոսյանը դանակով երեք հարված է հասցրել մոր ճիչից արթնացած Լ.Չիչկովայի մարմնին՝ նրա առողջությանը պատճառելով թեթև վնաս, ապա դանակով բազմաթիվ հարվածներ է հասցրել Ե.Անդրիեցի և Վ.Ռուսոյի մարմնի տարբեր մասերին, որոնք փորձում էին պաշտպանել Լ.Չիչկովային, ինչի հետևանքով Ե.Անդրիեցը և Վ.Ռուսոյը տեղում մահացել են:

8. Վճռաբեկ բողոքում նշվում է, որ Ա.Մաթևոսյանը Հայաստանի Հանրապետությանն է հանձնվել ՀՀ արդարադատության նախարարության և ՌԳ զլխավոր դատախազության երկկողմ համաձայնության հիման վրա: Այնուհանդերձ, ՌԳ զլխավոր դատախազության և ՀՀ արդարադատության նախարարության միջև համաձայնագրի տեքստը վարույթի նյութերում բացակայում է:

9. ՌԳ Չելյաբինսկի մարզային դատարանը 2008 թվականի դեկտեմբերի 9–ի որոշման մեջ նշել է, որ դատարանին ներկայացվել է ՀՀ զլխավոր դատախազության համաձայնությունը՝ դատապարտյալ Ա.Մաթևոսյանի հետագա պատիժը Հայաստանի Հանրապետության տարածքում կրելու վերաբերյալ. ինչպես նաև երաշխավորություն Ռուսաստանի Դաշնության դատավճիռը առանց վերանայման կատարելու մասին: Այնուհանդերձ, ՀՀ զլխավոր դատախազության ներկայացրած համաձայնության և երաշխավորության տեքստերը վարույթի նյութերում բացակայում են:

Գործի նյութերում բացակայում է նաև դատապարտյալ Ա.Մաթևոսյանին Հայաստանի Հանրապետությանը հանձնելու ժամկետի վերաբերյալ տեղեկությունները:

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոք բերած անձը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը դատապարտյալ Ա.Մաթևոսյանի նկատմամբ 15 տարի ազատազրկման ձևով պատիժ նշանակելիս թույլ է տվել դատական սխալ, խախտել է «Դատապարտյալների փոխանցման

մասին» 1983 թվականի մարտի 21–ի Ստրասբուրգի միջազգային կոնվենցիայի 10–րդ հոդվածի պահանջները, կայացրել է դատական ակտ, որը իրավական բնույթով և տևողությամբ չի համապատասխանում միջազգային կոնվենցիայի պահանջներին, համաձայն որի՝ դատավճիռը համապատասխանեցնելիս, դատական ակտը կայացնող դատարանը պարտավոր է ղեկավարվել դատապարտող պետության կողմից կայացված դատավճիռի պատժամիջոցի իրավական բնույթով և տևողությամբ:

11. Բողոքի հեղինակը նշել է նաև, որ սույն գործի քննության ընթացքում խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21–րդ հոդվածի 6–րդ մասով նախատեսված սկզբունքները, թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնք նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397–398–րդ հոդվածների 1–ին մասերով, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

12. Սույն գործով բողոքաբերը Վճռաբեկ դատարանի առջև բարձրացել է հետևյալ հարցը. արդյո՞ք ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից կայացված՝ Ա.Մաթևոսյանի նկատմամբ Ռ-Գ Կրասնոդարի երկրամասային դատարանի դատավճիռը ճանաչելու և ի կատար ածելու մասին որոշումը համապատասխանում է ՀՀ ստանձնած միջազգային–իրավական պարտավորություններին, թե ոչ:

13. «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիենայի 1969թ. կոնվենցիայի 6–րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր պետություն օժտված է պայմանագրեր կնքելու իրավունակությամբ»:

Նույն Կոնվենցիայի 26–րդ հոդվածի («pacta sunt servanda») համաձայն՝ «Յուրաքանչյուր գործող պայմանագիր պարտադիր է դրա մասնակիցների համար և պետք է նրանց կողմից բարեխղճորեն կատարվի»:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 6–րդ հոդվածի 4–րդ մասի՝ «... Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են...»:

14. Ներպետական իրավունքի նկատմամբ միջազգային իրավունքի գերակայության սկզբունքը հաշվի առնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով օրինական որոշում կայացնելու համար վճռական նշանակություն ունի Ա.Մաթևոսյանին Հայաստանի Հանրապետությանը փոխանցելու հարցում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև առկա փոխադարձ համաձայնության բովանդակության ամբողջական պարզաբանումը: Մինչդեռ գործում առկա նյութերը բավարար չեն այդ համաձայնության բովանդակությունը պարզաբանելու համար (տե՛ս սույն որոշման 8–րդ կետը), իսկ ՀՀ վճռաբեկ դատարանն օժտված չէ ապացույցներ հավաքելու իրավասությամբ:

Այդպիսի իրավասությամբ լիարժեք օժտված է առաջին ատյանի դատարանը, որը համապատասխան պետական մարմիններից՝ ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ դատախազություն, ՀՀ արտաքին գործերի նախարարություն, համա-

պատասխան փաստաթղթեր պահանջելով և ստանալով՝ կարող է հավաքել գործի ճիշտ լուծման համար անհրաժեշտ փաստական տվյալներ, ստուգման և գնահատման ենթարկել դրանք:

15. Գործի էական փաստերի վերաբերյալ ամբողջական տվյալներ ունենալուց հետո է միայն հնարավոր անդրադառնալ սույն գործի համար էական նշանակություն ունեցող իրավական հարցերի պարզաբանմանը: Դրանք են.

ա) Սիջազգային իրավունքի ո՞ր սկզբունքներն են կիրառելի տվյալ դեպքում և դրանք ի՞նչ իրավական նշանակություն ունեն սույն գործի համար: Մասնավորապես՝ այն պայմաններում, երբ Ա.Մաթևոսյանի հետագա պատժի կապակցությամբ Ռ-Գ դատարանի կամքը պարզորոշ արտահայտված է, ապա Ա.Մաթևոսյանի նկատմամբ Ռ-Գ դատարանի կողմից նշանակված պատժից ավելի նվազ պատիժ սահմանելով՝ Հայաստանի Հանրապետությունը չի՞ խախտի արդյոք պետությունների ինքնիշխան հավասարության, պետությունների համագործակցության սկզբունքները:

բ) Սույն գործով Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության հարաբերությունները կարգավորվո՞ւմ են արդյոք 1983թ. «Դատապարտյալների փոխանցման մասին» եվրոպական կոնվենցիայի դրույթներով:

գ) Սույն գործով ի՞նչ իրավական նշանակություն ունի Ա.Մաթևոսյանին Հայաստանի Հանրապետությանը հանձնելու մասին երկկողմ համաձայնությունը, որը, ըստ բողոքաբերի, կնքվել է ՀՀ արդարադատության նախարարության և Ռ-Գ գլխավոր դատախազության միջև:

դ) Ռ-Գ Չելյաբինսկի մարզային դատարանի որոշման մեջ շարադրված՝ Ա.Մաթևոսյանին Հայաստանի Հանրապետության փոխանցելու պայմանները (տե՛ս սույն որոշման 9–րդ կետը) ի՞նչ իրավական նշանակություն ունեն ՀՀ դատարանների համար: Մասնավորապես, դրանք պե՞տք է հաշվի առնվեն կամ կարո՞ղ են հաշվի առնվել համապատասխան միջազգային պայմանագրերի դրույթները մեկնաբանելիս:

ե) Ա.Մաթևոսյանի պատժի վերաբերյալ Ռ-Գ–ին երաշխավորություն տալիս ՀՀ գլխավոր դատախազությունը դուրս չի՞ եկել արդյոք իր իրավասության շրջանակներից կամ, այլ կերպ ասած, չի գործել *ultra vires*՝ Վիեննայի 1969թ. Կոնվենցիայի 46–րդ հոդվածի իմաստով: ՀՀ գլխավոր դատախազության կողմից Ա.Մաթևոսյանի պատժի վերաբերյալ Ռ-Գ–ին տրված երաշխավորությունը Հայաստանի Հանրապետության համար արդյոք առաջացնու՞մ է որոշակի միջազգային–իրավական պարտավորություններ, և եթե՝ այո, ապա ինչպիսի՞:

16. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92–րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403–406–րդ, 419–րդ, 422–424–րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն:

Արմեն Ռուբենի Մաթևոսյանի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասային դատարանի 2005 թվականի սեպտեմբերի 19–ի դատավճիռը ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու մասին Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության առաջաին ատյանի դատարանի 2009 թվականի մայիսի 15–ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հունիսի 29–ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն  
Դատավորներ՝ ստորագրություններ*

36.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության

ԵՔՐԴ/0033/01/08

վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵՔՐԴ/0033/01/08

նախագահող դատավոր՝ Ա.Հովհաննիսյան  
դատավորներ՝ Ս.Չիչոյան, Ա.Գանիեյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

26 նոյեմբերի 2009 թվական

ք. Երևանում

ղոմարտ դատական նիստում, քննության առնելով Վարդան Արմենի Համբարձումյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով, 203-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 325-րդ հոդվածի 2-րդ մասով, 235-րդ հոդվածի 1-ին մասով, 316-րդ հոդվածի 3-րդ մասով, 112-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 9-րդ կետերով, 185-րդ հոդվածի 1-ին մասով, 117-րդ հոդվածով, Արմեն Արմենի Համբարձումյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով, 203-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 325-րդ հոդվածի 2-րդ մասով, Տիգրան Սպարտակի Սկրտչյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 203-րդ հոդվածի 1-ին մասով, 203-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 325-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հուլիսի 17-ի

որոշման դեմ քաղաքացիական պատասխանող Արմեն Սերյոժայի Սահակյանի բերած վճռաբեկ բողոքը,

## **Պ Ա Ր Ձ Ե Ց**

### **Գործի դատավարական նախապատմությունը.**

1. Թիվ 62207706 քրեական գործը հարուցվել է 2006 թվականի օգոստոսի 4-ին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 203-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

2. Նախաքննության մարմնի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի որոշմամբ Վարդան Արմենի Համբարձումյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով, 203-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 325-րդ հոդվածի 2-րդ մասով, 235-րդ հոդվածի 1-ին մասով, 316-րդ հոդվածի 3-րդ մասով, 112-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 9-րդ կետերով, 185-րդ հոդվածի 1-ին մասով և 117-րդ հոդվածով:

3. Նախաքննության մարմնի 2006 թվականի դեկտեմբերի 29-ի որոշմամբ Արմեն Արմենի Համբարձումյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 203-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 325-րդ հոդվածի 2-րդ մասով:

4. Նախաքննության մարմնի 2006 թվականի օգոստոսի 22-ի որոշմամբ թիվ 62207706 քրեական գործի շրջանակներում Արմեն Սերյոժայի Սահակյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքների կատարման համար, իսկ 2006 թվականի նոյեմբերի 29-ի որոշումներով նրան առաջադրված մեղադրանքը փոփոխվել է և նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով, որով էլ նա ներգրավվել է որպես մեղադրյալ:

5. Նախաքննության մարմնի 2006 թվականի նոյեմբերի 29-ի որոշմամբ թիվ 62207706 քրեական գործից Արմեն Սահակյանի վերաբերյալ մասն անջատվել է, անջատված մասին տրվել է թիվ 62212306 համարը, որով էլ նախաքննությունը շարունակվել է:

6. 2006 թվականի նոյեմբերի 29-ին թիվ 62207706 գործով Արմեն Սահակյանի և Նարինե Հոբանյանի մասով քրեական գործի վարույթը կարճվել է՝ նրանց արարքներում հանցակազմի բացակայության պատճառով:

7. Թիվ 62212306 քրեական գործն ըստ մեղադրանքի Արմեն Սերյոժայի Սահակյանի ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով ըստ ընդդատության ուղարկվել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

8. Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավճռով Արմեն Սերյոժայի Սահակյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ և դատապարտվել ազատազրկման 3 /երեք/ տարի ժամկետով՝ գրկվելով կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական

գործառույթներ իրականացնելու հետ կապված պաշտոններ զբաղեցնելու իրավունքից՝ մեկ տարի ժամկետով:

ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 15-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայատարարելու մասին» որոշման 1-ին կետի «ա» ենթակետի կիրառմամբ Ա.Սահակյանը ազատվել է ազատագրկման ձևով նշանակված պատժից:

Գատավճռով քաղաքացիական հայցի հարցը համարվել է լուծված՝ տուժողներ Հ.Երանոսյանին, Ա.Բարսեղյանին, Ս.Ղարամյանին, Վ.Սարգսյանին, Վ.Եսայանին, Յ.Պետրոսյանին, Ա.Սարգսյանին հանցագործությամբ պատճառված վնասը ամբողջությամբ վերականգնված լինելու հիմքով:

9. 2007 թվականի հունվարի 25-ին Վ.Համբարձումյանի և մյուսների վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, որտեղ տեղի է ունեցել դատաքննություն, սակայն գործի քննությունը չի ավարտվել, և այն փոխանցվել է Երևանի քրեական դատարան:

10. Երևանի քրեական դատարանի 2008 թվականի սեպտեմբերի 17-ի դատավճռով ամբաստանյալ Վ.Համբարձումյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 203-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 325-րդ հոդվածի 2-րդ մասով, 235-րդ հոդվածի 1-ին մասով, 112-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 9-րդ կետերով, 117-րդ հոդվածով, և ՀՀ քրեական օրենսգրքի 66-67 հոդվածների կանոններով նրա նկատմամբ վերջնական պատիժ է սահմանվել ազատագրկում 10 /տասը/ տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման և տուգանք՝ 50.000 /հիսուս հազար/ ՀՀ դրամի չափով:

Ամբաստանյալ Ա.Համբարձումյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 203-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 325-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կանոններով նրա նկատմամբ վերջնական պատիժ է սահմանվել ազատագրկում 8 /ութ/ տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Ամբաստանյալ Տիգրան Մկրտչյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 203-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 325-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ դատապարտվել ազատագրկման 5 /հինգ/ տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման և տուգանքի՝ 200.000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:

Երևանի քրեական դատարանի վերոնշյալ դատավճռով նաև վճռվել է Վարդան Համբարձումյանի, Արմեն Համբարձումյանի, Արմեն Սահակյանի, Նարինե Չոբանյանի տնտեսություններից համապարտության կարգով բռնագանձել հոգուտ տուժողներ Սվետլանա Դավթյանի՝ 1.700.000 ՀՀ դրամ, Հակոբ Պապյանի՝ 3.138.000 ՀՀ դրամ, Նաիրա Բաղալյանի՝ 259.000 ՀՀ դրամ, Սամվել Սուքիասյանի՝ 4.525.000 ՀՀ դրամ:

11. Ամբաստանյալ Վ.Համբարձումյանի պաշտպաններ Ս.Միրզոյանի և Ա. Ալվանդյանի, ամբաստանյալ Ա.Համբարձումյանի, մեղադրող Ժ.Կոտիկյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 24-ի որոշմամբ վերջիններիս վերաքննիչ բողոքները մերժվել

են, իսկ Երևանի քրեական դատարանի 2008 թվականի սեպտեմբերի 17-ի դատավճիռը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

Նախագահող դատավար Ե.Գարբինյանի 2009 թվականի հունվարի 19-ի կարգադրությամբ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը ուղարկվել է կատարման:

12. Երևանի քրեական դատարանի դատավճռի դեմ, Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի մայիսի 7-ի որոշմամբ վերաքննիչ բողոքարկման համար նախատեսված բաց թողնված ժամկետը վերականգնելուց հետո Արմեն Սահակյանը ներկայացրել է վերաքննիչ բողոք:

13. Ա.Սահակյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009 թվականի հուլիսի 17-ի որոշմամբ բողոքը մերժել է: Վ.Համբարձումյանի, Ա.Համբարձումյանի, Ա.Սահակյանի, Ն.Չոբանյանի տնտեսություններից հօգուտ տուժողներ Սվետլանա Դավթյանի՝ 1.700.000 ՀՀ դրամ, Հակոբ Պապյանի՝ 3.138.000 ՀՀ դրամ, Նաիրա Բադալյանի՝ 259.000 ՀՀ դրամ, Սամվել Մուքիսայանի՝ 4.525.000 ՀՀ դրամ բռնագանձելու մասով Երևանի քրեական դատարանի 2008 թվականի սեպտեմբերի 17-ի դատավճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

14. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հուլիսի 17-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել քաղաքացիական պատասխանող Ա.Սահակյանը:

2009 թվականի սեպտեմբերի 17-ին ՀՀ վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար» և «վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ») բողոքն ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.**

15. Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մայիսի 2-ի արձանագրային որոշմամբ Արմեն Սահակյանը ճանաչվել է քաղաքացիական պատասխանող: Նշված որոշման վերաբերյալ Ա.Սահակյանը պատշաճ կարգով չի տեղեկացվել, բացի այդ, գործում բացակայում է ներկայացված հայցադիմումներն Ա.Սահակյանին ուղարկված լինելու վերաբերյալ որևէ ապացույց:

16. Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշմամբ 2007 թվականի մայիսի 22-ին Ա.Սահակյանը բերման է ենթարկվել դատարան և հարցաքննվել որպես վկա: Նշված հարցաքննության ընթացքում Ա.Սահակյանին քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով չեն բացատրվել քաղաքացիական պատասխանողի իրավունքներն ու պարտականությունները, նա իր դեմ ներկայացված քաղաքացիական հայցի շուրջ բացատրություն չի տվել:



17. Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում գործի քննությունը չի ավարտվել, և այն փոխանցվել է Երևանի քրեական դատարան:

18. Երևանի քրեական դատարանի 2008 թվականի սեպտեմբերի 17-ի դատավճռի պատճեն Ա.Սահակյանին պատշաճ կարգով չի ուղարկվել: Իր դեմ հարուցված և լուծված քաղաքացիական հայցի մասին նա տեղեկացել է միայն դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, երբ դրա հիման վրա տրված կատարողական թերթը ներկայացվել է ՀՀ Արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն:

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

19. Բողոք բերած անձը նշել է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի, 60-րդ հոդվածի 1-ին մասի, 74-րդ հոդվածի 1-ին մասի, 154-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի, 158-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի պահանջները: Ըստ նրա, վերաքննիչ բողոքի քննությունը կատարել է թերի, ոչ օբյեկտիվ և միակողմանի:

20. Վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասը՝ բողոքի հեղինակը պնդում է, որ քաղաքացիական հայցն իր դեմ հարուցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կանոններին հակառակ: Ի հիմնավորումն վերոգրյալի՝ բողոքաբերը նշում է, որ ինքը սույն գործով հանդես է եկել վկայի կարգավիճակով, ուստի իր դեմ չէր կարող քաղաքացիական հայց հարուցվել և իր վրա չէր կարող գույքային պատասխանատվություն դրվել մեղադրյալների գործողությունների համար: Բացի այդ, ոչ Երևանի, ոչ ՀՀ վերաքննիչ քրեական դատարաններն իրենց դատական ակտերում որևէ կերպ չեն հիմնավորել վկայից գումար բռնագանձելու հանգամանքը՝ արդյունքում թույլ տալով դատական սխալ, որը կարող է իր համար առաջացնել ծանր հետևանքներ:

21. Հիմք ընդունելով իր կողմից վկայակոչված փաստարկները՝ բողոքաբերը խնդրել է իր մասով բեկանել և փոփոխել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հուլիսի 17-ի որոշումը:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

22. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացվել է այն հարցը, թե քրեական գործի քննությանը վկայի կարգավիճակով մասնակցած Ա.Սահակյանի վրա կարո՞ղ էր, արդյոք, դրվել քրեական դատավարության կարգով քննվող քաղաքացիական հայցի բավարարման պարտականություն այն դեպքում, երբ նա նշված հայցի վերաբերյալ պատշաճ կերպով չի ծանուցվել և չեն պահպանվել նրա՝ որպես քաղաքացիական պատասխանողի իրավունքները:

23. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վկան ցուցմունքներ տալու նպատակով կողմի կամ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից կանչված այն անձն է, ում կարող է հայտնի լինել

տվյալ գործով պարզելու ենթակա որևէ հանգամանք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քաղաքացիական պատասխանող է ճանաչվում ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի վրա օրենքով, քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացված հայցի հիման վրա կարող է դրվել գույքային պատասխանատվություն քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով գույքային վնաս պատճառած մեղադրյալի գործողությունների համար»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Քաղաքացիական պատասխանողը, սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի ծանոթանալ առաջադրված մեղադրանքին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «Քաղաքացիական պատասխանողը, սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի տալ բացատրություններ իր դեմ ներկայացված հայցի վերաբերյալ»:

24. Վերոշարադրյալ հոդվածների վերլուծությունից երևում է, որ քրեական դատավարությունում քաղաքացիական հայց կարող է հարուցվել միայն կասկածյալի, մեղադրյալի կամ այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի դեմ, ում վրա օրենքով սահմանված կարգով, քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացված հայցի հիման վրա կարող է դրվել գույքային պատասխանատվություն քրեական օրենսգրքով արգելված արարքով գույքային վնաս պատճառած մեղադրյալի գործողությունների համար: Մեղադրյալի գործողությունների համար պատասխանատու անձանց թվին են դասվում, մասնավորապես, ծնողները, որդեգրողները, խնամակալները, շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ կապված գործունեություն իրականացնող անձինք, որոնք օրենքի ուժով պատասխանատու են մեղադրյալի գործողությունների համար: Բացի այդ, որպես քաղաքացիական պատասխանող ներգրավված անձն իրավունք ունի ծանոթանալ առաջադրված մեղադրանքին և բացատրություններ տալ իր դեմ ներկայացված հայցի վերաբերյալ:

Շարադրված նորմերի ուսումնասիրությունը թույլ է տալիս դատողություն անել նաև այն մասին, որ վկայի կարգավիճակ ունեցող անձը կարող է քրեական դատավարությունում հանդես գալ որպես քաղաքացիական պատասխանող, եթե նա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի ուժով հանդիսանում է մեղադրյալի գործողությունների համար պատասխանատու ֆիզիկական անձ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված ընթացակարգով ներգրավվել է որպես քաղաքացիական պատասխանող և ապահովվել են քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված նրա իրավունքները:

25. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Երևանի քրեական դատարանի 2008 թվականի սեպտեմբերի 17-ի դատավճռով մեղավոր են ճանաչվել և դատապարտվել են Վ.Համբարձումյանը, Ա.Համբարձումյանը, Տ.Սկրտչյանը, սակայն նույն դատավճռով քաղաքացիական հայցի լուծման ժամանակ վճռվել է, ի թիվս այլոց, նաև Ա.Սահակյանի տնտեսությունից համապարտության կարգով հօգուտ տուժողների բռնագանձել համապատասխանաբար 1.700.000, 3.138.000, 259.000 և 4.525.000 ՀՀ դրամ (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը): Քաղաքացիական հայցի հար-

ցը լուծելիս Երևանի քրեական դատարանի կողմից հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ Ա.Սահակյանը քաղաքացիական պատասխանող է ճանաչվել ՀՀ քրեական դատավարության օրենսդրության պահանջների խախտմամբ, մասնավորապես՝ նրան չեն բացատրվել որպես քաղաքացիական պատասխանող նրա իրավունքները, նա պատշաճ կերպով չի ծանուցվել իր դեմ ներկայացված հայցի վերաբերյալ, ինչպես նաև, ներկայացված հայցի կապակցությամբ չի հարցաքննվել ու դիրքորոշում չի հայտնել (տե՛ս սույն որոշման 15–րդ, 16–րդ կետերը):

26. Հիմք ընդունելով սույն որոշման 23–րդ, 24–րդ և 25–րդ կետերը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական գործի քննությանը վկայի կարգավիճակով մասնակցած Ա.Սահակյանի վրա չէր կարող դրվել քրեական դատավարության կարգով քննվող քաղաքացիական հայցի բավարարման պարտականություն, քանի որ նշված հայցի վերաբերյալ նա պատշաճ կերպով չի ծանուցվել և չեն պահպանվել նրա՝ որպես քաղաքացիական պատասխանողի իրավունքները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Սահակյանի դեմ ներկայացված քաղաքացիական հայցը Երևանի քրեական դատարանի կողմից պետք է թողնվեր առանց քննության:

27. ՀՀ վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել քրեադատավարական օրենքի խախտում: Այդ խախտումն իր բնույթով էական է, հետևաբար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398–րդ, 406–րդ և 419–րդ հոդվածների համաձայն՝ դա հիմք է կայացված դատական ակտը բեկանելու համար:

28. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92–րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403–406–րդ, 419–րդ, 422–424–րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վարդան Արմենի Համբարձումյանի և մյուսների վերաբերյալ գործով Արմեն Մերյոժայի Սահակյանից հօգուտ տուժողների գումարներ բռնագանձելու մասին Երևանի քրեական դատարանի 2008 թվականի սեպտեմբերի 17–ի դատավճռի քաղաքացիական հայցի մասը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հուլիսի 17–ի որոշումը բեկանել և այդ մասով քաղաքացիական հայցը թողնել առանց քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն  
Դատավորներ՝ ստորագրություններ*

37.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵԿԳ/0107/11/08

ԵԿԳ/0107/11/08

նախագահող դատավոր՝ Ռ. Ազարյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

մասնակցությամբ դատավորներ՝  
Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

26 նոյեմբերի 2009 թվական

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով «Էկոնոմիկասագիա» դուստր  
փակ բաժնետիրական ընկերության /այսուհետ՝ ԴՓԲԸ/ ներկայացուցիչ Հասմիկ Ռա-  
ֆայելյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի  
օգոստոսի 20-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. «Էկոնոմիկասագիա» ԴՓԲԸ-ի տնօրինության կողմից հարկման հիմք հան-  
դիսացող փաստաթղթերի մեջ ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով  
առանձնապես խոշոր չափերով հարկեր վճարելուց չարամտորեն խուսափելու փաս-  
տի առթիվ 2008 թվականի օգոստոսի 16-ին նախաքննության մարմնի կողմից ՀՀ  
քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է քրեական գործ:

2. 2008 թվականի հոկտեմբերի 10-ին «Էկոնոմիկասագիա» ԳՓԲԸ-ի տնօրեն Սամվել Գուրգենի Պետրոսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով:

3. Նախաքննության մարմնի 2008 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմամբ կալանք է դրվել ընկերությունում որպես հիմնական միջոցներ հաշվառված, սեփականության իրավունքով ընկերությանը պատկանող թվով 19 տրանսպորտային միջոցների վրա:

4. 2008 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը բողոքարկվել է ՀՀ գլխավոր դատախազին:

ՀՀ գլխավոր դատախազության սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազի 2008 թվականի նոյեմբերի 3-ի որոշմամբ բողոքը մերժվել է:

5. 2008 թվականի նոյեմբերի 28-ին «Էկոնոմիկասագիա» ԳՓԲԸ-ի տնօրենը բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ գույքի վրա կալանք դնելու մասին 2008 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը վերացնելու խնդրանքով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի որոշմամբ բողոքը մերժվել է:

6. «Էկոնոմիկասագիա» ԳՓԲԸ-ի տնօրենի ներկայացուցչի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009 թվականի փետրվարի 11-ի որոշմամբ վերաքննիչ վարույթը կարճել է:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի փետրվարի 11-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել «Էկոնոմիկասագիա» ԳՓԲԸ-ի ներկայացուցիչը:

7. Վճռաբեկ դատարանը 2009 թվականի հունիսի 2-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը բավարարել է մասնակիորեն՝ «Էկոնոմիկասագիա» ԳՓԲԸ-ի ներկայացուցչի բողոքով վերաքննիչ վարույթը կարճելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի փետրվարի 11-ի որոշումը բեկանել է և գործն ուղարկել է նույն դատարան՝ նոր քննության և իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ վերաքննիչ բողոք բերած անձի կողմից դատական նիստերին չներկայանալը չի կարող որակվել որպես վերաքննիչ բողոքից հրաժարում, հետևաբար չի կարող հիմք հանդիսանալ վերաքննիչ վարույթը կարճելու համար:

8. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իր 2009 թվականի օգոստոսի 20-ի որոշմամբ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի որոշումը թողել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի օգոստոսի 20-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել «Էկոնոմիկասագիա» ԳՓԲԸ-ի ներկայացուցիչը:

9. Վճռաբեկ դատարանը 2009 թվականի հոկտեմբերի 1-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ուղարկվել:

**Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող վիստակայան հանգամանքները**

10. Ս.Պետրոսյանը, հանդիսանալով «Էկոնոմիկասագիա» ԳՓԲԸ տնօրեն, հարկային մարմիններին ներկայացված հաշվետվություններում և հաշվարկներում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով խուսափել է առանձնապես խոշոր չափերի հարկեր վճարելուց, որի հետևանքով պետության պատճառով է 333.589.800 ՀՀ դրամի վնաս:

11. Նախաքննության մարմնի «Գույքի վրա կալանք դնելու մասին» որոշմամբ պետությանը պատճառված վնասի վերականգնումը, գույքի հնարավոր բռնագրավումը և դատական ծախսերն ապահովելու համար կալանք է դրվել ընկերությունում որպես հիմնական միջոցներ հաշվառված, սեփականության իրավունքով ընկերությանը պատկանող թվով 19 տրանսպորտային միջոցների վրա:

12. «Էկոնոմիկասագիա» ԳՓԲ ընկերության կանոնադրության 2.3-րդ կետի համաձայն՝ ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով (միջոցներով):

**Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

13. Բողոքաբերը վիստարկել է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի դրույթների միատեսակ կիրառության համար, ինչպես նաև վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որն առաջացրել է ծանր հետևանքներ:

14. Բողոք բերած անձը նշել է, որ վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս խախտել է ՀՀ Սահմանադրության 5-րդ, 8-րդ, 42-րդ, 42.1-րդ հոդվածների և 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի, 232-րդ հոդվածի 2-րդ մասի, 233-րդ հոդվածի 1-ին մասի և 290-րդ հոդվածի 5-րդ մասի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի պահանջները:

15. Ըստ բողոքաբերի, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն օրինական ուժի մեջ թողնելով առաջին աստիճանի դատարանի որոշումը, հաշվի չի առել, որ քննիչի որոշմամբ տրանսպորտային միջոցների վրա դրված կալանքով սահմանափակվել են ընկերության՝ տրանսպորտային միջոցները տնօրինելու իրավագործությունը, որով խախտվել են ընկերության իրավունքները: Բացի այդ, քննիչը գույքի վրա կարող էր կալանք դնել միայն այն դեպքում, երբ նման հնարավորություն ուղղակի սահմանված լիներ օրենքով, մինչդեռ քննիչի կողմից որոշման կայացման հիմքում ընկած է միայն ընկերության կանոնադրության 2.3-րդ կետը, որի համաձայն՝ ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով, իսկ ընկերության պարտավորությունները չեն նշվել ո՛չ քննիչի և ո՛չ էլ դատարանների կողմից:

16. Բողոքում նշվում է նաև, որ քրեական պատասխանատվության սուբյեկտ հանդիսացող ֆիզիկական անձի պարտավորությունների համար չի կարող երբևէ պատասխանատվություն կրել քրեական պատասխանատվության սուբյեկտ չհանդիսացող իրավաբանական անձը՝ ընկերությունը:

17. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի օգոստոսի 20-ի որոշումը բեկանել և փոփոխել՝ վերացնել ՀՀ կառավարությանն առնթեր պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության ավագ քննիչի 2008 թվականի հոկտեմբերի 14-ի՝ գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը:

**Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

18. Սույն գործով Վճարելի դատարանը պետք է պատասխանի այն հարցին, թե «Էկոնոմիկասացիա» ԴՓԲԸ-ի գույքի վրա կարո՞ղ է արդյոք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի ուժով կալանք դրվել նրա անունից հանդես եկող պաշտոնատար անձի՝ տնօրենի գործողությունների համար:

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գույքի վրա կալանք դնելը կիրառվում է (...), գույքի հնարավոր բռնագրավումը և դատական ծախսերն ապահովելու համար»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կալանք դրվում է կասկածյալի և մեղադրյալի, ինչպես նաև այն անձանց գույքի վրա, որոնց վրա կասկածյալի և մեղադրյալի գործողությունների համար, կարող է դրվել նյութական պատասխանատվություն՝ անկախ նրանից, թե ինչպիսի գույք է և ում մոտ է գտնվում»:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ «ՀՀ-ում ֆիզիկական և իրավաբանական անձինք (...) պարտավոր են վճարել հարկեր, եթե հարկային օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ»:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ «Հարկերը ճիշտ հաշվարկելու, ժամանակին վճարելու և հարկային օրենսդրության մյուս պահանջները պահպանելու պատասխանատվությունը, հարկային օրենսդրությամբ այլ բան սահմանված չլինելու դեպքում, կրում են հարկ վճարողները և դրանց (ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պաշտոնատար անձինք»:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով»:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ «Ընկերության տնօրենը տնօրինում է ընկերության գույքը, ներկայացնում ընկերությունը ՀՀ-ում և արտասահմանում, գործում է առանց լիազորագրի, (...), կնքում պայմանագրեր, (...), իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, (...) և վերահսկում դրանց կատարումը»:

20. Նախորդ կետում շարադրված նորմերի վերլուծությունից երևում է, որ իրավաբանական անձի մասնակցությունը ցանկացած իրավահարաբերության, այդ թվում՝

հարկերը վճարելուն և հարկային օրենսդրության մյուս պահանջները կատարելուն, իրականացվում է նրա մարմինների միջոցով: Վերջիններս հանդես են գալիս իրենց կողմից ներկայացվող իրավաբանական անձի անունից և իրենց գործողություններով կարող են իրավունքներ ձեռք բերել և պարտականություններ ստանձնել այդ իրավաբանական անձի համար:

21. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ս.Պետրոսյանը, հանդիսանալով «Էկոնոմիկասագիա» ԴՓԲԸ-ի տնօրեն (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը), իրավասու է եղել ԴՓԲԸ-ի անունից ու նրա օգտին կատարել որոշակի գործողություններ:

Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ Ս.Պետրոսյանը հարկային մարմիններին ներկայացված հաշվետվություններում և հաշվարկներում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով խուսափել է առանձնապես խոշոր չափերի հարկեր վճարելուց, որի հետևանքով պետության պատճառվել է 333.589.800 ՀՀ դրամի վնաս (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը): Նշված գործողությունները կատարելիս մեղադրյալը հանդես է եկել «Էկոնոմիկասագիա» ԴՓԲԸ-ի անունից և, չկատարելով հարկային պարտավորությունների սուբյեկտ հանդիսացող իրավաբանական անձի պարտականությունները, վնաս է պատճառել պետությանը:

Բննիչը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով «Էկոնոմիկասագիա» ԴՓԲԸ-ի կանոնադրության 2.3-րդ կետը, իր որոշմամբ կալանք է դրել «Էկոնոմիկասագիա» ԴՓԲԸ-ը սեփականության իրավունքով պատկանող թվով 19 մարդատար ավտոմեքենաների վրա, և դրանով ապահովել պետության պատճառված վնասի վերականգնումը, գույքի հնարավոր բռնագրավումը և դատական ծախսերը (տե՛ս սույն որոշման 11-րդ և 12-րդ կետերը):

22. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավաբանական անձը պատասխանատու է իր անունից հանդես եկող անձի յուրաքանչյուր, այդ թվում՝ օրենքի պահանջներին չհամապատասխանող գործողությունների համար: Ուստի, սույն գործով «Էկոնոմիկասագիա» ԴՓԲԸ-ն պատասխանատու է իր անունից հանդես եկող տնօրենի կողմից առանձնապես խոշոր չափերի հարկեր վճարելուց խուսափելու համար:

Հետևաբար՝ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա կարող է դրվել կալանք, եթե անհրաժեշտություն կա ապահովելու գույքի հնարավոր բռնագրավումը և դատական ծախսերը:

23. Այս մտեցումը համապատասխանում է նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1-ին Լրացուցիչ արձանագրության 1-ին հոդվածի պահանջներին և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան մախաղեպային իրավունքին: Մասնավորապես, *Գասուս Դոսյեր ունդ Յոյրդերքտեխնիկ ՍՊԸ-ն ընդդեմ Նիդերլանդների* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. « ... երրորդ անձանց գույքի վրա կալանք դնելու հարկային մարմինների իրավունքը հիմք չի տալիս ենթադրելու, որ հասարակական շահի և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության միջև անհրաժեշտ հա-



վասարակշռությունը չի պահպանվել: Այնպիսի գույքի վրա կալանք դնելու իրավունքը, որը փաստացի գտնվում է պարտապանի տիրապետման ներքո, թեև ձևական առումով հանդիսանում է երրորդ անձի սեփականությունը, հանդիսանում է կիրառման վարույթներում պարտատուի շահերի պաշտպանության տարածված մեխանիզմ: Այն չի կարող ինքնին անհամատեղելի համարվել Առաջին Արձանագրության 1-ին հոդվածին: Ուստի օրենսդիրը հանրային շահի՝ հարկերի արդյունավետ վճարումն ապահովելու նպատակով կարող է դիմել այդ միջոցին ...» (տես՝ GASUS DOSIER-UND FÖRDERTECHNIK GmbH v. THE NETHERLANDS գործով 1995թ. փետրվարի 23-ի վճիռը, գանգատ թիվ 15375/89, կետ 66):

24. Ելնելով վերոգրյալից և մեկնաբանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «...այն անձանց գույքի վրա, որոնց վրա կասկածյալի և մեղադրյալի գործողությունների համար, կարող է դրվել նյութական պատասխանատվություն...» արտահայտությունը կարող է վերաբերել ոչ միայն ֆիզիկական, այլ նաև իրավաբանական անձանց: Ուստի բողոք բերած անձի այն պնդումը, թե քրեական պատասխանատվության սուբյեկտ հանդիսացող ֆիզիկական անձի պարտավորությունների համար երբևէ չի կարող պատասխանատվություն կրել քրեական պատասխանատվության սուբյեկտ չհանդիսացող իրավաբանական անձը՝ ընկերությունը, չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և հարկային օրենսդրության՝ սույն որոշման 19-րդ կետում նշված հոդվածների իմաստից:

25. Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իրավամբ օրինական ուժի մեջ է թողել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ «Գույքի վրա կալանք դնելու մասին» 2008 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման դեմ բողոքը մերժելու մասին որոշումը: Հետևաբար, վճռաբեկ բողոքում նշված հիմքով ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից նյութական կամ դատավարական օրենքի էական խախտումներ թույլ չեն տրվել, այդ առումով վերաքննիչ դատարանի որոշումը օրինական է, հիմնավորված ու պատճառաբանված, համապատասխանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ, 233-րդ հոդվածների պահանջներին, ուստի նույն օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա վճռաբեկ բողոքը պետք է մերժել՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

26. Բողոքարկվող դատական ակտի վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իրավունքի զարգացման գործառնությունների իրացումն է: Այդ առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ իրավաբանական անձանց գույքի վրա կալանք դնելու դեպքերում դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: «Գույքի վրա կալանք դնելու մասին» ՀՀ Կառավարությանն առնթեր պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության ավագ քննիչ Լ.Սարգսյանի 2008 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման դեմ «Էկոնոմիկասագիա» դուստր փակ բաժնետիրական ընկերության ներկայացուցչի բողոքը մերժելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի օգոստոսի 20-ի որոշումը թողնուլ օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

38.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
քրեական գործ թիվ ԵԿԴ/0098/01/09

ԵԿԴ/0098/01/09

նախագահող դատավոր՝ Ս. Համբարձումյան  
դատավորներ՝ Գ. Սելիք-Սարգսյան, Մ. Պետրոսյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԳԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈԳՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
*մասնակցությամբ ամբաստանյալ* Է. ՍՏԵՓԱՆՅԱՆԻ

2009 թվականի նոյեմբերի 26-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազ Ա. Հովսեփյանի վճռաբեկ բողոքն ամբաստանյալ Էդգար Հրաչի Ստեփանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով և 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 10-ի որոշման դեմ,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2009 թվականի մայիսի 7-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է թիվ 62202209 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին

մասով և 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության ավագ հարկադիր կատարող Է.Ստեփանյանի կողմից կաշառք ստանալու, ինչպես նաև պաշտոնեական դիրքն օգտագործելով յուրացում կատարելու դեպքերի առթիվ: Նույն օրը Է.Ստեփանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրություն չհեռանալու մասին:

Նախաքննության մարմնի 2009 թվականի մայիսի 14-ի որոշմամբ Է.Ստեփանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով և 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի մայիսի 14-ի որոշմամբ Է.Ստեփանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը: Նույն որոշմամբ Է.Ստեփանյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը փոխարինվել է գրավով:

2009 թվականի մայիսի 27-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

2. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հունիսի 30-ի դատավճռով Է.Ստեփանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով, 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով ազատազրկման 2 տարի ժամկետով՝ գրկվելով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից 1 տարի 6 ամիս ժամկետով, 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 2 տարի ժամկետով՝ գրկվելով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից 1 տարի 6 ամիս ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով, նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Է.Ստեփանյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 3 տարի ժամկետով՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից գրկելով 2 տարի ժամկետով:

«Համաներում հայտարարելու մասին» ՀՀ ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի կիրառմամբ Է.Ստեփանյանն ազատվել է ազատազրկման ձևով նշանակված պատժի կրումից:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009 թվականի սեպտեմբերի 10-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հունիսի 30-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

4. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 10-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազը:

Վճռաբեկ դատարանը 2009 թվականի նոյեմբերի 3-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները**

5. Ամբաստանյալ Է.Ստեփանյանը դատապարտվել է հետևյալ արարքների համար.

Երևան քաղաքի բնակիչ Հրաչյա Սահակյանից նրա անչափահաս դստեր՝ Անահիտ Սահակյանի խնամքի համար ալիմենտ բռնագանձելու նպատակով դատարանի կատարողական թերթի հիման վրա ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում 1999 թվականի հուլիսի 2-ին հարուցվել է կատարողական վարույթ, որի հետագա կատարումը 2006 թվականի դեկտեմբերի 14-ին հանձնարարվել է նույն ծառայության Երևան քաղաքի ալիմենտի բռնագանձման բաժնի ավագ հարկադիր կատարող Է.Ստեփանյանին: Վերջինս այդ վարույթով շուրջ երկու տարի որևէ գործողություն չի ձեռնարկել, իսկ 2008 թվականի հոկտեմբերին համապատասխան մարմիններին հարցումներ է ուղարկել պարտապան Հ.Սահակյանին պատկանող գույք կամ դրամական միջոցներ հայտնաբերելու ուղղությամբ, որոնք սակայն արդյունք չեն տվել, չի պարզվել նաև պարտապանի գտնվելու վայրը: 2008 թվականի նոյեմբերի սկզբին Է.Ստեփանյանն այցելել է պարտապանի մորը՝ Գայանե Սաքոյանին՝ նախ նրա աշխատավայրում, ապա՝ տանը: Վերջինիցս տեղեկանալով, որ Հ.Սահակյանը բացակայում է հանրապետությունից, բանակցությունների մեջ է մտել Գ.Սաքոյանի հետ՝ որդու նկատմամբ հետախուզում չհայտարարելու, նրա վերաբերյալ կատարողական վարույթի բարեհաջող ընթացքն ապահովելու նպատակով համապատասխան փաստաթղթային հիմքեր ձեռք բերելու հարցերում: Իր լիազորությունների մեջ մտնող հիշյալ գործողությունները կատարելու և պարտապան Հ.Սահակյանի նկատմամբ հետախուզում չհայտարարելու համար Է.Ստեփանյանը Գ.Սաքոյանից պահանջել և վերջինիս՝ Երևանի Ռուբինյան փողոցի 2/1 շենքի 14-րդ բնակարանում անձամբ ստացել է 91.107 ՀՀ դրամին համարժեք 300 ԱՄՆ դոլար կաշառք:

Բացի այդ, Հ.Սահակյանի ալիմենտի պարտքը մարելու նպատակով 2008 թվականի նոյեմբերի 12-ին Գ.Սաքոյանի աշխատավայրում՝ Երևանի Բյուտովի անվան լեզվագիտական համալսարանում, վերջինիցս ստանալով 130.000 ՀՀ դրամ՝ Է.Ստեփանյանը չի կազմել սահմանված կարգի անդորրագիր, այդ գումարը չի մուտքագրել ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության դեպոզիտ հաշվին, այլ պաշտոնեական դիրքն օգտագործելով, յուրացման եղանակով հափշտակել է անչափահաս երեխայի խնամքի նպատակով վեր-

ջինիս մորը՝ Ստելլա Սիքսայելյանին վճարվելիք գումարը և նրան փոխանցելու փոխարեն ծախսել է իր անձնական կարիքների համար:

6. Սույն գործով առաջին ատյանի դատարանն իր դատավճռի՝ «Գատարանի իրավական վերլուծությունը» բաժնում նշել է՝ «Ամբաստանյալ Էդգար Ստեփանյանի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանը հաշվի առավ կատարած արարքի բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքների բացակայությունը:

Որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ դատարանը հաշվի առավ այն, որ ամբաստանյալը բնութագրվում է դրականորեն, նախկինում դատապարտված չի եղել, բնակվում է վարձով, նրա խնամքին են գտնվում 6 և 11 տարեկան անչափահաս երեխաները, չաշխատող կինը, թոշակառու ծնողները, շուրջ 10 տարի աշխատել է համակարգում, ունի մայրի կոչում, պատճառված վնասը հատուցել է ամբողջությամբ, ինչպես նաև տուժողի դիրքորոշումը:

Ամբաստանյալ Էդգար Ստեփանյանը թեև իրեն մեղավոր չճանաչեց, սակայն խնդրեց իր նկատմամբ կիրառել «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 19.06.2009թ. որոշումը» (տե՛ս գ/թ 304):

7. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում նշել է՝ «Առաջին ատյանի դատարանի մատնանշած՝ ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները (...) ոչ թե նվազեցնում են նրա կատարած արարքի հանրության համար վտանգավորության աստիճանը, այլ ՀՀ քրեական օրենսգրքի 61–րդ հոդվածի 2–րդ մասի պահանջներից ելնելով՝ դատարանի կողմից մյուս հանգամանքների (...) հետ հաշվի են առնվել ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս:

(...)

Գատարանն ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս պարտավոր չէր հաշվի առնել նաև օրենքով պաշտպանվող հարաբերությունների սոցիալական նշանակությունը և բնույթը, քանի որ դրանք նախատեսված չեն ՀՀ քրեական օրենսգրքի 61–րդ հոդվածով: Այդ հանգամանքներն արդեն իսկ հաշվի են առնվել օրենսդիր մարմնի կողմից՝ տվյալ հանցագործության համար պատժի տեսակն ու չափը սահմանելիս» (տե՛ս գ/թ 336):

### **3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերը գտնում է, որ ստորադաս դատարանները Է.Ստեփանյանի նկատմամբ պատիժ են նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի 5–րդ, 10–րդ և 61–րդ հոդվածներով սահմանված օրինականության, արդարության ու պատասխանատվության անհատականացման, ինչպես նաև պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտմամբ:

Ի հիմնավորումն ասվածի՝ բողոքի հեղինակը նշում է, որ Է.Ստեփանյանը, հանդիսանալով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող պաշտոնատար անձ և օրենքով լիազորված լինելով իր ծառայությունն իրականացնել օրինականությամբ:

յան, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները հարգելու սկզբունքների պահպանմամբ, ի հակադրություն դրան, պահանջել և ստացել է կաշառք: Վերոնշյալից բացի Է.Ստեփանյանը, գանձելով անչափահաս երեխայի ապրուստի միջոց հանդիսացող որոշակի գումար, հափշտակել է այն:

Բողոքաբերը նշում է նաև, որ հարուցված քրեական գործի քննության ընթացքում հիշյալ փաստերը հիմնավորող ապացույցների բավարար ամբողջության պայմաններում Է.Ստեփանյանը հանցագործության մանրամասների վերաբերյալ լիարժեք ցուցմունքներ չի տվել, այսինքն՝ չի զոջացել իր կատարած արարքների համար:

Վերոնշյալից բողոք բերած անձը հետևություն է անում այն մասին, որ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների մատնանշած՝ Է.Ստեփանյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքերը (դատապարտված չլինելը, վարձով բնակվելը, շուրջ 10 տարի համակարգում աշխատելը, մայրի կոչում ունենալը և այլն) չեն կարող նվազեցնել կատարած արարքների հանրային վտանգավորության աստիճանը:

9. Բողոքաբերը գտնում է նաև, որ Է.Ստեփանյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի չեն առնվել օրենքով պահպանվող այն հասարակական հարաբերությունների սոցիալական նշանակությունը և բնույթը, որոնց դեմ ոտնձգել է հանցավորը: Հատկապես ընդգծվում է Է.Ստեփանյանին մեղսագրվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության՝ կաշառակերության, հանրային վտանգավորության բարձր աստիճանը:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը գտնում է, որ Է.Ստեփանյանի նկատմամբ նշանակված պատիժն անարդարացի է՝ ակնհայտ մեղմ լինելու պատճառով: Նա կարծիք է արտահայտում այն մասին, որ նշված հանգամանքների առկայության պայմաններում Է.Ստեփանյանի նկատմամբ նշանակված 3 տարի ժամկետով ազատազրկումը չի կարող ապահովել պատժի նպատակների իրականացումը, ուստի խնդրում է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 10-ի որոշումն ամբողջությամբ բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության՝ Է.Ստեփանյանի նկատմամբ համաչափ և արդարացի պատիժ սահմանելու համար:

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

*1. Հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանը, բնույթը և սոցիալական նշանակությունը հաշվի առնելը*

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի և 179-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիաների շրջանակներում Է.Ստեփանյանի նկատմամբ առավել կամ նվազ խիստ պատժաչափ ընտրելիս առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները պարտավոր՞ էին հաշվի առնել նրա կատարած արարքների հանրության համար վտանգավորության աստիճանը, բնույթը և սոցիալական նշանակությունը, և եթե՝ պարտավոր էին, ապա արդյո՞ք հաշվի են առել դրանք:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիան, ի թիվս այլոց, նախատեսում է ազատազրկման ձևով պատիժ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասը, ի թիվս այլոց, նախատեսում է ազատագրված ձևով պատիժ երկուսից չորս տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի նշված հոդվածների սանկցիաների վերլուծությունից երևում է, որ դրանք հարաբերականորեն որոշակի են, առաջին դեպքում պատժի առավելագույն չափի սահմանմամբ, երկրորդ դեպքում՝ պատժի առավելագույն և նվազագույն չափերի սահմանմամբ, ինչը հնարավորություն է տալիս դատարանին հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակել արդարացի պատիժ:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեախրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով»:

14. Գ.Մադաթյանի վերաբերյալ գործով ԵՇԳ/0029/01/08 որոշման 13-րդ կետում Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «(...) սանկցիաների միջև ընտրություն կատարելիս պատժի արդարացիության սկզբունքի ապահովման հիմնական երաշխիքը դատարանների կողմից յուրաքանչյուր գործի քննության ժամանակ այնպիսի հանգամանքների բացահայտումն է, որոնք ազդել են անձի կողմից կատարված արարքի հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի վրա»:

Վերոնշյալ որոշման 14-րդ և 15-րդ կետերում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է արարքի հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ հարցերին և ամրագրել, որ «Արարքի հանրային վտանգավորության բնույթը հանցագործության որակական կողմն է, այն որոշվում է մեղքի ձևի և տեսակի, հանցագործության նպատակի և շարժառիթի, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակության վերաբերյալ փաստական տվյալների ամբողջությամբ»:

Արարքի հանրային վտանգավորության աստիճանի որոշման ժամանակ դատարանը պետք է բացահայտի կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը:

Արարքի հանրային վտանգավորության բնույթի որոշման հարցում Վճռաբեկ դատարանը կարևորում է խախտված քրեախրավական նորմով պաշտպանվող հասարակական հարաբերության սոցիալական նշանակությունը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատիժ նշանակելիս դատարանները պարտավոր են հաշվի առնել տվյալ ժամանակահատվածում քրեական օրենսդրությամբ պահպանվող կոնկրետ հասարակական հարաբերության սոցիալական նշանակությունը, այդ ոլորտում պե-



տուրքյան քրեական քաղաքականության ուղղվածությունը» (տե՛ս *Գարուշ Նորիկի Մաղաթյանի* վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի ԵՇԳ/0029/01/08 որոշումը):

15. Հիմք ընդունելով վերոշարադրյալ դատողությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշման մեջ առկա այն դիրքորոշումը, համաձայն որի՝ դատարանը պատիժ նշանակելիս պարտավոր չէ հաշվի առնել օրենքով պաշտպանվող հարաբերությունների սոցիալական նշանակությունը և բնույթը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը), հակասում է Վճռաբեկ դատարանի ԵՇԳ/0029/01/08 որոշմանը:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Է.Ստեփանյանը, ի պաշտոնե լիազորված լինելով ապահովել դատական ակտերի կատարումը, իրեն հանձնարարված դատական ակտի կատարումն ապահովելու, անչափահաս երեխայի խնամքի նպատակով գումարների բռնագանձման ուղղությամբ պատշաճ միջոցներ ձեռնարկելու փոխարեն պահանջել և ստացել է կաշառք, սակայն դրանից հետո էլ չի դադարեցրել իր հանցավոր գործողությունները, այլ գանձելով ալիմենտի գումարը՝ հափշտակել է այն ու ծախսել իր անձնական կարիքների համար (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը): Այսինքն՝ Է.Ստեփանյանի կողմից կատարվել է հանցագործություն, որը ոտնձգում է պետական ապարատի նորմալ գործունեության դեմ, հանդիսանում է պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություն և օժտված է առավել բարձր հանրային վտանգավորությամբ: Է.Ստեփանյանի գործողությունների արդյունքում ոչ միայն հեղինակագրկվել է պետական իշխանությունը, քանի որ վերջինս, հանդիսանալով պաշտոնատար անձ և գործելով պետության անունից, պահանջել և ստացել է կաշառք, այլ նաև վնաս է պատճառվել անչափահաս երեխայի գույքային շահերին, քանի որ Է.Ստեփանյանը, գանձելով երեխայի ալիմենտի գումարը, այն ծախսել է սեփական կարիքների համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Է.Ստեփանյանի կատարած արարքի հանրության համար վտանգավորության աստիճանը, բնույթը և սոցիալական նշանակությունը գնահատելիս առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները պարտավոր էին հաշվի առնել վերը նշված հանգամանքները, սակայն հաշվի չեն առել:

## *II. Վերաքննիչ դատարանի կողմից հաշվի առնված մեղմացնող հանգամանքները*

17. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ հարցը վերաբերում է նրան, թե առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների կողմից Է.Ստեփանյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի առնված մի շարք մեղմացնող հանգամանքներ կարո՞ղ էին արդյոք նվազեցնել նրա կատարած արարքների հանրության համար վտանգավորության աստիճանը:

18. Դատարանների կողմից պատիժ նշանակելիս հաշվի առնվող մեղմացնող հանգամանքների չափանիշների վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել Պ.Բայրամյանի վերաբերյալ գործով ՎԲ-84/07 որոշման մեջ, որի համաձայն՝ «(...) Դատարանի լայն հայեցողության շրջանակներում է (...) անձի պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների կիրառման հարցը, քանի որ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պատիժ նշանակելիս

դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն նույն հոդվածի առաջին մասում: Այնուհանդերձ, դատարանի այս լիազորությունը բացարձակ չէ, և որպես մեղմացնող հաշվի առնվող հանգամանքները պետք է բավարարեն որոշակի չափանիշների: Գրանք են.

ա) հանգամանքը պետք է իրական լինի, այսինքն՝ գործով ձեռք բերված ապացույցները պետք է հաստատեն դրա առկայությունը,

բ) այն պետք է ողջամտորեն նվազեցրած լինի անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը, (...)» (տե՛ս Պարույր Ստյոպայի Բայրամյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թվականի հունիսի 1–ի ՎԲ–84/07 որոշումը):

19. Սույն գործով Երևանի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հունիսի 30–ի դատավճռում որպես Է.Ստեփանյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ, ի թիվս այլոց, նշվել է, որ նա նախկինում դատապարտված չի եղել, բնակվում է վարձով, նրա խնամքին է չաշխատող կինը, շուրջ 10 տարի աշխատել է համակարգում, ունի մայրի կոչում, պատճառված վնասը հատուցել է ամբողջությամբ, ինչպես նաև տուժողի դիրքորոշումը (տե՛ս սույն որոշման 6–րդ կետը):

20. Անդրադառնալով առաջին ատյանի դատարանի կողմից հաշվի առնված՝ Է.Ստեփանյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներին՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն ամրագրել է, որ առաջին ատյանի դատարանի մատնանշած՝ ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները թեև չեն նվազեցնում նրա կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանը, սակայն ՀՀ քրեական օրենսգրքի 61–րդ հոդվածի 2–րդ մասի պահանջներից ելնելով՝ հաշվի են առնվել նրա նկատմամբ պատիժ նշանակելիս (տե՛ս սույն որոշման 7–րդ կետը):

21. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի արտահայտած՝ սույն որոշման 20–րդ կետում շարադրված մոտեցումը հակասում է Պ.Բայրամյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշմանը: Հանգամանքը կարող է համարվել մեղմացնող և հաշվի առնվել պատիժ նշանակելիս, եթե ողջամտորեն նվազեցրած լինի անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը, հակառակ պարագայում այն չի կարող համարվել որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք, հետևաբար չպետք է հաշվի առնվի դատարանի կողմից անձի նկատմամբ պատիժ նշանակելիս: ՀՀ քրեական օրենսգրքի 61–րդ հոդվածի 2–րդ մասը վերոգրյալին հակառակ որևէ պահանջ չի բովանդակում:

22. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես առաջին ատյանի դատարանի, այնպես էլ վերաքննիչ դատարանի կողմից Է.Ստեփանյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի առնված մի շարք հանգամանքներ՝ նախկինում դատապարտված չլինելը, վարձով բնակվելը, խնամքին չաշխատող կին ունենալը, շուրջ 10 տարի համակարգում աշխատելը, մայրի կոչում ունենալը, պատճառված վնասը հատուցելը, ինչպես նաև տուժողի դիրքորոշումը, չէին կարող նվազեցնել նրա կատարած արարքների հանրային վտանգավորության աստիճանը, հետևաբար չպետք է դիտվեին որպես նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ:

23. Հիմք ընդունելով վերոշարադրյալ հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես ընդհանուր իրավասության, այնպես էլ վերաքննիչ դատարանները սույն գործով ճիշտ չեն գնահատել է.Ստեփանյանի արարքների հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, սխալ են կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 61–րդ հոդվածի 2–րդ մասի դրույթները, ինչն էլ հանգեցրել է նրա նկատմամբ ակնհայտ մեղմ լինելու պատճառով անարդարացի պատժի նշանակման:

Վերոնշյալ հանգամանքները Վճռաբեկ դատարանին հիմք են տալիս բեկանել Երևանի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92–րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403–406–րդ, 419–րդ, 422–424–րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Էդգար Հրաչի Ստեփանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 311–րդ հոդվածի 1–ին մասով և 179–րդ հոդվածի 2–րդ մասի 1–ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 10–ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

39.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության

ՇԴ/0008/01/09

վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
քրեական գործ թիվ ՇԴ/0008/01/09

նախագահող դատավոր՝ Հ. Տեր-Ադամյան  
դատավորներ՝ Ժ. Հովսեփյան, Ռ. Ազարյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԳԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Մ. ՊԵՏՏՐՈՍՅԱՆԻ

2009 թվականի նոյեմբերի 26-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 4-ի որոշման դեմ Դավիթ Ֆելիքսի Գալստյանի բերած վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2008 թվականի սեպտեմբերի 27-ին ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեի Հարկային ծառայության հետաքննության բաժնում հարուցվել է թիվ 83163508 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ֆիզիկական անձ Դ. Գալստյանի կողմից առանց պետական գրանցման,

առանց հարկային մարմիններում հաշվառման, ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու փաստի առթիվ:

2009 թվականի հունվարի 15–ին Բ.Գալստյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 188–րդ հոդվածի 3–րդ մասի 1–ին կետով:

2009 թվականի փետրվարի 17–ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

2. Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2009 թվականի հուլիսի 7–ին որոշում է կայացրել «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19–ի որոշման 5–րդ կետի 1–ին ենթակետի կիրառմամբ Բ.Գալստյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 188–րդ հոդվածի 3–րդ մասի 1–ին կետով քրեական գործի վարույթը կարճելու և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին:

Նույն որոշմամբ Բ.Գալստյանից հօգուտ պետական բյուջեի բռնագանձվել է 4.467.800 ՀՀ դրամ՝ որպես հանցագործությամբ պետությանը պատճառված վնասի գումար:

ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեի Գյումրու տարածքային հարկային տեսչությանը քաղաքացիական դատավարության կարգով քաղաքացիական հայց հարուցելու իրավունք է վերապահվել:

Իրեդեն ապացույց ճանաչված, Բ.Գալստյանին ի պահ հանձնված գույքը բռնագրավվել է հօգուտ պետության:

3. Վերոգրյալ որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել ամբաստանյալ Բ.Գալստյանը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 4–ի որոշմամբ Բ.Գալստյանի բողոքը մերժվել է, իսկ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հուլիսի 7–ի որոշումը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

4. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 4–ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Բ.Գալստյանը:

Վճռաբեկ դատարանը 2009 թվականի հոկտեմբերի 22–ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները**

5. Նախաքննության մարմնի կողմից Բ.Գալստյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, խախտելով «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 5–րդ հոդվածի 3–րդ կետի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի

26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի պահանջները, առանց պետական գրանցման, 2007 թվականի մայիսի 1-ից մինչև 2008 թվականի օգոստոսի 20-ն ընկած ժամանակահատվածում իրականացրել է ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն: Մասնավորապես, 2007 թվականի մայիսի 1-ից մինչև 2008 թվականի մայիսի 1-ը Գյումրի քաղաքի Ծուլիկիձե փողոցի 125 տանը, իսկ 2008 թվականի մայիսի 1-ից մինչև 2008 թվականի օգոստոսի 28-ը Դորդանյան փողոցի 326 տանը Գ.Գալստյանը զբաղվել է կենցաղային 12 սմ և 20 սմ չափերով մոմերի արտադրությամբ և դրանց իրացմամբ, ինչի արդյունքում պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափի՝ 4.467.800 ՀՀ դրամի վնաս, որից ավելացված արժեքի հարկ՝ 2.089.300 ՀՀ դրամ, եկամտահարկ՝ 1.736.300 ՀՀ դրամ, սոցվճար՝ 642.200 ՀՀ դրամ (քրեական գործ հատոր 1-ին, գ/թ 145):

6. Սույն գործով նախաքննության մարմինը 2009 թվականի փետրվարի 11-ին որոշում է կայացրել Գ.Գալստյանին պատկանող, կալանքի տակ գտնվող և նրան ի պահ հանձնված տեխնիկական միջոցները և նյութական արժեքները որպես իրեղեն ապացույց ճանաչելու մասին (քրեական գործ հատոր 1-ին, գ/թ 237-238):

7. Քրեական գործով քաղաքացիական հայցվոր ճանաչված ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեի Գյումրու տարածքային հարկային տեսչության կողմից 2009 թվականի մարտի 16-ին Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել հայցադիմում, որով քաղաքացիական հայցվորը խնդրել է քաղաքացի Գ.Գալստյանից հօգուտ պետական բյուջեի բռնագանձել 6.767.900 ՀՀ դրամ, հարկային մարմնի զարգացման և խրախուսման ֆոնդի գումար՝ 752.000 ՀՀ դրամ (քրեական գործ հատոր 2-րդ, գ/թ 59):

8. Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն իր որոշման մեջ նշել է. «Գատարանը քննարկելով Գ.Գալստյանի մեղադրանքի ծավալում առկա պետությանը պատճառված առանձնապես խոշոր չափի 4.467.800 ՀՀ դրամ վնասի հատուցման հարցը, գտնում է, որ այն ենթակա է բռնագանձման: Ինչ վերաբերում է ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ Գյումրու տարածքային հարկային տեսչության տույժերի և տուգանքների գծով ներկայացրած հայցապահանջին՝ դատարանը գտնում է, որ Գ.Գալստյանի կողմից հայցը չընդունելու պատճառաբանությունների պայմաններում այն պետք է թողնել քրեական գործով առանց քննության՝ քաղաքացիական դատավարության կարգով քննության առնելու համար:

Գործով իրեղեն ապացույց ճանաչված հանցագործության առարկաները և միջոցները ենթակա են բռնագրավման պետության օգտին» (քրեական գործ հատոր 2-րդ, գ/թ 148, 149):

9. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իր դատական ակտում նշել է. «Գործով ձեռք բերված ապացույցներով հաստատվել է, որ Դավիթ Գալստյանը առանց պետական գրանցման, 2007 թվականի մայիսի 1-ից մինչև 2008 թվականի օգոստոսն ընկած ժամանակահատվածում իրականացրել է ապօրինի ձեռնարկատիրություն (...), որով պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափի՝ 4.467.800 ՀՀ դրամի վնաս (...):

Առաջին ատյանի դատարանը, քննարկելով Գ.Գալստյանի մեղադրանքի ծավալում առկա պետությանը պատճառված առանձնապես խոշոր չափի՝ 4.467.800 ՀՀ դրամ վնասի հատուցման հարցը, վերը շարադրված հիմքերի առկայության պայմաններում հանգել է ճիշտ հետևության և իրավացիորեն որոշել է Գ.Գալստյանից հօգուտ

պետությունների բռնագանձել 4.467.800 ՀՀ դրամ՝ որպես հանցագործությանը պետությանը պատճառված վնասի գումար:

(...) Տվյալ պարագայում ամբաստանյալից առգրավված տեխնիկական միջոցները և նյութական արժեքները հանդիսանում են հանցագործության առարկաներ, որոնք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ պետք է բռնագրավվեն հոգուտ պետության» (քրեական գործ հատոր 3-րդ, գ/թ 35, 36):

### **Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**

10. Վճռաբեկ բողոք բերած անձը նշել է, որ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշմամբ իրենից հոգուտ պետական բյուջեի 4.467.800 ՀՀ դրամ բռնագանձելով և իրեղեն ապացույց ճանաչված, իրեն ի պահ հանձնված գույքը հոգուտ պետության բռնագրավելով, թույլ է տվել ՀՀ Սահմանադրության 5-րդ, 8-րդ, 18-րդ, 19-րդ, 21-րդ հոդվածների և «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 5-րդ կետի պահանջների խախտում: Բողոքաբերի պնդմամբ՝ քրեական գործի կարճման մասին որոշում կայացնելով՝ դատարանն իրավունք չունի այլ պարտականություններ դնել քաղաքացու վրա:

Բողոքի հեղինակը նշել է նաև, որ առաջին ատյանի դատարանի որոշմամբ ինքը գրկվել է իր խախտված իրավունքները վերականգնելու և արդյունավետ պաշտպանվելու՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իր իրավունքներից, քանի որ քաղաքացիական դատավարության կարգով հայց հարուցելիս քաղաքացիական հայցվորը դատարանում իր նկատմամբ կունենա առավելություն:

11. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 4-ի որոշումը և մասնակիորեն բեկանել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հուլիսի 7-ի որոշումը՝ իրենից հոգուտ պետական բյուջեի 4.467.800 ՀՀ դրամ բռնագանձելու և իրեղեն ապացույց ճանաչված, իրեն ի պահ հանձնված գույքը հոգուտ պետության բռնագրավելու մասերով:

### **Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը**

*1. Հանցագործության գործիքները հոգուտ պետության բռնագրավելու իրավաչափությունը.*

12. Բողոքաբերի կողմից Վճռաբեկ դատարանի առջև բարձրացրած առաջին հարցը հետևյալն է. Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն իրավասու՞ է ր արդյոք քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ գործով իրեղեն ապացույց ճանաչված գույքը բռնագրավել հոգուտ պետության:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանի դատավճռում, ինչպես նաև քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման մեջ իրեղեն ապացույցների հարցի լուծումը կատարվում է հետևյալ կանոնների պահպանմամբ՝

1) հանցագործության գործիքները, ինչպես նաև շրջանառությունից հանված

առարկաները բռնագրավվում և հանձնվում են համապատասխան պետական հիմնարկներին, իսկ արժեք չներկայացնելու դեպքում՝ ոչնչացվում են.

(...):»:

Վերոգրյալ իրավանորմի բովանդակությունից հետևում է, որ քրեական վարույթն իրականացնող մարմինը, գործով վարույթն ավարտելիս, այդ թվում՝ գործի վարույթը կարճելիս, պարտավոր է որոշում կայացնել իրեղեն ապացույց ճանաչված հանցագործության գործիքները և հանցավոր գործողությունների օբյեկտ հանդիսացող առարկաները տնօրինելու վերաբերյալ՝ դրանց որոշակի նյութական արժեք ներկայացնելու պարագայում հոգուտ պետության բռնագրավելու, իսկ նյութական արժեք չներկայացնելու դեպքում՝ ոչնչացնելու միջոցով:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, համաներման ակտի կիրառմամբ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնելիս, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Դ.Գ.ալտյանի ապօրինի արտադրամասում հայտնաբերված, նախաքննության մարմնի որոշմամբ իրեղեն ապացույց ճանաչված, հանցագործության գործիք ծառայած և հանցավոր գործողությունների օբյեկտներ հանդիսացող տեխնիկական միջոցները և նյութական արժեքները (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը) բռնագրավել է հոգուտ պետության (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը սույն գործով ոչ միայն իրավասու էր, այլ նաև պարտավոր էր քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ գործով իրեղեն ապացույց ճանաչված գույքը բռնագրավել հոգուտ պետության:

*II. Քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ դատական ակտով քաղաքացիական հայցը լուծելու իրավաչափությունը.*

15. Բողոքաբերի կողմից Վճռաբեկ դատարանի առջև բարձրացրած երկրորդ հարցը հետևյալն է. Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն իրավասու՞ էր արդյոք քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ լուծել ներկայացված քաղաքացիական հայցը:

16. ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով»:

ՀՀ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը լուծվում է դատավճռով»:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համակարգային վերլուծության



հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդիրը որդեգրել է քրեական մեղադրանքի հանդեպ քաղաքացիական հայցի ածանցյալ դերի հայեցակարգը: Իսկ դրանից բխում է, որ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը լուծելու համար դատարանը նախ պետք է ապացուցված համարի տվյալ հանցագործության համար անձի մեղավորությունը, որից հետո միայն կարող է անդրադառնալ հանցագործությանը անմիջականորեն պատճառված գույքային վնասի բնույթի, չափի և դրա հատուցման հետ կապված հարցերին:

Մինևույն ժամանակ, անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքից բխում է, որ հանցագործության մեջ անձի մեղավորությունը չի կարող ապացուցված համարվել այլ կերպ, քան մեղադրական դատավճռով: Հետևաբար մեղադրական դատավճռի բացակայության պայմաններում դատարանը չի կարող լուծում տալ քաղաքացիական հայցին:

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2009 թվականի հուլիսի 7-ին որոշում է կայացրել Գ.Գալստյանի վերաբերյալ քրեական գործի վարույթը կարճելու և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: Վերոնշյալ ակտով դատարանը որոշում է կայացրել Գ.Գալստյանից պետությանը պատճառված առանձնապես խոշոր չափի 4.467.800 ՀՀ դրամ վնասը բռնագանձելու մասին (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009 թվականի սեպտեմբերի 4-ի որոշմամբ օրինական ուժի մեջ է թողել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հուլիսի 7-ի որոշումը (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը)՝ պատճառաբանելով, որ գործով ձեռք բերված ապացույցներով հաստատվել է, որ Գ. Գալստյանն առանց պետական գրանցման, 2007 թվականի մայիսի 1-ից մինչև 2008 թվականի օգոստոսն ընկած ժամանակահատվածում իրականացրել է ապօրինի ձեռնարկատիրություն, որով պետությանը պատճառել է առանձնապես խոշոր չափի՝ 4.467.800 ՀՀ դրամի վնաս (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Այսինքն նախաքննության մարմնի կողմից Գ.Գալստյանին առաջադրված մեղադրանքում վերջինիս մեղավորությունը կամ անմեղությունը ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով սահմանված կարգով դատարանում չի ապացուցվել: Մեղսագրված արարքում անձի մեղքը ապացուցված չլինելու պայմաններում չի կարող ապացուցված համարվել նաև մեղսագրված հանցավոր գործողությունների արդյունքում անմիջականորեն պատճառված գույքային վնասը: Սակայն անտեսելով վերոնշյալ հանգամանքը՝ ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ դատարանը գտել են, որ հանցագործությամբ անմիջականորեն պատճառված գույքային վնասը ենթակա է հատուցման:

19. Հիմք ընդունելով վերոշարադրյալ դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենքով նախատեսված դեպքերում քրեական գործի վարույթի կարճումը հանգեցնում է նաև քրեական գործով հարուցված քաղաքացիական հայցի հետագա քննության դադարեցման:

Հետևաբար, Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, համաներման ակտի կիրառմամբ Գ.Գալստյանի վերաբերյալ քրեական

գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնելով, իրավասու չէր լուծել ներկայացված քաղաքացիական հայցը, այլ պետք է թողներ այն առանց քննության՝ քաղաքացիական հայցվորին բացատրելով ներկայացված քաղաքացիական հայցը քաղաքացիական դատավարության կարգով հարուցելու նրա իրավունքը:

20. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարանի 2009 թվականի հուլիսի 7-ի որոշումը Դ.Գալստյանից հոգուտ պետական բյուջեի 4.467.800 ՀՀ դրամ բռնագանձելու մասով և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 4-ի որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիման վրա անհրաժեշտ է բեկանել և սույն գործով քաղաքացիական հայցվորի ներկայացրած քաղաքացիական հայցն ամբողջությամբ թողնել առանց քննության:

21. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնելիս իրեն նախապայմանաբար տնօրինման և քաղաքացիական հայցի լուծման հարցերի վերաբերյալ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դավիթ Ֆելիքսի Գալստյանից հոգուտ պետական բյուջեի 4.467.800 ՀՀ դրամ բռնագանձելու մասով Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարանի 2009 թվականի հուլիսի 7-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 4-ի որոշումները բեկանել և քաղաքացիական հայցը թողնել առանց քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն  
Դատավորներ՝ ստորագրություններ*

40.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵԱԴԴ/0085/06/09

ԵԱԴԴ/0085/06/09

նախագահող դատավոր՝ Ա. Դանիելյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՄԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

2009 թվականի դեկտեմբերի 18-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով մեղադրյալ Գագիկ Գառնիկի Սիքայելյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 2-ի որոշման դեմ Գ.Սիքայելյանի պաշտպան Ի.Պետրոսյանի բերած վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. Քրեական գործը հարուցվել է 2009թ. սեպտեմբերի 8-ին ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով:

2. 2009թ. սեպտեմբերի 11-ի որոշմամբ Գագիկ Գառնիկի Սիքայելյանը ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով ներգրավվել է որպես մեղադրյալ:

3. Երևան քաղաքի Աջափնյակ և Գավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2009թ. սեպտեմբերի 11-ի որոշմամբ բավարարել է նախաքննության մարմնի միջնորդությունը և մեղադրյալ Գ.Միքայելյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրել կալանքը՝ 2 ամիս ժամկետով:

4. Գ.Միքայելյանի պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009թ. հոկտեմբերի 2-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Երևանի Աջափնյակ և Գավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 11-ի որոշումը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. հոկտեմբերի 2-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Գ.Միքայելյանի պաշտպան Ի.Պետրոսյանը:

5. Վճռաբեկ դատարանը 2009թ. դեկտեմբերի 1-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.**

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

6. Գ.Միքայելյանն Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. հոկտեմբերի 3-ի դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և դատապարտվել ազատազրկման մեկ տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան մեկ տարի ժամկետով:

7. 2009թ. սեպտեմբերի 11-ին Գ.Միքայելյանը ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով ներգրավվել է որպես մեղադրյալ այն արարքի համար, որ նա ուրիշի զգալի չափերի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ 2009թ. սեպտեմբերի 8-ին՝ ժամը 02.45-ի սահմաններում, Երևան քաղաքի Շինարարների փողոցի 15/2 շենքի 12-րդ հարկում գտնվող վերելակի մեքենայական սրահի մուտքի դռան կախովի փականը կոտրելու միջոցով, ապօրինի մուտք է գործել սրահ և փորձել է այնտեղից գողանալ զգալի չափի արժեք ունեցող՝ վերելակի արգելակման կոճը, սակայն հանցանքն ավարտին չի հասցրել իր կամքից անկախ հանգամանքներով, քանի որ բռնվել է շենքի բնակիչների կողմից:

8. Գ.Միքայելյանի նկատմամբ 2008թ. հոկտեմբերի 3-ի դատավճռով սահմանված մեկ տարի ժամկետով փորձաշրջանի հաշվարկումը սկսվել է 2009թ. փետրվարի 17-ից, ուստի Գ.Միքայելյանին մեղադրանք է առաջադրվել փորձաշրջանի ընթացքում՝ 2009թ. սեպտեմբերի 8-ին, կատարած գողության համար:

9. Գ.Միքայելյանը ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժին բերման է ենթարկվել 2009թ. սեպտեմբերի 8-ին՝ ժամը 03.05-ին: Գ.Միքայելյանին ձերբակալելու մասին արձանագրությունը կազմվել է 2009թ. սեպտեմբերի 8-ին՝ ժամը 23.30-ին: Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը դատարան է ներկայացվել 2009թ. սեպտեմբերի 11-ին՝ ժամը 19-ի սահմաններում:

Դատարանը Գ.Միքայելյանի նկատման որպես խափանման միջոց կալանավորումը ընտրելու մասին որոշումը կայացրել է 2009թ. սեպտեմբերի 11-ին՝ ժամը 21-ի սահմաններում:

10. Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանն իր որոշման մեջ նշել է, որ «Գ.Միքայելյանը բերման ենթարկվելուց հետո գտնվել է անգիտակից վիճակում, և նրան այդ վիճակում ոստիկանությունում պահելը չի կարող դիտվել որպես նրա իրավունքների և ազատությունների սահմանափակում»:

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոքաբերը փաստարկել է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ, 11-րդ, 130-րդ, 131-րդ, 131.1-րդ հոդվածների, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» ենթակետի միատեսակ կիրառության համար:

12. Բողոք բերած անձը նշել է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ, 130-րդ, 131.1-րդ հոդվածների և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի պահանջները:

13. Բողոքաբերը փաստարկել է նաև, որ Գ.Միքայելյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրվել է այն պարագայում, երբ արդեն իսկ լրացել է նրա անազատության մեջ գտնվելու 72 ժամը, բացի այդ, բողոքաբերը նշել է, որ Գ.Միքայելյանն անգիտակից վիճակում չի եղել, ավելին, 2009 թվականի սեպտեմբերի 8-ին՝ ժամը 14.00-ի սահմաններում՝ բերման ենթարկվելուց շուրջ 11 ժամ անց, անձամբ գրավոր հրաժարվել է հիվանդանոց տեղափոխվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը և Գ.Միքայելյանին անհապաղ ազատ արձակել կալանքից:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

*1. Ենթադրաբար հանցագործություն կատարած լինելու հիմքով անձին ազատությունից զրկելու իրավական կառուցակարգերը.*

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժնում գտնվելու ընթաց-

քում՝ նախքան ձերբակալման արձանագրությունը հայտարարելը, Գ.Սիքայելյանն ունե՞ր արդյոք դատավարական կարգավիճակ:

15. ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով»: Այնուհետև թվարկվում է անձին ազատությունից զրկելու իրավաչափ դեպքերի սպառնիչ ցանկը, որոնց թվում է «հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածը» (4-րդ կետ):

Հանցագործությունների վերաբերյալ գործերի քննության կարգը, ներառյալ՝ այդ ընթացքում կիրառվող հարկադրանքի միջոցները սահմանող ճյուղային կողիֆիկացված օրենքը ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն է, որի 5-րդ բաժնում («Դատավարական հարկադրանքի միջոցները») ամրագրված են ենթադրաբար հանցագործություն կատարած լինելու հիմքով անձին ազատությունից զրկելու երկու ինքնուրույն միջոցներ՝ ձերբակալումը (17-րդ գլուխ՝ 128–133-րդ հոդվածներ) և խափանման միջոց կալանավորումը (18-րդ գլխի 137–142-րդ հոդվածներ):

16. Ձերբակալման և կալանավորման հարաբերակցության վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանը 2009թ. սեպտեմբերի 12-ի ՍԳՈ-827 որոշման մեջ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Ձերբակալում» և «կալանավորում» ինստիտուտների՝ օրենսդրությամբ սահմանված նպատակների և հիմքերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ այդ ինստիտուտներն ունեն ինքնուրույն բովանդակություն, հետապնդում են միմյանցից ըստ էության տարբերվող նպատակներ, ունեն կիրառման միմյանցից էապես տարբերվող հիմքեր: Դրանցից յուրաքանչյուրն օրենսդիրն ընտրել է որպես ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասով մատնանշված առանձին նպատակների հասնելու ինքնուրույն դատավարական միջոց, և կիրառվում է տարբեր հիմքերի առկայությամբ: Հետևաբար, դրանցից յուրաքանչյուրը, առանց որևէ փոխալայնմանավորվածության, փոխկապակցվածության և հաջորդականության, ինքնուրույնաբար կարող է կիրառվել, երբ առկա են դրանով հետապնդվող նպատակները և դրա կիրառման համար անհրաժեշտ հիմքերը: (...):» (6-րդ կետի 4-րդ պարբերություն):

17. Վճռաբեկ դատարանը, ղեկավարվելով Սահմանադրական դատարանի՝ վերը նշված իրավական դիրքորոշմամբ, միաժամանակ ընդգծում է, որ ձերբակալումը և կալանավորումն ունեն էական ընդհանրություն ևս, այն է՝ երկուսն էլ հնարավորություն են տալիս հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի պարագայում դատավարական կարգավիճակ (կասկածյալի կամ մեղադրյալի) ունեցող անձին զրկել ազատությունից (պահել անազատության մեջ): Ընդ որում՝ հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի բավարար աստիճանը ձերբակալման դեպքում ավելի ցածր է, քան կալանավորման դեպքում:

Այդուհանդերձ, ձերբակալման ընթացակարգի յուրահատկությունը հաշվի առնելով՝ հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածով անձին ազատությունից զրկելու կառուցակարգը կարող է ընդգրկել որոշակի տևողությամբ սկզբնական փուլ, որի ընթացքում անձը կարող է որևէ դատավարական կարգավիճակ չունենալ՝ պայմանավորված գործող քրեադատավարական օրենսդրության անբավարար որոշակիությամբ:

18. Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ձերբակալումն անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով նրան արգելանքի վերցնելն է, հետաքննության կամ վարույթ իրականացնող մարմին բերելը, համապատասխան արձանագրություն կազմելը և այդ մասին նրան հայտարարելը՝ օրենքով որոշված վայրերում ու պայմաններում արգելանքի տակ կարճաժամկետ պահելու համար»:

Այս բնորոշումից երևում է, որ ձերբակալման ընթացակարգը բաղկացած է միմյանց հաջորդող չորս գործողություններից՝ (1) անձին ազատությունից փաստացի զրկելը, (2) նրան իրավասու մարմին բերելը, (3) ձերբակալման արձանագրություն կազմելը և (4) այդ մասին նրան հայտարարելը: Ուստի անձը կարող է ձերբակալվածի կարգավիճակ ստանալ վերջին՝ չորրորդ գործողությունը կատարելու պահից, այսինքն՝ քրեական հետապնդման մարմնում ձերբակալման արձանագրության մասին անձին հայտարարելու պահից:

Նախքան դա՝ անձը, փաստացի արգելանքի վերցվելով և քրեական հետապնդման մարմին բերվելով, դեռևս ձերբակալվածի կարգավիճակ չի կարող ունենալ, մինչդեռ նրան արգելանքի վերցնելու և վարույթն իրականացնող մարմին բերելու հիմքը հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածն է՝ զուգորդված նրա փախուստը կանխելու նպատակով: Ընդ որում, այստեղ կասկածի հիմնավորվածության աստիճանն էլ ավելի ցածր է, քան ձերբակալման դեպքում:

19. Եթե բերված անձի նկատմամբ վարույթն իրականացնող մարմինը շարունակում և ավարտին է հասցնում ձերբակալման գործընթացը, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ նախադասության ուժով ձերբակալման ժամկետի հաշվարկը սկսվում է արգելանքի վերցնելու պահից, սակայն դա կատարվում է հետադարձ կարգով: Ուստի արգելանքի վերցված ու վարույթն իրականացնող մարմին բերված անձը, նախքան ձերբակալման արձանագրությունն իրեն հայտարարելը, չի կարող բավարար որոշակիությամբ գիտակցել իր կարգավիճակը: Ավելին, քանի դեռ արձանագրությունը կազմված չէ, նա կարող է ազատ արձակվել՝ այդպես էլ չստանալով ձերբակալվածի կարգավիճակ:

20. Սույն որոշման 15-19-րդ կետերում արված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի հիմքով անձին ազատությունից զրկելու քրեադատավարական կառուցակարգերը չեն սահմանափակվում «ձերբակալման» և «կալանավորման» ինստիտուտներով, այլ ներառում են նաև արգելանքի վերցվելու և վարույթն իրականացնող մարմին բերվելու կառուցակարգը: Համապատասխանաբար, մինչդատական վարույթում «ձերբակալվածի» և «կալանավորվածի» կարգավիճակների հետ մեկտեղ ազատությունից զրկված անձը կարող է ունենալ նաև նախնական իրավական վիճակ, որը պայմանակնորեն կարելի է անվանել «բերվածի» կարգավիճակ:

Բերմանը հարաբերական ինքնուրույնություն տալու օրենսդրի մոտեցման մասին է վկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 2-րդ մասը, որը նախքան քրեական գործի հարուցումը թույլատրելի գործողությունների շարքում ամրագրում է նաև «հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում ... բերման ... ենթարկվել[ը]»:

21. Չնայած *բերվածի* կարգավիճակի կարճատևությանը՝ բերվածը պետք է օժտված լինի Սահմանադրական և Կոնվենցիոն համապատասխան երաշխիքներով:

Մասնավորապես, համաձայն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի՝ «Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի (...) արդարացի (...) դատաքննության իրավունք: (...)»: 6-րդ հոդվածի 3-րդ կետն ամրագրում է հանցագործություն կատարելու մեջ յուրաքանչյուր մեղադրվողի նվազագույն իրավունքները:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հիման վրա՝ «քրեական մեղադրանք» հասկացությունը պետք է հասկացվի ոչ թե *ձևական* (փաստաթղթային), այլ *բովանդակային* (գործնական) իմաստով (*Դեվեբերն ընդդեմ Բելգիայի (Deweer v. Belgium)* գործով վճիռ, 1980թ. փետրվարի 27, գանգատ թիվ 6903/75, կետ 44): Այսինքն՝ անձի նկատմամբ «մեղադրանքի» առկայության մասին կարող է վկայել նաև այնպիսի միջոցներ ձեռնարկելը, որոնք ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն, ինչպես նաև էականորեն ներգործում են կասկածվող անձի դրության վրա (*Էկլեն ընդդեմ Գերմանիայի (Eckle v. Germany)* գործով վճիռ, 1982թ. հուլիսի 15, գանգատ թիվ 8130/78, կետ 73, *Շուբինսկին ընդդեմ Սլովենիայի (Šubinski v. Slovenia)* գործով վճիռ, 2007թ. հունվարի 18, գանգատ թիվ 19611/04, կետ 62, *Գ.Կ.-ն ընդդեմ Լեհաստանի (G.K. v. Poland)* գործով վճիռ, 2004թ. հունվարի 20, գանգատ թիվ 38816/97, կետ 98): Ընդ որում, մինչդաստական վարույթի նկատմամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի կիրառման եղանակը պայմանավորված է տվյալ վարույթի առանձնահատկություններով (Շաբելնիկն ընդդեմ Ուկրաինայի (*Shabelnik v. Ukraine*) գործով վճիռ, 2009թ. փետրվարի 19, գանգատ թիվ 16404/03, կետ 52):

22. Նախորդ կետում շարադրված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բերվածի իրավական վիճակը համապատասխանում է *«քրեական մեղադրանքի» ներկայացման* Կոնվենցիոն պահանջին՝ Եվրոպական դատարանի բովանդակային մեկնաբանմամբ: Ուստի բերվածի կարգավիճակի առանձնահատկությունները հաշվի առնելով (նախնական և կարճաժամկետ բնույթը)՝ բերվածը պետք է օժտված լինի առնվազն հետևյալ իրավունքներով.

ա) իմանալու իրեն արգելանքի վերցնելու պատճառը (բխում է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասությունից, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3(ա) ենթակետից),

բ) տեղեկացնելու իրեն բերման ենթարկելու մասին (բխում է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությունից),

գ) հրավիրելու իր փաստաբանին (բխում է ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասից),

դ) լռելու (բխում է ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 1-ին մասից):

Համապատասխանաբար, քրեական հետապնդման մարմինը պարտավոր է ապահովել բերվածի իրավունքների իրականացումը՝ բերվածի իրավունքները գրավոր պարզաբանելու, նրան առնվազն մեկ զանգի հնարավորություն ընձեռնելու, բերվածի փաստաբանի մուտքը չխոչընդոտելու եղանակներով:



Այնքանով, որքանով վերաբերելի են (*mutatis mutandis*), սույն կետում ամրագրված նվազագույն իրավունքներով և երաշխիքներով օժտված են նաև ոստիկանությունում կամ քրեական հետապնդման այլ մարմնում գտնվող, կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ չունեցող այն անձինք, որոնք կարող են ողջամտորեն ենթադրել, որ (1) իրենց ազատությունը սահմանափակված է կամ իրենք ազատությունից զրկված են, և, միաժամանակ, որ (2) իրենք կասկածվում են հանցագործության մեջ:

23. Սույն որոշման 20–22–րդ կետերում սահմանված չափանիշները քննության առարկա գործի նկատմամբ կիրառելու արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժնում գտնվելու ընթացքում՝ նախքան ձերբակալման արձանագրության մասին իրեն հայտարարելը, Գ.Միքայելյանն ուներ *բերվածի* կարգավիճակ:

## *II. Մինչդատական վարույթում ազատությունից զրկված անձի սահմանադրական իրավունքները.*

24. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. Գ.Միքայելյանի ազատության իրավունքը սահմանափակելիս մինչդատական վարույթն իրականացնող մարմնի կողմից պահպանվե՞լ են արդյոք ՀՀ Սահմանադրությամբ և քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված երաշխիքները:

25. ՀՀ Սահմանադրության 16–րդ հոդվածի համաձայն՝

«(...) Եթե ձերբակալված անձը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 129–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ «(...) ձերբակալումը չի կարող տևել արգելանքի վերցնելու պահից 72 ժամից ավելի (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131<sup>1</sup>–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ «Հանցանքը կատարելու մեջ կասկածվող անձին հետաքննության մարմին, քննիչի կամ դատախազի մոտ բերելուց հետո՝ երեք ժամվա ընթացքում, կազմվում է կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն, (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 132–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ «Ձերբակալվածը, վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա, ենթակա է ազատման, եթե (...) լրացել է ձերբակալման՝ սույն օրենսգրքով սահմանված առավելագույն ժամկետը, և դատարանը մեղադրյալին կալանավորելու մասին որոշում չի կայացրել»:

26. Վերոշարադրյալ նորմերի վերլուծությունից երևում է, որ անձի ազատության իրավունքի սահմանափակումը ենթադրում է ժամկետային տևողության և փաստաթղթային արձանագրման ուղղակի պահանջներ, որոնց թվին է դասվում ազատությունից զրկված անձին քրեական հետապնդման մարմին բերելուց առավելագույնը երեք ժամ հետո ձերբակալման արձանագրություն կազմելը:

27. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128–րդ հոդվածից բխում է, որ անձի ձերբակալման գործընթացն ավարտված է համարվում անձին արգելանքի

վերցնելուց, նրան վարույթն իրականացնող մարմին բերելուց և ձերբակալման արձանագրություն կազմելուց հետո կազմված արձանագրության մասին ազատությունից զրկված անձին հայտարարելու պարագայում (տե՛ս սույն որոշման 18-րդ կետը): Այսինքն՝ սույն հոդվածի իմաստով անձն օրենքով սահմանված կարգով ձերբակալված կարող է համարվել միայն այն դեպքում, երբ նրան ազատությունից զրկելը պատշաճ կերպով արձանագրվել է և ինքը ծանոթացվել է կազմված արձանագրությանը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին մասի տառացի մեկնաբանության արդյունքում պարզվում է, որ օրենսդիրը ժամանակային սահմանափակման (առավելագույնը 3 ժամ) ենթարկել է միայն անձին ձերբակալելու մասին արձանագրության կազմումը, իսկ այդ մասին նրան հայտարարելու համար որևէ ժամկետ չի սահմանել: Այսինքն՝ վերոնշյալ հոդվածների տառացի մեկնաբանությունից հետևում է, որ հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձը մինչդատական վարույթն իրականացնող մարմին բերվելուց անգամ երեք ժամ հետո կարող է ձերբակալվածի կարգավիճակ ձեռք չբերել և, հետևաբար, զրկվել այդ կարգավիճակից բխող իրավական երաշխիքներից, եթե վարույթն իրականացնող մարմինը նրան չհայտարարի կազմված ձերբակալման արձանագրության մասին:

28. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածը պետք է մեկնաբանել 131<sup>1</sup>-րդ հոդվածի լույսի ներքո և ամրագրել, որ այն բանից հետո, երբ անձին քրեական հետապնդման մարմին բերելու պահից երեք ժամվա ընթացքում վարույթն իրականացնող մարմինը կկազմի կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն, այդ մարմինը պարտավոր է անհապաղ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ առավելագույնը մեկ ժամվա ընթացքում դրա մասին հայտարարել ազատությունից զրկված անձին: Նման ժամկետային սահմանափակումը ողջամիտ է և բխում է ազատությունից զրկված անձի սահմանադրական իրավունքների ապահովման անհրաժեշտությունից: Նշված ժամկետային սահմանափակումից միակ իրավաչափ բացառությունը կարող է վերաբերել այն դեպքերին, երբ բերվածի ֆիզիոլոգիական վիճակը՝ ակոհոլի, թմրամիջոցների կամ այլ թմրեցնող նյութերի ազդեցության տակ լինելը կամ այլ համարժեք վիճակը, քրեական հետապնդման մարմնին օբյեկտիվորեն զրկում է ձերբակալման արձանագրությունը բերվածին հայտարարելու հնարավորությունից:

Այսպիսով, եթե քրեական հետապնդման մարմին բերելուց չորս ժամ հետո ազատությունից զրկված անձին ձերբակալման արձանագրությունը չի հայտարարվի, ապա անձն օրենքի ուժով պետք է համարվի ձերբակալված և իրավունք ունենա օգտվել ձերբակալվածի համար օրենքով սահմանված երաշխիքներից, այդ թվում՝ ՀՀ Մահմանադրության 16-րդ հոդվածով ամրագրված՝ 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չկալանավորվելու դեպքում անհապաղ ազատ արձակվելու իրավունքից:

29. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրյալ Գ.Սիքալեյանը ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժին բերման է ենթարկվել 2009 թվականի սեպտեմբերի 8-ին՝ ժամը 03.05-ին, նրան ձերբակալելու մասին արձանագրությունը կազմվել է 2009 թվականի սեպտեմբերի 8-ին՝ ժամը 23.30-ին: Նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը դատարան է ներկայացվել 2009 թվականի սեպտեմբերի 11-ին՝ ժամը 19.00-ի սահման-

ներում, նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրվել է ժամը 21–ի սահմաններում (տե՛ս սույն որոշման 9–րդ կետը): Վերագրյալից երևում է, որ Գ.Միքայելյանը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարան չի տարվել և ոչ էլ ազատ է արձակվել, այսինքն՝ մինչդատական վարույթում ավելի քան 16 ժամ ապօրինի գտնվել է անազատության մեջ:

Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գ.Միքայելյանի ազատության իրավունքը սահմանափակելիս մինչդատական վարույթն իրականացնող մարմնի կողմից չեն ապահովվել օրենքով նախատեսված իրավական երաշխիքները, մասնավորապես, խախտվել է 72 ժամվա ընթացքում դատարան տարվելու կամ ազատ արձակվելու նրա իրավունքը:

*III. Ձերբակալման առավելագույն տևողության խախտման պայմաններում անձին կալանավորելու հնարավորությունը.*

30. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երրորդ իրավական հարցը հետևյալն է. Գ.Միքայելյանի ձերբակալման 72–ժամյա օրինական տևողությունը լրանալուց հետո դատարան ներկայացված՝ նրան կալանավորելու միջնորդությունը կարո՞ղ էր բավարարվել, եթե դատարանը գտնում էր, որ նրան կալանավորելու հիմքերն առկա են:

31. ՀՀ Սահմանադրության 16–րդ հոդվածի համաձայն՝

«(...) Մարդուն կարելի է ազատությունից զրկել կամ նրա ազատությունը սահմանափակել միայն (...) հետևյալ դեպքերում՝

(...)

3) հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում, (...)»:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135–րդ հոդվածի 1–ին մասի՝ խափանման միջոց (այդ թվում՝ կալանավորումը) կարող է կիրառվել «միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1. թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2. խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3. կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4. խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.

5. խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը»:

32. Նախորդ կետում շարադրված իրավանորմերից բխում է, որ անձին կալանավորելու միջնորդությունը կարող է բավարարվել այն դեպքում, երբ միջնորդությունը ներկայացրած քրեական հետապնդման մարմնին հաջողվի դատարանի համար համոզիչ հիմնավորել.

ա) անձին մեղսագրվող հանցագործությանը նրա առնչությունը (տվյալ հանցագործության կատարման մեջ հիմնավոր կասկածը) և

բ) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի առկայությունը:

Այսպիսով, կալանավորման միջնորդությունը նախորդած ձերբակալման ընթացակարգի (ներառյալ՝ ժամկետի վերաբերյալ պահանջի) խախտումը կալանավորման միջնորդությունը մերժելու հիմք չէ, եթե հանցագործությանը մեղադրյալի առնչությունը և կալանավորման հիմքերի առկայությունը դատարանը համարում է հիմնավորված:

Վճռաբեկ դատարանի այս իրավական դիրքորոշումը բխում է «ձերբակալման» և «կալանավորման» ինստիտուտների միջև փոխապայմանավորվածության բացակայության և դրանցից յուրաքանչյուրի ինքնուրույնության մասին Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումից (տե՛ս սույն որոշման 16-րդ կետը):

33. Համաձայն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի՝ «Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման գոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման»:

Համաձայն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի՝ «Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատությունից ապօրինի գրկման կամ ապօրինի խուզարկության դեպքում օրենքով սահմանված հիմքերով և կարգով պատճառված վնասի հատուցման»:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»:

34. Նախորդ կետում շարադրված մարդու հիմնարար իրավունքները, որպես անմիջականորեն գործող իրավունք, կիրառելու արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ձերբակալման օրինականությունը չի կարող դուրս մնալ դատական վերահսկողության շրջանակից, և հարկադրանքի այդ միջոցի կիրառման ընթացքում թույլ տրված խախտումները պետք է արժանանան համարժեք իրավական գնահատականի և հանգեցնեն համարժեք իրավական հետևանքների: Հակառակ դեպքում կխախտվի ձերբակալվածի՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:

Ուստի կալանավորման միջնորդությունը քննելիս ձերբակալման ընթացակարգի խախտման փաստ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է ձեռնարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան միջոցներ: Ձերբակալման առավելագույն ժամկետի խախտման պարագայում այդ միջոցները պետք է հանգեն հետևյալին.

ա) 72-ժամյա ժամկետի խախտման փաստի արձանագրում,

բ) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360.1 հոդվածի հիման վրա լրացուցիչ որոշման կայացում, կամ, խախտումն ակնհայտ և կոպիտ լինելու դեպքում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դատախազին դիմում,

գ) անօրինական ձերբակալման համար փոխհատուցում ստանալու պահանջով ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան դիմելու ընթացակարգի պարզաբանում:

35. Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի՝

«1. Ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խախտման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու, վարչական տույժի ենթարկելու հետևանքով պատճառված վնասը, օրենքով սահմանված կարգով, լրիվ ծավալով հատուցում է Հայաստանի Հանրապետությունը՝ անկախ հետաքննության, նախաքննության, դատախազության և դատարանի պաշտոնատար անձանց մեղքից:

2. Քաղաքացուն (...) հետաքննության, նախաքննության, դատախազության մարմինների ապօրինի գործունեությամբ պատճառված վնասը, որը չի հանգեցրել սույն հոդվածի 1-ին կետում նախատեսված հետևանքներին, հատուցվում է սույն օրենսգրքի 1063 հոդվածում նախատեսված հիմքերով եւ կարգով:

(...)»:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1063-րդ հոդվածի՝

«Քաղաքացուն (...) պետական մարմինների, (...) կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողություններով (անգործությամբ) (...) պատճառված վնասը հատուցում է Հայաստանի Հանրապետությունը (...)»:

36. Սույն որոշման 33-րդ կետի «գ» ենթակետի արդյունավետ կենսագործումն ապահովելու նպատակով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ձերբակալման ընթացակարգի խախտման հիմքով հայցի քննությունը պետք է իրականացվի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի հիման վրա: Այլ կերպ՝ անօրինական ձերբակալման գոհը պետք է օժտված լինի փոխհատուցում ստանալու իրավունքով՝ անկախ համապատասխան հետաքննության, նախաքննության, դատախազության և դատարանի պաշտոնատար անձանց մեղքից: Հակառակ դեպքում, փոխհատուցման իրավունքը կարող է վերածվել պատրանքային և վերացական իրավունքի, քանի որ անօրինական ձերբակալման գոհի վրա անարդարացիորեն կդրվի ապացուցման լրացուցիչ բեռ:

Միևնույն ժամանակ, այդ հայցի քննությունը և լուծումը պետք է համապատասխանի ինչպես ՀՀ ներպետական օրենսդրությանը, այնպես էլ ՀՀ միջազգային պայմանագրերին և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներին:

37. Նախորդ կետում շարադրված հիմնավորումները պայմանավորված են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ձևավորված այն դիրքորոշմամբ, որ ազատությունից անօրինական զրկված անձի փոխհատուցման իրավունքը պետք է ապահովված լինի որոշակիության բավարար աստիճանով (*Սաքքըր և Ուրիշներն ընդդեմ Թուրքիայի (Sakik and Others v. Turkey)* գործով

վճիռ, 1997թ. նոյեմբերի 27, գանգատներ թիվ 23878/94 և այլն, կետ 60, Ն.Ս.–ն ընդդեմ *Իտալիայի (N.C. v. Italy)* գործով վճիռ, 2002թ. դեկտեմբերի 18, գանգատ թիվ 24952/94, կետ 52, *Ռեհբոկն ընդդեմ Սլովենիայի (Rehbock v. Slovenia)* գործով վճիռ, 2000թ. նոյեմբերի 11, գանգատ թիվ 29462/95, կետ 92):

38. Սույն որոշման 32–րդ կետում շարադրված իրավական դիրքորոշումը սույն գործի փաստերի նկատմամբ կիրառելու արդյունքում Վճռաբեկ դատարանն իրավաչափ չի համարում Գ.Միքայելյանին անհապաղ ազատ արձակելու մասին բողոքաբերի փաստարկումը այն հիմքով, որ Գ.Միքայելյանին կալանավորելու մասին որոշում կայացնելու պահին նրա ձերբակալման ժամկետը լրացած է եղել (տե՛ս սույն որոշման 13–րդ կետը):

Ավելին, գործի փատական հանգամանքների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առերևույթ հիմնավորված են եղել թե՛ իրեն մեղսագրվող հանցագործությանը Գ.Միքայելյանի առնչությունը և թե՛ կալանավորման հիմքերը: Մասնավորապես, որպես մեղադրյալի առնչությունը հիմնավորող ծանրակշիռ փաստարկ՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները հաշվի են առել այն, որ առերևույթ գողության կատարելիս Գ.Միքայելյանը բռնվել է ենթադրյալ գողության վայրի բնակիչների կողմից: Իսկ որպես կալանավորման հիմք՝ ստորադաս դատարանները հաշվի են առել այն, որ Գ.Միքայելյանը ենթադրյալ հանցանքը կատարել է փորձաշրջանի ընթացքում (տե՛ս սույն որոշման 6–րդ և 8–րդ կետերը), ինչը ծանրակշիռ փաստարկ է նոր հանցանք կատարելու հնարավորության մասին ողջամիտ ենթադրություն կատարելու համար:

Հետևաբար վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

39. Սիւնույն ժամանակ, սույն որոշման 34–րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշման հիման վրա, Վճռաբեկ դատարանը (ա) ճանաչում է Գ.Միքայելյանի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտման փաստը՝ նրան, առանց իրավական հիմքի, 72 ժամից շուրջ 16 ժամով ավելի երկար անազատության մեջ պահելու մասով (տե՛ս սույն որոշման 29–րդ կետը), (բ) նշված խախտման փաստով կայացնում է լրացուցիչ որոշում՝ այն ուղարկելով իրավասու մարմիններին, ինչպես նաև (գ) արձանագրում է, որ Գ.Միքայելյանն ունի ձերբակալման ընթացակարգի խախտման համար քաղաքացիական դատավարության կարգով հատուցում ստանալու իրավունք՝ հաշվի առնելով սույն որոշմամբ շարադրված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92–րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403–406–րդ, 419–րդ, 422–424–րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Գագիկ Գառնիկի Միքայելյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը երկու ամիս ժամկետով ընտրելու մասին Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքերի ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի սեպտեմբե-

րի 11–ի որոշումը օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 2–ի որոշման դեմ մեղադրյալ Գ.Միքայելյանի պաշտպան Ի.Պետրոսյանի բերած վճռաբեկ բողոքը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

41.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության

ԵԱԶԴ/0078/01/09

վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵԱԶԴ/0078/01/09

նախագահող դատավոր՝ Ա. Հովհաննիսյան  
դատավորներ՝ Ա. Դանիելյան, Ե. Դարբինյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝*

Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈԳՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

2009 թվականի դեկտեմբերի 18–ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով մեղադրողի վճռաբեկ բողոքը Գավիթ Ռոբերտի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112–րդ հոդվածի 1–ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 25–ի որոշման դեմ,

**Պ Ա Ր Ջ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2009թ. մարտի 8–ին դիտավորությամբ մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելու փաստի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 112–րդ հոդվածի 1–ին մասով հարուցվել է թիվ 14107509 քրեական գործը:

2. 2009թ. մայիսի 21–ին Գավիթ Հովհաննիսյանը ձերբակալվել է:

2009թ. մայիսի 23–ի որոշմամբ Գ.Հովհաննիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112–րդ հոդվածի 1–ին մասով:



3. 2009թ. հունիսի 18–ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ–Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ–Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. հուլիսի 15–ի դատավճռով Գ.Հովհաննիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112–րդ հոդվածի 1–ին մասով և դատապարտվել է ազատազրկման 3 /երեք/ տարի 1 /մեկ/ ամիս ժամկետով:

4. Գ.Հովհաննիսյանի պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009թ. սեպտեմբերի 25–ի որոշմամբ փոփոխել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ–Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. հուլիսի 15–ի դատավճիռը: Գ.Հովհաննիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112–րդ հոդվածի 1–ին մասով և դատապարտվել ազատազրկման 3 /երեք/ տարի 1 /մեկ/ ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70–րդ հոդվածի հիման վրա Գ.Հովհաննիսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան 2 /երկու/ տարի ժամկետով:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. սեպտեմբերի 25–ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել գործով մեղադրողը:

5. Վճռաբեկ դատարանը 2009թ. դեկտեմբերի 1–ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ուղարկվել:

### **Գործի փաստական հանգամանքները**

6. Գ.Հովհաննիսյանը դատապարտվել է այն բանի համար, որ հանդիսանալով ՀՀ ՊՆ 25836 զորամասի ժամկետային զինծառայող, կոչումով շարքային, 2009թ. մարտի 7–ին՝ ժամը 17<sup>00</sup>–ի սահմաններում, առանց համապատասխան թույլտվության, ինքնակամ թողել է զորամասը և գնացել Երևան՝ Դավիթաշեն թաղամասի ռեստորաններից մեկում իր ընկեր Էդուարդի ծննդյան տարեդարձը նշելու, որտեղ օգտագործել է ռզելից խմիչք: Ծննդյան արարողությունից վերադառնալիս իր ընկերոջ՝ Հովիկի ՎԱԶ–2106 մակնիշի ավտոմեքենայով ժամը 22<sup>00</sup>–ի սահմաններում Երևանի Վրացական և Մամիկոնյաց փողոցների խաչմերուկի վրա ավտոմեքենայի հեռարձակ լույսերով երթևեկելու պատճառով նա փճաբանության մեջ է մտել հանդիպակամ ուղղությունից եկող «Ֆրի–Դեյ» տաքսի ծառայության վարորդ Գևորգ Կարապետյանի հետ, որի ժամանակ դանակով դիտավորությամբ հարվածել է նրա կրծքավանդակի աջ կեսի հետին մակերեսին և վերջինիս առողջությանը պատճառել կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս: Դրանից հետո Գ.Հովհաննիսյանը դեպքի վայրից դիմել է փախուստի և վերադարձել զորամաս:

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

7. Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքի հեղինակը գտնում է, որ վերաքննիչ դատարանի որոշումը պատժի մասով անհիմն է, քանի որ նրա նկատմամբ նշանակված պատիժը չափազանց մեղմ է, չի համապատասխանում հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանին և բնույթին, նրա անձը բնութագրող տվյալներին, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներին: Դատարանը, ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70–րդ հոդվածի հիման վրա նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով, անտեսել է մի շարք հանգամանքներ, մասնավորապես՝ Դ.Հովհաննիսյանն առանց համապատասխան թույլտվության ինքնակամ թողել է իր ծառայության վայրը, կրել է դանակ, որը բնութագրում է նրան որպես վտանգավորություն ներկայացնող անձնավորություն: Առաջին ատյանի դատարանը որպես Դ.Հովհաննիսյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք է դիտել հանցանքն ակոհոլի ազդեցության տակ կատարելը, սակայն վերաքննիչ դատարանն անհիմն պատճառաբանությամբ ամբաստանյալի կողմից ակոհոլի օգտագործումը չի դիտել որպես Դ.Հովհաննիսյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ բողոք բերած անձը գտել է, որ վերաքննիչ դատարանն առանց հիմնավոր պատճառաբանությունների ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70–րդ հոդվածի հիման վրա նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով, խախտել է կատարած արարքի և նշանակված պատժի համաչափության վերաբերյալ նյութական իրավունքի /ՀՀ քրեական օրենսգրքի 10–րդ, 48–րդ, 61–րդ հոդվածներ/, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԲ–124/07 որոշման պահանջները, խաթարել պատժի նպատակները, խախտել սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Ելնելով վերոգրյալից՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. սեպտեմբերի 25–ի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ–Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009թ. հուլիսի 15–ի դատավճռին:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ.

8. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Դ.Հովհաննիսյանի կողմից հանցանքն ակոհոլի ազդեցության տակ կատարելը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը կարո՞ղ էր արդյոք չհամարել նրա արարքը ծանրացնող հանգամանք և նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել:

9. ՀՀ քրեական օրենսգրքի 48–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված ան-

ծին, ինչպես նաև կանխել հանցագործությունները: Սոցիալական արդարությունը վերականգնելու նպատակը բխում է արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքն ամրագրած ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի բովանդակությունից: Այն սահմանում է, որ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի, համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար: Սոցիալական արդարության վերականգնումը հնարավոր է, եթե հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակվի այնպիսի պատիժ, որն անհրաժեշտ ու բավարար է նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար:

10. Պատիժ նշանակելու արդարության սկզբունքը դրսևորվում է օրենքով նախատեսված մի շարք պահանջներով: ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պատժի տեսակը և չափը որոշվում է հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով: Պատիժը համարվում է արդարացի, եթե դատարանը ճիշտ է գնահատում գործի բոլոր հանգամանքները, անձին բնութագրող բոլոր տվյալները և քրեական օրենքով նախատեսված պահանջներից ելնելով՝ հանցագործության մեջ մեղավոր անձի նկատմամբ նշանակում է այնպիսի պատիժ, որն անհրաժեշտ է և բավարար այդ անձին ուղղելու և նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու համար:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

Փաստորեն պատիժը կարող է պայմանականորեն չկիրառվել, եթե առկա է դատարանի համոզվածությունը, վստահությունն առանց ռեալ (իրական) պատիժ կրելու դատապարտյալի ուղղվելու հնարավորության մասին: Դատարանը նման հետևության հանգում է միայն օբյեկտիվ գոյություն ունեցող տվյալների վերլուծության հիման վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում են պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Չնայած պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել, դատարանը պարտավոր է, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, հաշվի առնել նաև հանցագործության՝ հան-

րության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը: Դատարանի կողմից նշանակվող պատժի արդարացիության հիմնական պահանջն այն է, որ պատիժը պետք է համապատասխանի հանցագործության վտանգավորության աստիճանին ու բնույթին:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու համար կարևոր նշանակություն ունեն հանցագործության կատարման հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, մեղքի ձևը, հանցավորի կողմից այդ հանցագործության հանրորեն վտանգավոր հետևանքները նախատեսելու բնույթն ու աստիճանը:

Վերը նշված հարցերի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն իր դիրքորոշումն արտահայտել է նաև ՎԲ–192/07, ՎԲ–50/07, ՎԲ–201/07, ԱՎԴ-2/0059/01/08 որոշումներում:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 63–րդ հոդվածի 1–ին մասի 14–րդ կետի համաձայն՝ պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք է հանցանքն ալկոհոլի ազդեցության տակ կատարելը: Նույն հոդվածի 2–րդ մասը սահմանում է, որ դատարանը, ելնելով հանցագործության բնույթից, կարող է ծանրացնող չհամարել սույն հոդվածի առաջին մասի 14–րդ կետում մատնանշված հանգամանքը:

Գործի նյութերից երևում է, որ առաջին աստիճանի դատարանը հանցանքն ալկոհոլ օգտագործած վիճակում կատարելը համարել է պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք:

Վերաքննիչ դատարանը, «հաշվի առնելով ամբաստանյալի անձը և գործի հանգամանքները», Գ.Հովհաննիսյանի կողմից ալկոհոլի օգտագործումը չի դիտել որպես «քրեական պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող պայման»:

14. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 63–րդ հոդվածի 1–ին մասի 14–րդ կետով նախատեսված՝ հանցանքն ալկոհոլի ազդեցության տակ կատարելը ոչ թե պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող պայման է, այլ ծանրացնող հանգամանք:

Բանն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ գործով հանցանքն ալկոհոլի ազդեցության տակ կատարելը դատարանը ծանրացնող հանգամանք պետք է համարի միայն այն դեպքում, երբ ալկոհոլի ազդեցությունը հանդիսացել է հանցանքը կատարելուն նպաստող պայման: Ինչ վերաբերում է պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներին, ապա դրանք հնարավորություն են տալիս պատկերացում կազմել հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի և բնույթի, հանցավորի անձնավորության մասին և ամեն մի կոնկրետ գործով անհատականացնել պատիժը: Պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների ցանկի վերլուծությունը ցույց է տալիս, որ քննարկվող հանգամանքները վերաբերում են ինչպես հանցագործությանը, այնպես էլ հանցավորի անձնավորությանը կամ բնութագրում են հանցագործությունն ու հանցավորի անձնավորությունը միաժամանակ: Այդ պատճառով էլ պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները պետք է դիտարկել որպես հանցակազմի սահմաններից դուրս հանգամանքներ, որոնք ուղղակի կամ անուղղակի վերաբերում են հանցագործությանը կամ հանցավորի անձնավորությանը, բարձրացնում կամ իջեցնում են հասարակական վտանգավորության աստիճանը և ազդում պատժի վրա:

15. ՀՀ քրեական օրենսգրքի 63–րդ հոդվածի 2–րդ մասի բովանդակությունից երևում է, որ հանցանքն ալկոհոլի ազդեցության տակ կատարելը դատարանը կարող է ծանրացնող հանգամանք չհամարել՝ ելնելով հանցագործության բնույթից: Ուստի այդ հարցը լուծելիս դատարանը պարտավոր է հանգամանորեն պարզել և հաշվի առնել, թե հանցավոր արարքն իր բնույթով կապվա՞ծ է արդյոք հանցանք կատարած անձի՝ ալկոհոլ օգտագործած լինելու հետ:

16. Հանցագործության՝ հանրության համար վտանգավոր բնույթն իր մեջ ներառում է ոտնձգության օբյեկտը, մեղքի ձևերը և կատարված հանցագործության ծանրության տեսակը (ՀՀ քրեական օրենսգրքի 19–րդ հոդված): Այդ հատկանիշների համակարգի, դրանց փոխադարձ կապի պարզումը հնարավորություն է տալիս հստակ որոշել հանցավոր արարքի որակական բնութագիրը, ճիշտ որակել արարքը և պայմաններ ստեղծել պատժի անհատականացման համար:

17. Փաստորեն հանցագործության՝ հանրության համար վտանգավոր բնույթում իր արտացոլումն է գտնում արարքի որակական կողմը և այն իր մեջ չի ներառում կատարվածի կոնկրետ հանգամանքները: Հանցագործության բնույթը կախված չէ նաև հանցավորի անձից:

Սակայն վերաքննիչ դատարանը, վկայակոչելով ՀՀ քրեական օրենսգրքի 63–րդ հոդվածի 2–րդ մասի դրույթները, Գ.Հովհաննիսյանի կողմից հանցանքն ալկոհոլի ազդեցության տակ կատարելը չի համարել պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք՝ «հաշվի առնելով ամբաստանյալի անձը և գործի հանգամանքները», որոնք կապ չունեն հանցագործության բնույթի հետ:

Փաստորեն վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 63–րդ հոդվածի 2–րդ մասը, որը չի համապատասխանում դրա իսկական իմաստին, որով թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397–րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում. կիրառել է այն օրենքը, որը չպետք է կիրառվեր:

18. Գործի նյութերով հիմնավորվել է, որ գործամասն ինքնակամ թողած ժամկետային զինծառայող Գ.Հովհաննիսյանն ալկոհոլ օգտագործած վիճակում աննշան առիթով՝ ավտոմեքենայի հեռարձակ լույսերով երթևեկելու պատճառով, վիճաբանության մեջ է մտել տաքսի ծառայության վարորդի հետ, իր մոտ եղած դանակով ուղղակի դիտավորությամբ հարվածել է վերջինիս կենսականորեն կարևոր օրգանին՝ կրծքավանդակի աջ կեսի հետևի մակերեսին՝ առողջությանը պատճառելով կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս, որից հետո դեպքի վայրից դիմել է փախուստի (տես սույն որոշման 6–րդ կետը):

19. ՀՀ քրեական օրենսգրքի 112–րդ հոդվածով նախատեսված արարքը մարդու առողջության դեմ ուղղված հանցագործություններից ամենավտանգավորն է: ՀՀ քրեական օրենսգրքի 19–րդ հոդվածի համաձայն՝ այն դասվում է ծանր հանցագործությունների շարքը: Անձի կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունների մեծ մասը կատարվում է ալկոհոլի ազդեցության տակ, ընդ որում, որպես կանոն, այդ վիճակը նպաստում է նման հանցագործությունների կատարմանը: Սույն գործի փաստական տվյալները վկայում են այն մասին, որ ալկոհոլի ազդեցությունը հանդիսացել է Գ.Հովհաննիսյանի կողմից նշված հանցանքը կատարելուն նպաստող պայման:

Այս պայմաններում խոստովանական ցուցմունքներ տալը, բարձրագույն կրթություն ունենալը, նախկինում դատված չլինելը, 2008թ. հուլիսին ամբաստանյալի մոր մահանալը չեն վկայում այն հասարակական վտանգավորության բացակայության մասին, որը բնորոշ է Գ.Հովհաննիսյանի կատարած հանցագործությանը: Դրանք չեն նվազեցնում ամբաստանյալի կատարած արարքի՝ հանրության համար վտագավորության աստիճանը և Գ.Հովհաննիսյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու օբյեկտիվ հիմք չեն:

20. Փաստորեն վերաքննիչ դատարանը, հաշվի չառնելով գործի վերը նշված հանգամանքները, պատիժ նշանակելիս Գ.Հովհաննիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70–րդ հոդվածի կիրառմամբ ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չի կիրառել, ինչն անարդարացի է ակնհայտ մեղմ լինելու պատճառով, չի համապատասխանում նրա կատարած հանցագործության ծանրությանը և ամբաստանյալի անձին:

21. ՀՀ վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանը սխալ հետևության է հանգել Գ.Հովհաննիսյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով ՀՀ քրեական օրենսգրքի 48–րդ հոդվածով սահմանված պատժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործության կանխմանը հասնելու հնարավորության մասին:

22. Վերաքննիչ դատարանը, ՀՀ քրեական օրենսգրքի 70–րդ հոդվածի հիման վրա Գ.Հովհաննիսյանի նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չկիրառելով, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի նորմերի՝ 5–րդ, 10–րդ և 61–րդ հոդվածներով սահմանված օրինականության, արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտում, որը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397–րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358–րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող անօրինական և չիմնավորված որոշման կայացմանը:

23. Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները, որոնք ազդել են պատժի մասով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397–րդ, 398–րդ և 406–րդ հոդվածների հիման վրա վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք են:

24. Քանի որ գործի նյութերով հերքվում են վերաքննիչ դատարանի որոշման մեջ նշված՝ Գ.Հովհաննիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70–րդ հոդվածը կիրառելու մասին փաստարկները, և հաստատվում են պատիժ նշանակելու վերաբերյալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ–Զեյթուն համայնքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավճռի օրինական, հիմնավորված ու պատճառաբանված լինելը, անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419–րդ հոդվածի 1–ին մասի 6–րդ կետի հիման վրա բեկանել վերաքննիչ դատարանի դատական ակտը և օրինական ուժ տալ առաջին ատյանի դատարանի դատավճռին:

25. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92–րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական

դատավարության օրենսգրքի 21–րդ, 403–406–րդ, 419–րդ, 422–424–րդ հոդվածներով՝  
Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դավիթ Ռոբերտի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112–րդ հոդվածի 1–ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 25–ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ–Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. հուլիսի 15–ի դատավճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն  
Դատավորներ՝ ստորագրություններ*

42.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ՀՅԲԲԴ-2/0144/01/09

ՀՅԲԲԴ-2/0144/01/09

նախագահող դատավոր՝ Ժ.Հովսեփյան  
դատավորներ՝ Ռ.Ազարյան, Հ.Տեր-Աղամյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈԳՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Կ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ պաշտպան* Ա. ՀԱԿՈԲՅԱՆԻ

18 դեկտեմբերի 2009 թվական

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սուրեն Կարոյի Նալբանդյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2009 թվականի սեպտեմբերի 23-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի բերած վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2008 թվականի օգոստոսի 5-ին հարուցվել է թիվ 19120008 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով:



2008 թվականի օգոստոսի 7-ին Սուրեն Նալբանդյանը ձերբակալվել է:

2008 թվականի օգոստոսի 9-ի որոշմամբ Ս.Նալբանդյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 3-րդ մասով:

2008 թվականի նոյեմբերի 5-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Հյուսիսային քրեական դատարան:

2009 թվականի փետրվարի 5-ին ընդունված «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ 2009 թվականի փետրվարի 27-ին քրեական գործն ըստ մեղադրանքի Սուրեն Նալբանդյանի ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 3-րդ մասով փոխանցվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան)՝ ըստ ընդդատության:

2. Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հունիսի 26-ի դատավճռով Սուրեն Նալբանդյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 3-րդ մասից վերադրակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 /երկու/ տարի ժամկետով:

3. Մեղադրող Մ.Խաչատրյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2009 թվականի սեպտեմբերի 23-ի որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքը՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հունիսի 26-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 23-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանը:

2009 թվականի դեկտեմբերի 1-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Պաշտպան Ա.Հակոբյանը 2009 թվականի դեկտեմբերի 18-ին ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան:

**Գործի փաստական հանգամանքները և Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. Նախաքննության ընթացքում Ս.Նալբանդյանին մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ «2008 թվականի հուլիսի 25-ին՝ ժամը 16:00-ի սահմաններում, Սուրեն Նալբանդյանը նախորդ օրվա, իր ընկեր Օնիկ Օդաչյանին և նրա ընկերուհուն հաշտեցնելու, խոսակցության ընթացքի մասին տեղեկանալու նպատակով, ակնոկոլ օգտագործած վիճակում, գնացել է իրենց ընդհանուր ծանոթ Անահիտ Ռոմյանի՝ Վանաձոր քաղաքի Չուխաջյան թիվ 30/41 հասցեի բնակարան:

Այնուհետ, տեսնելով տանը միայնակ գտնվող անչափահաս, տասնչորս տարին չլրացած, 1996 թվականին ծնված Մարիամ Ռոմյանին և տեղեկանալով, որ նրա մայր Անահիտ Ռոմյանը գնացել է անտառ և տևական ժամանակ չի վերադառնալու, ջուր խմելու պատրվակով մտել է հիշյալ բնակարան, ապա իր սեռական կրքերին խաթար-

ված ձևով հագուրդ տալու շարժառիթով, բռնելով Մարիամ Ռոմյանի ձեռքերը, վերջինիս գցել է մահճակալին, պռակել նրա վրա, համբուրել դեմքը և մարմնի տարբեր մասերը՝ սեքսուալ բնույթի գործողություններ կատարել Մարիամ Ռոմյանի նկատմամբ, որի ընթացքում վերջինիս կողմից իր ձեռքը կծելուց և օգնություն կանչելուց հետո միայն հեռացել է»:

6. 2008 թվականի նոյեմբերի 5-ին հաստատված մեղադրական եզրակացության նկարագրական-պատճառաբանական մասում, ի լրումն սույն որոշման 5-րդ կետում նշված փաստական հանգամանքների, նշվել է նաև հետևյալը. «Մարիամ Ռոմյանի կողմից Մուրեն Նալբանդյանի ձեռքը կծելուց հետո նրան հաջողվել է փախչել հյուրասենյակին կից նիշա, սակայն Մուրեն Նալբանդյանը, ցանկանալով շարունակել սեքսուալ բնույթի գործողությունները, գնացել է Մարիամ Ռոմյանի հետևից նիշա, նրան կրկին գցել է նիշայում գտնվող մահճակալին, իջեցրել իր անդրավարտիքի «ցեպը», հանել առնանդամը, ապա Մարիամ Ռոմյանին նստեցրել է իր վրա և փորձել հանել նրա անդրավարտիքը: Մարիամ Ռոմյանի կողմից Մուրեն Նալբանդյանի դեմքը ճանկռելուց և դիմադրություն ցույց տալուց հետո, հաջողվել է փախչել միջանցք, բացել բնակարանի մուտքի դուռը, որից վախենալով՝ Մուրեն Նալբանդյանը հեռացել է բնակարանից»: Սակայն մեղադրական եզրակացության եզրափակիչ մասում, ինչպես և որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման մեջ նշված փաստական հանգամանքները չեն ներառվել:

7. Նախաքննության և դատաքննության ընթացքում Ս.Նալբանդյանը պաշտպանի մասնակցությամբ հարցաքննվել է սույն որոշման 6-րդ կետում շարադրված փաստական հանգամանքների շուրջ (տե՛ս քրեական գործ հատոր 1-ին, էջեր 47-49, Առաջին ատյանի դատարանի դատական նիստի արձանագրությունը և ձայնագրառումը):

8. 2009 թվականի հունիսի 22-ին՝ Առաջին ատյանի դատարանում գործի դատաքննության ընթացքում, մեղադրող Մ.Խաչատրյանը որոշումներ է կայացրել Ս.Նալբանդյանին առաջադրված մեղադրանքի ծավալին լրացում կատարելու և Ս.Նալբանդյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, որոնց համաձայն՝ նոր մեղադրանքի ծավալի մեջ ներառվել է Ս.Նալբանդյանին վերագրվող՝ սույն որոշման 6-րդ կետում շարադրված երկրորդ դրվագը, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 3-րդ մասով:

Մեղադրողը, նկատի ունենալով, որ նշված հանգամանքը նախաքննության մարմնի կողմից չի նշվել մեղադրանքի ծավալում, և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերով՝ այդ որոշումները միջնորդությամբ ներկայացրել է դատարան:

Նույն դատական նիստում հիշյալ որոշումների պատճենները տրամադրվել են պաշտպանության կողմին, և դրանց ծանոթանալու նպատակով դատական նիստը հետաձգվել է:

9. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռի նկարագրական մասում՝ գործի դատավարական նախապատմության մեջ, ընդգրկել է ծավալն ընդլայնված նոր մեղադրանքը՝ միաժամանակ ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 3-րդ մասով Ս.Նալբանդյանին առաջադրված մեղադրանքը վերաորակելով ՀՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մասով:

10. Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Ս.Նալբանդյանին մեղսագրված արարքի որակման առումով բերված մեղադրողի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը, մեղադրողի վերաքննիչ բողոքը մերժել է՝ պատճառաբանելով, որ բացակայել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերով նախատեսված պայմանները՝ ամբաստանյալին երկրորդ դրվագով մեղսագրվող արարքը հայտնի է եղել դեռևս նախաքննության ընթացքում և ի հայտ չի եկել դատաքննության ընթացքում, և ամբաստանյալ Ս.Նալբանդյանին մեղսագրված արարքը նկարագրել է միայն առաջին դրվագի սահմաններում՝ նշելով, որ կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի, գործի դատաքննության սահմանների առումով «մեղադրանք» հասկացությունը ներառում է նաև արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստերը:

Անդրադառնալով Ս.Նալբանդյանի արարքի որակման հարցին, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից Ս.Նալբանդյանի արարքին տրվել է ճիշտ քրեաիրավական որակում:

### **Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

11. Բողոք բերած անձը փաստարկել է, որ առկա են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հիմքերը, այն է՝ Վճռաբեկ դատարանի կողմից սույն գործով դատական ակտի կայացումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատական սխալը կարող է առաջացնել ծանր հետևանքներ:

12. Բողոքում նշվել է, որ Առաջին ատյանի դատարանը Ս.Նալբանդյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 3-րդ մասից ՀՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մասով սխալ է վերաորակել, իսկ Վերաքննիչ դատարանն անհիմն կերպով համաձայնվել է Առաջին ատյանի դատարանի կողմից տրված քրեաիրավական որակմանը, քանի որ մինչդատական վարույթում ձեռք բերված և դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցներով հիմնավորվել է, որ Ս.Նալբանդյանի գործողությունները ոչ թե ուղղված են եղել անչափահաս Մ.Ռոմյանի սեռական բնագոյր գրգռելուն, նրա մոտ անառողջ սեռական հետաքրքրություն առաջացնելուն կամ այլ անառակաբարո նպատակներին, այլ եղել են տուժողի կամքին հակառակ սեռական բնույթի բռնի գործողություններ, որի դիտավորությունն ուղղված է եղել սեռական կրքերին խաթարված ձևով հագուրդ տալուն:

13. Բողոքի հեղինակը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանը մեղադրողի կողմից Առաջին ատյանի դատարանում գործի դատաքննության ընթացքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերով սահմանված կարգով 2009 թվականի հունիսի 22-ին առաջադրված մեղադրանքի ծավալը լրացնելու մասին որոշում կայացնելը և Ս.Նալբանդյանին վերագրվող երկրորդ դրվագով նոր մեղադրանք առաջադրելը համարել է մեղադրանքի սահմաններից դուրս, անօրինական և անհիմն այն դեպքում, երբ Առաջին ատյանի դատարանն անդրադարձել է նոր մեղադրանքին և

գործի դատավարական նախապատմության մեջ ընդգրկել այն: Նշված դրվագը ներառված է եղել նաև քրեական գործով կազմված մեղադրական եզրակացության նկարագրական-պատճառաբանական մասում, դատաքննության ընթացքում հետազոտվել և դատավճռով հաստատված հանգամանք է համարվել:

Համաձայն բողոքի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդվածի 3-րդ մասը հնարավորություն է տալիս դատարանում մեղադրանքը փոխել առանց լրացուցիչ քննչական գործողությունների կատարման՝ դատարանում հետազոտված ապացույցների հիման վրա: Մեղադրանքի փաստական հանգամանքների փոփոխությունը հիմք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով մեղադրանքը փոխելու որոշում կայացնելու համար, եթե այդ հանգամանքների փոփոխությունը առաջացնում է հանցակազմի հատկանիշների փոփոխություն: Դատական քննության ընթացքում փաստական հանգամանքների փոփոխությունը կարող է հիմք հանդիսանալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով մեղադրանքը փոփոխելու մասին որոշում կայացնելու համար, եթե փաստական հանգամանքների փոփոխումը կապված է նաև միևնույն հանցագործության այլ փուլերի կամ դրվագների հետ: Նշված հոդվածում «այլ հանցանք» հասկացությունը անհրաժեշտ է հասկանալ ոչ միայն քրեական օրենսգրքի հոդվածի կամ հոդվածի մասերի փոփոխություն, այլ ցանկացած փոփոխություն, որը հանգեցնում է հանցակազմի դիսպոզիցիայի բովանդակության փոփոխության:

14. Ըստ բողոք բերած անձի՝ անհիմն է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ դատաքննության ընթացքում նոր մեղադրանք առաջադրելով՝ խախտվել է ամբաստանյալի պաշտպանության իրավունքը, քանի որ ինչպես մինչդատական քննության, այնպես էլ դատաքննության ընթացքում Ս.Նալբանդյանն իր պաշտպանի մասնակցությամբ հարցաքննվել է գործի հանգամանքների շուրջ, որում ներառված է եղել նաև իրեն մեղսագրվող երկրորդ դրվագը:

15. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հունիսի 26-ի դատավճիռը և Վերաքննիչ դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 23-ի որոշումը բեկանել և Ս.Նալբանդյանի վերաբերյալ քրեական գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

16. Նախքան վճռաբեկ բողոքում բարձրացված հարցերին անդրադառնալով՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում դիրքորոշում հայտնել սույն որոշման 12-րդ, 13-րդ և 14-րդ կետերում բարձրացված հարցերի միջև առկա կապի վերաբերյալ: Այսպես, բողոքում բարձրացված առաջին հարցը վերաբերում է ամբաստանյալ Ս.Նալբանդյանի արարքի քրեաիրավական որակման ընթացքում Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված նյութական իրավունքի ենթադրյալ խախտմանը (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը): Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ և երրորդ հարցերը համապատասխանաբար վերաբերում են նրանց, թե արդյո՞ք մեղադրողն իրավասու էր Ս.Նալբանդյանին առաջադր-

ված մեղադրանքը դատարանում փոփոխել՝ ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերով, և դատաքննության ընթացքում նոր մեղադրանքի առաջադրմամբ խախտվել<sup>2</sup> է արդյոք Ս.Նալբանդյանի պաշտպանության իրավունքը (տե՛ս սույն որոշման 13-րդ և 14-րդ կետերը), այսինքն՝ փաստարկվում է դատավարական իրավունքի խախտման առկայությունը:

Բողոքաբերի կողմից վկայակոչված նյութական և դատավարական իրավունքի խախտումները փոխկապակցված են. նյութական իրավունքի ենթադրյալ խախտումը կարող է հետևանք լինել Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի ենթադրյալ խախտման, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջին հերթին անհրաժեշտ է քննության առնել Վերաքննիչ դատարանի կողմից սույն գործի քննության ժամանակ թույլ տրված դատավարական իրավունքի ենթադրյալ խախտման հարցը:

### *1. Դատարանում մեղադրանքը փոխելը*

17. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու սահմաններն ամրագրած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդվածի 3-րդ մասն արդյո՞ք պետք է մեկնաբանվի նույն հոդվածի 1-ին մասի համատեքստում:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջադրվել»:

Արթուր Սերոբյանի գործով կայացված որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «(...) Թե՛ առաջին ատյանի դատարանը, թե՛ վերաքննիչ դատարանը և թե՛ վճռաբեկ դատարանը ամբաստանյալի կամ դատապարտյալի նկատմամբ գործը քննելիս և լուծելիս չեն կարող դուրս գալ նրան առաջադրված մեղադրանքի սահմաններից: Հակառակ դեպքում կխախտվի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածով նախատեսված սկզբունքը՝ «Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը»: Մասնավորապես կխախտվեն այն հիմնարար իրավադրույթները, որ «Կասկածյալը և մեղադրյալն ունեն պաշտպանության իրավունք», և որ «Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին բացատրել նրանց իրավունքները և ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը» (Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր): Եթե Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածում օգտագործված «մեղադրանք» եզրույթը հասկացվի սուկ «քրեախրավական որակում» իմաստով, և այն իր մեջ չներառի արարքի քրեախրավական որակման հիմքում ընկած փաստական հանգամանքները, ապա կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը չի լինի կոնկրետ և իրական, այլ կլինի վերացական և պատրանքային, քանի որ առանց փաստական հիմքի՝ քրեախրավական որակումից պաշտպանվելու իրավունքը առարկայազուրկ է:

Մինչդեռ համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»։ Իսկ անմիջականորեն գործող իրավունքը չի կարող վերացական լինել:

Այս հարցում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ևս արտահայտել է համանման դիրքորոշում: Մասնավորապես, Արտիկոյի գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիան կոչված է երաշխավորելու ոչ թե տեսական և պատրանքային, այլ գործնականում և արդյունավետ իրականացվող իրավունքներ: Դա հատկապես վերաբերում է պաշտպանության իրավունքին (Artico v. Italy, 13.05.1980թ., կետ 33):

Այսպիսով, դատարանը գտնում է, որ կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի, ինչպես նաև գործի դատական քննության սահմանների առումով «մեղադրանք» հասկացությունը ներառում է նաև արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստերը (...)» (տե՛ս Արթուր Սերոբյանի վերաբերյալ 2007 մարտի 30-ի ՎԲ-46/07 որոշումը):

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Եթե առաջին ատյանի դատարանում դատական քննության ընթացքում մեղադրողը գտնում է, որ առաջադրված մեղադրանքը խստացման կամ մեղմացման առումով ենթակա է լրացման կամ փոփոխման, քանի որ ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում, և եթե գործի փաստական հանգամանքները հնարավորություն չեն տալիս մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու առանց դատական քննությունը հետաձգելու, ապա դատարանին ներկայացնում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն: Մեղադրողը մման միջնորդությամբ կարող է հանդես գալ մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Մույն հոդվածի առաջին մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում դատարանը դատախազի միջնորդությամբ հետաձգում է նիստը՝ անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու և նոր մեղադրանք առաջադրելու համար: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Մեղադրողը կարող է մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը փոխել մեղադրանքը, այդ թվում նաև՝ խստացման առումով, եթե դատական քննության ընթացքում հետազոտված ապացույցները անհերքելիորեն վկայում են, որ ամբաստանյալը կատարել է այլ հանցանք, քան այն, որը նրան մեղաազրվում է»:

20. Վերոշարադրյալ հոդվածների վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը սահմանում է դատարանում մեղադրանքի փոփոխման երկու ռեժիմ՝ փոփոխում քննչական գործողությունների կատարմամբ, որը սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և փոփոխում առանց քննչական գործողություններ կատարելու, որը սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդվածի 3-րդ մասով: Ընդ որում, «ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում» պայմանը, որը սահմանված է ՀՀ քրեական դատա-

վարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին մասում, ամրագրված կամ վկայակոչված չէ 309<sup>1</sup>-րդ հոդվածի 3-րդ մասում: Ուստի օրենսդրի կամքն այն է, որ առանց քննչական գործողություններ կատարելու մեղադրանքի փոփոխությունը (309<sup>1</sup>-րդ հոդվածի 3-րդ մասի ռեժիմ) կարող է կատարվել նաև այն դեպքում, երբ դրա համար հիմք հանդիսացած հանգամանքները միևնույն դատական վարությամբ հայտի են եղել:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված երկու իրավական ռեժիմների համար ընդհանուր է այն, որ երկու դեպքում էլ պաշտպանության իրավունքի երաշխիքների ապահովումը պարտադիր է:

21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված իրավական ռեժիմներով մեղադրանքը փոփոխելու համար հիմք է մեղադրանքի փաստական հանգամանքների այնպիսի փոփոխությունը, որի հետևանքով փոխվում է արարքի իրավաբանական որակումը կամ երբ նման փոփոխման դեպքում արարքի որակումը թեև մնում է նույնը, սակայն փոխվում է հանցակազմի հատկանիշների բովանդակությունը, օրինակ՝ փոփոխվում է միևնույն հանցակազմի դիսպոզիցիայում նկարագրված այլընտրանքային արարքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված իրավական ռեժիմների գործողությունը տարածվում է նաև այն դեպքերի վրա, երբ միևնույն իրավաբանական որակման շրջանակներում մեղադրանքի մեջ ավելացվում կամ մեղադրանքի ծավալից հանվում են առանձին դրվագներ: Նման դեպքերում, եթե հանցագործության բնույթն այնպիսին է, որ հնարավոր չէ դատաքննության ընթացքում նոր դրվագի վերաբերյալ կատարել քննություն, ապա մեղադրողը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, պետք է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու նպատակով միջնորդի հետաձգել գործի դատական քննությունը: Միևնույն այն դեպքում, երբ հանցագործության բնույթն այնպիսին է, որ հնարավոր է դատաքննության շրջանակում նոր դրվագի վերաբերյալ քննություն կատարել, ապա մեղադրողը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդվածի 3-րդ մասով, պետք է որոշում կայացնի առաջադրված մեղադրանքը փոփոխելու մասին:

22. Հիմք ընդունելով սույն որոշման 18–21-րդ կետերում շարադրված դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու սահմաններն ամրագրած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդվածի 3-րդ մասը չի մեկնաբանվում նույն հոդվածի 1-ին մասի համատեքստում:

23. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 270-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Մեղադրական եզրակացությունը բաղկացած է նկարագրական–պատճառաբանական մասերից»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նկարագրական–պատճառաբանական մասում քննիչը շարադրում է հանցագործության հանգամանքները, մեղադրյալին, ինչպես նաև տուժողին բնութագրող հանգամանքները, մեղադրյալի մեղավորությունը հաստատող ապացույցները, ի պաշտպանություն նրա բերվող փաստարկները և այդ փաստարկների ստուգման արդյունքում հավաքված ապացույցները: (...)»:

Հողվածի 3–րդ մասի համաձայն՝ «Եզրափակիչ մասում շարադրվում են մեղադրյալի մասին տեղեկությունները և առաջադրված մեղադրանքի ձևակերպումը՝ նշելով տվյալ հանցագործությունը նախատեսող քրեական օրենքի նորմերը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277–րդ հոդվածի 3–րդ մասի համաձայն՝ «(...) դատախազը մեղադրյալին, իսկ միջնորդության դեպքում նաև պաշտպանին, տուժողին և դատավարության այլ պատշաճ մասնակիցներին ստորագրությամբ հանձնում է մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված պատճենները: (...)»:

24. Վերոշարադրյալ դրույթների վերլուծությունից երևում է, որ մեղադրական եզրակացությունը հանդիսանում է այն դատավարական փաստաթուղթը, որով ամփոփվում են նախնական քննության արդյունքները, ինչպես նաև հիմնավորվում են քննիչի ենթադրությունները՝ մեղադրյալի մեղավորության և նրա գործողությունների իրավաբանական որակման մասին: Մեղադրական եզրակացության կարևորության մասին է վկայում այն հանգամանքը, որ դրանով ընդգծվում են քրեական գործի դատական քննության սահմանները: Մեղադրական եզրակացության նշանակությունն արտահայտվում է նաև նրանում, որ այն մեղադրյալին հնարավորություն է տալիս կազմակերպել և իրականացնել իր պաշտպանության իրավունքը՝ առաջադրված մեղադրանքի և այն հաստատող ապացույցների շրջանակներում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>–րդ հոդվածի 2–րդ մասն ամրագրում է, որ առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու դեպքում մեղադրողը կազմում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու մասին որոշում, որը ձեռք բերված նյութերի հետ ներկայացնում է դատարան: Իսկ նույն հոդվածի 3–րդ մասը, որը մեղադրողին իրավունք է տալիս փոխել մեղադրանքը, ընդհանրապես չի սահմանում, թե նշված մասի հիմքով մեղադրանքը փոխելու դեպքում մեղադրողի կողմից ինչ դատավարական որոշում պետք է կայացվի:

25. Հիմնվելով նախորդ կետում առկա դատողությունների վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>–րդ հոդվածի 1–ին, 2–րդ և 3–րդ մասերով սահմանված իրավական ռեժիմներով դատարանում մեղադրանքը փոփոխելիս մեղադրողի կողմից պետք է կայացվի ինչպես մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու մասին որոշում, այնպես էլ կազմվի նոր մեղադրական եզրակացություն:

26. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանում գործի դատաքննության ընթացքում մեղադրողը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>–րդ հոդվածի 2–րդ, 3–րդ մասերով, որոշում է կայացրել Ս.Նալբանդյանին առաջադրված մեղադրանքի ծավալը լրացնելու և նրան որպես մեղադրյալ ներգրավելու մասին և այդ որոշումները միջնորդությամբ ներկայացրել է դատարան: Վերոնշյալ որոշումներով նոր մեղադրանքի ծավալի մեջ ներառվել է Ս.Նալբանդյանին վերագրվող՝ սույն որոշման 6–րդ կետում նշված երկրորդ դրվագը, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 139–րդ հոդվածի 3–րդ մասով:

Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում ընդգրկել է ծավալն ընդլայնված նոր մեղադրանքը (տե՛ս սույն որոշման 9–րդ կետը):



Հիմք ընդունելով սույն որոշման 20–21–րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրողը գործել է դատարանում մեղադրանքի փոփոխման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>–րդ հոդվածի 3–րդ մասով նախատեսված իրավական ռեժիմի շրջանակներում:

Այս պայմաններում առաջին ստյանի դատարանն իր կողմից կայացված դատավճռում իրավամբ ընդգրկել է Ս.Նալբանդյանին վերագրվող հանցագործության երկրորդ դրվագը, այն է՝ Մ.Ռոմյանին հետևելը, բնակարանի նիշա գնալը, նրան մահճակալին պառկեցնելը, իր առնանդամը հանելն ու տուժողի անդրավարտիքը հանելու փորձ կատարելը: Ուստի, հիմնավորված չէ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ առկա հետևությունն այն մասին, որ բացակայել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>–րդ հոդվածի 3–րդ մասով նախատեսված պայմանները՝ ամբաստանյալին երկրորդ դրվագով մեղաագրվող արարքը հայտնի է եղել դեռևս նախաքննության ընթացքում և ի հայտ չի եկել դատաքննության ընթացքում (տե՛ս սույն որոշման 10–րդ կետը):

27. Հիմք ընդունելով վերոշարադրյալ հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով մեղադրողն իրավասու էր Ս.Նալբանդյանին առաջադրված մեղադրանքը դատարանում փոփոխել՝ ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>–րդ հոդվածի 3–րդ մասով:

## *II. Մեղադրյալի պաշտպանության իրավունքի խախտումը*

28. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հաջորդ հարցը հետևյալն է. դատաքննության ընթացքում նոր մեղադրանքի առաջադրմամբ խախտվե՞լ է արդյոք Ս.Նալբանդյանի պաշտպանության իրավունքը:

29. ՀՀ Սահմանադրության 18–րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ «Կասկածյալը և մեղադրյալն ունեն պաշտպանության իրավունք»:

Նույն հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ «Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին բացատրել նրանց իրավունքները և ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>–րդ հոդվածի 4–րդ մասի համաձայն՝ «Տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին դատարանը նոր մեղադրանքին ծանոթանալու համար ժամանակ է տրամադրում նրանց միջնորդության դեպքում, իսկ ամբաստանյալին և նրա պաշտպանին՝ անկախ միջնորդությունից»:

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ գործով իրականացված նախաքննության և դատաքննության ընթացքում Ս.Նալբանդյանն իր պաշտպանի մասնակցությամբ բազմիցս հարցաքննվել է 2008 թվականի նոյեմբերի 5–ին հաստատված մեղադրական եզրակացության նկարագրական–պատճառաբանական մասում նշված՝ Ս.Նալբանդյանին մեղսագրված արարքի երկրորդ դրվագի վերաբերյալ (տե՛ս սույն որոշման 7–րդ կետը):

Բացի այդ, Առաջին ստյանի դատարանում գործի դատաքննության ընթացքում, մեղադրողի կողմից ներկայացված՝ Ս.Նալբանդյանին առաջադրված մեղադրանքի ծավալը լրացնելու և նրան որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումների պատճենները, որտեղ ներառվել է Ս.Նալբանդյանին վերագրվող՝ սույն որոշման 6-րդ կետում նշված երկրորդ դրվագը, Առաջին ստյանի դատարանը, պահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված պահանջը, տրամադրել է պաշտպանական կողմին՝ նոր մեղադրանքին ծանոթանալու համար սահմանելով անհրաժեշտ և ողջամիտ ժամկետ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

30. Ուստի հիմք ընդունելով վերոգրյալ դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի դատաքննության ընթացքում նոր մեղադրանքի առաջադրմամբ չի խախտվել Ս.Նալբանդյանի պաշտպանության իրավունքը, քանի որ մեղադրանքը փոփոխելու մասին մեղադրողի որոշումների պատճենները հանձնվել են պաշտպանության կողմին, դրանց ծանոթանալու և պաշտպանությունն իրականացնելու համար տրվել է անհրաժեշտ հնարավորություն, բացի այդ, գործի քննության ամբողջ ընթացքում Ս.Նալբանդյանն իր պաշտպանի մասնակցությամբ հարցաքննվել է գործի հանգամանքների շուրջ, որում ներառված է եղել նաև նրան մեղսագրվող երկրորդ դրվագը:

31. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթը, ինչի արդյունքում թույլ է տվել դատավարական իրավունքի խախտում: Այդ խախտումն իր բնույթով էական է և կարող էր ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք (...) խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»: Ուստի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն, սույն գործով Վերաքննիչ դատարանի դատական ակտը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

32. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ չի համարում քննության առնել բողոքում բարձրացված՝ նյութական իրավունքի ենթադրյալ խախտման վերաբերյալ փաստարկները, դրանց հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշման մեջ արձանագրված դատավարական իրավունքի խախտումը վերացնելուց հետո:

33. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդվածի 3-րդ մասի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Սուրեն Կարոյի Նալբանդյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մասով Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարանի 2009 թվականի հունիսի 26-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 23-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

43.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության

ԵԶՐԴ/0502/01/08

վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
քրեական գործ թիվ ԵԶՐԴ/0502/01/08

նախագահող դատավոր՝ Ժ.Հովսեփյան  
դատավորներ՝ Ռ.Ազարյան, Հ.Տեր-Աղամյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՄԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԳԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Կ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

2009 թվականի դեկտեմբերի 18-ին

ք. Երևանում

դրնբաց դատական նիստում, քննելով ամբաստանյալ Արմեն Սենտորի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասով և 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 8-ի որոշման դեմ պաշտպան Կ.Բամալյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1.Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2006 թվականի փետրվարի 10-ին ՀՀ գլխավոր դատախազության քննչական վարչությունում հարուցվել է թիվ 62200906 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասի և 271-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

2007 թվականի հունիսի 2-ին ՀՀ գլխավոր դատախազության քննչական վարչության բժնամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի բաժնում հարուցվել է թիվ 62204307 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի և 271-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով և միացվել է թիվ 62200906 քրեական գործին:

2007 թվականի սեպտեմբերի 5-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արարատի քննչական բաժանմունքում հարուցվել է թիվ 26105507 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի և 268-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով:

2007 թվականի սեպտեմբերի 7-ին թիվ 26105507 քրեական գործը միացվել է թիվ 62200906 քրեական գործին:

Նախաքննության մարմնի 2007 թվականի նոյեմբերի 7-ի որոշմամբ Ա.Գրիգորյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասով և 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի նոյեմբերի 7-ի որոշմամբ Ա.Գրիգորյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Նույն օրն Ա.Գրիգորյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2008 թվականի հունվարի 16-ին թիվ 62200906 քրեական գործից անջատվել է Ա.Գրիգորյանի և մյուսների վերաբերյալ քրեական գործը, որին տրվել է 62204307 համարը:

2008 թվականի մայիսի 7-ին Ա.Գրիգորյանը հայտնաբերվել և արգելանքի է վերցվել:

2008 թվականի հոկտեմբերի 8-ին թիվ 62204307 քրեական գործից 62204307/ԱՄ համարով անջատվել է Ա.Գրիգորյանի վերաբերյալ մասը:

Նույն օրը որոշում է կայացվել Ա.Գրիգորյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխելու, լրացնելու և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասով և 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նոր մեղադրանք առաջադրելու մասին:

2008 թվականի հոկտեմբերի 15-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի քրեական դատարան:

2. Երևանի քրեական դատարանի 2008 թվականի նոյեմբերի 24-ի որոշմամբ Ա.Գրիգորյանի վերաբերյալ քրեական գործն ըստ ընդդատության ուղարկվել է Հաբավային քրեական դատարան:

2009 թվականի փետրվարի 5-ին ընդունված «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ կետի կարգով՝ 2009 թվականի փետրվարի 27-ին Ա.Գրիգորյանի վերաբերյալ քրեական գործը փոխանցվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ ըստ ընդդատության:

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի ապրիլի 6-ի դատավճռով Ա.Գրիգորյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասով, 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և դատապարտվել ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասով ազա-

տազրկման 6 տարի ժամկետով՝ մաքսանենգության առարկաների բռնագրավմամբ, 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ ազատազրկման 10 տարի ժամկետով՝ անձնական գույքի մեկ երկրորդի բռնագրավմամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով, նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ա.Գրիգորյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 13 տարի ժամկետով՝ անձնական գույքի մեկ երկրորդի և մաքսանենգության առարկաների բռնագրավմամբ:

3. Պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009 թվականի հոկտեմբերի 8-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի ապրիլի 6-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

Նախագահող դատավորը չի ստորագրել դատական ակտը՝ ներկայացնելով հատուկ կարծիք:

4. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 8-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ա.Գրիգորյանի պաշտպան Կ.Զամայանը:

Վճռաբեկ դատարանը 2009 թվականի դեկտեմբերի 11-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները**

5. Ընդհանուր իրավասության և վերաքննիչ դատարանները հաստատված են համարել հետևյալը.

Ա.Գրիգորյանը 2007 թվականի մայիս ամսից մինչև սեպտեմբերի 8-ն ընկած ժամանակահատվածում Իրանի Իսլամական Հանրապետությունում գտնվելու ժամանակ, Հայաստանի Հանրապետությունում իրացնելու ուղղակի դիտավորությամբ ապօրինաբար ձեռք է բերել և պահել առանձնապես խոշոր չափի՝ 1 կիլոգրամ 296, 66 գրամ ափիոն տեսակի թմրամիջոց, որն իր վարած «Կամազ» մակնիշի ավտոմեքենայով, ՀՀ մաքսային հսկողությունից թաքցնելով, Մեղրու մաքսակետով տեղափոխել է Հայաստանի Հանրապետություն և իրացրել է Սյունիքի մարզի բնակիչներ Վահան Սարգսյանին և Գավիթ Գրիգորյանին:

6. Սույն գործով առաջին ատյանի դատարանը, հիմք ընդունելով Վահան Սարգսյանի, Գավիթ Գրիգորյանի, վկաներ Մանուշակ Մինասյանի, Ռուզաննա Ալեքսանյանի ցուցմունքները, դատաքիմիական փորձաքննության թիվ 07-0721, 08-0453 եզրակացությունները, բջջային հեռախոսահամարների վերծանումների զննության արձանագրությունները, Ա.Գրիգորյանի կողմից Դ.Գալստյանին ապօրինի իրացված և վերջինիս մոտ անձնական խուզարկությամբ հայտնաբերված, իրեղեն ապացույց

ճանաչված առանձնապես խոշոր չափի՝ 536, 66 գրամ ափիոն տեսակի թմրամիջոցը, Ա.Գրիգորյանի անձնագրի զննության արձանագրությունը, իր դատավճռի «Դատարանի իրավական վերլուծությունները» բաժնում նշել է՝ «Ամբաստանյալ Արմեն Մենտորի Գրիգորյանի արարքի որակումը ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 215-րդ հոդվածի 2-րդ մասով ճիշտ է. նա կատարել է թմրամիջոցի մաքսանենգություն և ապօրինի իրացրել է առանձնապես խոշոր չափերի թմրամիջոց» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, էջ 80):

7. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում նշել է՝ «(...) ներքին համոզմամբ վերաքննիչ քրեական դատարանը նույնպես հանգում է այն հետևության, որ Արմեն Մենտորի Գրիգորյանի կողմից կատարվել են հանցավոր արարքներ, որոնք նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 215-րդ հոդվածի 2-րդ մասով» (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, էջ 127):

8. Ամբաստանյալ Ա.Գրիգորյանը քրեական գործի ողջ քննության ընթացքում ցուցմունք է տվել, որ առնչություն չունի իրեն մեղսագրվող արարքների հետ:

ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասով Ա.Գրիգորյանին առաջադրված մեղադրանքի հիմքում առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները դրել են վերջինիս անձնագիրը զննելու մասին արձանագրությունը:

### **3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքաբերը գտնում է, որ ամբաստանյալ Ա.Գրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 215-րդ հոդվածի 2-րդ մասով մեղսագրված հանցանքներն ինչպես նախաքննության մարմնի, այնպես էլ դատարանների կողմից հաստատված չեն:

10. Բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանները մաքսանենգությանը Իրանի Իսլամական Հանրապետությունից Հայաստան ափիոն տեսակի թմրամիջոց ներմուծելու մեջ Ա.Գրիգորյանին մեղավոր են ճանաչել միայն վերջինիս անձնագիրը զննելու մասին արձանագրությամբ՝ համաձայն որի՝ նա բազմիցս հատել է նշված երկրների սահմանները: Այլ ապացույցներ, որոնցով կհաստատվեր, որ Ա.Գրիգորյանն ափիոն տեսակի թմրամիջոցը ներկրել է ԻԻՀ-ից, հնարավոր չի եղել ձեռք բերել, հետևաբար տվյալ հանցանքի կատարման մեջ Ա.Գրիգորյանի մեղավորության մասին ստորադաս դատարանների հետևությունները հիմնված են ենթադրությունների վրա:

11. Բողոք բերած անձը նշել է նաև, որ դատարանները, հաշվի չառնելով Ա.Գրիգորյանի անձը բնութագրող և նրա պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող մի շարք հանգամանքներ, նրա նկատմամբ նշանակել են ակնհայտ խիստ պատիժ:

12. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է ամբողջությամբ բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 8-ի որոշումը, Ա.Գրիգորյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 215-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնել և կարճել գործի վարույթը կամ նրա նկատմամբ նշանակված պատիժը մեղմացնել:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

13. Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն հետևյալ պատճառաբանություններով.

*1. Առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցներ ապօրինի իրացնելու մեջ ամբաստանյալ Ա.Գրիգորյանի մեղավորության հաստատված լինելը և այդ արարքի համար նշանակված պատժի համաչափությունը.*

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցերը հետևյալն են. առաջին՝ առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց ապօրինի իրացնելու մեջ ամբաստանյալ Ա.Գրիգորյանի մեղավորությունը հաստատված է արդյոք գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ և երկրորդ՝ այդ արարքի համար պատասխանատվություն նախատեսող չՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի սանկցիայի շրջանակներում Ա.Գրիգորյանի նկատմամբ պատիժ նշանակելիս ստորադաս դատարանները հաշվի առե՞լ են արդյոք նրա անձը բնութագրող և պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ դատարանների կողմից հաստատված է համարվել այն հանգամանքը, որ Ա.Գրիգորյանն ապօրինի իրացրել է առանձնապես խոշոր չափերի թմրամիջոց (տե՛ս սույն որոշման 6-րդ և 7-րդ կետերը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, սույն գործով ձեռք բերված յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, դեկլարվելով օրենքով, ներքին համոզմամբ, չՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության կատարման մեջ Ա.Գրիգորյանի մեղավորության վերաբերյալ հանգել են ճիշտ հետևության: Ա.Գրիգորյանի մեղքը չՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղսագրված արարքում հաստատված է, իսկ պաշտպանության կողմի պատճառաբանությունները հերքված են Վահան Սարգսյանի, Գավիթ Գրիգորյանի, վկաներ Մանուշակ Մինասյանի, Ռուզաննա Ալեքսանյանի ցուցմունքներով, դատաքիմիական փորձաքննության թիվ 07-0721, 08-0453 եզրակացություններով, բջջային հեռախոսահամարների վերծանումների գնմության արձանագրություններով, Ա.Գրիգորյանի կողմից Գ.Գալստյանին ապօրինի իրացված և վերջինիս մոտ անձնական խուզարկությամբ հայտնաբերված, իրեղեն ապացույց ճանաչված առանձնապես խոշոր չափի՝ 536, 66 գրամ ափիոն տեսակի թմրամիջոցով (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

16. Անդրադառնալով Ա.Գրիգորյանի նկատմամբ չՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նշանակված պատժի համաչափությանը (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը), Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կատարված հանցագործության, հանցավորի անձի, նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների բազմակողմանի գնահատման



արդյունքում, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներին համապատասխան, ստորադաս դատարանների կողմից Ա.Գրիգորյանի նկատմամբ նշանակվել է համաչափ պատիժ:

17. Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ա.Գրիգորյանի մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության կատարման մեջ ապացուցված է գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ, նշված հոդվածի սանկցիայի շրջանակներում ամբաստանյալ Ա.Գրիգորյանի նկատմամբ նշանակվել է համաչափ պատիժ, հետևաբար այդ առումներով ստորադաս դատարանների դատական ակտերն օրինական և հիմնավորված են, իսկ պաշտպանի բողոքում առկա փաստարկներն իրենց հաստատումը չեն գտնում քրեական գործի նյութերում:

*II. Թմրամիջոցների մաքսանենգության մեջ ամբաստանյալ Ա.Գրիգորյանի մեղավորության ապացուցված լինելը*

18. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երրորդ իրավական հարցը հետևյալն է. թմրամիջոցների մաքսանենգության մեջ ամբաստանյալ Ա.Գրիգորյանի մեղավորությունը հաստատված է արդյոք գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝  
«(...)

3. Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

4. Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, իսկ գործի վարույթը ենթակա է կարճման՝ կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու արդյունքում, եթե սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները»:

20. Սույն քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Ա.Գրիգորյանը քրեական գործի ողջ քննության ընթացքում տված ցուցմունքներով հայտնել է, որ թմրանյութի մաքսանենգություն չի կատարել:

Դատարաններն ամբաստանյալ Ա.Գրիգորյանի նշված ցուցմունքը որևէ ապացույցով չեն հերքել և ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործություն՝ առանձնապես խոշոր չափի թմրամիջոցի մաքսանենգություն, կատարելու մեջ նրան մեղավոր են ճանաչել՝ մեղադրանքի հիմքում դնելով միայն վերջինիս անձնագիրը զննելու մասին արձանագրությունը, համաձայն որի՝ Ա.Գրիգորյանը մեղադրանքում նշված ժամանակահատվածում բազմիցս հատել է

Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը Իրանի Իսլամական Հանրապետության հետ (տե՛ս սույն որոշման 8–րդ կետը):

Վերոշարադրյալից երևում է, որ Հայաստան–Իրան և հակառակ ուղղությամբ սահմանները հատելու վերաբերյալ անձնագրում առկա գրառումներից բացի քրեական գործով ձեռք չի բերվել որևէ ապացույց, որը կվկայեր, որ Ա.Գրիգորյանը Վ.Սարգսյանին և Գ.Գրիգորյանին իրացրած առանձնապես խոշոր չափի ափիոն տեսակի թմրամիջոցը ձեռք է բերել Իրանի Իսլամական Հանրապետությունում և մաքսային հսկողությունից թաքցնելով՝ ապօրինաբար ներկրել Հայաստանի Հանրապետություն: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված հանգամանքը, առանց այլ հավաստի ապացույցների բավարար ամբողջության, չի կարող վկայել այն մասին, որ Ա.Գրիգորյանը կատարել է թմրանյութի մաքսանենգություն:

21. Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թմրամիջոցների մաքսանենգություն, այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 215–րդ հոդվածի 2–րդ մասով նախատեսված հանցանք գործելու մեջ Ա.Գրիգորյանի մեղավորության մասին ինչպես ընդհանուր իրավասության դատարանի, այնպես էլ վերաքննիչ դատարանի հետևությունները (տե՛ս սույն որոշման 6–րդ և 7–րդ կետերը) հիմնված են ենթադրությունների վրա և հաստատված չեն գործին վերաբերող փոխկապակցված ապացույցների բավարար ամբողջությամբ:

22. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանները, Ա.Գրիգորյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 215–րդ հոդվածի 2–րդ մասով, թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18–րդ հոդվածի 3–րդ և 4–րդ մասերով սահմանված քրեական դատավարության սկզբունքի՝ անմեղության կանխավարկածի խախտում և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35–րդ հոդվածի 2–րդ մասի պահանջի խախտում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398–րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: (...):

3. Դատավճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝

1) գործով վարույթի կարճման կամ քրեական հետապնդման դադարեցման համար հիմքերի առկայության դեպքում առաջին ատյանի դատարանը չի կարճել վարույթը կամ չի դադարեցրել հետապնդումը: (...):»:

Ուստի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398–րդ և 419–րդ հոդվածների համաձայն, սույն գործով ստորադաս դատարանների դատական ակտերը ՀՀ քրեական օրենսգրքի 215–րդ հոդվածի 2–րդ մասով պետք է բեկանել և այդ մասով գործի վարույթը կարճել ու Ա.Գրիգորյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ կատարված հանցագործությանը նրա մասնակցությունն ապացուցված չլինելու պատճառաբանությամբ:

23. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունը հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ հաստատելու, այն ենթադրությունների վրա հիմնված լինելու անթույլատրելիության և չփարատված բոլոր կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու իրավական հարցերի վերաբերյալ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Արմեն Մենտորի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասով և 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի ապրիլի 6-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 8-ի որոշումը ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասով բեկանել, այդ մասով գործի վարույթը կարճել ու քրեական հետապնդումը դադարեցնել՝ կատարված հանցագործությանը նրա մասնակցությունն ապացուցված չլինելու պատճառաբանությամբ:

2. Արմեն Մենտորի Գրիգորյանի նկատմամբ ստորադաս դատարանների կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նշանակված 10 տարի ժամկետով ազատազրկումը, ինչպես նաև դատական ակտերի մնացած մասերը թողնել օրինական ուժի մեջ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն  
Դատավորներ՝ ստորագրություններ*

44.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության ԵՔԲԴ/0269/01/08  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
քրեական գործ թիվ ԵՔԲԴ/0269/01/08

նախագահող դատավոր՝ Ա. Խաչատրյան  
դատավորներ՝ Ս.Ավետիսյան, Մ. Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Կ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ պաշտպան* Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

2009 թվականի դեկտեմբերի 18-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում քննելով, ամբաստանյալ Արթուր Գրիգորիի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 13-ի որոշման դեմ պաշտպան Վ. Խաչատրյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1.Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2007 թվականի նոյեմբերի 26-ին Երևանի Շենգավիթ համայնքի դատախազությունում հարուցվել է թիվ 11205207 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի 2008 թվականի մարտի 15-ի որոշմամբ Ա.Գրիգորյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 316-րդ հոդվածի 1-ին մասով:

2008 թվականի հունիսի 5-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի քրեական դատարան:

2. 2009 թվականի փետրվարի 5-ին ընդունված «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ կետի կարգով՝ 2009 թվականի փետրվարի 27-ին Ա.Գրիգորյանի վերաբերյալ քրեական գործը փոխանցվել է Երևանի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ ըստ ընդդատության:

Երևանի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2009 թվականի օգոստոսի 28-ի դատավճռով Ա.Գրիգորյանին մեղսագրվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված արարքը վերաորակել է նույն հոդվածի 1-ին մասով և «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի կիրառմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով Ա.Գրիգորյանի վերաբերյալ քրեական գործի վարույթը կարճել: Ա.Գրիգորյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման 2 տարի ժամկետով:

Նույն համաներման ակտի 1-ին կետի 1-ին ենթակետի կիրառմամբ՝ Ա.Գրիգորյանն ազատվել է պատժի կրումից:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009 թվականի հոկտեմբերի 13-ին որոշում է կայացրել բողոքը բավարարելու և Երևանի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի օգոստոսի 28-ի դատավճիռը բեկանելու մասին:

Ա.Գրիգորյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով և դատապարտվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով ազատազրկման 2 տարի ժամկետով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ազատազրկման 4 տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ, նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ա.Գրիգորյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում 4 տարի 6 ամիս ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կարգով նշանակված պատժի մեջ հաշվակցվել է Ա.Գրիգորյանի՝ կալանքի տակ գտնվելու 9 ամիս 14 օր ժամկետը, և նրան թողնվել է կրելու ազատազրկում 3 տարի 8 ամիս 16 օր ժամկետով:

4. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 13-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ա.Գրիգորյանի պաշտպան Վ.Խաչատրյանը:

Վճռաբեկ դատարանը 2009 թվականի դեկտեմբերի 11-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ

վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները**

5. Ա.Գրիգորյանը դատապարտվել է հետևյալ արարքների համար.

Ա.Գրիգորյանը 2007 թվականի նոյեմբերի 15–ին՝ ժամը 22:30–ի սահմաններում, տեսնելով Երևանի Արտաշիսյան և Շևչենկո փողոցների խաչմերուկում, Արագածի 6 հասցեում գտնվող «Մոնտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող «Լյուքս» համալիրի մոտ վիճաբանող Կարեն Գրիշյանին և նշված համալիրում իր ծառայողական պարտականությունները կատարող՝ ՀՀ ոստիկանության պետական պահպանության վարչության Շենգավիթի բաժնի ոստիկան, ոստիկանության ավագ Մամվել Ջարգարյանին, անհարկի վեճի է բռնվել վերջինիս հետ և առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով նրա նկատմամբ, ձեռքերով բռնել է Ս.Ջարգարյանի համազգեստից, քաշքշել ու հայիռել է: Վիճաբանության ու հայիռյանքի ձայները լսելով՝ «Լյուքս» համալիրից դուրս են եկել երկու աշխատակիցներ և համալիրի համասեփականատեր Սիիրան Մաթոսյանը, որը, տեսնելով Ս.Ջարգարյանի նկատմամբ կիրառվող բռնությունը, մտնեցել է նրանց, Ա.Գրիգորյանին ուժով հեռացրել Ս.Ջարգարյանից, որի ընթացքում պոկվել է վերջինիս ոստիկանական փողկապը: Այնուհետև Ա.Գրիգորյանը, բարձրաձայն սեռական բնույթի հայհոյանքներ տալով Ս.Ջարգարյանի և Մ.Մաթոսյանի հասցեին, Շևչենկո փողոցով դիմել է փախուստի և շուրջ 12 մետր հեռանալուց հետո իր մոտ գտնվող, որպես զենք օգտագործվող, հրագեն չհանդիսացող ատրճանակով կրակոցներ է արձակել իրենից շուրջ 5 մետր հեռավորության վրա գտնվող Մ.Մաթոսյանի ուղղությամբ, ապա հայիռյանքներ տալով՝ հեռացել է:

Ա.Գրիգորյանի խուլիգանական գործողությունների հետևանքով, որոնք արտահայտվել են հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով և Մ.Մաթոսյանի նկատմամբ ֆիզիկական բռնություն կիրառելու փորձով, շուրջ 10 րոպե տևողությամբ կոպիտ կերպով խախտվել է հասարակական կարգը և խանգարվել «Լյուքս» համալիրի աշխատանքը:

6. Սույն գործով առաջին ատյանի դատարանն իր դատավճռում նշել է՝ «Ըստ Արթուր Գրիգորյանի բոլոր ցուցմունքների, որպիսիք հաստատվել են վկաների ցուցմունքներով, նա վկա Մաթոսյանի կողմից տապալվելով գետնին՝ անմիջապես դիմել է փախուստի և հետապնդվելով վերջինիս կողմից՝ վախից օդ է կրակել, այդ կրակոցով որևէ վտանգ չի առաջացրել, այլ կարողացել է խուսափել հետագա հետապնդումից, անխափան հեռանալ դեպքի վայրից:

Այս ցուցմունքներին հակառակ ապացույցներ ձեռք չեն բերվել:

(...)

Գատարանը եկավ այն հետևության, որ ամբաստանյալ Արթուր Գրիգորյանը փախուստի դիմելու ընթացքում՝ վկաների հասցեին հայիռյանքներ տալով, հետապն-

դումից խուսափելու նպատակով օդամղիչ ատրճանակից օդ կրակելով, կատարել է արարք, որը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմին, ուստի ամբաստանյալ Արթուր Գրիգորյանին մեղսագրված արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասից պետք է վերաորակել նույն հոդվածի 1-ին մասով» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, էջ 97):

7. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում նշել է՝ «Վերաքննիչ դատարանը, գնահատության ենթարկելով քրեական գործով ձեռք բերված ապացույցները, գտնում է, որ դատարանի հետևությունները և հիմնավորումներն ամբաստանյալ Ա.Գրիգորյանի հանցավոր արարքը խուլիգանության դրվագով վերաորակելու առումով անհիմն են և չեն բխում ինչպես գործող օրենսդրության, այնպես էլ քրեական գործով ձեռք բերված ապացույցներից» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, էջ 143):

### **3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակը նշել է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ, 25-րդ, 127-րդ և 358-րդ հոդվածների պահանջները:

Ըստ բողոքաբերի՝ ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության ընթացքում բավարար ապացույցներ ձեռք չեն բերվել, որոնք կվկայեին, որ Ա.Գրիգորյանն իր մոտ գտնվող, հրազեն չհանդիսացող օդամղիչ ատրճանակի գործադրմամբ կատարել է խուլիգանություն:

Բողոք բերած անձը շեշտում է, որ Ա.Գրիգորյանը, Մ.Մաթոսյանի կողմից վայր զցվելուց հետո դիմելով փախուստի, նկատել է, որ վերջինս հետապնդում է իրեն և ցանկանալով ազատվել հետապնդումից՝ իր մոտ գտնվող օդամղիչ ատրճանակով կրակել է օդ, իսկ այն հանգամանքը, որ նա կրակել է Մ.Մաթոսյանի և Ս.Զարգարյանի ուղղությամբ և իրական վտանգ առաջացրել վերջիններիս համար, հաստատված չէ պատշաճ ապացույցներով:

9. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 13-ի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի օգոստոսի 28-ի դատավճռին:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ամբաստանյալ Ա.Գրիգորյանի կողմից հրազեն չհանդիսացող ատրճանակով կրակոցներ արձակելը արդյո՞ք վկայում է նրա արարքում զենքի գործադրմամբ խուլիգանություն կատարելու հատկանիշների առկայության մասին:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի համաձայն՝

«1. Խուլիգանությունը՝ դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով (...):

2. Նույն արարքը, որը զուգորդվել է անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, ինչպես նաև ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով (...):

3. Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից,

2) զուգորդվել է իշխանության ներկայացուցչին կամ հասարակական կարգի պահպանության պարտականություն իրականացնող կամ հասարակական կարգի խախտումը խափանող անձին դիմադրություն ցույց տալով,

3) կատարվել է նախկինում խուլիգանություն կատարած անձի կողմից,

4) զուգորդվել է անձի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելով,

5) զուգորդվել է բացառիկ ցինիզմով՝

(...):

4. Սույն հոդվածի երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ

(...)»:

12. Ա.Խաչատրյանի վերաբերյալ գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ. «(...) Խուլիգանական արարքը կարող է կատարվել միայն խուլիգանական մղումներից ելնելով: Իսկ արարքը համարվում է խուլիգանական մղումներով կատարված, եթե այն կատարվում է հասարակության և բարոյականության նորմերի նկատմամբ անթաքույց արհամարհանքի հողի վրա, երբ մեղավոր անձի վարքը հանդիսանում է բացահայտ մարտահրավեր՝ ուղղված հասարակական կարգի դեմ և թելադրված է լինում շրջապատին հակադրվելու, վերջինիս հանդեպ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելու ցանկությամբ: Հետևաբար, եթե մեղավոր անձի գործողությունները կատարվել են ոչ խուլիգանական մղումներով և չեն զուգորդվել հասարակական կարգի կոպիտ խախտմամբ, դրանք չեն կարող որակվել որպես խուլիգանություն» (տե՛ս *Արման Մեերի Խաչատրյանի* վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 24-ի ՎԲ-223/06 որոշումը):

13. Վերոշարադրյալի վերլուծությունից բխում է, որ խուլիգանության ինչպես հասարակ, այնպես էլ որակյալ հանցակազմերի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է արարքում խուլիգանական մղումների առկայությունը: Այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված արարքը, այն է՝ զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ կատարված խուլիգանությունը ենթադրում է խուլիգանական մղումների առկայություն, հակառակ պարագայում՝ արարքը չի կարող որակվել վերոնշյալ հատկանիշով:

14. Սույն գործի նյութերից երևում է, որ ամբաստանյալ Ա.Գրիգորյանի և ծառայողական պարտականությունները կատարող ոստիկանության աշխատակից Ս.Ջարգարյանի միջև տեղի ունեցող վիճաբանության ընթացքում Ա.Գրիգորյանը, վկա Մ.Մաթոսյանի միջամտությամբ հեռացվելով ոստիկանության աշխատակցից, վայր է ընկել և անմիջապես ոտքի բարձրանալով՝ դիմել է փախուստի: Ընդ որում, հրագեն չհանդիսացող օդամղիչ ատրճանակն այդ ընթացքում գտնվել է ամբաստանյալի մոտ և վերջինս այդ ընթացքում որևէ կերպ չի փորձել օգտագործել այն՝ Մ.Մաթոսյանի և



Ս.Ջարգարյանի նկատմամբ բռնություն գործադրելու կամ այդպիսի սպառնալիք ստեղծելու նպատակով (տե՛ս սույն որոշման 5–րդ կետը):

Քրեական գործի նյութերով հաստատված է, որ Ա.Գրիգորյանի փախուստի ընթացքում Մ.Մաթոսյանը հետապնդել է նրան, որի ժամանակ ամբաստանյալը, գրպանից հանելով օդամղիչ ատրճանակը, դրանով կրակոցներ է արձակել: Նշվածի մասին իրենց ցուցմունքներում հայտնել են ինչպես ամբաստանյալ Ա.Գրիգորյանը, այնպես էլ վկաներ Մ.Մաթոսյանը, Ս.Ջարգարյանը, Լ.Բադալյանը, Ս.Դավլաբյանը:

Առաջին առյուծի դատարանում ամբաստանյալ Ա.Գրիգորյանը ցուցմունք է տվել այն մասին, որ փախուստի ընթացքում նկատելով, որ իրեն հետապնդում է Մ.Մաթոսյանը, վախենալով, որ իրեն կծեծեն, հետապնդումից խուսափելու նպատակով իր մոտ գտնվող օդամղիչ ատրճանակով երկու անգամ կրակել է օդ (տե՛ս սույն որոշման 6–րդ կետը):

Վերոշարադրյալից հետևում է, որ Ա.Գրիգորյանի կողմից օդամղիչ ատրճանակով օդ կրակելն ուղղված չի եղել հասարակական կարգի դեմ և թելադրված՝ շրջապատին հակադրվելու, վերջինիս հանդեպ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելու ցանկությամբ, այսինքն՝ չի կատարվել խուլիգանական մղումներից ելնելով:

Այսինքն՝ միջադեպից հետո փախուստի դիմելու ընթացքում Ա.Գրիգորյանի կողմից իր մոտ գտնվող, հրազեն չհանդիսացող ատրճանակով կրակոցներ արձակելը չի վկայում նրա արարքում զենքի գործադրմամբ խուլիգանություն կատարելու հատկանիշների առկայության մասին:

15. Ի լրումն վերոգրյալ դատողությունների՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն քրեական գործով ձեռք չի բերվել որևէ ապացույց, որը կհերքեր ամբաստանյալ Ա.Գրիգորյանի ցուցմունքն այն մասին, որ ինքը հրազեն չհանդիսացող օդամղիչ ատրճանակից կրակոցներ է արձակել՝ Մ.Մաթոսյանի հետապնդումից խուսափելու նպատակով և կհաստատեր այն հանգամանքը, որ ամբաստանյալը գործել է խուլիգանական մղումներով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18–րդ հոդվածի 4–րդ մասի համաձայն՝ «Սեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի (...)»:

Հիմք ընդունելով սույն որոշման 13–րդ և 14–րդ կետերում առկա դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հրազեն չհանդիսացող օդամղիչ ատրճանակի գործադրմամբ խուլիգանություն, այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258–րդ հոդվածի 4–րդ մասով նախատեսված հանցագործություն կատարելու մեջ ամբաստանյալ Ա.Գրիգորյանի մեղավորությունը հաստատված չէ, ուստի ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, Ա.Գրիգորյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 258–րդ հոդվածի 4–րդ մասով, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում, ինչը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

16. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով՝ զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ կատարված խուլիգանություն որակելու իրավական հարցի վերաբերյալ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Արթուր Գրիգորիի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 13-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

45.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության

ԵՄԴ/0039/01/09

վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵՄԴ/0039/01/09

նախագահող դատավոր՝ Ս.Համբարձումյան  
դատավորներ՝ Գ.Մելիք-Սարգսյան, Մ.Պետրոսյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝*

Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝*

Հ. ԱՄԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ*

Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

12 փետրվարի 2010 թվական

ք. Երևանում

ղոճաբան դատական նիստում, քննության առնելով Մաջիդ Ռոհոլլահի Սուլթանիի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2009 թվականի նոյեմբերի 4-ի որոշման դեմ ամբաստանյալ Մ.Սուլթանիի և պաշտպան Գուրգեն Գրիգորյանի վճռաբեկ բողոքը

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. Թիվ 58202909 քրեական գործը հարուցվել է 2009 թվականի մարտի 20-ին ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչության կողմից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

2009 թվականի մարտի 30–ին ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչության կողմից որոշում է կայացվել 58.300 ԱՄՆ դոլարը և 9.000 եվրոն իրեղեն ապացույց ճանաչելու մասին, միաժամանակ նշված գումարներն ի պահ են հանձնվել ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությանը:

Նախաքննության մարմնի 2009 թվականի մարտի 31–ի որոշմամբ Մաջիդ Ռոհուլլահի Սոլթանին որպես մեղադրյալ է ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի 215–րդ հոդվածի 1–ին մասով:

2. 2009 թվականի մայիսի 8–ին Մ.Սոլթանիի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Սալաթիա–Մեքաստիա համայնքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 23–ի դատավճռով Մ.Սոլթանին մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 215–րդ հոդվածի 1–ին մասով և դատապարտվել է ազատազրկման 3 /երեք/ տարի ժամկետով՝ գույքի, այն է՝ մաքսանենգության առարկաների բռնագրավմամբ:

«Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19–ի որոշման 1–ին կետի 1–ին ենթակետի կիրառմամբ Մ.Սոլթանին ազատվել է նշանակված պատժի կրումից: Իրեղեն ապացույց ճանաչված և ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությանն ի պահ հանձնված 58.300 /հիսուսուրեք հազար երեք հարյուր/ ԱՄՆ դոլարը և 9.000 /ինը հազար/ եվրոն հանձնվել է պետական բյուջե:

3. Ամբաստանյալը և պաշտպան Գ.Գրիգորյանը վերաքննիչ բողոք են ներկայացրել վերը նշված դատավճռի դեմ՝ վիճարկելով Մ.Սոլթանիի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 215–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված հանցակազմի առկայությունը և խնդրելով նրան արդարացնել:

Ամբաստանյալ Մ.Սոլթանիի և պաշտպան Գ.Գրիգորյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանի 2009 թվականի նոյեմբերի 4–ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 23–ի դատավճիռը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2009 թվականի նոյեմբերի 4–ի որոշման դեմ վճռաբեկ բողոք են բերել ամբաստանյալը և պաշտպանը՝ պնդելով Մ.Սոլթանիի արարքում հանցակազմի բացակայության վերաբերյալ իրենց նախկին դիրքորոշումը և պահանջելով նրան արդարացնել:

2009 թվականի դեկտեմբերի 4–ին բողոքաբերները Վճռաբեկ դատարանին հասցեագրված դիմումով խնդրել են նշված բողոքը քննության չառնել, փոխարենը, բողոքարկման մեկամսյա ժամկետի պահպանմամբ, ներկայացրել են նոր վճռաբեկ բողոք: Ներկայացված բողոքում բողոքաբերները հայտնել են, որ այլևս չեն վիճարկում Մ.Սոլթանիի արարքի քրեաիրավական որակման հարցը, այն քննարկման առարկա չեն դարձնում և այդ մասով համաձայն են ստորադաս դատարանների դատական ակտերի հետ:

Նոր բողոքում բողոքաբերները խնդրել են ՀՀ Վերաքննիչ դատարանի 2009 թվականի նոյեմբերի 4–ի որոշումը՝ իրեղեն ապացույց ճանաչված և ՀՀ ազգային անվ-

տանգության ծառայության քննչական վարչությանն ի պահ հանձնված 58.300 ԱՄՆ դոլարը և 9.000 եվրոն պետական բյուջե հանձնելու մասով բեկանել և փոփոխել, կիրառել «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 9-րդ կետը և Մ.Սոլթանիին ազատել լրացուցիչ պատժից՝ գույքի բռնագրավումից:

2009 թվականի դեկտեմբերի 17-ին Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար») բողոքն ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Գործի փաստական հանգամանքները.**

5. Մաջիդ Ռ-ոհոլլահի Սոլթանին մեղավոր է ճանաչվել և դատապարտվել այն առարքի համար, որ 2009 թվականի մայիսի 19-ին «Ջվարթնոց» օդանավակայանից Երևան-Թեհրան թիվ RV 7807 չվերթով մեկնելիս, տաբատի և պիջակի գրպաններում տեղադրելով, մաքսային հսկողությունից թաքցրել և մաքսային տարածքից դուրս է հանել 58.300 ԱՄՆ դոլար և 9.000 եվրո: «Արմենիա միջազգային օդանավակայաններ» փակ բաժնետիրական ընկերության ավիացիոն անվտանգության ծառայության աշխատակցի կողմից Մ.Սոլթանին ենթարկվել է զննության, որի ժամանակ նրա մոտից հայտնաբերվել են 58.300 ԱՄՆ դոլարը և 9.000 եվրո:

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Բողոքի հեղինակները, մեջբերելով ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 29-ի թիվ 386-Ն որոշմամբ հաստատված՝ «Արժութային արժեքների փոխադրման, առաքման, ներմուծման, արտահանման և հայտարարագրման կարգի» 2.1-րդ կետը, որի հիման վրա Մ.Սոլթանին արժույթն արտահանելիս հայտարարագրելու պարտականություն չուներ, նա իրավունք ուներ կանխիկ արտահանել 5.000.000 /հինգ միլիոն/ ՀՀ դրամ կամ դրան համարժեք արտարժույթ:

7. Բողոքի հեղինակները նշել են նաև, որ Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի «Համաներում հայտարարելու մասին» որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը, Մ.Սոլթանիին ազատել է հիմնական պատժի կրումից, սակայն չի կիրառել նույն որոշման 9-րդ կետը, որը պետք է կիրառեր և ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի «Համաներում հայտարարելու մասին» որոշման 12-րդ կետի 1-ին ենթակետի հիման վրա Մ.Սոլթանիին ազատելու նաև լրացուցիչ պատժից՝ գույքի, այն է՝ մաքսանենգության առարկաների բռնագրավումից, առավել ևս, որ բռնագրավումն ի կատար չի ածվել համաներման որոշման հրապարակման պահին:

8. Հիմք ընդունելով վերոշարադրյալ փաստարկները՝ բողոք բերած անձինք գտնում են, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի խախ-

տում, այն է՝ չի կիրառել ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի «Համաներում հայտարարելու մասին» որոշման 9-րդ կետի պահանջները և կիրառել է ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիան՝ լրացուցիչ պատժի մասով, որը չպետք է կիրառեր:

Վերոգրյալից բացի, բողոքաբերները փաստարկել են, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է եական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և ստորադաս դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը Մ.Սոլթանիի համար առաջացրել է ծանր հետևանքներ, մասնավորապես՝ վերջինս զրկվել է օրենքով իրեն վերապահված իրավունքներից և իր սեփականությունը հանդիսացող գումարից:

9. Բողոքի հեղինակները խնդրել են Վերաքննիչ դատարանի 2009 թվականի նոյեմբերի 4-ի որոշումը՝ իրեղեն ապացույց ճանաչված և ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությանն ի պահ հանձնված 58.300 ԱՄՆ դոլարը և 9.000 եվրոն պետական բյուջե հանձնելու մասով բեկանել և փոփոխել, կիրառել «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 9-րդ կետը և Մ.Սոլթանիին ազատել լրացուցիչ պատժից՝ գույքի բռնագրավումից, և նրան հանձնել իրեղեն ապացույց ճանաչված գումարները:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Առաջին ատյանի դատարանը և Վերաքննիչ դատարանը ճիշտ են որոշել արդյոք մաքսամենեզության առարկա հանդիսացած արժույթային արժեքների չափը:

11. «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ռեզիդենտներն ու ոչ ռեզիդենտները կարող են առանց որևէ սահմանափակումների և առանց հայտարարագրման ՀՀ տարածք փոխադրել, առաքել, արտահանել արժույթային արժեքներ, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի»:

Նշված հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կենտրոնական բանկը ֆինանսական համակարգի կայունությունն ապահովելու, տնտեսական ռիսկերը կանխարգելելու, հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և սահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կամ վիճակագրական նպատակներով նորմատիվ իրավական ակտով ՀՀ կառավարության լիազորված մարմնի համաձայնությամբ կարող է սահմանել արժույթային արժեքների փոխադրման, առաքման, ներմուծման, արտահանման և հայտարարագրման կարգ և պայմաններ»:

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2005 թվականի հուլիսի 29-ին ընդունվել է թիվ 386-Ն որոշումը՝ «Արժույթային արժեքների փոխադրման, առաքման, ներմուծման, արտահանման և հայտարարագրման կարգը հաստատելու մասին»:

Արժույթային արժեքների փոխադրումը, առաքումը, արտահանումը և ներմուծումը սահմանված է վերը նշված կարգի 2-րդ գլխի 2.1-րդ կետում, համաձայն որի՝ «Ֆիզիկական և իրավաբանական անձինք (բացառությամբ բանկերի, վարկային կազմակերպությունների և ինկասսոցիոն կազմակերպությունների) իրավունք ունեն առանց որևէ փաստաթղթերի առկայության, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված

դեպքերի, Հայաստանի Հանրապետությունից արտահանել մինչև 5 միլիոն կանխիկ ՀՀ դրամ և համարժեք կանխիկ արտարժույթ (...)՝ արտահայտված թղթադրամների և մետաղադրամների տեսքով, ինչպես նաև վճարային արժեթղթեր:

Սույն կետում նշված գումարը գերազանցելու դեպքում ՀՀ դրամի և արտարժույթի արտահանումն իրականացվում է անկանխիկ եղանակով, իսկ վճարային արժեթղթերի արտահանումը՝ գրավոր մաքսային հայտարարագրի լրացմամբ»:

Վերը շարադրված դրույթների վերլուծությունից երևում է, որ առանց որևէ փաստաթղթի առկայության Հայաստանի Հանրապետությունից կարող է արտահանվել մինչև 5 միլիոն կանխիկ ՀՀ դրամ կամ համարժեք կանխիկ արտարժույթ: Արժույթի և արտարժույթի նշված չափը հանդիսանում է կանխիկ արժութային արժեքի այն թույլատրելի չափը, որը կարող է արտահանվել Հայաստանի Հանրապետությունից՝ առանց հայտարարագրման:

12. Սույն գործի նյութերից երևում է, որ Մ.Սուրբանին մեղավոր է ճանաչվել և դատապարտվել է 58.300 ԱՄՆ դոլար և 9.000 եվրո մաքսային հսկողությունից թաքցնելու և մաքսային տարածքից դուրս հանելու համար (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը): Առաջին ատյանի դատարանը և Վերաքննիչ դատարանը հաշվի չեն առել այն հանգամանքը, որ Մ.Սուրբանին իրավունք ուներ առանց հայտարարագրման Հայաստանի Հանրապետությունից արտահանել մինչև 5 միլիոն կանխիկ ՀՀ դրամ կամ դրան համարժեք կանխիկ արտարժույթ (տե՛ս սույն որոշման 2-րդ և 3-րդ կետերը):

13. Հիմք ընդունելով սույն որոշման 11-րդ կետում արտահայտված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես Առաջին ատյանի, այնպես էլ Վերաքննիչ դատարանները սխալ են որոշել մաքսանենգության առարկա հանդիսացած արժութային արժեքի չափը և այն ամբողջությամբ պետական բյուջե հանձնելով, թույլ են տվել նյութական իրավունքի խախտում:

Ուստի, ելնելով այն հանգամանքից, որ նշված խախտումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածների համաձայն հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը մասնակիորեն բեկանելու և փոփոխելու համար, բացի այդ, սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս փոփոխված մասով կայացնել նոր դատական ակտ և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 58.300 ԱՄՆ դոլարը և 9.000 եվրոն պետական բյուջե հանձնելու մասով Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 23-ի դատավճիռը օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2009 թվականի նոյեմբերի 4-ի որոշումը պետք է բեկանել և փոփոխել, նշված գումարից 5.000.000 /հինգ միլիոն/ ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը վերադարձնել ամբաստանյալ Մաջիդ Ռոհոլլահի Սուրբանինին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հայաստանի Հանրապետությունից առանց հայտարարագրման արտահանվող՝ կանխիկ դրամի կամ համարժեք կանխիկ արտարժույթի թույլատրելի չափի վերաբերյալ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

14. Ինչ վերաբերում է արժութային արժեքը բյուջե հանձնելու վերաբերյալ բողոքաբերի փաստարկին, ապա սույն գործի նյութերից երևում է, որ վերոնշյալ արժութա-

յին արժեքները հանդիսացել են իրեղեն ապացույց և ի պահ հանձնված են եղել ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությանը (տե՛ս սույն որոշման 1-ին կետը), ուստի Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների որոշումներով դրանք տնօրինվել են որպես իրեղեն ապացույցներ:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: 58.300 /հիսունութ հազար երեք հարյուր/ ԱՄՆ դոլարը և 9.000 /ինը հազար/ եվրոն պետական բյուջե հանձնելու մասով Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 23-ի դատավճիռը օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի նոյեմբերի 4-ի որոշումը բեկանել և փոփոխել՝ նշված գումարից 5.000.000 /հինգ միլիոն/ ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը վերադարձնել ամբաստանյալ Մաջիդ Ռոհոյլահի Սոլթանիին: Դատական ակտի մնացած մասը թողնել անփոփոխ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*



46.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
ԵԿԴ/0547/06/09 որոշում

ԵԿԴ/0547/06/09

նախագահող դատավոր՝ Ա. Դանիելյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

2010 թվականի փետրվարի 12–ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. նոյեմբերի 2–ի որոշման դեմ մեղադրյալ Համազասպ Ոսկանի Հովսեփյանի պաշտպան Ն.Բաղդասարյանի բերած վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2009թ. հոկտեմբերի 19–ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից մեղադրյալ Համազասպ Ոսկանի Հովսեփյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ քննիչի միջնորդությունը քննարկելու ընթացքում Հ.Հովսեփյանի պաշտպան Ն.Բաղդասարյանը դատավոր Գ.Խանդանյանին ինքնաբացարկ հայտնելու երեք միջնորդություններ է ներկայացրել, որոնք դատարանի նույն օրվա որոշումներով մերժվել են:

2. Գատարանի վերոհիշյալ որոշումները պաշտպան Ն.Բաղդասարյանը բողոքարկել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան:

2009թ. նոյեմբերի 2-ին կայացված դատական ակտով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը որոշել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. հոկտեմբերի 19-ի որոշման դեմ պաշտպան Ն.Բաղդասարյանի բերած վերաքննիչ բողոքը թողնել առանց քննության:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի վերոհիշյալ որոշման դեմ մեղադրյալ Հ.Հովսեփյանի պաշտպան Ն.Բաղդասարյանը բերել է վճռաբեկ բողոք:

2009թ. դեկտեմբերի 21-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները**

4. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը Հ.Հովսեփյանի պաշտպան Ն.Բաղդասարյանի կողմից ներկայացված երեք միջնորդությունները մերժելու վերաբերյալ 2009թ. հոկտեմբերի 19-ին կայացրել է երեք որոշում:

5. 2009թ. նոյեմբերի 2-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. հոկտեմբերի 19-ի երեք որոշումների դեմ բերված երեք բողոքներից միայն մեկի վերաբերյալ է որոշում կայացրել:

**Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

6. Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

Վճռաբեկ բողոքի հեղինակը գտնում է, որ իր վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. նոյեմբերի 2-ի որոշումն անօրինական է, քանի որ ինքնաբացարկի մասին դատարանի կայացրած ցանկացած որոշում, ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի պահանջներից ելնելով, ենթակա է բողոքարկման:

7. Բողոքաբերը նշում է նաև, որ առաջին ատյանի դատարանի երեք տարբեր որոշումների դեմ ներկայացրել է երեք տարբեր բողոքներ, իսկ վերաքննիչ դատարանը մերժել է միայն մեկ բողոքը, հետևաբար անհասկանալի են մնացած երկու բողոքների ճակատագրերը:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքի հեղինակը խնդրում է ամբողջությամբ բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. նոյեմբերի 2-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

8. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. ինքնաբացարկի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը թո՞ւյլ է տվել արդյոք օրենքի խախտում:

9. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի համաձայն՝ «Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝

1) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը.

2) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերն այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը.

2.1) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով.

3) առաջին ատյանի դատարանների՝ գործով վարույթը կասեցնելու որոշումները.

4) առաջին ատյանի դատարանների՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու, սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ խուզարկության, ազդավման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման մասին որոշումները.

5) առաջին ատյանի դատարանի՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքների կասակցությամբ կայացված որոշումները.

6) հանձնման մասին դատարանի որոշումները.

7) սույն օրենսգրքի 49 գլխով նախատեսված հարցերի կապակցությամբ դատարանի կայացրած որոշումները.

8) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ այլ դատական ակտեր»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում բացակայում է որևէ իրավանորմ, որը կսահմաներ ինքնաբացարկի մասին որոշումը բողոքարկելու իրավունքը:

ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Ինքնաբացարկի մասին որոշումը կարող է բողոքարկվել»:

10. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 8-րդ կետը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համակարգում վերլուծելու արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ինքնաբացարկի մասին որոշումը ՀՀ վերաքննիչ քրեական դատարան բողոքելու հնարավորություն ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում: Կիրառելով մեկնաբանման *expressio unius* հանրաճանաչ կանոնը, համաձայն որի՝ սպառնիչ ցանկում որևէ տարր չներառելը պետք է մեկնաբանել դրա բացառման իմաստով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է, որ ինքնաբա-

ցարկի մասին որոշումները վերաքննիչ բողոքարկման ենթակա չեն: Մինչդեռ ՀՀ դատական օրենսգիրքը սահմանում է ինքնաբացարկի մասին որոշման վերաքննիչ բողոքարկման հնարավորություն:

Այսպիսով քննարկվող հարցում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և ՀՀ դատական օրենսգրքի միջև առկա է հակասություն:

11. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Միննույն մարմնի նոր ընդունած իրավական ակտը չպետք է հակասի նախկինում ընդունված և ուժի մեջ մտած հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին: Միննույն մարմնի ընդունած հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են ավելի վաղ ուժի մեջ մտած իրավական ակտի նորմերը, բացառությամբ սույն օրենքի 94-րդ հոդվածի չորրորդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 94-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ «Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը միննույն մարմնի ընդունած և ուժի մեջ մտած հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են ավելի ուշ ուժի մեջ մտած իրավական ակտի նորմերը»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը ուժի մեջ է մտել 2002 թվականին (24-րդ հոդվածը լրացվել է 2003թ. մարտի 31-ին), ՀՀ դատական օրենսգիրքը ուժի մեջ է մտել 2007 թվականին, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը՝ 1999 թվականին:

12. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով կիրառման է ենթակա «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածում, այլ ոչ թե 94-րդ հոդվածում ամրագրված կանոնը, քանի որ հակասություն պարունակող օրենսգրքերից միայն մեկն է ուժի մեջ մտել մինչև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը:

Այսպիսով, ինքնաբացարկի մասին որոշման բողոքարկման իրավունքի առկայության կամ բացակայության հարցում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և ՀՀ դատական օրենսգրքի միջև առկա հակասությունը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ, պետք է լուծել հօգուտ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ որպես առավել վաղ ուժի մեջ մտած հավասար իրավաբանական ուժ ունեցող ակտի:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը (...) բերվել է այնպիսի դատական ակտի դեմ, որը ենթակա չէ վերաքննիչ բողոքարկման (...), վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության»:

Վերոշարադրյալ նորմի վերլուծության, ինչպես նաև սույն որոշման 10-12-րդ կետերում շարադրված դատողությունների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինքնաբացարկի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելով՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը օրենքի խախտում թույլ չի տվել, նրա կայացրած դատական ակտն այդ առումով օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, քանի որ ինքնաբացարկի մասին որոշումը վերաքննիչ բողոքարկման ենթակա չէ:

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. բողոքաբերի կողմից ներկայացված երեք բողոքներից միայն մեկի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից որոշում կայացնելը

չի՞ վկայում արդյոք այն մասին, որ վերջինս մնացած երկու բողոքների կապակցությամբ հրաժարվել է արդարադատություն իրականացնելուց:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանը լիազորված է իր նիստերում քննել և լուծել ստացված գործերը և նյութերը: Արդարադատություն իրականացնելուց հրաժարվելն անթույլատրելի է»:

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ պաշտպանի կողմից ՀՀ վերաքննիչ քրեական դատարան ներկայացված երեք բողոքներից միայն մեկն է քննվել ու դրա վերաբերյալ որոշում կայացվել (տես՝ սույն որոշման 6-րդ և 7-րդ կետերը):

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքաբերի կողմից ներկայացված մյուս երկու բողոքների կապակցությամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը փաստացի հրաժարվել է արդարադատություն իրականացնելուց: Այս առումով ՀՀ վճռաբեկ դատարանը համակարծիք է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Գոլդերն ընդդեմ Միացյալ Թագավորության որոշման մեջ արտահայտված դիրքորոշմանն այն մասին, որ «(...) Այն սկզբունքն, ըստ որի ցանկացած «քաղաքացիաիրավական վեճի» կամ «քրեական մեղադրանքի» դեպքում պետք է ապահովվի դատարանի կողմից գործի քննության հնարավորությունը, հանդիսանում է իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ստացած հիմնարար սկզբունքներից մեկը, (...) որն արգելում է արդարադատության իրականացումից հրաժարվելը: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը պետք է մեկնաբանվի այդ սկզբունքի լույսի ներքո» (տես՝ *Goldder v. the United Kingdom* գործով 1975թ. փետրվարի 21-ի որոշումը, կետ 35):

Հիմք ընդունելով վերոշարադրյալ դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը սույն գործով թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի խախտում: Այդ խախտումն իր բնույթով էական է և կարող էր ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ այն հիմք է դատական ակտը բեկանելու և գործը վերաքննիչ դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրյալ Համազասպ Ոսկանի Հովսեփյանի պաշտպան Ն.Բաղդասարյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. նոյեմբերի 2-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն  
Դատավորներ՝ ստորագրություններ*

47.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության ԵՔԲԴ/0632/01/08  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵՔԲԴ/0632/01/08

նախագահող դատավոր՝ Ս.Համբարձումյան  
դատավորներ՝ Գ.Մելիք-Սարգսյան, Մ.Պետրոսյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՄԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
*մասնակցությամբ պաշտպան* Ա. ՇԱՀՎԵՐԳՅԱՆԻ

12 փետրվարի 2010 թվական ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Մակար Ռ-ազմիկի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով, 189-րդ հոդվածի 3-րդ մասով և Աշոտ Վաղարշակի Մարտիրոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2009 թվականի հոկտեմբերի 6-ի որոշման դեմ մեղադրող Ա.Խաչատրյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2008 թվականի փետրվարի 28-ին հարուցվել է թիվ 83151208 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով:

2008 թվականի մարտի 24-ին հարուցվել է թիվ 83152308 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասի և 205-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

2008 թվականի ապրիլի 9-ին հարուցվել է թիվ 83153008 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասի և 205-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

2008 թվականի ապրիլի 16-ին հարուցվել է թիվ 83153208 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասի և 205-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

2008 թվականի ապրիլի 25-ին ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության քննչական բաժնի քննիչ Ա.Գրիգորյանի որոշմամբ թիվ 83151208, 83152308, 83153008, 83153208 քրեական գործերը միացվել են և նախաքննությունը շարունակվել է թիվ 83153208 քրեական գործի վարությամբ:

2008 թվականի նոյեմբերի 7-ին Մակար Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասով և 205-րդ հոդվածի 2-րդ մասով:

2008 թվականի դեկտեմբերի 5-ին Աշոտ Մարտիրոսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով:

2008 թվականի դեկտեմբերի 27-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի քրեական դատարան:

2009 թվականի փետրվարի 5-ին ընդունված՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ կետի հիման վրա 2009 թվականի փետրվարի 27-ին Մ.Հովհաննիսյանի և մյուսների վերաբերյալ քրեական գործը փոխանցվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի ընդդատությանը (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հունիսի 5-ի դատավճռով Մ.Հովհաննիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասով և 205-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով 4 /չորս/ տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասով՝ 2 /երկու/ տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կանոններով պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Մ.Հովհաննիսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 5 /հինգ/ տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Ա.Մարտիրոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով, և ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 /մեկ/ տարի 6 /վեց/ ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կանոններով պատժին հաշվակցվել է նախնական կալանքի տակ պահելու երկու օր ժամկետը և Ա.Մարտիրոսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 1 /մեկ/ տարի 5 /հինգ/ ամիս 28 /քսանութ/ օր ժամկետով:

Նույն դատավճռով դատապարտվել է նաև Գ.Խաչատրյանը, որի մասով դատական ակտը չի բողոքարկվել:

Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հուլիսի 2-ի որոշմամբ Ա.Մարտիրոսյանի նկատմամբ կիրառվել է «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը, և նա ազատվել է նշանակված պատիժը կրելուց:

3. Ամբաստանյալ Ա.Մարտիրոսյանի պաշտպան Գ.Հակոբյանի և ամբաստանյալ Մ.Հովհաննիսյանի ու նրա պաշտպան Ռ.Թովմասյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2009 թվականի հոկտեմբերի 6-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները բավարարել է մասնակիորեն. բեկանել է Մ.Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասով, 205-րդ հոդվածի 2-րդ մասով և Ա.Մարտիրոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հունիսի 5-ի դատավճիռը, ինչպես նաև ամբաստանյալ Ա.Մարտիրոսյանին համաներման ակտի կիրառմամբ պատժից ազատելու մասով Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հուլիսի 2-ի որոշումը և քրեական գործն ուղարկել է Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

4. Վերաքննիչ դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 6-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրող Ա.Խաչատրյանը:

2009 թվականի դեկտեմբերի 16-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը մեղադրող Ա.Խաչատրյանի վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով (բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է եական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար):

5. Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել ամբաստանյալ Ա.Մարտիրոսյանի պաշտպաններ Ա.Շահբազյանը և Գ.Շահվերդյանը, ամբաստանյալ Մ.Հովհաննիսյանը:

Պաշտպաններ Ա.Շահբազյանը և Գ.Շահվերդյանը ներկայացված պատասխանում նշել են, որ սույն գործի քննության ընթացքում թե՛ նախաքննության մարմինը, թե՛ Առաջին ատյանի դատարանը թույլ են տվել նյութական և դատավարական նորմերի կոպիտ խախտումներ, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: Ըստ պաշտպանների՝ գործով ձեռք չի բերվել Ա.Մարտիրոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքը հաստատող որևէ ապացույց: Առաջին ատյանի դատարանի դատավճռում շարադրված հետևությունները չեն համապատասխանում գործի փաստական հանգամանքներին և դատարանում հետազոտված ապացույցներին, քանի որ հիմնված են ոչ թույլատրելի ապացույցների և ենթադրությունների վրա: Պաշտպանները խնդրել են մեղադրողի վճռաբեկ բողոքը մերժել և վերադարձնել՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանելու պատճառաբանությամբ:

Ամբաստանյալ Մ.Հովհաննիսյանը նշել է, որ մեղադրողի բողոքն անհիմն է, չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներից, բացի այդ իր վերաբերյալ կայացված որոշման դեմ բերված բողոքում որևէ առարկություն կամ հիմ-



նավորում չի ներկայացվել: Ինչ վերաբերում է հաշիվ-ապրանքագրերի կեղծ լինելու մասին բողոքի փաստարկումներին, ապա, ըստ ամբաստանյալի, դրանք չեն կարող կեղծ համարվել, քանի որ կազմվել են օրենքով սահմանված կարգով և պարունակում են բոլոր անհրաժեշտ վավերապայմանները: Ամբաստանյալ Մ.Հովհաննիսյանը ներկայացված պատասխանում խնդրել է իր վերաբերյալ քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասով կարճել, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով իր առարկություններն ու հիմնավորումները կներկայացնի Առաջին ատյանի դատարանում:

**Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

6. Ամբաստանյալներ Մակար Հովհաննիսյանը և Աշոտ Մարտիրոսյանը մեղադրվել և Առաջին ատյանի դատարանի դատավճռով դատապարտվել են հետևյալ արարքների համար.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Շահումյանի, Արաբկիր-1 և Աշտարակի հարկային տեսչություններում հաշվառված համապատասխանաբար «Նախսիս», «Ման-Գրին» ու «Թիթեղագործ» ՍՊ ընկերությունների տնօրեն Մ.Հովհաննիսյանը 2006 թվականի մայիս ամսին իր ընկեր Գ.Խաչատրյանի միջոցով Երևանի Գ.Նժդեհի հրապարակում ծանոթացել է Էրեբունու հարկային տեսչությունում հաշվառված «Ջերմոքիմիկ» ԲԲ ընկերության տնօրեն Ա.Մարտիրոսյանի հետ և վերջինիս կեղծ հաշիվ-ապրանքագրեր տրամադրելու առաջարկի շուրջ ձեռք բերելով պայմանավորվածություն՝ 2006 թվականի մայիս-հոկտեմբեր ամիսների ընթացքում առանց ապրանքների մատակարարման՝ գումարի 8, 5 տոկոսի վճարման դիմաց, իր երեք ՍՊ ընկերությունների անունից կազմել ու Գ.Խաչատրյանի օժանդակությամբ «Ջերմոքիմիկ» ԲԲ ընկերությանն է տրամադրել թվով 16, ընդհանուր առմամբ 74.993.718 ՀՀ դրամի կեղծ հաշիվ-ապրանքագրեր՝ «Նախսիս» ՍՊԸ-ով՝ 71.154.000 ՀՀ դրամի, «Ման-Գրին» ՍՊԸ-ով՝ 2.319.000 ՀՀ դրամի, «Թիթեղագործ» ՍՊԸ-ով՝ 1.520.718 ՀՀ դրամի:

Թվով 16 կեղծ հաշիվ-ապրանքագրերը հանձնել, ինչպես նաև «Ջերմոքիմիկ» ԲԲ ընկերության կողմից դրանց դիմաց «Նախսիս», «Ման-Գրին» ու «Թիթեղագործ» ՍՊ ընկերությունների կողմից «Արդշինինվեստբանկ» ՓԲ ընկերության Մալաթիա մասնաճյուղից կանխիկացված գումարները Երևան քաղաքի տարբեր վայրերում Ա.Մարտիրոսյանին է վերադարձրել Գ.Խաչատրյանը, որի դիմաց Մ.Հովհաննիսյանը վերջինիս տվել է Ա.Մարտիրոսյանի կողմից փաստաթղթերի համար վճարված 8.5 տոկոսից 1 տոկոսը՝ իրեն պահելով 7 տոկոսը, իսկ 0, 5 տոկոսը վճարել է բանկում՝ գումարները կանխիկացնելու համար: Կեղծ հաշիվ-ապրանքագրերում արտացոլված տվյալները Ա.Մարտիրոսյանը սևագրությունների տեսքով Մ.Հովհաննիսյանին է փոխանցել Գ.Խաչատրյանի միջոցով: «Ջերմոքիմիկ» ԲԲ ընկերության տնօրեն Ա.Մարտիրոսյանը, պատասխանատու լինելով իրականությանը համապատասխան, ճիշտ հաշվապահական հաշվառում վարելու, ֆինանսական հաշվետվությունները կազմելու և ներկայացնելու համար, խախտելով «Շահութահարկի մասին» և «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքների համապատասխանաբար 10-րդ և 23-րդ հոդվածների

պահանջները, վերոհիշյալ երեք ՍՊ ընկերությունների անունից ձեռք բերված կեղծ հաշիվ-ապրանքագրերում ընդամենը 74.993.718 ՀՀ դրամ գումարը հաշվապահորեն որպես ծախս ձևակերպելով՝ Էրեբունու հարկային տեսչություն ներկայացված՝ 2006 թվականի շահութահարկի հաշվետվությունում և ԱԱՀ-ի հաշվարկներում որպես ծախս ու ԱԱՀ-ի դեբետ ներառելու, իսկ եկամտահարկի գումարը չներառելու միջոցով նվազեցրել և չարամտորեն խուսափել է պետքյուջե վճարել 26.664.700 ՀՀ դրամի հարկերը, որի հետևանքով պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափի վնաս:

Բացի այդ, 2005–2007 թվականների ընթացքում «Նախիա», «Ման-Գրին» ու «Թի-թեղագործ» ՍՊ ընկերությունների տնօրեն Մ.Հովհաննիսյանը, պատասխանատու լինելով օրենքով սահմանված կարգով հաշվապահական հաշվառում վարելու, ընկերությունների գործունեության արդյունքները ԱԱՀ-ի հաշվարկներում և հաշվետվություններում ճիշտ արտացոլելու համար, խախտել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ, 10-րդ և 46-րդ, ինչպես նաև «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 23-րդ հոդվածների պահանջները և նշված երեք ՍՊ ընկերությունների իրականացրած գործունեության վերաբերյալ Շահումյանի, Արաբկիր-1 և Աշտարակի հարկային տեսչություններ ներկայացրած հաշվետվություններում և ԱԱՀ-ի հաշվարկներում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ է մտցրել՝ արհեստականորեն մեծացնելով ՀՀ տարածքում ապրանքների ձեռքբերման գումարները, ինչպես նաև իրացման շրջանառությունը /հասույթը/ պակաս ցույց տալու եղանակով չարամտորեն խուսափել է պետքյուջե վճարել առանձնապես խոշոր չափերի՝ ընդամենը 305.365.054 ՀՀ դրամ ԱԱՀ-ի և շահութահարկի /«Նախիա» ՍՊԸ-ով՝ 74.434.900 դրամ, «Ման-Գրին» ՍՊԸ-ով՝ 113.348.592 դրամ, «Թիթեղագործ» ՍՊԸ-ով՝ 117.581.562 դրամ/, որոնց վրա հաշվարկվել են տույժեր և տուգանքներ 263.260.115 ՀՀ դրամի չափով»:

7. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում նշել է. «Այսպիսով, առաջին ստյանի դատարանը, հաշվի չառնելով դատաքննության ընթացքում անմիջականորեն ձեռք բերված ապացույցները /ամբաստանյալներ Մ.Հովհաննիսյանի, Գ.Խաչատրյանի, Ա.Մարտիրոսյանի, վկաներ Ս.Հակոբյանի, Ժ.Կարապետյանի ցուցմունքները և այլն/ և առանց հիմնավոր պատճառաբանության առավելություն տալով նախաքննությանը ձեռք բերված և դատաքննությանը հերքված որոշ ապացույցների /Մ.Հովհաննիսյանի և Գ.Խաչատրյանի նախաքննական ցուցմունքները/ կայացրել է լիարժեքորեն չհիմնվորված և չպատճառաբանված մեղադրական դատավճիռ»: Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ «ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքները հաստատված չեն գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ»:

8. Գտնելով, որ նախաքննության մարմնի կողմից չի կատարվել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, չեն պարզվել ինչպես ամբաստանյալների մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող բոլոր հանգամանքները, Վերաքննիչ դատարանը բեկանել է Առաջին ստյանի դատարանի դատավճիռը և գործն

ուղարկել ստորադաս դատարան նոր քննության, սահմանելով նոր քննության ծավալ՝ հարցաքննել վկա Ա.Մարտիրոսյանին, փաստաբանական հարցման ենթարկված անձանց՝ Ա.Աթոյանին, Ս.Մովսեսյանին, պարզել «Ջերմոքիմիկ» ԲԲԸ-ն պահեստներ, պահեստի նյութական արժեքների շարժի մասին մատյան ունեցել է, թե՛ ոչ, պարզել, թե Մ.Հովհաննիսյանի ընկերությունների կողմից տրամադրված 16 հաշիվ-ապրանքագրերում նշված ապրանքներն ընդհանրապես ձեռք բերվել են արդյոք «Ջերմոքիմիկ» ԲԲ ընկերության կողմից, թե՛ ոչ, եթե այո, ապա՝ ումից են ձեռք բերվել և այլն:

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոք բերած անձը փաստարկել է, որ առկա է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Բողոք բերած անձը փաստարկել է, որ ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքը գործով ձեռք բերված ապացույցներով հիմնավորվել է, և Առաջին ատյանի դատարանն իրավացիորեն կայացրել է մեղադրական դատավճիռ, սակայն Վերաքննիչ դատարանը, տուրք տալով դատաքննության ընթացքում ամբաստանյալների հանցանքը հիմնավորող անձանց կողմից իրենց նախաքննական ցուցմունքները փոխելու հանգամանքին և յուրովի մեկնաբանություններ անելով, բեկանել է դատավճիռը և ուղղակի ցուցումներով ու որոշակի համոզմունք հայտնելով՝ գործը վերադարձրել նոր քննության:

Համաձայն բողոքի՝ Վերաքննիչ դատարանը օբյեկտիվ և ըստ արժանվույն չի գնահատել ու անտեսել է ամբաստանյալներին մեղաագրված արարքները հաստատող արժանահավատ ապացույցները և դրանք վերլուծության և մեկնաբանության է ենթարկել յուրովի՝ դրանով իսկ թույլ տալով քրեադատավարական իրավունքի խախտում:

10. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 6-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հունիսի 5-ի դատավճռին:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

*1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի պահանջների խախտման մասին Վերաքննիչ դատարանի հետևության իրավաչափությունը.*

11. Սույն գործով վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ամբաստանյալներ Մ.Հովհաննիսյանի և Ա.Մարտիրոսյանի մեղադրանքի հիմքում Առաջին ատյանի դատարանի կողմից դրվել են չհետազոտված, ոչ թույլատրելի և ոչ վերաբերելի ապացույցներ և արդյո՞ք այդ ապացույցներից որևէ մեկին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն է տրվել:

12. Ապացույցի հասկացությունը տրված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասում, այն է՝ «Քրեական գործով ապացույցներ

են ցանկացած փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները»:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ որպես ապացույց թույլատրվում են՝ կասկածյալի, մեղադրյալի, տուժողի, վկայի, ամբաստանյալի, դատապարտյալի ցուցմունքները, փորձագետի եզրակացությունը, իրեղեն ապացույցները, քննչական և դատական գործողությունների արձանագրությունները և այլ փաստաթղթերը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ապացուցումը՝ գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելն է»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից: Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

13. Ապացույցն անթույլատրելի համարելու հիմքերը սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածով:

Վերոնշյալ իրավական դրույթների վերլուծությունից բխում է, որ քրեադատավարական օրենքով ապացույցներին և ապացուցման գործընթացին ներկայացվող պահանջները հետևյալն են.

ա) ապացույցները պետք է պարունակեն ոչ թե գնահատողական դատողություններ, կարծիքներ, այլ կոնկրետ փաստական տվյալներ որոշակի գործողությունների, իրադարձությունների վերաբերյալ,

բ) այդ փաստական տվյալները պետք է ձեռք բերվեն օրենքով նշված աղբյուրներից և վերաբերվեն կոնկրետ տվյալ գործին և ապացուցման առարկային,

գ) ապացույցները պետք է ձեռք բերվեն, ամրագրվեն և օգտագործվեն քրեադատավարական օրենքով սահմանված կարգով:

Նշված պահանջների պահպանման հետ է անմիջականորեն կապված ապացույցների թույլատրելիության և վերաբերելիության հարցի լուծումը, որն իր հերթին կազմում է ապացույցների գնահատման բաղկացուցիչ մասը:

14. Ապացույցների գնահատումը, որպես ապացուցման գործընթացի տարր, իրենից ներկայացնում է մտավոր, տրամաբանական գործունեություն, որի արդյունքում եզրահանգում է արվում ապացույցներից յուրաքանչյուրի թույլատրելիության, վերաբերելիության, հավաստիության և ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների բացահայտման համար ապացույցների համակցության բավարարության մասին:

Ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա: Ներքին համոզմունքը, որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխազելի կապով. այն, մի կողմից, պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից, անկողմնակալ դիտողի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ:

Ապացույցները, որոնք հավաքվել և ստուգվել են օրենքին համապատասխան, կազմում են ներքին համոզմունքի այն օբյեկտիվ հիմքը, որն իր դրսևորումն է գտնում ընդունվող որոշումներում: Թեպետ ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա, այն չի կարող լինել կամայական: Դրա հիմքում պետք է դրված լինի գործի բոլոր հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունը:

Գնահատման ենթակա են ինչպես ստացված տեղեկությունների բովանդակությունը, այնպես էլ աղբյուրները: Ապացույցների գնահատումը համապատասխան որոշումներում պետք է արտահայտվի պատճառաբանված եզրահանգումների ձևով՝ հիմնավորելով, թե ինչու որոշ ապացույցներ դրվել են որոշման հիմքում, իսկ մյուսները մերժվել են՝ ճանաչվելով ոչ հավաստի:

15. Ապացույցների գնահատման քրեադատավարական սկզբունքի բնութագրիչ առանձնահատկությունն այն է, որ օրենքը, որպես կանոն, չի նշում, թե հատկապես որ ապացույցներով պետք է հաստատվի այս կամ այն հանգամանքը, ինչպես նաև չի սահմանում ապացույցի որևէ տեսակի գերակայությունը մյուսի նկատմամբ, հետևաբար դատարանն ազատ է ապացույցների գնահատման գործում: Նշված կանոնից միակ բացառությունը սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 108–րդ հոդվածով, որը կրում է մասնավոր բնույթ և սույն գործին վերաբերելի չէ:

16. Ապացույցները գնահատելիս պետք է ղեկավարվել օրենքով: Քրեադատավարական օրենքը քրեական դատավարության խնդիրների և սկզբունքների միջոցով սահմանում է ապացուցման առարկայի, ապացույցների հատկանիշների, ապացույցների հավաքման, ստուգման կանոնների, դատավարական որոշումներին և դրանց կայացման պայմաններին առաջադրվող պահանջները:

17. Կոնկրետ հանցանքի կատարման մեջ անձի մեղավորության կամ անմեղության մասին եզրահանգումների հիմնավորվածությունը կախված է նաև բացահայտված փաստերի վերաբերելիության ճիշտ գնահատականից: Հետևաբար, օրենսդիրը քիչ կարևոր չի համարում ապացույցի գնահատականը՝ գործին վերաբերելու կամ չվերաբերելու տեսանկյունից: Վերջին հաշվով, յուրաքանչյուր ապացույցի վերաբերելիության ճիշտ որոշումը պետք է հանգեցնի օրինական և հիմնավոր որոշում կայացնելու համար անհրաժեշտ և բավարար ապացույցների հավաքմանը:

18. Ապացույցների ազատ գնահատումն օրենսդիրը հռչակել է որպես քրեադատավարական օրենքի սկզբունք, համաձայն որի՝ ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25–րդ հոդվածը սահմանում է. «Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ:

Քրեական դատավարությունում ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տան՝ մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում»:

19. Համաձայն նշված սկզբունքի՝ ապացույցը գնահատող անձը մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերի ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տա: Միևնույն ժամանակ, ներքին համոզմամբ ապացույցների ազատ գնահատումը ենթադրում է, որ ապացույցը գնահատող անձը կաշկանդված չէ տվյալ ապացույցին դատավարության նախորդ փուլերում կամ տվյալ փուլի շրջանակներում այլ անձանց կամ մարմինների տված գնահատականներով:

Նախապես հաստատված ապացույցի ուժ չունենալու օրենսդրական արգելքը բացառում է որևէ ապացույցի նկատմամբ կանխակալ մոտեցում ցուցաբերելը (մյուս ապացույցների նկատմամբ այդ փաստական տվյալի ապացուցողական արժեքին առավելություն վերագրելը կամ այդ արժեքը նվազեցնելը), քանի դեռ այդ ապացույցը քրեադատավարական օրենսգրքով ամրագրված ընթացակարգով օրինականության, մրցակցության և կողմերի իրավահավասարության, մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման և այլ սկզբունքների պահպանմամբ չի հետազոտվել պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում:

Այնուհանդերձ, ապացույցների ազատ գնահատման սկզբունքն ապացույցների նկատմամբ կանխակալ մոտեցման արգելքը պայմանավորում է «մինչև դրանց հետազոտումը» բառակապակցությամբ, ուստի նշված նորմը չի կարող մեկնաբանվել այնպես, որ օրենսդիրն ապացույցների հետազոտումից հետո նույնպես արգելում է ապացույցների գնահատման արդյունքում դրանցից մի մասին մյուսների նկատմամբ առավելություն կամ նվազ կարևորություն վերագրելու հնարավորությունը, հակառակ դեպքում, հակասական ապացույցների առկայության պարագայում հնարավոր չէ հիմնավորված հետևության հանգել անձի մեղավորության կամ անմեղության և այլ հարցերի վերաբերյալ:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանել է այն պատճառաբանությամբ, որ քրեական գործի դատաքննությամբ ձեռք չի բերվել որևէ ապացույց, որով կհաստատվեր ամբաստանյալ Մ.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասով, ամբաստանյալ Ա.Մարտիրոսյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքները:

Ըստ Վերաքննիչ դատարանի՝ Առաջին ատյանի դատարանի դատավճռում վկայակոչված՝ ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքները հաստատող միակ ապացույցները Մ.Հովհաննիսյանի և Գ.Խաչատրյանի՝ նախաքննության ժամանակ տրված և դատարանում հետազոտված ցուցմունքներն են, որոնք վերջիններիս կողմից հերքվել են առաջին ատյանի դատարանում դատաքննության ընթացքում: Իսկ գործով վկաներ Ս.Հակոբյանի և Ժ.Կարապետյանի ինչպես դատաքննական, այն-

պես էլ նախաքննության ընթացքում տրված ցուցմունքներով, ինչպես նաև դատահաշվապահական փորձաքննության եզրակացությամբ ու փորձագետի ցուցմունքով անբաստանյալներին առաջադրված մեղադրանքները չեն հաստատվում: Գրա հետ մեկտեղ, Առաջին ատյանի դատարանի դատավճռի հիմքում դրված վերոնշյալ վկաների սկզբնական բացատրությունները չեն կարող որպես թույլատրելի ապացույց ճանաչվել, քանի որ նախաքննության մարմնի և դատարանի կողմից այլ փաստաթուղթ չեն ճանաչվել, չեն հետազոտվել և հետագայում չեն հաստատվել:

Վերաքննիչ դատարանը Մ.Հովհաննիսյանի նախաքննական ցուցմունքների արժանահավատությունը կասկածի տակ է դրել այն պատճառաբանություններով, որ նախաքննությամբ և դատաքննությամբ հաստատվել է, որ թվով 25 այլ ընկերությունների հետ կատարվել են ապրանքային գործարքներ և փաստացի մատակարարվել են պայմանագրով նախատեսված ապրանքները, ինչպես նաև այն, որ փաստացի կասկածյալի կարգավիճակում գտնվող Մ.Հովհաննիսյանին քննիչն ութ ամիս հարցաքննել է որպես վկա՝ նախազգուշացնելով սուտ ցուցմունք տալու համար պատասխանատվության մասին, չի պահպանվել նաև պաշտպանության իրավունքը:

Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ Առաջին ատյանի դատարանը, հաշվի չառնելով դատաքննության ընթացքում անմիջականորեն ձեռք բերված ապացույցները՝ անբաստանյալներ Մ.Հովհաննիսյանի, Գ.Խաչատրյանի, Ա.Մարտիրոսյանի, վկաներ Ս.Հակոբյանի, Ժ.Կարապետյանի ցուցմունքները և առանց հիմնավոր պատճառաբանության առավելություն տալով նախաքննությամբ ձեռք բերված և դատաքննությամբ հերքված Մ.Հովհաննիսյանի և Գ.Խաչատրյանի նախաքննական ցուցմունքներին, կայացրել է լիարժեքորեն չհիմնավորված և չպատճառաբանված մեղադրական դատավճիռ՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

21. Վերաքննիչ դատարանի հիշյալ փաստարկների առնչությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել հետևյալը.

Առաջին ատյանի դատարանի դատավճռի ուսումնասիրությունից երևում է, որ դրա հիմքում որևէ անձի բացատրություն չի դրվել:

Այլ ընկերությունների հետ կատարված գործարքների ապրանքային լինելու հիման վրա «Ջերմոքիմիկ» ԲԲ ընկերության հետ կատարված գործարքների վերաբերյալ Մ.Հովհաննիսյանի տված ցուցմունքների հավաստիությունն ու արժանահավատությունը կասկածի տակ դնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավորված չէ և չի բխում ապացույցների ազատ գնահատման սկզբունքից և ապացույցների գնահատմանը առաջադրվող պահանջներից, քանի որ Մ.Հովհաննիսյանի կողմից «Ջերմոքիմիկ» ԲԲ ընկերության և այլ ընկերությունների հետ կատարված գործարքները միմյանց հետ որևէ կապ չեն ունեցել և մեկը մյուսով չեն պայմանավորվել: Այլ ընկերությունների հետ կատարված գործարքների վերաբերյալ գործի փաստական տվյալները ենթակա են եղել գնահատման, ինչն էլ նախաքննության մարմնի և Առաջին ատյանի դատարանի կողմից արվել է:

Ինչ վերաբերում է նրան, որ Մ.Հովհաննիսյանն ութ ամիս շարունակ փաստացի գտնվել է կասկածյալի կարգավիճակում, սակայն հարցաքննվել է որպես վկա, ապա գործի նյութերից երևում է, որ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագոր-

ծուրյունների փաստերի առթիվ հարուցված քրեական գործերի (որոնք միացվել են մեկ վարույթում) շուրջ ութ ամիս տևած նախանորոշման ընթացքում կատարվել են համապատասխան քննչական գործողություններ, պահանջվել և առգրավվել են հաշվապահական փաստաթղթեր, նշանակվել են դատահաշվապահական բազմաթիվ փորձաքննություններ, որոնց արդյունքում տրված եզրակացությունները ստանալուց հետո որոշումներ են կայացվել անձանց որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

Ուստի Վճռաբեկ դատարանը տվյալ դեպքում հիմնավոր չի համարում Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ Մ.Հովհաննիսյանը որպես վկա հարցաքննվելիս, փաստացի գտնվել է կասկածյալի կարգավիճակում: Հետևապես, անհիմն է նաև Մ.Հովհաննիսյանի պաշտպանության իրավունքի խախտման մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը:

Բացի այդ, լինելով մեղադրյալի կարգավիճակում, ինչպես Մ.Հովհաննիսյանը, այնպես էլ Գ.Խաչատրյանը պնդել են որպես վկա տված ցուցմունքները և տվել ըստ էության նույնաբովանդակ ցուցմունքներ:

Գործի նյութերից երևում է նաև, որ դատահաշվապահական փորձագետին են տրամադրվել «Ձերմոքիմիկ» ԲԲ ընկերության հարկային գործը և ըստ հարկատեսակների անձնական հաշվի քարտերը: Փորձաքննության ընթացքում փորձագետը ոչ միայն առաջնորդվել է նախաքննության մարմնի ներկայացրած տվյալներով (այդ թվում՝ կողմերի բացատրություններով), այլև «Ձերմոքիմիկ» ԲԲ ընկերության հաշվապահական հաշվեկշռում և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում արտացոլված տվյալներով: Այդ մասին է վկայում նաև թիվ 44450709 եզրակացության այն հետևությունը, որ «Ձերմոքիմիկ» ԲԲ ընկերությունում կատարված բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգումը կատարվել է փաստաթղթային ստուգման միջոցով և մասնակիորեն է համապատասխանում նյութերում եղած փաստական տվյալներին և հետագոտվող ժամանակաշրջանում գործող հարկային օրենսդրության պահանջներին (տե՛ս քրեական գործ, հատոր 1, էջեր 201–209):

Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հետագոտել է գործով ձեռք բերված ապացույցները՝ Մ.Հովհաննիսյանի, Ա.Մարտիրոսյանի, Գ.Խաչատրյանի ինչպես նախաքննական, այնպես էլ դատաքննական ցուցմունքները, Ա.Մարտիրոսյանի հետ Մ.Հովհաննիսյանի և Գ.Խաչատրյանի առերես հարցաքննությունների արձանագրությունները, վկաներ Ս.Հակոբյանի, Ժ.Կարապետյանի, Ս.Անդրեասյանի, Ա.Մնացականյանի, Ա.Գանիելյանի և մյուսների, փորձագետ Վ.Մարտիրոսյանի ցուցմունքները, առգրավման արձանագրությունները, դատահաշվապահական փորձաքննությունների եզրակացությունները, ստուգման ակտերը, իրեղեն ապացույցներ ճանաչված՝ թվով 16 կեղծ հաշիվ ապրանքագրերը, «Նախիս», «Ման–Գրին», «Թիթեղագործ» ՍՊ և «Ձերմոքիմիկ» ԲԲ ընկերությունների կողմից հարկային տեսչություններ ներկայացրած հարկման հիմք հանդիսացող 2005–2007 թվականների շահութահարկի տարեկան և ԱԱՀ–ի եռամսյակային ու ամսեկան հաշվետվությունները, այդ ընկերությունների միջև կնքված պայմանագրերը, բանկային փաստաթղթերը, պատճառված նյութական վնաս-



սի մասնակի վերականգնման վճարման հանձնարարագրերը, և դրանք գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իր ներքին համոզմամբ հանգել հետևության, որ ձեռք բերված ապացույցներով Մ.Հովհաննիսյանին և Ա.Մարտիրոսյանին առաջադրված մեղադրանքները հաստատվել են:

22. Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև վճռաբեկ բողոքի կապակցությամբ ամբաստանյալ Մ.Հովհաննիսյանի ներկայացրած պատասխանում բերված այն փաստարկին, որ թվով 16 հաշիվ-ապրանքագրերը չեն կարող կեղծ համարվել, քանի որ կազմվել են օրենքով սահմանված կարգով և պարունակում են բոլոր անհրաժեշտ վավերապայմանները:

Նշված փաստաթղթերի կեղծ լինելու հանգամանքը տվյալ դեպքում դրսևորվել է ոչ թե դրան առաջադրվող վավերապայմանները (կնիք, ստորագրություն և այլն) չպահպանելով, այլ դրանցում նշված ապրանքները փաստացի չմատակարարելով: Հետևաբար, եթե անգամ պահպանվել է այդ հաշիվ-ապրանքագրերի կազմման ձևական կողմը, դրանք իրենց բովանդակությամբ կրում են կեղծ բնույթ, ուստի և հիմնավորված է դրանք կեղծ դիտելու մասին Առաջին ատյանի դատարանի հետևությունը:

23. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, օրենքով սահմանված կարգով հետազոտել է ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության ժամանակ ձեռք բերված բոլոր ապացույցները և դրանց գնահատման և վերլուծության արդյունքում եկել է հիմնավորված եզրահանգման: Հետևաբար Վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, որ հաշվի չեն առնվել դատաքննության ընթացքում անմիջականորեն ձեռք բերված ապացույցները, որ առանց հիմնավոր պատճառաբանության առավելություն է տրվել նախաքննությամբ ձեռք բերված և դատաքննությամբ հերքված որոշ ապացույցներին, անհիմն են և չեն բխում գործի նյութերից:

Ինչպես նշվեց սույն որոշման 18–19–րդ կետերում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25–րդ հոդվածի 2–րդ մասը սահմանափակում է նախատեսում մինչև պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ապացույցների հետազոտումը կատարված ապացույցների գնահատման համար: Մինչդեռ, ինչպես երևում է գործի նյութերից, Առաջին ատյանի դատարանի կողմից մեղադրական դատավճռի հիմքում դրված բոլոր ապացույցները դատաքննության ընթացքում կողմերի մասնակցությամբ, հավասարության, մրցակցության, պաշտպանության ապահովման պայմաններում հետազոտվել են և բոլոր ապացույցները գնահատվել են դրանք հետազոտելուց հետո:

24. Հիմք ընդունելով սույն որոշման 12–23–րդ կետերում բերված դատողությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալներ Մ.Հովհաննիսյանի և Ա.Մարտիրոսյանի մեղադրանքի հիմքում չհետազոտված, ինչպես նաև ոչ թույլատրելի և ոչ վերաբերելի ապացույցներ չեն դրվել, մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում դրանցից որևէ մեկին մյուս ապացույցների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն չի տրվել: Մեղադրական դատավճռի հիմքում դրված բոլոր ապացույցները գնահատվել են վերաբերե-

լիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, և մեղադրանքների հիմնավորվածությունը հաստատվել է հետազոտված ապացույցները վերլուծելու և միմյանց համադրելու միջոցով:

Վերոգրյալը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս արձանագրելու, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի խախտման մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը գործի նյութերից չի բխում և իրավաչափ է:

*II. Նոր քննության ծավալ սահմանելու մասին Վերաքննիչ դատարանի որոշման իրավաչափությունը.*

25. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Առաջին աստիճանի դատարանի դատավճիռը բեկանելու, գործը նոր քննության ուղարկելու և նոր քննության ծավալ սահմանելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը:

26. Վերաքննիչ դատարանը գտել է, որ նախաքննության մարմնի կողմից չի կատարվել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, չեն պարզվել ինչպես ամբաստանյալների մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող բոլոր հանգամանքները և բեկանելով Առաջին աստիճանի դատարանի դատավճիռը և գործը համապատասխան ստորադաս դատարան նոր քննության ուղարկելով, սահմանել է նոր քննության ծավալ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

27. Գործի նյութերից երևում է, որ Վերաքննիչ դատարանում գործի քննության ընթացքում պաշտպան Ա.Շահբազյանը միջնորդել է հարցաքննել վկաներ Ս.Հակոբյանին, Ժ.Կարապետյանին, Ա.Մարտիրոսյանին, Յ.Մովսիսյանին, որը Վերաքննիչ դատարանի կողմից բավարարվել է մասնակիորեն՝ Ա.Մարտիրոսյանի մատով: Վերջինս հրավիրվել է դատական նիստի և հարցաքննվել (տե՛ս քրեական գործ, հատոր 12, էջեր 64–65, 98–99): Այսինքն, Վերաքննիչ դատարանը հետազոտել է նշված ապացույցը և հետևաբար անհասկանալի է, թե ինչու նշված ապացույցը ապացույցների համակցության մեջ գնահատելու փոխարեն, Վերաքննիչ դատարանն այն սահմանել է նոր քննության ծավալում: Անհասկանալի նաև փաստաբանական հարցման ենթարկված անձանց Առաջին աստիճանի դատարանում հարցաքննելու մասին Վերաքննիչ դատարանի պահանջը, քանի որ նշված անձանց Վերաքննիչ դատարան հրավիրելու և հարցաքննելու մասին պաշտպանի միջնորդությունը Վերաքննիչ դատարանը մերժել է այն դեպքում, երբ Վերաքննիչ դատարանը, նշված անձանց հարցաքննելու անհրաժեշտություն տեսնելու դեպքում, իրական հնարավորություն ունեն հետազոտել նշված ապացույցները և անել համապատասխան հետևություններ:

«Ձերմոքիմիկ» ԲԲ ընկերության գլխավոր հաշվապահ Ս.Հակոբյանն ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության ընթացքում ցուցմունքներ է տվել, որ իր պարտականությունների մեջ է մտնում ընկերություն ներմուծվող և արտահանվող ապրանքների հաշվապահորեն ձևակերպումը, ուստի ինքն է վարում պահեստի շարժի հաշվառումը իր մոտ պահվող պահեստի գրքում: Հաշիվ-ապրանքագրերի հիման վրա ապրանքները մուտքագրում է պահեստ, սակայն ներմուծվող և արտահանվող ապրանքների հետ փաստացի առնչություն չունի, պահեստ չի մտնում, ապրանքները

չի տեսնում, քանի որ իր պարտականությունների մեջ է մտնում միայն դրանց փաստաթղթային ձևակերպումը (տե՛ս քրեական գործ, հատոր 5, էջեր 208–210, հատոր 11, դատական նիստի ձայնագրառում):

Իսկ գործի քննությամբ հաստատվել է, որ մեղադրանքի հիմքում դրված 16 հաշիվ–ապրանքագրերը «Ջերմոքիմիկ» ԲԲԸ–ում ստացել են փաստաթղթային ձևակերպում՝ հաշվառվել են հաշվապահական փաստաթղթերում և ներառվել հարկային տեսչություն ներկայացվող հաշվետվություններում, ուստի գլխավոր հաշվապահի այդ ցուցմունքների առկայության պայմաններում անհասկանալի է, թե գործով ճիշտ որոշում կայացնելու համար ինչ էական նշանակություն կարող էր ունենալ «Ջերմոքիմիկ» ԲԲԸ–ի նյութական ապրանքների շարժի մասին մատյան ունենալու հանգամանքը ևս մեկ անգամ պարզելու և դրա զննություն կատարելու անհրաժեշտության մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը, որն արձանագրվել է նոր քննության ընթացքում պարզաբանման ենթակա հարցերի ծավալում:

Վճռաբեկ դատարանը հիմնավորված չի համարում մաս Վերաքննիչ դատարանի կողմից գործը նոր քննության ուղարկելու հիմքում այնպիսի հարցերի պարզաբանման առաջ քաշումը, ինչպիսին են, օրինակ. «պարզել, թե Մ.Հովհաննիսյանի ընկերությունների կողմից տրամադրված 16 հաշիվ–ապրանքագրերում նշված ապրանքներն ընդհանրապես ձեռք բերվել են արդյոք «Ջերմոքիմիկ» ԲԲ ընկերության կողմից, թե ոչ, եթե այո, ապա ումից են ձեռք բերվել», կամ «պարզել, թե Մ.Հովհաննիսյանը որտեղից է ձեռք բերել «Ջերմոքիմիկ» ԲԲ ընկերությանը տրամադրած հաշիվ–ապրանքագրերում նշված, ինչպես մաս գործով անցնող մյուս 25 ընկերություններին մատակարարված ապրանքները» և մյուս հարցերը, նկատի ունենալով, որ դրանք քննարկման առարկա են դարձվել նախաքննության ընթացքում և կոնկրետ Մ.Հովհաննիսյանին ու Ա.Մարտիրոսյանին առաջադրված մեղադրանքների հիմնավորվածության և գործով ճիշտ որոշում կայացնելու համար էական նշանակություն ունենալ չեն կարող:

28. Սույն որոշման նախորդ կետում նշված հանգամանքների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործով ձեռք բերված ապացույցները բավարար էին գործով որոշում կայացնելու համար, ուստի Վերաքննիչ դատարանի կողմից իր դատական ակտում նշված հարցերի պարզաբանման հիմնավորմամբ Առաջին աստյանի դատարանի դատավճիռը բեկանելու, գործը նոր քննության ուղարկելու և նոր քննության ծավալ սահմանելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումն իրավաչափ չէ:

29. Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ մաս Մ.Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 205–րդ հոդվածի 2–րդ մասով կայացված դատական ակտը բեկանելու մասին Վերաքննիչ դատարանի որոշման իրավաչափությանը:

Վերաքննիչ դատարանի դատական ակտի եզրափակիչ մասից երևում է, որ Վերաքննիչ դատարանն իր 2009 թվականի հոկտեմբերի 6–ի որոշմամբ բեկանել է ոչ միայն «Ջերմոքիմիկ» ԲԲ ընկերությանն առանց ապրանքների փաստացի մատակարարման կեղծ հաշվապահական փաստաթղթեր տրամադրելու դրվագով ՀՀ քրեական օրենսգրքի 189–րդ հոդվածի 3–րդ մասով Մակար Հովհաննիսյանի նկատմամբ կայացված դատական ակտը, այլ մաս նրա կողմից «Նախիս», «Ման–Գրին» և «Թիթեղագործ» ՍՊ ընկերությունների գործունեության ընթացքում հարկային տեսչություններ

ներկայացրած հաշվետվություններում և ԱԱՀ-ի հաշվարկներում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով առանձնապես խոշոր չափերի՝ 305.365.054 ՀՀ դրամ գումարները վճարելուց չարամտորեն խուսափելու վերաբերյալ նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով կայացված դատավճիռը:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանի որոշման ուսումնասիրությունից երևում է, որ դրա պատճառաբանական մասում որևէ հիմնավորում չի բերվել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով Առաջին ատյանի դատարանի դատավճռի անհիմն լինելու վերաբերյալ, նշված մեղադրանքով Մ.Հովհաննիսյանին մեղավոր ճանաչելու մասին Առաջին ատյանի դատարանի հետևությունների հիմնավորվածությունը քննարկման առարկա չի դարձվել, ինչպես նաև նշված մեղադրանքի հիմքում դրված ապացույցները չեն վերլուծվել և գնահատվել՝ նրա մեղավորությունը հաստատված լինելու հետևությունը կասկածի տակ դնելու առումով: Արդյունքում Վերաքննիչ դատարանն առանց որևէ պատճառաբանության բեկանել է Մ.Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով կայացված Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ գործն ուղարկելով նոր քննության, չնչեղով, թե ինչով է պայմանավորված դատական ակտի բեկանումը և նոր քննության ընթացքում մեղադրանքի այդ մասով ինչ գործողություններ պետք է կատարվեն:

Վերոնշյալի պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մ.Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումն իրավաչափ չէ:

30. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված դատավարական իրավունքի խախտումները, որոնք հանգեցրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող՝ չիմնավորված որոշման կայացմանը և ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք են: Ուստի վճռաբեկ բողոքը պետք է բավարարել՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա Մ.Հովհաննիսյանի և Ա.Մարտիրոսյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 6-ի որոշումը պետք է բեկանել՝ օրինական ուժ տալով նրանց վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հունիսի 5-ի դատավճռին և Ա.Մարտիրոսյանին համաներման ակտի կիրառմամբ պատժից ազատելու մասին Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հուլիսի 2-ի որոշմանը:

31. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալներ Մակար Ռ-ագմիկի չովհան-նիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով, 189-րդ հոդվածի 3-րդ մասով և Աշոտ Վաղարշակի Մարտիրոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 6-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ նրանց վերաբերյալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հունիսի 5-ի դատավճռին և Ա.Մարտիրոսյանին համաներման ակտի կիրառմամբ պատժից ազատելու մասին նույն դատարանի 2009 թվականի հուլիսի 2-ի որոշմանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

48.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության

ՎԲ-01/10

վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ՎԲ-01/10

նախագահող դատավոր՝ Մ. Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատախազ* Լ. ՍԱՆՈՒԿՅԱՆԻ

12 փետրվարի 2010 թվական

ք. Երևանում

ըռնբաց դատական նիստում, քննության առնելով Լևոն Ինգեսի Նավոյանին հանձնման թույլտվություն տալու մասին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի 2009 թվականի նոյեմբերի 3-ի որոշումը վերացնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2009 թվականի դեկտեմբերի 14-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Դանիելյանի բերած վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը և Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

1. Ռուսաստանի Դաշնության Մոսկվայի մարզի Ռամենսկի քաղաքային դատարանը ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 5-րդ մասի կարգով Լևոն Ինգեսի Նավոյանի բացակայությամբ, քննության է առել նրա վերաբերյալ քրեական գործը և 2008 թվականի նոյեմբերի 28-ի դատավճռով Լ.Նավոյանին մեղավոր է ճանաչել ՌԴ քրեական օրենսգրքի 159-րդ հոդվածի 3-րդ մասով ու նույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կանոններով նրա նկատմամբ պատիժ է նշանակել ազատազրկում՝ 3 /երեք/ տարի 4 /չորս/ ամիս ժամկետով:

Նույն դատարանի 2008 թվականի նոյեմբերի 28-ի որոշմամբ Լ.Նավոյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2. 2009 թվականի հունվարի 26-ին Լ.Նավոյանը ՀՀ ոստիկանության Վանաձորի բաժնի աշխատակիցների կողմից հայտնաբերվել է, կալանավորվել և տեղափոխվել է ՀՀ արդարադատության նախարարության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկ: Այդ մասին հայտնվել է հետախուզում հայտարարած մարմնին:

2009 թվականի փետրվարի 11-ին Լ.Նավոյանը «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկից տեղափոխվել է ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ, որտեղ նրա մոտ ախտորոշվել է «Աջ թոքի վերին բլթի պոլիկավերնոզ տուբերկուլյոզ ինֆիլտրացիայի և սերմնացրման փուլում ԹԿԲ+» հիվանդությունը:

3. 2009 թվականի փետրվարի 27-ին ՌԴ գլխավոր դատախազի տեղակալ Ե.Ջաբարչուկի կողմից միջնորդություն է ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազություն՝ «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 1993 թվականի հունվարի 22-ի Կոնվենցիայի համաձայն դատապարտյալ Լ.Նավոյանին կալանքի վերցնելու և ՌԴ հանձնելու համար՝ դատավճռով նշանակված պատիժը կրելու նպատակով:

2009 թվականի մարտի 16-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Դանիելյանը ՌԴ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Ջվյագինցևին հասցեագրված գրությամբ հայտնել է, որ Լ.Նավոյանին հանձնելու մասին ՌԴ գլխավոր դատախազության միջնորդությունը հնարավոր չէ բավարարել՝ հիմք ընդունելով «Հանձման մասին» 1957 թվականի եվրոպական կոնվենցիայի 26-րդ հոդվածի հիման վրա Հայաստանի Հանրապետության կողմից կատարված վերապահումը, համաձայն որի՝ «անձի հանձնումն ենթակա է մերժման, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ հանձման ենթակա անձի առողջական կամ տարիքի հետևանքով հանձնումը կվատթարացնի այդ անձի առողջական վիճակը կամ կսպառնա նրա կյանքին»:

2009 թվականի նոյեմբերի 3-ին, կրկին քննարկելով Լ.Նավոյանին ՌԴ իրավապահ մարմիններին հանձնելու միջնորդությունը, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Դանիելյանը կայացրել է դատապարտյալ Լ.Նավոյանին Ռուսաստանի Դաշնությանը հանձնելու մասին որոշում:

4. Լ.Նավոյանին Ռուսաստանի Դաշնությանը հանձնելու վերաբերյալ ՀՀ գլխա-

վոր դատախազի տեղակալ Ա.Գանիեյանի 2009 թվականի նոյեմբերի 3-ի որոշման դեմ դատապարտյալ Լ.Նավոյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել, որի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2009 թվականի դեկտեմբերի 14-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է՝ վերացրել է Լ.Նավոյանին հանձնման թույլտվություն տալու մասին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի 2009 թվականի նոյեմբերի 3-ի որոշումը և Լ.Նավոյանին անհապաղ ազատել կալանքից, պատճառաբանելով, որ « (...) համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ գլխավոր դատախազը, առավել ևս նրա տեղակալը նման լիազորությամբ օժտված չեն եղել», քանի որ Լ.Նավոյանի վերաբերյալ առկա է եղել օրինական ուժի մեջ մտած դատավճիռ:

5. Վերաքննիչ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 14-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Գանիեյանը:

2010 թվականի հունվարի 14-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («Բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

6. Բողոք բերած անձը փաստարկել է, որ առկա է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Բողոք բերած անձը նշել է, որ Վերաքննիչ դատարանը կայացրել է անհիմն որոշում և թույլ է տվել դատական սխալ, որի արդյունքում կալանքից ազատվել է Ռ.Գ. իրավապահ մարմիններին հանձնման ենթակա անձ՝ դրանով իսկ խոչընդոտելով պատժի անխուսափելիության սկզբունքի իրականացմանը:

Համաձայն բողոքի՝ որոշումը կայացվել է նյութական և դատավարական իրավունքի խախտումներով, մասնավորապես, Վերաքննիչ դատարանը ձևական հղում է կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածի 1-ին մասին՝ անտեսելով «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 1993 թվականի հունվարի 22-ի Կոնվենցիայի 80-րդ հոդվածի պահանջը (1997 թվականի մարտի 28-ի լրամշակմամբ), որը նախատեսում է հարաբերությունների հատուկ կարգ Պայմանավորվող կողմերի գլխավոր դատախազների միջև: Բողոք բերած անձը նշել է, որ տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի պահանջները, պարտավոր էր կիրառելու Կոնվենցիայի 80-րդ հոդվածը, այլ ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածի 1-ին մասը:



7. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 14-ի որոշումը և Լ.Նավոյանի բողոքը մերժել՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

8. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանի կիրառած օրենքը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածի 1-ին մասն արդյո՞ք հակասում է «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 1993 թվականի Կոնվենցիայի 80-րդ հոդվածի պահանջներին:

9. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը (...):»:

«Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 1993 թվականի հունվարի 22-ի Կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Պայմանավորվող կողմերի արդարադատության մարմինները քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնություն են ցույց տալիս սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան»:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի (1997 թվականի մարտի 28-ի լրամշակմամբ) համաձայն՝ «(...) Պայմանավորվող կողմերի արդարադատության իրավասու մարմինները միմյանց հետ հաղորդակցվում են իրենց կենտրոնական, տարածքային և այլ մարմինների միջոցով, եթե միայն սույն կոնվենցիայով հաղորդակցման այլ կարգ չի սահմանված: (...) Պայմանավորվող կողմերը սահմանում են իրենց կենտրոնական, տարածքային և այլ մարմինների ցանկը, որոնք լիազորված են իրականացնելու անմիջական հաղորդակցություն, ինչի մասին ծանուցում են ավանդապահին:»

Նույն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Պայմանավորվող կողմերը միմյանց իրավական օգնություն են ցույց տալիս դատավարական և այլ գործողություններ կատարելու միջոցով, որոնք նախատեսված են հարցվող Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, այդ թվում՝ (...) անձանց հետախուզման, քրեական հետապնդում իրականացնելու, քրեական պատասխանատվության ենթարկելու կամ դատավճիռն ի կատար ածելու համար անձանց հանձնելու (...) միջոցով»:

Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Իրավական օգնություն ցույց տալու վերաբերյալ հանձնարարություն կատարելիս հարցվող մարմինը կիրառում է իր երկրի օրենսդրությունը (...): Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Եթե հարցվող մարմինն իրավասու չէ կատարելու հանձնարարականը, նա այն ուղարկում է իրավասու մարմնին և այդ մասին տեղեկացնում հարցնող մարմնին»:

Կոնվենցիայի՝ հաղորդակցման հատուկ կարգ սահմանող 80-րդ հոդվածի համաձայն (1997 թվականի մարտի 28-ի լրամշակմամբ)՝ «Քրեական հետապնդման և հանձնման հարցերով հաղորդակցվում են Պայմանավորվող կողմերի գլխավոր դատախազները (դատախազները): Դատավարական և դատախազի (դատարանի) սանկցիա պահանջող այլ գործողությունների կատարման հարցերով հաղորդակց-

վում են դատախազական մարմինները՝ Պայմանավորվող կողմերի գլխավոր դատախազների (դատախազների) կողմից սահմանած կարգով»:

10. «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969 թվականի մայիսի 23-ի կոնվենցիայի 31-րդ հոդվածի համաձայն՝ միջազգային պայմանագիրը պետք է բարեխղճորեն մեկնաբանվի պայմանագրի հասկացությունների և դրանց համատեքստում ունեցած սովորական նշանակությանը համապատասխան, ինչպես նաև պայմանագրի առարկայի և նպատակի լույսի ներքո:

Սույն որոշման նախորդ կետում նշված դրույթների բարեխիղճ մեկնաբանությունից հետևում է, որ Կոնվենցիան հստակ տարբերակում է դնում «հաղորդակցում» և «հանձնում» տերմինների միջև. եթե «հանձնումը» ներառվում է Պայմանավորվող կողմերի միջև միմյանց տրամադրվող իրավական օգնության շրջանակում, ապա «հաղորդակցումը» Կոնվենցիայի իմաստով չի դիտվում որպես իրավական օգնության առանձին և ինքնուրույն դրսևորում: Ուստի Կոնվենցիայի 80-րդ հոդվածը, ըստ էության, հանդիսանում է 5-րդ հոդվածում հիշատակված հաղորդակցման կարգի դրսևորումներից մեկը, որը սահմանում է Պայմանավորվող կողմերի միջև քրեական հետապնդման և հանձնման հարցերով հաղորդակցման հատուկ կարգ: Հետևապես, նշված հոդվածը չի կարող մեկնաբանվել այնպես, որ քրեական գործերով իրավական օգնություն տրամադրելիս Պայմանավորվող կողմի միայն գլխավոր դատախազները կամ դատախազներն են լիազորված քրեական հետապնդման և հանձնման հարցերով պետության անունից կայացնելու ցանկացած բնույթի, այդ թվում՝ հանցանք կատարած անձի հանձնումը թույլատրելու կամ մերժելու մասին որոշում:

11. Ինչպես վերը նշվեց, Կոնվենցիայի 6-րդ հոդվածը սահմանում է, որ Պայմանավորվող կողմերը միմյանց իրավական օգնություն են ցույց տալիս դատավարական և այլ գործողություններ կատարելու միջոցով, որոնք նախատեսված են հարցվող Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ: Իսկ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն՝ իրավական օգնություն ցույց տալու վերաբերյալ հանձնարարություն կատարելիս հարցվող մարմինը կիրառում է իր երկրի օրենսդրությունը, և եթե հարցվող մարմինն իրավասու չէ կատարելու հանձնարարականը, ապա այն ուղարկում է իրավասու մարմնին և այդ մասին տեղեկացնում հարցնող մարմնին:

Նման մոտեցում է ամրագրել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը: Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 474-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «(...) օտարերկրյա պետության իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց (այսուհետ՝ իրավասու մարմիններ) հարցումով Հայաստանի Հանրապետության տարածքում սույն օրենսգրքով նախատեսված դատավարական գործողությունների կատարումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան՝ այդ պայմանագրերով և սույն օրենսգրքով սահմանված կարգով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածը սահմանում է «Հանձնման թույլտվության վերաբերյալ կամ հանձնումը մերժելու վերաբերյալ որոշում ընդունելու իրավասություն ունեցող մարմինները և այդ որոշման բողոքարկման կարգը»: Մասնավորապես, նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված է հանցագոր-

ծուրյուն կատարած անձի հանձնումը այդ պայմանագրի մասնակից համարվող օտարերկրյա պետությանը, և եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող անձի նկատմամբ՝

1) հանձնման թույլտվության կամ հանձնումը մերժելու վերաբերյալ որոշումներն ընդունում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը, եթե գործը գտնվում է մինչդատական վարույթում.

2) հանձնումը մերժելու վերաբերյալ որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը, եթե գործը գտնվում է դատական վարույթի ընթացքում, ինչպես նաև այն դեպքում, երբ տվյալ անձի վերաբերյալ կա օրինական ուժի մեջ մտած դատավճիռ.

3) հանձնման թույլտվության վերաբերյալ որոշումը ընդունում է համապատասխանաբար գործը քննող կամ դատավճիռը կայացրած դատարանը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի միջնորդությամբ այն դեպքում, երբ գործը գտնվում է դատական վարույթի ընթացքում, կամ տվյալ անձի վերաբերյալ կա օրինական ուժի մեջ մտած դատավճիռ (...):»:

12. Վերլուծելով միջազգային պայմանագրի և ՀՀ ներպետական օրենսդրության վերոհիշյալ կարգավորումները և հիմք ընդունելով սույն որոշման 10-րդ և 11-րդ կետերում առկա դատողությունները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանձնման նպատակով անհրաժեշտ դատավարական գործողությունների կատարումը (տվյալ դեպքում՝ հանձնման վերաբերյալ որոշման կայացումը) չի կարող նույնացվել Կոնվենցիայի 80-րդ հոդվածով նախատեսված՝ հաղորդակցություն իրականացնելու լիազորության հետ: Իսկ այն պետական մարմինները, որոնք Հայաստանի Հանրապետությունում և Հայաստանի Հանրապետության անունից լիազորված են կայացնելու համապատասխան որոշումներ, հստակ սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածի 1-ին մասում: Ընդ որում, այդ մարմինների իրավասությունը հստակորեն ենթարկված է առարկայական տարանջատման՝ մինչդատական վարույթում՝ ՀՀ գլխավոր դատախազը, իսկ դատական վարույթում կամ դատավճռի կատարման վարույթում՝ ՀՀ արդարադատության նախարարը կամ նրա միջնորդությամբ՝ գործը քննող կամ դատավճիռ կայացրած դատարանը:

13. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով կիրառված օրենքը՝ հանցագործություն կատարած անձի հանձնման վերաբերյալ որոշում կայացնելու իրավասություն ունեցող մարմինների ցանկը նախատեսող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածի 1-ին մասը, չի հակասում գլխավոր դատախազների միջև հատուկ հաղորդակցման կարգ սահմանող «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 1993 թվականի Կոնվենցիայի 80-րդ հոդվածի պահանջներին:

14. Գործի նյութերից երևում է, որ Ռուսաստանի Դաշնության դատարանի դատավճռով Լ.Նավոյանը մեղավոր է ճանաչվել ՌԴ քրեական օրենսգրքի 159-րդ հոդվածի 3-րդ մասով և դատապարտվել է ազատազրկման (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

Այնուհետև ՌԴ գլխավոր դատախազի տեղակալը միջնորդություն է ուղարկել ՀՀ գլխավոր դատախազություն՝ դատապարտյալ Լ.Նավոյանին կալանքի վերցնելու և

ՈւՌ հանձնելու համար՝ դատավճռով նշանակված պատիժը կրելու նպատակով: Միջնորդությունը քննարկել և դատապարտյալ Լ.Նավոյանին Ռուսաստանի Դաշնությանը հանձնելու մասին որոշում է կայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը):

Դատապարտյալ Լ.Նավոյանի վերաքննիչ բողոքի հիման վրա Վերաքննիչ դատարանը 2009 թվականի դեկտեմբերի 14-ի որոշմամբ վերացրել է Լ.Նավոյանին հանձնման թույլտվություն տալու մասին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի որոշումը և նրան անհապաղ ազատել կալանքից այն պատճառաբանությամբ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գլխավոր դատախազը, առավել ևս նրա տեղակալը նման որոշում կայացնելու լիազորությամբ օժտված չեն, քանի որ Լ.Նավոյանի վերաբերյալ առկա է եղել օրինական ուժի մեջ մտած դատավճիռ (տե՛ս սույն որոշման 4-րդ կետը):

15. Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանն իրավաչափ է համարում Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ նկատի ունենալով Լ.Նավոյանի նկատմամբ կայացված և օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայությունը, ՀՀ գլխավոր դատախազությունն իրավասու չէր կայացնելու հանձնման թույլտվության մասին որոշում:

16. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածի 1-ին մասի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Լևոն Ինգեսի Նավոյանին հանձնման թույլտվություն տալու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի 2009 թվականի նոյեմբերի 3-ի որոշումը վերացնելու և Լևոն Նավոյանին կալանքից ազատ արձակելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 14-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

49.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵԿԳ/0076/11/09

ԵԿԳ/0076/11/09

նախագահող դատավոր՝ Ժ.Հովսեփյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
*մասնակցությամբ դիմող* Ա. ՄՈՂՈՎՅԱՆԻ

12 փետրվարի 2010 թվական

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով դիմող Արևիկ Մողրովյանի ներկայացուցիչ Սրբուհի Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքը մերժելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2009 թվականի նոյեմբերի 4-ի որոշման դեմ Ա.Մողրովյանի ներկայացուցիչ Ս.Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2009 թվականի մարտի 31-ին հարուցվել է թիվ 69102309 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով:

ՀՀ ռստիկանության քննչական գլխավոր վարչության ՀԿԳ քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ Խ.Հայրապետյանի 2009 թվականի հունիսի 22-ի որոշմամբ նշված քրեական գործով Արևիկ Մողղովյանից խաբեությամբ զգալի չափերի հասնող գումար հափշտակելու փաստի առթիվ Աշոտ Գրիգորի Թադևոսյանի նկատմամբ քրեական գործի վարույթը կարճվել է և նրա նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի հունիսի 19-ի որոշման 5-րդ կետի 1-ին ենթակետի հիմքով:

2009 թվականի օգոստոսի 21-ին ստանալով քննիչի որոշման պատճենը՝ Ա.Մողղովյանը 2009 թվականի օգոստոսի 27-ին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով այն բողոքարկել է վերադաս դատախազին:

ՀՀ գլխավոր դատախազության սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ Մ.Սինասյանի 2009 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 11-596-09 գրությամբ Ա.Մողղովյանին հայտնվել է, որ նրա՝ ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված բողոքի կապակցությամբ կրկին անգամ ուսումնասիրվել է թիվ 69102309 քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման օրինականությունը և պարզվել է, որ Ա.Թադևոսյանի նկատմամբ համաներման ակտի ուժով գործի վարույթը կարճելու մասին որոշումը հիմնավորված է, այն վերացնելու հիմքեր չկան:

2. 2009 թվականի սեպտեմբերի 15-ին Ա.Մողղովյանը բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան) խնդրելով վերացնել քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին քննիչի հիշյալ որոշումը:

Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 24-ի որոշմամբ Ա.Մողղովյանի բողոքը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ վերջինիս կողմից չի բողոքարկվել դատախազի անգործությունը:

3. Ա.Մողղովյանի ներկայացուցիչ Ս.Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2009 թվականի նոյեմբերի 4-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 24-ի որոշումը:

4. Վերաքննիչ դատարանի 2009 թվականի նոյեմբերի 4-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դիմող Ա.Մողղովյանի ներկայացուցիչ Ս.Հովհաննիսյանը:

2010 թվականի հունվարի 11-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը Ա.Մողղովյանի ներկայացուցիչ Ս.Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազության սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Ջ.Ֆարխոյանը, որտեղ դիմող Ա.Մողղովյանի ներկայացուցիչ վճռաբեկ բողոքի պնդումներն ու պատճառաբանություններն ան-

հիմն, գտնելով, դատախազն ըստ էության հիմնավոր է համարում քննիչի որոշումն այն պատճառաբանությամբ, որ գործի նախաքննությամբ ձեռք բերված ապացույցներով Ա.Թադևոսյանին մեղադրվող արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով ճիշտ է որակվել, ուստի այդ պայմաններում վերջինիս նկատմամբ կիրառվել է «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի հունիսի 19-ի որոշման 5-րդ կետի 1-ին ենթակետը՝ քրեական գործի վարույթը կարճվել է ու նրա նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել: Ինչ վերաբերում է տուժող չճանաչվելու հետևանքով քաղաքացիական հայց ներկայացնելու հնարավորությունից զրկված լինելու հանգամանքին, ապա քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը չի խոչընդոտում Ա.Մողրովյանին քաղաքացիական դատավարության կարգով քաղհայց ներկայացնել դատարան:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. Առաջին աստիճանի դատարանը 2009 թվականի սեպտեմբերի 24-ի որոշմամբ մերժել է Ա.Մողրովյանի բողոքը՝ հիմք ընդունելով Մյասնիկ Հարութիկի Ավետիսյանի վերաբերյալ 2009 թվականի հունիսի 29-ի ԵԿԴ/0019/11/09 որոշման մեջ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված դիրքորոշումն այն մասին, որ «(...) եթե դատախազի կողմից իրեն ուղղված բողոքի կապակցությամբ կայացվել է ցանկացած այլ ակտ և ոչ թե որոշում, ապա այդ ակտը դատական բողոքարկման առարկա հանդիսանալ չի կարող: (...) դատախազի կողմից որոշում կայացնելու դատավարական ժամկետներն անցնելուց հետո ընդհանուր իրավասության դատարան կարող է բողոքարկվել դատախազի անգործությունը, քանի որ քրեադատավարական օրենքով նախատեսված ընթացակարգը չպահպանելն այդ դեպքում հավասարազոր է անգործության» (տե՛ս Նյութեր, 212-րդ էջ):

6. Վերաքննիչ դատարանը ևս, հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշումը, 2009 թվականի նոյեմբերի 4-ի որոշմամբ Ա.Մողրովյանի ներկայացուցիչ Ս.Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին աստիճանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 24-ի որոշումը (տե՛ս Նյութեր, 253-րդ էջ):

7. ՀՀ Սահմանադրական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-844 որոշմամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի «և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը, դատական պրակտիկայում դրան տրված՝ նաև «անգործությանը» վերագրվող բովանդակության մասով, որով գործնականում նույն հոդվածի 2-րդ մասի վրա տարածելով 1-ին մասում նախատեսված պայմանն ու նման մեկնաբանությամբ դիմողների նկատմամբ կիրառելով հոդվածի 1-ին մասը՝ սահմանափակվել են մարդու՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները, ճանաչվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոք բերած անձը փաստարկել է, որ առկա է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

9. Ըստ բողոքաբերի, Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է, անօրինական, չի բխում քրեադատավարական օրենսգրքի պահանջներից, կայացվել է տուժողին վերապահված մի շարք իրավունքների խախտումներով, այն նաև պատճառաբանված չէ, նրանում անդրադարձ չկա բողոքում նշված հիմքերին:

Բողոք բերած անձը նշել է մասնավորապես, որ Ա.Մողրովյանին տուժող չեն ճանաչել, և նա հնարավորություն չի ունեցել ներկայացնել քաղաքացիական հայց: Հանցագործությամբ պատճառված վնասը քննիչի հայեցողությամբ նշվել է 275.000 ՀՀ դրամ այն դեպքում, երբ նախաքննության ընթացքում տրված ցուցմունքներով հիմնավորվել է, որ պատճառված վնասը կազմում է 25.000 ԱՄՆ դոլար: Բացի այդ, գործի քննության ընթացքում հանցագործության ոչ բոլոր դրվագներին է իրավական գնահատական տրվել, որի արդյունքում արարքը սխալ է որակվել:

10. Վերագրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը, խնդրել է վերացնել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի նոյեմբերի 4-ի որոշումը, կայացնել նոր դատական ակտ, որպեսզի Ա.Մողրովյանը ճանաչվի տուժող և հնարավորություն ունենա ներկայացնելու քաղաքացիական հայց, իսկ Ա.Թադևոսյանն իր կատարած արարքի համար կրի համապատասխան պատասխանատվություն և պատիժ, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

### **Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից ՄԳՈ-844 որոշման կայացումը, որով հակասահմանադրական է ճանաչվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի «...և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը, դատական պրակտիկայում դրան տրված՝ նաև «անգործությամբ» վերագրվող բովանդակության մասով, պարտավորեցնում է, արդյոք, Առաջին ատյանի դատարանին դատական վերահսկողության կարգով ըստ էության քննության առնել քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին քննիչի 2009 թվականի հունիսի 22-ի որոշման դեմ դիմող Ա.Մողրովյանի բողոքը:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»:



Վերոնշյալ հոդվածի կապակցությամբ Վճռաբեկ դատարանի՝ *Մյասնիկ Հարությունի Ավետիսյանի* վերաբերյալ 2009 թվականի հունիսի 29-ի ԵԿԳ/0019/11/09 որոշման 16-րդ կետում տրված մեկնաբանության համաձայն՝ «(...) եթե դատախազին ներկայացված բողոքի կապակցությամբ նա որոշում չի կայացրել, այլ բողոքաբերին պատասխանել է ցանկացած այլ եղանակով, որը նախատեսված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, ապա, եթե չեն անցել ներկայացված բողոքի կապակցությամբ դատախազի կողմից որոշում կայացնելու դատավարական ժամկետները, այդ պատասխանների նկատմամբ չեն կարող կիրառվել ո՛չ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կանոններն ընդհանրապես, ո՛չ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի կանոնները, մասնավորապես: Այլ կերպ ասած, եթե դատախազի կողմից իրեն ուղղված բողոքի կապակցությամբ կայացվել է ցանկացած այլ ակտ և ոչ թե որոշում, ապա այդ ակտը դատական բողոքարկման առարկա հանդիսանալ չի կարող: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատախազի կողմից որոշում կայացնելու դատավարական ժամկետներն անցնելուց հետո ընդհանուր իրավասության դատարան կարող է բողոքարկվել դատախազի անգործությունը, քանի որ քրեադատավարական օրենքով նախատեսված ընթացակարգը չպահպանելն այդ դեպքում հավասարագոր է անգործության»:

13. ՀՀ Սահմանադրական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԳՈ-844 որոշմամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի «...և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը, դատական պրակտիկայում դրան տրված՝ նաև «անգործությանը» վերագրվող բովանդակության մասով, որով գործնականում նույն հոդվածի 2-րդ մասի վրա տարածելով 1-ին մասում նախատեսված պայմանն ու նման մեկնաբանությամբ դիմողների նկատմամբ կիրառելով հոդվածի 1-ին մասը՝ սահմանափակվել են մարդու՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները, ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր որոշման մեջ, անդրադառնալով մինչդատական վարույթում հետաքննություն և նախաքննություն, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների, պաշտոնատար անձանց, դատախազի որոշումների և գործողությունների դատական բողոքարկման ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությանը, օրենսդրական կարգավորմանն ու նշանակությանը, ինչպես նաև մինչդատական վարույթում դատական վերահսկողության և դատախազական հսկողության գործառնությունների բովանդակությանը, դրանց տարանջատմանը և սահմանադրորեն թույլատրելի շրջանակներին, արձանագրել է հետևյալը.

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, վերջինիս՝ «Դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ» վերտառությունը կրող 39-րդ գլխի նորմերի, համալիր վերլուծությունը վկայում է, որ հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքների քննությունը, որպես մինչդատական վարույթի նկատմամբ դատական վե-

րահսկողության գործառույթ, ունի իր առանձնահատուկ խնդիրներն ու նպատակները, մասնավորապես՝ բողոքարկվող որոշումների և գործողությունների օրինականությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և օրենսդրության այլ ակտերի պահանջներին համապատասխանությունը) ստուգելու արդյունքում պարզել անձի (կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության այլ մասնակցի կամ այլ անձի) իրավունքների և ազատությունների խախտման փաստը և կայացնել համապատասխան որոշում՝ անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության, կամ բողոքը մերժելու վերաբերյալ:

(...) Մասնավորապես, վիճարկվող 290 հոդվածի 1–ին մասի համաձայն հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումները և գործողությունները բողոքարկող սուբյեկտներ են քրեական դատավարության մասնակիցները և այլ անձինք, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով: Հիշյալ հոդվածի նույն մասի համաձայն քրեական գործերով մինչդատական վարույթում որպես դատական բողոքարկման անմիջական օբյեկտ (առարկա) են հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ–հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշումները և գործողությունները, այսինքն՝ այնպիսի որոշումներ ու գործողություններ, որպիսիք հատկապես մատնանշված են օրենսգրքի համապատասխան նորմերում:

(...)

Այսուհանդերձ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41 հոդվածի համաձայն, դատարանը, ի թիվս քրեական գործերով ընդհանուր այլ լիազորությունների, իրավասու է «...քննել և լուծել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ–հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքները»: Այսպիսով, մինչդատական վարույթում օրենսդիրը դատարանին լիազորել է քննելու ոչ միայն քրեական վարույթ իրականացնող իրավասու մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումների և գործողությունների օրինականության, այլև՝ անգործության վերաբերյալ բողոքները, իսկ «...և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» պայմանը բացառապես վերաբերում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ–հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումներին ու գործողություններին, հետևաբար՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1–ին մասի իրավակարգավորման շրջանակներում չէր կարող վերագրվել նաև հիշյալ մարմինների անգործությանը:»

ՀՀ Սահամանադրական դատարանն արձանագրել է նաև, որ «քրեական գործերով մինչդատական վարույթում բողոքարկման (դատախազական և դատական) ինստիտուտի իրավակիրառման շրջանակներում «գործողություն» և «անգործություն» եզրույթները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով մինչդատական վարույթի իրավակարգավորման շրջանակներում նույնաբովանդակ մեկնաբանվել չեն կարող: (...) «անգործություն» եզրույթն իրավակիրառական պրակտիկայում, սույն գործի

առարկայի շրջանակներում, պետք է ընկալվի որպես հետաքննության, նախաքննության մարմինների, պաշտոնատար անձանց և դատախազի՝ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված լիազորությունների (որոշումների ընդունում, իրենց լիազորություններից բխող գործունեության իրականացում) չկատարում: Վերջինս նույնպես կարող է առաջացնել իրավական հետևանքներ, պատճառ դառնալ մարդկանց սահմանադրական իրավունքների խախտման: Հետևաբար, նման անգործության դատական բողոքարկման նպատակը և ոչ իրավաչափ գործողության դատական բողոքարկման նպատակը նույնական են՝ հետապնդում են իրավունքների պաշտպանության համանման խնդիր: Այլ բան է, որ օրենսդիրը կարող է սահմանել դրանց բողոքարկման տարբեր ընթացակարգեր, սակայն մեկը մյուսով կլանելու և նման իրավակիրառական պրակտիկա ձևավորելու հանգամանքը վկայությունն է այն բանի, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի առկա խմբագրությունն իր մեջ անորոշություն է պարունակում և կիրառվում է իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակության շրջանակներում:»

Անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասում նախատեսված դատական բողոքարկման կարգին՝ ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «հետաքննության, նախաքննության մարմինների, պաշտոնատար անձանց, դատախազի որոշումները և գործողությունները դատարան բողոքարկելու՝ անձանց (քրեական դատավարության մասնակիցների և այլ անձանց) իրավունքը կարող է իրացվել հետևյալ նախապայմանների դեպքում.

- եթե խախտվել են այդ անձանց իրավունքները և օրինական շահերը,
- եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

Վերջինիս դեպքում հետևում է, որ անձը դատախազի որոշումը կամ գործողությունը բողոքարկելիս պետք է դիմի նաև վերադաս դատախազին: Իսկ իրավունքների և օրինական շահերի խախտման վերաբերյալ նախապայմանի առաջադրումը վիճարկվող նորմի իրավակարգավորման շրջանակներում խոչընդոտ չի կարող հանդիսանալ անձի բողոքն ըստ էության քննելու համար:

Այսպիսով, ինչպես վկայում է վիճարկվող նորմի իրավական բովանդակությունը, անձն իր իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության՝ ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածներով նախատեսված իրավունքն իրացնելիս նախ պարտավոր է դատախազի առջև հայցել իր բողոքի բավարարում, այսինքն՝ արդարադատության մատչելիության իր իրավունքն իրականացնել իրավական պաշտպանության մեկ այլ միջոցի նախապես գործադրման պայմանով:

(...)

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմի դատական պրակտիկայի կողմից տրված մեկնաբանության շրջանակներում այդպիսի պարտադիր պայմանի առկայությունը, երբ քրեական վարույթ իրականացնող մարմնի, պաշտոնատար անձի անգործությամբ խախտվել են քրեական դատավարության մասնակիցների կամ շահագրգիռ այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, և նա չի կարող առանց նախապայմանների իրացնել դատական պաշտպանության իր իրավունքը, չի բխում ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունից:»

Այսպիսով, ՀՀ Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի «...և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը, պայմանավորված դատախազի «անգործությամբ», որի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը ԵԿԴ/0019/11/09 որոշման 16-րդ կետում դիրքորոշում է հայտնել, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր: Վերոնշյալ որոշման ընդունումից հետո առկա է հակասություն ՀՀ Սահմանադրական դատարանի ՄԳՆ-844 որոշման և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի միատեսակ կիրառության կապակցությամբ կայացված՝ Վճռաբեկ դատարանի ԵԿԴ/0019/11/09 որոշման միջև:

14. Ելնելով սույն որոշման նախորդ կետում շարադրված՝ ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից արտահայտած դիրքորոշումից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *Մյասնիկ Հարութիկի Ավետիսյանի* վերաբերյալ 2009 թվականի հունիսի 29-ի ԵԿԴ/0019/11/09 որոշմամբ ձևավորած դիրքորոշումը (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը) պետք է վերանայել և համապատասխանեցնել ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշման հետ:

15. Ուստի Վճռաբեկ դատարանը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 7-ի ՄԳՆ-844 որոշմամբ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի միասնական կիրառության հետ կապված անհրաժեշտ է համարում ձևավորել հետևյալ մոտեցումը՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում դատական բողոքարկման առարկա անմիջականորեն կարող են հանդիսանալ քրեական հետապնդման մարմինների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները, եթե դրանք չեն բավարարվել դատախազի կողմից՝ անկախ նրանից, թե բողոքարկման արդյունքում դատախազի կողմից ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված ակտեր են կայացվել, թե դրսևորվել է անգործություն:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին քննիչի 2009 թվականի հունիսի 22-ի որոշումը դիմող Ա.Մողրովյանի կողմից բողոքարկվել է վերադաս դատախազին: ՀՀ գլխավոր դատախազության սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի գրությամբ Ա.Մողրովյանի բողոքը մերժվել է (տե՛ս սույն որոշման 1-ին կետը): Դրանից հետո քննիչի որոշումը Ա.Մողրովյանի կողմից բողոքարկվել է դատական կարգով: Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 24-ի որոշմամբ Ա.Մողրովյանի բողոքը մերժվել է, իսկ Վերաքննիչ դատարանի 2009 թվականի նոյեմբերի 4-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ՝ հինք ընդունելով Վճռաբեկ դատարանի այն մոտեցումը, որ ընդհանուր իրավասության դատարան պետք է բողոքարկվի դատախազի անգործությունը, քանի որ քրեադատավարական օրենքով նախատեսված ընթացակարգը չպահպանելն այդ դեպքում հավասարազոր է անգործության (տե՛ս սույն որոշման 5-րդ և 6-րդ կետերը):

17. Այսպիսով, ՀՀ Սահմանադրական դատարանի ՄԴՈ-844 որոշմամբ, ըստ էության, սահմանվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հողվածի այնպիսի մեկնաբանություն, որի պայմաններում դիմող Ա.Մողրովյանի նկատմամբ 290-րդ հողվածի 1-ին մասի կիրառմամբ («...և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը վերագրելով դատախազի «անգործությանը») սահմանափակվել են նրա՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները: Ուստի ՀՀ Սահմանադրական դատարանի ՄԴՈ-844 որոշումը պարտավորեցնում է Առաջին ատյանի դատարանին դատական վերահսկողության կարգով ըստ էության քննության առնել քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին քննիչի 2009 թվականի հունիսի 22-ի որոշման դեմ դիմող Ա.Մողրովյանի բողոքը:

Հետևաբար, Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների դատական ակտերը պետք է բեկանել և գործն ուղարկել համապատասխան առաջին ատյանի դատարան՝ ըստ էության նոր քննության:

18. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հողվածի 1-ին մասի միատեսակ կիրառության հետ կապված ձևավորել նոր իրավական դիրքորոշում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հողվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հողվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ քննիչի 2009 թվականի հունիսի 22-ի որոշման դեմ դիմող Արևիկ Վաղինակի Մողրովյանի բողոքը մերժելու մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 24-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի նոյեմբերի 4-ի որոշումն ամբողջությամբ բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն  
Դատավորներ՝ ստորագրություններ*

50.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության

ՏԳ/0100/01/09

վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ՏԳ/0100/01/09

նախագահող դատավոր՝ Մ.Պետրոսյան  
դատավորներ՝ Ս.Համբարձումյան, Գ.Մելիք-Սարգսյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

2010թ. փետրվարի 12-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ամբաստանյալ Գագիկ Հակոբի Մելքոնյանի վճռաբեկ բողոքը Գագիկ Հակոբի Մելքոնյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով և 361-րդ հոդվածի 5-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի նոյեմբերի 5-ի որոշման դեմ,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2009թ. մարտի 3-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով հարուցվել է թիվ 56101109 քրեական գործը:

2009թ. մարտի 11-ին ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 90400709 քրեական գործը:

2009թ. մարտի 16–ին ՀՀ քրեական օրենսգրքի 183–րդ հոդվածի 2–րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 90752109 քրեական գործը:

2009թ. մարտի 16–ին ՀՀ քրեական օրենսգրքի 361–րդ հոդվածի 1–ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 90400809 քրեական գործը:

2009թ. մարտի 21–ի որոշմամբ թիվ 90752109, 90400709 և 90400809 քրեական գործերը միացվել են մեկ վարույթում, և քննությունը շարունակվել է թիվ 90752109 համարով:

2009թ. մարտի 26–ի որոշմամբ թիվ 90752109 և 56101109 քրեական գործերը միացվել են մեկ վարույթում, և քննությունը շարունակվել է թիվ 90752109 համարով:

2009թ. մարտի 30–ին Գագիկ Մելքոնյանը ձերբակալվել է:

2. 2009թ. ապրիլի 1–ի որոշմամբ Գ.Մելքոնյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177–րդ հոդվածի 2–րդ մասի 1–ին, 2–րդ, 3–րդ, 4–րդ կետերով և 361–րդ հոդվածի 5–րդ մասով:

2009թ. հուլիսի 18–ի որոշմամբ Գ.Մելքոնյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177–րդ հոդվածի 2–րդ մասի 1–ին, 2–րդ, 3–րդ, 4–րդ կետերով և 361–րդ հոդվածի 5–րդ մասով:

3. 2009թ. հուլիսի 24–ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

4. Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. օգոստոսի 18–ի դատավճռով Գ.Մելքոնյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177–րդ հոդվածի 2–րդ մասի 1–ին, 2–րդ, 3–րդ, 4–րդ կետերով և 361–րդ հոդվածի 5–րդ մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 177–րդ հոդվածի 2–րդ մասի 1–ին, 2–րդ, 3–րդ, 4–րդ կետերով նա դատապարտվել է ազատազրկման 3 /երեք/ տարի ժամկետով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 361–րդ հոդվածի 5–րդ մասով՝ ազատազրկման 2 /երկու/ տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66–րդ հոդվածի 4–րդ մասի հիման վրա, պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Գ.Մելքոնյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 4 /չորս/ տարի ժամկետով:

Նույն դատավճռով դատապարտվել է նաև Վլադիմիր Դադյանը, որի մասով դատավճիռը չի բողոքարկվել:

5. Գ.Մելքոնյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009թ. նոյեմբերի 5–ի որոշմամբ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. օգոստոսի 18–ի դատավճիռը թողել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. նոյեմբերի 5–ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Գ.Մելքոնյանը:

6. Վճռաբեկ դատարանը 2010թ. հունվարի 15–ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2–րդ հոդվածի 1–ին մասի 3–րդ կետի հիմքով («վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ»):

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ուղարկվել:

**Գործի փաստական հանգամանքները**

7. Գ.Մելքոնյանը ՀՀ քրեական օրենսգրքի 177–րդ հոդվածի 2–րդ մասի 1–ին, 2–րդ, 3–րդ, 4–րդ կետերով և 361–րդ հոդվածի 5–րդ մասով դատապարտվել է հետևյալ հանցանքների համար.

Հանդիսանալով ՀՀ ՊՆ 21127 գործնասի ժամկետային զինծառայող, կոչումով շարքային, նախապես հանցավոր համաձայնության գալով համաձայնաբեր շարքային Վլադիմիր Դադյանի հետ, 2009 թվականի փետրվարի 18–ին՝ ժամը 03<sup>00</sup>–ի սահմաններում, ապօրինի մուտք են գործել իրենց գործնասի հարակից տարածքում գտնվող խանութ և գողացել 115.000 ՀՀ դրամ, 10.000 ՀՀ դրամ արժողությամբ «Նոկիա–1208» տեսակի բջջային հեռախոս և 135.250 ՀՀ դրամի տարբեր տեսակի ապրանքներ՝ խանութի տիրոջը՝ Արմեն Չոբանյանին պատճառելով զգալի չափի (ընդհանուր՝ 260.250 ՀՀ դրամի) նյութական վնաս: Գողացված ապրանքները լցնելով պոլիէթիլենային պարկերի մեջ՝ քաքքրել են մոտակա անտառում և տնօրինել:

Այնուհետև, 2009 թվականի փետրվարի 21–ին՝ ժամը 13<sup>30</sup>–ի սահմաններում, շարքային Վ.Դադյանի հետ նախնական համաձայնությամբ ինքնակամ թողել են գործնասի տարածքը և մեկ օր անց՝ 2009թ. փետրվարի 22–ին՝ ժամը 18<sup>00</sup>–ին, հայտնաբերվել և վերադարձվել են գործնաս:

2009թ. փետրվարի 28–ին՝ ժամը 20<sup>30</sup>–ի սահմաններում, շարքային Վ.Դադյանի հետ նախնական համաձայնությամբ կրկին ինքնակամ թողել են գործնասի տարածքը և գնացել Տավուշի մարզի Թովուզ գյուղ: Հանցավոր համաձայնության գալով՝ 2009թ. մարտի 3–ին՝ ժամը 03<sup>00</sup>–ի սահմաններում, նրանք կտրել են Ջոյա Դարբինյանին պատկանող խանութի պատուհաններից մեկի ճաղավանդակն ու ապակին, մուտք են գործել խանութ, գողացել են 44.000 ՀՀ դրամ և 219.850 ՀՀ դրամի տարբեր տեսակի ապրանքներ՝ վերջինիս պատճառելով զգալի չափի (ընդհանուր՝ 263.850 ՀՀ դրամի) նյութական վնաս: Գողացված ապրանքները լցնելով պոլիէթիլենային պարկերի մեջ՝ տեղափոխել են ք. Երևան, գումարը և ապրանքների մի մասը օգտագործել են իրենց անձնական կարիքների համար, մի մասն էլ վաճառել և գոյացած գումարը տնօրինել են իրենց հայեցողությամբ:

Այնուհետև, 2009թ. մարտի 6–ին՝ ժամը 06<sup>00</sup>–ի սահմաններում, նորից շարքային Վ.Դադյանի հետ հանցավոր համաձայնությամբ Երևան քաղաքի Երվանդ Քոչարի փողոցում գտնվող ավտոկայանատեղից կատարել են խոշոր չափի գողություն՝ գողացել են ՎԱԶ–21065 մակնիշի ավտոմեքենա, որի արժեքն էր 1.100.000 ՀՀ դրամ: Նույն օրը՝ ժամը 08<sup>30</sup>–ի սահմաններում՝ Սևան–Գավառ ավտոճանապարհին վթարի ենթարկվելուց հետո՝ ժամը 11<sup>30</sup>–ի սահմաններում, Գ.Մելքոնյանն ու Վ.Դադյանը հայտնաբերվել և բերման են ենթարկվել ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության վարչության Սևանի կայազորի Ռ-Ո բաժին:

Գ.Մելքոնյանը ծառայությունից բացակայել է 2009թ. փետրվարի 28–ից մարտի 6–ը, այսինքն՝ 3 օրից ավելի, բայց մեկ ամսից ոչ ավելի ժամանակով:

8. ՀՀ ՊՆ 21127 գործնասի հրամանատարի 2009թ. մարտի 1–ի թիվ 60 հրամանով զինծառայողներ Գագիկ Մելքոնյանը և Վլադիմիր Դադյանը համարվել են գործնասն ինքնակամ թողած 2009թ. փետրվարի 28–ից և հանվել են համապատասխան ստորաբաժանումների պարենավորումից (տե՛ս քրեական գործ, հատոր 1, էջ 88):



9. 2009թ. մարտի 6–ին Սևանի կայագործի ռազմական ոստիկանության բաժին բերման է ենթարկվել Գ.Մելքոնյանը, որը հայտարարել է, որ ինքը 2009թ. փետրվարի 28–ին՝ ժամը 20 անց 30–ի սահմաններում, ինքնակամ թողել է զորամասը (տե՛ս քրեական գործ, հատոր 1, 51–52 էջեր):

Սևանի կայագործի զինվորական պարետատանը 2009թ. մարտի 6–ին լրացված կալանավորման գրության համաձայն՝ Գ.Մելքոնյանը զորամասն ինքնազուխ լքելու համար զինվորական պարետի կողմից ենթարկվել է կարգապահական կալանքի 5 օր ժամկետով: Ըստ կալանատան նշումների՝ Գ.Մելքոնյանն ընդունվել է 2009թ. մարտի 6–ին և ենթակա է ազատման 2009թ. մարտի 11–ին (տե՛ս քրեական գործ, հատոր 1, էջ 55): Սակայն մարտի 11–ին Գ.Մելքոնյանին կալանքից ազատելու վերաբերյալ գործի նյութերում որևէ փաստական տվյալ չկա:

10. 2009թ. մարտի 11–ին ՀՀ քրեական օրենսգրքի 361–րդ հոդվածի 1–ին մասով հարուցվել է քրեական գործ շարքային Գ.Մելքոնյանի կողմից ծառայության վայրը 3 օրից ավելի, բայց մեկ ամսից ոչ ավելի տևողությամբ թողնելու փաստի առթիվ (տե՛ս քրեական գործ, հատոր 1, էջ 104):

11. 2009թ. հոկտեմբերի 23–ին կազմվել է տեղեկանք այն մասին, որ 2009թ. մարտի 11–ին Սևանի կայագործի Ռ-Ռ բաժնի պետի գրության համաձայն՝ ընդունիչ–բաշխիչ է ընդունվել շարքային Գ.Մելքոնյանը՝ մարտի 6–ին զորամասն ինքնակամ թողնելու համար: Այնուհետև 2009թ. մարտի 13–ին Ռ-Ռ վարչության գրության համաձայն՝ Գ.Մելքոնյանը 2009թ. մարտի 19–ին էտապավորվել է Իջևանի Ռ-Ռ բաժին (տե՛ս քրեական գործ, հատոր 3, էջ 316):

12. 2009թ. մարտի 20–ին Իջևանի Ռ-Ռ բաժնի մեկուսարանի պետը զեկուցագիր է ներկայացրել Իջևանի Ռ-Ռ բաժնի պետին, որով հայտնել է, որ «Իջևանի Ռ-Ռ բաժնի մեկուսարանում էտապավորման կարգով բերված 21127 զորամասի ժամկետային զինծառայող Գագիկ Հակոբի Մելքոնյանը «քուն» հրամանը ժամանակին չի կատարել»: Բաժնի պետի կողմից հայտարարվել է կալանք 7 օր ժամկետով (տե՛ս քրեական գործ, հատոր 3, էջ 317):

Մեկուսացման գրությունից երևում է, որ նա 7 օրով մեկուսացվել է ու պահվել թիվ 4 խցում՝ օրվա կարգացուցակի խախտման համար և ենթակա է ազատման 2009թ. մարտի 27–ին (տե՛ս քրեական գործ, հատոր 3, էջ 318):

13. 2009թ. մարտի 27–ին նույն մեկուսարանի պետը զեկուցագիր է ներկայացրել Ռ-Ռ բաժնի պետին այն մասին, որ Իջևանի Ռ-Ռ բաժնի մեկուսարանում կարգապահական կալանք կրող Գագիկ Մելքոնյանը թերացել է շարային պարապմունքների ժամանակ: Բաժնի պետի կողմից հայտարարվել է կալանք 3 օր ժամկետով (տե՛ս քրեական գործ, հատոր 3, էջ 319):

Մեկուսացման գրությունից երևում է, որ նա 3 օրով մեկուսացվել է պահվել է թիվ 4 խցում՝ օրվա կարգացուցակի խախտման համար և ենթակա է ազատման 2009թ. մարտի 30–ին (տե՛ս քրեական գործ, հատոր 3, էջ 320):

14. 2009թ. մարտի 26–ի որոշմամբ զորամասն ինքնակամ թողնելու, ավտոմեքենա փախցնելու և գողություն կատարելու վերաբերյալ քրեական գործերը միացվել են մեկ վարույթում (տե՛ս քրեական գործ, հատոր 2, էջ 65): Իսկ 2009թ. մարտի 30–ին Գ.Մելքոնյանը ձերբակալվել է զորամասն ինքնակամ թողնելու և գողության կասկածանքով

և ուղարկվել է պահվելու ՀՀ ՊՆ Ռ-ՌՎ Իջևանի Ռ-Ռ բաժնի կարգապահական մեկուսարանում (տե՛ս քրեական գործ, հատոր 2, էջ 118):

15. 2009թ. ապրիլի 1-ի որոշմամբ Գ.Մելքոնյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 5-րդ մասով, 177-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով (տե՛ս քրեական գործ, հատոր 2, էջ 148):

Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 2009թ. ապրիլի 2-ի որոշմամբ մեղադրյալ Գ.Մելքոնյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը 2 ամիս ժամկետով (տե՛ս քրեական գործ, հատոր 2, էջ 167):

16. Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 2009թ. օգոստոսի 18-ի դատավճռով Գ.Մելքոնյանն ազատազրկման է դատապարտվել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 5-րդ մասով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով նախատեսված հանցագործությունների համար, իսկ կալանքի սկիզբը հաշվվել է նրան ձերբակալելու օրվանից՝ 2009թ. մարտի 30-ից:

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

17. Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոք բերած անձը գտնում է, որ դատարանը պատիժ նշանակելիս հաշվի չի առել այն հանգամանքը, որ ինքը ԲՌԻՀ-ի ուսանող է, դատապարտվում է առաջին անգամ, ինքնակամ է ներկայացել իրավապահ մարմիններին, ընտանիքը գտնվում է ծանր սոցիալական վիճակում, ցանկանում է շարունակել ինչպես ծառայությունը, այնպես էլ ուսումը: Բացի այդ, բողոք բերած անձը նշել է, որ ինքը փաստացի ձերբակալվել է 2009թ. մարտի 6-ին, սակայն նախնական կալանքի սկիզբը հաշվվել է 2009թ. մարտի 30-ից:

Ելնելով վերոգրյալից՝ բողոք բերած անձը խնդրել է հաշվի առնել նշված հանգամանքները և իր նկատմամբ նշանակել ավելի մեղմ պատիժ:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

18. Սույն որոշման 8-9-րդ կետերում շարադրված փաստերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Գ.Մելքոնյանը 2009թ. փետրվարի 28-ից ինքնակամ թողել է գործամասը և բերման է ենթարկվել 2009թ. մարտի 6-ին:

Փաստորեն նա գործամասն ինքնակամ թողել է երեք օրից ավելի, բայց մեկ ամսից ոչ ավելի տևողությամբ, այսինքն՝ կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն: Այդ արարքի՝ գործամասն ինքնակամ թողնելու համար Գ.Մելքոնյանը Սևանի կայագործի զինվորական պարետի որոշմամբ ենթարկվել է կարգապահական կալանքի 5 օր ժամկետով և պետք է ազատվեր 2009թ. մարտի 11-ին:

Նշված օրը Գ.Մելքոնյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով (գործամասն ինքնակամ թողնելու համար) հարուցվել է քրեական գործ (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը): Այսինքն՝ գործամասն ինքնակամ թողնելու առթիվ քրեական գործ է հարուցվել մի անձի նկատմամբ, որը նույն արարքի համար կալանքի տակ էր:

19. Չնայած այն բանին, որ Գ.Մելքոնյանի կարգապահական կալանքի ժամկետը լրանում էր 2009թ. մարտի 11-ին, նա կալանքից չի ազատվել և 2009թ. մարտի

19-ին էտապավորման միջոցով հայտնվել է Իջևանի Ռ-Ռ բաժնի կարգապահական մեկուսարանում և առանց որևէ իրավական հիմքի շարունակել է մնալ կալանքի տակ (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

20. Իջևանի Ռ-Ռ բաժնի կարգապահական մեկուսարանում օրվա կարգացուցակը խախտելու համար Գ.Մելքոնյանը երկու անգամ՝ 7 և 3 օր ժամկետներով ենթարկվել է կարգապահական տույժի՝ կալանքի և պահվել է խցում (տե՛ս սույն որոշման 12-13-րդ կետերը):

Չնայած նա պետք է ազատվեր 2009թ. մարտի 30-ին, սակայն այդ օրը նա ձերբակալվել է գորամասն ինքնական թողնելու և գողության կասկածանքով և ուղարկվել է պահվելու Իջևանի Ռ-Ռ բաժնի կարգապահական մեկուսարանում, թեև մարտի 19-ից փաստացի պահվում էր այնտեղ (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը):

Եվ վերջապես, Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավճռով Գ.Մելքոնյանը դատապարտվել է նաև գորամասն ինքնական թողնելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 5-րդ մասով): Այսինքն՝ նա դատապարտվել է ազատագրկման այն արարքի համար, որի համար ենթարկվել էր կարգապահական կալանքի (տե՛ս սույն որոշման 15-րդ կետը):

21. Փաստորեն քրեորեն հետապնդելի արարքի՝ գորամասն ինքնական թողնելու համար 2009թ. մարտի 6-ից կալանավորված Գ.Մելքոնյանը 24 օր՝ մարտի 6-ից 30-ը, գտնվել է մեկուսարանում: Ընդ որում, միայն այն հանգամանքը, որ այդքան իսկ կալանավորված Գ.Մելքոնյանը երկու անգամ 10 օր ընդհանուր ժամկետով ենթարկվել է կարգապահական կալանքի, չի կարող հանգեցնել նրա կալանքի ժամկետի երկարացման:

22. Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ի մասի՝ «Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, (...) իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք»:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ի մասի՝ «Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, (...), իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից»:

23. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի վերը նշված փաստական հանգամանքները վերաքննիչ դատարանի կողմից պատշաճ գնահատման չեն ենթարկվել, որի արդյունքում չի լուծվել գորամասն ինքնական թողնելու համար 2009թ. մարտի 6-ից մինչև մարտի 30-ը կարգապահական կալանքի տակ գտնված և հետագայում այդ հանցագործության համար ազատագրկման դատապարտված Գ.Մելքոնյանի՝ 24 օր անազատության մեջ գտնվելն ազատագրկման ձևով պատժին հաշվակցելու հարցը:

Այսպիսով՝ վերաքննիչ դատարանը, խախտելով գործի արդարացի քննության սկզբունքը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդված) և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի հիման վրա գործով ապացույցները պատշաճորեն չգնահատելով, թույլ է տվել քրեադատավարական օրենքի էական խախտում, որը հանգեցրել է պատժի մասով ոչ ճիշտ որոշում կայացնելուն:

Սույն գործով թույլ տրված դատավարական իրավունքի խախտումները հանգեցրել են դատական սխալի, որն ամբաստանյալ Գ.Մելքոնյանի համար առաջացրել է ծանր հետևանք:

24. Սույն որոշման նախորդ կետում շարադրված հանգամանքների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. նոյեմբերի 5-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան նոր քննության: Նոր դատական քննությամբ անհրաժեշտ է վերը շարադրված հարցերի շուրջ կատարել արդարացի քննություն, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի պահանջներից ելնելով՝ պատշաճ գնահատման ենթարկել գործում եղած ապացույցները և հանգել համապատասխան հետևության:

25. Ինչ վերաբերում է Գ.Մելքոնյանի նկատմամբ ավելի մեղմ պատիժ նշանակելու վերաբերյալ բողոք բերած անձի պատճառաբանությանը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, հետազոտելով գործում եղած տվյալները, հանգել է ճիշտ եզրակացության, որ սույն գործով Գ.Մելքոնյանի նկատմամբ նշանակված պատիժը բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ և 10-րդ հոդվածներով սահմանված՝ օրինականության, արդարության և պատասխանատվության անհատականացման, ինչպես նաև 61-րդ հոդվածով սահմանված՝ պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից: Վերաքննիչ դատարանն ամբաստանյալի նկատմամբ նշանակել է արդարացի պատիժ՝ հաշվի առնելով ամբաստանյալի կողմից կատարված հանցագործության բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, մասնավորապես այն, որ նա անկեղծորեն զղջացել է կատարածի համար, երիտասարդ է, նախկինում արատավորված չի եղել:

26. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Գագիկ Հակոբի Մելքոնյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով և 361-րդ հոդվածի 5-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. նոյեմբերի 5-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

51.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության

ԵԿԴ/0081/11/09

վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵԿԴ/0081/11/09

նախագահող դատավոր՝ Ս.Համբարձումյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՄԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

12 փետրվարի 2010 թվական

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2009 թվականի նոյեմբերի 17-ի որոշման դեմ,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1.Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2007 թվականի փետրվարի 9-ին Երևանի Սալաթիա-Մեքաստիա համայնքի դատախազությունում հարուցվել է թիվ 16202307 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ 2007 թվականի հունվարի 17-ին Ժորա Հարությունյանի կողմից Լաուրա Գարեգինի Չարյանին առևանգելու դեպքի առթիվ:

Նախաքննության մարմինը 2007 թվականի մայիսի 9-ին որոշում է կայացրել քրեական գործի վարույթը կարճելու և Ժորա, Էդմոնդ, Կարեն Հարությունյանների

նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ նրանց արարքներում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

2007 թվականի հոկտեմբերի 15-ին ՀՀ գլխավոր դատախազությունում որոշում է կայացվել թիվ 16202307 քրեական գործի վարույթը կարճելու որոշումը վերացնելու և նախաքննությունը շարունակելու մասին:

Ժ.Հարությունյանի և նրա պաշտպան Կ.Գրիգորյանի բողոքի քննության արդյունքում Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2008 թվականի հունվարի 21-ին որոշում է կայացրել բողոքը հիմնավորված ճանաչելու և դատախազի որոշումը վերացնելու մասին:

2. 2008 թվականի օգոստոսի 14-ին Լ.Ջարյանի դիմումի հիման վրա ՀՀ գլխավոր դատախազությունում որոշում է կայացվել թիվ 16202307 քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման վերանայման հարցի պարզաբանման նպատակով նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վարույթ հարուցելու մասին:

ՀՀ գլխավոր դատախազի 2009 թվականի հունվարի 26-ի որոշմամբ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով թիվ 16202307 քրեական գործի վարույթը կարճելու մասին 2007 թվականի մայիսի 9-ի որոշումը վերացվել է, և նախաքննությունը շարունակելու նպատակով գործն ուղարկվել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերով քննության վարչություն:

ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերով քննության վարչությունում 2009 թվականի մարտի 23-ին որոշում է կայացվել թիվ 16202307 քրեական գործի վարույթը կարճելու մասին:

Տուժող Լ.Ջարյանի բողոքի քննության արդյունքում Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2009 թվականի հունիսի 12-ին որոշում է կայացրել բողոքը բավարարելու և թիվ 16202307 քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ 2009 թվականի մարտի 23-ի որոշումը վերացնելու մասին:

3. ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերով քննության վարչությունում 2009 թվականի օգոստոսի 11-ին կրկին որոշում է կայացվել թիվ 16202307 քրեական գործի վարույթը կարճելու և Ժորա, Էդմոնդ, Կարեն Հարությունյանների նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ նրանց արարքներում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Վերոգրյալ որոշումը Լ.Ջարյանի կողմից բողոքարկվել է ՀՀ գլխավոր դատախազին, որը 2009 թվականի սեպտեմբերի 3-ի որոշմամբ մերժվել է:

2009 թվականի հոկտեմբերի 7-ին Լ.Ջարյանը բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան), որը դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 22-ի որոշմամբ մերժվել է:

4. Լ.Ջարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2009 թվականի նոյեմբերի 17-ին որոշում է կայացրել բողոքը բավարարելու, Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 22-ի որոշումը բեկանելու մասին: Նախաքննության մարմնի 2009 թվականի օգոստոսի 11-ի և դատախազի 2009 թվականի սեպտեմբերի 3-ի որոշումները վերացվել են, և վարույթն իրականաց-

նող մարմնին պարտավորեցվել է վերսկսել թիվ 16202307 քրեական գործով կարճված վարույթը:

5. Վերաքննիչ դատարանի 2009 թվականի նոյեմբերի 17-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ դատարանը 2010 թվականի հունվարի 15-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

6. Սույն գործով Վերաքննիչ դատարանն իր դատական ակտի եզրափակիչ մասը շարադրել է հետևյալ բովանդակությամբ. «Քրեական գործով տուժող Լատուրա Գարեգինի Ջարյանի վերաքննիչ բողոքը բավարարել:

«Բողոքը քննության առնելու մասին» Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2009թ. հոկտեմբերի 22-ի որոշումը բեկանել՝ «Քրեական հետապնդում չիրականացնելու ու քրեական գործով վարույթը կարճելու մասին» ՀՀ ոստիկանության ՔԳ-Վ ՀԿԳ ՔՎ բաժնի պետ Ա. Այվազյանի 11.08.2009թ. և «Տուժողի բողոքը մերժելու մասին» ՀՀ Գլխավոր դատախազության Սարգոս դեմ ուղղված հանցագործությունների գործերի վարչության պետի տեղակալ Ա.Դավթյանի 03.09.2009թ. որոշումները վերացնել և պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերսկսելու թիվ 16202307 քրեական գործով կարճված վարույթը: (...):»:

### **3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի էական խախտում, որն արտահայտվել է ՀՀ Սահմանադրության 5-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 18-րդ, 23-րդ, 290-րդ, 385-րդ, 393-395-րդ հոդվածների սխալ կիրառմամբ և ազդել է գործի ելքի վրա:

8. Բողոքի հեղինակը նշում է, որ դատարանն իրավասու չէ որոշում կայացնել նախաքննության մարմնի՝ քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումը վերացնելու մասին, հետևաբար Վերաքննիչ դատարանը, նման որոշում կայացնելով, դուրս է եկել իր լիազորությունների շրջանակներից:

Ի հիմնավորումն ասվածի՝ բողոքի հեղինակը նշում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու իրավունք է վերապահել բացառապես դատախազին, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանել է, որ նշված որոշման դեմ բողոքը

ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին:

Վերոգրյալից բողոք բերած անձը հետևություն է անում այն մասին, որ Վերաքննիչ դատարանը, որոշում կայացնելով թիվ 16202307 քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումը վերացնելու մասին, թույլ է տվել ՀՀ Սահմանադրությանը և քրեադատավարական օրենքով երաշխավորված օրինականության սկզբունքի խախտում:

9. Բողոքի հեղինակը նշում է նաև, որ Վերաքննիչ դատարանն ակնհայտորեն հանդես է եկել մեղադրանքի կողմում՝ խախտելով քրեադատավարական օրենքով երաշխավորված անմեղության կանխավարկածի և մրցակցության սկզբունքները, իր պատճառաբանությունները հիմնավորել է օրենքի պահանջներից և քրեական գործի նյութերից չբխող հանգամանքներով:

Ըստ բողոքաբերի՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշմամբ Լ.Ջարյանի որևէ իրավունք կամ ազատություն չի խախտվել, հետևաբար հիշատակված որոշումը վերացնելու հիմքերը բացակայել են:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրում է բեկանել Վերաքննիչ դատարանի 2009 թվականի նոյեմբերի 17-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 22-ի որոշմանը:

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. տուժող Լ.Ջարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանն իրավասո՞ւ էր արդյոք որոշում կայացնել նախաքննության մարմնի՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու վերաբերյալ որոշումը և դրա դեմ բերված բողոքը մերժելու վերաբերյալ դատախազի որոշումը վերացնելու մասին:

12. ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ «Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա:

Պետական (...) մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությանը կամ օրենքներով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք պարտավոր են պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենսգիրքը և մյուս օրենքները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է



հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին (...)»:

13. Վերոշարադրյալ նորմերի վերլուծությունից ակնհայտ է, որ մինչդաստական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը մինչդաստական վարույթում անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության կարևորագույն երաշխիքներից մեկն է և դատախազական հսկողության հետ համատեղ կոչված է ապահովելու նախաքննության մարմնի գործողությունների ու որոշումների օրինականությունը և հիմնավորվածությունը: Մինչդաստական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողությունը, սակայն, դատախազական հսկողության համեմատ ունի իր խնդիրներով պայմանավորված առանձնահատկություններ, որոնք իրենց հերթին պայմանավորում են վերահսկողության օբյեկտի (առարկայի), վերահսկողության իրականացման ընթացակարգի (դատավարական ձևի), ընդունվող որոշումների և դրանց իրավական նշանակության տարբերությունները:

Մինչդաստական վարույթի նկատմամբ իրականացվող դատախազական հսկողության և դատարանի վերահսկողության շրջանակներում քննվող բողոքների արդյունքում խախտված իրավունքների վերականգնման ձևերն ու եղանակները տարբեր են: Համապատասխան բողոքի քննության արդյունքում դատարանն անձի խախտված իրավունքը և ազատությունը վերականգնում է ոչ թե մինչդաստական վարույթն իրականացնող մարմնին դատավարական որոշակի գործողություններ կատարելու ցուցում տալով կամ նրանց որոշումները վերացնելով, ինչպես առկա է դատախազական հսկողության պարագայում (տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը), այլ թույլ տրված օրինախախտումը վերացնելու և անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու վերաբերյալ իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) պարտականությունը սահմանելով: Նմանատիպ դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ Սահմանադրական դատարանն իր 2009 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ ՍԳ-Ո-844 որոշման մեջ:

14. Սույն գործով Վերաքննիչ դատարանը, տուժող Լ.Ջարյանի վերաքննիչ բողոքը ճանաչելով հիմնավորված, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջի խախտմամբ որոշում է կայացրել մինչդաստական վարույթն իրականացնող մարմնի՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու վերաբերյալ որոշումը և դրա դեմ բերված բողոքը մերժելու վերաբերյալ դատախազի որոշումը վերացնելու մասին (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը), այսինքն՝ կայացրել է ՀՀ քրեադատավարական օրենքով չնախատեսված դատական ակտ:

15. Հիմք ընդունելով սույն որոշման 13-րդ և 14-րդ կետերում շարադրված դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, որոշում կայացնելով քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ նա-

խաքննության մարմնի և տուժողի բողոքը մերժելու վերաբերյալ դատախազի որոշումները վերացնելու մասին, դուրս է եկել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իր լիազորությունների շրջանակներից, ինչի արդյունքում խախտվել է ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված օրինականության սկզբունքը:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: (...)»:

Վերոնշյալ հանգամանքը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ չի համարում քննության առնել բողոքում բարձրացված և սույն որոշման 9-րդ կետում շարադրված՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերի ենթադրյալ խախտումների վերաբերյալ փաստարկները:

17. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Տուժող Լաուրա Գարեգինի Չարյանի բողոքը բավարարելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի նոյեմբերի 17-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն  
Դատավորներ՝ ստորագրություններ*

52.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
քրեական գործ թիվ ԵՇԴ/0031/01/09

ԵՇԴ/0031/01/09

նախագահող դատավոր՝ Մ.Արղամանյան  
դատավորներ՝ Ա.Գանիելյան, Մ.Ռեհանյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԳԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ մասնակցությամբ* Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
*պաշտպան* Ա. ՔԱՐԱՍՅԱՆԻ

2010 թվականի փետրվարի 12–ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի վճռաբեկ բողոքն ամբաստանյալներ Էդգար Սասունիկի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 138–րդ հոդվածի 1–ին մասով և Վարազդատ Սամվելի Էլոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 139–րդ հոդվածի 1–ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2009 թվականի հոկտեմբերի 12–ի որոշման դեմ,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1.Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2008 թվականի հոկտեմբերի 4–ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթի քննչական բաժնում հարուցվել է թիվ 11121808 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 138–րդ հոդվածի

1-ին մասով և 139-րդ հոդվածի 1-ին մասով՝ անհայտ տղամարդկանց կողմից Էդիտա Գալստյանին բռնաբարելու և նրա նկատմամբ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելու փաստի առթիվ:

Նախաքննության մարմնի 2009 թվականի փետրվարի 22-ի որոշումներով Է.Պետրոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ Վ.Էլոյանը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի փետրվարի 23-ի որոշումներով Է.Պետրոսյանի և Վ.Էլոյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը: Նույն որոշումներով Է.Պետրոսյանի և Վ.Էլոյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը փոխարինվել է գրավով:

Գատախազի վերաքննիչ բողոքների հիման վրա դատական ստուգման ենթարկելով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վերոգրյալ որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ Վերաքննիչ դատարանը 2009 թվականի մարտի 19-ին որոշում է կայացրել բողոքները բավարարելու, Է.Պետրոսյանի և Վ.Էլոյանի նկատմամբ գրավի կիրառումը վերացնելու մասին:

2009 թվականի ապրիլի 9-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հուլիսի 1-ի դատավճռով Է.Պետրոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման 4 տարի ժամկետով: Վ.Էլոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման 4 տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կարգով նշանակված պատիժների ժամկետների մեջ հաշվակցվել է Է.Պետրոսյանի և Վ.Էլոյանի՝ 2009 թվականի փետրվարի 23-ից մինչև փետրվարի 24-ը կալանքի տակ գտնվելու ժամկետը, և նրանց թողնվել է կրելու ազատազրկում 3 տարի 11 ամիս 28 օր ժամկետով:

Պատժի սկիզբը հաշվվել է 2009 թվականի մարտի 19-ից:

3. Պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2009 թվականի հոկտեմբերի 12-ին որոշում է կայացրել բողոքը մասնակիորեն բավարարելու, Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հուլիսի 1-ի դատավճիռը պատժի մասով փոփոխելու մասին:

Է.Պետրոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման 3 տարի ժամկետով: Վ.Էլոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման 3 տարի ժամկետով:

«Համաներում հայտարարելու մասին» ՀՀ ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի կիրառմամբ Է.Պետրոսյանը և Վ.Էլոյանը ազատվել են նշանակված պատժի կրումից:

Ամբաստանյալներ Է.Պետրոսյանի և Վ.Էլոյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը վերացվել է, և նրանք ազատվել են կալանքից դատական միատի դահլիճում:

4. Վերաքննիչ դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 12-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ դատարանը 2009 թվականի դեկտեմբերի 18-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Ամբաստանյալներ Է.Պետրոսյանի և Վ.Էլոյանի պաշտպան Ա.Քարամյանի կողմից 2009 թվականի նոյեմբերի 27-ին և տուժող Է.Գալստյանի կողմից 2009 թվականի նոյեմբերի 30-ին ներկայացվել են վճռաբեկ բողոքի պատասխաններ:

## **2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

5. Է.Պետրոսյանը և Վ.Էլոյանը դատապարտվել են հետևյալ արարքների համար.

2008 թվականի սեպտեմբերի 10-ին՝ ժամը 23-ի սահմաններում, Երևանի Բագրատունյաց պողոտայի սկզբնամասում՝ Երևանյան լճի մոտ, Է.Պետրոսյանը և Վ.Էլոյանը զբաղվել են ձմերուկի առևտրով: Այդ ընթացքում նրանց է մոտեցել 1989 թվականին ծնված, մտավոր հետամնաց Է.Գալստյանը՝ ոգելից խմիչք օգտագործած վիճակում և պատմելով, որ քիչ առաջ երեք անձանոթ երիտասարդներ լճից ներքև՝ Հրազդան գետի ափի շրջակայքի հողամասերից մեկում գտնվող տնակի մեջ, իր նկատմամբ բռնի կերպով կատարել են սեքսուալ բնույթի գործողություններ, խնդրել է օգնել իրեն, սակայն Է.Պետրոսյանը, Է.Գալստյանին խաբեությանմբ տանելով Երևանյան լճի հարավ-արևմտյան ափի տարածք, օգտագործելով վերջինիս մտավոր հետամնաց լինելու հանգամանքը և անօգնական վիճակը, նույն վայրում բռնաբարել է նրան, որից հետո Վ.Էլոյանը, իր հերթին օգտագործելով Է.Գալստյանի մտավոր հետամնաց լինելու հանգամանքն ու անօգնական վիճակը, նրա նկատմամբ կատարել է սեքսուալ բնույթի բռնի գործողություններ:

6. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում նշել է՝ «Ղեկավարվելով ՀՀ քր. օր. 10, 48 և 61 հոդվածների դրույթներով, (...) հաշվի առնելով նաև, որ ամբաստանյալներ Պետրոսյանն ու Էլոյանը աշխատել են և հանդիսացել իրենց ընտանիքների միակ կերակրողը, վերաքննիչ դատարանի դատաքննության ընթացքում նրանք տուժող Էդիտա Գալստյանից ներողություն խնդրեցին, վերջինս էլ գրավոր դիմում ներկայացրեց՝ հայտնելով, որ իրենք հաշտվել են, ինքը նրանց ներում է և միջնորդում մեղմ պատիժ նշանակել, նկատի ունենալով նաև արարքի բնույթն ու գործի կոնկրետ հանգամանքները, ամբաստանյալների պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող վերոնշյալ հանգամանքները, դրանք ծանրացնող հանգամանքների բացակայությունը, վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ պաշտպանի վերաքննիչ բողոքը պետք է մասնակիորեն բավարարվի, (...) ամբաստանյալների նկատմամբ նշանակվի ՀՀ քր. օր. 138 հոդ. 1-ին և 139 հոդ. 1-ին

մասերով նախատեսված ազատագրկման ձևով նվազագույն պատիժ» (տե՛ս քրեական գործ, հատոր 3–րդ, էջ 84):

### **3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքաբերը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը պատժի մեղմացման առումով փոփոխելու վերաբերյալ որոշում կայացնելով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել չ՛հ քրեական օրենսգրքի 10–րդ և 61–րդ հոդվածներով սահմանված արդարության ու պատասխանատվության անհատականացման, ինչպես նաև պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտում, ինչի արդյունքում Է.Պետրոսյանի և Վ.Էլոյանի նկատմամբ նշանակվել են ակնհայտ մեղմ պատիժներ, որոնք չեն կարող նպաստել քրեական օրենքով ամրագրված պատժի նպատակների իրագործմանը:

Ի հիմնավորումն ասվածի՝ բողոքի հեղինակը նշում է, որ Վերաքննիչ դատարանը Է.Պետրոսյանի և Վ.Էլոյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի չի առել նրանց կատարած հանցագործությունների՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, անտեսել է այն հանգամանքը, որ ամբաստանյալներն ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության ընթացքում չեն ընդունել իրենց մեղսագրվող արարքները, ինչպես նաև հաշվի չի առել հանցագործության կատարման եղանակը, այն, որ վերջիններս օգտվել են տուժողի մտավոր հետամնաց լինելու հանգամանքից:

Վերոգրյալից բողոք բերած անձը հետևություն է անում այն մասին, որ Վերաքննիչ դատարանի մատնանշած հանգամանքները (Է.Պետրոսյանը և Վ.Էլոյանը աշխատում են, հանդիսանում են իրենց ընտանիքների միակ կերակրողները, Վերաքննիչ դատարանի դատաքննության ընթացքում տուժողից ներողություն են խնդրել, տուժողը հայտնել է, որ հաշտվել է ամբաստանյալների հետ և խնդրել է մեղմ պատիժ նշանակել) չեն կարող նվազեցնել նրանց կատարած արարքների՝ հանրության համար վտանգավորության աստիճանը:

8. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրում է բեկանել Վերաքննիչ դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 12–ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հուլիսի 1–ի դատավճիռին:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ամբաստանյալներ Է.Պետրոսյանին և Վ.Էլոյանին մեղսագրվող հոդվածների (համապատասխանաբար՝ չ՛հ քրեական օրենսգրքի 138–րդ և 139–րդ հոդվածների 1–ին մասերի) սանկցիաների շրջանակներում նվազագույն պատժաչափ ընտրելիս Վերաքննիչ դատարանը գործե՞լ է արդյոք չ՛հ քրեական օրենսգրքի 10–րդ և 61–րդ հոդվածներով սահմանված արդարության ու պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների պահպանմամբ:

10. Չ՛հ քրեական օրենսգրքի 138–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ «Բռնաբարությունը (...) պատժվում է ազատագրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «(...) սեքսուալ բնույթի այլ [բռնի] գործողությունները (...) պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով»:

11. ՀՀ քրեական օրենսգրքի նշված հոդվածների սանկցիաների վերլուծությունից երևում է, որ դրանք հարաբերականորեն որոշակի են՝ պատժի նվազագույն և առավելագույն չափերի սահմանմամբ, ինչը դատարանին հնարավորություն է տալիս, ելնելով կատարված կոնկրետ արարքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանից և բնույթից, հանցավորի անձը բնութագրող տվյալներից, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներից, հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակել համապատասխան պատիժ:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեախրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:

Նախորդ կետում շարադրված իրավադրույթների վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ սոցիալական արդարությունը վերականգնելու նպատակը բխում է արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքն ամրագրած՝ ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի բովանդակությունից (ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ և 48-րդ հոդվածների վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել ՎԲ-192/07, ՎԲ-50/07, ՎԲ-201/07, ԱՎԳ-2/0059/01/08 որոշումներում):

13. ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով»:

14. Ամբաստանյալին մեղսագրվող հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի և բնույթի հարցերի վերաբերյալ իր դիրքորոշումը Վճռաբեկ դատարանն արտահայտել է Գ.Մաղաթյանի վերաբերյալ գործով կայացրած որոշման մեջ:

Համաձայն այդ որոշման՝ «Արարքի հանրային վտանգավորության բնույթը հանցագործության որակական կողմն է, այն որոշվում է մեղքի ձևի և տեսակի, հանցագործության նպատակի և շարժառիթի, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակության վերաբերյալ փաստական տվյալների ամբողջությամբ»:

Արարքի հանրային վտանգավորության աստիճանի որոշման ժամանակ դատարանը պետք է բացահայտի կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականաց-

ման աստիճանը, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը (տե՛ս Գ.Մադաթյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի ԵՇԳ/0029/01/08 որոշման 14-րդ կետը):

15. Գատարանների կողմից պատիժ նշանակելիս հաշվի առնվող մեղմացնող հանգամանքների չափանիշների վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել Պ.Բայրամյանի վերաբերյալ գործով կայացրած որոշման մեջ, որի համաձայն՝ «(...) Գատարանի լայն հայեցողության շրջանակներում է (...) անձի պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների կիրառման հարցը, քանի որ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն նույն հոդվածի առաջին մասում: Այնուհանդերձ, դատարանի այս լիազորությունը բացարձակ չէ, և որպես մեղմացնող հաշվի առնվող հանգամանքները պետք է բավարարեն որոշակի չափանիշների: Դրանք են.

ա) հանգամանքը պետք է իրական լինի, այսինքն՝ գործով ձեռք բերված ապացույցները պետք է հաստատեն դրա առկայությունը,

բ) այն պետք է ողջամտորեն նվազեցրած լինի անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը,

(...)» (տե՛ս Պ.Բայրամյանի վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թվականի հունիսի 1-ի ՎԲ-84/07 որոշումը):

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Է.Գալստյանը, մոտենալով Է.Պետրոսյանին ու Վ.Էլոյանին և հայտնելով, որ անձանոթ երիտասարդներ իր նկատմամբ բռնի կերպով կատարել են սեքսուալ բնույթի գործողություններ, նրանցից օգնություն է խնդրել: Սակայն Է.Պետրոսյանը նրան խաբեությանմբ տարել է Երևանյան լճի հարավ-արևմտյան ափի տարածք, որտեղ, օգտվելով նրա մտավոր հետամնաց լինելու և անօգնական վիճակում գտնվելու հանգամանքից, բռնաբարել է: Դրանից հետո Է.Պետրոսյանը կանչել է Վ.Էլոյանին, որը նույնպես օգտվելով Է.Գալստյանի մտավոր հետամնաց լինելու և անօգնական վիճակում գտնվելու հանգամանքից, նրա նկատմամբ կատարել է սեքսուալ բնույթի բռնի գործողություններ (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

17. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից Է.Պետրոսյանի և Վ.Էլոյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի առնված հանգամանքները, այն է՝ ամբաստանյալներն աշխատել են և հանդիսացել իրենց ընտանիքների միակ կերակրողը, տուժող Է.Գալստյանից ներողություն են խնդրել, ինչպես նաև տուժողի դիրքորոշումը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը), չէին կարող ողջամտորեն նվազեցնել նրանց կատարած արարքների հանրության համար վտանգավորության աստիճանը, ուստի չեն համապատասխանում Պ.Բայրամյանի վերաբերյալ նախադեպային որոշմամբ սահմանված չափանիշներին:

18. Քրեական գործի նյութերը վկայում են այն մասին, որ ամբաստանյալներ Է.Պետրոսյանն ու Վ.Էլոյանը տուժող Է.Գալստյանի սեռական անձեռնմխելիության ու ազատության դեմ ոտնձգել են՝ օգտվելով նրա սակավամտությունից, անձանոթ վայրում գտնվելու, հոգնածության և ապակողմնորոշման արդյունքում դիմադրություն



ցույց տալու անընդունակության հանգամանքից, ինչն էականորեն բարձրացնում է նրանց կատարած հանցագործությունների հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալներ Է.Պետրոսյանի և Վ.Էլոյանի կատարած արարքների հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը գնահատելիս Վերաքննիչ դատարանը պարտավոր էր հաշվի առնել վերը նշված հանգամանքները, ինչը չի արել:

19. Հիմք ընդունելով վերոշարադրյալ դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով ճիշտ չի գնահատել Է.Պետրոսյանի և Վ.Էլոյանի արարքների՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, սխալ է կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 61–րդ հոդվածի 2–րդ մասի դրույթները, ինչն էլ հանգեցրել է նրանց նկատմամբ ակնհայտ մեղմ լինելու պատճառով անարդարացի պատժի նշանակման, այսինքն՝ թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10–րդ և 61–րդ հոդվածներով սահմանված արդարության ու պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտում:

Վերոնշյալ հանգամանքները Վճռաբեկ դատարանին հիմք են տալիս բեկանել ՀՀ Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92–րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403–406–րդ, 419–րդ, 422–424–րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Էդգար Սասունիկի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 138–րդ հոդվածի 1–ին մասով և ամբաստանյալ Վարազդատ Սամվելի Էլոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 139–րդ հոդվածի 1–ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 12–ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

53.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության

ԵԱԶԳ/0049/01/09

վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵԱԶԳ/0049/01/09

նախագահող դատավոր՝ Ա.Հովհաննիսյան  
դատավորներ՝ Ս.Չիչոյան, Ա.Գանիեյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԳԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2010թ. փետրվարի 12-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ամբաստանյալ Արայիկ Էդուարդի Գոդյանի վճռաբեկ բողոքն իր վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 2.1-րդ կետերով, 266-րդ հոդվածի 4-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 27-ի որոշման դեմ,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2008թ. հուլիսի 12-ին ՀՀ ոստիկանության Էրեբունու քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերի, 266-րդ հոդվածի 4-րդ մասի և 268-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի հատկանիշներով հարուցվել է թիվ 12113708 քրեական գործը:

2. 2008թ. հոկտեմբերի 15-ին Արայիկ Էդուարդի Գ-գոյանը ձերբակալվել է:

3. 2008թ. հոկտեմբերի 17-ի որոշմամբ Ա.Գ-գոյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1-րդ կետով և 268-րդ հոդվածի 3-րդ մասով:

4. 2008թ. դեկտեմբերի 4-ի որոշմամբ թիվ 12113708 քրեական գործից անջատվել է Ա.Գ-գոյանի և մյուսների մասը, և անջատված մասին շնորհվել է 14800508 համարը:

5. 2009թ. մարտի 6-ի որոշմամբ Ա.Գ-գոյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել, լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 266-րդ հոդվածի 4-րդ մասով:

6. 2009թ. մայիսի 5-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ Արաբկիր և Քանաքեռ-Չեյրուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Չեյրուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. հուլիսի 21-ի դատավճռով ամբաստանյալ Ա.Գ-գոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 2.1-րդ կետերով, 266-րդ հոդվածի 4-րդ մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 2.1-րդ կետերով նա դատապարտվել է ազատազրկման 5/հինգ/ տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով՝ տուգանքի 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կանոններով, պատիժները լրիվ գումարելու միջոցով ամբաստանյալ Ա.Գ-գոյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 5 /հինգ/ տարի ժամկետով և տուգանք՝ 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով:

7. Ամբաստանյալ Ա.Գ-գոյանի և նրա պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009թ. հոկտեմբերի 27-ի որոշմամբ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Չեյրուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. հուլիսի 21-ի դատավճիռը թողել է օրինական ուժի մեջ:

8. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. հոկտեմբերի 27-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ա.Գ-գոյանը:

Վճռաբեկ դատարանը 2009թ. դեկտեմբերի 24-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ուղարկվել:

**Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.**

9. Արայիկ Գ-գոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2008թ. հուլիսի 18-ին, քննությամբ չչարզված անձից իրացման նպատակով ապօրինի ձեռք է բերել առանձնապես խոշոր չափերի՝ 40 գրամ քաշով ափիոն տեսակի թմրամիջոցից և

1 լիտր քացախաթթվի անհիդրիդից 1, 36 գրամ հաստատուն քաշով երկուանգամյա օգտագործման համար նախատեսված չափաբաժին և պրեկուրսոր հանդիսացող 2մլ ծավալով քացախաթթվի անհիդրիդ, ինչպես նաև զգալի չափերի՝ 0, 3 գրամ քաշով մզվածքային ափիոն տեսակի թմրամիջոցը վաճառելու միջոցով ապօրինի իրացրել է Գարեգին Ղազարյանին: Բացի այդ, կրկին անգամ, 2008թ. հուլիս ամսին Ա.Գ.գոյանն իր ընկերոջ՝ ոմն Լյովայի խնդրանքով երկու անգամ, քննությանը չպարզված անձից իրացման նպատակով ապօրինի ձեռք բերված առանձնապես խոշոր չափերի՝ 40 գրամ քաշով ափիոն տեսակի թմրամիջոց՝ 2 գրամ քաշով չափաբաժինը վաճառելու միջոցով ապօրինի իրացրել է Երևան քաղաքի բնակիչներ ոմն Հրաչին և ոմն Արամին:

10. 2009 թվականի մարտի 2-ին Ա.Գ.գոյանը ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևանի ոստիկանության վարչության Արաբկիրի ՔԲ քննիչ Ա.Հակոբյանին հայտնել է, որ «(...) [ոստիկանության] 4-րդ բաժնում տրված բացատրությունները չ[են] համապատասխանում իրականությանը: Գրանք ներկայացվել են (...) ինձ ծեծի ենթարկելու, երեխաներիս հասցեին ահաբեկչական հայտնաբերման և սպառնալիքների ազդեցության ներքո: Այդ ցուցմունքը ես ներկայացրել եմ ֆիզիկապես անտանելի հյուծված և հոգեպես ծանր՝ ծայրաստիճան ցնցված ու անկայուն վիճակում [ հ]արցաքննության ընթացքում չդիմանալով ֆիզիկական ահավոր ցավերին[և, ռ]ետիմեն մահակով հարվածներ ստանալով ոտքերիս տակ և երիկամներիս շրջանում: Այդ մահակի ուժեղ հարվածից պայթել է ձախ ականջիս ականջաթաղանթը և ես լիովին կորցրել եմ այդ ականջիս լսողությունը ու մի քանի սեղան առամներ: (...)» (Քրեական գործ, 2-րդ հատոր, 129 էջ):

11. 2009 թվականի մարտի 4-ին Ա.Գ.գոյանի պաշտպան Ս.Միրզոյանը ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևանի ոստիկանության վարչության Արաբկիրի քննչական բաժնի քննիչ Ա.Հակոբյանին տեղեկացրել է ոստիկանության աշխատակիցների կողմից իր պաշտպանյալին ծեծի ենթարկելու մասին (Քրեական գործ, 2-րդ հատոր, 115-117 էջեր):

12. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ձերբակալված անձանց պահելու վայրի պետի 2008թ. նոյեմբերի 10-ի թիվ 8/8-215 գրությանը փաստաբան Ս.Միրզոյանին հայտնվել է, որ «Ոստիկանության Արաբկիրի բաժնի կողմից ձերբակալված և 2008թ. հոկտեմբերի 15-ին Ոստիկանության Երևանի վարչության [ձերբակալվածներին պահելու վայր] բերված Արայիկ Էդուարդի Գ.գոյանը սահմանված կարգով ենթարկվել է բուժզննության, որի ընթացքում հայտնաբերվել և արձանագրվել են հետևյալ մարմնական վնասվածքները՝ ձախ ձեռքի դաստակի ներսի մասում կա կտրված վերք, աջ բազկին կա կապտուկ, ձախ ականջին կապտուկ, ըստ նրա բանավոր հայտարարության վերը նշված վնասվածքները ստացել է երկու օր առաջ ծառից ընկնելու հետևանքով» (Քրեական գործ, 2-րդ հատոր, 212 էջ):

13. Սույն որոշման 11-րդ կետում վկայակոչված՝ պաշտպանի դիմումի կապակցությամբ 2009 թվականի մարտի 13-ին նշանակվել է ծառայողական քննություն, և դրա արդյունքում հաստատված է համարվել, որ «Ծառայողական քննությամբ պարզվել է, որ Ա.Գ.գոյանի նկատմամբ Ա.Համբարձումյանի կողմից անօրինական վերաբերմունք չի ցուցաբերվել (...)»:

ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 14-ի թիվ 818-Ն որոշմամբ հաստատված «Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումից բխող՝

ժանուցման ենթակա իրավունքների» ցանկի 2–րդ կետի 3–րդ և 5–րդ ենթակետերի պահանջները լիարժեք չկատարելու՝ ՀՀ ոստիկանության [կազմակերպված հանցավորության դեմ պայքարի] գլխավոր վարչության շենք բերման ենթարկված Արայիկ Էդուարդի Գոգյանի կողմից պաշտպանից հրաժարվելու հանգամանքը չարձանագրելու, ինչպես նաև վերջինիս պահանջով ոստիկանություն բերելու պահից սկսած՝ երեք ժամվա ընթացքում Ա.Գոգյանի գտնվելու վայրի մասին վերջինիս կողմից ընտրված անձին ուշացումով տեղեկացնելու համար ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ Գլխավոր վարչության 4–րդ վարչության 2–րդ բաժնի ավագ օպերիվագոր, ոստիկանության մայր Ավետիք Հրաչի Համբարձումյանի հարցը քննարկել ԿՀԴՊ Գլխավոր վարչության պետին կից օպերատիվ խորհրդակցությունում» (Քրեական գործ, 2–րդ հատոր, 147–151 էջեր):

14. Երևանի Արաբկիր և Քանաքեռ–Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավճռում առկա են հետևյալ ձևակերպումները. «(...) Ամբաստանյալ Ա.Գոգյանը դատաքննության ընթացքում (...) տված ցուցմունքով հայտնեց, որ (...) իրեն տարել են ոստիկանություն և իր նկատմամբ գործադրել հոգեբանական և ֆիզիկական ներգործություն և ծեծի ենթարկելով ստիպել, որ խոստովանի, որ զբաղվել է թմրամիջոցների վաճառքով: Իրեն ենթարկել են ֆիզիկական բռնությունների, որոնց ճնշման տակ ինքը տվել է այնպիսի ցուցմունքներ, ինչպես որ իրեն թելադրել են, քանի որ իրեն սպառնացել են, որ իր տղային, որը բժշկական համալսարանի ուսանող է, նույնպես կբերեն բաժին՝ թմրանյութ գցելով գրպանը: Բացի այդ, ոստիկանությունում ծեծի հետևանքով կորցրել է ձախ ականջի լսողությունը, ինչի կապակցությամբ բժշկական փորձաքննության չի ենթարկվել (...):»

«(...) Ամբաստանյալ Ա.Գոգյանը դեռևս նախաքննության փուլում գրավոր հայտնել է իր պաշտպան Ս.Միրզոյանին իր նկատմամբ գործադրված բռնության մասին, որի կապակցությամբ կատարվել է ծառայական քննություն և ըստ էության չեն հերքվել Ա.Գոգյանի պնդումները: Բացի այդ, գործով վկա Գ.Ղազարյանն իր դատաքննական ցուցմունքներով չհերքեց այն փաստը, որ Ա.Գոգյանի հետ առերես հարցաքննության ժամանակ նրա հագուստները եղել են արյունոտ վիճակում (...):» (Քրեական գործ, 2–րդ հատոր, 233 էջ):

«(...) Սույն քր. գործով 40 գրամ ափիոն տեսակի թմրամիջոցի ձեռքբերման հանգամանքը Ա.Գոգյանը միայն իր ցուցմունքում է ընդունել, և հետագայում հրաժարվել է այդ ցուցմունքից՝ պատճառաբանելով, որ իր նկատմամբ գործադրվել է ճնշում, ֆիզիկական բռնության ձևով, ծեծի միջոցով, որի հետևանքով ինքը կորցրել է նաև ձախ ականջի լսողությունը: (...) Դատարանը գտնում է, որ Ա.Գոգյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266–րդ հոդվածի 3–րդ մասի 2–րդ կետով մեղազարկված արարքը ապացուցված չէ, սպառվել են այն բոլոր հնարավորությունները այդ փաստը՝ 40 գրամ թմրամիջոցը ձեռք բերելու մասին հավաստող որևէ նոր ապացույց ձեռք բերելու համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18–րդ հոդվածի համաձայն՝ բոլոր չփարատված ենթադրությունները պետք է մեկնաբանվեն մեղադրյալի, ամբաստանյալի օգտին, իսկ Ա.Գոգյանի կողմից 40 գրամ ափիոն տեսակի թմրամիջոցի ապօրինի ձեռքբերման հանգամանքը նախաքննական մարմնի չփարատված ենթադրությունն է, որը այլ ապացույցներով չի հաստատվել:

Վերանայելով վերը նշվածը՝ դատարանը հաստատված և ապացուցված է համարել այն փաստը, որ Ա.Գոյանը ապօրինի ձեռք է բերել և 44.000 ՀՀ դրամով Գ.Ղազարյանին վաճառել է 1, 36 գրամ հաստատուն քաշով երկուանգամյա օգտագործման համար նախատեսված չափաբաժին և պրեկուրսոր հանդիսացող 2 մլ ծավալով քացախաթթվի անհիդրիդ, ինչպես նաև զգալի չափերի հասնող 0, 3 գրամ քաշով մզվածքային ափիոն տեսակի թմրամիջոց: Բացի այդ, կրկին անգամ, 2008թ. հուլիս ամսին Արայիկ Գոյանը իր ընկերոջ ոմն Լյովայի խնդրանքով երկու անգամ Երևան քաղաքի Կիևյան և Օրբելի փողոցների խաչմերուկում քննությանը չպարզված անձից իրացման նպատակով ապօրինի ձեռք բերված ափիոն տեսակի թմրամիջոցից 2 գրամ քաշով չափաբաժին ապօրինի, վաճառելու միջոցով, իրացրել է Երևան քաղաքի բնակիչներ ոմն Հրաչին և ոմն Արամին՝ յուրաքանչյուրին 1 գրամը վաճառելով 11.000 ՀՀ դրամով: Այսինքն, նա կատարել է հանցանք, որը նախատեսված է ՀՀ քր. օրի–ի 266 հոդվածի 2–րդ մասի 2–րդ կետով և 2.1 կետով: Հետևապես ամբաստանյալ Ա.Գոյանին մեղսագրված արարքը ՀՀ քր. օր–ի 266 հոդվածի 3–րդ մասի 2–րդ կետից պետք է վերադասվել ՀՀ քր. օր–ի 266 հոդվածի 2–րդ մասի 2–րդ կետի և 2.1 կետի և նա մեղավոր պետք է ճանաչվի այդ արարքի համար: (...)» (Քրեական գործ, 2–րդ հատոր, 233–234 էջեր):

15. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշման պատճառաբանական մասում ամրագրված է, որ «(...) Մեղադրյալ Ա.Գոյանը դեռևս նախաքննության փուլում գրավոր հայտնել է պաշտպան Ս.Միրզոյանին իր նկատմամբ գործադրած բռնության մասին, որի կապակցությամբ կատարվել է ծառայական քննություն և ըստ էության չեն հերքվել Ա.Գոյանի պնդումները: Բացի այդ, գործով վկա Գ.Ղազարյանն իր դատաքննական ցուցմունքներով չի հերքել այն փաստը, որ Ա.Գոյանի հետ առերես հարցաքննության ժամանակ նրա հագուստները եղել են արյունոտ վիճակում: Սույն քրեական գործով 40 գրամ ափիոն տեսակի թմրամիջոցի ձեռքբերման հանգամանքը Ա.Գոյանը միայն իր ցուցմունքում է ընդունել և հետագայում հրաժարվել է այդ ցուցմունքից՝ պատճառաբանելով, որ իր նկատմամբ գործադրվել է ճնշում ֆիզիկական բռնության ձևով, ծեծի միջոցով, որի հետևանքով ինքը կորցրել է նաև իր ձախ ականջի լսողությունը:

(...)

Ամբաստանյալ Ա.Գոյանի կողմից 40 գրամ ափիոն տեսակի թմրամիջոցի ապօրինի ձեռք բերման հանգամանքը նախաքննական մարմնի չփարատված ենթադրությունն է, հետևաբար այն պետք է դիտել որպես չփարատված կասկած և մեկնաբանել ի օգուտ ամբաստանյալ Ա.Գոյանի:

Նման պայմաններում առաջին ատյանի դատարանը, իրավացիորեն, հիմնավորված է համարել այն փաստը, որ Ա.Գոյանը ապօրինի ձեռք է բերել և 44.000 ՀՀ դրամով Գ.Ղազարյանին վաճառել է 1, 36 գրամ հաստատուն քաշով երկուանգամյա օգտագործման համար նախատեսված չափաբաժին և պրեկուրսոր հանդիսացող 2 մլ ծավալով քացախաթթվի անհիդրիդ, ինչպես նաև զգալի չափերի հասնող 0,3 գրամ քաշով մզվածքային ափիոն տեսակի թմրամիջոց: Բացի այդ, կրկին անգամ, 2008թ. հուլիս ամսին Արայիկ Գոյանը իր ընկերոջ ոմն Լյովայի խնդրանքով երկու անգամ Երևան քաղաքի Կիևյան և Օրբելի փողոցների խաչմերուկում քննությանը չպարզված անձից իրացման նպատակով ապօրինի ձեռք բերված ափիոն տեսակի թմրամիջոցը՝ 2 գրամ չափաբաժին, ապօրինի, վաճառելու միջոցով, իրացրել է Երևան քաղաքի

բնակիչներ ոմն Հրաչին և ոմն Արամին՝ յուրաքանչյուրին 1 գրամը վաճառելով 11.000 ՀՀ դրամով: (...)» (Քրեական գործ, 2–րդ հատոր, 290–291 էջեր):

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

16. Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոք բերած անձը գտնում է, որ որոշումը կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներով և ոչ ճիշտ կիրառմամբ, որն ազդել է գործի ելքի վրա՝ հանգեցնելով դատական սխալի: Բողոքաբերը նշում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397–րդ հոդվածի պահանջը, չի կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 268–րդ հոդվածի 2–րդ մասը, որը ենթակա էր կիրառման, և արդյունքում կայացրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358–րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող չհիմնավորված և չպատճառաբանված որոշում: Բացի այդ, դատարանը չի կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127–րդ հոդվածը, որն ազդել է գործի ելքի վրա, սակայն նյութական իրավունքի նորմերի խախտմամբ կիրառել է ՀՀ քրեական օրենսգրքի 266–րդ հոդվածի 2–րդ մասի 2–րդ, 2.1–րդ կետերը, 266–րդ հոդվածի 4–րդ մասը, որը չպետք է կիրառեր:

17. Բողոք բերած անձը նշում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշման մեջ առկա հետևությունները միայն ենթադրություններ են: Ի հիմնավորումն վերոնշյալի՝ բողոքաբերը փաստարկում է, որ դատարանում հետազոտվել է միայն մեկ ապացույց՝ Գ.Ղազարյանի նախաքննական ցուցմունքը, քանի որ նախաքննության մյուս ապացույցները, մասնավորապես՝ Ա.Գոյանի ցուցմունքները, դատավճռի հիմքում չեն դրվել դրանք բռնության արդյունքում ձեռք բերված լինելու պատճառով: Ըստ բողոք բերած անձի, դատարանում Գ.Ղազարյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Ա.Գոյանն իրեն փոխանցել է ոմն Լյուծոյի կողմից ծխախոտի տուփի մեջ դրված թմրանյութը, որի պարունակության մասին Ա.Գոյանը չի իմացել, սակայն Գ.Ղազարյանի այս ցուցմունքը դատավճռում չի ներառվել:

Վերոգրյալից բողոք բերած անձը հետևություն է անում այն մասին, որ իր արարքը պետք է որակվեր ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 266–րդ հոդվածի 2–րդ և 4–րդ մասերով, այլ 268–րդ հոդվածի 2–րդ մասով:

18. Հիմք ընդունելով իր վերոշարադրյալ փաստարկը՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել և փոփոխել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. հոկտեմբերի 27–ի որոշումը, իր նկատմամբ պատիժ նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի 268–րդ հոդվածով, իսկ բողոքը չբավարարելու դեպքում՝ հաշվի առնելով իր անձը բնութագրող տվյալները, պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, իր նկատմամբ պատիժ նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի 64–րդ հոդվածի կիրառմամբ:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

19. Նախքան վճռաբեկ բողոքում բարձրացված հարցին անդրադառնալը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում դիրքորոշում հայտնել սույն որոշ-

ման 16-րդ կետում առկա վերաորակման պահանջի և 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ կետերում արձանագրված՝ Ա.Գոյանի նկատմամբ ֆիզիկական և հոգեկան բռնություն կիրառելու հանգամանքների միջև առկա կապի մասին: Այսպես, ըստ բողոք բերած անձի, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից իր արարքը պետք է որակվեր ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 2.1-րդ կետերով և 266-րդ հոդվածի 4-րդ մասով, այլ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասով: Նրա պնդմամբ, այս առումով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի խախտում, այն է՝ չի կիրառել այն օրենքը, որը ենթակա էր կիրառման և կիրառել է այն օրենքը, որը ենթակա չէր կիրառման:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից նյութական իրավունքի խախտում թույլ տալու և իրեն խոշտանգելու վերաբերյալ բողոքաբերի հայտարարությունները փոխկապակցված են. նյութական իրավունքի խախտումը կարող է հետևանք լինել ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ քրեական դատարանների կողմից թույլ տրված դատավարական իրավունքի ենթադրյալ խախտման, որը սույն գործով դրսևորվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ, Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 4-րդ հոդվածներից, ՀՀ Սահմանադրության 17-րդ և 22-րդ հոդվածներից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 7-րդ մասից և 105-րդ հոդվածից բխող պահանջների չպահպանմամբ: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջին հերթին անհրաժեշտ է քննության առնել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների կողմից սույն գործի քննության ժամանակ թույլ տրված դատավարական իրավունքի ենթադրյալ խախտման հարցը:

*1. Իրեն խոշտանգելու վերաբերյալ Ա.Գոյանի հայտարարության քննությունը մինչդատական վարույթում*

20. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք սույն գործի նախաքննության ընթացքում ձեռնարկվել են պատշաճ միջոցներ իր նկատմամբ կիրառված ֆիզիկական և հոգեկան բռնությունների վերաբերյալ Ա.Գոյանի հայտարարությունների ստուգման և նրան ենթադրաբար խոշտանգած անձին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

21. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Այս դրույթը չի կարող հիմք ծառայել՝ շեղվելու 2-րդ հոդվածից, բացառությամբ պատերազմական օրինական գործողությունների հետեւանքով մարդկային գոհերի կապակցությամբ, կամ 3-րդ հոդվածի, 4-րդ հոդվածի 1-ին կետի և 7-րդ հոդվածի դրույթներից»:



Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր մասնակից պետությունն ապահովում է, որ խոշտանգման բոլոր գործողություններն իր քրեական օրենսդրությանը համապատասխան քննության առնվե՛ն որպես հանցագործություններ: Նույնը վերաբերում է խոշտանգման ենթարկելու փորձին, ինչպես նաև ցանկացած անձի այն գործողություններին, որոնք ներկայանում են որպես մասնակցություն կամ գործակցություն խոշտանգմանը»:

ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և ազատագրված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում՝ բժշկական դեղամիջոցների օգտագործմամբ, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկվելու, ինչպես նաև այլ դաժան վերաբերմունքի: Արգելվում է կասկածյալից, մեղադրյալից, ամբաստանյալից, տուժողից, վկայից և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանցից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով»:

22. Վերոշարադրյալ հոդվածների վերլուծությունից երևում է, որ խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը բացարձակ բնույթ է կրում:

Նշված հանգամանքը բազմիցս շեշտադրվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի վերաբերյալ կայացված նախադեպային որոշումներում: Մասնավորապես, *Չելիլոֆն ընդդեմ Հունաստանի* որոշման մեջ դատարանն արձանագրել է. «(...) 3-րդ հոդվածը պաշտպանում է ժողովրդավարական հասարակության ամենահիմնարար արժեքներից մեկը: Անգամ այնպիսի բարդ իրավիճակներում, ինչպիսիք են ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ պայքարը, Կոնվենցիան բացարձակ արտահայտություններով արգելում է խոշտանգումը և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը: Ի տարբերություն Կոնվենցիայի և՛ 1-ին, և՛ 4-րդ Արձանագրությունների շատ նյութաիրավական դրույթների, 3-րդ հոդվածը 15-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված թույլտվությունից բացի որևէ բացառություն կամ սահմանափակում չի նախատեսում, անգամ ազգի գոյությանը սպառնացող արտակարգ դրության դեպքում (...)» (տե՛ս *Zelilof v. Greece*, 2004 թվականի մայիսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 17060/03, կետ 42):

23. Խոշտանգումների արգելքի բացարձակ բնույթը ենթադրում է ոչ միայն խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կիրառումից ձեռնպահ մնալու, այլ նաև որոշակի պոզիտիվ գործողություններ կատարելու պետության պարտականությունը:

Պոզիտիվ գործողություններ կատարելու պահանջը բխում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1–ին հոդվածում ամրագրված պահանջից, որի համաձայն՝ «Բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայի առաջին բաժնում»:

Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն դիրքորոշումը, որ վերոշարադրյալ հոդվածում կիրառվող՝ «ապահովել» բառը ենթադրում է այնպիսի միջոցներ ձեռնարկելու պոզիտիվ պարտականություն, որոնց արդյունքում կապահովվի իրավունքների երկուստեք՝ օրենսդրական և գործնական պատշաճ պաշտպանություն:

Վերոնշյալ պոզիտիվ պարտականության առկայությունը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից հիմնավորվել է մի շարք այլ որոշումներում ևս: Այսպես, *Բեկոսը և Կուտրոպուլոսն ընդդեմ Հունաստանի* որոշման մեջ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «(...) եթե անձը անում է վստահելի հայտարարություն այն մասին, որ ինքն ի խախտումն 3–րդ հոդվածի ենթարկվել է խոշտանգման ոստիկանի կամ նման այլ պետական պաշտոնատար անձի կողմից, ապա այդ դրույթը Կոնվենցիայի 1–ին հոդվածով ամրագրված՝ «իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար Կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների ապահովման» պետությունների ընդհանուր պարտականության հետ միասին ենթադրում է արդյունավետ պաշտոնական քննության առկայություն: (...) Հակառակ պարագայում, խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ընդհանուր իրավական արգելքը, չնայած իր հիմնարար կարևորության, գործնականում ոչ արդյունավետ կլինի և որոշ դեպքերում հնարավոր կլինի պետական մարմինների կողմից խախտել իրենց տրամադրության տակ գտնվող անձանց իրավունքները և փաստացի մնալ անպատժելի (ի թիվս այլ աղբյուրների տե՛ս *Labita v. Italy*, գանգատ թիվ 26772/95, կետ 131)» (*Bekos and Koutropoulos v. Greece*, 2005 թվականի դեկտեմբերի 13–ի վճիռը, գանգատ թիվ 15250/02, կետ 53):

24. Սույն քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Գ.գոյանը իր նկատմամբ կիրառված ֆիզիկական և հոգեկան բռնությունների վերաբերյալ հայտնել է նախաքննության մարմնին (տե՛ս սույն որոշման 10–րդ կետը): Ա.Գ.գոյանի պաշտպանի դիմումի հիման վրա նշանակվել է ծառայողական քննություն, որի արդյունքում կայացված եզրակացության մեջ ծառայողական քննությունն իրականացրած մարմինը սահմանափակվել է միայն «Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների» ցանկի 2–րդ կետի 3–րդ և 5–րդ ենթակետերի պահանջները լիարժեք չկատարելու, այն է՝ ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության շենք բերման ենթարկված Արայիկ Էդուար-

դի Գ-գոյանի կողմից պաշտպանից հրաժարվելու հանգամանքը չարձանագրելու, ինչպես նաև վերջինիս պահանջով ոստիկանություն բերելու պահից սկսած՝ երեք ժամվա ընթացքում Ա.Գ-գոյանի գտնվելու վայրի մասին վերջինիս կողմից ընտրված անձին ուշացումով տեղեկացնելու հարցերի քննարկմամբ և չի անդրադարձել Ա.Գ-գոյանին խոշտանգելու հարցին (տե՛ս սույն որոշման 13–րդ կետը):

Ինչպես երևում է վերոշարադրյալ մեջբերումից, ծառայողական քննություն իրականացրած մարմինը չի անդրադարձել մարմնական վնասվածքներ ստանալու վերաբերյալ Ա.Գ-գոյանի հայտարարությանը, դա ստուգելու նպատակով դատաբժշկական փորձաքննություն չի նշանակել, մինչդեռ դատաբժշկական ապացույցներն առանցքային նշանակություն ունեն խոշտանգումների վերաբերյալ հայտարարությունների արդյունավետ քննության համար: Այս առումով Վճռաբեկ դատարանի համար ուղեցույց է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից *Մամադովն ընդդեմ Ադրբեյջանի* գործով վճռի մեջ ամրագրված նոտեցումն այն մասին, որ. «Իշխանությունները պետք է ողջամիտ քայլեր ձեռնարկեն ապահովելու համար միջադեպին վերաբերող ապացույցների պահպանությունը՝ ներառյալ դատաբժշկական ապացույցները: (...) [Գ-]ատաբժշկական ապացույցները ժամանակային առումով չապահովելը հանդիսանում է սույն գործով ոչ արդյունավետ քննություն իրականացնելու հիմնական գործոններից մեկը: Ժամանակին կատարված բժշկական հետազոտությունը բժշկին հնարավորություն կտար վնասվածքների պատճառման ժամանակի և դրանց պատճառների վերաբերյալ առավել որոշակի եզրակացության հանգել» (տե՛ս *Mammadov (Jalaloglu) v. Azerbaijan*, 2007 թվականի հունվարի 11–ի վճիռը, գանգատ թիվ 34445/04, կետ 74):

25. Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ ծառայողական քննության արդյունքում կայացված որոշումը, այն է՝ «ՀՀ ոստիկանության ԿՀԳՊ Գլխավոր վարչության 4–րդ վարչության 2–րդ բաժնի ավագ օպերիվագոր, ոստիկանության մայոր Ավետիք Հրաչի Համբարձումյանի հարցը քննարկել ԿՀԳՊ Գլխավոր վարչության պետին կից օպերատիվ խորհրդակցությունում» չի կարող գնահատվել որպես խոշտանգման փաստի պատշաճ արձագանք: Այս հարցում Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումն այն մասին, որ խոշտանգումը պետք է հանգեցնի քրեական պատասխանատվության և պատժի (առավել մանրամասն տե՛ս *Bati and Others v. Turkey*, 2004 թվականի հունիսի 3–ի վճիռը, գանգատներ թիվ 33097/96 և 57834/00, 145–146 կետեր, *Mikheev v. Russia*, 2006 թվականի հունվարի 26–ի վճիռը, գանգատ թիվ 77617/01, 120 և 135 կետեր):

26. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի նախաքննության ընթացքում պատշաճ միջոցներ չեն ձեռնարկվել իր նկատմամբ կիրառված ֆիզիկական և հոգեկան բռնությունների վերաբերյալ Ա.Գ-գոյանի հայտարարությունների ստուգման և նրան ենթադրաբար խոշտանգած անձին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

## *II. Իրեն խոշտանգելու վերաբերյալ Ա.Գ-գոյանի հայտարարությանն արձագանքելը ՀՀ դատարանների կողմից*

27. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ստորադաս դատարանների կողմից պատշաճ ար-

ձագանք է տրվել իր նկատմամբ կիրառված ֆիզիկական և հոգեկան բռնությունների վերաբերյալ Ա.Գ.գոյանի հայտարարություններին:

28. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41–րդ հոդվածի 2–րդ մասի 4–րդ կետի համաձայն՝ «Դատարանի լիազորություններն են մասնավորապես՝

(...)

4) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դատախազին դիմելը,

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետի համաձայն՝ «Դատախազը մինչդատական վարույթի ընթացքում լիազորված է՝ (...) դատարանի միջնորդության հիման վրա հարուցել քրեական գործ, (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 184–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը իրենց վարույթում գտնվող քրեական գործի նյութերով կայացնում են որոշում նոր գործ հարուցելու և այն առանձին վարույթում առանձնացնելու մասին, իսկ դատարանը նման որոշում կայացնելու միջնորդությամբ դիմում է դատախազին, եթե մեղադրյալին վերագրվող հանցագործություններից բացի բացահայտված է առաջինի հետ չկապված այլ հանցագործություն, որը կատարել է այլ անձ՝ առանց մեղադրյալի մասնակցության»:

29. Վերոշարադրյալ դրույթների տառացի մեկնաբանությունից բխում է, որ եթե դատարաններն իրենց վարույթում գտնվող քրեական գործի քննության ընթացքում հայտնաբերում են հանցագործության ակնհայտ հատկանիշներ, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 184–րդ հոդվածի 1–ին մասի հիման վրա պարտավոր են քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դիմել դատախազին:

30. Սույն գործի նյութերից երևում է, որ Երևանի Արաբկիր և Քանաքեռ–Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանները հաստատված են համարել այն, որ Ա.Գ.գոյանը ցուցմունքներ է տվել ֆիզիկական բռնությունների ազդեցության տակ: Դատարանները, հիմք ընդունելով իրեն խոշտանգելու վերաբերյալ Ա.Գ.գոյանի հայտարարությունը, գտել են, որ վերջինիս՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266–րդ հոդվածի 3–րդ մասի 2–րդ կետով մեղաազարկված արարքն ապացուցված չէ և ապառվել են նրա կողմից 40 գրամ թմրամիջոց ձեռք բերելու փաստը հավաստող որևէ նոր ապացույց ձեռք բերելու բոլոր հնարավորությունները (տե՛ս սույն որոշման 14–րդ և 15–րդ կետերը): Այսինքն, Ա.Գ.գոյանի նախաքննական ցուցմունքները դատարանները գնահատել են որպես ոչ հավաստի ապացույց: Նշվածի հետ մեկտեղ, սակայն, դատարանները մինչդատական վարույթի նկատմամբ հսկողություն իրականացնող համապատասխան դատախազին Ա.Գ.գոյանի նկատմամբ ֆիզիկական և հոգեկան բռնություն գործադրելու վերաբերյալ հայտարարությունն ստուգելու և նրա նկատմամբ ֆիզիկական և հոգեկան բռնություն գործադրելու փաստի առթիվ քրեական գործ հարուցելու միջնորդություն չեն ներկայացրել:

31. Ելնելով վերագրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանների կողմից պատշաճ արձագանք չի տրվել իր նկատմամբ կիրառված ֆիզիկական և հոգեկան բռնությունների վերաբերյալ Ա.Գ.գոյանի հայտարարություններին, ինչը հանգեցրել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատույթ-

յունների մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ, Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 4-րդ հոդվածների, ՀՀ Սահմանադրության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 7-րդ մասից բխող պահանջների չպահպանման:

32. Ի լրումն սույն որոշման 28-րդ կետում առկա օրենսդրական կարգավորումներին, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ նախաքննության մարմնի դեմ ներկայացված բողոքները պետք է քննվեն անկախ մարմնի կողմից, որը չպետք է կապված լինի նախաքննության մարմնի հետ և պետք է առանձնացված լինի վերջինիցս:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի 1998 թվականի նոյեմբերի 19-ի Եզրափակիչ Դիտարկումներում նշված է՝ «Կոմիտեն առաջարկում է հատուկ անկախ մարմին հիմնադրել՝ իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից թույլ տրված խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի առնչությամբ բերված բողոքներն ուսումնասիրելու նպատակով» (տե՛ս Մարդու իրավունքների կոմիտեի Եզրափակիչ Դիտարկումները, Հայաստան, CCPR/C/79/Add.100., 19 նոյեմբերի 1998թ., կետ 12):

*Ռամսահայն ընդդեմ Նիդեռլանդների և Բատին և ուրիշներն ընդդեմ Թուրքիայի* որոշումներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արտահայտված դիրքորոշման համաձայն՝ չպետք է լինի ինստիտուցիոնալ կամ ենթակարգային կապ քննիչների և այն ոստիկանների միջև, ում դեմ բողոք է ներկայացվել (տե՛ս *Bati and Others v. Turkey*, 2004 թվականի հունիսի 3-ի վճիռը, գանգատներ թիվ 33097/96 և 57834/00, *Ramsahai v. The Netherlands*, 2007 թվականի մայիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 52391/99):

### *III. Որպես ոչ հավաստի գնահատված ապացույցից բխող փաստերի կիրառումը դատարանների կողմից*

33. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երրորդ իրավական հարցը հետևյալն է. Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանները, հաստատված համարելով այն, որ Ա.Գոյանի կողմից 40 գրամ թմրամիջոցի ձեռքբերման փաստը ապացուցված չէ, իրավասո՞ւ էին արդյոք ապացուցված համարել փաստերն այն մասին, որ վերոնշյալ 40 գրամ թմրամիջոցից Ա.Գոյանը որոշակի չափաբաժիններով թմրամիջոց է իրացրել:

34. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք (...):»:

ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը (...):»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունք-

ներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ «1. Քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել՝

1) բռնությամբ, սպառնալիքով, խաբեությամբ, անձին ծաղրի ենթարկելով, ինչպես նաև այլ անօրինական գործողություններով.

2) կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի (...) էական խախտմամբ.

(...)

5) քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ.

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ապացույցներ ձեռք բերելիս էական են այն խախտումները, որոնք, դրսևորվելով մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների կամ սույն օրենսգրքի որևէ պահանջի խախտմամբ, դատավարության մասնակիցներին՝ օրենքով երաշխավորված իրավունքների զրկմամբ կամ սահմանափակմամբ կամ որևէ այլ կերպ ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա»:

35. *Մ.Մարգարյանի* վերաբերյալ որոշման 15-րդ կետում Վճռաբեկ դատարանը իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ. «(...) որպես քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները պարզելու միջոց կարող են օգտագործվել միայն այնպիսի ապացույցներ, որոնք ձեռք են բերվել, ամրագրվել և գործին կցվել են քրեադատավարական օրենքով սահմանված և թույլատրելի համարվող կարգով: Ապացույցների ձեռքբերման և ամրագրման թույլատրելիությունը կարգավորող նորմերից հետևում է, որ որպես ապացույց չեն կարող օգտագործվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ ձեռք բեր-

ված փաստական տվյալները, հատկապես եթե դրանք իրենց հերթին հանգեցրել են դատավարության մասնակիցների իրավունքների էական խախտման, ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա:

Այսպիսով, ապացույցների հավաքմանը և ստուգմանն ուղղված դատավարական գործողությունների կատարման ընթացքում պետք է ապահովվի անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Հակառակ դեպքում կատարված դատավարական գործողության արդյունքում ստացված փաստական տվյալը, անկախ գործի համար ունեցած նշանակությունից, կորցնում է իր իրավական ուժը, ապացուցողական նշանակությունը և չի կարող ընդգրկվել կոնկրետ քրեական գործով ապացույցների համակցության մեջ և դրվել մեղադրանքի հիմքում» (տե՛ս Արմեն Մեյրանի Սարգսյանի վերաբերյալ 2009 թվականի սեպտեմբերի 16-ի՝ ԵՔԲԳ /0295/01/08 որոշման 15-րդ կետը):

36. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ինչպես Երևանի Արաբկիր և Քանաքեռ–Չեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի, այնպես էլ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանները գտել են, որ Ա.Գ.գոյանի կողմից 40 գրամ ափիոն տեսակի թմրամիջոցի ապօրինի ձեռք բերման հանգամանքը նախաքննական մարմնի չփարատված ենթադրությունն է, հետևաբար այն պետք է դիտել որպես չփարատված կասկած և մեկնաբանել հօգուտ ամբաստանյալ Ա.Գ.գոյանի: Մինչդեռ, անդրադառնալով վերոնշյալ՝ 40 գրամ թմրամիջոցից որոշակի չափաբաժիններով թմրամիջոցի իրացման վերաբերյալ փաստերին, դատարանները դրանք հիմնավորված են համարել և Ա.Գ.գոյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 2.1-րդ կետերով, 266-րդ հոդվածի 4-րդ մասով (տե՛ս սույն որոշման 6-րդ, 7-րդ, 14-րդ և 15-րդ կետերը):

37. Վերոշարադրյալ փաստական հանգամանքների լույսի ներքո Վճռաբեկ դատարանին անհասկանալի է, թե Երևանի Արաբկիր և Քանաքեռ–Չեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանները, հաստատված համարելով այն, որ Ա.Գ.գոյանի կողմից 40 գրամ ափիոն տեսակի թմրամիջոցի ապօրինի ձեռքբերման փաստը նախաքննական մարմնի չփարատված ենթադրությունն է, որն այլ ապացույցներով չի հաստատվել, կարո՞ղ էին արդյոք հիմնավորված հետևության հանգել այն մասին, որ վերոնշյալ 40 գրամ թմրամիջոցից Ա.Գ.գոյանը որոշակի չափաբաժիններով թմրամիջոց է իրացրել:

38. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք (...) խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»: Ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն, սույն գործով Վերաքննիչ դատարանի դատական ակտը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

39. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Արայիկ Էդուարդի Գգոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 2.1-րդ կետերով և 266-րդ հոդվածի 4-րդ մասով Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. հուլիսի 21-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. հոկտեմբերի 27-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*



54.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության

ԼԴ-2 /0019/01/09

վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԼԴ-2 /0019/01/09

նախագահող դատավոր՝ Ա.Գանիելյան  
դատավորներ՝ Մ.Արղամանյան, Մ.Ռեհանյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՄԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԳԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԴՌԻԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
*մասնակցությամբ ամբաստանյալ* Ս. ԹՈՄՅԱՆԻ

12 փետրվարի 2010 թվական

ք. Երևանում

դրնրաց դատական նիստում, քննության առնելով Սերյոժա Սարգսի Թոմոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 202–րդ հոդվածի 1–ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2009 թվականի հոկտեմբերի 30–ի որոշման դեմ ամբաստանյալ Ս.Թոմոյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2009 թվականի ապրիլի 27–ին հարուցվել է թիվ 55200309 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 202–րդ հոդվածի 1–ին մասի և 34–202–րդ հոդվածի 1–ին մասի հատկանիշներով:

2009 թվականի հունիսի 22-ի որոշմամբ Ս.Թոմոյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 202-րդ հոդվածի 1-ին մասով:

2009 թվականի հունիսի 30-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 9-ի դատավճռով Սերյոժա Թոմոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 202-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 /երեք/ տարի ժամկետով:

Նույն դատավճռով դատապարտվել է նաև Ա.Աբդուրախմանովան, որի վերաբերյալ դատական ակտը չի բողոքարկվել:

3. Ամբաստանյալ Ս.Թոմոյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2009 թվականի հոկտեմբերի 30-ի որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքը՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 9-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 30-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ս.Թոմոյանը:

2009 թվականի դեկտեմբերի 18-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը ամբաստանյալ Ս.Թոմոյանի վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Գործի փաստական հանգամանքները և Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. Ս.Թոմոյանը դատապարտվել է այն արարքի համար, որ, աշխատելով անհատ ձեռնարկատեր Անգոր Լալայանին պատկանող տաքսի ծառայությունում, 2009 թվականի մարտի 21-ի գիշերը՝ ժամը 5-ի սահմաններում, իր վարմանը հանձնված «ԳԱԶ 31105411» մակնիշի 15 ԼՍ 091 պետհամարանիշի ավտոմեքենայով Այրում կայարանից Տավուշի մարզի Բագրատաշեն գյուղ է տեղափոխել գործով չպարզված չորս ուղևոր կանանց, որոնցից մեկը Այրում կայարանում որպես ուղեվարձ նրան իրացրել է մեկ հատ 10.000 դրամ անվանական արժեքով Ծ-04795926 սերիա-համարի հայկական կեղծ թղթադրամ:

Ս.Թոմոյանը, հաջորդ օրը նկատելով, որ թղթադրամը կեղծ է, 2009 թվականի մարտի 23-ին՝ ժամը 12-ի սահմաններում, նշված կեղծ թղթադրամն իրացրել է Ալավերդի քաղաքի բնակիչ Աքսանա Աբդուրախմանովային, իսկ վերջինս նույն օրը՝ ժամը 17-ի սահմաններում, մեկ հատ 10.000 դրամ կեղծ թղթադրամը փորձել է իրացնել Ալավերդի քաղաքի բնակիչ, անհատ ձեռնարկատեր Ռ-աֆայել Նիկողոսյանի բջջաչին հեռախոսների խանութում:

6. Առաջին ատյանի դատարանը Ս.Թոմոյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի է առել կատարված հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, գործի հանգամանքները, անձը բնութագրող տվյալները՝ այն, որ նա նախկինում հանցագործություն չի կատարել, բնութագրվում է դրական, զղջացել է կատարածի համար:

Առաջին ատյանի դատարանը Ս.Թոմոյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներ չի արձանագրել:

7. Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտում շարադրված վերոգրյալ հանգամանքները, եկել է հետևության, որ տվյալ դեպքում ամբաստանյալի նկատմամբ նշանակվել է հողվածի սանկցիայով նախատեսված նվազագույն պատիժ, և որ ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը չի կարող ապահովել պատժի նպատակները:

8. Ս.Թոմոյանը նախկինում դատապարտված չի եղել, ընդունել է հանցանքը և զղջացել կատարածի համար, բնութագրվում է դրական, կինը վատառողջ է և գտնվում է նրա խնամքին:

#### **Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոք բերած անձը փաստարկել է, որ առկա է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը, այն է՝ Վճռաբեկ դատարանի կողմից սույն գործով դատական ակտի կայացումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Բողոք բերած անձը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը, իր անձը բնութագրող տվյալների, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների առկայության և պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում իր նկատմամբ ակնհայտ խիստ պատիժ նշանակելով և նշանակված պատիժը պայմանական չկիրառելու վերաբերյալ միջնորդությունը մերժելով, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում: Մասնավորապես, դատարանը չի կիրառել օրենքի այն հոդվածը, որը ենթակա էր կիրառման, ինչը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող, չհիմնավորված և չպատճառաբանված որոշման կայացմանը:

Համաձայն բողոքի հեղինակի՝ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ինքն ամբողջովին ընդունել է մեղքը և զղջացել կատարած արարքի համար, նախկինում երբևէ որևէ հակահասարակական արարք չի կատարել և չի դատապարտվել, զբաղվել է հանրօգուտ աշխատանքով, ընտանիքի միակ կերակրողն է, իր խնամքին է գտնվում 56-ամյա հիվանդ կինը, հանցագործություն կատարելու դիտավորություն չի ունեցել, պարզապես խաբվել է, քանի որ իր գիշերային աշխատանքի դիմաց վճարել են կեղծ թղթադրամով, բարեխղճորեն ներկայացել և երբևէ չի խոչընդոտել, չի խուսափել քննությունից: Արդյունքում Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քրեական

օրենսգրքի 70–րդ հոդվածով ամրագրված իրավանորմը, որի կիրառմամբ կարող էր հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48–րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակների՝ սոցիալական արդարության վերականգնմանը, իր ուղղմանը և հանցագործությունների կանխմանը, ինչը բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 10–րդ և 61–րդ հոդվածներով սահմանված արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքից: Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է ՀՀ քրեական օրենսգրքի 70–րդ հոդվածի կիրառման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ ՎԲ–192/07, ՎԲ–01/08 որոշումները:

10. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 30–ի որոշումը և ՀՀ քրեական օրենսգրքի 70–րդ հոդվածի հիման վրա իր նկատմամբ նշանակված 3 /երեք/ տարի ժամկետով ազատազրկումը պայամանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի այն հարցին, թե արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի պահպանման տեսանկյունից հիմնավորված և պատճառաբանված է արդյոք Ս.Թոմոյանի նկատմամբ նշանակված պատիժը պայամանականորեն չկիրառելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը:

12. Պատիժ նշանակելը քրեական գործերով արդարադատության իրականացման կարևոր և պատասխանատու բաղադրամասերից է, ուստի օրենսդրի կողմից մեծապես կարևորվում է յուրաքանչյուր դեպքում անձի նկատմամբ պատիժ նշանակելիս քրեաիրավական նորմերով ամրագրված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի պահպանումը:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 10–րդ հոդվածի համաձայն՝ «Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:

ՀՀ քրեական օրենսգրքի 48–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվող «պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:

Շարադրված հոդվածների վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 48–րդ հոդվածի 2–րդ մասով սահմանված՝ սոցիալական արդարությունը վերականգնելու նպատակը բխում է արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքն ամրագրած՝ ՀՀ քրեական օրենսգրքի 10–րդ հոդվածի բովանդակությունից: Մասնավորապես, նշված հոդվածի այն պահանջից, ըստ որի՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար (ՀՀ քրեական

օրենսգրքի 10–րդ և 48–րդ հոդվածների վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել ՎԲ–50/07, ՎԲ–192/07, ՎԲ–201/07, ԱՎԳ-2/0059/01/08 որոշումներում):

14. ՀՀ քրեական օրենսգրքի 61–րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով...»:

Նշանակվող պատժի արդարացիության հիմնական պահանջն այն է, որ պատիժը պետք է համապատասխանի հանցագործության վտանգավորության աստիճանին և բնույթին: Ամբաստանյալին մեղսագրվող հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի և բնույթի հարցերի վերաբերյալ իր դիրքորոշումը Վճռաբեկ դատարանն արտահայտել է Գ.Մադաթյանի վերաբերյալ գործով կայացրած որոշման մեջ, որի համաձայն՝ «Արարքի հանրային վտանգավորության բնույթը հանցագործության որակական կողմն է, այն որոշվում է մեղքի ձևի և տեսակի, հանցագործության նպատակի և շարժառիթի, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակության վերաբերյալ փաստական տվյալների ամբողջությամբ:

Արարքի հանրային վտանգավորության աստիճանի որոշման ժամանակ դատարանը պետք է բացահայտի կատարված կոնկրետ հանցանքի առանձնահատուկ հատկանիշները, որոնք կարող են ազդել հանրության վտանգավորության վրա՝ հանցագործությամբ պատճառված վնասի չափը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը» (տե՛ս *Գարուշ Մադաթյանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 17–ի ԵՇԳ/0029/01/08 որոշման 14–րդ կետը):

15. Պատժի անհատականացման սկզբունքի բովանդակության հիմնական մասն է կազմում հանցավորի անձը բնութագրող տվյալների գնահատումը, որոնք իրենց ամբողջության մեջ հնարավորություն են տալիս անձին դիտել ոչ միայն որպես հանցանք կատարող, որը պետք է պատասխանատվություն կրի, այլ նաև որպես կոնկրետ անձ՝ իր անհատական հատկանիշներով: Ընդ որում՝ անձի այն հատկանիշները, որոնք գտնվում են հանցակազմից դուրս, նշանակություն են ունենում դատարանի կողմից պատժի տեսակը և չափը որոշելիս: Որպես հանցավորի անձը բնութագրող հատկանիշներ՝ գնահատվում են նրա սոցիալ–հոգեբանական, սոցիալ–ժողովրդագրական հատկությունները՝ վարքագիծն ընտանիքում և կենցաղում, աշխատանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքը, կրթությունը, առողջական վիճակը, տարիքը, ծառայությունը պետության և հասարակության առջև և այլն:

Պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը քննելիս դատարանը հաշվի է առնում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 62–րդ և 63–րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Հանցակազմի սահմաններից դուրս գտնվելով՝ դրանք բնութագրում են ինչպես կատարած հանցագործությունը, այնպես էլ հանցավորի անձնավորությունը, հնարավորություն են տալիս պատկերացում կազմել հանցավորի անձնավորության և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին՝ համապատասխանաբար բարձրացնելով կամ իջեցնելով այն: Դրանց գնահատմամբ է հնարավոր յուրաքանչյուր կոնկրետ գործով անհատական մոտեցում ցուցաբերել՝ ինչպես պատժի տեսակը և չափը որոշելիս, այնպես էլ այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս:

16. ՀՀ քրեական օրենսգրքի 70–րդ հոդվածի 1–ին և 2–րդ մասերի համաձայն՝ «Եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժ կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները»:

17. ՀՀ քրեական օրենսգրքի 70–րդ հոդվածի կիրառման կապակցությամբ իր դիրքորոշումը Վճռաբեկ դատարանն արտահայտել է մի շարք որոշումներում: Մասնավորապես, ԵԱԶԳ- 0078/01/09, ԱՎԳ-2/0059/01/08 որոշմամբ արձանագրվել է, որ «(...) պատիժը կարող է պայմանականորեն չկիրառվել, եթե առկա է դատարանի համոզվածությունը, վստահությունն առանց իրական պատիժ նշանակելու ամբաստանյալի ուղղվելու հնարավորության մասին: Դատարանը նման հետևության հանգում է միայն օբյեկտիվ գոյություն ունեցող տվյալների վերլուծության հիման վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում են պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին (...)» (տե՛ս Հուսիկ Բարդասարյանի վերաբերյալ գործով 2008 թվականի նոյեմբերի 28–ի թիվ ԱՎԳ-2/0059/01/08 որոշումը, կետ 24): Նմանատիպ մոտեցում է արտահայտվել նաև Վճռաբեկ դատարանի ՎԲ–50/07, ՎԲ–192/07, ՎԲ–01/08 որոշումներում:

18. Այսպիսով, ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի վերը թվարկված դրույթներից և Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներից հետևում է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ ինչպես պատժատեսակի և պատժաչափի, այնպես էլ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության վերաբերյալ դատարանի որոշումը պետք է հիմնված լինի կատարած հանցագործության, դրա առանձնահատկությունների, գործի կոնկրետ հանգամանքների, հանցավորի անձի, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների բազմակողմանի գնահատման վրա՝ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքներին համապատասխան, նպատակ ունենալով ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48–րդ հոդվածի 2–րդ մասում նշված պատժի նպատակների իրագործման հնարավորությունը:

19. Քննության առարկա գործի նյութերով հիմնավորվել է, որ Ս.Թոմոյանը, աշխատելով տաքսի ծառայությունում որպես վարորդ, 2009 թվականի մարտի 21-ի գիշերն ուղևորներ է փոխադրել, որոնցից մեկը որպես ուղեվարձ նրան է իրացրել մեկ հատ 10.000 ՀՀ դրամ անվանական արժեքով կեղծ թղթադրամ: Հաջորդ օրը, նկատելով, որ թղթադրամը կեղծ է, նա այն իրացրել է Ա.Աբդուրախմանովային: Ընդ որում, թղթադրամն իրացնելիս նա Ա.Աբդուրախմանովայից չի թաքցրել դրա կեղծ լինելու փաստը (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Գործի նյութերից երևում է նաև, որ Ս.Թոմոյանը նախկինում դատապարտված չի եղել, անկեղծորեն խոստովանել և ընդունել է հանցանքը, զղջացել կատարածի համար, ինչպես աշխատանքային կոլեկտիվի, այնպես էլ Աբդուրի գյուղապետարանի և համայնքի բնակիչների կողմից բնութագրվել է դրական, խնամքին է գտնվում վատառողջ՝ դիսպանսեր հսկողության տակ գտնվող կինը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը Ս.Թոմոյանի նկատմամբ պատիժ նշանակելիս նշել է, որ հաշվի է առնում կատարած հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, գործի հանգամանքները, անձը բնութագրող տվյալները: Առաջին ատյանի դատարանը Ս.Թոմոյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներ չի արձանագրել:

Վերաքննիչ դատարանը, քննության առնելով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հնարավորության և ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով ամրագրված պատժի նպատակների իրացվելիության հարցերը, հանգել է հետևության, որ տվյալ դեպքում ամբաստանյալի նկատմամբ նշանակվել է հոդվածի սանկցիայով նախատեսված նվազագույն պատիժ, և որ ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը չի կարող ապահովել պատժի նպատակները (տե՛ս սույն որոշման 6-րդ և 7-րդ կետերը):

20. Փաստորեն, Վերաքննիչ դատարանն ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հարցը քննարկելիս հիմք է ընդունել Առաջին ատյանի դատարանի հետևությունները, որոնք ուղղակի վերարտադրել է իր որոշման մեջ՝ առանց անդրադառնալու այն հարցին, թե ամբաստանյալ Ս.Թոմոյանի նկատմամբ նշանակված պատիժը կրելու անհրաժեշտության մասին հետևությունը համապատասխանու՞մ է արդյոք գործի փաստական հանգամանքներին ու արդարության և պատասխանատվության անհատականացման քրեաիրավական սկզբունքներին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նախորդ կետում նշված հանգամանքները ենթակա են գնահատման արդարության և պատասխանատվության անհատականացման քրեաիրավական սկզբունքներին համապատասխան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հնարավորության հարցը որոշելու առումով, և դրանց գնահատված չլինելը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող՝ չհիմնավորված որոշման կայացմանը, ինչը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս բեկանել Վերաքննիչ դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 30-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

21. Բողոքարկված դատական ակտի բեկանումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Ս.Թոմոյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու





55.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության

ԵՇԴ/0097/01/09

վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵՇԴ/0097/01/09

նախագահող դատավոր՝ Ա.Խաչատրյան  
դատավորներ՝ Ս.Ավետիսյան, Մ.Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Կ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

2010 թվականի մարտի 26-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Տիգրան Ռոլանդի Քամայանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2009 թվականի դեկտեմբերի 15-ի որոշման դեմ տուժողի իրավահաջորդ Է.Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. Քրեական գործը հարուցվել է 2009 թվականի հուլիսի 17-ին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

2009 թվականի սեպտեմբերի 10-ի որոշմամբ Տիգրան Ռոլանդի Քամայանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով:

2. 2009 թվականի սեպտեմբերի 17-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2009 թվականի սեպտեմբերի 30-ի դատավճռով Ս.Քամայանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտել ազատազրկման՝ 2 /երկու/ տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան մեկ տարի ժամկետով:

3. Տուժողի իրավահաջորդ Ա.Արշակյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2009 թվականի դեկտեմբերի 15-ի որոշմամբ տուժողի իրավահաջորդի վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 30-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 15-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել տուժողի իրավահաջորդ Է.Բաղդասարյանը:

Վճռաբեկ դատարանը 2010 թվականի փետրվարի 15-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

5. Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

6. Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 30-ի դատավճռով Ս.Քամայանը դատապարտվել է այն բանի համար, որ 2009 թվականի հուլիսի 17-ին՝ ժամը 18:00-ի սահմաններում, իր անձնական օգտագործման «Մերսեդես-230» մակնիշի ավտոմեքենայով, Երևան քաղաքի Մ.Գորկու փողոցի կողմից Արշակունյանց պողոտայով դեպի Գ.Նժդեհի փողոցի կողմն ընթանալիս խախտել է ճանապարհային երթևեկության կանոնների 67-րդ կետի և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, այն է՝ երթևեկության համար վտանգ առաջանալու պահից, ունենալով իր ընթացքի ուղղությամբ փողոցը հատող Աստղիկ Արշակյանին հայտնաբերելու հնարավորություն, արգելակել է ուշացած և, երթևեկության համար վտանգավոր կերպով դեպի ձախ մանևրելով, հնարավորություն չի տվել հետիոտնին դուրս գալ վտանգավոր գոտուց, այսինքն՝ ստեղծել է վթարային իրադրություն և վրաերթի է ենթարկել Ա.Արշակյանին: Դեպքից անմիջապես հետո Ս.Քամայանի կինն ու կնոջ քույրն առաջին բուժօգնությամբ

յուն են ցույց տվել տուժողին և դեպքի վայր եկած շտապ բժշկական օգնության ավտոմեքենայով նրան տեղափոխել են «Էրեբունի» բժշկական կենտրոն, որտեղ էլ Ա.Արշակյանը, առանց գիտակցության գալու, մահացել է:

7. Տուժողի իրավահաջորդ Ա.Արշակյանը չի մասնակցել առաջին ատյանի դատարանում գործի քննությանը, և սույն գործով Առաջին ատյանի դատարանն արագացված կարգի կիրառմամբ դատավճիռ է կայացրել նրա բացակայության պայմաններում:

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոք բերած անձը փաստարկել է, որ առկա է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

9. Բողոք բերած անձը, նշելով, որ մինչև վերաքննիչ բողոք ներկայացնելը չի մասնակցել քրեական գործի քննությանը, որպես տուժողի իրավահաջորդ իր դիրքորոշումը հայտնելու հնարավորություն ունեցել է միայն Վերաքննիչ դատարանում, փաստարկել է, որ սույն գործով չի կատարվել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն: Ըստ բողոքաբերի՝ քրեական գործի նյութերում բացակայում են դեպքին ականատես վկաների ցուցմունքները, ամբաստանյալ Տ.Քամալյանի սքափության վերաբերյալ ապացույցները (ապացույցներ, որոնք կբացատրեն նրա կողմից թմրանյութեր, հոգեմեա միջոցներ, դեղեր օգտագործելը, նրա արյան մեջ ալկոհոլի առկայությունը), միջադեպի տեղանքի, ճանապարհի, արյան, անվաղողերի հետքերի լուսանկարները: Բացի այդ, դատարանն առանց որևէ պատճառաբանության չի ընդունել բողոքաբերի կողմից ներկայացված քաղաքացիական հայցը, հետևաբար դատարանի հետևությունները հիմնավորված չեն:

Բողոքի հեղինակը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ և 70-րդ հոդվածների պահանջները, խախտել է կատարված արարքի և նշանակված պատժի համաչափության վերաբերյալ նյութական իրավունքի, մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 3-11-րդ հոդվածների պահանջները:

10. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 15-ի որոշումը և գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

*1. Բողոքաբերի պահանջների պայմանավորվածությունն Առաջին ատյանի դատարանում գործի քննությանը տուժողի իրավահաջորդի բացակայության փաստի հետ.*

11. Նախքան վճռաբեկ բողոքում բարձրացված հարցին անդրադառնալը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում դիրքորոշում հայտնել սույն որոշման 9-րդ կետում նշված նյութական և դատավարական իրավունքների ենթադրյալ խախտում-

ների վերաբերյալ փաստարկների և սույն որոշման 7-րդ կետում արձանագրված փաստի միջև առկա կապի մասին:

Այսպես՝ բողոք բերած անձը, փաստարկելով, որ չի մասնակցել սույն քրեական գործի քննությանը և որպես տուժողի իրավահաջորդ իր դիրքորոշումը հայտնելու հնարավորություն ունեցել է միայն Վերաքննիչ դատարանում, պնդում է, որ գործով չի կատարվել բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ քննություն, առանց պատճառաբանության չի ընդունվել իր կողմից ներկայացված քաղաքացիական հայցը, սխալ են մեկնաբանվել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ և 70-րդ հոդվածների պահանջները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքաբերի վճռաբեկ բողոքում բարձրացված հարցերը հետևանք են այն բանի, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանը քրեական գործի քննության արագացված կարգի կիրառմամբ դատավճիռ է կայացրել տուժողի իրավահաջորդ Ա.Արշակյանի բացակայությամբ: Ուստի առաջին հերթին անհրաժեշտ է քննության առնել Առաջին ատյանի դատարանի կողմից վերոնշյալ դատական ակտի կայացման հարցը:

## *II. Արդարացի դատական քննության՝ տուժողի իրավունքը.*

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Առաջին ատյանի դատարանում տուժողի իրավահաջորդ Ա.Արշակյանի բացակայությամբ դատական քննության արագացված կարգ կիրառելը և դատավճիռ կայացնելը չի՞ սահմանափակել արդյոք հետագայում տուժողի իրավահաջորդ ճանաչված Է.Բաղդասարյանի՝ արդարացի դատական քննության իրավունքը:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Եթե մեղադրողը մեղադրական եզրակացությունում չի առարկում արագացված կարգ կիրառելու դեմ, ապա ամբաստանյալը կամ մեղադրյալն իրեն առաջադրված մեղադրանքի հետ համաձայնվելու դեպքում իրավունք ունի միջնորդել արագացված դատական քննության կարգ կիրառելու մասին, այն հանցագործություններով, որոնց համար ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազատազրկումը»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքում դատարանը կիրառում է դատական քննության արագացված կարգ, եթե՝ 1) ամբաստանյալը գիտակցում է իր կողմից ներկայացված միջնորդության բնույթը և հետևանքները, և 2) միջնորդությունը ներկայացված է կամավոր, և 3) պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո, (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Եթե տվյալ գործով հարուցված է նաև քաղաքացիական հայց, և ամբաստանյալը (մեղադրյալը) կամ քաղաքացիական պատասխանողը ընդունում է այն, ապա դատարանը դատավճռում բավարարում է նաև քաղաքացիական հայցը, եթե այն չի հակասում օրենքին: Այդ դեպքում դատարանը պետք է լրացուցիչ պարզի, թե արդյոք հայցի ընդունումը կամավոր է, և արդյոք այն վերաբերում է այլ անձանց իրավունքներին: Դատարանը, գտնելով, որ հայցի ընդունումը հակասում է օրենքին կամ կամավոր չէ կամ վերաբերում է այլ անձանց իրավունքներին, հայցը թողնում է առանց քննության՝ քաղաքացիական հայցվորին բացատրելով քաղաքացիական դատավա-

րության կարգով հայց ներկայացնելու նրա իրավունքը: Իսկ այն դեպքում, երբ ամբաստանյալը կամ քաղաքացիական պատասխանողը քաղաքացիական հայցը չի ընդունում, ապա դատարանը քաղաքացիական հայցը թողնում է առանց քննության՝ քաղաքացիական հայցվորին բացատրելով քաղաքացիական դատավարության կարգով հայց ներկայացնելու նրա իրավունքը»:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.2-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Ներկայացված միջնորդությունը դատարանում պետք է հաստատվի պաշտպանի ներկայությամբ և նրա հետ խորհրդակցելուց հետո: Այն դեպքում, երբ ամբաստանյալը (մեղադրյալը) ներկայացրել է արագացված կարգ կիրառելու միջնորդություն և չունի պաշտպան, ապա դատարանը պարտավոր է ամբաստանյալին ապահովել պաշտպանով: Եթե ամբաստանյալին հնարավոր չէ անհապաղ ապահովել պաշտպանով, ապա դատարանը պաշտպանի մասնակցությունն ապահովելու նպատակով դատական նիստը հետաձգում է: Եթե ամբաստանյալը հրաժարվում է պաշտպան ունենալուց, ապա դատարանը արագացված կարգ կիրառելու միջնորդությունը մերժում է՝ անցնելով ընդհանուր կարգով գործի քննությանը»:

Համաձայն քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «Դատարանը արագացված կարգով դատական քննության արդյունքում մեղադրական դատավճիռ կայացնելիս նշանակում է պատիժ, որը չի կարող գերազանցել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը, իսկ եթե առավել խիստ պատժի երկու երրորդը փոքր է տվյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պատժից՝ ապա առավել մեղմ պատժը»:

14. Վերոշարադրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատական քննության արագացված կարգ կիրառելու դեպքում լիարժեքորեն երաշխավորված են ամբաստանյալի՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պաշտպանության իրավունքի իրականացման բոլոր հնարավորությունները: Օրենսդիրն արագացված կարգի կիրառման դեպքում սահմանում է ամբաստանյալի արդարացի դատաքննության իրավունքի կենսագործման համար անհրաժեշտ իրավունքների բավական լայն շրջանակ, ինչպես նաև ամբաստանյալի համար նախատեսում է բարենպաստ իրավական հետևանքներ՝ մեղմ պատժ նշանակելու, հայցի դեմ առարկելու դեպքում այն առանց քննության թողնելու, դատական ծախսերից ազատվելու և այլ ձևով:

15. Սինույն ժամանակ, սույն որոշման 13-րդ կետում շարադրված իրավանորմերի վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը որևէ կանոն կամ ընթացակարգ չի սահմանում, որն ամրագրեր տուժող կողմի (այդ թվում՝ տուժողի, տուժողի ներկայացուցչի և օրինական ներկայացուցչի, տուժողի իրավահաջորդի) ներգրավվածությունը արագացված կարգի կիրառման հարցում: Այլ կերպ՝ տուժող կողմի դիրքորոշումը հաշվի առնելու պահանջ ամրագրված չէ ո՛չ մեղադրողի համար՝ արագացված դատական քննության դեմ առարկելու կամ չառարկելու հարցը լուծելիս, և ո՛չ էլ դատարանի համար՝ արագացված դատական քննության անցնելու մասին որոշում կայացնելիս:

16. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն»:

17. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը հռչակում և ամրագրում է արդարացի դատական քննության իրավունքը: Համաձայն այդ հոդվածի 1-ին մասի՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու (...) համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ (...) իր գործի հրապարակային քննության իրավունք»:

ՀՀ քրեական դատավարության 80-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Տուժողի իրավահաջորդ է ճանաչվում նրա մերձավոր ազգականներից մեկը, որը ցանկություն է հայտնել քրեական գործով վարույթում իրականացնել մահացած (...) տուժողի իրավունքները և պարտականությունները»:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Տուժողի իրավահաջորդը քրեական գործով վարույթին մասնակցում է տուժողի փոխարեն և ունի վերջինիս իրավունքները և պարտականությունները, (...)»:

18. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «իր խախտված իրավունքները վերականգնելու (...) համար» սահմանադրական ձևակերպումը որոշակիորեն վերաբերելի է նաև քրեական գործով տուժողին (նաև տուժողի իրավահաջորդին), քանի որ տուժողն այն անձն է, որի իրավունքները հանցագործությամբ խախտվում են: Ընդ որում, տուժողի իրավաչափ շահերի շրջանակում է իրեն հասցված վնասի վերականգնումը, իրեն վնաս պատճառած արարքի հանգամանքների լրիվ բացահայտումը ու դրա ճիշտ քրեաիրավական որակումը, իր նկատմամբ հանցանք կատարած անձի դատապարտումը և արդարացի պատժի նշանակումը: Այդ շահերի պահովման երաշխիքներից է տուժողի իրավունքը, որպեսզի իր գործով դատական քննությունն ընթանա «արդարության բոլոր պահանջների պահպանմամբ»:

19. Տուժողի համար իր գործի «արդարության բոլոր պահանջների պահպանմամբ» քննությունը, *inter alia*, ենթադրում է, որ

ա. Դատախազը ( մեղադրողը ) արագացված դատական քննության դեմ առարկելու կամ չառարկելու հարցը լուծելիս, պետք է հաշվի առնի տուժողի դիրքորոշումը՝ որպես մեղադրանքի կողմի սուբյեկտի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 21-րդ կետ):

բ. Դատարանը չի կարող անցնել դատական քննության արագացված կարգի՝ առանց այդ հարցի կապակցությամբ տուժողի դիրքորոշումը պարզելու:

գ. Դատարանը կարող է դատական քննության արագացված կարգ կիրառելու մասին մեղադրյալի միջնորդությունը մերժել, եթե դրա դեմ առարկում է տուժողը: Այդ դեպքում դատարանը կայացնում է առանձին որոշում, որում պատճառաբանում է արագացված դատական քննության արդյունքում տուժողի օրինական շահերի վտանգման հանգամանքը:

20. Դատախազի (մեղադրողի) և դատարանի համար, սույն որոշման նախորդ կետի հիման վրա, համապատասխանաբար, դատական քննության արագացված կարգի դեմ առարկելու և ամբաստանյալի համապատասխան միջնորդությունը մերժելու հարցը լուծելիս տուժողի դիրքորոշումը պետք է վճռական նշանակություն ունենա մասնավորապես այն դեպքերում, երբ տուժողը՝

ա. ողջամտորեն հիմնավորում է, որ իրեն հասցված վնասն ամբողջությամբ հատուցված չէ,

բ. փաստարկված առարկում է գործի փաստական հանգամանքների դեմ:

21. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը կիրառել է դատական քննության արագացված կարգ, իսկ տուժողի իրավահաջորդ Ա.Արշակյանը դատաքննությանը չի մասնակցել (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը), որի արդյունքում հնարավորություն չի ունեցել կարծիք արտահայտել ինչպես մեղադրանքի, այնպես էլ պատժի վերաբերյալ:

*III. Տուժողի շահերի պաշտպանության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումը.*

22. Սույն որոշման 19-րդ կետում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը հիմնվում է ոչ միայն ՀՀ Սահմանադրության, այլ նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպալին իրավունքի վրա:

23. Այսպես՝ համաձայն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ... կյանքի ... նկատմամբ հարգանքի իրավունք»: Համաձայն *Յանկովիչն ընդդեմ Խորվաթիայի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի 45-րդ կետի՝ «... անձնական կյանքի գաղափարը ներառում է նաև անձի ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիությունը: 8-րդ հոդվածի ներքո Պետությունները կրում են անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունն այլ անձանց ոտնձգություններից պաշտպանելու պարտականություն: Այդ նպատակով նրանք պետք է հաստատեն ու գործնականում կիրառեն մասնավոր անձանց ոտնձգություններից պաշտպանություն տրամադրող համարժեք իրավական կառուցակարգ»:

Այսպիսով, ՄԻԵԴ-ը սահմանել է, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածը պետության համար առաջացնում է ոչ միայն նեգատիվ պարտականություններ (ձեռնպահ մնալու համապատասխան ազատություններին միջամտելուց), այլ նաև պոզիտիվ պարտականություններ (inter alia, սահմանելու տուժողների իրավունքների քրեադատավարական պաշտպանության համարժեք կառուցակարգեր):

Խորվաթիայի քրեադատավարական օրենսդրությունը նախատեսում էր տուժողի իրավունքների պաշտպանության մի շարք կառուցակարգեր, այդ թվում՝ սուբսիդիար մեղադրողի գործառույթ իրականացնելու իրավունքը (տե՛ս *Յանկովիչի* վերաբերյալ ՄԻԵԴ վճռի 25-րդ կետ): Այնուհանդերձ, *Յանկովիչի* գործով ՄԻԵԴ-ը գտել է, որ պետությունը չի կատարել իր այդ պոզիտիվ պարտականությունը, քանի որ, inter alia, տուժողին իրական հնարավորություն չի տրվել իրականացնելու իր դեմ ոտնձգություն թույլ տված անձի քրեական հետապնդում (տե՛ս *Յանկովիչի* վերաբերյալ ՄԻԵԴ վճռի 57-րդ կետ): Դրա հիման վրա արձանագրվել է Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում (տե՛ս *Յանկովիչի* վերաբերյալ ՄԻԵԴ վճռի 58-րդ կետ):

24. *Յանկովիչն ընդդեմ Խորվաթիայի* գործով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումը սույն գործի փաստերի վրա տարածելով (տե՛ս սույն որոշման 21-րդ կետը)՝ կարող ենք արձանագրել, որ ՀՀ քրեադատավարության օրենսդրությամբ նախատեսված արագացված դատական քննության կանոնակարգման պայմաններում, երբ դատական

քննության արագացված կարգի անցնելու մասին որոշում կայացնելիս տուժողը հնարավորություն չունի արտահայտել իր դիրքորոշումը (տե՛ս սույն որոշման 14–15–րդ կետերը), տուժողին հնարավորություն չի տրվում իրականացնել իր շահերի արդյունավետ պաշտպանություն:

25. Հիմք ընդունելով սույն որոշման 14–24–րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դատական քննությանը տուժողի իրավահաջորդի մասնակցությունը, ինչպես նաև արագացված դատաքննության անցնելիս նրա դիրքորոշումը հաշվի առնելն անհրաժեշտ էին արդարացի դատաքննության, ինչպես նաև անձի անձնական կյանքի հարգման հիմնարար իրավունքների ապահովման համար:

*IV. Տուժողի շահերի պաշտպանության վերաբերյալ ուղղորդող նշանակություն ունեցող միջազգային–իրավական կարգադրագրերը.*

25. Սույն գործով իրավական դիրքորոշում ձևավորելիս Վճռաբեկ դատարանը հաշվի է առել նաև Մարդու իրավունքների միջազգային իրավունքում նկատվող իրավական զարգացման միտումները:

26. Այսպես՝ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից 1985 թվականին ընդունված «Տուժողի դերը քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում» N R(85) 11 հանձնարարականի նախաբանում հատուկ ընդգծվել է, որ այն ընդունվել է՝ ելնելով այն հանգամանքից, որ քրեական արդարադատության նպատակները ավանդաբար ձևակերպվել են պետության և իրավախախտի միջև հարաբերությունների տիրույթում, ինչի արդյունքում այդ համակարգի գործառույթը հաճախ բարդեցնում է տուժողի մոտ ծագած խնդիրները, այլ ոչ թե նպաստում դրանց լուծմանը: Սինչդեռ քրեական արդարադատության հիմնական գործառույթը պետք է լինի տուժողի պահանջները բավարարելը և շահերը պաշտպանելը:

Ելնելով վերոշարադրյալից և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ անհրաժեշտ է ամրացնել տուժողի վստահությունը քրեական արդարադատության համակարգի նկատմամբ՝ Նախարարների կոմիտեն Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին հանձնարարել է վերանայել իրենց օրենսդրությունը և դատական պրակտիկան՝ քրեական արդարադատության համակարգում տուժողի դերը բարձրացնելու մի շարք ուղղություններով:

27. Քրեական արդարադատության համակարգում տուժողի պահանջմունքները բավարարելու և շահերը պաշտպանելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու պետությունների պարտավորությունը սահմանված է նաև ՄԱԿ–ի հռչակագրում, որի 4–րդ կետի համաձայն՝ հանցագործությունից տուժողները ներպետական օրենսդրությանը համապատասխան պետք է ունենան արդարադատության մատչելիության և իրենց պատճառված վնասի արագ փոխհատուցման իրավունք: Հռչակագրի 6–րդ կետի համաձայն՝ անհրաժեշտ է օժանդակել այն բանին, որ դատական և վարչական ընթացակարգերը ըստ էության համապատասխանեն հանցագործության զոհերի պահանջներին, այդ թվում՝

ա) դատական քննության ընթացքում տուժողների դերի, դատավարության իրականացման կարգի, ժամկետների և արդյունքների մասին տուժողներին տեղեկատվություն տրամադրելու միջոցով,



բ) վարույթի ցանկացած փուլում գործի էության վերաբերյալ տուժողներին կարծիք արտահայտելու հնարավորություն ապահովելու և այդ կարծիքները քննարկելու եղանակով, հատկապես երբ տվյալ հարցը վերաբերում է տուժողին,

գ) ամբողջ դատավարության ընթացքում տուժողին անհրաժեշտ օգնություն տրամադրելու եղանակով, (...),

ե) գործերի քննության անհարկի ձգձգումները կանխելու և փոխհատուցման մասին կայացված որոշումները կատարելու միջոցով:

*V. Սույն գործով թույլ տված դատավարական օրենքի էական խախտումը.*

28. Վերադառնալով քննության առարկա գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, տուժողի իրավահաջորդ Ա.Արշակյանի բացակայությամբ դատական քննության արագացված կարգ կիրառելով և դատավճիռ կայացնելով, սահմանափակել է հետազայում տուժողի իրավահաջորդ ճանաչված Է.Բաղդասարյանի՝ իր խախտված իրավունքները վերականգնելու սահմանադրորեն ամրագրված հնարավորությունը: Այլ կերպ՝ սույն գործով տեղի է ունեցել ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով նախատեսված՝ գործի արդարացի քննության սկզբունքի խախտում:

Այդ խախտումներն իրենց բնույթով էական են, քանի որ դրանց արդյունքում սահմանափակվել է տուժողի իրավահաջորդի դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, խախտվել են գործի արդարացի քննության և արդարադատության մատչելիության իրավունքները, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ դրանք հիմք են կայացված դատական ակտերն ամբողջությամբ բեկանելու և գործը քննած ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար:

29. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ չի համարում քննության առնել բողոքում բարձրացված՝ նյութական իրավունքի ենթադրյալ խախտումների վերաբերյալ բողոքաբերի փաստարկները. դրանց հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշման մեջ արձանագրված դատավարական օրենքի խախտումները վերացնելուց հետո:

30. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

31. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Տիգրան Ռ-ուլանդի Քամայանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 30-ի դատավճիռը և այն օրինական ուժի

մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 15-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

56.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության

ԿԳ/0004/11/09

վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԿԳ/0004/11/09

նախագահող դատավոր՝ Ե.Գարբինյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՄԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԳԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Կ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

2010 թվականի մարտի 26-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով դիմող Արմեն Սաշայի Հովհաննիսյանի ներկայացուցիչ Արայիկ Պապիկյանի վերաքննիչ բողոքը մերժելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2009 թվականի դեկտեմբերի 17-ի որոշման դեմ Ա.Հովհաննիսյանի ներկայացուցիչ Ա.Պապիկյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. Նախաքննության մարմնի 2008 թվականի հուլիսի 28-ի որոշմամբ Ա.Հովհաննիսյանի դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի և 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներ-

րով հարուցվել է թիվ 20114308 քրեական գործը՝ Մ.Անդրեասյանի, Կ.Խաչատրյանի, նրանց եղբայրներ Կ.Անդրեասյանի և Վ.Խաչատրյանի կողմից Ա.Հովհաննիսյանին և Գ.Բայրամյանին ծեծի ենթարկելու և Ա.Հովհաննիսյանին բռնության ու սպառնալիքի գործադրմամբ 50.000 ԱՄՆ դոլար պարտքի մասին պարտավորագիր գրել տալու փաստի առթիվ:

2. Նախաքննության մարմնի 2009 թվականի հունվարի 28-ի որոշմամբ թիվ 20114308 քրեական գործի վարույթը կարճվել է, և քրեական հետապնդում չի իրականացվել:

Վերոնշյալ որոշման դեմ Ա.Հովհաննիսյանի ներկայացուցիչ Ս.Շահնազարյանը ՀՀ գլխավոր դատախազին բողոք է ներկայացրել, որը չի բավարարվել:

Դատախազի նշված որոշումը Ա.Հովհաննիսյանի ներկայացուցիչը բողոքարկել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան):

3. 2009 թվականի մայիսի 26-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանը վերացրել է թիվ 20114308 քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին նախաքննության մարմնի 2009 թվականի հունվարի 28-ի որոշումը:

Առաջին ատյանի դատարանի նշված որոշման դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացվել:

4. Նախաքննության մարմնի 2009 թվականի հուլիսի 3-ի որոշմամբ թիվ 20114308 քրեական գործի վարույթը վերստին կարճվել է, և Մ.Անդրեասյանի, Կ.Խաչատրյանի և վերջիններիս եղբայրների նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ հանցագործության դեպքի և հանցակազմի բացակայության հիմքերով:

5. Վերոնշյալ որոշման դեմ Ա.Հովհաննիսյանի ներկայացուցիչ Ս.Շահնազարյանը բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին, որին ի պատասխան՝ ՀՀ գլխավոր դատախազության սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ջ.Ֆարխոյանը գրությամբ հայտնել է, որ այդ որոշումը վերացնելու հիմքեր չկան:

6. 2009 թվականի օգոստոսի 31-ին Ա.Հովհաննիսյանի ներկայացուցիչ Ս.Շահնազարյանը դիմում է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով վերացնել քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 2009 թվականի հուլիսի 3-ի որոշումը:

Առաջին ատյանի դատարանը 2009 թվականի նոյեմբերի 5-ի որոշմամբ մերժել է թիվ 20114308 քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին նախաքննության մարմնի 2009 թվականի հուլիսի 3-ի որոշումը վերացնելու վերաբերյալ Ա.Հովհաննիսյանի ներկայացուցիչ Ս.Շահնազարյանի բողոքը:

7. Ա.Հովհաննիսյանի ներկայացուցիչ Ա.Պապիկյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2009 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի նոյեմբերի 5-ի որոշումը թողել է օրինական ուժի մեջ, իսկ Ա.Պապիկյանի վերաքննիչ բողոքը՝ մերժել:

Վերաքննիչ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 17-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Ա.Հովհաննիսյանի ներկայացուցիչ Ա.Պապիկյանը:

8. Ա.Պապիկյանի բողոքը ՀՀ Վճռաբեկ դատարանը 2010 թվականի մարտի 17-ի որոշմամբ վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով («Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ»):

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.**

9. Վերաքննիչ դատարանի որոշման մեջ առկա է հետևյալ ձևակերպումը. «Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ եթե դատախազին ներկայացված բողոքի կապակցությամբ դատախազը որոշում չի կայացրել, այլ բողոքաբերին պատասխանել է ցանկացած այլ եղանակով, որը նախատեսված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, և եթե չեն անցել ներկայացված բողոքի կապակցությամբ դատախազի կողմից որոշում կայացնելու դատավարական ժամկետները, այդ պատասխանների նկատմամբ չեն կարող կիրառվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի և 263-րդ հոդվածի 2-րդ մասի կանոնները: Այլ կերպ ասած, եթե դատախազի կողմից իրեն ուղղված բողոքի կապակցությամբ կայացվել է ցանկացած այլ ակտ և ոչ թե որոշում, ապա այդ ակտը դատական բողոքարկման առարկա հանդիսանալ չի կարող: Ելնելով վերոգրյալից՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դատախազի կողմից որոշում կայացնելու դատավարական ժամկետներն անցնելուց հետո ընդհանուր իրավասության դատարան կարող է բողոքարկվել դատախազի անգործությունը, քանի որ քրեադատավարական օրենքով նախատեսված ընթացակարգը չպահպանելն այդ դեպքում հավասարազոր է անգործության. /Ման դիրքորոշում հայտնել է ՀՀ վճռաբեկ դատարանը 29.06.2009թ.-ի թիվ ԵԿԳ/0019/11/09 որոշմամբ/» / գործ թիվ ԿԳ/0004/11/09 գ.թ.100/:

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

10. Բողոք բերած անձը փաստարկել է, որ առկա են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետով նախատեսված հիմքերը՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, ինչպես նաև վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալը, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ:

11. Բողոք բերած անձը նշել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատություն-

ների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ և 13-րդ հոդվածներին, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ և 390-րդ հոդվածների պահանջները:

Մասնավորապես, բողոքաբերը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից սխալ է մեկնաբանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը, ինչպես նաև դատարանը կիրառել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր:

12. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 17-ի որոշումը և գործը վերադարձնել նոր քննության:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԳՌ-844 որոշումը, որով հակասահմանադրական է ճանաչվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի «...և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը, դատական պրակտիկայում դրան տրված՝ նաև «անգործությանը» վերագրվող բովանդակության մասով, պարտավորեցնում է արդյոք Առաջին ատյանի դատարանին դատական վերահսկողության կարգով ըստ էության քննության առնել քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին քննիչի 2009 թվականի հուլիսի 3-ի որոշման դեմ դիմող Ա.Հովհաննիսյանի ներկայացուցիչ Ս.Շահնազարյանի բողոքը:

14. Խնդրո առարկա հարցադրման կապակցությամբ իրավական դիրքորոշում Վճռաբեկ դատարանն արտահայտել է *Արևիկ Մողրովյանի* վերաբերյալ որոշմամբ, որի համաձայն՝ «(...) Մյասնիկ Հարութիկի Ավետիսյանի վերաբերյալ 2009 թվականի հունիսի 29-ի ԵԿԳ/0019/11/09 որոշմամբ ձևավորած դիրքորոշումը (...) պետք է վերանայել և համապատասխանեցնել ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշման հետ:

(...) Վճռաբեկ դատարանը, դեկավարվելով ՀՀ Սահմանադրական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԳՌ-844 որոշմամբ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի միասնական կիրառության հետ կապված անհրաժեշտ է համարում ձևավորել հետևյալ մոտեցումը՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում դատական բողոքարկման առարկա անմիջականորեն կարող են հանդիսանալ քրեական հետապնդման մարմինների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները, եթե դրանք չեն բավարարվել դատախազի կողմից՝ անկախ նրանից, թե բողոքարկման արդյունքում դատախազի կողմից ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված ակտեր են կայացվել, թե դրսևորվել է անգործություն» (տե՛ս Արևիկ Մողրովյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԿԳ/0076/11/09 որոշման 14-րդ և 15-րդ կետերը):

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին քննիչի 2009 թվականի հուլիսի 3-ի որոշման բողոքարկման արդյունքում դատախազը որոշում չի կայացրել (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի նոյեմբերի 5-ի որոշմամբ Ա.Հովհաննիսյանի ներկայացուցչի բողոքը մերժվել է, իսկ Վերաքննիչ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով մինչև ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՌ-844 որոշման կայացումը *Մ.Ավետիսյանի* վերաբերյալ որոշմամբ Վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված այն մոտեցումը, որ ընդհանուր իրավասության դատարան պետք է բողոքարկվի դատախազի անգործությունը, քանի որ քրեադատավարական օրենքով նախատեսված ընթացակարգը չպահպանելն այդ դեպքում հավասարազոր է անգործության (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

16. Հիմք ընդունելով սույն որոշման 14-րդ կետում և համապատասխանաբար նաև *Ա.Մողրովյանի* որոշման մեջ շարադրված դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները պարտավոր էին դատական վերահսկողության կարգով քննության առնել դիմող Ա.Հովհաննիսյանի ներկայացուցչի բողոքները:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ ըստ էության նոր քննության, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որն առաջացրել է ծանր հետևանքներ, այն է՝ խախտվել են Ա.Հովհաննիսյանի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները (ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներ):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին քննիչի 2009 թվականի հուլիսի 3-ի որոշման դեմ դիմող Արմեն Սաշայի Հովհաննիսյանի ներկայացուցչի դիմումը մերժելու վերաբերյալ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի նոյեմբերի 5-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 17-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

57.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵԿԳ/0050/15/08

ԵԿԳ/0050/15/08

նախագահող դատավոր՝ Հ. Ասատրյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝*

Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝*

Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ*

Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

*մասնակցությամբ ներկայացուցիչներ*

Ա. ԳԱԶԱՐՅԱՆԻ  
Ա.ԶԵՅՆԱԼՅԱՆԻ  
ք. Երևանում

2010 թվականի մարտի 26-ին

դրնրաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2008 թվականի հոկտեմբերի 1–ի որոշման դեմ դիմող Վարդան Առաքելի Խաչատրյանի և նրա ներկայացուցիչ Ա.Զեյնալյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2003 թվականի ապրիլի 7–ի որոշմամբ Վարդան Առաքելի Խաչատրյանը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 172–րդ հոդվածով ենթարկվել է վարչական կալանքի 3 /երեք/ օր ժամկետով:



2003 թվականի ապրիլի 16-ին Վ.Խաչատրյանը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2003 թվականի ապրիլի 7-ի որոշումը բողոքարկել է ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարան:

2. Վ.Խաչատրյանի բողոքը ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի կողմից քննության չի առնվել՝ այն ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանին վերանայման ենթակա լինելու պատճառաբանությամբ:

3. Վ.Խաչատրյանի վճռաբեկ բողոքի քննության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատը 2003 թվականի մայիսի 30-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը թողել է առանց քննության:

4. 2008 թվականի հուլիսի 28-ին Վ.Խաչատրյանը դիմում է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով նոր հանգամանքներով վերանայել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2003 թվականի ապրիլի 7-ի որոշումը և կայացնել արդարացման դատավճիռ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը 2008 թվականի օգոստոսի 7-ին մերժել է Վ.Խաչատրյանի դիմումը՝ կայացնելով «Դատական ակտի վերանայման վարույթի հարուցումը մերժելու մասին» որոշում:

5. Վ.Խաչատրյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2008 թվականի հոկտեմբերի 1-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի օգոստոսի 7-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

6. Վերաքննիչ դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 1-ի որոշման բողոքարկման արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը 2008 թվականի նոյեմբերի 19-ի որոշմամբ Վ.Խաչատրյանի վճռաբեկ բողոքը թողել է առանց քննության:

7. Վիճարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>2</sup>-րդ հոդվածի 2-րդ մասի, 426<sup>4</sup>-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 426<sup>7</sup>-րդ հոդվածի սահմանադրականությունը՝ Վ.Խաչատրյանի ներկայացուցիչներ Ա.Ջեյնալյանը և Ա.Ղազարյանը դիմել են ՀՀ Սահմանադրական դատարան: ՀՀ Սահմանադրական դատարանը 2009 թվականի հոկտեմբերի 13-ի որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>7</sup>-րդ հոդվածի 4-րդ մասի վերջին մախադասությամբ ամրագրված դրույթը և 426<sup>2</sup>-րդ հոդվածի 2-րդ մասի, 426<sup>4</sup>-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը ճանաչել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի պահանջներին հակասող և անվավեր, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>4</sup>-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող:

Ելնելով այն հանգամանքից, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>4</sup>-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով ՀՀ Սահմանադրական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 13-ի որոշումը հիմք է ՀՀ վճռաբեկ դատարանի 2008 թվականի նոյեմբերի 19-ի որոշումը նոր հանգամանքներով վերանայելու համար՝ դիմող Վ.Խաչատրյանի ներկայացուցիչներ Ա.Ղազարյանը և Ա.Ջեյնալյանը բողոք են ներկայացրել վճռաբեկ դատարան:

8. Վճռաբեկ դատարանը 2010 թվականի փետրվարի 22-ին կայացրել է նոր հանգամանքով վերանայելու և վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում:

Վճռաբեկ դատարանը բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով («առկա է նոր երևան եկած կամ նոր հանգամանք»):

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոք բերած անձինք փաստարկել են, որ ՀՀ վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ, 93-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածների, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները: Ըստ բողոքաբերների՝ խախտվել են նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>4</sup>-րդ 2-րդ մասի պահանջները, այն է՝ սահմանափակ մեկնաբանություն է տվել օրենքի նորմի բովանդակությանը, մինչդեռ Վերաքննիչ դատարանը պարտավոր էր այն մեկնաբանել՝ հաշվի առնելով ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի՝ ՀՀ Սահմանադրության, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի դրույթները և սկզբունքները, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նպատակը և խնդիրները:

10. Բողոքաբերները նշում են, որ *Գալստյանն ընդդեմ Հայաստանի* գործի քննության արդյունքում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի լույսի ներքո մեկնաբանելով ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, հիմնավորել է դրանց միջև հակասությունը: Արդյունքում ՄԻԵԳ-ի վճիռը, դրանում բերված հիմնավորումները և դրանում առկա ՀՀ ներպետական օրենդրության մեկնաբանությունները պարտադիր են եղել դատարանի համար դիմումի ընդդատության հարցը լուծելիս, հետևաբար չէին կարող նաև պարտադիր չլինել վերանայման վարույթ հարուցելու հարցում:

11. Ըստ բողոքի հեղինակների՝ Վ.Խաչատրյանի նկատմամբ կիրառվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային, հետևաբար նաև ՀՀ Սահմանադրությանը հակասող նորմ, այսինքն՝ խախտվել են Վ.Խաչատրյանի իրավունքները, որի արդյունքում Վ. Խաչատրյանը դատապարտվել է ՀՀ Սահմանադրության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նորմերի պահանջների խախտմամբ, դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>4</sup>-րդ հոդվածի 2-րդ մասը մեկնաբանելիս նույնպես հաշվի չի առել այդ սկզբունքները:

12. Վկայակոչելով ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումները և ՄԻԵԳ-ի վճիռը՝ բողոքաբերները նշում են, որ նոր հանգամանքներով վճիռների և որոշումների վերանայման ինստիտուտի վերաբերյալ Սահմանադրական դատարանի վերլուծութ-

յունները և իրավական դիրքորոշումները կիրառելի են սույն գործով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>2</sup>-րդ հոդվածի «նոր հանգամանքներով դատական ակտերը վերանայելու դիմում ներկայացնելու իրավունք ունեն միայն այդ հանգամանքի հետ առնչվող գործին մասնակցած շահագրգիռ անձինք» դրույթը մեկնաբանելիս, քանի որ նոր հանգամանք է ինչպես ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը, այնպես էլ ՄԻԵԴ-ի վճիռը: Ուստի վերը նշված նորմը չպետք է մեկնաբանվի նեղ իմաստով: Ելնելով վերը նշվածից՝ բողոքաբերները գտնում են, որ *Գալստյանն ընդդեմ Հայաստանի* գործով կայացված ՄԻԵԴ-ի վճիռը դրա հայտնի դառնալու պահից երեք ամսվա ընթացքում նոր հանգամանք է խաղաղ հավաքի մասնակցելու համար վարչական կալանքի ենթարկված Վ.Խաչատրյանի համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակները խնդրել են կայացնել նոր դատական ակտ՝ «Նոր հանգամանքով որոշման վերանայման վարույթ հարուցելու մասին» որոշում:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանը, դիմող Վ.Խաչատրյանի ներկայացուցիչ Ա.Ջեյնալյանին հնարավորություն չտալով մասնակցել դատարանում գործի քննությանը, սահմանափակե՞լ է արդյոք դիմողի՝ գործի արդարացի քննության սահմանադրական իրավունքը:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>7</sup>-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Նոր հանգամանքների հիմքով շահագրգիռ անձի փոխարեն բողոք կարող է ներկայացնել նրա լիազորած անձը, որը բողոքի հետ միաժամանակ դատարան պետք է ներկայացնի նաև իր լիազորությունները հաստատող փաստաթուղթը: Շահագրգիռ անձի լիազորված անձ կարող է լինել միայն փաստաբանը»:

Վերը նշված նորմի վերլուծությունից երևում է, որ օրենսդիրը որպես դիմողի ներկայացուցիչ մասնակցելու իրավունք վերապահել է է միայն փաստաբանին:

15. ՀՀ Սահմանադրական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 13-ի ՍԳՈ-833 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>7</sup>-րդ հոդվածի 4-րդ մասի վերջին նախադասությամբ ամրագրված դրույթը, այն է՝ «Շահագրգիռ անձի լիազորված անձ կարող է լինել միայն փաստաբանը» որոշման մեջ արտայատված իրավական դիրքորոշումների մասով ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի պահանջներին հակասող և անվավեր:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր որոշման 7-րդ կետում արձանագրել է, որ «(...) նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի նպատակն անձանց խախտված իրավունքների (...) վերականգնման հնարավորության և ոչ թե քրեական մեղադրանքի հարցի լուծումն է»:

Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ «(...) վիճարկվող նորմում փաստաբանի միջոցով ներկայացուցչության վերաբերյալ պարտադիր պահանջը, փաստաբանների կողմից՝ դատական ակտերի վերանայման վերաբերյալ բողոք ներկայացնելու կապակցությամբ անվճար հիմունքներով իրավաբանական օգնության

տրամադրման հնարավորություն չնախատեսելու պայմաններում, անհամաչափորեն սահմանափակում է անձի խախտված սահմանադրական և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու միջոցով վերականգնման հնարավորությունը՝ վտանգելով անձի թե սահմանադրական արդարադատության իրավունքի և թե իր խախտված իրավունքները միջազգային ատյաններում դատական կարգով պաշտպանելու սահմանադրական իրավունքի արդյունավետ իրացումը:

Սահմանադրական դատարանը նաև արձանագրել է, որ «դատավարության մասնակից ճանաչելու պահանջի իրավունքի և այն խախտվելիս դրա վերականգնման երաշխիքների (մասնավորապես՝ դատական կարգով) վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածում ամրագրված նորմերի ընդհանուր իրավակարգավորիչ նշանակությունն ու դրանց տրամաբանական զարգացման անհրաժեշտությունը քրեական դատավարության բոլոր, այդ թվում նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման փուլում (...)»:

Սահմանադրական դատարանն այնուհետև նշել է, որ «խնդրի լուծումը պահանջում է համալիր իրավակարգավորում՝ կապված դատավարության մյուս փուլերում երաշխավորված անվճար իրավաբանական օգնության տրամադրման՝ օրենքով նախատեսված հիմքերի ընդարձակման հետ: Դատարանը վերահաստատում է իր ՄԳՈ-765 որոշմամբ արտահայտած այն դիրքորոշումը, համաձայն որի «... փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու պահանջը կարող է իրավաչափ համարվել, եթե բխում է ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերից՝ ներկայացուցչությունն իրականացնելով արհեստավարժ և փորձառու մասնագետների միջոցով ... միաժամանակ հարկ է համարում ընդգծել, որ փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու իմստիտուտը՝ որպես այլընտրանքային տարբերակ, իրավաչափ կարող է համարվել միայն այն դեպքում, երբ օրենսդրությունը փաստաբանի ծառայությունից օգտվելու հնարավորությունը երաշխավորի յուրաքանչյուրի համար՝ անկախ տվյալ անձի ֆինանսական հնարավորությունից»:

Արդյունքում Սահմանադրական դատարանը եզրակացություն է արել այն մասին, որ «անձանց փաստաբանական ծառայությամբ ապահովելու իրավակարգավորման համանման սկզբունքի կիրառումն անհրաժեշտ է քրեական վարույթի բոլոր՝ այդ թվում նոր հանգամանքների հիմքով դատական ակտերը վերանայելու փուլում (...)»:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանը, քննարկման ենթարկելով Ա.Ջեյնալյանին որպես դիմող Վ.Խաչատրյանի ներկայացուցիչ ընդգրկելու հարցը, որոշել է, որ նա չի կարող լինել դիմողի ներկայացուցիչ՝ նկատի ունենալով, որ օրենսդիրը որպես դիմողի ներկայացուցիչ նախատեսել է միայն փաստաբանի (տե՛ս քրեական գործ, էջ 132):

17. Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով սույն որոշման 14–16–րդ կետերում առկա դատողությունները, գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, դիմող Վ.Խաչատրյանի ներկայացուցիչ Ա. Ջեյնալյանին հնարավորություն չտալով մասնակցել դատարանում գործի քննությանը, սահմանափակել է դիմողի՝ գործի արդարացի քննության սահմանադրական իրավունքը:

Այսինքն, սույն գործով տեղի է ունեցել ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով նախատեսված՝ գործի արդարացի քննության սկզբունքի խախտում:

18. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-844 որոշումը հիմք է ՀՀ վերաքննիչ դատարանի համար Վ.Խաչատրյանի վերաքննիչ բողոքը կրկին քննության առնելու համար: Հետևաբար, պետք է բեկանել ստորադաս դատարանի կայացրած դատական ակտը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Վարդան Առաքելի Խաչատրյանի դիմումի կապակցությամբ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթի հարուցումը մերժելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 1-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

58.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ՝ քիվ 520/07

ՎԲ-04/10

նախագահող դատավոր՝ Ս.Ավետիսյան  
դատավորներ՝ Մ.Սիմոնյանի, Ա.Խաչատրյանի

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Կ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ պաշտպան* Հ. ԲԱԳԴԱՍԱՐՅԱՆԻ

2010 թվականի մարտի 26-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով դատապարտյալ Ալիկ Ռուդիկի Մաթևոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. նոյեմբերի 12-ի որոշման դեմ պաշտպանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

**1.Գործի դատավարական նախապատմությունը.**

1. Աղվան Հարությունյանի մահվան փաստի առթիվ 2006թ. ապրիլի 29-ին ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ:

Նախաքննության մարմնի 2006թ. մայիսի 20-ի որոշմամբ Ալիկ Մաթևոսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասով և 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով ներգրավվել է որպես մեղադրյալ և նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանքը:

2006թ. հոկտեմբերի 16-ին Ա.Մաթևոսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել և լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 10-րդ կետերով:

2006թ. նոյեմբերի 14-ին գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարան:

2. Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2007թ. օգոստոսի 29-ի դատավճռով Ա.Մաթևոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 104-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նա դատապարտվել է ազատազրկման 2/երկու/ տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման 8/ութ/ տարի 6/վեց/ ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Ա.Մաթևոսյանը վերջնականապես դատապարտվել է ազատազրկման 9/ինը/ տարի 6/վեց/ ամիս ժամկետով:

Նույն դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 5-րդ մասով և 104-րդ հոդվածի 1-ին մասով, 359-րդ հոդվածի 2-րդ կետով 6/վեց/ տարի 6/վեց/ ամիս ժամկետով ազատազրկման է դատապարտվել Ռ-աֆիկ Հարությունյանը:

3. Ամբաստանյալների, պաշտպանի, մեղադրողների և տուժողի իրավահաջորդի վերաքննիչ բողոքների հիման վրա քննելով գործը՝ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը 2007թ. դեկտեմբերի 3-ի դատավճռով Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2007թ. օգոստոսի 29-ի դատավճիռը թողել է անփոփոխ, իսկ վերաքննիչ բողոքները՝ առանց բավարաման:

ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007թ. դեկտեմբերի 3-ի դատավճռի դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ զինվորական դատախազը:

4. 2008թ. հուլիսի 25-ին ՀՀ վճռաբեկ դատարանը բավարարել է ՀՀ զինվորական դատախազի բողոքը և, բեկանելով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007թ. դեկտեմբերի 3-ի դատավճիռը, գործն ուղղարկել է նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

5. 2008թ. նոյեմբերի 12-ին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը, բեկանելով և փոփոխելով Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2007թ. օգոստոսի 29-ի դատավճիռը, Ա.Մաթևոսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով և պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով վերջնական պատիժ է նշանակել ազատազրկում 15/տասնհինգ/ տարի ժամկետով:

Նույն դատավճռով Ռ-աֆիկ Հարությունյանը ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 5-րդ մասով և 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով, 359-րդ հոդվածի 2-րդ կետով դատապարտվել է 13 /տասներեք/ տարի ժամկետով ազատազրկման:

6. 2009թ. փետրվարի 25-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի և 412-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին չհամապատասխանելու պատճառաբանությամբ վերադարձրել է դատապարտյալ Ալիկ Մաթևոսյանի պաշտպանի վճռաբեկ բողոքը:

2009թ. ապրիլի 30-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի և 412-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին չհամապատասխանելու պատճառաբանությամբ վերադարձրել է դատապարտյալ Ալիկ Մաթևոսյանի վճռաբեկ բողոքը:

2009թ. օգոստոսի 7-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա առանց քննության է թողել դատապարտյալ Ալիկ Մաթևոսյանի և նրա պաշտպանի վճռաբեկ բողոքը:

7. 2009թ. օգոստոսի 25-ին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու հարցի որոշման համար Ա.Մաթևոսյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան:

2009թ. դեկտեմբերի 22-ին ՀՀ սահմանադրական դատարանը որոշում է կայացրել, որի համաձայն՝ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ որոշման մեջ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների շրջանակներում:

8. Վճռաբեկ բողոք է բերել դատապարտյալ Ալիկ Մաթևոսյանի պաշտպանը:

Վճռաբեկ դատարանը 2010թ. փետրվարի 26-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել:

### **Գործի փաստական հանգամանքները.**

9. Ալիկ Մաթևոսյանը և Ռ-աֆիկ Հարությունյանը դատապարտվել են հետևյալ արարքների համար.

Ալիկ Մաթևոսյանը ծառայել է ՀՀ ՊՆ թիվ 83117 գորամասի «Կրուգ-2» հենակետում որպես ավագ օպերատոր, իսկ Ռ-աֆիկ Հարությունյանը՝ ռադիոլուկացիոն հանգույցում որպես վարորդ-էլեկտրամեխանիկ: Կոչումով նրանք եղել են շարքային:

2006 թվականի մարտ ամսին Ալիկ Մաթևոսյանը ռադիոլուկացիոն հանգույցի ժամկետային շարքային զինծառայող Աղվան Հարությունի Հարությունյանից ուզել է վերջինիս առդիտձայնարկիչը՝ խոստանալով այն վերադարձնել սարքին վիճակում, և ի հավաստումն խոստումի՝ ինքն իր հասցեին տվել է հայիոյանք: Երկու-երեք օր անց Ալիկ Մաթևոսյանն Աղվան Հարությունյանին վերադարձրել է առդիտձայնարկիչը խոտանված վիճակում, որի պատճառով հանգույցի բուժկետում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ Ալիկ Մաթևոսյանը նույն հանգույցի ժամկետային զինծառայող Ռ-աֆիկ Հարությունյանի հետ միասին, խախտելով զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները, նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության պայմաններում, սեփական անձի առավելություններն ընդգծելու մոլուցքով տարված, ծեծել են Աղվան Հարությունյանին:

2006 թվականի ապրիլի 28-ին՝ ժամը 15-ի սահմաններում, անձնակազմի հրահանգավորման նպատակով հանգույց եկած ավտոծառայության պետ մայոր Սերգեյ Աբրահամյանը դիտողություն է արել չսպիրված և համազգեստի խախտումով ներ-



կայացած Ա.Հարությունյանին և դժգոհ մնալով նրա պահվածքից՝ հայիոյել է վերջինիս: Ա.Հարությունյանը նույնպես հայիոյել է մայր Ս.Աբրահամյանին և կայանի ուղղությամբ դիմել է փախուստի: Քիչ անց Ա.Հարությունյանը վերադարձել է և Ս.Աբրահամյանի հրամանով շարված հանգույցի անձնակազմի առջև ներողություն խնդրել նրանից: Ժամը 16-ի սահմաններում Ա.Մաթևոսյանը ռադիոլուկացիոն հանգույցի ավագների սենյակում բացատրություն է պահանջել Ա.Հարությունյանից, թե ինչու է նա ներողություն խնդրել իրեն մայր հայիոյած մայր Ս.Աբրահամյանից, այնուհետև նրան դիտողություն է արել իր հետ խոսելիս «արա» բառը գործածելու համար:

Այնուհետև իր անձի կարծեցյալ գերազանցությունը հաստատելու և համաձայնադրողների շրջանում չհեղինակազրկվելու նպատակով Ալիկ Մաթևոսյանը, նախնական պայմանավորվածության համաձայն, ժամը 22-ին Ռ-աֆիկ Հարությունյանին կանչել է «Կրուգ-2» հենակետի և ռադիոլուկացիոն հանգույցի միջև ընկած «Խաչ» կոչվող վայրը, որտեղ նրան հայտնել է, որ ինքը Աղվան Հարությունյանին կախելու է կամ վերջինս պետք է ինքնուրույն կախվի: Ալիկ Մաթևոսյանը Ռ-աֆիկ Հարությունյանին հարցրել է, թե որտեղից կարող են հայթայթել համապատասխան պարան և աթոռ, ինչին Ռ-աֆիկ Հարությունյանը պատասխանել է, որ դրանց տեղը գիտի: Միասին գնացել են ռադիոլուկացիոն հանգույցի հենակետ, ՊՌՎ-18 մակնիշի կապի հատուկ ավտոմեքենայից վերցրել են կանաչ գույնի նստատեղով առանց հենակի աթոռ, իսկ ԱԳ-10 տեսակի դիզելային գեներատորի միջից՝ պարան և սպիտակ մեկուսիչով պատված մալուխ:

Այնուհետև անտառի խորքում գտնվող հաստաբուն ծառի մոտ Ալիկ Մաթևոսյանը Ռ-աֆիկ Հարությունյանին է տվել լուսարձակով կրակայրիչը, բարձրացել է ծառի վրա, կանգնել գետնից 2,75 մետր բարձրության վրա գտնվող ճյուղին և դրան կապել պարանը, ինչը Ռ-աֆիկ Հարությունյանը կրակայրիչի միջոցով լուսավորել է:

Ճյուղին կապելով պարանը՝ Ալիկ Մաթևոսյանն իջել է ծառից, աթոռը դրել է պարանի տակ, բարձրացել դրա վրա, պարանի վրա կապելու միջոցով օղակ է արել, այն հարմարեցրել պարանոցին զցելու համար, որից հետո Ռ-աֆիկ Հարությունյանին ուղարկել է հանգույցի տարածք՝ Աղվան Հարությունյանին կանչելու համար:

Ռ-աֆիկ Հարությունյանը գնացել է հանգույց և ճաշարանից դեպի գորանոց տանող ճանապարհին հանդիպելով Աղվան Հարությունյանին՝ վերջինիս ասել է, որ Ալիկ Մաթևոսյանն իրեն կանչում է: Երկուսով գնացել են ծառի մոտ, որտեղ նրանց է սպասել Ալիկ Մաթևոսյանը: Տեսնելով Աղվան Հարությունյանին՝ Ալիկ Մաթևոսյանն ինքն իր հասցեին հայիոյանք է տվել և ասել է, որ կամ ինքն է Աղվանին կախելու, կամ էլ նա ինքը պետք է կախվի:

Չթողնելով, որ Աղվան Հարությունյանը պատասխանի, Ալիկ Մաթևոսյանը շարունակել է նվաստացնել վերջինիս պատիվն ու արժանապատվությունը, շահարկելով մայր Ս.Աբրահամյանի կողմից Աղվան Հարությունյանին մայր հայիոյելու հանգամանքը: Ալիկ Մաթևոսյանը փորձել է բռնել Աղվան Հարությունյանի ձեռքից՝ աթոռին բարձրացնելու նպատակով, սակայն վերջինս գտնվելով ընկճված և ճնշված վիճակում, ետ է հրել Ալիկ Մաթևոսյանի ձեռքը և հայիոյանք տալով ասել, որ ինքը թույլ չի տա իրեն կախել, այլ ինքնուրույն կկախվի: Այնուհետև բարձրացել է աթոռին, պարանի օղն անցկացրել է պարանոցին և իջեցրել ձեռքերը:

Ալիկ Մաթևոսյանն անմիջապես բռնել է նրա ձեռքերը, տարել մեջքի ետևը, Ռաֆիկ Հարությունյանին առաջարկել է կապել դրանք մալուխով, սակայն վերջինս հրաժարվել է այդ անել՝ պատճառաբանելով, որ իր մատնահետքերը կմնան մալուխի վրա:

Աղվան Հարությունյանին ինքն իրեն օգնելու հնարավորությունից զրկելու նպատակով Ալիկ Մաթևոսյանը նախապես բերված և կտրված մալուխով դաստակների շրջանում կապել է նրա ձեռքերը:

Տեսնելով, որ Ալիկ Մաթևոսյանը բռնել է աթոռի հենակի երկաթյա ձողերից, Ռաֆիկ Հարությունյանը շրջվել է և մի քանի մետր քայլել հանգույցի ուղղությամբ, որի ընթացքում Ալիկ Մաթևոսյանն իր անձի առավելություններն ընդգծելու մոլուցքով տարված, չնչին առիթով Աղվան Հարությունյանին սպանելու դիտավորությամբ վերջինիս ոտքերի տակից հրել է աթոռը և Աղվան Հարությունյանին ապօրինաբար զրկել կյանքից:

### **Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոք բերած անձը նշել է, որ բողոք բերելու հիմք է դատական սխալը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406–րդ հոդված):

Ըստ նրա, սույն գործով թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա և բողոքում նշված խախտումների արձանագրումը և դրանց նկարագրությունը հիմք են տալիս պնդելու, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշմամբ խախտվել է արդարադատության բուն էությունը: Մասնավորապես, Ա.Մաթևոսյանը դիտավորյալ սպանություն չի կատարել, սակայն եթե նույնիսկ նրա մեղադրանքի հիմքում դրված ապացույցները համարվեն թույլատրելի, ապա դրանց առկայության պայմաններում ևս Ա.Մաթևոսյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 104–րդ հոդվածի 2–րդ մասի 10–րդ կետով նախատեսված՝ խուլիգանական դրդումներով սպանության հանցակազմը:

11. Բողոքաբերը փաստարկել է նաև, որ սույն գործով նախաքննության և դատական քննությունների ընթացքում խախտվել են Ա.Մաթևոսյանի իրավունքները և նա չի կարողացել իրավական պաշտպանություն ստանալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում: Մասնավորապես, խախտվել են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների հետևյալ հոդվածները.

ա) Կոնվենցիայի 3–րդ հոդվածը՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ի հիմնավորումն վերանշյալի՝ բողոքաբերը պնդում է, որ Ա.Մաթևոսյանի նկատմամբ ՀՀ ռազմական ոստիկանության աշխատակիցները 2006թ. մայիսի 2–ից մինչև 20–ը իրականացրել են ծեծ ու խոշտանգում: Յուրեմուք կորզելու նպատակով ծեծել են նաև գործով դատապարտյալ Ռ.Հարությունյանին, ում քիթը ջարդվել է, սակայն ո՛չ նախաքննության մարմինը, ո՛չ էլ դատարաններն այս հանգամանքները հաշվի չեն առել:

բ) Կոնվենցիայի 5–րդ հոդվածի 1–ին կետի «գ» ենթակետը և 3–րդ կետը: Ի հիմնավորումն վերոնշյալի՝ բողոքաբերը պնդում է, որ Ա.Մաթևոսյանը փաստացի անա-

գատության մեջ է եղել 2006թ. մայիսի 1-ից (ռազմական ոստիկանությունում՝ 18 օր), սակայն կալանավորվել է (դատավորի մոտ է տարվել) միայն 2006թ. մայիսի 20-ին:

գ) Կոնվենցիայի 6-րդ հոդվածը: Ի հիմնավորումն նշված փաստարկի՝ բողոքաբերը պնդում է, որ ո՛չ նախաքննության մարմինը, ո՛չ դատարանները հաշվի չեն առել Ա.Մաթևոսյանի օգտին առկա ապացույցները:

դ) Կոնվենցիայի 14-րդ հոդվածը և թիվ 12 արձանագրության 1-ին հոդվածը: Ի հիմնավորումն որի բողոքաբերը նշում է, որ փաստացի թե՛ նախաքննության մարմինը, թե՛ դատարանները ռազմական ոստիկանության աշխատակիցների ցուցմունքներին «հավատացել են» և նրանց կողմից կատարված անօրինականություններին ընթացք չեն տրվել, իսկ նրանց ծեծի և խոշտանգումների արդյունքում ձեռք բերված «ապացույցները» համարել են օրինական և դրել մեղադրանքի հիմքում: Բողոքաբերի պնդմամբ, դատարանները հաշվի չեն առել մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումները, մասնավորապես Հարությունյանն ընդդեմ Հայաստանի 2007թ. հունիսի 28-ի թիվ 36549/03 որոշման մեջ առկա այն դիրքորոշումը, որ. «անկախ նրանից, թե ինչ ազդեցություն են ունեցել խոշտանգումների միջոցով ձեռք բերված ցուցմունքները քրեական վարույթի արդյունքի վրա, մնան ապացույցի օգտագործումը ամբողջ դատավարությունը դարձնում է անարդար: Այսպիսով, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում»:

12. Բողոք բերած անձը նշել է, որ սույն գործով խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ անձի անձեռնմխելիության (հոդված 11), գործի արդարացի քննության (հոդված 17), անմեղության կանխավարկածի (հոդված 18), կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի և դրա ապահովման (հոդված 19), ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու (հոդված 20), քրեական դատավարության ընթացքում մրցակցության (հոդված 23) և ապացույցների ազատ գնահատման (հոդված 25) սկզբունքները:

Ուստի, գտնելով, որ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է Վճռաբեկ դատարանի 2006թ. դեկտեմբերի 22-ի ՎԲ-176/06 որոշմանը («Մատաղիսի գործ») և դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որն առաջացրել է ծանր հետևանքներ՝ բողոք բերած անձը խնդրել է մասնակիորեն բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. նոյեմբերի 12-ի որոշումը, ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով կարճել քրեական գործի վարույթը և Ա.Մաթևոսյանի նկատմամբ դադարեցնել քրեական հետապնդումը, կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

### **Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանը նախ անդրադառնում է իր առջև բարձրացված հետևյալ հարցերին. արդյո՞ք հիմնավորված են բողոքաբերի պնդումներն այն մասին, որ Ա.Մաթևոսյանի նկատմամբ ոստիկանության աշխատակիցները կիրառել են բռնություններ, իսկ Ռ.Հարությունյանից ցուցմունք են կորզել ծեծի միջոցով, և արդյո՞ք մեղադրանքի հիմքում դրվել են ծեծի ու խոշտանգումների արդյունքում ձեռք բերված ապացույցներ:

14. Ի հիմնավորումն նախորդ կետում նշված պնդումների՝ բողոքաբերը որպես իրավական փաստարկ ներկայացրել է *Հարությունյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռում, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի 2006թ. դեկտեմբերի 22-ի ՎԲ-176/06 որոշման մեջ («Մատադիսի գործ»), համապատասխանաբար, Եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները:

15. Ինչպես երևում է *Հարությունյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի վճռից, Միշա Հարությունյանին դատապարտելու համար հիմք են հանդիսացել Մ.Հարությունյանի, ինչպես նաև գործով վկաներ Տ-ի և Ա-ի ցուցմունքները, որոնք ստացվել են խոշտանգումների միջոցով: Ընդ որում, նույն վճռի 29-րդ կետում նշված է, որ Միշա Հարությունյանի և նշված երկու վկաների նկատմամբ բռնություն գործադրած ռազմական ոստիկանության չորս աշխատակից Երևանի Ավան և Նոր-Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2002թ. հոկտեմբերի 9-ի դատավճռով պաշտոնեական դիրքի չարաշահման համար դատապարտվել են երեքից մինչև երեք ու կես տարվա ազատազրկման: Ելնելով վերոգրյալներից՝ Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ անկախ նրանից, թե ինչ ազդեցություն են ունեցել խոշտանգումների միջոցով ձեռք բերված ցուցմունքները դիմումատուի գործով քրեական վարույթի արդյունքի վրա, նման ապացույցի օգտագործումն ամբողջ դատավարույթումը դարձնում է անարդար:

Ի տարբերություն *Հարությունյանն ընդդեմ Հայաստանի* գործի փաստերի՝ սույն քրեական գործում եղած 2006թ. սեպտեմբերի 23-ի որոշումից երևում է, որ Ա.Մաթևոսյանին և Ռ.Հարությունյանին ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության աշխատակիցների կողմից ծեծի ենթարկելու փաստի առթիվ քրեական գործ չի հարուցվել և քրեական հետապնդում չի իրականացվել հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ: Բացի այդ, 2007թ. հունիսի 27-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի վարույթում գտնվող քրեական գործով ամբաստանյալ Ռաֆիկ Հարությունյանին ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության աշխատակիցների կողմից ծեծի ենթարկելու փաստի առթիվ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ:

16. Հիմք ընդունելով սույն որոշման 15-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *Հարությունյանի* գործի և սույն գործի փաստական հանգամանքների քանակապես և որակապես տարբերվում են, ինչի արդյունքում *Հարությունյանի* գործով վճռի հիմնավորումներում պարունակվող ընդհանրական դրույթները սույն գործի նկատմամբ կիրառելի չեն (Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կիրառելիության հարցի մասին տե՛ս *Սեյրան Այվազյանի* վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2008 թվականի մայիսի 23-ի թիվ ՎԲ-17/08 որոշման 22-28-րդ կետերը):

Նույն պատճառաբանությամբ սույն գործով կիրառելի չեն նաև Վճռաբեկ դատարանի 2006թ. դեկտեմբերի 22-ի ՎԲ-176/06 որոշման («Մատադիսի գործ») հիմնավորումները:

17. Հետևաբար, անհիմն են բողոք բերած անձի պնդումներն այն մասին, որ Ա.Մաթևոսյանի նկատմամբ ոստիկանության աշխատակիցները կիրառել են բռնու-

յուններ, իսկ Ռ.-Հարությունյանից ցուցմունք են կորզել ծեծի միջոցով, և ծեծի ու խոշտանգումների արդյունքում ձեռք բերված սպացույցները դրվել են մեղադրանքի հիմքում:

18. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հաջորդ հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ է արդյոք բողոքաբերի փաստարկն այն մասին, որ Ա.Մաթևոսյանի մեղադրանքի հիմքում դրված սպացույցներով նրա արարքում բացակայում է խուլիգանական դրդումներով սպանության հանցակազմը:

19. ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով նախատեսված՝ խուլիգանական դրդումներով սպանությունը կատարվում է հասարակության և բարոյականության համընդհանուր ճանաչում ստացած նորմերի նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսևորմամբ, երբ հանցավորի վարքագիծը բացահայտ մարտահրավեր է հասարակական կարգին և պայմանավորված է իրեն շրջապատին հակադրելու, շրջապատի նկատմամբ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելու ցանկությամբ:

Խուլիգանական դրդումներն իրենցից ներկայացնում են բովանդակությամբ բարդ շարժառիթ, որի մեջ միահյուսվում են անասհման եսամոլությունը, խեղաթյուրված պատկերացումներն անձնական ազատությունների սահմանների մասին, բիրտ ուժի պաշտամունքը, իր անձի «առավելությունները» ընդգծելու մոլուցքը, «ինքնահաստատման» պահանջը, սանձարձակությունը, անպարկեշտ վարքագիծը, ցինիզմը, դաժանությունը, հանդգնությունը, վիրավորանքը, չնչին առիթով արված դիտողության համար վրեժ լուծելը և այլն: Նշված շարժառիթների ամբողջությունը բնորոշ է յուրաքանչյուր խուլիգանության, սակայն խուլիգանական դրդումներով սպանություն կատարելիս դրանց միանում է նաև մարդկային կյանքի նկատմամբ արհամարհական վերաբերմունքն ընդհանրապես՝ անկախ տուժողի անձից:

Խուլիգանական դրդումներով սպանությունը հաճախ կատարվում է առանց տեսանելի առիթի կամ աննշան առիթն օգտագործվում է որպես պատրվակ սպանություն կատարելու համար: Որպես հանցագործության արտաքին պատճառ՝ առիթը սերտորեն կապված է հանցավորի ներքին դրդումների հետ: Ընդ որում, արարքը խուլիգանական դրդումներով սպանություն որակելու համար սպանության կատարման տեղը (վայրը) նշանակություն չունի: Այդպիսի սպանությունը կարող է կատարվել ոչ միայն հասարակական վայրում, պարտադիր չէ նաև մարդկանց ներկայությունը:

20. Սույն գործի նյութերով հիմնավորվել է, որ Ալիկ Մաթևոսյանը և Ռաֆիկ Հարությունյանը զորամասում «հեղինակություն» են եղել, մյուս զինծառայողների համեմատ գտնվել են արտոնյալ վիճակում, փաստացի իշխանություն են ունեցել նրանց նկատմամբ: Զինվորների միջև առաջացած բոլոր վեճերը լուծվել, իսկ վիճելի հարցերը պարզաբանվել են Ա.Մաթևոսյանի և Ռ.-Հարությունյանի միջոցով, իրենց հուզող հարցերով և խնդիրներով զինծառայողները դիմել են նրանց: Ա.Մաթևոսյանն ու Ռ.-Հարությունյանն ազատ տեղաշարժվել են զորամասի տարածքով: Ա.Մաթևոսյանը հաճախ առանց թույլտվության գնացել է ռադիոլուկացիոն հանգույց, իսկ Ռ.-Հարությունյանը՝ «Կրուգ 2» հենակետ, նրանք քնել են ոչ թե ընդհանուր զորանոցում, այլ սպանների հանգստյան սենյակում: Նույնիսկ սպաները չեն փորձել հակադրվել նրանց:

Դեպքի օրը՝ 2006 թվականի ապրիլի 28-ին, Ա.Մաթևոսյանն ու Ռ.Հարությունյանը սպաների հանգստյան սենյակում, սպաների ներկայությամբ քննության առարկա են դարձրել գորամասի ճաշարանում շարքային Խաչատուր Բաբայանի և ռադիոլուկացիոն կայանի պետ, կոչումով ավագ Համլետ Ազիզյանի միջև տեղի ունեցած վիճաբանության հարցը, որի ընթացքում, Ա.Մաթևոսյանի ներկայությունից և աջակցությունից ռզևորված, շարքային Խ.Բաբայանը բռնուցքով հարվածել է ավագ Հ.Ազիզյանին: Դրանից անմիջապես հետո վերջինիս Ալիկ Մաթևոսյանը հանձնարարել է իր մոտ կանչել Աղվան Հարությունյանին, որից բացատրություն է պահանջել մայրը Ս.Աբրահամյանից ներողություն խնդրելու համար և այդ ընթացքում դիտողություն է արել հաճախակի «արա» բառը գործածող Ա.Հարությունյանին՝ զգուշացնելով նրան իր հետ խոսելիս «արա» բառով չդիմել: Նույն օրը երեկոյան, որոշելով, որ կամ ինքն է կախելու Աղվան Հարությունյանին կամ Աղվանն ինքն է կախվելու, Ալիկ Մաթևոսյանը Ռաֆիկ Հարությունյանի օգնությամբ կախադան է պատրաստել և կախել նրան՝ ապօրինաբար դիտավորությամբ գրկելով կյանքից: Այսինքն, Ա.Մաթևոսյանն է տնօրինել Աղվան Հարությունյանի կյանքը, որոշել նրա ապրել-չապրելու հարցը, գտել է, որ նա անպայման պետք է գրկվի կյանքից, այն էլ՝ կախվելու միջոցով, ինքն է Ռաֆիկի օգնությամբ իր ձեռքով պատրաստել կախադան, այնտեղ է կանչել Աղվանին և հայիտյանք տալով, նրան հայտնել, որ կամ ինքն է կախելու Աղվանին կամ էլ նա ինքը պետք է կախվի: Այնուհետև, շարունակելով նվաստացնել կախադանը տեսած, վախեցած, ընկճված և ճնշված վիճակում գտնվող Աղվան Հարությունյանի պատիվն ու արժանապատվությունը, շահարկելով մայրը Ս.Աբրահամյանի կողմից Աղվանին մայր հայիտելու հանգամանքը, Ալիկ Մաթևոսյանը նրա ձեռքերը տարել է մեջքի հետևը, մալուխով կապել և կախել է տուժողին:

21. Սույն որոշման 19-րդ և 20-րդ կետերի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, շարադրված հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում իրավացիորեն նշել է, որ Ալիկ Մաթևոսյանի գործողություններն իրենցից ներկայացնում են հասարակության և բարոյականության համընդհանուր ճանաչում ստացած նորմերին նետված մարտահրավեր, իրեն շրջապատին և հասարակությանը հակադրելու և հակազդելու ցանկություն, իր անձի «առավելությունները» ընդգծելու մոլուցք, ինքնահաստատման պահանջ, ցինիզմ և դաժանություն, աննշան առիթը սպանության պատրվակ օգտագործել, և արդյունքում դատարանը հանգել է ճիշտ հետևության, որ դատապարտյալը տուժող Աղվան Հարությունյանին դիտավորությամբ կյանքից գրկել է խուլիգանական դրդումներով: Այսինքն՝ նա կատարել է հանցանք, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով: Հետևաբար, անհիմն է բողոք բերած անձի փաստարկն այն մասին, որ Ա.Մաթևոսյանի մեղադրանքի հիմքում դրված ապացույցների առկայության պայմաններում նրա արարքում բացակայում է խուլիգանական դրդումներով սպանության հանցակազմը:

22. Սույն որոշման 18-22-րդ կետերում քննության առնված իրավական հարցից ըստ էության բխում է բողոքարեբի հաջորդ պնդումը, որով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացվում է հետևյալն իրավական հարցը. արդյո՞ք հիմնավորված է Ա.Մաթևոսյանի կողմից Ա.Հարությունյանի սպանությունը կատարելու փաստը:

23. Սույն գործի նյութերով հիմնավորվել է, որ 2006թ. մարտ ամսին ռադիոլուկացիոն հանգույցի բուժկետում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ զինծառայող, կոչումով շարքային Ալիկ Մաթևոսյանը շարքային Ռ-աֆիկ Հարությունյանի հետ ծեծի են ենթարկել Աղվան Հարությունյանին: Այնուհետև Կապանի տարածաշրջանի Կաղնուտ գյուղի անտառում Ա.Մաթևոսյանը խուլիզանական դրդումներով, կախելու միջոցով սպանել է Աղվան Հարությունյանին:

Նշված հանցագործության կատարման մեջ Ա.Մաթևոսյանի մեղավորությունն ապացուցված է գործով մյուս դատապարտյալ Ռ-Հարությունյանի՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքներով, որտեղ նա մանրամասն նկարագրել է իր օժանդակությամբ Ա.Մաթևոսյանի կողմից Ա.Հարությունյանին կախելու միջոցով սպանելու հանգամանքները: Նշված ցուցմունքը Ռ-Հարությունյանը պնդել է Ա.Մաթևոսյանի հետ առերես հարցաքննության ժամանակ: Ա.Մաթևոսյանի հանցանքը հաստատված է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված կարգով՝ գործի համար նշանակություն ունեցող տվյալներն ստուգելու և ճշտելու նպատակով կատարված քննչական փորձարարությամբ և դրա մասին կազմված արձանագրությամբ: Կատարված հանցագործության մեջ Ա.Մաթևոսյանի մեղավորությունը հաստատված է նաև գործով տուժող Խաչատուր Բաբայանի, վկաներ Վահե Աբրահամյանի, Տիգրան Վարդանյանի, Վահե Դոխոյանի, Կարեն Կոստանյանի, Վահե Գրիգորյանի, Համազասպ Ալեքսանյանի, Արման Կարավարդյանի, Վահրամ Մելիքսեթյանի, Սիհրան Դովլաթյանի, Ազատ Մարտիրոսյանի, Դավիթ Խաչատրյանի, Սարգիս Մեֆիլյանի, Արսեն Մանուչարյանի ցուցմունքներով, դատաբժշկական, դատահետաքննական, դատահողազիտական փորձաքննությունների եզրակացություններով, տեղանքի զննում, առգրավում, դեպքի վայրի և դիակի զննություն կատարելու մասին արձանագրություններով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Մաթևոսյանի վերաբերյալ դատական ակտի հիմքում դրված վերը նշված ապացույցները, որոնք ձեռք են բերվել քրեական դատավարության օրենսդրության պահանջներին համապատասխան, դատարանը հետազոտել է դատաքննության ժամանակ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի հիման վրա՝ դրանք զնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, հանգել է ճիշտ եզրակացության: Այս ապացույցների առկայության պայմաններում կատարված հանցագործության մեջ Ա.Մաթևոսյանի մեղավորության մասին վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված ու պատճառաբանված են, իսկ այդ կապակցությամբ վճռաբեկ բողոքում բերված փաստարկները գործի նյութերում իրենց հաստատումը չեն գտել: Հետևաբար անհիմն է բողոք բերած անձի այն պնդումը, թե Ա.Մաթևոսյանի կողմից դիտավորյալ սպանություն չի կատարվել:

24. Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոք բերած անձը, նշելով, որ նախաքննության և դատական քննությունների ընթացքում խախտվել են Ա.Մաթևոսյանի իրավունքները և նա չի կարողացել իրավական պաշտպանություն ստանալ վերաքննիչ դատարանում, որևէ փաստարկ չի բերել հիմնավորելու, թե ինչում են արտահայտվել այդ խախտումները և վերաքննիչ դատարանում ի-

րավական պաշտպանություն չստանալը: Իսկ ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքում նշված՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ, 6-րդ, 14-րդ հոդվածների, ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 23-րդ, 25-րդ, 129-րդ, 130-րդ հոդվածների պահանջների խախտմանը, ապա գործի նյութերից երևում է, որ վերաքննիչ բողոք բերած անձն իր բողոքում նշված հարցերը չի բարձրացրել, դրանք վերաքննիչ դատարանը քննության չի առել և դրանց վերաբերյալ որոշում չի կայացրել: Վճռաբեկ դատարանի կողմից Վերաքննիչ դատարանի 2007թ. դեկտեմբերի 3-ի դատավճիռը բեկանելուց և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելուց հետո էլ վերաքննիչ դատարանում գործի քննությանը մասնակցած՝ Ա.Մաթևոսյանի պաշտպանը վճռաբեկ բողոքում նշված հարցերը վերաքննիչ դատարանում չի բարձրացրել: Գործի նյութերից երևում է, որ նա վերաքննիչ դատարանում միջնորդել է ունկնդրել գործով իրեղեն ապացույց ճանաչված քննչական փորձարարության, Ալիկ Մաթևոսյանի և վկա Վահե Դոխոյանի, Ալիկ Մաթևոսյանի և Ռաֆիկ Հարությունյանի առերես հարցաքննությունների տեսանկյունից, սակայն վերաքննիչ դատարանը նշված միջնորդությունները մերժել է այն պատճառաբանությամբ, որ դրանք դատարանում ունկնդրվել են, բացի այդ, տեսանկյունների պատճենները տրվել են կողմերին: Պաշտպանության կողմը միջնորդություններ է հարուցել նաև վկա Վ.Դոխոյանին և դատաբժշկական փորձագետ Բիշարյանին դատարան հրավիրելու և հարցաքննելու, գործով դատալուսանկարչական և դատաբժշկական համալիր փորձաքննություն նշանակելու, դեպքի վայրում քննչական փորձարարություն անցկացնելու մասին: Վերաքննիչ դատարանը, օրենքով սահմանված կարգով քննարկելով այդ միջնորդությունները, պատճառաբանված որոշմամբ մերժել է դրանք:

25. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոք բերած անձի կողմից անտեսվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, որի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերն անձը չի կարող բողոքարկել վճռաբեկ դատարան, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը վերաքննիչ դատարանում: Հետևաբար վերաքննիչ դատարանում չբարձրացված վերը նշված հարցերը վճռաբեկ դատարանում քննության առարկա դառնալ չեն կարող:

Այստեղ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ 2009թ. դեկտեմբերի 22-ին Ալիկ Մաթևոսյանի դիմումի հիման վրա քննության առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու հարցը՝ ՀՀ սահմանադրական դատարանը որոշել է, որ այն համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

26. Հիմք ընդունելով վերոշարադրյալ հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավորված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դատական սխալի՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտման առկայությունը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, այդ առումով վերաքննիչ դատարանի դատական ակտն օրինական է, հիմնավորված ու պատճառաբանված, լիովին համապատասխանում է ՀՀ



քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին, ուստի նույն օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա վճռաբեկ բողոքը պետք է մերժել՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

27. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Դատապարտյալ Ալիկ Ռուդիկի Մաթևոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով և 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի նոյեմբերի 12-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

59.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵԿԴ/0633/06/09

ԵԿԴ/0633/06/09

նախագահող դատավոր՝ Ա.Խաչատրյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՄԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Կ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

2010 թվականի մարտի 26-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը մեղադրյալ Աղասի Ալբերտի Հովսեփյանի նկատմամբ գրավ կիրառելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. դեկտեմբերի 2-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի որոշման դեմ,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2009թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչությունում հունիսի 4-ին ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 83159109 քրեական գործը:

2. 2009թ. նոյեմբերի 25-ին Ա.Հովսեփյանը ձերբակալվել է:

3. 2009թ. նոյեմբերի 27-ի որոշմամբ Ա.Հովսեփյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով և 203-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

4. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. նոյեմբերի 28-ի որոշմամբ Ա.Հովսեփյանին նկատմամբ 2 ամիս ժամկետով որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

5. 2009թ. դեկտեմբերի 2-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշմամբ բավարարվել է պաշտպան Ա.Ալվանդյանի միջնորդությունը՝ մեղադրյալ Ա.Հովսեփյանին կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու մասին՝ գրավի չափ սահմանելով 1.000.000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ:

6. ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազի վերաքննիչ բողոքի հիման վրա դատական ստուգման ենթարկելով մեղադրյալ Ա.Հովսեփյանին կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու և որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավ կիրառելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. դեկտեմբերի 2-ի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009թ. դեկտեմբերի 18-ի որոշմամբ օրինական ուժի մեջ է թողել վերոնշյալ որոշումը:

7. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. դեկտեմբերի 18-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ դատարանը 2010թ. փետրվարի 19-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ուղարկվել:

**Գործի փաստական հանգամանքները.**

8. Ա.Հովսեփյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հաշվառված լինելով ՊԵԿ Մեղրու ՏՀՏ-ում որպես անհատ ձեռնարկատեր և իրավունք ունենալով իր անվամբ իրականացնել արտաքին տնտեսական գործունեություն, հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու դիտավորությամբ, Կարինե Գարբինյանի անվամբ, վերջինիս համաձայնությամբ պետական ռեզիստի գործակալությունում և ՊԵԿ Էրեբունու հարկային տեսչությունում գրանցել ու հաշվառել է անհատ ձեռնարկատեր և 2008թ. մարտի 29-ին ՀՀ տարածք է ներմուծել և իրացրել ընդամենը 12.753.700 ՀՀ դրամ մաքսային արժեքով բանջարեղեն: Ա.Հովսեփյանը Կ.Գարբինյանի օժանդակությամբ կատարված գործարքների վերաբերյալ հարկային մարմիններ հարկման համար հիմք հանդիսացող հաշվարկներ և հաշվետվություններ չի ներկայացրել և այդ եղանակով չարամտորեն խուսափել է պետական բյուջե վճարել խոշոր չափերի հասնող 2.610.480 ՀՀ դրամ հարկերը, որոնց վրա հաշվարկվել է պետական բյուջե վճարման ենթակա 2.337.183 ՀՀ դրամ տույժ և տուգանքներ:

Բացի այդ, Ա.Հովսեփյանը հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու համար նախատեսված պատասխանատվությունից խուսափելու նպատակով համակարգչային տեխնիկայի կիրառմամբ պատրաստել է գույքային իրավունքների մասին վկայող կեղծ վճարային փաստաթղթեր՝ 3.967.663 ՀՀ դրամի չափով առաջադրված լրացուցիչ հարկային պարտականությունները Կ.Գարբինյանի անվամբ ՀՀ «ՎՏԲ–Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության միջոցով պետբյուջե վճարելու վերաբերյալ և 2009թ. նոյեմբերի 18–ի ամսաթվով թվագրված խոշոր չափերով՝ 3.967.663 ՀՀ դրամի հ.90100092458824, հ.90100092458832 և հ.90100092458826 կեղծ վճարային անդորրագրերը ներկայացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչություն:

### **Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

9. Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքի հեղինակը գտնում է, որ Ա.Հովսեփյանը, գիտակցելով, որ իր կողմից հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարումներից չարամտորեն խուսափելն առաջացնում է քրեական պատասխանատվություն և պատիժ, և նպատակադրվելով տվյալ արարքի հետևանքները վերացված չլինելու հանգամանքը թաքցնելու միջոցով խուսափել դրանից, պատրաստել և քրեական վարույթն իրականացնող մարմնին է ներկայացրել գույքային իրավունք վերապահող կեղծ վճարային փաստաթղթեր՝ իբր խոշոր չափերի վնասը պետությանը հատուցած լինելու վերաբերյալ, որով կատարել է ավելի մեծ հանրային վտանգավորություն ունեցող, ծանր հանցագործությունների թվին դասվող ՀՀ քրեական օրենսգրքի 203–րդ հոդվածի 2–րդ մասով նախատեսված մեկ այլ հանցավոր արարք, որի համար որպես պատիժ կարող է նշանակվել ազատազրկում մեկ տարուց ավելի ժամանակով: Ա.Հովսեփյանը դրանով իսկ անօրինական ազդեցություն է գործել օբյեկտիվ ճշմարտությունը պարզելու նպատակով գործով իրականացվող նախաքննության վրա, իսկ պետությանը պատճառված վնասը վերականգնել է միայն այն բանից հետո, երբ քրեական վարույթն իրականացնող մարմինը բացահայտել է նրա կողմից գույքային իրավունք վերապահող կեղծ վճարային փաստաթղթեր պատրաստելու և նախաքննության մարմնին ներկայացնելու փաստը:

Բողոքաբերը փաստարկել է, որ ազատ մնալով՝ Ա.Հովսեփյանը կարող է թաքնվել քննությունից և ազդել քրեական դատավարությանը մասնակցող մյուս անձանց վրա՝ կապված իր կողմից փաստացի տնօրինած «Ռալ Բին», «Սարավանդ», «Թոնդրակեցիներ» ՍՊԸ և այլ տնտեսվարող սուբյեկտների գործունեության ընթացքում առաջացած և պետբյուջե վճարման ենթակա լրացուցիչ հարկային պարտավորությունների չափը ճշտելու հետ, որը կհակասեր գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտում ապահովելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17–րդ հոդվածի դրույթներին:

Ելնելով վերոգրյալից՝ բողոք բերած անձը պահանջել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. դեկտեմբերի 18–ի որոշումը մեղադրյալ Ա.Հովսեփյանին կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու մասով բեկանել:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

10. Կալանավորումը քրեական գործի քննության ընթացքում կիրառվող խափանման միջոցներից ամենախիստն է: Այն պետք է ընտրվի միայն այն ժամանակ, երբ խափանման մյուս միջոցները քրեական գործի վարույթի ընթացքում չեն կարող ապահովել անձի պատշաճ վարքագիծը: ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը սահմանել է կալանավորման կիրառման օրինակաչափային ու հիմնավորվածությունն ապահովող մի շարք երաշխիքներ, որոնց մեջ առաջին հերթին կարևորվում ու առանձնանում են կալանավորման հիմքերը: Դրանք օրենքով նախատեսված այն հանգամանքներն են, որոնք հաստատվում են ապացույցների որոշակի ամբողջությամբ և հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել այն մասին, որ անձը, կալանքի տակ չգտնվելով, կարող է դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ և խոչընդոտել քրեական դատավարության խնդիրների իրականացմանը:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:

12. Այս հոդվածի բովանդակությունից հետևում է, որ կալանավորման կիրառման հիմքերն ունեն կանխատեսական, մոտավոր բնույթ, քանի որ ենթադրում են ապագային վերաբերող իրադարձություններ: Ընդ որում, այդ կանխատեսող գործողություններն անհրաժեշտ է հիմնավորել քրեական գործով ձեռք բերված որոշակի նյութերով, որով էլ վերջին հաշվով որոշվում է կալանավորման կիրառման հիմնավորվածությունը:

Այս հարցի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել *Արամ Ճուղուրյանի* վերաբերյալ որոշման մեջ: Համաձայն այդ որոշման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա: Դա նշանակում է, որ կալանավորման կիրառման հիմքում բոլոր դեպքերում պետք է դրվեն որոշ փաստական տվյալներ (տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Արամ Ճուղուրյանի վերաբերյալ գործով 2007թ. օգոստոսի 30-ի ՎԲ-132/07 որոշումը):

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գրավը ոչ մեծ և միջին ծանրության հանցագործության համար մեղադրվողին կալանքից ազատելու համար դրամի, արժեթղթերի, այլ արժեքների ձևով դատարանի դեպոզիտ մեկ կամ մի քանի անձանց կատարած ներդրումն է՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գրավը համարվում է կալանավորման այլընտրանքային խափանման միջոց և կիրառվում է միայն այն դեպքում, երբ ստացվել է դատարանի որոշումը մեղադրյալին կալանավորելու մասին:

14. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավանորմից բխում է, որ անձի կալանավորման հարցը լուծելիս ՀՀ իրավասու դատարանները լիազորված են քննարկել դատաքննությանը մեղադրյալի ներկայանալը երաշխավորող այլընտրանքային միջոցների կիրառման հնարավորությունը, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա այդպիսի միջոց է գրավը /տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Տարոն Ռ-ազմիկի Հակոբյանի վերաբերյալ 2007 թվականի հուլիսի 13-ի թիվ ՎԲ-115/07 որոշումը (կետ 3.1)/:

Այսպիսով, ՀՀ օրենսդրությամբ, Վճռաբեկ դատարանի որոշումներով, ինչպես նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով ամրագրված է, որ դատարանը կարող է կալանքի փոխարեն կիրառել գրավը՝ որպես այլընտրանքային խափանման միջոց:

15. Միևնույն ժամանակ, Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի վերաբերյալ արված իրավական մեկնաբանություններում չի սահմանվում, որ դատարանը պարտավոր է յուրաքանչյուր կալանավորվածի տրամադրել որոշակի երաշխիքներով ազատ արձակվելու հնրավորություն. դատարանը միայն պարտավոր է քննարկել և լուծել այն հարցը, թե արդյոք հնարավոր է անձին ազատ արձակել այդ թվում՝ որոշակի այլընտրանքային երաշխիք ստանալով: Ուստի Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հիման վրա անձին երաշխիքով ազատ արձակելն առանձին դեպքերում կարող է ճանաչվել անթույլատրելի, երբ կոնկրետ փաստերով հիմնավորվում է, որ այլընտրանքային երաշխիքն ի գորտու չէ կանխել անձի ոչ իրավաչափ վարքագիծը նրան ազատ արձակելու դեպքում (տե՛ս, օրինակ՝ Ալեքսանդր Մակարովն ընդդեմ Ռուսաստանի գործով վճռի (Aleksandr Makarov v. Russia, 2009թ. մարտի 12, գանգատ թիվ 15217/07) 138-139 կետերը, Մամեդովան ընդդեմ Ռուսաստանի գործով վճռի (Mamedova v. Russia, 2006թ. հունիսի 1, գանգատ թիվ 7064/05) 75-77 կետերը, Սուլաոյան ընդդեմ Էստոնիայի գործով վճռի (Sulaoja v. Estonia, 2005թ. փետրվարի 15, գանգատ թիվ 55939/00) 64 կետը):

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը, համապատասխան շարժառիթները շարադրելով, իրավունք ունի մեղադրյալին կալանքից գրավով ազատելը ճանաչել անթույլատրելի առանձին դեպքերում, մասնավորապես, եթե հայտնի չէ մեղադրյալի անձը, նա չունի մշտական բնակության վայր կամ փորձել է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից:

17. Ասլան Ավետիսյանի վերաբերյալ 2008թ. հոկտեմբերի 31-ի ԱՎԳ/022/06/08 որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդրի օգտագործած «մասնավորապես» բառն արտահայտում է կալանքով գրավից ազատելու կոնկրետ դրսևորումների հատուկ ամրագրման և ոչ թե կալանքով գրավից ազատելու իրավական հիմքերի սպառնիչ թվարկման նշանակություն: Սեղադրյալի անձը հայտնի չլինելը, մշտական բնակության վայր չունենալը կամ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու փորձը կալանքից գրավով ազատելու կոնկրետ դրսևորումներ են, որոնք թվարկված են ոչ սպառնիչ: Ուստի գրավի կիրառման անթույլատրելիության հարցը պետք է քննարկվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համատեքստում, որտեղ նշված են խափանման միջոց կիրառելու այլ հիմքեր, այդ թվում նաև մինչդասական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելու հիմքը (տե՛ս Ասլան Ավետիսյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2008թ. հոկտեմբերի 31-ի ԱՎԳ/022/06/08 որոշման 36 կետը):

18. Վերոգրյալ իրավանորմերը և իրավական դիրքորոշումները սույն գործի փաստերի նկատմամբ կիրառելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով գրավի կիրառման օրինականության և հիմնավորվածության ստուգման ընթացքում վերաքննիչ դատարանը հաշվի չի առել և քննության առարկա չի դարձրել էական նշանակություն ունեցող մի շարք հարցեր:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանի կողմից բազմակողմանի վերլուծության չեն ենթարկվել մեղադրյալի անձը և նրա կատարած գործողությունները, ինչը հիմք կտար եզրահանգելու, որ առկա է վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ նոր հանցանք կատարելու ողջամիտ ենթադրություն:

19. Տվյալ պարագայում կարևոր նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

ա) Ա.Հովսեփյանին նախկինում մեղադրանք էր առաջադրվել նույնաբնույթ հանցանքի համար, այն է՝ ՀՀ քրեական օրենսգրքի տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գլխում ներառված՝ 188-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի համար: Ընդ որում, այդ արարքի համար նա ՀՀ ԱԺ 2009թ. հունիսի 19-ի համաներման ակտի հիման վրա դատարանի որոշմամբ ազատվել է քրեական պատասխանատվությունից և պատժից:

բ) Առկա է հիմնավոր կասկած այն մասին, որ հետագայում Ա.Հովսեփյանը հարկային մարմիններին չի ներկայացրել հարկման համար օրենսդրությամբ նախատեսված հաշվետվություններ, հաշվարկներ և այդ եղանակով չարամտորեն խուսափել է պետական բյուջե վճարել խոշոր չափերի հարկերը:

գ) Գործում առկա են փաստական տվյալներ այն մասին, որ հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու համար նախատեսված պատասխանատվությունից խուսափելու նպատակով Ա.Հովսեփյանը համակարգչային տեխնիկայի կիրառմամբ պատրաստել է գույքային իրավունքների մասին վկայող կեղծ վճարային փաստաթղթեր և այդ անդորրագրերը ներկայացրել է նախաքննության մարմնին՝ ակնկալելով ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված իր համար բարենպաստ հետևանքների վրա հասնելը, այն է՝ սույն օրենսգրքի 189-րդ, 193-րդ, 194-րդ, 205-րդ և 206-րդ հոդվածներով նախատեսված արարքներն առաջին անգամ կատարած անձն

ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա հատուցում է հանցագործությանը պատճառված վնասը և հաշվարկված տույժերն ու տուգանքները:

Այսպիսով, կեղծ ապացույց ձևավորելով՝ Ա.Հովսեփյանը փորձել է ազդել գործով ճշմարտությունը պարզելու նպատակով իրականացվող նախաքննության վրա, իսկ պետությանը պատճառած վնասը վերականգնել է միայն այն բանից հետո, երբ քրեական վարույթն իրականացնող մարմինը բացահայտել է նրա կողմից գույքային իրավունք վերապահող կեղծ վճարային փաստաթղթեր պատրաստելու և նախաքննության մարմնին ներկայացնելու փաստը:

Փաստորեն դատարանի կողմից գրավը որպես այլընտրանքային խափանման միջոց է կիրառվել այնպիսի անձի նկատմամբ, որը հստակ հակում ունի շարունակելու հանցավոր գործունեությունը: Դրա վկայություն է մեղադրյալի մոտ հակահասարակական կողմնորոշման առկայությունը, նախկինում կատարած հակաօրինական արարքների քանակը, իսկ նյութերից երևում է, որ նրան կարճ ժամանակահատվածում մեղսագրվել է տնտեսական գործունեության դեմ ուղղված երեք հանցագործություն:

20. Սույն որոշման նախորդ կետում նշված հանգամանքների հաշվառմամբ վերաքննիչ դատարանը պետք է անդրադառնար այն հարցին, թե արդյոք առկա չէ ողջամիտ կասկած, որ Ա.Հովսեփյանը կարող է խոչընդոտել գործով ճշմարտության բացահայտմանը կամ կատարել նոր հանցագործություն:

21. Ելնելով մեղադրյալի դրսևորած վարքագծից՝ կապված կեղծ վճարային փաստաթղթերի հետ, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև այն բանին, որ նա կարող է խոչընդոտել գործի քննությանը՝ գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, վկաների վրա անօրինական ազդեցություն գործադրելու միջոցով: Տվյալ պարագայում խոսքը վերաբերում է այն հանգամանքին, որ Ա.Հովսեփյանը կարող է ազդել քրեական դատավարությանը մասնակցող մյուս անձանց վրա՝ կապված իր կողմից փաստացի տնօրինած «Ռ-ալ Բին», «Սարավանդ», «Թոնդրակեցիներ» ՍՊԸ և այլ տնտեսվարող սուբյեկտների գործունեության ընթացքում առաջացած և պետրյուջե վճարման ենթակա լրացուցիչ հարկային պարտավորությունների չափը ճշտելու հետ:

22. Փաստորեն Ա.Հովսեփյանի նկատմամբ գրավի կիրառման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգման արդյունքում վերաքննիչ դատարանը կայացրել է չպատճառաբանված որոշում: Ուստի անհրաժեշտ է բեկանել մեղադրյալ Ա.Հովսեփյանի նկատմամբ գրավ կիրառելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2009թ. դեկտեմբերի 2-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

23. Նոր քննությանը անհրաժեշտ է, կալանավորման միջնորդության հիմնավորվածությունը հաստատող նյութերից ելնելով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածով սահմանված կարգով դատական ստուգման ենթարկել Ա.Հովսեփյանի նկատմամբ գրավի կիրառման օրինականությունն ու հիմնավորվածությունը և հանգել համապատասխան հետևության:

24. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական



դատավարության օրենսգրքի 403–406–րդ, 419–րդ, 422–424–րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրյալ Աղասի Ալբերտի Հովսեփյանի նկատմամբ գրավ կիրառելու մասին Երևանի Կենտրոն և Նորք–Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. դեկտեմբերի 2–ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. դեկտեմբերի 18–ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

60.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության

ՍԳ/0226/01/09

վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ՍԳ/0226/01/09

նախագահող դատավոր՝ Մ.Սիմոնյան  
դատավորներ՝ Ս.Ավետիսյան, Ա.Խաչատրյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝*

Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝*

Հ. ԱՄԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԳԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ*

Կ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

*մասնակցությամբ պաշտպան*

Կ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆԻ

2010 թվականի մարտի 26-ին

ք. Երևանում

դրնբաց դատական նիստում, քննության առնելով Արթուր Խաչիկի Անտոնյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2010 թվականի հունվարի 15-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Անտոնյանի պաշտպան Կ.-Սանուչարյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2009 թվականի օգոստոսի 14-ին հարուցվել է թիվ 32104709 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի հատկանիշներով:

2009 թվականի օգոստոսի 15-ի որոշմամբ Ա.Անտոնյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով:

2009 թվականի օգոստոսի 27-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 23-ի դատավճռով, դատական քննության արագացված կարգի կիրառմամբ, Արթուր Խաչիկի Անտոնյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում 2 /երկու/ տարի ժամկետով:

Նույն դատավճռով դատապարտվել են նաև Ս.Նուրիջանյանը, Ա.Սկրտչյանը, Ա.Ավետիսյանը, որոնց մասով դատական ակտը չի բողոքարկվել:

3. Ամբաստանյալ Ա.Անտոնյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2010 թվականի հունվարի 15-ի որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքը՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 23-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հունվարի 15-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ա.Անտոնյանի պաշտպան Կ.Մանուչարյանը:

2010 թվականի մարտի 15-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանն ամբաստանյալ Ա.Անտոնյանի պաշտպան Կ.Մանուչարյանի վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով (բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար):

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. Ա.Անտոնյանը դատապարտվել է այն արարքի համար, որ գողություն կատարելու համար նախնական համաձայնության գալով ընկերների՝ Արարատի մարզի Ջող ավանի բնակիչներ Ս.Նուրիջանյանի, Ա.Սկրտչյանի, Ա.Ավետիսյանի հետ, 2009 թվականի օգոստոսի 11-ին Ս.Նուրիջանյանին պատկանող ՎԱԶ-2101 մակնիշի ավտոմեքենայով գնացել են Գորիս քաղաք և ժամը 03-ի սահմաններում գողացել Գորիս քաղաքի Այգեստան 16 տան բակում կայանված Մ.Ասկանդարյանին պատկանող Վազ-2101 մակնիշի ավտոմեքենայի հետևի ձախ անիվը, այնուհետև անասնագոմի դուռը բացելու միջոցով ապօրինի մուտք գործելով Մ.Ասկանդարյանի անասնագոմ՝ գաղտնի հափշտակել են 7 գլուխ ոչխար, վերջինիս պատճառելով զգալի չափերի՝ 210.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

6. Առաջին ատյանի դատարանը Ա.Անտոնյանի նկատմամբ պատիժ նշանակելիս որպես նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք է դիտել այն, որ նա նախկինում դատված չի եղել, Արարատի մարզի Արարատ գյուղի

գյուղապետարանի կողմից բնութագրվում է դրական, երիտասարդ է, գղջում է կատարածի համար, Արարատի մարզի Արարատ գյուղի գյուղապետարանի կողմից 2009 թվականի օգոստոսի 31-ին տրված տեղեկանքի համաձայն՝ նրա խնամքին ու հոգածությանն են պապն ու տատը:

Առաջին ատյանի դատարանն արձանագրել է նաև, որ Ա.Անտոնյանի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում նշել է նաև, որ «Ամբաստանյալների նկատմամբ պատժաչափ նշանակելիս դատարանը հաշվի է առնում ամբաստանյալներից յուրաքանչյուրի մասնակցության բնույթն ու աստիճանը, նաև այն հանգամանքը, որ ամբաստանյալ Նուրիջանյանի եղբոր միջոցով վերականգնվել է տուժողին պատճառված նյութական վնասը, վերջինս էլ գրավոր հայտնել է, որ ամբաստանյալներից պարտք ու պահանջ չունի»:

7. Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտում շարադրված վերոգրյալ հանգամանքները, հանգել է հետևության, որ ամբաստանյալի նկատմամբ նշանակվել է համաչափ պատիժ: Վերաքննիչ դատարանն արձանագրել է. «(...) ինչպես բողոքում մատնանշված փաստարկները, այնպես էլ ամբաստանյալի վատառողջ լինելը չեն կարող հիմք հանդիսանալ նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման համար»:

8. Գործով հաստատվել է, որ անվաղողի և ոչխարների հափշտակություն կատարելու ընթացքում Ա.Անտոնյանը գտնվել է դատապարտյալ Ս.Նուրիջանյանին պատկանող ավտոմեքենայում և մյուսների կողմից ոչխարներն անասնագոմից դուրս բերելուց հետո օգնել է դրանք տեղավորել ավտոմեքենայի մեջ:

9. Ա.Անտոնյանը նախկինում դատապարտված չի եղել, ընդունել է հանցանքը և գղջացել կատարածի համար, բնութագրվում է դրական, վատառողջ է՝ ըստ «ամբուլատոր հիվանդի բժշկական քարտի», «Արարատի մարզի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Արարատի մարզի բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ-ի կողմից տրված գրությունների՝ Արթուր Անտոնյանը 2001 թվականից բուժհաստատությունում հաշվառված լինելով, 2007 թվականի հոկտեմբերի 3-ին «Կոմա, կրկնվող ցնցումային նոպաներ» ախտորոշմամբ տեղափոխվել է «Էրեբունի» ԲԿ-ի վերակենդանացման բաժանմունք, սկսած նույն թվականից «Ցնցումային սինդրոմ, էպիլեպտիկ սինդրոմ» ախտորոշման հիման վրա վերցվել է դիսպանսեր հսկողության և ստանում է հակացնցումային դեղորայք /հատոր 2, էջեր 121-125/, նրա խնամքին և հոգածությանն են պապն ու տատը:

10. Գործով տուժող Մ.Ասկանդարյանը 2009 թվականի օգոստոսի 27-ին տվել է ստացական այն մասին, որ նույն օրն Արթուր Անտոնյանի եղբայր Գարիկ Անտոնյանից ստացել է իրեն պատճառված վնասի ողջ ծավալով հատուցումը և մեղադրյալներ Ա.Անտոնյանից և մյուսներից որևէ պարտք և պահանջ չունի: /հատոր 2, էջ 50/

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

11. Բողոք բերած անձը փաստարկել է, որ առկա են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և

3-րդ կետերով նախատեսված հիմքերը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, ինչպես նաև՝ ստորադաս դատարանի կողմից թույլ է տրվել դատական սխալ՝ նյութական օրենքի էական խախտում, որը կարող է ծանր հետևանքներ առաջացնել ծանր հիվանդությանը տառապող Ա.Անտոնյանի համար:

Համաձայն բողոքի՝ նախաքննության ընթացքում և դատարաններում բավարար ուշադրություն չեն դարձրել այն հանգամանքին, որ ամբաստանյալ Ա.Անտոնյանը տառապում է ծանր հիվանդությամբ, որի վերաբերյալ Վերաքննիչ դատարանում գործի դատաքննության ընթացքում ներկայացվել են համապատասխան գրավոր ապացույցներ:

Բացի այդ, Ա.Անտոնյանն ամբողջովին վերականգնել է տուժողին պատճառած նյութական վնասը, ինչն էականորեն նվազեցնում է հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, սակայն Առաջին ատյանի դատարանը կայացված դատավճռում սխալմամբ նշել է, որ վնասը հատուցվել է «ամբաստանյալ Նուրիջանյանի եղբոր կողմից»: Ա.Անտոնյանը նախկինում դատված չի եղել, բնութագրվում է դրական, ընդունել է մեղքը և գղջացել կատարածի համար, ընտանիքի միակ կերակրողն է, նրա խնամքին են տատն ու պապը:

Վերոգրյալի և ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 61-րդ, 48-րդ հոդվածների վերլուծության համատեքստում բողոքի հեղինակը գտել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել առերևույթ դատական սխալ՝ դատավճռով նշանակված պատիժը չի համապատասխանում կատարված հանցանքի ծանրությանը և ամբաստանյալի անձին, բացի այդ՝ այն հակասում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ ԱՎԳ/0100/01/08, ՎԲ-197/07 գործերով Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշմանը:

12. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է մասնակիորեն՝ Ա.Անտոնյանի նկատմամբ նշանակված պատժի մատով, բեկանել Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 23-ի դատավճիռն ու Վերաքննիչ դատարանի 2010 թվականի որոշումը, և Ա.Անտոնյանի նկատմամբ նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան:

### **Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի այն հարցին, թե հիմնավորված և պատճառաբանվա՞ծ է արդյոք Ա.Անտոնյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը:

14. Պատիժ նշանակելը քրեական գործերով արդարադատության իրականացման կարևոր և պատասխանատու բաղադրամասերից է, ուստի օրենսդրի կողմից մեծապես կարևորվում է յուրաքանչյուր դեպքում անձի նկատմամբ պատիժ նշանակելիս քրեաիրավական նորմերով ամրագրված օրինականության, արդարության, պատասխանատվության անհատականացման և մարդասիրության սկզբունքների պահպանումը:

15. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա

կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվող «պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:

16. Շարադրված հոդվածների վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ սոցիալական արդարությունը վերականգնելու նպատակը բխում է արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքն ամրագրած՝ ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի բովանդակությունից: Մասնավորապես, նշված հոդվածի այն պահանջից, ըստ որի՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեափրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ և 48-րդ հոդվածների վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել ՎԲ-50/07, ՎԲ-192/07, ՎԲ-201/07, ԱՎԳ-2/0059/01/08 որոշումներում):

17. ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով»:

Ամբաստանյալին մեղսագրվող հանցանքի հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ իր դիրքորոշումը Վճռաբեկ դատարանն արտահայտել է Գ.Մադաթյանի վերաբերյալ գործով կայացրած որոշման մեջ, որի համաձայն՝ «Արարքի հանրային վտանգավորության բնույթը հանցագործության որակական կողմն է, այն որոշվում է մեղքի ձևի և տեսակի, հանցագործության նպատակի և շարժառիթի, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակության վերաբերյալ փաստական տվյալների ամբողջությամբ»:

Արարքի հանրային վտանգավորության աստիճանի որոշման ժամանակ դատարանը պետք է բացահայտի կատարված կոնկրետ հանցանքի առանձնահատուկ հատկանիշները, որոնք կարող են ազդել հանրության վտանգավորության վրա՝ հանցագործությամբ պատճառված վնասի չափը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը» (տե՛ս Գ-արուշ Մադաթյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԳ/0029/01/08 որոշումը, կետ 14):

Գատարանների կողմից պատիժ նշանակելիս հաշվի առնվող մեղմացնող հանգամանքների չափանիշների վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել Պ.Բայրամյանի վերաբերյալ գործով կայացրած որոշման մեջ, որի

համաձայն՝ «(...) Դատարանի լայն հայեցողության շրջանակներում է (...) անձի պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների կիրառման հարցը, քանի որ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն նույն հոդվածի առաջին մասում: Այնուհանդերձ, դատարանի այս լիազորությունը բացարձակ չէ, և որպես մեղմացնող հաշվի առնվող հանգամանքները պետք է բավարարեն որոշակի չափանիշներ: Դրանք են.

ա) հանգամանքը պետք է իրական լինի, այսինքն՝ գործով ձեռք բերված ապացույցները պետք է հաստատեն դրա առկայությունը,

բ) այն պետք է ողջամտորեն նվազեցրած լինի անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը, (...)» (տե՛ս Պարույր Բայրամյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թվականի հունիսի 1-ի ՎԲ-84/07 որոշումը):

18. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ «Եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժ կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման կապակցությամբ իր դիրքորոշումը Վճռաբեկ դատարանն արտահայտել է մի շարք որոշումներում: Մասնավորապես, Հ.Բաղդասարյանի վերաբերյալ որոշմամբ արձանագրվել է, որ «(...) պատիժը կարող է պայմանականորեն չկիրառվել, եթե առկա է դատարանի համոզվածությունը, վստահությունն առանց իրական պատիժ նշանակելու ամբաստանյալի ուղղվելու հնարավորության մասին: Դատարանը նման հետևության հանգում է միայն օբյեկտիվ գոյություն ունեցող տվյալների վերլուծության հիման վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում են պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին (...)» (տե՛ս Հուսիկ Սուրենի Բաղդասարյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԱՎԴ-2/0059/01/08 որոշումը, կետ 24): Նմանատիպ մոտեցում է արտահայտվել նաև Վճռաբեկ դատարանի ՎԲ-50/07, ՎԲ-192/07, ՎԲ-01/08 որոշումներում:

19. Այսպիսով, ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի վերը թվարկված դրույթներից և Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներից հետևում է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ ինչպես պատժատեսակի և պատժաչափի, այնպես էլ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության վերաբերյալ դատարանի որոշումը պետք է հիմնված լինի կատարած հանցագործության, դրա առանձնահատկությունների, գործի կոնկրետ հանգամանքների, հանցավորի անձի, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների բազմակողմանի գնահատման վրա՝ օրինականության, արդարության, պատասխանատվության անհատականացման և մարդասիրության սկզբունքներին համապատասխան, նպատակ ունենալով ապահովել ՀՀ քրեական

օրենսգրքի 48–րդ հոդվածի 2–րդ մասում նշված պատժի նպատակների իրագործման հնարավորությունը:

20. Ինչպես երևում է գործի նյութերից, Առաջին ատյանի դատարանը Ա.Անտոնյանի նկատմամբ պատիժ նշանակելիս որպես նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ հաշվի է առել այն, որ նա նախկինում դատված չի եղել, բնութագրվում է դրական, երիտասարդ է, գղջում է կատարածի համար, խնամքին ու հոգածությանն են պատկանում ու տատր: Առաջին ատյանի դատարանը Ա.Անտոնյանի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ չի արձանագրել:

Առաջին ատյանի դատարանն արձանագրել է նաև, որ պատժաչափ նշանակելիս դատարանը հաշվի է առնում ամբաստանյալներից յուրաքանչյուրի մասնակցության բնույթն ու աստիճանը, ինչպես նաև այն, որ ամբաստանյալ Ս.Նուրիջանյանի եղբոր միջոցով վերականգնվել է տուժողին պատճառված նյութական վնասը (տե՛ս սույն որոշման 6–րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, քննության առնելով ՀՀ քրեական օրենսգրքի 70–րդ հոդվածի կիրառման հնարավորության և ՀՀ քրեական օրենսգրքի 48–րդ հոդվածով ամբազրված պատժի նպատակների իրացվելիության հարցերը, հանգել է հետևության, որ Ա.Անտոնյանի վերաքննիչ բողոքում բերված փաստարկներն արդեն իսկ հաշվի են առնվել Առաջին ատյանի դատարանի կողմից՝ պատժի տեսակը և չափը որոշելիս, և գործով բավարար հիմքեր չկան նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70–րդ կիրառելու համար (տե՛ս սույն որոշման 7–րդ կետը):

Փաստորեն, Վերաքննիչ դատարանն ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70–րդ հոդվածի կիրառման հարցը քննարկելիս հիմք է ընդունել Առաջին ատյանի դատարանի հետևությունները, որոնք ուղղակի վերարտադրել է իր որոշման մեջ՝ առանց անդրադառնալու այն հարցին, թե ամբաստանյալ Ա.Անտոնյանի նկատմամբ նշանակված պատիժը կրելու անհրաժեշտության մասին հետևությունն արդյոք համապատասխանում է գործի փաստական հանգամանքներին ու պատժի արդարացիության քրեաիրավական սկզբունքին:

21. Այս առումով հարկ է նշել, որ Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել ամբաստանյալ Ա.Անտոնյանի արարքի հանրային վտանգավորության աստիճանին՝ կատարված հանցագործությանը նրա մասնակցության աստիճանի տեսանկյունից, մինչդեռ գործի նյութերից երևում է, որ Ա.Անտոնյանը հանցագործության կատարման մեջ ակտիվ դերակատարություն չի ունեցել (տե՛ս սույն որոշման 8–րդ կետը):

Վերաքննիչ դատարանը պատշաճ քննարկման առարկա չի դարձրել նաև ամբաստանյալ Ա.Անտոնյանի առողջական վիճակի մասին ներկայացված փաստաթղթերը (տե՛ս սույն որոշման 9–րդ կետը):

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել նաև հանցագործությանը տուժողին պատճառված վնասը հարթելուն ուղղված գործողությունների վերաբերյալ գործի նյութերում առկա փաստաթղթի՝ տուժող Մ.Ասկանդարյանի տրված ստացականի, և հանցագործությանը պատճառված վնասը Ս.Նուրիջանյանի եղբոր կողմից հատուցված լինելու մասին Առաջին ատյանի դատարանի հետևության միջև առկա հակասությանը, քանի որ տուժողի ստացականի բովանդակությունից հետևում է, որ նրան պատճառված վնասն ամբողջությամբ հարթվել է ամբաստանյալ Ա.Անտոնյանի



եղբոր՝ Գարիկ Անտոնյանի կողմից (տե՛ս սույն որոշման 10–րդ կետը), որպիսի հանգամանքը ևս ենթակա է քննարկման ամբաստանյալ Ա.Անտոնյանի արարքի հանրային վտանգավորության աստիճանի գնահատման տեսանկյունից:

22. Այսպիսով՝ ամբաստանյալ Ա.Անտոնյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի դատավճռի վերանայման ընթացքում Վերաքննիչ դատարանը պատշաճ քննարկման առարկա չի դարձրել սույն որոշման 20–21–րդ կետերում նշված հանգամանքները, ինչի արդյունքում նրա նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցով կայացրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358–րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող՝ չհիմնավորված որոշում:

23. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի էական խախտումներ, որոնք ազդել են ամբաստանյալ Ա.Անտոնյանի նկատմամբ նշանակված պատիժը կրելու հարցում գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397–րդ, 398–րդ և 406–րդ հոդվածներին հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք է հանդիսանում:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419–րդ հոդվածի 1–ին մասի 2–րդ կետի հիման վրա Ա.Անտոնյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դատական ակտը պետք է բեկանել՝ գործն ուղարկելով նույն դատարան՝ նոր քննության, ինչը պայմանավորված է վերոհիշյալ հանգամանքների պատշաճ քննարկման և գնահատման անհրաժեշտությամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 48–րդ հոդվածով ամրագրված՝ պատժի նպատակների իրացվելիության ապահովման տեսանկյունից:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92–րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403–406–րդ, 419–րդ, 422–424–րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Արթուր Խաչիկի Անտոնյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177–րդ հոդվածի 2–րդ մասի 1–ին և 3–րդ կետերով Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 23–ի դատավճիռն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հունվարի 15–ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

61.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության

ԵԿԴ/0058/11/09

վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵԿԴ/0058/11/09

նախագահող դատավոր՝ Ս.Չիչոյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՄԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ բողոք բերած անձ* Լ.ՍԻՄՈՆՅԱՆԻ

2010 թվականի մարտի 26-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով դիմող Ֆրունզիկ Խաչիկի Գալստյանի ներկայացուցիչ Լ.Սիմոնյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2009 թվականի նոյեմբերի 16-ի որոշման դեմ,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1.Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2008 թվականի ապրիլի 22-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Կոտայքի մարզի քննչական բաժնում հարուցվել է թիվ 49104408 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ «ԱՄՖ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Ռ.ա.Ֆայել

Սողոմոնյանի կողմից իրավունք վերապահող փաստաթղթեր կեղծելու և օգտագործելու փաստի առթիվ:

2008 թվականի մայիսի 24-ից քրեական գործի նախաքննությունը շարունակվել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչությունում:

ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչության քննիչ Հ.Մանգոյանի 2009 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կարճվել է, և Ռ.Սողոմոնյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ նրա գործողություններում ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ, 214-րդ, 325-րդ հոդվածների հանցակազմների բացակայության հիմքով, իսկ Հովսեփ և Ֆրունզիկ Գալստյանների նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ նրանց գործողություններում ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի բացակայության հիմքով:

Վերոգրյալ որոշումը «ԱՄՖ» ՍՊԸ-ի հիմնադիրներ Բենիկ Հարությունյանի, Հովսեփ և Ֆրունզիկ Գալստյանների կողմից բողոքարկվել է ՀՀ գլխավոր դատախազին, որը ՀՀ գլխավոր դատախազության սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ Հ.Սարգսյանի 2009 թվականի հուլիսի 9-ի որոշմամբ մերժվել է:

2. Թիվ 49104408 քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու որոշման դեմ Բ.Հարությունյանը, Հ.Գալստյանը և Ֆ.Գալստյանը բողոք են ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան), որը դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 2-ի որոշմամբ մերժվել է:

3. Նույն անձանց վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2009 թվականի նոյեմբերի 16-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 2-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի վերոգրյալ որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել Հ.Գալստյանը և Ֆ.Գալստյանի ներկայացուցիչ Լ.Սիմոնյանը:

Վճռաբեկ դատարանի 2010 թվականի հունվարի 18-ի որոշմամբ Հ.Գալստյանի վճռաբեկ բողոքը վերադարձվել է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի և 414.2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Վճռաբեկ դատարանը 2010 թվականի հունվարի 18-ի որոշմամբ Ֆ.Գալստյանի ներկայացուցիչ Լ.Սիմոնյանի վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռարեկ քողոքի քննության համար էական նշանակություն ունեցող վաստերը**

5. 2008 թվականի հունիսի 23-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Երևան քաղաքի Սյասնիկյանի տարածքային հարկային տեսչությունից «ԱՄՖ» ՍՊԸ-ի հարկային գործն առգրավելու մասին (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, էջ 87):

2008 թվականի հուլիսի 3-ին որոշում է կայացվել ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի Արարատյան տարածաշրջանային մաքսատնից «ԱՄՖ» ՍՊԸ-ի մաքսային թղթապանակն առգրավելու մասին (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, էջ 92):

6. ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի տեղակալ Ռ.Քոչարյանի 2008 թվականի հուլիսի 29-ի թիվ 6852/4-4 գրությամբ նախաքննության մարմնին է ներկայացվել ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության տեղեկատվական բազայում «ԱՄՖ» ՍՊԸ-ի կողմից 1999–2008 թվականների ընթացքում կատարված առևտրային գործարքների վերաբերյալ առկա տեղեկատվությունը (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, էջեր 233–235):

7. Նախաքննության մարմնի 2008 թվականի հունիսի 17-ի որոշման հիման վրա, «ԱՄՖ» ՍՊԸ-ի ֆինանսատնտեսական գործունեությունը ստուգելու նպատակով, ՀՀ ֆինանսների նախարարության ներքին աուդիտի գնահատման և ֆինանսական վերահսկողության վարչության կողմից կատարվել է ստուգում, որի արդյունքներով կազմվել է թիվ 343–Ա ակտը: Ստուգման ակտում նշվել է՝ «Ստուգման ընթացքում առկա չէին հաշվապահական հաշվառման փաստաթղթերը, դրամարկղի գրքերը (միայն ներկայացվել է դրամարկղի գիրքը, որը սկսվում է 2004 թվականի հունվարից մինչև 2006 թվականի հոկտեմբեր ամիսը, գիրքը փակված չէ), ինչպես նաև անալիտիկ և սինթետիկ հաշվառման փաստաթղթերը»:

Ստուգման ակտում ուսումնասիրության է ենթարկվել «ԱՄՖ» ՍՊԸ-ի 1999–2008 թվականների ֆինանսատնտեսական գործունեությունն ըստ դրվագների (տե՛ս քրեական գործ, հատոր 9-րդ, էջեր 7–24):

8. Նախաքննության մարմնի 2008 թվականի դեկտեմբերի 25-ի որոշմամբ նշանակվել է դատահաշվապահական և դատատնտեսագիտական համալիր փորձաքննություն, ինչի արդյունքում կազմվել է թիվ 09–0005 եզրակացությունը: Փորձագետները թիվ 343–Ա ստուգման ակտում շարադրված դրվագների շրջանակներում իրականացրել են ուսումնասիրություն՝ «ԱՄՖ» ՍՊԸ-ի կողմից կատարված ծախսերի, կնքված գործարքների իրականացման ընթացքում հաշվապահական և ֆինանսատնտեսական բնույթի խախտումների և դրանց հետևանքով պատճառված վնասի առկայության կամ բացակայության վերաբերյալ ըստ հետևյալ դրվագների՝

**Գրվագ 1-ին.** 2001–2004 թվականներին «Հայուսգազարդ» ՓԲԸ-ն «ԱՄՖ» ՍՊԸ-ին պարտք է եղել ընհանուր 3.2 մլն ԱՄՆ դոլար, որն աստիճանաբար մարվել է: Նշված գումարից ՍՊԸ-ի տնօրեն Ռ.Սողոմոնյանը, առանց մյուս բաժնետերերին տեղեկացնելու, կատարել է փոխանցումներ, մասնավորապես՝

- 66.6 մլն ՀՀ դրամ «Տոնտոն» ինվեստիցիոն ՍՊԸ-ին,
- 126.0 մլն ՀՀ դրամ «Յունայթեդ Թրավել» ՍՊԸ-ին,
- 70.0 մլն ՀՀ դրամ «Գազամեր» ՍՊԸ-ին,

- 160.0 հազ. ԱՄՆ դոլար՝ գործով չպարզված շվեյցարական բանկին,
- 37.0 մլն ՀՀ դրամ՝ ՍՊԸ-ի փոխտնօրեն Հ.Ավագյանի հաշվեհամարին:

**Գրվագ 2-րդ.** «ԱՄՖ» ՍՊԸ-ի միջոցներով 1997 թվականին «Լույս» ԱԿ-ից 70.0 մլն ՀՀ դրամով ձեռք է բերվել Երևան քաղաքի Մելիքյան 3 հասցեում գտնվող նախկին մանկապարտեզը, որը ձևակերպվել է «Մաֆե» ՍՊԸ-ի անվամբ, որի հիմնադիրն է հանդիսացել Ռ.Սողոմոնյանի ընկեր, «Հայգազարդ» ՊՓԲԸ-ի նախկին տնօրեն Կ.Իսրայելյանի եղբայր Արմեն Իսրայելյանը: Կ.Իսրայելյանը, Ռ.Սողոմոնյանի հետ պայմանավորվածության գալով, 17.01.2005 թվականին մանկապարտեզի շենքը և հողամասը 22.3 մլն ՀՀ դրամով վաճառել են Մարտին Թորոսյանին: (...)

**Գրվագ 3-րդ.** Ռ.Սողոմոնյանը 13.07.2006 թվականին «ԱՄՖ» ՍՊԸ-ի անվամբ գործունեության ծրագիր է ներկայացրել «Զարգացման հայկական բանկ» ԲԲԸ-ին: Ռ.Սողոմոնյանը նույն բանկին ներկայացրել է ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի արձանագրություն, համաձայն որի՝ բաժնետերերը մասնակցել են ժողովին և որոշել վարկ ստանալու համար դիմել բանկին: Ըստ հարցաքննված մյուս երեք բաժնետերերի՝ նման ժողով չի կայացել և իրենք այդ մասին չեն իմացել: Արդյունքում «Զարգացման հայկական բանկ» ԲԲԸ-ից «ԱՄՖ» ՍՊԸ-ն ստացել է 54.6 մլն ՀՀ դրամի վարկ, որն օգտագործել է ոչ նպատակային: (...)

**Գրվագ 4-րդ.** «ԱՄՖ» ՍՊԸ-ն 2006 թվականին ՀՀ ֆինանսների նախարարությանը պարտք է եղել 40 մլն ՀՀ դրամ, որը գոյացել է հետևյալ կերպ.

ա) Ռ.Սողոմոնյանը, առանց «ԱՄՖ» ՍՊԸ-ի բաժնետերերի համաձայնության, ՍՊԸ-ի անվամբ երաշխիք նամակ է տվել ընկերության փոխտնօրեն Հ.Ավագյանի կողմից «Տրաստ բանկ» ՓԲԸ-ից վերցրած 38.0 հազ. ԱՄՆ դոլար վարկի համար, ինչի արդյունքում ՍՊԸ-ն կրել է համապարտ պատասխանատվություն,

բ) 12 մլն ՀՀ դրամը «Տրաստ բանկ» ՓԲԸ-ի վերաբերյալ դատարանում քննվող գործերով քաղաքացիական հայցերի չվճարված վարկերի դիմաց պետական տուրքն է,

գ) 25 մլն ՀՀ դրամը «ԱՄՖ» ՍՊԸ-ի պարտքն է «Միավորված բանկ» ԲԲԸ-ին այն դեպքում, երբ ՍՊԸ-ն բանկում՝ սեփական հաշվարկային հաշվեհամարին ունեցել է 17 մլն ՀՀ դրամի միջոցներ, սակայն բանկի լուծարման ժամանակ Ռ.Սողոմոնյանը չի գրանցել «ԱՄՖ» ՍՊԸ-ն որպես պարտատեր և չի կատարել մասնակի մարում:

Վերը նշված պարտքը ՀՀ ֆինանսների նախարարությունը զիջել է «Տոնտոն» ինվեստիցիոն ՍՊԸ-ին, որի դիմաց Ռ.Սողոմոնյանը, առանց «ԱՄՖ» ՍՊԸ-ի բաժնետերերին տեղյակ պահելու, գրավադրել է «Սպորտ» ԲԲԸ-ի՝ «ԱՄՖ» ՍՊԸ-ի սեփականություն հանդիսացող 56%՝ 2972 հատ հասարակ անվանական բաժնետոմսերը, որոնց իրական արժեքն ըստ «Էսկո» կոնցեռնի գնահատման կազմում է 200.0 մլն ՀՀ դրամ: (...)

**Գրվագ 5-րդ.** 19.10.2006 թվականին Ռ.Սողոմոնյանը «ԱՄՖ» ՍՊԸ-ի անվամբ Տիգրան Մնացականյանից փոխառությամբ, 12 օր ժամկետով, վերցրել է 41 մլն ՀՀ դրամ, պայմանագրով սահմանվել է, որ ժամանակին գումարը չվճարելու դեպքում առաջանում է 5 մլն ՀՀ դրամ տույժ և չվճարված գումարի դիմաց՝ օրական 0.2% տուգանք: Գումարը ժամանակին չի վճարվել, և Տ.Մնացականյանը դիմել է դատարան, 25.11.2006 թվականին դատարանը որոշում է կայացրել «ԱՄՖ» ՍՊԸ-ից հօգուտ

Տ.Մնացականյանի բռնագանձել 54 մլն ՀՀ դրամ: Ռ.Սողոմոնյանի կողմից դատարանի որոշումը չի բողոքարկվել: Ռ.Սողոմոնյանը գումարի փոխարեն Տ.Մնացականյանին է հանձնել «ԱՄՖ» ՍՊԸ-ի սեփականություն հանդիսացող Երևանի Ահարոնյան փողոցի 16 հասցեում գտնվող նախկին մանկապարտեզի շենքը, որի արժեքն ըստ «Էքսպերտ» ՍՊԸ-ի գնահատման տվյալ ժամանակաշրջանում կազմել է 240 մլն ՀՀ դրամ: (...)

**Դրվագ 6-րդ.** Ռ.Սողոմոնյանը, Երևանի Ջրվեժ թաղամասում գտնվող «Հիդրոպարատ» ԲԲԸ-ի՝ «ԱՄՖ» ՍՊԸ-ի սեփականություն հանդիսացող 65%՝ 132.615 հատ անվանական հասարակ բաժնետոմսերը, առանց «ԱՄՖ» ՍՊԸ-ի բաժնետերերին տեղյակ պահելու, Հայաստանի ֆոնդային բորսայի միջոցով օտարել է «Հայգազարդ» ՊՓԲԸ-ին՝ որպես 1.62 մլրդ ՀՀ դրամ պարտքի մի մասի մարում: Բաժնետոմսերը գնահատվել են 265.2 մլն ՀՀ դրամ: «Հայգազարդ» ՊՓԲԸ-ին «ԱՄՖ» ՍՊԸ-ի պարտքը գոյացել է հետևյալ կերպ. 31.05.2000 թվականին «Հայգազարդ» ՊՓԲԸ-ի և «ԱՄՖ» ՍՊԸ-ի միջև կնքվել է պահանջի իրավունքը զիջելու մասին համաձայնագիր, որի համաձայն՝ «Նաիրիտ» ԳԱ ՊՓԲԸ-ի կողմից մինչև 1997 թվականին օգտագործված բնական գազի դիմաց «Հայգազարդ» ՊՓԲԸ-ին պարտք մնացած 1.62 մլրդ ՀՀ դրամ գումարի պահանջի իրավունքը զիջվել է «ԱՄՖ» ՍՊԸ-ին: Նույն պայմանագրով Ռ.Սողոմոնյանը պարտավորվել է պարտքը մարել մինչև 2004 թվականի հունվար ամիսը: 2001 թվականի հունվարին Ռ.Սողոմոնյանը, չունենալով այդ իրավունքը, «Հիդրոպարատ» ԲԲԸ-ի ամբողջ գույքը գրավադրել է «Հայգազարդ» ՊՓԲԸ-ում: Ռ.Սողոմոնյանը չի վճարել պարտքից որևէ լուծա այն դեպքում, երբ այդ ժամանակահատվածում «ԱՄՖ» ՍՊԸ-ի հաշվարկային հաշիվներում, տարբեր բանկերում, ինչպես նաև «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ում մուտքագրվել է մոտ 2 մլրդ ՀՀ դրամից ավելի դրամական միջոցներ: (...)

**Դրվագ 7-րդ.** 1998 թվականին «ԱՄՖ» ՍՊԸ-ի բաժնետեր Հ.Գալստյանն ընկերության գումարներով Ռ-Գ Կալինինգրադ քաղաքում գտնվող նավաշինարարական կոմբինատից ձեռք է բերել 2 հատ ձկնորսական նավ, ընդհանուր 500.0 հազ. ԱՄՆ դոլարով: Նավերը ձևակերպվել են «GAAS Fisheries Limited» ընկերության անվամբ և պետք է աշխատեին Գանայի Հանրապետությունում: Նավերի ձեռք բերման, շահագործման, ձևակերպման և մյուս բոլոր հարցերով «ԱՄՖ» ՍՊԸ-ի անունից հանդես է եկել Ռ.Սողոմոնյանի ընկեր Կ.Իսրայելյանը: Նշված նավերի հետագա ճակատագիրը պարզված չէ: (...)

**Դրվագ 8-րդ.** Ռ.Սողոմոնյանը 04.03.2002 թվականին «Հրազդանի տրիկոտաժի ֆաբրիկա» ԲԲԸ-ի՝ «ԱՄՖ» ՍՊԸ-ի սեփականություն հանդիսացող 51%՝ 3189 հատ անվանական հասարակ բաժնետոմսերը «Տոնտոն» ինվեստիցիոն ՍՊԸ-ի միջոցով 6.4 մլն ՀՀ դրամով վաճառել է եղբորը՝ Վարազդատ Հովհաննիսյանին, առանց «ԱՄՖ» ՍՊԸ-ի բաժնետերերին տեղյակ պահելու: (...)

**Դրվագ 9-րդ.** 24.02.2000 թվականին Ռ.Սողոմոնյանը և «ԱՄՖ» ՍՊԸ-ի տնօրենի տեղակալ Հ.Ավագյանը, համաձայնության գալով «Տրաստ բանկ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Տիգրան Առաքելյանի և «Հայկաբել» ՓԲԸ-ի բաժնետեր Աշոտ Սաֆարյանի հետ, «ԱՄՖ» ՍՊԸ-ի 6 աշխատակիցների անվամբ «Տրաստ բանկ» ՓԲԸ-ում ձևակերպել են 1.060 մլն ԱՄՆ դոլարի վարկ, որից փաստացի ստացվել է ընդամենը 260 հազ.

ԱՄՆ դուլարը, որը տրվել է Ռ.Սողոմոնյանին, իսկ 800 հազ. ԱՄՆ դուլար վարկը չի ստացվել, «Տրաստ բանկ» ՓԲԸ–ն այդ գումարի հաշվին ուղղակի փաստաթղթային ձևակերպմամբ ցույց է տվել որպես Ա.Սաֆարյանի 700 հազ. ԱՄՆ դուլար վարկի մարում և «Տրաստ բանկ» ՓԲԸ–ի բաժնետեր Սուրեն Ազատյանի անունով 100 հազ. ԱՄՆ դուլար՝ որպես ավանդ: Ռ.Սողոմոնյանը վերոհիշյալ վարկերի դիմաց, առանց ՍՊԸ–ի բաժնետերերի իմացության և նրանց հետ համաձայնեցնելու, «ԱՄՖ» ՍՊԸ–ի անունից «Տրաստ բանկ» ՓԲԸ–ի հետ կնքել է երաշխիքային պայմանագրեր: «Տրաստ բանկ» ՓԲԸ–ն դիմել է Երևանի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան, որի վճռով չստացված վարկերի և դրանց վրա հաշվարկված տոկոսների դիմաց «ԱՄՖ» ՍՊԸ–ն «Տրաստ բանկ» ՓԲԸ–ի նկատմամբ ստանձնել է 1.172 մլն ԱՄՆ դոլարի պարտավորություն: Նույն ժամանակահատվածում ՀՀ գլխավոր դատախազությունում հարուցված է եղել քրեական գործ՝ վերը նշված վարկերի անօրինական ձևակերպման փաստով: Դատարանի վճիռը բողոքարկվել է վերաքննիչ դատարան, սակայն Ռ.Սողոմոնյանը, առանց բաժնետերերի հետ խորհրդակցելու, բողոքները դատարանից հետ է վերցրել: 15.11.2001 թվականին «Տրաստ բանկ» ՓԲԸ–ն 1.172 մլն ԱՄՆ դոլարի պարտքը զիջել է «Հայաստան համահայկական հիմնադրամ»-ին՝ իր ունեցած պարտքի դիմաց, արդյունքում՝ «ԱՄՖ» ՍՊԸ–ն ստանձնել է պարտավորություն և վճարել 812 հազ. ԱՄՆ դոլար, իսկ չստացված վարկերի դիմաց վճարել է 119 հազ. ԱՄՆ դոլար տոկոսներ: Վերը նշված քրեական գործի քննության ընթացքում Ռ.Սողոմոնյանը հրաժարվել է ներկայացնել քաղաքացիական հայց՝ մոտ 1.400 մլն ԱՄՆ դոլարի չափով պատճառաբանելով, թե քաղաքացիական հայցը կներկայացնի դատարանում, սակայն 23.04.2003 թվականին քրեական գործով կայացվել է մեղադրական դատավճիռ, որով հաստատվել է վերը նշված վարկերը ձևականորեն տրամադրելու հանգամանքները: Դատաքննության ընթացքում և դատավճիռը հրապարակելուց հետո Ռ.Սողոմոնյանն այդպես էլ քաղաքացիական հայց չի ներկայացրել և չի ճանաչվել որպես տուժող, որի արդյունքում «ԱՄՖ» ՍՊԸ–ն կրել է 1.400 մլն ԱՄՆ դոլարի վնաս: (...)

#### **Գրվագ 10–րդ.**

1) Համաձայն քրեական գործում առկա եռակողմ փոխադարձ ակտերի՝ «Հայռուսգազարդ» ՓԲԸ–ին թվով 16 կազմակերպություն 36 դեպքով պարտք են եղել ընդհանուր 202.561.100 ՀՀ դրամ: Այդ փոխադարձ ակտերով «Հայռուսգազարդ» ՓԲԸ–ն «ԱՄՖ» ՍՊԸ–ին է զիջել հիշյալ կազմակերպությունների պարտքի պահանջի իրավունքը, իր հերթին «ԱՄՖ» ՍՊԸ–ի հետ կատարելով փոխադարձ պարտավորությունների հաշվանցումներ: Արդյունքում նշված կազմակերպությունները պարտք են մնացել «ԱՄՖ» ՍՊԸ–ին ընդհանուր 202.561.100 ՀՀ դրամ: Հաշվապահական անալիտիկ և սինթետիկ հաշվառման փաստաթղթերի բացակայության պատճառով հնարավոր չէ պարզել, թե նշված պարտքերը վերադարձվել են «ԱՄՖ» ՍՊԸ–ին, թե՛ ոչ:

2) Հ.Գալստյանի կողմից ներկայացված «Միավորված բանկ» ԲԲԸ–ի 22.02.2008 թվականի թիվ 06 գրության համաձայն՝ «ԱՄՖ» ՍՊԸ–ն 14.08.2000 թվականին մարել է թվով 4 ֆիզիկական անձանց «Միավորված բանկ» ԲԲԸ–ում ունեցած վարկերը, մասնավորապես.

ա) Ա.Գասպարյանի վարկը կազմել է 30.000 ԱՄՆ դոլար, մարվել է 30.000 ԱՄՆ դոլար վարկը և 11.522.30 ԱՄՆ դոլար վարկի տոկոսը,

բ) Է.Փոքրիկյանի վարկը կազմել է 29.893 ԱՄՆ դոլար, որը մարվել է ամբողջությամբ,

գ) Ս.Մխիթարյանի վարկը կազմել է 8.000 ԱՄՆ դոլար, մարվել է 8.000 ԱՄՆ դոլար և 4.568 ԱՄՆ դոլար վարկային երաշխիքով տրված գումար,

դ) Ա.Իսրայելյանի վարկը կազմել է 12.000 ԱՄՆ դոլար, որը մարվել է ամբողջությամբ:

3) «Արոշինբանկ» ՓԲԸ-ի և «Հայխնայբանկ» ՓԲԸ-ի դրամարկղների չեկերով Հ.Ավագյանը ստացել է 53.630.000 ՀՀ դրամ, Ռ.Հովհաննիսյանը՝ 88.150.000 ՀՀ դրամ և Ա.Ջաքարյանը՝ 282.803.000 ՀՀ դրամ: Նշված գումարների հետագա ծախսերի վերաբերյալ թե՛ ստուգմամբ, թե՛ փորձաքննությամբ գուտ հաշվապահական և տնտեսագիտական տեսանկյունից հնարավոր չի եղել որևէ պարզաբանում տալ, քանի որ բացակայում են «ԱՄՖ» ՍՊԸ-ի տվյալ ժամանակաշրջանին վերաբերող դրամարկղի գրքի և հաշվապահական հաշվառման սկզբնական փաստաթղթերը:

9. Դատահաշվապահական և դատատնտեսագիտական համալիր փորձաքննության արդյունքում արվել են հետևյալ հետևությունները.

ա) Համալիր փորձաքննությամբ հնարավոր չէ պարզել, թե «ԱՄՖ» ՍՊԸ-ի կողմից 1999–2008 թվականներին իրականացված ֆինանսատնտեսական գործունեությունը սահմանված կարգով փաստաթղթավորվել և հաշվապահական ձևակերպումներ ստացել են և հաշվառման կարգի խախտումներով են կատարվել, թե՛ ոչ, քանի որ ընկերության սկզբնական և սինթետիկ հաշվառման փաստաթղթերը, գրանցամատյանները, դրամարկղային գրքերը և հաշվապահական ձևակերպումները լրիվությամբ չեն պահպանվել:

բ) «ԱՄՖ» ՍՊԸ-ի 1999–2008 թվականների ընթացքում իրականացված ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ կազմված փաստաթղթերի և դրանց հիման վրա տրված հաշվապահական ձևակերպումների, ինչպես նաև գրանցամատյանների և դրամարկղային գրքերի ամբողջությամբ չպահպանման հետևանքով, թե՛ ստուգմամբ և թե՛ համալիր փորձաքննությամբ հնարավոր չէ պարզել, թե 1999–2008 թվականների ընթացքում ֆինանսատնտեսական գործունեությունն իրականացնելու ժամանակ կոնկրետ ինչպիսի խախտումներ են թույլ տրվել և դրանց հետևանքով ընկերությանը որքան վնաս է պատճառվել:

գ) Թիվ 343–Ա ակտում արձանագրված դրվագների վերաբերյալ քրեական գործում առկա փաստաթղթերում արտացոլված տվյալների համաձայն՝ «ԱՄՖ» ՍՊԸ-ն - սույն եզրակացության հետագոտական մասում նշված 1–ին դրվագով կրել է 103.6 մլն ՀՀ դրամի ուղղակի վնաս, իսկ թիվ 5–րդ և 8–րդ դրվագներով՝ 139.387 մլն ՀՀ դրամի անուղղակի վնաս:

դ) «ԱՄՖ» ՍՊԸ-ի տնօրինության կողմից համապատասխան միջոցներ չեն ձեռնարկվել դեբիտորական պարտքերի մարման ուղղությամբ, որի արդյունքում ընկերությունը չմարված դեբիտորական պարտքերի գումարի չափով կրել է վնաս:

ե) «ԱՄՖ» ՍՊԸ-ի 1999–2008 թվականների ընթացքում իրականացված ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ կազմված փաստաթղթերի և դրանց հիման վրա տրված հաշվապահական ձևակերպումների, ինչպես նաև գրանցամատյանների ու դրամարկղային գրքերի ամբողջությամբ չպահպանման հետևանքով,



հնարավոր չէ պարզել, թե ընկերությունն իրականացված ֆինանսատնտեսական գործունեության ընթացքում ազատ շրջանառու միջոցներ ունեցել է, թե՛ ոչ, եթե այո, ապա արդյո՞ք այդպիսիք բավարար էին նույն ժամանակահատվածում ընկերության ունեցած պարտավորությունները մարելու համար (տե՛ս քրեական գործ, հատոր 12–րդ, էջեր 37–68):

10. Առաջին ատյանի դատարանն իր 2009 թվականի հոկտեմբերի 2–ի որոշման մեջ նշել է՝ «Ուսումնասիրելով բողոքը և ներկայացրած նյութերը, դատարանը գտնում է, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, ուստի բողոքը պետք է մերժել» (տե՛ս նյութեր, էջ 114):

11. Վերաքննիչ դատարանն իր 2009 թվականի նոյեմբերի 11–ի որոշման մեջ նշել է՝ «Այսպիսով, վերաքննիչ քրեական դատարանը հանգեց այն հետևության, որ ընդհանուր իրավասության դատարանը պահպանելով ՀՀ քրեադատավարական օրենսդրության պահանջները՝ կայացրել է օրինական և հիմնավորված որոշում, այն բեկանելու հիմքեր չկան, ուստի վերաքննիչ բողոքը պետք է մերժել» (տե՛ս նյութեր, էջ 174):

### **3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

12. Բողոքաբերը գտնում է, որ դատարանների կայացրած որոշումներն ապօրինի և անհիմն են, պատճառաբանված չեն և չեն բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներից:

13. Բողոքի հեղինակը, ըստ դրվագների վերլուծելով սույն գործով իրականացված ստուգման ակտի և համալիր փորձաքննության եզրակացության մեջ շարադրված հանգամանքները, եզրակացնում է, որ Ռ.Սողոմոնյանը, հանդիսանալով «ԱՄՖ» ՍՊԸ–ի տնօրեն, իր լիազորություններն օգտագործել է կազմակերպության շահերին հակառակ, իրավունք վերապահող կեղծ փաստաթղթեր պատրաստելու և օգտագործելու եղանակով վատնել է ընկերությանը պատկանող գույքը՝ դրանով իսկ ընկերության մասնակիցներին պատճառելով առանձնապես խոշոր չափերի վնաս:

Ըստ բողոքաբերի՝ մինչդատական վարույթն իրականացնող մարմինը մի շարք դրվագներով չի ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, իսկ որոշ դրվագներով օբյեկտիվորեն չի գնահատել Ռ.Սողոմոնյանի մեղավորությունը հաստատող ապացույցները, ինչի արդյունքում անհիմն որոշում է կայացրել նրա նկատմամբ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին, իսկ դատարանները, անտեսելով քրեադատավարական օրենքի վերոգրյալ խախտումները, հաստատել են նշված որոշումը:

14. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրում է բեկանել Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 2–ի, Վերաքննիչ դատարանի 2009 թվականի նոյեմբերի 11–ի որոշումները և վերացնել քննիչ Հ.Մանգոյանի կողմից 2009 թվականի ապրիլի 22–ին կայացված՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ստորադաս դատարանների դատական ակտերն արդյո՞ք օրինական, հիմնավորված և պատճառաբանված են:

16. ՀՀ Սահմանադրության 19–րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու (...) համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17–րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք: (...)

4. (...) քրեական դատավարության ընթացքում օրինականության խախտումների վերաբերյալ բողոքները պետք է մանրակրկիտ ստուգի քրեական վարույթն իրականացնող մարմինը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103–րդ հոդվածի համաձայն՝

«1. (...) Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում քրեական հետապնդման մարմնի գործողությունները և որոշումները կարող են բողոքարկվել դատարան (...)

10. Քրեական վարույթն իրականացնող մարմինը բողոքի վերաբերյալ ընդունում է պատճառաբանված որոշում (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358–րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված: (...)

4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրված բոլոր հետևությունները և որոշումները»:

17. Մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողությունը նպատակ է հետապնդում նպաստել քրեական դատավարության խնդիրների իրականացմանը, այդ թվում՝ հանցագործությունների բացահայտմանը, անձի, հասարակության և պետության պաշտպանությանը հանցագործություններից: Միևնույն ժամանակ դատական վերահսկողությունն անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության կարևորագույն երաշխիքներից է, ինչն էականորեն բարձրացնում է քրեական դատավարության այդ փուլում դատարանների կողմից կայացվող որոշումների իրավական նշանակությունը: Ուստի մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշումների և գործողությունների օրինականության և հիմնավորվածության ստուգման արդյունքում դատարանների կողմից օրինականությունից շեղվող, չհիմնավորված, չպատճառաբանված կամ ոչ պատշաճ պատճառաբանված որոշումների կայացումն անընդունելի է:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358–րդ հոդվածով սահմանված՝ դատավճռին ներկայացվող օրինականության, հիմնավորվածության և պատճառաբանվածության պահանջները վերաբերելի են նաև մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող դա-

տական վերահսկողության շրջանակներում կայացվող դատական ակտերին (որոշումներին):

18. Դատական ակտն օրինական է, եթե կայացվել է գործող օրենսդրության պահանջների պահպանմամբ, և հիմնավորված՝ եթե դրանում արված հետևությունները հիմնված են դատական քննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա: Դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է դեկավարվել նման որոշում կայացնելիս և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար:

19. Պատճառաբանված որոշման բացակայությունն արդեն իսկ օբյեկտիվորեն սահմանափակում է վերադաս դատական ատյանի հնարավորությունը՝ լիարժեք դատական ստուգման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնելու արդարացի որոշում, հետևաբար դատական ակտի չպատճառաբանված լինելը հանգեցնում է քրեական դատավարության կարևորագույն սկզբունքներից մեկի՝ ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտման:

20. Սույն որոշման նախորդ կետում շարադրված մոտեցմանը համահունչ իրավական դիրքորոշում է հայտնել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք որոշումներում՝ ներպետական դատարանների կողմից կայացված որոշումների չպատճառաբանվածությունը կամ ոչ բավարար պատճառաբանվածությունը դիտելով որպես «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ անձի արդար դատական քննության իրավունքի խախտում (տե՛ս *Սալովն ընդդեմ Ուկրաինայի (Salov v. Ukraine)* 06.09.2005 թվականի որոշումը, գանգատ թիվ 65518/01, *Բոլդեան ընդդեմ Ռումինիայի (Boldea v. Romania)* 15.02.2007 թվականի որոշումը, գանգատ թիվ 19997/02, *Գրադինարն ընդդեմ Մոլդովայի (Gradinar v. Moldova)* 08.04.2008 թվականի որոշումը, գանգատ թիվ 7170/02):

21. Ինչպես երևում է դիմողներ Բ.Հարությունյանի, Հ.Գալստյանի և Ֆ.Գալստյանի բողոքը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 2-ի որոշման ուսումնասիրությունից՝ դրանում իսպառ բացակայում է պատճառաբանական մասը (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը): Առաջին ատյանի դատարանը, նշելով, որ «բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, ուստի բողոքը պետք է մերժել», իր նշված հետևությունները պատճառաբանելու համար որևէ փաստարկ չի բերել՝ դրանով իսկ սահմանափակելով վերադաս դատական ատյանի հնարավորությունը լիարժեք դատական ստուգման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը:

Արդյունքում՝ խախտվել են դիմողների՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով, ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքը:

22. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանների դատական ակտերի օրինակաւնության և հիմնավորվածության վերաբերյալ հետևություն անել հնարավոր չէ, իսկ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ «ընդհանուր իրավասության դատարանը, պահպանելով ՀՀ քրեադատավարական օրենսդրության պահանջները, կայացրել է օրինական և հիմնավորված որոշում» (տե՛ս սույն որոշման 11–րդ կետը), հիմնազուրկ է:

23. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398–րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: (...)

3. Դատավճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝ (...)

10) դատավճռում իսպառ բացակայում է դրա նկարագրական–պատճառաբանական մասը (...):»:

Վերոգրյալը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս բեկանել Առաջին ատյանի դատարանի ու Վերաքննիչ դատարանի որոշումները և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

24. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ չի համարում քննության առնել սույն որոշման 13–րդ կետում շարադրված նյութական և դատավարական իրավունքի նորմերի ենթադրյալ խախտումների վերաբերյալ փաստարկները. դրանց հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշման մեջ արձանագրված դատավարական իրավունքի խախտումը վերացնելուց հետո:

25. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող վերահսկողության արդյունքում դատարանների կողմից կայացվող որոշումների պատճառաբանված լինելու իրավական հարցի վերաբերյալ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

26. Սիւնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում մի շարք հարցերի վերաբերյալ արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք ուղղորդող նշանակություն կունենան Առաջին ատյանի դատարանի կողմից թիվ 49104408 քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին քննիչի որոշման դեմ բերված բողոքի քննության ժամանակ.

ա) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2–րդ հոդվածի 2–րդ մասի 1–ին կետի համաձայն՝ «Քրեական դատավարություն իրականացնող մարմինները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցառումները, որպեսզի իրենց գործունեության արդյունքում քրեական օրենսգրքերով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի և քրեական օրենքով նախատեսված դեպքերում և սույն օրենսգրքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվի»::

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը նախևառաջ պետք է պարզի, թե քրեական հետապնդում իրականացնող մարմինը ձեռնարկե՞լ է արդյոք քրեադատավարական օրենքով նախատեսված բոլոր անհրաժեշտ միջոցա-

ուումները՝ սույն գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, և ցուցաբերել է արդյոք բավարար ջանասիրություն «ԱՄՖ» ՍՊԸ-ի կողմից կատարված ծախսերի, կնքված գործարքների իրականացման ընթացքում հաշվապահական և ֆինանսատնտեսական բնույթի խախտումները և դրանց հետևանքով պատճառված վնասի առկայությունը կամ բացակայությունը պարզելու համար:

Մասնավորապես անհրաժեշտ է պարզել՝ քրեական վարույթն իրականացնող մարմինը հարցաքննել է արդյոք սույն որոշման 8-րդ կետում շարադրված դրվագների հետ առնչություն ունեցող բոլոր անձանց, կատարել է արդյոք առերեսումներ՝ նշված անձանց ցուցմունքների մեջ առկա հակասությունները պարզելու նպատակով, թե՛ ոչ:

Քննության առարկա պետք է լինի նաև այն հարցը, թե սույն գործով նախաքննություն իրականացնող մարմինը պարզել է արդյոք, թե «ԱՄՖ» ՍՊԸ-ի կողմից կատարված վերոգրյալ գործարքները «Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի իմաստով հանդիսացել են խոշոր գործարքներ և եթե՛ այո, ապա ընկերության գործադիր կառավարում իրականացնող մարմինն օժտված էր արդյոք առանց ընկերության ընդհանուր ժողովի որոշման նման խոշոր գործարքներ կատարելու, ընկերության սեփականություն հանդիսացող գույքը գրավադրելու կամ օտարելու լիազորություններով:

Քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ սույն գործով իրականացված թե՛ ստուգմամբ և թե՛ համալիր փորձաքննությամբ հնարավոր չի եղել պարզել, թե 1999–2008 թվականների ընթացքում «ԱՄՖ» ՍՊԸ-ի կողմից իրականացված ֆինանսատնտեսական գործունեության ժամանակ կոնկրետ ինչպիսի խախտումներ են թույլ տրվել և դրանց հետևանքով ընկերությանը որքան վնաս է պատճառվել՝ ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ կազմված փաստաթղթերի և դրանց հիման վրա տրված հաշվապահական ձևակերպումների, ինչպես նաև գրանցամատյանների և դրամարկղային գրքերի ամբողջությամբ պահպանված չլինելու հետևանքով (տե՛ս սույն որոշման 7-րդ և 9-րդ կետերը): Առաջին ատյանի դատարանը պետք է պարզի, թե քրեական վարույթն իրականացնող մարմինը պարզել է արդյո՞ք «ԱՄՖ» ՍՊԸ-ի ֆինանսատնտեսական գործունեությանն առնչվող վերոգրյալ փաստաթղթերի կազմման և պահպանման համար պատասխանատվություն կրող անձանց շրջանակը և ձեռնարկել է արդյո՞ք անհրաժեշտ միջոցառումներ նշված փաստաթղթերը գտնելու և քրեական գործի նյութերին կցելու համար:

բ) Համալիր փորձաքննության եզրակացության ուսումնասիրությունից երևում է, որ փորձագետները համապատասխան ուսումնասիրության արդյունքում հանգել են հետևության այն մասին, որ քրեական գործում առկա փաստաթղթերում արտացոլված տվյալների համաձայն՝ «ԱՄՖ» ՍՊԸ-ն եզրակացության հետազոտական մասում նշված 1-ին դրվագով կրել է 103.600.000 ՀՀ դրամի ուղղակի վնաս, իսկ թիվ 5-րդ և 8-րդ դրվագներով՝ 139.387.000 ՀՀ դրամի անուղղակի վնաս: Բացի այդ, ընկերության տնօրինության կողմից համապատասխան միջոցներ չեն ձեռնարկվել դեբիտորական պարտքերի մարման ուղղությամբ, որի արդյունքում ընկերությունը չմարված դեբիտորական պարտքերի գումարի չափով կրել է վնաս (տե՛ս սույն որոշման 9-րդ կետի «գ» և «դ» ենթակետերը):

Ինչպես երևում է քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին քննիչի որոշման ուսումնասիրությունից, քրեական վարույթն իրականացնող մարմինը նշված դրվագներով հաստատված է համարել, որ այդ գործարքներով «ԱՄՖ» ՍՊԸ–ին, անձանց կամ պետության իրավունքներին և օրինական շահերին էական վնաս չի պատճառվել: Առաջին ատյանի դատարանը պետք է պարզի, թե ի՞նչ ապացույցներով է ղեկավարվել քրեական վարույթն իրականացնող մարմինը նման հետևության հանգելիս, և արդյո՞ք դրանք բավարար էին նման եզրակացություն անելու համար:

Բացի այդ, քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ «ԱՄՖ» ՍՊԸ–ի տնօրեն Ռ.Սողոմոնյանը 13.07.2006 թվականին ընկերության անվամբ գործունեության ծրագիր է ներկայացրել «Ջարգացման հայկական բանկ» ԲԲԸ–ին՝ միևնույն ժամանակ բանկին ներկայացնելով ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կեղծված արձանագրություն, համաձայն որի՝ բաժնետերերը մասնակցել են ժողովին և որոշել վարկ ստանալու համար դիմել բանկին: Արդյունքում՝ «Ջարգացման հայկական բանկ» ԲԲԸ–ից «ԱՄՖ» ՍՊԸ–ն ստացել է 54.600.000 ՀՀ դրամի վարկ (տե՛ս սույն որոշման 8–րդ կետը, դրվագ 3–րդ): Քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման ուսումնասիրությունից երևում է, որ քննիչը նշված դրվագով քրեական հետապնդում չի իրականացրել՝ պատճառաբանելով, որ հիշյալ փաստաթղթի կազմումը կրել է զուտ ձևական բնույթ, դրանով ընկերությանը և որևէ այլ սուբյեկտի վնաս չի պատճառվել:

Մինչդեռ ՀՀ քրեական օրենսգրքի 325–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ «Իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող վկայական կամ պաշտոնական այլ փաստաթուղթ կեղծելը՝ կեղծողի կողմից անձամբ կամ այլ անձի կողմից դրանք օգտագործելու կամ իրացնելու նպատակով (...), ինչպես նաև ակնհայտ կեղծ փաստաթուղթ օգտագործելը (...))» հանցագործություն է:

Ինչպես երևում է ՀՀ քրեական օրենսգրքի 325–րդ հոդվածի 1–ին մասի դիսպոզիցիայի վերլուծությունից, այն քրեական պատասխանատվություն է նախատեսում իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող պաշտոնական այլ փաստաթուղթ կեղծելու և ակնհայտ կեղծ փաստաթուղթ օգտագործելու համար, իսկ այդ ընթացքում որևէ այլ սուբյեկտի վնաս պատճառելը ՀՀ քրեական օրենսգրքի 325–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշ է:

Առաջին ատյանի դատարանը պետք է ուսումնասիրություն կատարի նաև վերոգրյալի կապակցությամբ և իրավական գնահատական տա նշված դրվագով քրեական հետապնդում չիրականացնելու մասին նախաքննության մարմնի որոշմանը:

զ) Քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նախաքննության մարմինը առգրավել է «ԱՄՖ» ՍՊԸ–ի հարկային գործը և մաքսային թղթապանակը (տե՛ս սույն որոշման 5–րդ կետը): Քրեական գործի նյութերում առկա են ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի տեղակալի թվով երկու գրություններ, որտեղ արտացոլված է ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության տեղեկատվական բազայում «ԱՄՖ» ՍՊԸ–ի կողմից 1999–2008 թվականների ընթացքում կատարված առևտրային գործարքների վերաբերյալ առկա տեղեկատվությունը (տե՛ս սույն որոշման 6–րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը պետք է պարզի, թե արդյո՞ք քրեական վարույթն իրականացնող մարմինը կատարել է անհրաժեշտ քննություն պարզելու համար՝ «ԱՄՖ» ՍՊԸ-ի կողմից կատարված առևտրային գործարքներն արտացոլվա՞ծ են եղել ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության տեղեկատվական բազայում, ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը արդյո՞ք պատշաճ ձևակերպում է ստացել հարկային ու մաքսային մարմիններում և ՍՊԸ-ի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ծագած հարկային և մաքսային պարտավորությունները կատարվե՞լ են ամբողջությամբ, թե՛ ոչ:

27. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշման 26-րդ կետի «ա», «բ» և «գ» ենթակետերում նշված հանգամանքների շուրջ ուսումնասիրություն կատարելուց հետո միայն Առաջին ատյանի դատարանը հնարավորություն կունենա անհրաժեշտ հետևություններ անել թիվ 49104408 քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին քննիչի որոշման օրինականության ու հիմնավորվածության վերաբերյալ և նշված որոշմանը տալ համապատասխան իրավական գնահատական:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Գիմողներ Բենիկ Նիկոլայի Հարությունյանի, Ֆրունզիկ Խաչիկի Գալստյանի և Հովսեփ Խաչիկի Գալստյանի բողոքը մերժելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 2-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի նոյեմբերի 16-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

62.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության ՀՅԶՐԴ-2/0153/01/08  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
քրեական գործ թիվ ՀՅԶՐԴ-2/0153/01/08

նախագահող դատավոր՝ Մ.Պետրոսյան  
դատավորներ՝ Գ.Մելիք-Սարգսյան, Ա.Դանիելյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ*՝ Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ*՝ Հ. ԱՄԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Կ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

2010 թվականի մարտի 26-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ամբաստանյալ Նորիկ Սեդրակի Պողոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2009 թվականի դեկտեմբերի 22-ի որոշման դեմ պաշտպան Կ.Թումանյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1.Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2008 թվականի օգոստոսի 23-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնի Թումանյանի քննչական բաժանմունքում հարուցվել է թիվ 55104908 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:



Նախաքննության մարմնի 2008 թվականի սեպտեմբերի 29-ի որոշմամբ Ն.Պոդոյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով:

Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 17-ի որոշմամբ Ն.Պոդոյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

2008 թվականի նոյեմբերի 21-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Հյուսիսային քրեական դատարան:

2. 2009 թվականի փետրվարի 5-ին ընդունված «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ կետի կարգով Ն.Պոդոյանի վերաբերյալ քրեական գործը 2009 թվականի փետրվարի 27-ին ըստ ընդդատության փոխանցվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 12-ի դատավճռով Ն.Պոդոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման 3 տարի ժամկետով:

3. Պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2009 թվականի դեկտեմբերի 22-ին որոշում է կայացրել բողոքը մասնակիորեն բավարարելու, Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 12-ի դատավճիռը Ն.Պոդոյանի նկատմամբ նշանակված պատժի մասով բեկանելու և փոփոխելու մասին: Ն.Պոդոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ դատապարտվել ազատազրկման 1 տարի 6 ամիս ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ն.Պոդոյանի պաշտպան Կ.Թումանյանը:

Վճռաբեկ դատարանը 2010 թվականի մարտի 4-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

5. Ն.Պոդոյանը դատապարտվել է այն բանի համար, որ իր ծանոթ Արթուր Լալայանին 2008 թվականի օգոստոսի 17-ին հրավիրել է Լոռու մարզի Մեծավան գյուղ՝ իր հայրական տուն, որտեղ հացկերույթ է կազմակերպել և նրան հյուրասիրել: Ա.Լալայանը, Պոդոյանների տան բակում նկատելով կանեփի թփեր, խնդրել է Ն.Պոդոյանին, որպեսզի վերջինս թույլատրի իրեն քաղել կանեփի տերևներ՝ թմրամիջոց պատրաստելու համար: Ն.Պոդոյանը, գիտակցելով, որ այդ թփերը պարունակում են

թմրամիջոց, և Ա.Լալայանը դրանք քաղում է թմրամիջոց պատրաստելու համար, տվյալ պահին իր տիրապետության տակ գտնվող, իր հայրական տան այգում ցանած և մշակած կանեփի թփերից թույլատրել է Ա.Լալայանին քաղել թմրամիջոց պարունակող տերևներ՝ այդ կերպ անհատույց իրացնելով թմրամիջոց:

6. Ա.Լալայանը սույն գործով քրեական վարույթն իրականացնող մարմնին 2008 թվականի օգոստոսի 23-ին տված լրացուցիչ բացատրության ժամանակ հայտնել է, որ իր մոտ հայտնաբերված թմրանյութն իրեն իրացրել է Ն.Պողոսյանը՝ վերջինիս հայրական տանը հյուրընկալվելու ժամանակ (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, 18-20 էջեր): Նույն օրը նշված բացատրության ճշմարտացիությունը ստուգելու նպատակով վարույթն իրականացնող մարմնի կողմից կատարվել է դեպքի վայրի զննություն, որի ժամանակ Ա.Լալայանը մատնացույց է արել Պողոսյանների տան բակում աճեցված կանեփի թփերը և հայտնել, որ իր մոտ հայտնաբերված թմրանյութը ձեռք է բերել այդտեղից՝ Ն.Պողոսյանի թույլտվությամբ (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, 21-27 էջեր):

7. Փաստաբան Ա.Թամազյանը սույն գործի վարույթին ներգրավվել է 2008 թվականի օգոստոսի 27-ից (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, 55-59 էջեր): Քրեական գործի նյութերում բացակայում է Ն.Պողոսյանի ստորագրությամբ վավերացված որևէ փաստաթղթային հաստատում, որով վերջինս լիազորում է փաստաբան Ա.Թամազյանին իրականացնել իր շահերի պաշտպանությունը, ինչպես նաև բացակայում է Ա.Թամազյանին պաշտպան նշանակելու վերաբերյալ ՀՀ փաստաբանների պալատի որոշումը:

8. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 2009 թվականի օգոստոսի 28-ի թիվ 19/2-Ա որոշմամբ փաստաբան Ա.Թամազյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ սույն գործի նախաքննության ընթացքում Փաստաբանի վարքագծի կանոնադրի 13-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջի խախտում թույլ տալու համար:

ՀՀ փաստաբանների պալատում հարուցված կարգապահական վարույթի ընթացքում փաստաբան Ա.Թամազյանը բացատրություն է տվել այն մասին, որ. «23.08.2009թ. իր գործերով գտնվել է Լոռու մարզի Թումանյանի քննչական բաժանմունքի քննիչ Ս.Թանդիլյանի մոտ, և այդ ժամանակ վերջինիս մոտ են բերել Նորիկ Պողոսյանին: Տեսնելով, որ նա խուճապի մեջ է, իսկ հայրը վախեցած՝ ինքը տեղեկացրել է նրանց, որ փաստաբան է և առաջարկել է օգտվել իր ծառայություններից: Սեղադրյալը և նրա հայրը հայտնել են, որ գումար չունեն վճարելու ծառայությունների համար: Ինքը համաձայնվել է անվճար և մարդասիրական նկատառումներից ելնելով՝ ստանձնել Ն.Պողոսյանի պաշտպանությունն անվճար (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, 138-139 էջեր):

9. Ամբաստանյալ Ն.Պողոսյանն Առաջին ատյանի դատարանի դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ ոչ մի տեղ չի սովորել, գրել-կարդալ չգիտի: Նախաքննության ընթացքում քննիչը գրել է ցուցմունքներ, որը չի կարդացել: Ինքը պաշտպան չի ցանկացել, սակայն քննիչը ներկայացրել է մի կնոջ որպես իր պաշտպանի (տե՛ս դատական նիստի արձանագրություն, քրեական գործ, հատոր 3-րդ, 104-106 էջեր):

10. Ամբաստանյալ Ն.Պողոսյանի և փաստաբան Ա.Թամազյանի մասնակցությամբ կատարվել են մի շարք քննչական գործողություններ, որոնց արդյունքում ձեռք են բերվել հետևյալ ապացույցները և դրվել ամբաստանյալ Ն.Պողոսյանի մեղքը հաստատող ապացույցների շարքում.

ա) վկա Ն.Պողոսյանի 2008 թվականի օգոստոսի 27-ի հարցաքննության արձանագրությունը (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, 56-59 էջեր),

բ) կասկածյալ Ա.Լալայանի և վկա Ն.Պողոսյանի 2008 թվականի օգոստոսի 28-ի առերես հարցաքննության արձանագրությունը (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 72),

գ) վկա Ն.Պողոսյանի 2008 թվականի սեպտեմբերի 27-ի լրացուցիչ հարցաքննության արձանագրությունը (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, 123-125 էջեր),

դ) մեղադրյալ Ն.Պողոսյանի 2008 թվականի սեպտեմբերի 29-ի հարցաքննության արձանագրությունը (տե՛ս քրեական գործ հատոր 1-ին, 138-139 էջեր):

11. Քրեական գործի նյութերում բացակայում է որևէ փաստաթղթային հաստատում առ այն, որ Ն.Պողոսյանը կրթություն է ստացել: Ամբաստանյալի մասնակցությամբ կատարված քննչական գործողությունների արդյունքում կազմված փաստաթղթերի տակ, այդ թվում՝ սույն որոշման 10-րդ կետում թվարկված հարցաքննությունների արձանագրություններում Ն.Պողոսյանը ստորագրության փոխարեն դրել է խաչանման նշաններ:

### **3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

12. Բողոքի հեղինակը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 21-րդ, 22-րդ հոդվածների, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի, ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ, 105-րդ, 106-րդ, 107-րդ, 125-րդ, 127-րդ, 358-րդ հոդվածների պահանջները:

13. Առաջին հերթին բողոքաբերը, շարադրելով և վերլուծելով սույն գործի փաստական հանգամանքները, փաստարկել է, որ ամբաստանյալ Ն.Պողոսյանի գործողություններում բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի հատկանիշները:

14. Այնուհետև բողոք բերած անձը նշել է, որ ստորադաս դատարաններն ամբաստանյալ Ն.Պողոսյանին մեղավոր են ճանաչել՝ հիմնվելով մի շարք անթույլատրելի, ՀՀ Սահմանադրության և քրեադատավարական օրենքի պահանջների խախտմամբ ձեռք բերված ապացույցների վրա:

Մասնավորապես, սույն գործի նախաքննության ընթացքում խախտվել է ամբաստանյալ Ն.Պողոսյանի պաշտպանության իրավունքը, քանի որ վարույթն իրականացնող մարմինն իր նախաձեռնությամբ հրավիրել է փաստաբան Ա.Թամազյանին և ներգրավել գործի քննությանը՝ որպես Ն.Պողոսյանի շահերի պաշտպան:

Հիմնվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի վրա՝ բողոք բերած անձը եզրակացություն է արել այն մասին, որ քրեական գործի քննությանը մասնակցություն է ունեցել դրա իրավունքը չունեցող անձ՝ փաստաբան

Ա.Թամազյանը, ում անմիջական մասնակցությամբ քրեական վարույթն իրականացող մարմնի կողմից ձեռք են բերվել նշված անթույլատրելի ապացույցներն ու դրվել անբաստանյալ Ն.Պողոսյանի մեղքը հիմնավորող ապացույցների շարքում: Վերոշարադրյալից բացի, բողոքաբերը կասկածի տակ է դնում Ա.Թամազյանի մասնակցությամբ կատարված հարցաքննությունների արձանագրություններում առկա փաստական տվյալների ճշմարտացիությունը՝ նկատի ունենալով, որ Ն.Պողոսյանը երբևէ դպրոց չի հաճախել, կրթություն չի ստացել և որևէ լեզվով գրել-կարդալ չգիտի:

15. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 12-ի որոշումը և Ն.Պողոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրվող արարքում ճանաչել և հռչակել անմեղ:

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

16. Նախքան վճռաբեկ բողոքում բարձրացված հարցերին անդրադառնալով՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում դիրքորոշում հայտնել սույն որոշման 13-րդ և 14-րդ կետերում բարձրացված հարցերի միջև առկա կապի վերաբերյալ: Այսպես, բողոքաբերի կողմից բարձրացված առաջին հարցը վերաբերում է անբաստանյալ Ն.Պողոսյանի գործողություններում ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի հատկանիշների առկայությանը (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը), այսինքն՝ այս մասով բողոքը վերաբերում է նյութական իրավունքի ենթադրյալ խախտմանը: Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ հարցը վերաբերում է նրան, թե արդյո՞ք սույն որոշման 10-րդ կետում թվարկված ապացույցները ձեռք են բերվել քրեադատավարական օրենքի պահանջների պահպանմամբ և ստորադաս դատարաններն իրավասու՞ էին արդյոք դրանք դնել Ն.Պողոսյանի մեղքը հաստատող ապացույցների շարքում, թե պետք է դրանք ճանաչելիս որպես անթույլատրելի ապացույցներ (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը), այսինքն՝ փաստարկվում է դատավարական իրավունքի խախտման առկայությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքաբերի վկայակոչած նյութական իրավունքի ենթադրյալ խախտումներն ածանցված են դատավարական իրավունքի ենթադրյալ խախտումներով, հետևաբար առաջին հերթին անհրաժեշտ է քննության առնել ստորադաս դատարանների կողմից սույն գործի քննության ժամանակ թույլ տրված դատավարական իրավունքի ենթադրյալ խախտումների հարցը:

#### *1. Բողոքաբերի կողմից վկայակոչված դատավարական իրավունքի ենթադրյալ խախտման և Ն.Պողոսյանի դատավարական կարգավիճակի միջև առկա կապը*

17. Բողոքաբերի կողմից բարձրացված դատավարական իրավունքի ենթադրյալ խախտման հարցի պարզաբանման նպատակով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում դիրքորոշում հայտնել այն մասին, թե նախաքննության ընթացքում ապացույցների ձեռքբերման ժամանակ Ն.Պողոսյանն ունեցե՞լ է արդյոք կասկածյալի դատավարական կարգավիճակ:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կասկածյալ է այն անձը՝

1) որը ձերբակալվել է հանցանք կատարելու մեջ կասկածվելու պատճառով,

2) որի նկատմամբ մինչև մեղադրանք առաջադրելը խափանման միջոց ընտրելու մասին որոշում է կայացված»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ձերբակալումն անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով նրան արգելանքի վերցնելն է, հետաքննության կամ վարույթ իրականացնող մարմին բերելը, համապատասխան արձանագրություն կազմելը և այդ մասին նրան հայտարարելը՝ օրենքով որոշված վայրերում ու պայմաններում արգելանքի տակ կարճաժամկետ պահելու համար»:

19. Շարադրված հոդվածների վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը կասկածյալի կարգավիճակ ձեռք բերելը կապում է օրենքով նախատեսված գործողությունների կատարման կամ որոշման կայացման պահի հետ: Մասնավորապես, ձերբակալվածի, հետևաբար նաև կասկածյալի կարգավիճակ ձեռք բերելու համար անձը պետք է (1) փաստացի գրկվի ազատությունից, (2) բերվի իրավասու մարմնի մոտ, (3) պետք է կազմվի ձերբակալման արձանագրություն և (4) այդ մասին պետք է նրան հայտարարվի: Այսպիսով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով անձը կարող է ձերբակալվածի, հետևաբար նաև կասկածյալի կարգավիճակ ստանալ վերջին՝ չորրորդ գործողությունը կատարելու պահից, այսինքն՝ քրեական հետապնդման մարմնում ձերբակալման արձանագրության մասին անձին հայտարարելու պահից: Կամ կասկածյալի կարգավիճակ ձեռք բերելու համար անձի նկատմամբ պետք է խափանման միջոց ընտրելու մասին որոշում կայացվի:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով անձը կասկածյալի կարգավիճակ է ձեռք բերում ձևական (փաստաթղթային) ընթացակարգի ավարտման պահից, այսինքն՝ կասկածյալի կարգավիճակի ձեռքբերումը կապվում է ձևական առումով «քրեական մեղադրանքի» առկայության հետ:

20. Քննարկվող հարցի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը իրավական դիրքորոշում է հայտնել *Գազիկ Միքայելյանի* վերաբերյալ գործով որոշմամբ. «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հիման վրա՝ «քրեական մեղադրանք» հասկացությունը պետք է հասկացվի ոչ թե *ձևական* (փաստաթղթային), այլ *բովանդակային* (գործնական) իմաստով (*Գեվերն ընդդեմ Բելգիայի (Deweer v. Belgium)* գործով վճիռ, 1980թ. փետրվարի 27, գանգատ թիվ 6903/75, կետ 44): Այսինքն՝ անձի նկատմամբ «մեղադրանքի» առկայության մասին կարող է վկայել նաև այնպիսի միջոցներ ձեռնարկելը, որոնք ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն, ինչպես նաև էականորեն ներգործում են կասկածվող անձի դրության վրա (*Էկլեն ընդդեմ Գերմանիայի (Eckle v. Germany)* գործով վճիռ, 1982թ. հուլիսի 15, գանգատ թիվ 8130/78, կետ 73, *Շուբինսկին ընդդեմ Սլովենիայի (Šubinski v. Slovenia)* գործով վճիռ, 2007թ. հունվարի 18, գանգատ թիվ 19611/04, կետ 62, *Գ.Կ.-ն ընդդեմ Լեհաստանի (G.K. v. Poland)* գործով վճիռ, 2004թ. հունվարի 20, գանգատ թիվ 38816/97, կետ 98)» (տե՛ս Գազիկ Միքայելյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԳԳ/0085/06/09 որոշման 21-րդ կետը):

21. Սույն գործի նյութերից երևում է, որ մինչդատական վարույթն իրականացնող մարմինը, տեղեկություններ ունենալով, որ Ա.Լալայանին ապօրինի թմրամիջոց է իրացրել Ն.Պողոսյանը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը), վերջինիս քրեական գործի վարույթին ներգրավել և հարցաքննել է որպես վկա, նախազգուշացրել ակնհայտ սուտ ցուցմունք տալու և ցուցմունք տալուց հրաժարվելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին և հարցաքննության ընթացքում առաջադրել է հանցագործության կատարման մեջ Ն.Պողոսյանին մերկացնող հարցեր (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

22. Ուստի, հիմք ընդունելով սույն որոշման 20-րդ կետում և համապատասխանաբար նաև *Գ.Միքայելյանի* վերաբերյալ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նախաքննության ընթացքում ապացույցների ձեռքբերման ժամանակ Ն.Պողոսյանը փաստացի եղել է կասկածյալ և պետք է օգտվեր այդ կարգավիճակից բխող իրավունքներից:

*II. Ն.Պողոսյանի պաշտպանության իրավունքի խախտումները*

23. Վճռաբեկ դատարանի առջև բողոքաբերի կողմից բարձրացված իրավական հարցը հետևյալն է. նախաքննության ընթացքում խախտվե՞լ է արդյոք Ն.Պողոսյանի պաշտպանության իրավունքը:

24. ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Յուրաքանչյուր որ ունի ձեռքակալման, խափանման միջոցի ընտրման կամ մեղադրանքի առաջադրման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք»: Այսպիսով, քրեական դատավարությունում մեղադրվող անձի համար հայեցողական ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունքը ստացել է սահմանադրական կարգավորում:

Սահմանադրական հիշյալ կարգավորումը համահունչ է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի պահանջներին, համաձայն որի՝ քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձի համար երաշխավորվում է իր ընտրած պաշտպանի միջոցով պաշտպանվելու իրավունքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կասկածյալը և մեղադրյալն ունեն պաշտպանության իրավունք: (...)»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին բացատրել նրանց իրավունքները և ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կասկածյալն ունի պաշտպանության իրավունք: (...)»:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Կասկածյալի վրա չի կարող որևէ պատասխանատվություն դրվել իր տված ցուցմունքների և բացատրությունների համար, (...)»:

25. Շարադրված դրույթների վերլուծությունից երևում է, որ ՀՀ ներպետական օրենսդրության իմաստով կասկածյալն ունի պաշտպանության իրավունք: Կասկածյալի պաշտպանության իրավունքը նրան վերապահված դատավարական իրավունք-

ների ամբողջությունն է, որը նրան հնարավորություն է տալիս հանդես գալ որպես դատավարության ինքնուրույն սուբյեկտ, լրիվ կամ մասնակիորեն հերքել իրեն վերագրվող հանցանքը կատարած լինելու պնդումը, ինչպես նաև պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը: Պաշտպանության իրավունքը, որպես կասկածյալին վերապահված իրավունքների համակցություն, կասկածյալին հնարավորություն է տալիս իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն իրականացնել ինչպես անձամբ, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով նշանակված պաշտպանի միջոցով: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով կասկածյալի պաշտպանության իրավունքի իրականացման փաստացի հնարավորության ապահովման պարտականությունը կրում է վարույթն իրականացնող մարմինը:

Պաշտպանության իրավունքը քրեական դատավարության հիմնարար սկզբունքներից մեկն է: Բացի այդ, այն հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված «զեմքերի հավասարության» և ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ ամրագրված մրցակցության սկզբունքների ապահովման կարևորագույն երաշխիք:

26. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պաշտպան է այն փաստաբանը, որը քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում է կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը և նրանց ցույց է տալիս իրավաբանական օգնություն՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ «Քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ կասկածյալը կամ մեղադրյալը չի տիրապետում կամ ոչ բավարար չափով է տիրապետում քրեական դատավարության լեզվին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝

«1. Փաստաբանները քրեական գործով վարույթին որպես պաշտպան մասնակցում են՝

1) կասկածյալի, մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, ազգականի, ինչպես նաև կասկածյալի կամ մեղադրյալի խնդրանքով կամ համաձայնությամբ՝ այլ անձանց հրավերով:

2) Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից նշանակվելով՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջի հիման վրա:

2. Քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք չունի որևէ մեկին երաշխավորել հրավիրելու որևէ պաշտպանի:

3. Քրեական վարույթն իրականացնող մարմինը Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատից պահանջում է փաստաբանին նշանակել պաշտպան՝

1) կասկածյալի կամ մեղադրյալի միջնորդությամբ.

2) այն դեպքում, երբ քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, իսկ կասկածյալը կամ մեղադրյալը պաշտպան չունի:(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի համաձայն՝ «Իր իրավիճակը հաստատելու համար պաշտպանը քրեական վարույթն իրականացնող

մարմնին ներկայացնում է անձը հաստատող փաստաթուղթ, և փաստաբանների պալատի կողմից տրված՝ իր փաստաբան լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև որպես պաշտպան հանդես գալու՝ կասկածյալի կամ մեղադրյալի ստորագրությամբ վավերացված փաստաթղթային հաստատումը կամ պաշտպան նշանակելու վերաբերյալ սույն օրենսգրքով իրավասու մարմնի որոշումը»:

27. Մեջբերված դրույթների վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, ի թիվս պաշտպանի պարտադիր մասնակցության այլ դեպքերի, սահմանում է, որ վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ կասկածյալը կամ մեղադրյալը չի տիրապետում կամ ոչ բավարար չափով է տիրապետում քրեական դատավարության լեզվին: Օրենսգիրքը հստակ սահմանում է նաև այդ դեպքում պաշտպանի հրավիրման ընթացակարգը, այն է՝ վարույթն իրականացնող մարմինը կասկածյալի ընտրած փաստաբանին ներգրավում է որպես պաշտպան: Այս դեպքում պաշտպանին վարույթ ներգրավելու հիմքը կասկածյալի ստորագրությամբ վավերացված փաստաթղթային հաստատումն է: Եթե կասկածյալը չունի պաշտպան և վարույթն իրականացնող մարմնին չի ներկայացնում որևէ փաստաբանի, ապա այդ դեպքում վարույթն իրականացնող մարմինը ՀՀ փաստաբանների պալատից պահանջում է որևէ փաստաբանի նշանակել պաշտպան. պաշտպանի ընտրության և նշանակման իրավասություն քննիչը չունի: ՀՀ փաստաբանների պալատի նշանակումից հետո պաշտպանը քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնում է պաշտպան նշանակելու վերաբերյալ ՀՀ փաստաբանների պալատի որոշումը:

ՀՀ քրեադատավարական օրենքում նման պահանջի և ընթացակարգի սահմանումը նպատակ է հետապնդում ապահովել կասկածյալի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը՝ դրանով իսկ նպաստելով քրեական գործի արդարացի քննությանն ու լուծմանը, ինչպես նաև բացառել վարույթն իրականացնող մարմնի կողմից իր նախաձեռնությամբ որևէ մեկին որպես պաշտպան երաշխավորելը:

28. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նախաքննությունն իրականացնող մարմինը, ՀՀ քրեադատավարական օրենսգրքով սահմանված կարգով Ն.Պողոսյանին չտալով կասկածյալի կարգավիճակ, նրան մի քանի անգամ հարցաքննել է որպես վկա, կատարել առերեսում կասկածյալ Ա.Լալայանի հետ (տե՛ս սույն որոշման 10–րդ կետը):

Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ ամբաստանյալ Ն.Պողոսյանը գրել–կարդալ չգիտի, այսինքն՝ ոչ բավարար չափով է տիրապետում քրեական դատավարության լեզվին (տե՛ս սույն որոշման 9–րդ և 11–րդ կետերը), իսկ քրեական գործի նյութերում բացակայում է Ն.Պողոսյանի ստորագրությամբ վավերացված որևէ փաստաթղթային հաստատում, որով վերջինս լիազորում է փաստաբան Ա.Թամազյանին իրականացնել իր շահերի պաշտպանությունը, ինչպես նաև բացակայում է Ա.Թամազյանին պաշտպան նշանակելու վերաբերյալ ՀՀ փաստաբանների պալատի որոշումը (տե՛ս սույն որոշման 7–րդ կետը):

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ, սույն գործով փաստաբան Ա.Թամազյանի մասնակցությունը կրել է անօրինական բնույթ, քանի որ վերջինս վարույթին ներգրավվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգի խախտմամբ:



29. Հիմք ընդունելով սույն որոշման 24–28–րդ կետերում արված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով նախաքննության ընթացքում խախտվել է Ն.Պողոսյանի պաշտպանության իրավունքը, քանի որ վերջինս, փաստացի լինելով կասկածյալ, հարցաքննվել է որպես վկա: Բացի այդ, վարույթն իրականացնող մարմնի կողմից նա չի ապահովվել պաշտպանով այն դեպքում, երբ առկա էր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված՝ պաշտպանի պարտադիր մասնակցության դեպք: Սույն գործով մինչդաստական վարույթն իրականացնող մարմինը, գրկելով Ն.Պողոսյանին առաջին իսկ հարցաքննության պահից պաշտպան ունենալու և օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից պաշտպանվելու փաստացի հնարավորությունից, ինչպես նաև պաշտպանի պարտադիր մասնակցության պայմաններում օրենքով սահմանված կարգով Ն.Պողոսյանին չապահովելով պաշտպանով՝ թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19–րդ հոդվածի 2–րդ մասի, 69–րդ հոդվածի 1–ին մասի 4–րդ կետի, 70–րդ հոդվածի 1–ին, 3–րդ մասերի և 71–րդ հոդվածի պահանջների խախտումներ:

30. Բացի այդ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ գործի նյութերի ուսումնասիրության արդյունքում չպարզաբանված է մնում այն հարցը, թե փաստաբան Ա.Թամազյանն ի վերջո ինչպես է ներգրավվել սույն գործի վարույթին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գնահատման ենթարկելով սույն որոշման 8–րդ և 9–րդ կետերում արտացոլված փաստական հանգամանքները, ինչպես նաև սույն որոշման մեջ արձանագրված Ն.Պողոսյանի պաշտպանության իրավունքի խախտման փաստը, ստորադաս դատարանը պետք է քննության առնի նաև այն հարցը, թե սույն գործով փաստաբան Ա.Թամազյանի մասնակցության առումով արդյո՞ք առկա է եղել քննիչի երաշխավորությունը:

### *III. Սույն գործով նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցների անթույլատրելիությունը*

31. Բողոքաբերի կողմից փաստարկված դատավարական իրավունքի խախտման հետ կապված հաջորդ հարցը, որը բարձրացվել է Վճռաբեկ դատարանի առաջ, վերաբերում է նրան, թե ստորադաս դատարաններն իրավասու՞ էին արդյոք սույն որոշման 10–րդ կետում թվարկված ապացույցները դնել Ն.Պողոսյանի մեղքը հաստատող ապացույցների շարքում:

32. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105–րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել՝ (...)

2) կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի, դատավարության լեզվին չտիրապետող անձանց իրավունքների՝ սույն օրենսգրքով նախատեսված լրացուցիչ երաշխիքների էական խախտմամբ. (...)

2. Ապացույցներ ձեռք բերելիս էական են այն խախտումները, որոնք, դրսևորվելով մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների կամ սույն օրենսգրքի որևէ պահանջի խախտմամբ, դատավարության մասնակիցներին՝ օրենքով երաշխավորված իրավունքների գրկմամբ կամ որևէ այլ կերպ ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա (...):»

33. Ապացույցների անթույլատրելիության հարցի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը իրավական դիրքորոշում է հայտնել *Արմեն Սարգսյանի* վերաբերյալ գործով որոշմամբ. «(...) որպես քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները պարզելու միջոց կարող են օգտագործվել միայն այնպիսի ապացույցներ, որոնք ձեռք են բերվել, ամրագրվել և գործին կցվել են քրեադատավարական օրենքով սահմանված և թույլատրելի համարվող կարգով: Ապացույցների ձեռքբերման և ամրագրման թույլատրելիությունը կարգավորող նորմերից հետևում է, որ որպես ապացույց չեն կարող օգտագործվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալները, հատկապես եթե դրանք իրենց հերթին հանգեցրել են դատավարության մասնակիցների իրավունքների էական խախտման, ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա:

Այսպիսով, ապացույցների հավաքմանը և ստուգմանն ուղղված դատավարական գործողությունների կատարման ընթացքում պետք է ապահովվի անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Հակառակ դեպքում կատարված դատավարական գործողության արդյունքում ստացված փաստական տվյալը, անկախ գործի համար ունեցած նշանակությունից, կորցնում է իր իրավական ուժը, ապացուցողական նշանակությունը և չի կարող ընդգրկվել կոնկրետ քրեական գործով ապացույցների համակցության մեջ և դրվել մեղադրանքի հիմքում» (տե՛ս Արմեն Սարգսյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 16–ի թիվ ԵԶԲԴ/0295/01/08 որոշման 15–րդ կետը):

34. Հիմք ընդունելով սույն որոշման 33–րդ կետում և համապատասխանաբար նաև *Ա.Սարգսյանի* վերաբերյալ որոշման մեջ առկա իրավական դիրքորոշումները, ինչպես նաև հիմնվելով սույն որոշման 24–29–րդ կետերում առկա իրավական վերլուծության վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի նախաքննության ընթացքում ամբաստանյալ Ն.Պողոսյանի մասնակցությամբ կատարված քննչական գործողությունների արդյունքում ձեռք բերված, սույն որոշման 10–րդ կետում թվարկված ապացույցները ստացվել են վերջինիս պաշտպանության իրավունքի խախտման պայմաններում:

35. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»:

36. Սույն որոշման 34–րդ կետում նշված խախտումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398–րդ հոդվածի իմաստով քրեադատավարական օրենքի էական խախտում է, ուստի հիմք է սույն գործով Վերաքննիչ և Առաջին ատյանի դատարանների դատական ակտերը բեկանելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործը պետք է ուղարկել Առաջին ատյանի դատարան, որը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ և 106-րդ հոդվածներով, պետք է քննարկման առարկա դարձնի վիճարկվող ապացույցների թույլատրելիության հարցը՝ սույն որոշման մեջ արձանագրված պաշտպանության իրավունքի խախտման լույսի ներքո:

37. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ չի համարում քննության առնել բողոքում բարձրացված նյութական իրավունքի նորմերի ենթադրյալ խախտումների վերաբերյալ փաստարկները. դրանց հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշման մեջ արձանագրված դատավարական իրավունքի խախտումը վերացնելուց հետո:

38. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական դատավարության ընթացքում հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձի պաշտպանության իրավունքի ապահովման՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի պարտականության իրավական հարցի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Նորիկ Սեդրակի Պողոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 12-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

63.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության

ԵԱԶԳ/0045/01/09

վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵԱԶԳ/0045/01/09

նախագահող դատավոր՝ Գ.Սելիք–Սարգսյան  
դատավորներ՝ Մ.Պետրոսյան, Ս.Համբարձումյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈԳՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2010 թվականի մայիսի 4–ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արսեն Եղիշի Միրզոյանի վե-  
րաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 185–րդ հոդվածի 1–ին մասով, 117–րդ և 118–րդ  
հոդվածներով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի փետրվարի 8–ի  
որոշման դեմ տուժող Արտակ Միրզոյանի օրինական ներկայացուցիչ և տուժող  
Արևհատ Գարիբյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2008 թվականի սեպտեմբերի 5–ին ՀՀ ոստիկանության ԶԳՎ Երևանի քննչա-  
կան վարչության Արաբկիրի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 118–րդ  
հոդվածի և 185–րդ հոդվածի 1–ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 14135508  
քրեական գործը:

2. ՀՀ ոստիկանության ՔԳՎ Արարկլիրի քննչական բաժնի քննիչ Հ.Ավետիսյանի 2008 թվականի սեպտեմբերի 8-ի որոշմամբ Արևհատ Ղարիբյանը թիվ 14135508 քրեական գործով ճանաչվել է տուժող:

3. 2008 թվականի հոկտեմբերի 30-ին Արսեն Միրզոյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ, 118-րդ հոդվածներով, 185-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

4. 2008 թվականի դեկտեմբերի 3-ին Արսեն Միրզոյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում: 2008 թվականի դեկտեմբերի 4-ին նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը:

5. 2008 թվականի դեկտեմբերի 8-ին Արսեն Միրզոյանը հայտնաբերվել և կալանավորվել է:

6. Նախաքննության մարմնի 2008 թվականի հոկտեմբերի 10-ի որոշմամբ Արտակ Միրզոյանը ճանաչվել է տուժող, իսկ նույն օրվա մեկ այլ որոշմամբ Արևհատ Ղազարյանը ճանաչվել է Արտակ Միրզոյանի օրինական ներկայացուցիչ:

7. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 19-ի որոշմամբ Արսեն Միրզոյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը վերացվել է և նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է ստորագրություն չհեռանալու մասին:

8. 2009 թվականի ապրիլի 27-ին թիվ 14135508 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Արարկլիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

9. Երևան քաղաքի Արարկլիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի նոյեմբերի 13-ի դատավճռով Արսեն Միրզոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով, 117-րդ, 118-րդ հոդվածներով և դատապարտվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով՝ տուգանքի 100.000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով, ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով՝ տուգանքի 80.000 /ութսուն հազար/ ՀՀ դրամի չափով, ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով՝ տուգանքի 60.000 /վաթսուն հազար/ ՀՀ դրամի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու սկզբունքով Արսեն Միրզոյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել տուգանք 200.000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:

Կիրառվել է «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետը, և Արսեն Միրզոյանն ազատվել է պատժի կրումից:

10. Երևան քաղաքի Արարկլիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի նոյեմբերի 13-ի դատավճռի դեմ ամբաստանյալ Արսեն Միրզոյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել՝ պահանջելով այն բեկանել, գործի վարույթը կարճել և իրեն արդարացնել:

Ամբաստանյալ Արսեն Միրզոյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2010 թվականի փետրվարի 8-ի որոշմամբ Ար-

սեն Միրզոյանի վերաքննիչ բողոքը բավարարել է և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կիրառմամբ (դիմողի բողոքի բացակայության հիմքով) բեկանել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի նոյեմբերի 13-ի դատավճիռը, Արսեն Միրզոյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել է և գործի վարույթը՝ կարճել:

11. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի փետրվարի 8-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել տուժող Արտակ Միրզոյանի օրինական ներկայացուցիչ և տուժող Արևհատ Ղարիբյանը, ինչպես նաև Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազի տեղակալ Ա.Շահազիզյանը:

Վճռաբեկ դատարանը 2010 թվականի մարտի 30-ի որոշմամբ տուժողի օրինական ներկայացուցիչ և տուժող Արևհատ Ղարիբյանի բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 30-ի մեկ այլ որոշմամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազի տեղակալ Ա.Շահազիզյանի վճռաբեկ բողոքը թողնվել է առանց քննության:

Ամբաստանյալ Արսեն Միրզոյանի կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոքի պատասխան, պատասխանի հիմնավորում և հիմնավորման լրացում:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստա-կան հանգամանքները.**

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

12. Արսեն Միրզոյանին մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ նա իր կնոջ՝ Արևհատ Յուրիկի Ղարիբյանի հետ գտնվելով լարված փոխհարաբերությունների մեջ, 2008 թվականի հունիսի 19-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Կոմիտասի պողոտայի 36բ շենքի թիվ 2 բնակարանում կենցաղային հարցերի շուրջ վիճաբանել է վերջինիս հետ՝ վիճաբանությունը վերածելով կռվի և քաշքշուկի: Արսեն Միրզոյանը մարմնական վնասվածքներ հասցնելու նպատակով, ձեռքերով հարվածել է Ա.Ղարիբյանի դեմքին և մարմնին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ, որոնք առողջության թեթև վնասի հատկանիշներ չեն պարունակել: Միաժամանակ Արսեն Միրզոյանը վիճաբանության ժամանակ, գույքային վնաս պատճառելու դիտավորությամբ վերցրել է Ա.Ղարիբյանի «Մոտորուղա-Ց 350» տեսակի բջջային հեռախոսը և հատակին հարվածելով կոտրել է այն՝ վերջինիս պատճառելով 9.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

Բացի այդ, 2008 թվականի հունիսի 21-ին, Արսեն Միրզոյանը Երևան քաղաքի Կոմիտասի պողոտայի 36բ շենքի թիվ 2 բնակարանում Ա.Ղարիբյանի հետ ծագած վիճաբանության ընթացքում գույքային վնաս պատճառելու դիտավորությամբ կրկին կոտրել է վերջինիս «Նոկիա-2600» տեսակի բջջային հեռախոսը՝ պատճառելով 10.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

Այնուհետև, 2008 թվականի սեպտեմբերի 20-ին՝ ժամը 20:30-ի սահմաններում, Արսեն Միրզոյանը կրկին վիճաբանության ընթացքում, մարմնական վնասվածքներ հասցնելու նպատակով, ձեռքերով և գլխով հարվածել է իր որդուն՝ Արտակ Միրզոյանին և կնոջը՝ Ա.Ղարիբջանին՝ Արտակ Միրզոյանի առողջությանը դիտավորությանը պատճառելով թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով, իսկ Ա.Ղարիբջանին դիտավորությանը պատճառելով մարմնական վնասվածքներ, որոնք առողջության թեթև վնասի հատկանիշներ չեն պարունակել: Նշվածի կապակցությամբ 2008 թվականի սեպտեմբերի 20-ին Արտակ Միրզոյանը հաղորդում է ներկայացրել ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժին, և նույն օրը կազմվել է թիվ 011384 արձանագրությունը՝ հաղորդում ընդունելու մասին (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 92):

13. Գործում առկա է տուժող Արևհատ Ղարիբջանի դիմումը՝ իրեն պատճառված գույքային վնասի և ծեծի համար Արսեն Միրզոյանին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 54):

14. Սույն գործով դատաքննության ընթացքում տուժողները բազմիցս հայտնել են իրենց դիրքորոշումը ամբաստանյալի հետ չհաշտվելու և վերջինիս քրեական պատասխանատվության ենթարկելու պահանջի վերաբերյալ (տե՛ս Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հունիսի 17-ի դատական նիստի արձանագրության համառոտագրումը՝ քրեական գործ, 2-րդ հատոր, էջ 29, տուժող Արտակ Միրզոյանի դիմումը՝ քրեական գործ, հատոր 2-րդ, 33, 38 էջեր):

### **Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

15. Բողոքաբերը փաստարկել է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը թույլ է տվել առերևույթ դատական սխալ, որը կարող է ծանր հետևանքներ առաջացնել անչափահաս երեխայի համար՝ հոգեբանական առումով:

Ըստ բողոքաբերի՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը կայացվել է քրեադատավարական նորմերի կոպիտ խախտումներով, մասնավորապես՝ ստորադաս դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 183-րդ, 372-373-րդ, 385-րդ, 396-րդ, 398-րդ հոդվածների պահանջները:

16. Բողոք բերած անձը նշել է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը դուրս է եկել վերաքննիչ բողոքի շրջանակներից, քանի որ Արսեն Միրզոյանի կողմից չի վիճարկվել տուժողների բողոքի առկայության հարցը, բացի այդ որոշում կայացնելիս հիմք են ընդունվել բացառապես ամբաստանյալի անհիմն հայտարարությունները:

Ըստ բողոքաբերի՝ սույն քրեական գործով առկա են ինչպես Արտակ Միրզոյանի կողմից տրված համապատասխան հայտարարությունը՝ բողոքը, այնպես էլ իր դիմումը, որն ըստ էության բողոք է, բացի այդ և՛ նախաքննության, և՛ դատաքննության ընթացքում ինքը բազմիցս հայտարարել է, որ չի ցանկանում ամբաստանյալի հետ հաշտվել և պահանջել է նրան ենթարկել քրեական պատասխանատվության:

17. Բողոքի հեղինակը փաստարկել է նաև, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի փետրվարի 8-ի որոշումը և օրինական ուժ տալ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ստյամի դատարանի 2009 թվականի նոյեմբերի 13-ի դատավճռին:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

18. Սույն գործով վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իրավասո՞ւ էր արդյոք Արսեն Սիր-գոյանի նկատմամբ դադարեցնել քրեական հետապնդումը և կարճել գործի վարույթը հարուցված քրեական գործում տուժողի պատշաճ գրավոր բողոքի բացակայության պատճառաբանությամբ՝ այն դեպքում, երբ առկա են հանցագործության վերաբերյալ տուժողի հայտարարությունը և տուժողի օրինական ներկայացուցչի դիմումը:

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն՝ քրեական հետապնդումն այն բոլոր դատավարական գործողություններն են, որոնք իրականացնում են քրեական հետապնդման մարմինները, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում տուժողը՝ նպատակ ունենալով բացահայտել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարած անձին, վերջինիս մեղավորությունը հանցանքի կատարման մեջ, ինչպես նաև ապահովել այդպիսի անձի նկատմամբ պատժի և հարկադրանքի այլ միջոցներ կիրառելը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կատարված հանցագործության ծանրությունից և բնույթից ելնելով՝ քրեական դատավարությունում հետապնդումն իրականացվում է հանրային և մասնավոր կարգով»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Մասնավոր հետապնդման գործեր են համարվում սույն օրենսգրքի 183-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածը սահմանում է մասնավոր հետապնդման, այսինքն՝ տուժողի բողոքի հիման վրա հարուցվող քրեական գործերի սպառիչ ցանկը, որոնց մեջ մատնանշված են նաև ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ, 118-րդ հոդվածները և 185-րդ հոդվածի 1-ին մասը:

20. Շարադրված նորմերի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել *Ա.Աբրահամյանի* վերաբերյալ որոշման 9-րդ կետում, որի համաձայն՝ «(...) մասնավոր մեղադրանքով գործ հարուցելու և դրանով քրեական հետապնդում իրականացնելու հնարավորությունը լիովին կախված է դիմողի՝ հանցավորին քրեական պատասխանատվության ենթարկելու միջոցով իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար քրեական հետապնդման մարմնին դիմելու ցանկությունից և կամարտահայտությունից» (տե՛ս Արմեն Չախարի Աբրահամյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-73/08 որոշումը):



21. Անձի կամահայտնության հիման վրա, այն է՝ մասնավոր մեղադրանքով քրեական գործ հարուցելու հարցի վերաբերյալ իրավական դիրքորոշում է հայտնել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Յանկովիչի ընդդեմ Խորվաթիայի* գործով (տե՛ս Jankovic v. Croatia, 05.03.2009թ., գանգատ թիվ 38478/05) վճռում: Նշված վճռի մեջ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ. «(...) Խորվաթիայի քրեական իրավունքում այն քրեական հանցագործությունները, որոնք պետք է քննվեն Պետական մեղադրողի գրասենյակի կողմից կա՛մ սեփական նախաձեռնությամբ, կա՛մ մասնավոր հայտարարության հիման վրա, տարբերակվում են այն հանցագործություններից, որոնք պետք է քննվեն մասնավոր մեղադրանքի շրջանակներում: (...)» (տե՛ս *Յանկովիչի* վճռի 48–րդ կետը):

«(...) Նախնական քննություն սկսելու վերաբերյալ իր սկզբնական պահանջում դիմողն արդեն հստակեցրել էր, որ պահանջում է նախնական քննություն, *inter alia*, 2003թ. հունիսի 6–ի իր հայտարարության հետ կապված, որում նշվել էր, որ երեք անձ հարձակում էին գործել նրա վրա: Նա նշել էր այդ անձանց անունները և հասցեները: Նա պնդել էր, որ բռնության դեպքերը, *inter alia*, հանդիսանում են հանցագործություններ՝ կապված սպառնալիքի և բռնություն գործադրելու հետ: Ի հիմնավորումն իր պնդումների՝ նա ներկայացրել էր գործին վերաբերող բժշկական փաստաթուղթ» (տե՛ս *Յանկովիչի* վճռի 53–րդ կետը):

Այնուհետև արձանագրելով նաև այն, որ դիմողի հայտարարությունը ներկայացված չի եղել քրեական վարույթներով Խորվաթիայի Պետական մեղադրողի գրասենյակ ներկայացվող հայտարարությունների համար սահմանված ձևով (տե՛ս *Յանկովիչի* վճռի 54–րդ կետը)՝ Եվրոպական դատարանը նշել է. «(...) սույն դեպքի վերաբերյալ առկա է եղել ոստիկանության արձանագրություն, որում ևս նկարագրվում է դիմողի նկատմամբ բռնության կիրառման դեպքը և այն, որ [համապատասխան] Տեղական պետական մեղադրողի գրասենյակի կողմից այս դեպքը հաշվառվել է: Ուստի դժվար է ընդունել [համապատասխան] Շրջանային դատարանի դատավորի այն եզրակացությունը, որ նախնական քննություն իրականացնելու վերաբերյալ դիմողի խնդրանքը մերժվել է այն հիմքով, որ այն եղել է անհստակ և ոչ լրիվ: Հակառակ դրան, [Եվրոպական] Դատարանը գտնում է, որ դիմողը հստակ ներկայացրել է, որ խնդրում է նախնական քննություն իրականացնել իր նկատմամբ կիրառված բռնության փաստով: Նա շահագրգռություն է ցուցաբերել իր գործի նկատմամբ և լուրջ նպատակներ է ունեցել մեղադրելու իր վրա հարձակում գործած անձանց: Նրա փաստարկները գործը քննող իրավասու դատավորի համար բավարար են եղել նրա պահանջի հիման վրա վարույթ հարուցելու համար: Այդ փաստարկները պարունակել են [օրենքով] պահանջվող ամբողջ տեղեկությունը (տե՛ս *Յանկովիչի* վճռի 55–րդ կետը):

22. Սույն գործի նյութերով հաստատված է, որ 2008 թվականի սեպտեմբերի 20–ին Արտակ Միրզոյանը հաղորդում է ներկայացրել ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժին առ այն, որ Արսեն Միրզոյանը վիճաբանության ընթացքում, մարմնական վնասվածքներ հասցնելու նպատակով ձեռքերով և գլխով հարվածել է իրեն՝ առողջությանը դիտավորությամբ պատճառելով թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով: Գործի նյութերում առկա է տուժող Արևհատ Գարիբյանի դիմումը՝

իրեն պատճառված գույքային վնասի և ծեծի համար Արսեն Միրզոյանին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին (տե՛ս սույն որոշման 12–րդ և 13–րդ կետերը):

Բացի այդ, գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դատաքննության ընթացքում տուժողները հայտնել են իրենց դիրքորոշումը ամբաստանյալի հետ չհաշտվելու և վերջինիս քրեական պատասխանատվության ենթարկելու ցանկության վերաբերյալ (տե՛ս սույն որոշման 14–րդ կետը):

Շարադրված փաստական հանգամանքները վկայում են այն մասին, որ Արսեն Միրզոյանին քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ տուժողները դրսևորել են հստակ կամարտահայտություն: Այդ կապակցությամբ տուժողները շահագրգռություն են ցուցաբերել և լուրջ նպատակներ են ունեցել մեղադրելու իրենց նկատմամբ բռնություն գործադրած անձին: Տուժողների դիրքորոշման հստակ լինելու մասին է վկայում նաև այն, որ սույն քրեական գործի ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության ընթացքում նրանք բազմիցս հայտարարել են ամբաստանյալի հետ չհաշտվելու մասին:

23. Հիմք ընդունելով սույն որոշման 21–րդ և 22–րդ կետերը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ և՛ *Յանկովիչի* գործով, և՛ սույն գործով քննության առարկա հանդիսացող խնդիրը կապված է անձի կողմից մասնավոր մեղադրանքի ներկայացման ձևական պահանջների պահպանման հետ: Այս պայմաններում սույն գործի և *Յանկովիչի* գործի փաստական հանգամանքների նմանությունը քանակապես և որակապես բավարար է *Յանկովիչի* գործով վճռի հիմնավորումներում պարունակվող ընդհանրական դրույթները սույն գործի նկատմամբ կիրառելու համար (Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կիրառելիության հարցի մասին տե՛ս *Սեյրան Այվազյանի* վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2008 թվականի մայիսի 23–ի թիվ ՎԲ–17/08 որոշման 22–28–րդ կետերը):

24. Հիմք ընդունելով վերևում, և հատկապես նախորդ կետում առկա վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իրավասու չէր Արսեն Միրզոյանի նկատմամբ դադարեցնել քրեական հետապնդումը և կարճել գործի վարույթը հարուցված քրեական գործում տուժողի պատշաճ գրավոր բողոքի բացակայության պատճառաբանությամբ, քանի որ սույն գործով առկա են հանցագործության վերաբերյալ տուժողի հայտարարությունը և տուժողի օրինական ներկայացուցչի դիմումը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի նշված որոշումը կայացվել է՝ ելնելով ձևական նկատառումներից, և դրա արդյունքում թույլ է տրվել քրեադատավարական օրենքի էական խախտում, քանի որ ըստ էության մասնավոր բողոքի առկայության պայմաններում դադարեցվել է քրեական հետապնդումը և կարճվել է գործի վարույթը:

25. Ելնելով վերոգրյալից, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի փետրվարի 8–ի որոշումը և օրինական ուժ տալ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ–Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի նոյեմբերի 13–ի դատավճռին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մասնավոր հետապնդման գործերով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Արսեն Եղիշի Միրզոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով, 117-րդ և 118-րդ հոդվածներով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի փետրվարի 8-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ նրա վերաբերյալ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի նոյեմբերի 13-ի դատավճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

64.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵԿԳ/0102/11/09

ԵԿԳ/0102/11/09

նախագահող դատավոր՝ Ա.Գանիելյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԳԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
*դիմողի ներկայացուցիչ* Է. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

2010 թվականի մայիսի 4–ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Մամիկոն Ռուբիկի Գևորգյանի վերաքննիչ բողոքը մերժելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2010 թվականի հունվարի 22–ի որոշման դեմ դիմող Մ.Գևորգյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2009 թվականի հոկտեմբերի 26–ին Մամիկոն Գևորգյանը դիմել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն՝ քրեական գործ հարուցելու պահանջով:

2009 թվականի հոկտեմբերի 29–ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունը թիվ 18–102մ/դ09 գրությամբ մերժել է դիմումատուի պահանջը:

2. ՀՀ հատուկ քննչական ծառայության թիվ 18–102մ/դ09 գրությունը դիմումատուն 2009 թվականի նոյեմբերի 4–ին բողոքարկել է Երևանի Կենտրոն և Նորք–Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի նոյեմբերի 17–ի որոշմամբ Մ.Գևորգյանի բողոքը մերժվել է:

3. 2009 թվականի նոյեմբերի 18–ին ՀՀ հատուկ քննչական ծառայության 2009 թվականի հոկտեմբերի 29–ի գրությունը դիմումատուն բողոքարկել է ՀՀ գլխավոր դատախազին:

ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Կ.Փիլոյանը 2009 թվականի նոյեմբերի 24–ի թիվ 33–109–09 գրությամբ դիմումատուի բողոքը մերժել է:

4. Մ.Գևորգյանը, դիմելով Առաջին ատյանի դատարան, բողոքարկել է ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Կ.Փիլոյանի 2009 թվականի նոյեմբերի 24–ի թիվ 33–109–09 գրությունը և խնդրել է այն ճանաչել որպես անգործություն և պարտադրել ՀՀ գլխավոր դատախազությանը քննել իր կողմից ներկայացված բողոքը և կայացնել որոշում:

Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 11–ի որոշմամբ Մ.Գևորգյանի բողոքը մերժվել է:

5. Մ.Գևորգյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2010 թվականի հունվարի 22–ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 11–ի որոշումը թողել է օրինական ուժի մեջ, իսկ վերաքննիչ բողոքը՝ մերժել:

Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հունվարի 22–ի որոշման դեմ 2010 թվականի փետրվարի 5–ին վճռաբեկ բողոք է բերել Մ.Գևորգյանը:

6. 2010 թվականի մարտի 4–ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414<sup>1</sup>–րդ հոդվածի 1–ին մասի հիմքով վճռաբեկ բողոքը վերադարձրել է՝ թերությունները վերացնելու և այն կրկին ներկայացնելու համար սահմանելով 15–օրյա ժամկետ:

Մ.Գևորգյանը 2010 թվականի մարտի 17–ին կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանը 2010 թվականի մարտի 30–ի որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար») վարույթ է ընդունել:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող վիստակական հանգամանքները.**

7. Վերաքննիչ դատարանի որոշման մեջ առկա է հետևյալ ձևակերպումը. «Տվյալ դեպքում Սամիկոն Գևորգյանը ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Կ.Փիլոյանի 2009 թվականի նոյեմբերի 24–ի գործողությունը վերադաս դատախազին

չի բողոքարկել: Այսինքն՝ դիմումատուի կողմից չի պահպանվել դատախազի գործողությունների դեմ բողոք ներկայացնելու օրենքով նախատեսված ընթացակարգը» (տե՛ս քրեական գործի նյութեր, էջ 64):

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերը փաստարկել է, որ ՀՀ հատուկ քննչական ծառայությունը և ՀՀ գլխավոր դատախազությունը, քրեական գործ հարուցելու վերաբերյալ իր դիմումին գրությամբ պատասխանելով, խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181–րդ, 185–րդ, 290–րդ հոդվածների, ՀՀ Սահմանադրության 18–19–րդ հոդվածների պահանջները:

Մասնավորապես, իր դիմումին գրությունով պատասխանելու հետևանքով ինքն ըստ էության գրկված է եղել քրեական գործ հարուցելու մերժելու մասին որոշումը բողոքարկելու իրավունքից:

9. Բողոքաբերը փաստարկել է նաև, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, որի արդյունքում խախտվել են նաև իր սահմանադրական իրավունքները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հունվարի 22–ի որոշումը և գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից ՄԳՌ–844 որոշումը, որով հակասահմանադրական է ճանաչվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290–րդ հոդվածի «...և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը, դատական պրակտիկայում դրան տրված՝ նաև «անգործությանը» վերագրվող բովանդակության մասով պարտավորեցնում է արդյոք Առաջին ատյանի դատարանին դատական վերահսկողության կարգով ըստ էության քննության առնել քրեական գործ հարուցելու պահանջը մերժելու վերաբերյալ դատախազի գրության դեմ դիմող Մ.Գ.Լորգյանի բողոքը:

11. Խնդրո առարկա հարցադրման կապակցությամբ իրավական դիրքորոշում Վճռաբեկ դատարանն արտահայտել է *Արևիկ Մողրովյանի* վերաբերյալ որոշմամբ, որի համաձայն՝ «(...) Մյասնիկ Հարութիկի Ավետիսյանի վերաբերյալ 2009 թվականի հունիսի 29–ի ԵԿԳ/0019/11/09 որոշմամբ ձևավորած դիրքորոշումը (...) պետք է վերանայել և համապատասխանեցնել ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290–րդ հոդվածի 1–ին մասի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշման հետ:

(...) Վճռաբեկ դատարանը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 7–ի ՄԳՌ–844 որոշմամբ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290–րդ հոդվածի 1–ին մասի միասնական կիրառության հետ կապ-

ված անհրաժեշտ է համարում ձևավորել հետևյալ մոտեցումը՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում դատական բողոքարկման առարկա անմիջականորեն կարող են հանդիսանալ քրեական հետապնդման մարմինների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները, եթե դրանք չեն բավարարվել դատախազի կողմից՝ անկախ նրանից, թե բողոքարկման արդյունքում դատախազի կողմից ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված ակտեր են կայացվել, թե դրսևորվել է անգործություն» (տե՛ս Արևիկ Մողրովյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԿԳ/0076/11/09 որոշման 14-րդ և 15-րդ կետերը):

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Մ.Գևորգյանը Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարաններում խնդրել է ճանաչել ՀՀ գլխավոր դատախազության գրությունը որպես անգործություն, ինչպես նաև պարտավորեցնել ՀՀ գլխավոր դատախազությանը քննել իր բողոքները և իրեն պատասխանել որոշումով: Սակայն ինչպես Առաջին ատյանի դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը Մ.Գևորգյանի բողոքները մերժել են՝ դիմողի կողմից դատախազի գործողությունների դեմ բողոք ներկայացնելու օրենքով նախատեսված ընթացակարգը չպահպանելու պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 4-րդ և 7-րդ կետերը):

13. Հիմք ընդունելով սույն որոշման 11-րդ կետում և համապատասխանաբար նաև *Ա.Մողրովյանի* որոշման մեջ շարադրված դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանը պարտավոր է դատական վերահսկողության կարգով ըստ էության քննության առնել քրեական գործ հարուցելու պահանջը մերժելու վերաբերյալ դատախազի գրության դեմ դիմող Մ.Գևորգյանի բողոքը:

Հետևաբար, սույն գործով դիմող Մամիկոն Ռուբիկի Գևորգյանի բողոքը մերժելու վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 11-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հունվարի 22-ի որոշումներն անհրաժեշտ է բեկանել և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի միատեսակ կիրառության հետ կապված ձևավորվել է նոր իրավական դիրքորոշում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դիմող Մամիկոն Ռուբիկի Գևորգյանի բողոքը մերժելու վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվա-

կանի ղեկտեմբերի 11-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հունվարի 22-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*



65.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ Ե-ԶԲԴ/0350/01/08

Ե-ԶԲԴ/0350/01/08

նախագահող դատավոր՝ Մ.Ռեհանյան  
դատավորներ՝ Ա.Գանիեյան, Մ.Արղամանյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՄԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԳԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
*մասնակցությամբ պաշտպան* Կ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

2010 թվականի մայիսի 4-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Հարություն Ապրեզգարի Շուքուրյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ, 10-րդ կետերով, 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 2010 թվականի հունվարի 20-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2008 թվականի փետրվարի 16-ին հարուցվել է թիվ 14104408 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ կետերի և 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

2008 թվականի փետրվարի 18-ի որոշմամբ Հարություն Շուքուրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ կետերով և 235-րդ հոդվածի 1-ին մասով:

2008 թվականի հունիսի 26-ի որոշմամբ Հ.Շուքուրյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել է, լրացվել, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ, 10-րդ կետերով, 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 235-րդ հոդվածի 1-ին մասով և 271-րդ հոդվածի 1-ին մասով:

2008 թվականի հուլիսի 11-ի որոշմամբ Հ.Շուքուրյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ, 10-րդ կետերով, 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով:

2008 թվականի հուլիսի 15-ին Հ.Շուքուրյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի քրեական դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հունվարի 22-ի դատավճռով Հ.Շուքուրյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ, 10-րդ կետերով, 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 235-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ, 10-րդ կետերով՝ ազատազրկում՝ 8 /ութ/ տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկում՝ 1 /մեկ/ տարի ժամկետով, 235-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում՝ 1 /մեկ/ տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կանոններով նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Հ.Շուքուրյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 9 /ինը/ տարի ժամկետով:

Նույն դատավճռով դատապարտվել են նաև Ս.Գրիգորյանը և Վ.Գալստյանը, որոնց մասով դատական ակտը չի բողոքարկվել:

3. Ամբաստանյալ Հ.Շուքուրյանի պաշտպան Կ.Ավանեսյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննելով գործը՝ Վերաքննիչ դատարանը 2009 թվականի մայիսի 20-ին որոշում է կայացրել Հ.Շուքուրյանի նկատմամբ հատուկ հսկողության հոգեբուժական բաժանմունքի պայմաններում հարկադրական բուժում նշանակելու և քրեական գործի վարույթը կասեցնելու մասին՝ մինչև Հ.Շուքուրյանի առողջանալը:

Վերաքննիչ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 1-ի որոշմամբ Հ.Շուքուրյանի վերաբերյալ քրեական գործի վարույթը վերսկսվել է:

Վերաքննիչ դատարանը 2010 թվականի հունվարի 20-ի որոշմամբ Հ.Շուքուրյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ, 10-րդ կետերով, 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հունվարի 22-ի դատավճիռը բեկանել է և նրա նկատմամբ նշանակել է հարկադրական բուժում՝ ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքի պայմաններում:

4. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հունվարի 20–ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանը:

2010 թվականի մարտի 30–ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել ամբաստանյալ Հ.Շուքուրյանի պաշտպան Կ.Ավանեսյանը, որը, գտնելով, որ վճռաբեկ բողոքն անհիմն է, խնդրել է այն վերադարձնել:

**Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. Հ.Շուքուրյանը մեղադրվել է այն բանի համար, որ նա, դիտավորությամբ ուրիշի առողջությանը ծանր մարմնական վնասվածքներ հասցնելու և խուլիզանություններ կատարելու համար նախկինում դատապարտված լինելով ազատագրկման, դատվածությունները չմարված, կատարել է նոր, դիտավորյալ հանցագործություններ, այն է՝ 2008 թվականի փետրվարի 15–ին՝ ժամը 23<sup>30</sup>–ի սահմաններում, Երևանի Վաղարշյան փողոցի վրա գտնվող «Պարտեզ» խանութ–սրահի մոտակայքում, ներկա լինելով Վ.Գալստյանի և Մ.Գրիգորյանի միջև գումարի պարտք ու պահանջի շուրջ ծագած վիճաբանությանը և, առանց բժշկի թույլտվության, գտնվելով կանաքիսի խմբին պատկանող թմրամիջոցի ազդեցության տակ, սպորինաբար իր մոտ կրած թիվ 1299179 գործարանային համարով «ԱԿ–74» տիպի ինքնաձիգից, խուլիզանական դրդումներով և շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, ինչպես նաև երկու և ավելի անձանց կյանքից զրկելու և ուրիշի գույքը հանրավտանգ եղանակով վնասելու դիտավորությամբ, կրակահերթ է արձակել ընթացքի մեջ գտնվող «Օպել–Վեկտրա» մակնիշի 09 ՍՕ 531 պետհամարանիշի ավտոմեքենայի վրա՝ վարորդ Լևոն Սարգսյանի, ուղևորներ Շավարշ Խոցանյանի և Արթուր Աբրահամյանի, ինչպես նաև այդ պահին նշված վայրում գտնվող հետիոտներ Սամվել Մովսիսյանի և Վռամ Գալստյանի ուղղությամբ՝ փորձելով սպանել նրանց, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով հանցանքն ավարտին չի հասցրել: Կրակահերթի հետևանքով բացի ավտովարորդ Լ.Սարգսյանից և հետիոտն Վ.Գալստյանից, Շ.Խոցանյանի առողջությանը պատճառվել է ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող, Ա.Աբրահամյանի և Մ.Մովսիսյանի առողջությանը՝ միջին ծանրության վնաս՝ առողջության տևական քայքայումով, իսկ Լ.Սարգսյանին պատկանող վերը նշված ավտոմեքենային պատճառվել է զգալի չափի՝ 215.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

6. Վերաքննիչ դատարանի 2009 թվականի մարտի 25–ի որոշմամբ Հ.Շուքուրյանի հոգեկան վիճակը պարզելու նպատակով նշանակվել է ստացիոնար դատահոգեբուժական փորձաքննություն: 2009 թվականի մայիսի 12–ին ստացվել է ստացիոնար դատահոգեբուժական փորձաքննության թիվ 50 եզրակացությունն այն մասին, որ «Հարություն Ապրեզգարի Շուքուրյանի մոտ հայտնաբերվում է «Օրգանական աֆեկտիվ խանգարում /դեպրեսիվ տիպի/ կոգնիտիվ անբավարարությամբ»: (...) Իրավա-

խախտումը կատարելիս, նա կարող էր գիտակցել իր գործողությունների վտանգավորությունը և ղեկավարել դրանք: Ներկայումս նրա մոտ առկա «Օրգանական աֆեկտիվ խանգարումը /դեպրեսիվ տիպի/ կոգնիտիվ անբավարարությամբ» գրկում է նրան իր գործողությունների վտանգավորությունը գիտակցելու և դրանք ղեկավարելու հնարավորությունից: Իրեն մեղսագրվող արարքի նկատմամբ Հարություն Շուքուրյանին հարկ է ճանաչել մեղսունակ: Սակայն իր ներկա հոգեկան վիճակով նա չի կարող մասնակցել դատաքննչական գործողություններին, գիտակցել իր գործողությունների վտանգավորությունը և ղեկավարել դրանք, կարիք ունի հարկադրական բուժման հատուկ հսկողության հոգեբուժական բաժանմունքի պայմաններում մինչ վերը նշված հիվանդագին խանգարված վիճակից դուրս գալը»:

Նշված եզրակացության հիման վրա Վերաքննիչ դատարանը 2009 թվականի մայիսի 20–ին որոշում է կայացրել ամբաստանյալ Հ.Շուքուրյանի նկատմամբ հատուկ հսկողության հոգեբուժական բաժանմունքի պայմաններում հարկադրական բուժում նշանակելու մասին: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքը թողնվել է անփոփոխ: Քրեական գործի վարույթը կասեցվել է մինչև Հ.Շուքուրյանի առողջանալը:

7. 2009 թվականի նոյեմբերի 30–ին ի լրումն ստացիոնար դատահոգեբուժական փորձաքննության թիվ 50/09 եզրակացության Վերաքննիչ դատարանում ստացվել է 18.11.09թ. եզրակացությունն այն մասին, որ «փորձագիտական հանձնաժողովը եզրակացնում է, որ Հարություն Շուքուրյանի մոտ հայտնաբերվում է «Օրգանական /դեպրեսիվ տիպի/ աֆեկտիվ խանգարում կոգնիտիվ անբավարարությամբ»: Չնայած ստացած երկարատև ինտենսիվ բուժման, վերը նշված հոգեախտաբանական երևույթները Հարություն Շուքուրյանի մոտ շարունակվում են: Նշված հոգեախտաբանական երևույթների ձգձգվածությունը, բուժման նվազ էֆեկտիվությունը թույլ են տալիս նշված հոգեկան հիվանդությունը հավասարեցնել խրոնիկական հոգեկան հիվանդության, որը գրկում է ներկայումս նրան իր գործողությունների վտանգավորությունը գիտակցելու և դրանք ղեկավարելու հնարավորությունից: Հարություն Շուքուրյանն իր ներկա հոգեկան վիճակով սոցիալապես վտանգավոր է ինչպես իր անձի, այնպես էլ շրջապատի համար, չի կարող կանգնել քննության և դատարանի առջև: Ուստի, Հարություն Շուքուրյանին, որպես խրոնիկական հոգեկան հիվանդ, խորհուրդ է տրվում հարկադրական բուժում ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքի պայմաններում»:

8. Վերաքննիչ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 1–ի որոշմամբ քրեական գործի վարույթը վերսկսվել է, իսկ 2010 թվականի հունվարի 20–ին Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել. «Հարություն Ապրեզգարի Շուքուրյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 34–104–րդ հոդվածի 2–րդ մասի 1–ին, 6–րդ և 10–րդ կետերով, 185–րդ հոդվածի 2–րդ մասի 1–ին կետով և 235–րդ հոդվածի 1–ին մասով Երևանի քրեական դատարանի 2009թ. հունվարի 22–ի դատավճիռը բեկանել: Հարություն Ապրեզգարի Շուքուրյանի նկատմամբ նշանակել հարկադրական բուժում ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքի պայմաններում»:

9. Վերաքննիչ դատարանը 2010 թվականի հունվարի 20–ի որոշումը կայացնելիս վկայակոչել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 432–րդ հոդվածը և ղեկավարվել դրանով:

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

10. Բողոք բերած անձը փաստարկել է, որ առկա են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հիմքերը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել առերևույթ դատական սխալ, որն առաջացրել է ծանր հետևանքներ:

11. Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է, անօրինական, կայացվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ, 382-րդ, 385-րդ, 386-րդ, 395-րդ, 427-րդ, 432-րդ, 466-րդ հոդվածների պահանջների խախտումներով:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը նշում է, որ Վերաքննիչ դատարանը, խախտելով օրենքի պահանջները, դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից՝ բավարարել է դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին պաշտպանական կողմի միջնորդությունն այն դեպքում, երբ այդ միջնորդությունը չի բխել վերաքննիչ բողոքի՝ Հ.Շուքուրյանին արդարացնելու կամ արարքը վերադարձնելու պահանջից: Այնուհետև, դատարանն անտեսել է ինչպես դատահոգեբուժական փորձաքննությունների երկու եզրակացությունների միջև առկա էական հակասությունները, այնպես էլ՝ դրանց հակասությունը գործող օրենսդրությանը:

12. Բողոք բերած անձը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանը բեկանել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և նշանակել հարկադիր բուժում՝ դուրս գալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածով նախատեսված իր լիազորությունների շրջանակից: Նրա պնդմամբ Վերաքննիչ դատարանը չի քննարկել Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, վերաքննիչ բողոքի հիմնավորումներն ու պահանջը, չի անդրադարձել վերաքննիչ վերանայման առարկային, չի նշել, թե բողոքարկված դատական ակտն ինչ սխալ է պարունակում, որի պատճառով ենթակա է բեկանման:

13. Բողոքաբերը փաստարկել է, որ իր որոշումը հիմնավորելու համար Վերաքննիչ դատարանը վկայակոչել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 432-րդ հոդվածը՝ անտեսելով, որ այդ հոդվածը ենթակա է կիրառման օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի դեպքում, մինչդեռ Հ.Շուքուրյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի դատավճիռն օրինական ուժի մեջ չի մտել:

14. Ըստ բողոք բերած անձի՝ անհասկանալի է, թե ինչու է Վերաքննիչ դատարանը կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ գլխի 466-րդ հոդվածը, որի համաձայն՝ տվյալ կատեգորիայի գործերով մինչդատական նախապատրաստումը կատարվում է նախաքննության ձևով այն դեպքում, երբ Վերաքննիչ դատարանի դատական ակտը կայացվել է դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձի նկատմամբ, և այդ հարցով նախաքննության ձևով մինչդատական նախապատրաստում չի իրականացվել:

15. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է ամբողջությամբ բեկանել Հ.Շուքուրյանի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց նշանակելու

մասին Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հունվարի 20-ի որոշումը և քրեական գործն ուղարկել նույն դատարան՝ Հ.Շուքուրյանի պաշտպան Կ.Ավանեսյանի վերաքննիչ բողոքն օրենքով սահմանված կարգով քննելու համար:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

*1. Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու մասին Վերաքննիչ դատարանի որոշման իրավաչափությունը.*

16. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանն իրավասո՞ւ էր արդյոք Հ.Շուքուրյանի վերաբերյալ կայացված Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելով հանդերձ նրա նկատմամբ հարկադրական բուժում նշանակելու մասին որոշում կայացնել՝ առանց անդրադառնալու առաջադրված մեղադրանքներում նրա մեղավորության, նրան քրեական պատասխանատվության ենթարկելու և նրա նկատմամբ պատիժ նշանակելու հարցերին:

17. ՀՀ քրեական օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, ով հանրության համար վտանգավոր արարք կատարելու պահին գտնվել է անմեղսունակության վիճակում, այսինքն՝ քրոնիկ հոգեկան հիվանդության, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման, տկարամտության կամ հոգեկան այլ հիվանդագին վիճակի հետևանքով չէր կարող գիտակցել իր գործողության (անգործության) վտանգավորությունը կամ ղեկավարել դա:

2. Հանրության համար վտանգավոր արարքն անմեղսունակության վիճակում կատարած անձի նկատմամբ դատարանը կարող է նշանակել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ:

3. Պատժի ենթակա չէ նաև այն անձը, ով հանցանքը կատարել է մեղսունակության վիճակում, սակայն մինչև դատարանի կողմից դատավճիռ կայացնելը հիվանդացել է հոգեկան հիվանդությամբ, որը զրկել է նրան իր գործողության (անգործության) փաստացի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից: Այդպիսի անձի նկատմամբ դատարանի նշանակմամբ կարող են կիրառվել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ, իսկ առողջանալուց հետո նա կարող է ենթարկվել պատժի»:

18. Շարադրված հոդվածի վերլուծությունից երևում է, որ անձի մեղսունակությունն օրենսդիրը կապում է նրա կողմից իր գործողության (անգործության) փաստացի բնույթն ու նշանակությունը, դրա վտանգավորությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու ունակության հետ: Ընդ որում, օրենսդիրը հստակ տարանջատում է երկու խումբ անձանց՝

1) հանրության համար վտանգավոր արարք կատարելու պահին անմեղսունակության վիճակում գտնվող անձինք, ովքեր քրոնիկ հոգեկան հիվանդության, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման, տկարամտության կամ հոգեկան այլ հիվանդագին վիճակի հետևանքով չէին կարող գիտակցել իրենց գործողությունների (անգործության) վտանգավորությունը կամ ղեկավարել դրանք:

2) անձինք, ովքեր հանցանքը կատարել են մեղսունակության վիճակում, սակայն մինչև դատարանի կողմից դատավճիռ կայացնելը հիվանդացել են հոգեկան հիվան-

դուրյամբ, որը գրկել է նրանց իրենց գործողությունների (անգործության) փաստացի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա դեկավարելու հնարավորությունից:

Վերը նշված անձանց նկատմամբ կիրառվում են տարբեր իրավական հետևանքների՝ եթե առաջին դեպքում անձինք ենթակա չեն քրեական պատասխանատվության, ապա երկրորդ դեպքում անձինք չեն ազատվում քրեական պատասխանատվությունից: Նրանց նկատմամբ դատարանի նշանակմամբ կարող են կիրառվել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ, իսկ առողջանալուց հետո նրանք կարող են ենթարկվել պատժի, եթե չեն լրացել համապատասխան վաղեմության ժամկետները:

19. Սույն որոշման նախորդ կետում նշված անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթները ևս տարբեր են: Այսպես, անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթը կարգավորված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ գլխում առկա իրավադրույթներով, իսկ դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ իրականացվող վարույթի առանձնահատկությունները սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ գլխում:

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ գլխում գետեղված՝ 471-րդ հոդվածի համաձայն՝ «1. Գործը դատարանում քննելիս դատախազի և պաշտպանի մասնակցությունը պարտադիր է: Դատական նիստին կարող է հրավիրվել փորձագետ:

2. Դատաքննությունն սկսվում է քննիչի որոշումը հրապարակելով, որից հետո դատարանն անցնում է ապացույցների հետազոտմանը:

3. Դատաքննությունն ավարտվելիս ճառով հանդես է գալիս դատախազը, լսվում է պաշտպանի կարծիքը:

4. Այնուհետև դատարանը որոշում կայացնելու համար հեռանում է խորհրդակցական սենյակ, որտեղ պետք է լուծվեն հետևյալ հարցերը՝

- 1) կատարվել է արդյոք արարքը.
- 2) արարքը պարունակում է արդյոք հանցակազմ.
- 3) այդ արարքը կատարել է արդյոք մեղադրյալը.
- 4) հիվանդացել է արդյոք անձը հոգեկան հիվանդությամբ, ինչպիսին է դրա բնույթը, երբ է սկսվել հիվանդագին վիճակը.
- 5) կարիք ունի արդյոք անձը բժշկական բնույթի հարկադրական միջոցների կիրառման և ինչպիսի միջոցների:

5. Եթե հոգեկան հիվանդությունը վրա է հասել դատական քննության փուլում, դատարանը պետք է լուծի նաև քրեական գործով վարույթը կասեցնելու մասին հարցը»:

Շարադրված դրույթի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացություն անել այն մասին, որ դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վերաբերյալ գործի դատաքննության ավարտից հետո դատարանի կողմից կայացվող որոշման մեջ պետք է արտացոլվեն անձի կողմից արարքի կատարման, դրանում հանցակազմի առկայության և այդ արարքը մեղադրյալի կողմից կատարված լինելու վերաբերյալ հարցերի պատասխանները:

21. Հիմք ընդունելով սույն որոշման 18-րդ կետում առկա հիմնավորումն այն մասին, որ դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ

դատարանի նշանակմամբ կարող են կիրառվել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ, իսկ առողջանալուց հետո նրանք կարող են ենթարկվել պատժի, եթե չեն լրացել համապատասխան վաղեմության ժամկետները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 471-րդ հոդվածով սահմանված կարգով որոշում կայացնելիս դատարանը պետք է քննարկի նաև անձին քրեական պատասխանատվության ենթարկելու, նրա նկատմամբ պատիժ նշանակելու հարցերը:

Բացի այդ, հաշվի առնելով այն, որ անձի մոտ առկա հոգեկան հիվանդության մասին փորձագետի եզրակացությունը ենթակա է գնահատման գործի բոլոր հանգամանքների համակցության մեջ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 471-րդ հոդվածի 5-րդ մասը դատարանին պարտավորեցնում է մնան բնույթի յուրաքանչյուր գործով քննարկման առարկա դարձնել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին հարցը՝ հաշվի առնելով անձի մոտ արձանագրված հիվանդության բնույթը, դրա ընթացքը և անձի հնարավոր առողջացումը:

22. Սույն գործի նյութերից երևում է, որ Հ.Շուքուրյանը նրան մեղսագրված հանցավոր արարքները կատարելու պահին գտնվել է մեղսունակության վիճակում (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Հ.Շուքուրյանի մոտ առկա հոգեկան հիվանդությունը, որը գրկել է նրան իր գործողությունների վտանգավորությունը գիտակցելու և դրանք ղեկավարելու հնարավորությունից, ի հայտ է եկել Վերաքննիչ դատարանի դատաքննության ընթացքում, երբ արդեն առկա է եղել նրա նկատմամբ կայացված, սակայն օրինական ուժի մեջ չմտած մեղադրական դատավճիռ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր 2010 թվականի հունվարի 20-ի որոշմամբ բեկանել է Հ.Շուքուրյանի նկատմամբ Առաջին աստիճանի դատարանի 2009 թվականի հունվարի 22-ին կայացված մեղադրական դատավճիռը և Հ.Շուքուրյանի նկատմամբ նշանակել է հարկադրական բուժում ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքի պայմաններում (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը): Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման ուսումնասիրությունից երևում է, որ վերջինս որևէ վերաբերմունք չի ցուցաբերել Հ.Շուքուրյանին առաջադրված մեղադրանքներին, որևէ որոշում չի կայացրել, որից հնարավոր կլիներ հետևության հանգել առաջադրված մեղադրանքներում Հ.Շուքուրյանի մեղավորության կամ անմեղության մասին: Վերաքննիչ դատարանի որոշումից պարզ չէ նաև, թե ինչպես են լուծվել նրան քրեական պատասխանատվության ենթարկելու, պատիժ նշանակելու հարցերը:

23. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս ղեկավարվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 432-րդ հոդվածի պահանջներով (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Մինչդեռ «Գատական որոշումների կատարումը» վերտառությունը կրող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ գլխում գետեղված տվյալ հոդվածը սահմանում է, որ՝

«1. Այն դեպքում, երբ ազատագրկման դատապարտված անձը պատիժը կրելու ժամանակ հիվանդացել է խրոնիկ հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ, որն արգելք է հանդիսանում պատիժը կրելուն, դատարանը, քրեական պատիժն իրականաց-



նող հիմնարկի վարչակազմի միջնորդագրով, որը պետք է հիմնված լինի բժշկական հանձնաժողովի եզրակացության վրա, իրավունք ունի որոշում կայացնել պատիժը հետագայում կրելուց նրան ազատելու մասին:

2. Պատիժը հետագայում կրելու խրոնիկ հոգեկան հիվանդությամբ տառապող դատապարտյալին ազատելիս դատարանն իրավունք ունի նրա նկատմամբ կիրառել բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կամ նրան խնամակալության համար հանձնել առողջապահության մարմիններին կամ ազգականներին:

(...)»:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ իրավանորմը կարգավորում է այն դեպքերը, երբ դատական որոշման ի կատար անելու ընթացքում՝ ազատագրված դատապարտված անձը պատիժը կրելու ժամանակ հիվանդացել է խրոնիկ հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ, որն արգելք է հանդիսանում պատիժը կրելուն: Հետևապես, նշված նորմը սույն գործի շրջանակներում կիրառելի չէ:

24. Սույն որոշման 22-րդ կետում շարադրված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելով սույն որոշման 17–21-րդ կետերում առկա իրավական հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հ.Շուքուրյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումն իրավաչափ չէ, քանի որ Վերաքննիչ դատարանն իրավասու չէր Հ.Շուքուրյանի նկատմամբ հարկադրական բուժում նշանակելու մասին որոշում կայացնել՝ առանց անդրադառնալու առաջադրված մեղադրանքներում նրա մեղավորության, նրան քրեական պատասխանատվության ենթարկելու և նրա նկատմամբ պատիժ նշանակելու հարցերին:

25. Հիմք ընդունելով վերոշարադրյալ դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից կայացվել է ՀՀ քրեական օրենսգրքի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներից չբխող, չհիմնավորված և չպատճառաբանված որոշում, որից ըստ էության պարզ չէ, թե ինչ իրավական կարգավիճակ է տրվել ամբաստանյալ Հ.Շուքուրյանին:

## *II. Հ.Շուքուրյանի նկատմամբ նշանակված հարկադիր բուժման պայմանները*

26. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Հ.Շուքուրյանի նկատմամբ ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքի պայմաններում հարկադրական բուժում նշանակելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը:

27. ՀՀ քրեական օրենսգրքի 100-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հոգեբուժական կազմակերպությունների ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում դատարանի որոշմամբ հարկադիր բուժում կարող է նշանակվել, եթե անձի հոգեկան խանգարման վիճակը պահանջում է բուժման, խնամքի և հսկողության այնպիսի պայմաններ, որոնք կարող են իրականացվել միայն հիվանդանոցային ձևով:

2. Հոգեբուժական հիվանդանոցի հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում դատարանի որոշմամբ հարկադիր բուժում կարող է նշանակվել այն անձի նկատմամբ, որը հոգեկան վիճակով վտանգավոր է իր և այլ անձանց համար և պահանջում է մշտական հսկողություն»:

28. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ստացիոնար դատահոգեբուժական փորձաքննության 2009 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 50/09 եզրակացությամբ սահմանվել է, որ Հ.Շուքուրյանն իր ներկա հոգեկան վիճակով սոցիալապես վտանգավոր է ինչպես իր անձի, այնպես էլ շրջապատի համար, չի կարող կանգնել քննության և դատարանի առջև:

Չնայած դրան, փորձագետները խորհուրդ են տվել Հ.Շուքուրյանի հարկադրական բուժումն իրականացնել ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքի պայմաններում (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

29. Հիմք ընդունելով սույն որոշման 27-րդ կետում շարադրված օրենսդրական կարգավորումը, ինչպես նաև 25-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, անտեսելով ՀՀ քրեական օրենսդրության 100-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, մասնավորապես այն, որ իր և այլ անձանց համար հոգեկան վիճակով վտանգավոր և մշտական հսկողության կարիք ունեցող անձի նկատմամբ հարկադիր բուժում կարող է նշանակվել հոգեբուժական հիվանդանոցի հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում, Հ.Շուքուրյանի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց նշանակելով հանդերձ, սահմանել է որ Հ.Շուքուրյանի նկատմամբ հարկադրական բուժում պետք է իրականացվի ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքի պայմաններում (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ փորձագետները խորհուրդ են տվել Հ.Շուքուրյանի հարկադրական բուժումն իրականացնել ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքի պայմաններում, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հոգեբուժական բաժանմունքի տեսակի ընտրության հարցում փորձագետների առաջարկությունները կրում են խորհրդատվական բնույթ, կարող են հաշվի առնվել, սակայն դատարանի համար պարտադիր չեն:

30. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հ.Շուքուրյանի նկատմամբ հարկադրական բուժումն ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքի պայմաններում նշանակելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումն իրավաչափ չէ, այն է՝ հոգեբուժական բաժանմունքի տեսակը որոշելու հարցում Վերաքննիչ դատարանը թույլ է տվել քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում՝ կիրառել է ՀՀ քրեական օրենսգրքի 100-րդ հոդվածի 1-ին մասը, որը ենթակա չէր կիրառման, և չի կիրառել նույն հոդվածի 2-րդ մասը, որը ենթակա էր կիրառման:

31. Անդրադառնալով բողոքաբերի այն փաստարկին, որ Վերաքննիչ դատարանը, խախտելով օրենքի պահանջները, դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից՝ քավարարել է դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին պաշտպանական կողմի միջնորդությունն այն դեպքում, երբ այդ միջնորդությունը չի բխել վերաքննիչ բողոքի՝ Հ.Շուքուրյանին արդարացնելու կամ արարքը վերադարձնելու պահանջից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն հիմնավորված չէ, քանի որ փորձաքննություն նշանակելու իրավասությամբ Վերաքննիչ դատարանն օժտված է և տվյալ պարագայում փորձաքննություն նշանակելով՝ Վերաքննիչ դատարանը քրեադատավարական օրենքի խախտում թույլ չի տվել:

Անդրադառնալով տարբեր փորձաքննությունների միջև առկա հակասությունների մասին բողոքի փաստարկներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վե-

րաքննիչ դատարանը 2009 թվականի մարտի 25-ի որոշմամբ Հ.Շուքուրյանի հոգեկան վիճակը պարզելու նպատակով նշանակել է ստացիոնար դատահոգեբուժական փորձաքննություն ու դրա արդյունքներով 2009 թվականի մայիսի 12-ին ստացել է թիվ 50 եզրակացությունը: Այդ եզրակացության հիման վրա 2009 թվականի մայիսի 20-ին կայացրել է Հ.Շուքուրյանի նկատմամբ հատուկ հսկողության հոգեբուժական բաժանմունքի պայմաններում հարկադրական բուժում նշանակելու և քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշում, որն օրենքով սահմանված կարգով չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ: Հետևաբար, այդ որոշման համար հիմք հանդիսացող փորձաքննության հավաստիությանը տվյալ բողոքի շրջանակներում հնարավոր չէ անդրադառնալ:

32. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները, որոնք հանգեցրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող, չհիմնավորված որոշման կայացմանը և ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ, 406-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք են: Ուստի վճռաբեկ բողոքը պետք է բավարարել՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա Հ.Շուքուրյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հունվարի 20-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

33. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Հարություն Ապրեզգարի Շուքուրյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ, 10-րդ կետերով, 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի քրեական դատարանի 2009 թվականի հունվարի 22-ի դատավճիռը բեկանելու և Հ.Շուքուրյանի նկատմամբ ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքի պայմաններում հարկադրական բուժում նշանակելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հունվարի 20-ի որոշումն ամբողջությամբ բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

66.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՍՍՈ- գերագույն դատարանի քրեական  
գործերի դատական կոլեգիայի  
դատավճիռ 273/9821-42

ՎԲ-02/10

Հայաստանի Հանրապետության վճռարեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռարեկ դատարան)

*նախագահությամբ՝*

Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝*

Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ  
մասնակցությամբ պաշտպան*

Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Կ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

2010 թվականի մայիսի 4-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Մակիչ Խաչատուրի /Խաչատուրի/ Առաքելյանի վերաբերյալ ՀՍՍՈ- 1927 թվականի քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՍՍՈ- գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1942 թվականի սեպտեմբերի 18-ի դատավճռի դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի վճռարեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 1942 թվականի հունվարի 14-ին որոշումներ են կայացվել ՀՍՍՈ- 1927 թվականի քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ կասկածվող Մակիչ Առաքելյանին ձերբակալելու և նրա նկատմամբ որպես խափանման միջոց կալանք կիրառելու մասին:

1942 թվականի հունվարի 31-ին Մ.Առաքելյանը կալանավորվել է:

1942 թվականի փետրվարի 8-ի որոշմամբ Մ.Առաքելյանին մեղադրանք է առաջադրվել ՀՍՍՌ 1927 թվականի քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով:

1942 թվականի հուլիսի 5-ին կազմվել է մեղադրական եզրակացություն, և գործն ուղարկվել է դատարան՝ ըստ ընդդատության:

2. ՀՍՍՌ գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1942 թվականի սեպտեմբերի 18-ի դատավճռով Մակիչ Խաչատուրի /Խաչատրի/ Առաքելյանը մեղավոր է ճանաչվել ՀՍՍՌ 1927 թվականի քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 /վեց/ տարի ժամկետով՝ 3 /երեք/ տարի ժամկետով ընտրական իրավունքի սահմանափակմամբ, անձնական գույքի բռնագրավմամբ:

3. ՀՍՍՌ գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1942 թվականի սեպտեմբերի 18-ի դատավճռի դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանը:

2010 թվականի ապրիլի 10-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով (դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որն առաջացրել է ծանր հետևանքներ):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Գործի փաստական հանգամանքները և Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

4. Ըստ ՀՍՍՌ գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի դատավճռի՝ Մ.Առաքելյանը դատապարտվել է այն արարքի համար, որ «ունենալով կուլակային ծագում և նրա բարեկամները կալանավորված լինելով որպես ժողովրդի թշնամիներ, տրամադրված է եղել հակասովետականորեն և նրա այդ հակասովետական տրամադրություններն արտահայտել է այն ժամանակ, երբ գյուղում անցկացրել են կարմիր բանակին տաք հագուստով օգնելու կամպանիա, նա հակասովետական, հակառևոլյուցիոն տրամադրություններ է հայտնել սովետական իշխանության և նրա վարած քաղաքականության մասին՝ մթերումների կապակցությամբ»:

5. Մ.Առաքելյանի մեղադրանքի հիմքում դրվել են այն փաստական տվյալները, որ նա ունեցել է կուլակային ծագում, և նրա ազգականները կալանավորված են եղել որպես ժողովրդի թշնամիներ:

6. ՀՍՍՌ գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան Մ.Առաքելյանի մեղքն ապացուցված է համարել «գործի տվյալներով, վկաների ցուցմունքներով»:

7. Մ.Առաքելյանն առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել՝ նշելով, որ գործով հարցաքննված վկաներն իրեն զրպարտում են:

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոք բերած անձը փաստարկել է, որ առկա են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի

1-ին և 3-րդ կետերով նախատեսված հիմքերը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, ինչպես նաև բողոքարկվող դատական ակտը ծանր հետևանքներ է առաջացրել Մ.Առաքելյանի համար:

Համաձայն բողոքի՝ դատավճռի բովանդակությունից հետևում է, որ Մ.Առաքելյանի մեղադրանքի հիմքում դրվել է այն հանգամանքը, որ վերջինս ունեցել է կուլակային ծագում և նրա բարեկամները կալանավորված են եղել որպես ժողովրդի թշնամիներ, մինչդեռ, ըստ բողոք բերած անձի՝ նշված հանգամանքները չէին կարող դիտվել որպես նրա մեղքը հաստատող ապացույցներ և դրվել մեղադրանքի հիմքում: Բացի այդ, Մ.Առաքելյանի մեղադրանքի հիմքում դրվել են նաև վկաներ Պ.Կիրակոսյանի, Վ.Առուստամյանի և Ա.Թուխտարյանի ցուցմունքներն այն դեպքում, երբ գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ վկաները Մ.Առաքելյանի կողմից արտահայտած մտքերի վերաբերյալ տվել են իրարամերժ բովանդակություն ունեցող ցուցմունքներ:

Բացի այդ, Մ.Առաքելյանը գործի քննության ողջ ընթացքում երբևէ չի ընդունել առաջադրված մեղադրանքը՝ հայտնելով, որ վկաներն իրեն զրպարտում են, ինքն իրականում ընդամենը հայտնել է, որ իրենից պահանջում են այնպիսի նյութական արժեքներ, որոնք չունի:

Գործի նյութերի վերլուծության համատեքստում բողոքի հեղինակը փաստարկել է, որ գործի տվյալները բավարար չեն Մ.Առաքելյանի մեղադրանքը հաստատված համարելու համար, հետևաբար նրա գործողությունները հանցակազմ չեն պարունակում:

9. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Մ.Առաքելյանի վերաբերյալ ՀՍՍՌ- 1927 թվականի քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՍՍՌ- գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1942 թվականի սեպտեմբերի 18-ի դատավճիռը և գործի վարույթը կարճել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

### **Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ է արդյոք Մ.Առաքելյանի նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը և ապացուցվա՞ծ է արդյոք արարքը, որի մեջ մեղադրվել է Մ.Առաքելյանը:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Զրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանքն, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված՝ հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է սույն օրենսգրքով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հոգուտ մեղադրյալի կամ կասկածյալի»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները»:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ որպես ապացույց թույլատրվում են՝ կասկածյալի, մեղադրյալի, տուժողի, վկայի, ամբաստանյալի, դատապարտյալի ցուցմունքները, փորձագետի եզրակացությունը, իրեղեն ապացույցները, քննչական և դատական գործողությունների արձանագրությունները և այլ փաստաթղթերը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝

(...)

2) արարքի մեջ հանցակազմ չկա.

(...):»:

Վերոգրյալ հոդվածների բովանդակությունից հետևում է, որ քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքը՝ անձի կողմից մեղավորությամբ կատարված, կոնկրետ հանցակազմի բոլոր հատկանիշները պարունակող և գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ հաստատված արարքի կատարման փաստն է: Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա:

12. Մ.Հովհաննիսյանի և Ա.Մարտիրոսյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանն արձանագրել է. «(...) քրեադատավարական օրենքով ապացույցներին և ապացուցման գործընթացին ներկայացվող պահանջները հետևյալն են.

ա) ապացույցները պետք է պարունակեն ոչ թե գնահատողական դատողություններ, կարծիքներ, այլ կոնկրետ փաստական տվյալներ որոշակի գործողությունների, իրադարձությունների վերաբերյալ,

բ) այդ փաստական տվյալները պետք է ձեռք բերվեն օրենքով նշված աղբյուրներից և վերաբերվեն կոնկրետ տվյալ գործին և ապացուցման առարկային,

գ) ապացույցները պետք է ձեռք բերվեն, ամրագրվեն և օգտագործվեն քրեադատավարական օրենքով սահմանված կարգով (...)» (տե՛ս Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵՔԲԳ/0632/01/08 որոշումը, կետ 13):

13. Սույն գործով Մ.Առաքելյանի նկատմամբ կայացված դատավճռից երևում է, որ նա դատապարտվել է կարմիր բանակին տաք հագուստով օգնելու միջոցառման

ժամանակ հակասովետական, հակահեղափոխական տրամադրություններ արտահայտելու համար՝ կապված մթերումների հետ: Մ.Առաքելյանի մեղադրանքի հիմքում դրվել են այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝ կուլակային ծագում ունենալը և նրա ազգականների՝ որպես ժողովրդի թշնամիներ կալանավորված լինելը (տե՛ս սույն որոշման 5–րդ կետը):

14. Սույն որոշման նախորդ կետում շարադրված փաստերի նկատմամբ կիրառելով սույն որոշման 12–րդ կետում մեջբերված իրավական հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104–րդ հոդվածի իմաստով վերը նշված՝ կուլակային ծագում ունենալու և ազգականների կալանավորված լինելու հանգամանքները կոնկրետ մեղադրանքին վերաբերելի չեն, ուստի Մ.Առաքելյանին մեղսագրված արարքի առկայությունը հաստատող կամ հերքող փաստական տվյալներ որևէ պարագայում հանդիսանալ չեն կարող: Հետևաբար, այդ փաստական տվյալները Մ.Առաքելյանի նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի հիմքում դրվել չէին կարող:

15. Բողոքարկված դատական ակտից երևում է նաև, որ Մ.Առաքելյանի մեղքն ապացուցված է համարվել «գործի տվյալներով, վկաների ցուցմունքներով» (տե՛ս սույն որոշման 6–րդ կետը):

Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Մ.Առաքելյանի նկատմամբ կայացված մեղադրական դատավճռում չեն նշվել այն ապացույցները, որոնցով դատական կոլեգիան հաստատված և ապացուցված է համարել Մ.Առաքելյանին մեղսագրված արարքը և նրա մեղավորությունն այդ արարքի մեջ: Չեն նշվել նաև ապացույցներ, որոնցով կհերքվեին Մ.Առաքելյանի կողմից մեղքը չընդունելու և նրան մեղսագրված արարքը չկատարելու վերաբերյալ նրա պատճառաբանությունները (տե՛ս սույն որոշման 7–րդ կետը): Դատական ակտում չի պարզաբանվել, թե գործի որ տվյալներով, որ վկաների և ինչ բովանդակություն ունեցող ցուցմունքներով է դատարանը հաստատված և ապացուցված համարել Մ.Առաքելյանին մեղսագրված հանցավոր արարքի կատարումը:

Գործի նյութերից երևում է, որ Մ.Առաքելյանի մեղքը հիմնավորող ապացույցներ չեն մատնանշվել նաև մեղադրական եզրակացության մեջ: Անգամ մեղադրական եզրակացության դատակոչի ցուցակում ընդգրկված վկաների՝ Պ.Կիրակոսյանի, Վ.Առուստամյանի և Ա.Թուխտարյանի ցուցմունքների բովանդակությունից երևում է, որ վկաները մեղադրանքի վերաբերյալ տվել են իրարամերժ ցուցմունքներ, որոնցով Մ.Առաքելյանին մեղսագրված արարքը մույնպես չի ապացուցվում:

Արդյունքում, Մ.Առաքելյանի նկատմամբ կայացվել է չհիմնավորված և չպատճառաբանված մեղադրական դատավճիռ, որը հիմնված է զուտ ենթադրությունների վրա:

16. Այսպիսով, հիմք ընդունելով սույն որոշման 11–15–րդ կետերում առկա դատողությունները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն արարքը, որի կատարման մեջ մեղադրվել է Մ.Առաքելյանը, ինչպես նաև նրան մեղսագրված հանցանքի կատարման մեջ նրա մեղավորությունը չեն ապացուցվել: Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35–րդ հոդվածի 1–ին մասի հիման վրա Մ.Առաքելյանի վերաբերյալ կայացված դատական ակտը ենթակա է բեկանման, քրեական գործի վարույթը՝ կարճման՝ նրա արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:



17. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Մ.Առաքելյանն անհիմն ենթարկվել է քրեական պատասխանատվության, այսինքն՝ սույն գործով թույլ է տրվել դատական սխալ, որը ծանր հետևանքներ է առաջացրել Մ.Առաքելյանի համար՝ նա դատապարտվել է տևական ժամկետով ազատագրկման (վեց տարի), սահմանափակվել է նրա ընտրական իրավունքը և բռնագրավվել է նրա անձնական գույքը:

18. «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ «Բռնադատված է համարվում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող նախկին ԽՍՀՄ այն քաղաքացին, քաղաքացիություն չունեցող անձը կամ օտարերկրյա քաղաքացին, որը խորհրդային կարգերի ժամանակաշրջանում (սկսած 1920 թվականի նոյեմբերի 29-ից) նախկին ԽՍՀՄ-ի տարածքում քաղաքական շարժառիթներով՝

ա) դատապարտվել է 1961 թվականի ՀՍՍՀ քրեական օրենսգրքի նախկին խմբագրությամբ 65, 67, 69, ինչպես նաև 206/1 հոդվածներով կամ 1927 թվականի ՀՍՍՌ- քրեական օրենսգրքի նույն բովանդակությամբ հոդվածներով կամ նախկին ԽՍՀՄ այլ հանրապետությունների քրեական օրենսգրքերի համապատասխան հոդվածներով, քաղաքական այլախոհությունը ճնշելու կամ սահմանափակելու նպատակ հետապնդող այլ հոդվածներով և հետագայում արդարացվել է.

(...))»

«Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքի լույսի ներքո վերլուծելով սույն որոշման 17-րդ կետում արձանագրված՝ ծանր հետևանքներ առաջացրած դատական սխալի վերաբերյալ դատողությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մաս): Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի բեկանումը պայմանավորված է «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքով անձին երաշխավորված իրավունքների իրացումն ապահովելու անհրաժեշտությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մակիչ Խաչատուրի /Խաչատրի/ Առաքելյանի վերաբերյալ ՀՍՍՌ- 1927 թվականի քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՍՍՌ- գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1942 թվականի սեպտեմբերի 18-ի դատավճիռը բեկանել, քրեական գործի վարույթը կարճել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն  
Դատավորներ՝ ստորագրություններ*

67.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության

ԵԱԲԴ/0120/01/09

վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵԱԲԴ/0120/01/09

նախագահող դատավոր՝ Ա.Հովհաննիսյան  
դատավորներ՝ Ե.Դարբինյան, Ս.Չիչոյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈԳՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2010 թվականի մայիսի 4-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով մեղադրողի վճռաբեկ բողոքը  
ամբաստանյալ Ռուբեն Հմայակի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենս-  
գրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվա-  
կանի փետրվարի 11-ի որոշման դեմ,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2009թ. հունիսի 30-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն  
քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկա-  
նիշներով հարուցվել է թիվ 09110209 քրեական գործը:

2. 2009թ. հուլիսի 1-ին Ռուբեն Խաչատրյանը ձերբակալվել է:

2009թ. հուլիսի 4-ին Ռ.Խաչատրյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

2009թ. օգոստոսի 31-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

3. Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն արագացված դատական քննության կիրառմամբ 2009թ. հոկտեմբերի 14-ի դատավճռով Ռ.Խաչատրյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել ազատազրկման 3 /երեք/ տարի ժամկետով:

4. Ռ.Խաչատրյանի պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2010թ. փետրվարի 11-ի որոշմամբ պատժի մասով փոփոխել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. հոկտեմբերի 14-ի դատավճիռը: Ռ.Խաչատրյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման 3 /երեք/ տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա Ռ.Խաչատրյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան 2 /երկու/ տարի ժամկետով:

5. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. փետրվարի 11-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ դատարանը 2010թ. ապրիլի 15-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ուղարկվել:

### **Գործի փաստական հանգամանքները.**

6. Ռուբեն Խաչատրյանը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել է հետևյալ արարքի համար. 2009թ հունիսի 30-ին՝ ժամը 15.00-ի սահմաններում, նկատելով, որ իր կողմից Ռուբինյանց 9 շենքի նկուղի միջանցք տեղափոխված նստարանը հանվել և դրվել է շենքի բակում, այդ կապակցությամբ վիճաբանել է նույն շենքի թիվ 16 բնակարանի բնակիչ Ավետիք Սարիբեկյանի հետ, որի ժամանակ ձեռքին եղած գողման սարքի էլեկտրոդի կտորով մեկ անգամ դիտավորությամբ հարվածել է վերջինիս կրծքավանդակի ձախ կեսին՝ նրա առողջությանը պատճառելով կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս:

### **Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքի հեղինակը նշել է, որ Ռ.Խաչատրյանի նկատմամբ պատիժ նշանակելիս ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը որպես քրեական պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ հաշվի է առել այն, որ նա ինքնակամ ներ-

կայացել է ոստիկանության բաժին, գղջացել է կատարածի համար, նախկինում դատված չի եղել, բնութագրվում է դրական, վերականգնել է պատճառված նյութական վնասը, հաշտվել է տուժողի հետ, դատարանը հաշվի է առել նաև քրեական պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքների բացակայությունը:

Վկայակոչելով Վճռաբեկ դատարանի 2007թ. նոյեմբերի 30-ի որոշումը՝ բողոքաբերը փաստարկել է, որ շարադրված հանգամանքները հաշվի առնելու արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն անտեսել է ամբաստանյալի կողմից կատարված հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, չի գնահատել նրա բացասական, ագրեսիվ վարքագիծը, մասնավորապես այն, որ ամբաստանյալ Ռ.Խաչատրյանն է վիճաբանության մեջ մտել տուժողի հետ, իր հետ նախապես բերված սուր ծայր ունեցող առարկայով՝ զոդման սարքի էլեկտրոդով, դիտավորությամբ հարվածել է վերջինիս կրծքավանդակին՝ նրա առողջությանը պատճառելով կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս, որից հետո որևէ կերպ չփորձելով օգնություն ցույց տալ իր ընկեր և հարևան տուժողին՝ դիմել է փախուստի:

8. Բողոքաբերը մշել է նաև, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը որպես Ռ.Խաչատրյանի քրեական պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք դիտել է Ռ.Խաչատրյանի նկատմամբ ազատագրկման հետ չկապված պատիժ նշանակելու տուժողի խնդրանքը: Մինչդեռ, ըստ նրա, դատարանի մնան մոտեցումն արդարացված չէ, քանի որ հանրային մեղադրանքի գործերով տուժողի կողմից պատժաչափի և պատժատեսակի վերաբերյալ միջնորդություն կատարելը դուրս է նրա դատավարական կարգավիճակից և չի կարող պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք հանդիսանալ:

9. Բողոքաբերը փաստարկել է, որ ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդված կիրառելիս ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը հաշվի է առել նաև նրա՝ ժամկետային զինվորական ծառայության մեկնելու հնարավորության նպատակահարմարությունը, ինչը, ըստ նրա, չի հանդիսանում առանց նշանակված պատիժը կրելու դատապարտյալի ուղղվելու հնարավորության հետ կապված հանգամանք:

10. Վերոշարադրյալի հիման վրա բողոք բերած անձը եզրահանգել է, որ Ռ.Խաչատրյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ ազատագրկման ձևով պատիժը պայմանականորեն չկիրառելն անարդարացի է՝ ակնհայտ մեղմ լինելու պատճառով, չի համապատասխանում ամբաստանյալի կատարած հանցագործության ծանրությանը, չի նպաստում սոցիալական արդարության վերականգնմանը, հանցագործությունների կանխմանն ու պատժի ենթարկված անձի ուղղվելուն: Ուստի, խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. փետրվարի 11-ի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. հոկտեմբերի 14-ի դատավճռին:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Ռ.Խաչատրյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն

չկիրառելու վերաբերյալ որոշում կայացնելիս ՀՀ վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատե՞լ է արդյոք գործի բոլոր փաստական հանգամանքները:

12. Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի՝

«1. Եթե դատարանը, կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

(...)»:

13. Անձի նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված հարցերին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ՎԲ–192/07, ՎԲ–50/07, ՎԲ–201/07, ՎԲ–124/07, ԱՎԴ-2/0059/01/08, ԵԱԲԴ-0078/01/09 և այլ որոշումներում, որոնցում հայտնել և վերահաստատել է իրավական դիրքորոշում այն մասին, որ, չնայած պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգրքին ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել, այնուհանդերձ, դատարանը պարտավոր է, դեկլարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, հաշվի առնել նաև հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը: Դատարանի կողմից նշանակվող պատժի արդարացիության հիմնական պահանջն այն է, որ պատիժը պետք է համապատասխանի հանցագործության վտանգավորության աստիճանին ու բնույթին: Պատիժը պայմանականորեն չկիրառելու համար կարևոր նշանակություն ունեն հանցագործության կատարման հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, մեղքի ձևը, հանցավորի կողմից այդ հանցագործության հանրորեն վտանգավոր հետևանքները նախատեսելու բնույթն ու աստիճանը (տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Դավիթ Ռոբերտի Հովհաննիսյանի վերաբերյալ գործով 2009թ. դեկտեմբերի 18-ի ԵԱԲԴ-0078/01/09 որոշման 18-րդ կետը):

14. Հիմք ընդունելով նախորդ կետում և համապատասխանաբար նաև վկայակոչված որոշումներում առկա դատողությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները հնարավորություն են տալիս պատկերացում կազմել հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի և բնույթի, հանցավորի անձնավորության մասին և ամեն մի կոնկրետ գործով անհատականացնել պատիժը: Պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների ցանկի վերլուծությունը ցույց է տալիս, որ քննարկվող հանգամանքները վերաբերում են ինչպես հանցագործությանը, այնպես էլ հանցավորի անձնավորությանը կամ բնութագրում են հանցագործությունն ու հանցավորի անձնավորությունը միաժամանակ: Այդ պատճառով էլ պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները պետք է դիտարկել որպես հանցակազմի սահմաններից դուրս հանգամանքներ, որոնք ուղղակի կամ անուղղակի վերաբերում են հանցագործությանը կամ հանցավորի անձնավորությանը, բարձ-

րացնում կամ իջեցնում են հասարակական վտանգավորության աստիճանը և ազդում պատժի վրա:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս որպես նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք հաշվի է առել Արաբկիրի զինվորական կոմիսարիատի կողմից զինակոչիկ Ռ.Խաչատրյանին 2010թ. փետրվարի 25-ին զինկոմիսարիատ բժշկական հանձնաժողով անցնելու համար ծանուցումը, ինչպես նաև զորակոչային տեղամասում կցագրման վկայականը՝ զարնանային զորակոչային ծառայության մեկնելու համար (տե՛ս քրեական գործ, 282–283 էջեր):

16. Ելնելով սույն որոշման 13–15-րդ կետերում առկա վերլուծությունից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից որպես Ռ.Խաչատրյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք դիտված՝ Արաբկիրի զինվորական կոմիսարիատի ծանուցումը, ինչպես նաև զորակոչային տեղամասում կցագրման վկայականը ո՛չ ուղղակի, ո՛չ անուղղակի կերպով չեն վերաբերում հանցագործությանը կամ հանցավորի անձին, չեն բարձրացնում կամ իջեցնում նրա արարքի հասարակական վտանգավորության աստիճանը և հետևաբար չեն կարող վկայել նրա նկատմամբ նշանակված պատժի կրման անհրաժեշտության առկայության կամ բացակայության մասին:

17. Ինչ վերաբերում է ՀՀ վերաքննիչ դատարանի որոշման մեջ վկայակոչված այն հանգամանքներին, որ Ռ.Խաչատրյանը ինքնակամ ներկայացել է ոստիկանության բաժին, տվել է ինքնախոստովանական ցուցմունքներ, անկեղծորեն զոջացել է կատարածի համար, նախկինում դատված չի եղել, ճարտարագիտական համալսարանի վերջին կուրսի ուսանող է, բնութագրվում է դրական, հաշտվել է տուժողի հետ, վերականգնել պատճառված նյութական վնասը, և տուժողը խնդրել է ամբաստանյալի նկատմամբ նշանակել ազատագրկման հետ չկապված պատիժ, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք չեն վկայում Ռ.Խաչատրյանի կատարած հանցագործությանը բնորոշ հանրային վտանգավորության բացակայության մասին (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը), դրանք չեն նվազեցնում ամբաստանյալի կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանը, ուստի Ռ.Խաչատրյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու օբյեկտիվ հիմք չեն:

18. Հիմք ընդունելով սույն որոշման 11–17-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ռ.Խաչատրյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ որոշում կայացնելիս ՀՀ վերաքննիչ դատարանը պատշաճ չի գնահատել սույն գործի բոլոր փաստական հանգամանքները և անհիմն կիրառել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, այսինքն՝ կիրառել է քրեական օրենսգրքի հոդված, որը ենթակա չէր կիրառման: Դրա արդյունքում թույլ է տրվել նաև ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի նորմերի՝ 5-րդ, 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված օրինականության, արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտում: Այսպիսով, Վերաքննիչ դատարանը, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա Ռ.Խաչատրյանի նկատմամբ նշանակված

ազատագրվման ձևով պատիժը պայմանականորեն չկիրառելով, սխալ է կիրառել քրեական օրենքը, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի հիման վրա, դատական ակտը բեկանելու հիմք է:

Մինևույն ժամանակ, այդ քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառումը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող անօրինական և չհիմնավորված որոշման կայացմանը, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի հիման վրա, քրեադատավարական օրենքի էական խախտում է և նույնպես դատական ակտը բեկանելու հիմք:

Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները, որոնք ազդել են պատժի կրման անհրաժեշտության մասով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, Վճռաբեկ դատարանում ուղղվել չեն կարող: Ուստի անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա պատիժը պայմանականորեն չկիրառել և անհիմն լինելու պատճառաբանությամբ բեկանել վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

19. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Ռուբեն Հմայակի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. փետրվարի 11-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն  
Դատավորներ՝ ստորագրություններ*

68.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության

ԵԵԴ/0004/06/09

վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
գործ թիվ ԵԵԴ/0004/06/09

նախագահող դատավոր՝ Մ. Պետրոսյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԳԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀՆՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
*մասնակցությամբ պաշտպան* Ա. ԱՎԱԳՅԱՆԻ

2010 թվականի մայիսի 4-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով մեղադրյալ Հրանտ Հրաչիկի Գյուրջյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2010 թվականի փետրվարի 11-ի որոշման դեմ Հ.Գյուրջյանի պաշտպան Ա.Ավագյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2008 թվականի դեկտեմբերի 22-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունու քննչական բաժնում հարուցվել է թիվ 12132908 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով:



Նախաքննության մարմնի 2009 թվականի հունվարի 16-ի որոշմամբ Հ.Գյուրջյանը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ներգրավվել է որպես մեղադրյալ: Նույն օրը Հ.Գյուրջյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հունվարի 16-ի որոշմամբ մեղադրյալ Հ.Գյուրջյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

Նախաքննության մարմնի 2009 թվականի փետրվարի 21-ի որոշմամբ Հ.Գյուրջյանի մեղադրանքի ծավալը փոփոխվել ու լրացվել է, և նա ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով:

2. 2009 թվականի դեկտեմբերի 26-ին Հ.Գյուրջյանը հայտնաբերվել և արգելանքի է վերցվել:

Նախաքննության մարմինը 2010 թվականի հունվարի 14-ին միջնորդություն է հարուցել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան)՝ մեղադրյալ Հ.Գյուրջյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերահաստատելու մասին:

3. Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունվարի 25-ի որոշմամբ մեղադրյալ Հ.Գյուրջյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերահաստատվել է, կալանքի սկիզբը հաշվվել է 2009 թվականի դեկտեմբերի 26-ից: Նույն որոշմամբ մերժվել է մեղադրյալ Հ.Գյուրջյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու մասին պաշտպան Ա.Ավագյանի միջնորդությունը:

4. Պաշտպանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2010 թվականի փետրվարի 11-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունվարի 25-ի որոշումը՝ օրինական ուժի մեջ թողնելու մասին:

5. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 11-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրյալ Հ.Գյուրջյանի պաշտպան Ա.Ավագյանը:

Վճռաբեկ դատարանը 2010 թվականի ապրիլի 14-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշումներին»):

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները**

6. Հ.Գյուրջյանը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետով ներգրավվել է որպես մեղադրյալ այն բանի համար, որ խարդախությամբ ուրիշի

գույքին տիրանալու նպատակով 2008 թվականի մարտի 10–ին, չարաշահելով Լուսյա Աբգարյանի վստահությունը, շահագործելու և ամսական 150.000 ՀՀ դրամ վարձավճար վճարելու պատրվակով, խաբեությամբ հափշտակել է վերջինիս պատկանող՝ 3.332.000 ՀՀ դրամ արժողության Վազ–21101 մակնիշի ավտոմեքենան և այն 2008 թվականի օգոստոսի 19–ին 5.000 ԱՄՆ դոլարով վաճառել է Անդրանիկ Բաբասյանին՝ Լ.Աբգարյանին պատճառելով խոշոր չափի՝ 2.945.000 ՀՀ դրամի վնաս:

Բացի այդ, Հ.Գյուրջյանը, կրկին խարդախությամբ ուրիշի գույքին տիրանալու նպատակով, 2008 թվականի դեկտեմբերի 13–ին, չարաշահելով Հովսեփ Մարգարյանի վստահությունը, շահագործելու և ամսական 160.000 ՀՀ դրամ վարձավճար վճարելու պատրվակով, խաբեությամբ ստացել և հափշտակել է վերջինիս պատկանող՝ 2.800.000 ՀՀ դրամ արժողության Վազ–21074 մակնիշի ավտոմեքենան, որը հաջորդ օրը Երևանի «Էրեբունի» ավտոշուկայում վաճառել է Մարգիս Ավագյանին՝ Հ.Մարգարյանին պատճառելով խոշոր չափի՝ 2.820.000 ՀՀ դրամի վնաս (տե՛ս նյութեր, էջ 16):

7. Մեղադրյալ Հ.Գյուրջյանը հայտնաբերվել և կալանքի է վերցվել 2009 թվականի դեկտեմբերի 26–ին (տե՛ս նյութեր, 21–22 էջեր): Հ.Գյուրջյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերահաստատելու մասին միջնորդություն նախաքննության մարմնի կողմից Առաջին ատյանի դատարան ներկայացվել է 2010 թվականի հունվարի 14–ին (տե՛ս նյութեր, էջ 13):

8. Առաջին ատյանի դատարանը Հ.Գյուրջյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերահաստատելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը քննության է նշանակել 2010 թվականի հունվարի 19–ին (տե՛ս նյութեր, էջ 24): Գործով հանրային պաշտպան ներգրավելու համար դատական նիստը հետաձգվել է և նշանակվել 2010 թվականի հունվարի 25–ին (տե՛ս նյութեր, էջ 27):

9. Առաջին ատյանի դատարանը մեղադրյալ Հ.Գյուրջյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերահաստատելու մասին որոշման մեջ նշել է. «Դատարանն արձանագրում է, որ վարույթն իրականացնող մարմինը, խախտելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների Եվրոպական կոնվենցիայի 5–րդ հոդվածի 3–րդ մասի պահանջները, մեղադրյալ Հ.Գյուրջյանին չի ներկայացրել դատարան ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում, ինչով խախտվել է մեղադրյալի իրավունքները, սակայն գործող օրենսդրության համաձայն այն հիմք չէ կալանավորումը վերահաստատելու միջնորդությունը մերժելու համար» (տե՛ս նյութեր, էջ 38):

10. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում նշել է. «Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով մեղադրյալ Հ.Գյուրջյանի պաշտպան Ա.Ավագյանի վերաքննիչ բողոքում նշված այն փաստարկին, որ Հրանտ Գյուրջյանը չի տարվել դատավորի մոտ, նշում է, որ այն չի կարող հիմք հանդիսանալ վերաքննիչ բողոքը բավարարելու համար, քանի որ ընդհանուր իրավասության դատարանը որոշում կայացնելիս հաշվի է առել նաև այդ հանգամանքը և նշել է, որ (...), և ըստ էության հիմք ընդունելով այն հանգամանքը, որ չեն վերացել և շարունակում են առկա լինել մեղադրյալին կալանավորելու հիմքերը, բավարարել է քննիչի միջնորդությունը (...):

Վերաքննիչ դատարանը վերոշարադրյալ հիմքերով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2010

թվականի հունվարի 25-ի վերոհիշյալ որոշումը համարում է ճիշտ, իսկ վերաքննիչ բողոքում բերված եզրահանգումները՝ անհիմն, և որ չեն խախտվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի, (...) պահանջները» (տե՛ս նյութեր, 57-58 էջեր):

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոքաբերը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ, 11-րդ, 135-րդ, 136-րդ, 143-րդ հոդվածների պահանջները, բացի այդ, Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է Տ.Վահրադյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմանը:

12. Ի հիմնավորումն վերոշարադրյալ փաստարկների՝ բողոքի հեղինակը նշել է, որ մինչդատական վարույթն իրականացնող մարմինը մեղադրյալ Հ.Գյուրջյանին արգելանքի վերցնելու պահից 72 ժամվա ընթացքում նրան չի ներկայացրել դատարան, իսկ ստորադաս դատարանները, արձանագրելով վերոգրյալ խախտումը, ոչ միայն միջոցներ չեն ձեռնարկել այն հարթելու համար, այլ խախտումը դարձրել են շարունակական:

Ըստ բողոքաբերի՝ մեղադրյալին արգելանքի վերցնելուց հետո 72 ժամից ավելի ուշ դատարան ներկայացնելու դեպքում համապատասխան դատարանը պարտավոր է մերժել ընտրված խափանման միջոց կալանքը վերահաստատելու մասին միջնորդությունը և անձին ազատ արձակել կալանքից:

13. Բացի այդ, բողոք բերած անձը, շարադրելով Հ.Գյուրջյանի անձը բնութագրող տվյալները և նշելով, որ վերջինս ամբողջությամբ վերականգնել է տուժողներին պատճառված վնասը, փաստարկել է, որ առկա են մեղադրյալ Հ.Գյուրջյանի նկատմամբ այլընտրանքային խափանման միջոց գրավ կիրառելու համար անհրաժեշտ, քրեադատավարական օրենքով նախատեսված հիմքերը, մինչդեռ ստորադաս դատարաններն անտեսել են վերոգրյալը և նրա նկատմամբ գրավի կիրառումը ճանաչել անթույլատրելի:

14. Հիմք ընդունելով վերոշարադրյալ փաստարկները՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 11-ի որոշումը և մեղադրյալ Հ.Գյուրջյանին ազատ արձակել կալանքից կամ նրա նկատմամբ գրավի կիրառումը ճանաչել թույլատրելի:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

*1. Հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց և արգելանքի վերցնելուց հետո անհապաղ դատավորի մոտ տանելու իրավական պահանջը*

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանը, նախ, քննության է առնում հետևյալ իրավական հարցը. մեղադրյալ Հ.Գյուրջյանի նկատմամբ պահպանվե՞լ է արդյոք հայտնաբերվելուց հետո անհապաղ դատավորի մոտ տարվելու իրավական պահանջը:

16. Հետախուզման մեջ գտնվող մեղադրյալին հայտնաբերելուց հետո ընտրված խափանման միջոց կալանավորման հարցը վերստին քննության առնելու նպատակով վերջինին անհապաղ դատարան ներկայացնելու պարտադիրության վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել Տ.Վահրադյանի վերաբերյալ գործով որոշման մեջ: Համաձայն այդ որոշման՝

«Հիմք ընդունելով ՀՀ իրավական համակարգում Կոնվենցիայի բարձրագույն իրավաբանական ուժը, ինչպես նաև ազատությունից զրկված անձանց անհապաղ դատարանի առջև ներկայացնելու՝ Կոնվենցիայով հստակ ամրագրված և Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում բազմիցս վերահաստատված պահանջի ներպետական երաշխավորման պահանջը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ ներպետական օրենսդրության մակարդակում ազատության իրավունքի ապահովման անհրաժեշտ երաշխիք պետք է լինի հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո, արդեն նրա ներկայությամբ, նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցի կրկնակի քննարկումը նախաքննության կատարման վայրի դատարանում: (...)

Հետևաբար՝ հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո նա պետք է անհապաղ (72 ժամվա ընթացքում) տարվի դատավորի մոտ» (տե՛ս Տ.Վահրադյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 26–ի թիվ ԼԳ/0197/06/08 որոշման 33–րդ, 34–րդ կետերը):

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրյալ Հ.Գյուրջյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերահաստատելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը դատարան է ներկայացվել նրան ձեռքակալելու պահից 19 օր հետո (տե՛ս սույն որոշման 7–րդ կետը):

18. Սույն որոշման 17–րդ կետում շարադրված փաստական հանգամանքի նկատմամբ կիրառելով սույն որոշման 16–րդ կետում և, համապատասխանաբար, Տ.Վահրադյանի վերաբերյալ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավաչափ են ստորադաս դատարանների դատողություններն այն մասին, որ մեղադրյալ Հ.Գյուրջյանը հայտնաբերվելուց հետո անհապաղ դատավորի մոտ չի տարվել (տե՛ս սույն որոշման 9–րդ և 10–րդ կետերը):

*II. Սույն գործով ստորադաս դատարաններում խափանման միջոց կալանավորման հարցի քննության և լուծման իրավաչափությունը*

19. Ստորադաս դատարաններում Հ.Գյուրջյանի նկատմամբ խափանման միջոց կալանավորման հարցի վերստին քննության և լուծման իրավաչափության կապակցությամբ Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին հարցը հետևյալն է. ստորադաս դատարանները ձեռնարկե՞լ են արդյոք անհրաժեշտ միջոցներ Հ.Գյուրջյանին դատարան ներկայացնելու ժամկետի խախտումը հարթելու համար:

20. Այս հարցի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել Գ.Միքայելյանի վերաբերյալ գործով որոշման մեջ.

«(...) [Կ]ալանավորման միջնորդությունը քննելիս ձեռքակալման ընթացակարգի խախտման փաստ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է ձեռնարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համա-

պատասխան միջոցներ: Ձերբակալման առավելագույն ժամկետի խախտման պարագայում այդ միջոցները պետք է հանգեն հետևյալին.

ա) 72-ժամյա ժամկետի խախտման փաստի արձանագրում,

բ) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360.1 հոդվածի հիման վրա լրացուցիչ որոշման կայացում, կամ, խախտումն ակնհայտ և կոպիտ լինելու դեպքում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դատախազին դիմում,

գ) անօրինական ձերբակալման համար փոխհատուցում ստանալու պահանջով ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան դիմելու ընթացակարգի պարզաբանում:

(...) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ձերբակալման ընթացակարգի խախտման հիմքով հայցի քննությունը պետք է իրականացվի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի հիման վրա: Այլ կերպ՝ անօրինական ձերբակալման գոհը պետք է օժտված լինի փոխհատուցում ստանալու իրավունքով՝ անկախ համապատասխան հետաքննության, նախաքննության, դատախազության և դատարանի պաշտոնատար անձանց մեղքից: (...)» (տե՛ս Գ.Միքայելյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԳԳ-0085/06/09 որոշման 34-րդ, 36-րդ կետերը):

21. Սույն գործի և Գ.Միքայելյանի վերաբերյալ գործի տարբերությունն այն է, որ սույն գործը վերաբերում է կալանավորվածի նկատմամբ կիրառված խափանման միջոցի հարցի վերստին քննությանը, իսկ Գ.Միքայելյանի վերաբերյալ գործը՝ ձերբակալվածի կալանավորմանը: Սակայն Գ.Միքայելյանի վերաբերյալ որոշման 34-րդ և 36-րդ կետերում ամրագրված իրավական դիրքորոշման կիրառելիության համար նշված տարբերությունն էական չէ, այլ էական է երկու գործերի նմանությունը: Մասնավորապես՝ երկու գործերով էլ առկա էր ազատությունից զրկված անձին 72 ժամվա ընթացքում դատարան ներկայացնելու իրավական պահանջ:

Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործը և Գ.Միքայելյանի վերաբերյալ գործը ունեն նույնանման փաստական հանգամանքներ, և Գ.Միքայելյանի վերաբերյալ որոշման 34-րդ և 36-րդ կետերում ամրագրված իրավական դիրքորոշումը սույն գործով ենթակա է կիրառման:

22. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները բավարարվել են միայն Հ.Գ.յուրջյանին դատարան ներկայացնելու ժամկետի խախտման փաստի արձանագրմամբ, և համապատասխան լրացուցիչ որոշում չեն կայացրել, քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դատախազին չեն դիմել, փոխհատուցում ստանալու պահանջով ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան դիմելու ընթացակարգը Հ.Գ.յուրջյանին չեն պարզաբանել:

Հետևաբար սույն գործով ստորադաս դատարանները չեն ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Հ.Գ.յուրջյանին դատարան ներկայացնելու ժամկետի խախտումը հարթելու համար:

23. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հաջորդ իրավական հարցը հետևյալն է. Հ.Գ.յուրջյանին արգելանքի վերցնելուց հետո 72 ժամի խախտմամբ նրան դատարան ներկայացնելու պայմաններում դատարանն իրավասո՞ւ էր

արդյոք բավարարել ընտրված խափանման միջոց կալանքը վերահաստատելու մասին միջնորդությունը:

24. Վերոնշյալ հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում հայտնել է Գ.Միքայելյանի վերաբերյալ որոշման մեջ: Նշված որոշման համաձայն՝ «(...) անձին կալանավորելու միջնորդությունը կարող է բավարարվել այն դեպքում, երբ միջնորդությունը ներկայացրած քրեական հետապնդման մարմնին հաջողվի դատարանի համար համոզիչ հիմնավորել:

ա) անձին մեղսագրվող հանցագործությանը նրա առնչությունը (տվյալ հանցագործության կատարման մեջ հիմնավոր կասկածը) և

բ) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի առկայությունը:

Այսպիսով, կալանավորման միջնորդությանը նախորդած ձերբակալման ընթացակարգի (ներառյալ՝ ժամկետի վերաբերյալ պահանջի) խախտումը կալանավորման միջնորդությունը մերժելու հիմք չէ, եթե հանցագործությանը մեղադրյալի առնչությունը և կալանավորման հիմքերի առկայությունը դատարանը համարում է հիմնավորված» (տե՛ս Գ.Միքայելյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԳԳ/0085/06/09 որոշման 32-րդ կետը):

25. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ստորադաս դատարանները Հ.Գյուրջյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրել են՝ ելնելով այն հանգամանքից, որ չեն վերացել և շարունակում են առկա լինել մեղադրյալին կալանավորելու հիմքերը (տե՛ս սույն որոշման 9-րդ և 10-րդ կետերը):

26. Սույն որոշման 25-րդ կետում շարադրված փաստական հանգամանքի նկատմամբ կիրառելով սույն որոշման 24-րդ կետում մեջբերված իրավական հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարաններն իրավասու էին Հ.Գյուրջյանին արգելանքի վերցնելուց 72 ժամ հետո նրան դատարան ներկայացնելու դեպքում բավարարել ընտրված խափանման միջոց կալանքը վերահաստատելու մասին միջնորդությունը:

27. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հաջորդ իրավական հարցը հետևյալն է. Հ.Գյուրջյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցի վերահաստատման մասին նախաքննության մարմնի միջնորդությունն արդյո՞ք Առաջին ատյանի դատարանի կողմից քննվել է անհապաղ:

28. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ «(...) ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնել դատական իշխանություն, և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակելու իրավունք (...):»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայուն նախադեպային իրավունքի հիման վրա՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը ներառում է նաև դատարանի մոտ բերված անձի ազատության հարցի անհապաղ քննության պահանջը: Մասնավորապես, այն ամրագրված է Եվրոպական դատարանի հետևյալ վճիռներում. *Արվիլինան ընդդեմ Մալթայի* (Aquilina v. Malta), գանգատ թիվ 25642/94, Մեծ

Պալատի 1999թ. ապրիլի 29-ի վճիռ, կետ 48, *Մքքեյն ընդդեմ Միացյալ Թագավորություն* (McKay v. The United Kingdom), գանգատ թիվ 543/03, Մեծ Պալատի 2006թ. հոկտեմբերի 10-ի վճիռ, 30 և 33 կետեր, *Լադենտն ընդդեմ Լեհաստանի* (Ladent v. Poland), գանգատ թիվ 11036/03, Պալատի 2008թ. հունիսի 18-ի վճիռ, 72-73 կետեր, *Մեդվեդևը և ուրիշներն ընդդեմ Ֆրանսիայի* (Medvedyev and Others v. France), գանգատ թիվ 3394/03, Մեծ Պալատի 2010թ. մարտի 29-ի վճիռ, 117 և 121 կետեր:

29. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Հ.Գյուրջյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերահաստատելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը դատարանը քննության է նշանակել հինգ օր հետո (տե՛ս սույն որոշման 7-րդ և 8-րդ կետերը):

30. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կալանավորումը վերահաստատելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը ստացվելուց հինգ օր հետո դատական քննության նշանակելն ակնհայտորեն չի համապատասխանում Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով երաշխավորված անհապաղության չափանիշներին:

31. Սույն որոշման 29-րդ կետում մեջբերված փաստական հանգամանի նկատմամբ կիրառելով սույն որոշման 28-րդ կետում շարադրված իրավական հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Հ.Գյուրջյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցի վերահաստատման մասին նախաքննության մարմնի միջնորդությունն անհապաղ քննության չի առնվել Առաջին ատյանի դատարանի կողմից, իսկ Վերաքննիչ դատարանը, իր հերթին, պատշաճորեն չի արձագանքել Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված այս խախտմանը:

### *III. Սույն որոշման իրավական արժեքը.*

32. Սույն որոշման 15-31-րդ կետերից երևում է, որ բողոքում նշված հիմնավորումները բավարար են բողոքարկված դատական ակտը բեկանելու համար:

Սակայն բողոքարկված դատական ակտերը եղել են ժամանակավոր և սույն որոշումը կայացնելու պահին դրանք իրավաբանորեն դադարել են գոյություն ունենալուց:

33. Բացի այդ, Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից 2010 թվականի մարտի 3-ին կայացվել է դատավճիռ, որով Հ.Գյուրջյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով և դատապարտվել ազատազրկման 2 տարի ժամկետով: Ընդ որում, պատիժը կիրառելու հարցը լուծելիս դատարանը հաշվի է առել Հ.Գյուրջյանին անազատության մեջ պահելու ողջ ժամանակահատվածը:

Վերաքննիչ դատարանի 2010 թվականի ապրիլի 20-ի որոշմամբ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի մարտի 3-ի դատավճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

34. Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքարկված դատական ակտերը չեն կարող բեկանվել, քանի որ դրանք իրավաբանորեն այլևս գոյություն չունեն, ինչպես նաև Հ.Գյուրջյանի նկատմամբ քրեա-

կան վարույթի ողջ ընթացքը հաշվի առնելով՝ չեն հանգեցրել նրան անազատության մեջ ավելի երկար պահելուն, քան դատարանի դատավճռով սահմանված ժամկետն է:

35. Բողոքարկված դատական ակտերը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այդ առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումներ կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նույնանման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Մեղադրյալ Հրանտ Հրաչիկի Գյուրջյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերահաստատելու մասին Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունվարի 25-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի փետրվարի 11-ի որոշման դեմ Հ.Գյուրջյանի պաշտպան Ա.Ավագյանի վճռաբեկ բողոքը մերժել՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*



69.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության ՀՅԶԲԴ-2/0149/01/08  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
քրեական գործ թիվ ՀՅԶԲԴ-2/0149/01/08

նախագահող դատավոր՝ Ե.Դարբինյան  
դատավորներ՝ Ա.Հովհաննիսյան, Ս.Չիչոյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՄԱՏՐՅԱՆԻ  
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ* Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
*մասնակցությամբ դիմողի ներկայացուցիչ* Տ. ՍՈՒՐԱԴՅԱՆԻ

2010 թվականի մայիսի 4-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով Կամո Սիմակի Կիրակոսյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2010 թվականի փետրվարի 24-ի որոշման դեմ Կ.Կիրակոսյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2008 թվականի հունվարի 7-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչությունում ՀՀ քրեական

օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 69100108 քրեական գործը՝ «Արդշինհիմնվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Ալավերդի» մասնաճյուղի կառավարիչ Կ.Կիրակոսյանի կողմից յուրացում կատարելու փաստի առթիվ:

Քրեական գործի նախաքննության ընթացքում Կ.Կիրակոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասով, նշված բանկի մասնաճյուղի ոսկերիչ-մասնագետ Կարեն Սահակյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 214-րդ հոդվածի 1-ին մասով, 325-րդ հոդվածի 2-րդ մասով, վարկային մասնագետ Յուրի Խալաթյանին, հաշվապահներ Հերմինե Ջավարյանին, Կարինե Կարապետյանին, գանձապահ Լուսինե Միքայելյանին, ավագ գանձապահ Արմեն Վերանյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասով:

2008 թվականի նոյեմբերի 11-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Հյուսիսային քրեական դատարան:

2. 2009 թվականի փետրվարի 5-ին ընդունված «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ կետի կարգով 2009 թվականի փետրվարի 27-ին Կ.Կիրակոսյանի և մյուսների վերաբերյալ քրեական գործն ըստ ընդդատության փոխանցվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան):

«Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 5-րդ կետի 1-ին ենթակետի կիրառմամբ Առաջին ատյանի դատարանը 2009 թվականի հուլիսի 3-ին որոշում է կայացրել Կ.Կիրակոսյանի, Յու.Խալաթյանի, Հ.Ջավարյանի, Կ.Կարապետյանի, Ա.Վերանյանի և Լ.Միքայելյանի մասով քրեական գործի վարույթը կարճելու և նրանց նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին:

Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 9-ի դատավճռով Կ.Սահակյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 214-րդ հոդվածի 1-ին մասով, 325-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով հանցանքների համակցությամբ դատապարտվել ազատազրկման 6 տարի ժամկետով: Դատավճռում նշվել է, որ գործով քաղաքացիական հայց չի ներկայացվել:

3. Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 9-ի դատավճռի դեմ 2009 թվականի դեկտեմբերի 26-ին վերաքննիչ բողոք է բերել Կ.Կիրակոսյանը:

Վերաքննիչ դատարանը 2010 թվականի փետրվարի 24-ին որոշում է կայացրել Կ.Կիրակոսյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

4. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 24-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Կ.Կիրակոսյանը:

Վճռաբեկ դատարանը 2010 թվականի ապրիլի 23-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ

դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

5. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում նշել է՝ «Գատաքննությանը հետագոտված ապացույցների գնահատմամբ դատարանը հաստատված է համարում, որ ամբաստանյալ Կարեն Սահակյանը 29.03.2004 թ–ից աշխատելով «Արդշինհիմվեստբանկ» ՓԲԸ–ի «Ալավերդի» մասնաճյուղում որպես ոսկերիչ–մասնագետ, օգտվելով մասնաճյուղի աշխատակիցների մոտ իր ձեռք բերած վստահությունից, 2006 թ–ի սեպտեմբեր ամսից մինչև 2007 թ–ի սեպտեմբերի 13–ն ընկած ժամանակահատվածում մասնաճյուղի նախկին վարկառուների վարկային փաթեթներից պատճենահանել, ստացել է թվով 42 անձի անձնագրերի պատճեններ, դրանցով կազմել է բանկին ուղղված կեղծ դիմումներ այն մասին, որ իբր նշված քաղաքացիները ցանկանում են ոսկու գրավով ապահովված վարկեր ստանալ: Կ.Սահակյանը նախապես տարբեր առևտրի կետերից ձեռք է բերել դեղին գույնի ցածրարժեք մետաղներից պատրաստված 152 կտոր էժանագին տարբեր զարդեր և առարկաներ և դրանք ներկայացրել «Ալավերդի» մասնաճյուղ որպես ենթադրյալ վարկառուների կողմից գրավադրված ոսկյա զարդեր: Ենթադրյալ հաճախորդներին մասնաճյուղի աշխատակիցների մոտ ներկայացնելով իբրև իրական վարկառուներ և գրավատուներ, որոնք իր ընկերներ–բարեկամներ–ծանոթներն են և տարբեր պատճառներով չեն կարող անձամբ ներկայանալ բանկ, բանկի նախկին վարկառուների՝ իր տրամադրության տակ եղած անձնագրերի պատճենների տվյալներով կազմել է գրավի հանձնման և ընդունման կեղծ ակտեր, որոնցում իր կողմից փաստացի գրավադրված տարբեր մետաղներից ցածրարժեք զարդերի և առարկաների փոխարեն նշել է 237 կտոր ոսկյա զարդեր: Ապա ակտերում ենթադրյալ հաճախորդների փոխարեն կեղծ ստորագրություններ է կատարել, նախապես վարկային մասնագետ Յու.Խալաթյանից վերցրած կապարակներից ներկայացրել ոսկու պարկերը: Ենթադրյալ հաճախորդների անունից կազմել թվով 59 վարկային և գրավի պայմանագրեր, դրանցում կատարելով կեղծ ստորագրություններ, պայմանագրերն ու ակտերը Յու.Խալաթյանի կողմից ստորագրվելուց հետո, այդ փաստաթղթերը ներկայացրել է հաշվապահներ Հ.Չավարյանին և Կ.Կարապետյանին, որոնք առանց հաճախորդների ներկայությունը ստուգելու, ենթադրյալ վարկառուների անվամբ հաշիվներ են բացել և կազմել դրամարկղի ելքի օրդերներ, որոնցում նույնպես կատարել է կեղծ ստորագրություններ: Այնուհետև ավագ գանձապահ Ա.Վերանյանին և գանձապահ Լ.Սիքալեյանին է հանձնել գրավի առարկա հանդիսացող ոսկու կապարակներով պարկերը և դրամարկղի ելքի օրդերները և դրամարկղից ստացել բանկին պատկանող 27.138.000 ՀՀ դրամ գումար և այն ամբողջությամբ ծախսել իր անձնական կարիքների համար: Հետագայում ոչ այդ և ոչ էլ դրանից գոյացած 673.200 ՀՀ դրամ վարկային տոկոսները բանկին չի վերադարձրել: 13.09.2007 թ–ին մասնաճյուղի կառավարիչ Կ.Կիրակոսյանը, պարզելով, որ այդ

վարկային գործերում առկա է վարկի մարման ժամկետի խախտումով գործ, ստուգել է այդ գործը և գրավադրված ոսկեղենի պարկը: Կ.Կիրակոսյանը ակնհայտորեն պարզել է, որ գրավադրված ոսկեղենը կեղծ է, հրավիրել է մասնաճյուղի բոլոր աշխատակիցներին, որտեղ խորհրդակցության ընթացքում կասկած է առաջացել, որ կան նմանատիպ այլ գործեր: Հրավիրելով այդ պահին մասնաճյուղից բացակայող ոսկերիչ-մասնագետ Կ.Սահակյանին, Կ.Կիրակոսյանը պարզել է, որ վերջինս կեղծ ոսկեղենի գրավադրմամբ բանկից հափշտակել է շուրջ 85.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Կ.Կիրակոսյանը, առանց վերադասին տեղեկացնելու կատարված հանցագործության մասին, իր նախաձեռնությամբ միջոցներ է ձեռնարկել բանկին պատճառված վնասը վերականգնելու ուղղությամբ: Նա իր անձնական միջոցներով վերականգնել է ամբաստանյալ Կ.Սահակյանի մեղքով բանկին պատճառված ամբողջ վնասը, միաժամանակ Կ.Սահակյանից վերցրել է գրավոր փաստաթուղթ 85.000 ԱՄՆ դոլար իրեն պարտք լինելու մասին» (տե՛ս քրեական գործ, հատոր 14–րդ, 466–467 էջեր):

6. Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 28–ի դատական նիստի ժամանակ Կ.Կիրակոսյանը հայցադիմում է ներկայացրել դատարան՝ խնդրելով իրեն ճանաչել քաղաքացիական հայցվոր և կայացվելիք դատավճռով Կ.Սահակյանից հոգուտ իրեն բռնագանձել 26.200.000 ՀՀ դրամ: Առաջին ատյանի դատարանն արձանագրային որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժել է (տե՛ս քրեական գործ, հատոր 14–րդ, 446–447 էջեր):

7. Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 9–ի դատավճռի դեմ Կ.Կիրակոսյանը 2009 թվականի դեկտեմբերի 26–ին վերաքննիչ բողոք է բերել: Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հունվարի 22–ի որոշմամբ Կ.Կիրակոսյանի վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ, և քրեական գործը նշանակվել է դատական քննության (տե՛ս քրեական գործ, հատոր 14–րդ, 449–502, 504 էջեր):

8. Վերաքննիչ դատարանը 2010 թվականի փետրվարի 24–ին որոշում է կայացրել Կ.Կիրակոսյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին՝ իր որոշումը պատճառաբանելով հետևյալ կերպ. «(...) Բողոք բերած անձի կողմից չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379–րդ հոդվածի 1–ին մասի պահանջը, այն է՝ բաց է թողնվել առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերի՝ հրապարակվելու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետը:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380–րդ հոդվածի կանոններով հարգելի պատճառներով բողոքարկման համար սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք կարող են դատական ակտը կայացրած դատարանի առաջ միջնորդել՝ վերականգնելու բաց թողնված ժամկետը: Բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը քննվում է դատական նիստում դատավճիռ կամ որոշում կայացրած դատարանի կողմից:

Դատական նիստում պարզվեց, որ մինչ օրս բողոքաբերի կողմից դատարանին չի ներկայացվել բողոքարկման բաց թողած ժամկետը վերականգնելու վերաբերյալ դատական ակտը (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 14–րդ, էջ 515):

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի պահանջները:

Ի հիմնավորումն վերոշարադրյալ փաստարկի՝ բողոք բերած անձը նշել է, որ իր վերաքննիչ բողոքն ընդունելով վարույթ և նշանակելով դատական քննության՝ Վերաքննիչ դատարանն այնուհետև թողել է այն առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ, ինչից բողոքաբերը եզրակացնում է, որ Վերաքննիչ դատարանը հրաժարվել է արդարադատություն իրականացնելուց: Մինչդեռ, ըստ բողոքաբերի, Վերաքննիչ դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի 4-րդ մասով, իրավասու էր վերականգնել դատավճռի բողոքարկման ժամկետը, քանի որ գործը գտնվել է իր վարույթում և ըստ էության քննել իր վերաքննիչ բողոքը:

10. Բողոք բերած անձը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ քրեական դատավարությունում քաղաքացիական հայց կարող է հարուցվել յուրաքանչյուր պահի՝ սկսած քրեական գործի հարուցումից մինչև դատավճիռ կայացնելու համար դատարանի հեռանալը խորհրդակցական սենյակ, այնուհետև փաստարկել է, որ իր կողմից նշված նորմին համապատասխան քաղաքացիական հայց է ներկայացվել Առաջին ատյանի դատարանում ընդդեմ Կ.Սահակյանի, մինչդեռ դատարանը որևէ որոշում ներկայացված քաղաքացիական հայցի մասով չի կայացրել, ինչը հանգեցրել է քաղաքացիական հայցի մասով ոչ ճիշտ դատական ակտի կայացմանը:

11. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 24-ի որոշումը:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանն իրավասո՞ւ էր արդյոք առանց քննության թողնել իր վարույթում գտնվող գործով վերաքննիչ բողոքը՝ պատճառաբանելով, որ բողոքաբերի կողմից չի ներկայացվել բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի համապատասխան դատական ակտը:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «(...) վերադաս դատարանն իրավունք ունի վերականգնել բաց թողնված ժամկետը՝ իր վարույթում գտնվող գործով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հարգելի պատճառներով բողոքարկման համար սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք կարող են դատական ակտը կայացրած դատարանի առաջ միջնորդել՝ վերականգնելու բաց թողն-

ված ժամկետը: Բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը քննվում է դատական նիստում դատավճիռ կամ որոշում կայացրած դատարանի կողմից (...):»:

14. Համեմատական վերլուծության ենթարկելով նախորդ կետում մեջբերված իրավանորմերը՝ Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ դրանք բովանդակում են տարբեր իրավական ընթացակարգեր: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա վարույթն իրականացնող վերահաս դատարանը պարտավոր է սեփական նախաձեռնությամբ քննարկել և լուծել բաց թողնված ժամկետը վերականգնելու հարցը, մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա՝ բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու հարցը քննարկվում է բացառապես իրավասու անձի միջնորդության հիման վրա:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված իրավանորմերը հակասության մեջ չեն, քանի որ գործում են տարբեր հիմնապայմաններում: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի 4-րդ մասի կանոնը գործում է այն պարագայում, երբ գործն արդեն իսկ գտնվում է վերահաս դատարանի վարույթում, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասը գործում է այն պարագայում, երբ համապատասխան բողոքարկումը դեռ իրականացված չէ:

15. Սույն քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Կ.Կիրակոսյանն Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը Վերաքննիչ դատարանի որոշմամբ ընդունվել է վարույթ, և քրեական գործը նշանակվել է դատական քննության (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ Կ.Կիրակոսյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշման մեջ բաց թողնված ժամկետի վերականգնման հարցն ընդհանրապես քննարկման առարկա չի դարձել: Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում պարզաբանել է բողոքարկման բաց թողած ժամկետը վերականգնելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ընթացակարգը և նշելով, որ. «(...) բողոքաբերի կողմից դատարանին չի ներկայացվել բողոքարկման բաց թողած ժամկետը վերականգնելու վերաբերյալ դատական ակտը» (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը), այն թողել է առանց քննության ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

16. Սույն որոշման 15-րդ կետում շարադրված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելով սույն որոշման 14-րդ կետում շարադրված իրավական հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քանզի քրեական գործը գտնվել է Վերաքննիչ դատարանի վարույթում, ուստի Առաջին ատյանի դատարանի դատավճռի բողոքարկման ժամկետը վերականգնելու հարցը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով եղել է Վերաքննիչ դատարանի իրավասության շրջանակներում: Այս պարագայում Վերաքննիչ դատարանը պարտավոր էր իր որոշման մեջ լուծում տալ վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետի վերականգնման հարցին:

Հետևաբար, սույն գործով Վերաքննիչ դատարանն իրավասու չէր առանց քննության թողնել իր վարույթում գտնվող գործով բերված վերաքննիչ բողոքը՝ պատճառաբանելով, որ բողոքաբերի կողմից չի ներկայացվել բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի համապատասխան դատական ակտը:

17. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել քրեադատավարական օրենքի խախտում: Այդ խախտումն իր բնույթով էական է, քանի որ դրա արդյունքում սահմանափակվել է անձի դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, խախտվել են գործի արդարացի քննության և արդարադատության մատչելիության իրավունքները, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398–րդ, 406–րդ և 419–րդ հոդվածների համաձայն՝ դրանք հիմք են կայացված դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

18. Առաջին ատյանի դատարանի կողմից քաղաքացիական հայցի մասով սխալ դատական ակտ կայացնելու վերաբերյալ բողոքաբերի փաստարկներին (տե՛ս սույն որոշման 10–րդ կետը) Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում, քանի որ Վերաքննիչ դատարանն ըստ էության չի իրականացրել Կ.Կիրակոսյանի վերաքննիչ բողոքի քննությունը:

19. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92–րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403–406–րդ, 419–րդ, 422–424–րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Կամո Սիմակի Կիրակոսյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի փետրվարի 24–ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100 1/16:  
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 36.5 տպ. մանուկ:  
Տպաքանակը՝ 1500 օրինակ:



ՏՊԱԳՐՎԵԼ Է «ԶԱՆԳԱԿ-97»  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ՏՊԱՐԱՆՈՒՄ

0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2  
Հեռ.՝ (+37410) 23 25 28  
Ֆաքս՝ (+37410) 23 25 95  
Էլ. փոստ՝ [info@zangak.am](mailto:info@zangak.am)